ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՀԱՅԿԱԿԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐՈՒՄ ԵՎ XX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴԻՆ

ԵՐԵՎԱՆ 2003

947.925

Ա. ԲՐԱՒՈՒ ԹԱՆԳԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՇՈՏ ԱՂԱՍՈՒ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՋԱՎԱԽՔԸ 19-ՐԴ ԴԱՐՈՒՄ ԵՎ 20-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴԻՆ

A II 88093

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆ – 2003

ՀՏԴ 941 (479. 25)
ԳՄԴ 63. 3 (5Հ)
Մ 537

Գիրքը նվիրում եմ հորս՝ վաստակավոր լրագրող, Ջավախքում «Վրաստան» թերթի մոտ կեսդարյա անփոփոխ թղթակից
Աղասի Հարությունի Մելքոնյանի
պայծառ հիշատակին

Աշխատությունը հրատարակության է երաշխավորել
ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի
Պատմության ինստիտուտի գիտական խորհուրդը

Խմբագիր՝ պատմական գիտությունների դոկտոր
Է. Ա. Կոստանդյան

Գրախոսներ՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ Վ. Բ. Բարխուդարյան,
Հ. Ռ. Սիմոնյան

Մելքոնյան Ա. Ա.
Մ 537 ***Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին. –***
Եր., «Զանգակ-97», 2003, 544 էջ:

Գիրքը տպագրվել է Արևմտյան Հայաստանում հեղինակի ուխտավորլուսեղբայր Ռադիկ Վանիկի Վանունցի հովանավորությամբ

Մենագրության մեջ Հյուսիսային Հայաստանի պատմաաչխարհագրական ընդհանուր հենքի վրա քննության են առնված Ջավախքի քաղաքական, ժողովրդագրական, սոցիալ-մշակութային պատմության անցքերը վաղ ժամանակներից մինչև խորհրդային իշխանության առաջին տարիները: Առավել հանգամանորեն ներկայացված են 19-րդ դարի և 20-րդ դարի առաջին տասնամյակների իրադարձությունները: Աշխատության հավելվածում զետեղված 50 փաստաթղթերը, որոնց մեծ մասը հրատարակվում է առաջին անգամ, նոր լույս են սփռում երկրամասի պատմության բազմաթիվ հիմնահարցերի վրա:

Գիրքը նախատեսված է մասնագետ-պատմաբանների և ընթերցող լայն հասարակայնության համար:

Մ $\frac{0503020913}{0003(01)-2003}$ 2003 ԳՄԴ 63. 3 (2Հ)

ISBN 99930–2–459–7
© Մելքոնյան Ա. Ա.,
© «Զանգակ–97» հրատ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ջավախքի՝ Ախալքալաքի գավառի, ինչպես և նրան հարակից Ախալցխայի, Ծալկայի շրջանների պատմությունը, թեև, վերջին տասնամյակին սկսել է հետաքրքրել առանձին հետազոտողների, սակայն շարունակում է մնալ հայոց պատմության սակավ ուսումնասիրված բնագավառներից մեկը: Խորհրդային շրջանում հայ պատմաբանների համար հատկապես «հասու չէր» այդ հիմնախնդրի նոր ժամանակահատվածի՝ 19–20–րդ դարերի պատմությունը: Հայ մասնագետները կամ ուղղակի խուսափում էին Ջավախքին վերաբերող խնդիրների քննությունից, կամ էլ շրջանցում էին սուր ու կենսական քաղաքական հարցերը՝ նախապատվությունը տալով երկու բախտակից ժողովուրդների՝ հայերի ու վրացիների փոխհամագործակցության ու բարեկամության դրվագների լուսաբանմանը: Աչխարհաքաղաքական միանգամայն նոր պայմաններում, երկու հարևան երկրների անկախության կայացման ու ամրապնդման իրավիճակում, ի չահ տարածաշրջանային խաղաղության ու համագործակցության, պատմական ճշմարտության լիակատար բացահայտումը դառնում է կենսական անհրաժեշտություն և կարող է բխել բացառապես դրացի ժողովուրդների չահերից: Այդ տեսակետից կարևոր է հստակորեն տարբերակել ճշմարտացի պատմությունը (նաև իր անցյալի դառը դասերով ու սուր ելևէջներով) ներկա քաղաքական հիմնախնդիրների և այսօր համակողմանիորեն հայ-վրացական համագործակցության հրամայականից: Կարծում ենք՝ այդ նպատակին կարող է ծառայել նաև Ջավախքի հին ու միջնադարյան ժամանակահատվածի ուրվագծային և 19–րդ դարի ու 20–րդ դարի սկզբի պատմության, մասնավորապես նրա ամենաողբերգական շրջանի՝ 1918–1921 թթ. հարցերին նվիրված ներկա աշխատությունը:

Թեման ժամանակագրորեն հիմնականում ընդգրկում է 19–րդ դարը և 20–րդ դարի առաջին տասնամյակները, այսինքն՝ Անդրկովկասի, այդ թվում՝ Ջավախքի ու նրա հարակից շրջանների նկատմամբ Ռուսական կայսրության նվաճողական քաղաքականության ակտիվացումից մինչև խորհրդային իշխանության առաջին տարիներն ընկած ժամանակահատվածը: Սակայն, հաշվի առնելով, որ հիշյալ դարաշրջանի շատ հիմնահարցերի լուսաբանումը, առանց տարածաշրջանի նախորդ դարաշրջանի թեկուզև՝ ուրվագծային պատ-

մության ուսումնասիրության, դառնում է գրեթե անհնարին ներկա աշխատության առաջին գլուխը նվիրել ենք Ջավախքի հին և միջնադարյան ժամանակաշրջանին: Առավել ևս, որ նման մոտեցումը պայմանավորված է մեկ գավառի ամբողջական պատմության ստեղծման անհրաժեշտությամբ և հիմնահարցի գիտաքաղաքական կարևորությամբ: Պատահական չէ, որ պատմագրության մեջ կա այն թյուր կարծիքը, որ Ջավախքն ու հարակից տարածաշրջանը Ախալցխայի, Ասպինձայի և Ծալկայի գավառները, որևէ առնչություն չունեն հայկական իրականության հետ և հայեցի էթնոկենցաղային նկարագիր են ձեռք բերել միայն 1830 թ. արևմտահայերի գաղթից հետո ռուսական կառավարության հայանպաստ ժողովրդագրական քաղաքականության պայմաններում: Այդ տեսակետը հերքելու նպատակով, աշխատության առաջին բաժնում, որն ընդգրկում է Ջավախքի համառոտ պատմությունը հնագույն ժամանակներից մինչև 18–րդ դարի վերջը, քննության ենք ենթարկել միջնադարյան բազմալեզու սկզբնաղբյուրները, համադրել հայկական ու վրացական[1] մատենագրական նյութը, երկրամասի 16–17–րդ դարերի էթնոժողովրդագրական պատկերը ներկայացնելու համար վկայակոչել թուրքական պաշտոնական հարկացուցակների եզակի տվյալներ:

Մենագրության երկրորդ գլխում ներկայացված են ինչպես Ջավախքի, այնպես էլ Հյուսիսային Հայաստանի այլ շրջանների քաղաքական, վարչաժողովրդագրական պատմության, տարածաշրջանի նկատմամբ Ռուսաստանի վարած քաղաքականության հիմնահարցերը: Գրքի երրորդ գլուխը համառոտակի ընդգրկում է ռուսական տիրապետության (1828–1917), իսկ չորրորդը 1918–1921 թթ. ժամանակահատվածները: Աշխատությանը կցված է հավելված արխիվային նորահայտ փաստաթղթերով, որոնք նոր լույս են սփռում Ջավախքի պատմության տարբեր ժամանակաշրջանների դեպքերի վրա:

Հյուսիսային Հայաստանի 16–18–րդ դարերի սոցիալ–տնտեսական պատմության և ժողովրդագրության ուսումնասիրության համար բացառիկ նշանակություն ունեն թուրքական աղբյուրները, որոնց մի մասը թարգմանել ու հրատարակել են Ա. Խ. Սաֆրաստյա-

---

[1] Վրացական աղբյուրներն օգտագործել ենք ինչպես բնօրինակներով, այնպես էլ թարգմանաբար (Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, թարգմ.՝ Լ. Մելիքսեթ–բեկի, հ. Ա–Գ, Ե., 1934–1955, Վրաց ժամանակագրություն (1207–1318), թարգմանությունը հին վրացերենից՝ Պ. Մուրադյանի, Ե., 1971:

նը[2] և Ա. Փափազյանը:[3] Այդ տեսանկյունից մեծ արժեք են ներկայացնում հատկապես օսմանյան հարկացուցակները՝ դավթարները, որոնց թարգմանության և հրատարակության գործում կարևոր աշխատանք է կատարվել վրացագիտության մեջ: Ս. Ջիքիան թուրքերեն բնագրով և վրացերեն թարգմանությամբ հրատարակել է 16–րդ դարի վերջի մի բացառիկ աղբյուր՝ «Գյուրջիստանի վիլայեթի մեծ դավթարը»,[4] իսկ Յ. Աբուլաձեն ու Մ. Սվանիձեն թարգմանել ու աշխատասիրել են մեկ այլ հարկացուցակ՝ 17–րդ դարի վերջի և 18–րդ դարի սկզբի «Ջղրի էյալեթի ջաբա դավթարը»:[5]

Ջավախքի պատմական աշխարհագրության վերաբերյալ որոշակի հետաքրքրություն են ներկայացնում 18–րդ դարի վրաց հեղինակ Վախուշտ Բագրատիոնի և 19–րդ դարի սկզբի Մխիթարյան միաբանության անդամ Ղուկաս Ինճիճյանի աշխատությունները:[6]

Հիմնահարցի ուսումնասիրությունը 19–րդ դարում դրվեց ավելի լուրջ հիմքերի վրա: Այդ խնդրում մեծ ներդրում ունեցան ռուս հետազոտողները, որոնց գործունեության համար լայնասպարեզ բացվեց դարի առաջին կեսին՝ պայմանավորված տարածաշրջանում ռուսական տիրապետության հաստատմամբ: Ի տարբերություն արևմտաեվրոպական ուղեգիրների և հետազոտողների, ռուս հեղինակները ուսումնասիրության նյութ դարձրեցին տարանցիկ ու համեմատաբար ավելի բանուկ ճանապարհների երթուղիներից դուրս ընկած Ախալցխայի ու Կարսի նահանգները:

Ռուսական ռազմական իշխանությունների և նրանց կողմից 1830 թ. ստեղծված «Անդրկովկասյան մարզերում ռուսական աշխարհագրական վարչության» ամենագործուն աջակցությամբ հավաքվեց

---

[2] Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, կազմեց Ա. Խ. Սաֆրաստյան, հ. Ա, Ե., 1961, հ. Բ, Ե., 1964, հ. Գ, էվլիյա Չելեբի, Ե., 1967:

[3] Փափազյան Ա., Թուրքական վավերագրերը Հայաստանի և հայերի մասին (16–19–րդ դարեր), Ե., 1999:

[4] Გურჯისტანის ვილაიეთის დიდი დავთარი, წიგნი 2, თბ., 1941, წ. 1, 1947. თურქული ტექსტი გამოსცა, თარგმანი, გამოკვლევა და კომენტარიები დაურთო სერგი ჯიქიამ (վրացերենով տրված աշխատությունների վերնագրերի թարգմանությունը տե՛ս աշխատության վերջում (էջ 382–383):

[5] ჩილდირის ეიალეთის ჯაბა დავთარი. 1694–1732, თბ., 1979. Այս սկզբնաղբյուրի մասին տե՛ս նաև მიხეილ სვანიძე, ყარსის, ჩილდირისა და ტრაპიზონის ეიალეთების „ჯაბა დავთარი“ (1694–1732 წწ.), ახალციხე ყარსი (სამპოზიუმის შრომები), ახალციხე ყარსი, 2001, გვ. 65–75.

[6] Տես՝ ქართლის ცხოვრება, ტ. IV, გვ. 669–672 և Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, հ. Ա, Վենետիկ, 1806:

հակայական քանակությամբ արխիվային նյութ, որոնց մի մասի հետ հնարավորություն ունեցանք ծանոթանալու Թբիլիսիի, Մոսկվայի և Երևանի զանազան արխիվներում: Կովկասյան հատուկ կորպուսի հրամանատար Ի. Ֆ. Պասկևիչի հանձնարարությամբ մի խումբ սպաներ մանրազնին հետազոտության ենթարկեցին Ռուսական կայսրության սահմանակից օսմանյան նահանգները: Նրանցից չտաբս–կապիտան Իսկրիցկին վիճակագրեց Ախալցխայի և Էրզրումի էյալեթները, որոնց վերաբերյալ հավաքված նյութերը տեղ գտան Ն. Ուշակովի արժեքավոր աշխատության մեջ:[7]

Ինչպես վերոհիշյալ, այնպես էլ ֆինանսների նախարար Կանկրինի հրամանով հետազոտություններ կատարած արշավախմբի նյութերի հիման վրա ստեղծվեց քառահատոր մեկ այլ կարևոր աշխատություն:[8] 1830–ական թվականներին հրատարակվեցին Օ. Եվեցկու և Պ. Զուբովի ուսումնասիրությունները:[9] Վերոհիշյալ աշխատությունների հեղինակներն առատորեն օգտվել են տարբեր հանձնախմբերի հավաքած արխիվային նյութերից, որոնցից մի քանիսը փաստորեն արժեքավոր անտիպ աշխատություններ են: Դրանցից մեկում՝ «Նոթեր կոմս Պասկևիչի գլխավորությամբ Ասիական Թուրքիա ռուսական զորքերի կատարած արշավանքի մասին»,[10] որ պահվում է Ռուսաստանի Կենտրոնական ռազմասլատմական արխիվում, մանրամասն տրված են Օսմանյան կայսրության արևելյան նահանգների, այդ թվում՝ Ախալցխայի ընդհանուր նկարագիրը և 1828–1829 թթ. ռուս–թուրքական պատերազմի դրվագները:

Դեռ 19–րդ դարի 30–ական թվականներին հիմնախնդրի առանձին հարցերին անդրադարձ կատարեցին նաև հայ հեղինակները: Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունու հանձնարարությամբ մի քանի էրզրումահայ մտավորականներ ձեռնամուխ եղան 1830 թ. գաղթի պատմության ստեղծմանը: Մեզ հասած մի վավերագրի համաձայն՝ այդպիսի մի աշխատանք գրել է էրզրումցի Շահան Ջրպետ-

---

[7] История военных действий в азиатской Турции в 1828–1829 г., ч. 1–2, СПб., 1836 և նույնի երկրորդ հրատարակությունը՝ Варшава, 1843.

[8] Обозрение российских владений за Кавказом в статистическом, топографическом и финансовом отношениях, ч. 4, СПб., 1836.

[9] Зубов Платон, Картина Кавказского края принадлежащего России и сопредельных ему земель, СПб., 1835, Статистическое описание Закавказского края, сост. Орест Евецкий, СПб., 1835.

[10] РГВИА, ф. ВУА, д. 4643, лл. 1–285.

յանը, որն իր ձեռագիրը Թիֆլիսից ուղարկել է Կարապետ արքեպիսկոպոսին՝ խնդրելով կարդալ և նշել դիտողությունները:[11] Ցավոք, մեզ այդ գործը չի հասել, որի պատճառով հիմնահարցի շատ կողմեր առ այսօր մնացել են չլուսաբանված: Ախալցխայի ու Ախալքալաքի գավառների էթնիկ պատմության համար հույժ հետաքրքրություն ներկայացնող այդ զանգվածային տեղաշարժի մասին գրված աշխատություններից առանձնանում է Գյուտ քահանա Աղանյանցի «Կարնո գաղթը» երկը:[12]

19–րդ դարի երկրորդ կեսին Անդրկովկասի, այդ թվում Ջավախքի ու շրջակա տարածքների վերաբերյալ ասպարեզ եկան ավելի խորը գիտական աշխատություններ: Ցարական կառավարության հանձնարարությամբ նորանոր մասնագետ–պաշտոնյաներ ներգրավվեցին Անդրկովկասի պատմության, աշխարհագրության, տնտեսության ուսումնասիրման մեծածավալ աշխատանքների մեջ: Հրատարակվեցին կովկասագիտական բնույթի մենագրություններ, մատենաշարեր, ժողովածուներ ու պարբերականներ: Հարուստ հետազոտական նյութի հիման վրա հրապարակ եկան երկրամասի սոցիալ–տնտեսական ու մշակութային կյանքը լուսաբանող Գ. Ռադդեի, Լ. Զագուրսկու,[13] Ք. Ա. Վերմիշևի,[14] ռուսական ռազմաքաղաքական պլանները ներկայացնող՝ Ն. Դուբրովինի,[15] Վ. Պոտտոյի,[16] Ա. Շչերբատովի[17] և այլոց աշխատությունները: Վերջին երեք գրքերը, հիմ-

---

[11] Մատենադարան, Կարապետ արք. արխիվ, թղթ. 163գ, վավ. 1252, թ. 1:

[12] Աղանեանց Գ., Կարնո գաղթը (1829–1830), Թիֆլիս, 1891: Այս աշխատության մեջ մեծապես օգտագործված են կաթոլիկ հայության գաղթի անմիջական ղեկավարներից Եփրեմ Սեթյանի (Սեթ) նյութերը, որոնք Մ. Կարապետյանը հայտնաբերել է Վենետիկի Մխիթարյան միաբանության դիվանում և հրատարակել (Կարապետյան Մ., Եփրեմ Սեթը արևմտահայության 1829–1830 թթ. գաղթի մասին, ՊԲՀ, 1997, թիվ 2, էջ 285–294):

[13] Գ. Ռադդեի և Լ. Զագուրսկու աշխատությունները հաճախ գրականության մեջ սխալմամբ նույնացվել են միևնույն վերնագրի տակ (Поездка в ахалцихский уезд в 1872 г.) և նույն մատենաշարում (Записки кавказского отдела императорского русского географического общества (ЗКОИРГО), книга 8, Тифлис, 1873, с. 1–46 и с. 47–85) հաջորդաբար տպագրված լինելու պատճառով:

[14] Вермишев Х. А., Экономический быт государственных крестьян в ахалцихском и ахалкалакском уездах тифлисской губернии, Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края (МИЭБГКЗК), т. 3, Т., 1886, с. 1–282.

[15] Дубровин Н., История войны и владычества русских на Кавказе, т. 1, кн. 1, СПб., 1881, т. 5, СПб., 1887, т. 6, СПб., 1888.

[16] Потто В., Кавказская война в отдельных эпизодах, легендах и биографиях, т. 1, вып. 3, Т., 1885,. т. 4, вып. 1–4, Т., 1887–1888.

[17] Генерал-фельдмаршал князь Паскевич, составил князь А. Щербатов, т. 3, СПб., 1891.

նականում կրկնելով 19–րդ դարի առաջին երեսնամյակի ռուս–թուրքական պատերազմի մասին Ն. Ուշակովի շարադրանքը, հրապարակ հանեցին ռազմական պատմության հետաքրքրական շատ անցքեր:

Տնտեսագետ, հասարակական գործիչ Քրիստափոր Վերմիշևը, հիրավի, տիտանական աշխատանք կատարեց Թիֆլիսի նահանգի Ախալցխայի և Ախալքալաքի գավառներում: Հարուստ վիճակագրական, տնտեսական և այլ բնույթի նյութի հիման վրա, որի զգալի մասն առանձին աղյուսակներով զետեղվեց աշխատության մեջ, ստեղծվեց կարևոր հետազոտություն վերոհիշյալ գավառների պետական գյուղացիության 19–րդ դարի 80–ական թվականների համապարփակ պատմության մասին, որն առ այսօր չի կորցրել իր աղբյուրագիտական արժեքը:

Ինչպես ամբողջ Անդրկովկասի, այնպես էլ Ախալցխայի ու Ախալքալաքի գավառների հողատիրության, հարկային քաղաքականության, տնտեսության զանազան ճյուղերի վերաբերյալ ուշագրավ հոդվածներով հանդես եկան Մ. Ն. Կուչաևը, Ի. Լ. Բախտաձեն, Ա. Վ. Պարվիցկին, Յ. Ս. Մեդվեդևը, Ի. Զ. Անդրոնիկովը, Ֆ. Տ. Մարկովը և ուրիշներ:[18] Մեզ հետաքրքրող թեման արծարծող որոշ նյութեր տեղ գտան «Կովկասի տեղանքի և ցեղերի նկարագրության նյութերի» բազմահատոր ժողովածուում տպագրված Ի. Վ. Գոպաձեի, Վ. Իվանովի, Ա. Միքելաձեի, Խ. Ամարովի (Ամարյան), Կ. Գրիգորովի (Գրիգորյան) և այլոց աշխատություններում:[19]

Վիճակագրական բնույթի աշխատանքների մեջ իր ընդգրկումով հիշատակության արժանի է Կովկասի վիճակագրական տեղեկագրում հրատարակված «Թիֆլիսի նահանգի Ախալքալաքի գավառը» ուշագրավ նյութը:[20] Համանման նյութեր, ինչպես և հոդվածներ, լույս տեսան ամենամյա «Կովկասյան օրացույցի» համարներում: Մոսկվայում տպագրված մատենաշարերում, որոնք առանձնապես աչքի չեն ընկնում կովկասագիտական հարուստ նյութով,

---

[18] Վերոհիշյալ հեղինակների հոդվածները տե՛ս Свод материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказского края (СМИЭБГКЗК), т. 1, ч. 2, Т., 1887, с. 1–58, 60–231, т. 2, с. 93–192, т. 3, ч. 1, с. 1–184, т. 4, ч. 2, с. 1–135, т. 5, ч. 1, с. 157–357, т. 5, ч. 2, с. 73–149, 151–337 և այլն:

[19] Сборник материалов для описания местностей и племен Кавказа (СМОМПК), вып. 1, изд. 1, Т., 1881, с. 69–80, вып. 11, отд. 1, Т., 1891, с. 182–216, вып. 17, отд. 1, Т., 1893, с. 90–103.

[20] Ахалкалакский уезд тифлисской губернии. Статистический временник Кавказского края, вып. 2, Т., 1887, с. 1–95.

Թերևս կարելի է առանձացնել «Ռուսսկի արխիվում» տեղ գտած բարոն Նիկոլայի ճանապարհորդական նոթերը, որոնց զգալի մասն ընդգրկում է Թիֆլիսի նահանգի Ախալցխայի գավառը:[21] Անդրկովկասի վարչական կառուցվածքի ու կառավարման մասին 1901 թ. լույս տեսավ Վ. Իվանենկոյի դիրքը:[22]

Վկայակոչված ռուսական պաշտոնական գրականության նկատմամբ, որը որքան էլ ունի կարևոր աղբյուրագիտական նշանակություն և այսպես թե այնպես որոշակի ներդրում է թեմայի ուսումնասիրության ուղղությամբ, անհրաժեշտ է հանդես բերել խորը քննական մոտեցում: Գրեթե բոլոր աշխատություններում նկատելի է երկրամասը՝ իբրև գաղութ, այնտեղ ապրող ժողովուրդներին՝ ուղղակի հպատակներ ընկալելու, նրանց ազգային չահերն անտեսելու մոտեցումը: Անդրկովկասի համար Ռուսաստանի մղած պատերազմների թեմային նվիրված գրականության մեջ գերակչռում է ռազմական գործողություններում ռուսական զորքերի տարած հաղթանակների գովքը, ցարական իշխանությունների ժողովրդագրական քաղաքականության մեջ իսպառ բացակայում է հաճախ դրսևորվող բացասական միտումների լուսաբանումն ու գնահատականը:

19–րդ դարի վերջին Ջավախքի վերաբերյալ բազմակողմանի ուսումնասիրություններ կատարեց մեծանուն հայ ազգագրագետ Երվանդ Լալայանը: Տարիներ չարունակ ապրելով և աշխատելով Ախալքալաքում՝ նա կարողացավ հավաքել մեծ քանակությամբ պատմական, աշխարհագրական, ազգագրական, բանահյուսական նյութ, որը մաս–մաս հրատարակվեց «Ազգագրական հանդեսում»: Շնորհիվ Ե. Լալայանի՝ Ջավախքի պատմության ուսումնասիրությունը հայագիտության մեջ դրվեց գիտական հիմքերի վրա:

Ե. Լալայանի կատարած չնորհակալ աշխատանքը չարունակեցին ծագումով ախալցխացի հեղինակներ Եղիշե (Հովակիմ) Գեղամյանցը և Սուքիաս Էփրիկյանը, ախալքալաքցի գրող, ազգագրագետ Սեյլանը: Գեղամյանցը «Փորձ» ամսագրում մեծաթիվ արխիվային վաստաթղթերի օգտագործմամբ տպագրեց հոդվածաշար Կարապետ

---

[21] Русский архив, М., 1892, кн. 2, с. 462–478.

[22] Иваненко В. Н., Гражданское управление Закавказьем..., Т., 1901.

արքեպիսկոպոսի կյանքի ու գործունեության մասին,[23] իսկ Ս. Էփրիկյանը՝ «Բնաշխարհիկ բառարանում» հատուկ էջ նվիրեց Ախալցխային ու Ախալքալաքին:[24] Սեյլանը (Արշակ Մադոյան) թողեց բազմաթիվ տպագիր ու անտիպ գործեր, որոնց մի մասը վերջերս հրատարակվեց առանձին գրքույկով:[25]

1919 թ., ի պատասխան Անդրկովկասում վիճելի տարածքների վերաբերյալ տարբեր հեղինակների հրատարակած աշխատություններում տեղ գտած սխալ մեկնաբանությունների, Լեոն Հանդես եկավ «Սահմանավեճեր» գրքույկով, ուր ներկայացրեց հայ պատմագրության մոտեցումները խնդրի վերաբերյալ և վիճարկեց վրաց չրջանակների չատ հարցադրումներ Լոռու և Ջավախքի վերաբերյալ:

Հայ–վրացական հարաբերությունների ընդհանուր հենքի վրա Ջավախքի և Լոռու 1918–1920 թթ. պատմության ուսումնասիրությամբ զբաղվել են հայտնի քաղաքական գործիչներ, Հայաստանի Հանրապետության վերջին վարչապետ Սիմոն Վրացյանն ու 1918–1920 թթ. Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Արշակ Ջամալյանը: Իր հայտնի «Հայաստանի Հանրապետությունը» աշխատության մեջ Ս. Վրացյանը դեպքերի ականատեսի լավատեղյակությամբ, փաստավավերագրական նյութի հիման վրա, անդրադարձել է հայ–վրացական տարածքային վեճերի, 1918 թ. ռազմական առճակատման, Ջավախքի գաղթականության և այլ հիմնահարցերի: Այդ թեմային նվիրված Ա. Ջամալյանի բազմաթիվ աշխատություններ ևս ունեն աղբյուրագիտական արժեք, քանի որ գրվել են ձեռքի տակ եղած հարուստ փաստական նյութի հիման վրա: Օգտագործվել են դիվանագիտական նոտաներ, միջպետական համաձայնագրերի բնագիր օրինակներ և այլն:[26] Ա. Ջամալյանի աշ-

---

[23] Գեղամեանց Յ., Կարապետ արքեպիսկոպոս, Փորձ, Թ., 1876, թիվ 1, 1877, թիվ 3 (տե՛ս նաև այս աշխատության վերահրատարակությունը՝ Գեղամյանց Հ., Կարապետ արքեպիսկոպոս (կենսագրություն), առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Մելքոնյանի, Ե., 1999):

[24] Էփրիկեան Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Ա, Վենետիկ, 1902, էջ 53–61, 67:

[25] Սեյլան, Նշմարներ, Ե., 1999:

[26] Այդ վավերագրերի բնօրինակների մի մասը մենք հայտնաբերել ենք Հայաստանի տարբեր արխիվներում և կից ներկայացրել ենք աշխատության հավելվածում: Դրանց մի մասն էլ տեղ են գտել վերջերս հրատարակված «Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. (քաղաքական պատմություն)» փաստաթղթերի արժեքավոր ժողովածուում (կազմողներ՝ Գ. Գալոյան, Վ. Ղազախեցյան, Վ. Մելիքյան, Ս. Միրզոյան, Ա. Վիրաբյան, Ե., 2000):

խատուբյունների զգալի մասը լույս է տեսել արտասահմանյան մամուլում: Դրանցից խնդրո թեմային վերաբերող աշխատանքներից առանձնանում են Բոստոնի «Հայրենիք» ամսագրում և Փարիզի «Հառաջ» օրաթերթում հրատարակված հոդվածաշարերը[27]: Նույն թեմայի շուրջ որոշ հետաքրքրական հարցադրումներ կան պետական–կուսակցական գործիչներ Ալ. Խատիսյանի «Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը» (Բեյրութ, 1968) գրքում, Արտաշես Աբեղյանի, Ռոստոմ (Ստեփան) Զորյանի և այլոց հոդվածներում:[28]

Այդ ուշագրավ աշխատանքների լույսընծայման համար առիթ են հանդիսացել հայ–վրացական հարաբերությունների վերաբերյալ Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության կառավարության նախկին նախագահ Նոյ Ժորդանիայի «Մեր տարաձայնությունները» գիրքը և օտարալեզու մամուլում տպագրված բազմաթիվ հակահայկական հոդվածները, որոնցում ծուռ հայելու մեջ են ներկայացվել բազմապիսի հարցեր: Ա. Ջամալյանը հանգամանորեն անդրադարձել է հայ–վրացական հարաբերությունների բոլոր կողմերին, այդ թվում՝ տարածքային վեճերին՝ Ախալքալաքի և Բորչալուի գավառների պատկանելության հարցերին: Այդ խնդրի քննությանը նա մոտեցել է պատմական, աշխարհագրական, վարչաքաղաքական, տնտեսական ու մշակութային կտրվածքներով: Հատուկ ուշադրությունն է նվիրել ազգերի ինքնորոշման իրավունքի հարցին, որի կիրառումը վրաց սոցիալ–դեմոկրատիայի կողմից ձևականորեն համարվել է ընդունելի սկզբունք, բայց իրականում՝ ամեն կերպ ոտնահարվել է: Ա. Ջամալյանի աշխատությունները, ինչպես հեղինակն է իրավացիորեն նշում, ոչ միայն կարևոր են հարևան երկու ժողովուրդների «...յարաբերութիւններն աւրող կնճիռների վերացման, այլև հայ–վրացական քաղաքական գործակցութեան համար»:[29]

1918 թ. Ջավախք թուրքական ներխուժման, գաղթականության աղետալի վիճակի, 1919–1921 թթ. Ախալքալաքի գավառում վրացական իշխանությունների վարած քաղաքականության, հայ–

---

[27] Ջամալեան Ա., Հայ–վրացական կնճիռը, Հայրենիք, 1928 ապրիլ – 1929 ապրիլ: Նույնի, Իմ պատասխանը «Պրոմեթե»–ի և «Անկախ Վրաստան»–ի հրապարակագիրներին, Յառաջ, 1928, 12 հունիս – 11 հուլիս, թիվ 671–696:

[28] Աբեղեան Ա., Մենք եւ մեր հարեւանները, Հայրենիք, 1928, դեկտեմբեր, թիվ 2, Ռոստոմ, Հայ– վրացական փոխ յարաբերությունները, ՎԵՄ, 1936, հունվար–փետրվար, թիվ 1:

[29] Ջամալեան Ա. Հայ–վրացական կնճիռը, Հայրենիք, 1929, ապրիլ, էջ 157:

վրացական տարածքային վեճերի լուսաբանման տեսակետից մեծ կարևորություն են ներկայացնում այդ ժամանակի մամուլի էջերում Ջավախքցի հայտնի մտավորական, հասարակական գործիչ, Ախալքալաքի հայրենակցական միության (վարչության) քարտուղար Պողոս Աբելյանի զանազան թղթակցություններն ու հատկապես ՀՀ Նորագույն պատմության կենտրոնական պետական արխիվում պահպանվող նրա զեկուցագիրը «Ախալքալաքի գավառը» վերտառությամբ, որը գրված է Խորհրդային Հայաստանի արտգործժողկոմ Ա. Մռավյանի պատվերով:[30] Նույն հարցադրումների տեսակետից հետաքրքրություն է ներկայացնում «Զանգ» թերթում «Արաքս» կեղծանունով Ջավախքի թղթակցի տպագրած «Ախալքալակի գավառի տնտեսական և քաղաքական ներկան» հոդվածաշարը:[31]

Ջավախքին նվիրված ուսումնասիրությունների մեջ իր ուրույն տեղն ունի հայտնի քաղաքական գործիչ Ռուբեն (Մինաս) Տեր–Մինասյանի «Ախալքալակի պայքարը» հոդվածաշարը, ուր համառոտակի շարադրված է Ջավախքի պատմությունը միջնադարից մինչև 19–րդ դարի վերջն ու 20–րդ դարի սկիզբը: Ռուբենի այս հոդվածաշարը ևս, Արշակ Ջամալյանի վերոհիշյալ աշխատությունների օրինակով, յուրահատուկ պատասխան է հայ–վրացական հարաբերությունների առնչությամբ եվրոպական զանազան թերթերում և հանդեսներում վրաց գործիչների հրատարակած կողմնակալ հոդվածների: Հեղինակը հայ ուսումնասիրողների, քաղաքական գործիչների և մտավորականության ուշադրությունը հրավիրում է Ջավախքի բնակչության ազգային կազմի խնդիրների վրա մինչև 1830 թ. գաղթն ընկած ժամանակաշրջանը: Նա ընդգծում է այն հանգամանքը, որ դեռ որոշ հեղինակներ ու գործիչներ «թյուրիմացաբար կկարծեն, թե Ախալքալաքը հայացած է էրզրումի գաղթեն հետո, թե անոր բնակիչները եկվորներ են: Ընդհակառակն, էրզրումի գաղթով ավելի բազմացած է հայությունը. ուրիշ ոչինչ»:[32]

---

[30] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, ց. 2, գ. 3, թ. 122–134:

[31] Զանգ, Երևան, 1919, 22 մարտ, թիվ 33 և 30 մարտ, թիվ 36:

[32] Ռուբէն, Ախալքալակի պայքարը, Պրոշակ, Փարիզ, 1926, թիվ 1 և Հայաստան, ՀԱԱԿ պաշտոնաթերթ, Ե., 1990, թիվ 17–18, էջ 11: 19–րդ դարի վերջին արևմտահայ ազատագրական պայքարին իր և իր հայրենակից ջավախեցիների մասնակցության մասին ուշագրավ նյութեր կան նույն հեղինակի «Հայ յեղափոխականի մը յիշատակները» յոթհատորյակում (Թեհրան, 1982):

Խորհրդային իշխանության շրջանում հայ պատմագրությունը լիովին շրջանցել է Ջավախքի հիմնահարցը՝ դրան անդրադառնալով հարևանցիորեն, առանց քաղաքական խնդիրների արծարծումների: 1960–ական թվականներին, օգտվելով հասարակության որոշ ազատականացումից, հայ հեղինակների մի մասը չոշափեց տաբուի տակ գտնվող չատ թեմաներ, այդ թվում՝ Ախալքալաքի հարցը: Դրան անդրադարձավ Ս. Խարմանդարյանը, որը գաղտնազերծված արխիվային փաստաթղթերի հիման վրա հնարավորինս լուսաբանեց 1920–ական թվականների սկզբին անդրկովկասյան հանրապետությունների միջև գոյություն ունեցած տարածքային վեճերի խնդիրը:[33] *Սակայն բրեժնևյան շրջանում այդ գործընթացները կասեցվեցին, և հիմնահարցի ուսումնասիրությունը՝ քաղաքական կտրվածքով, կրկին դրվեց արգելքի տակ:*

Այդուհանդերձ, խորհրդային իշխանության վերջին տասնամյակներին լույս տեսան սակավաթիվ, բայց կարևոր մի քանի աշխատություններ, որոնց մեջ կարելի է առանձնացնել Բ. Հարությունյանի, Կ. Ղաֆադարյանի, Մ. Դարբինյանի, Ժ. Խաչատրյանի, Ս. Շիրինյանի և այլոց հոդվածները:[34] *Թերևս կարելի է հիշատակել նաև Ախալքալաքի ու Բոգդանովկայի բնակավայրերի մասին հայկական սովետական հանրագիտարանում Մ. Դարբինյանի, «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանում» Թ. Խ. Հակոբյանի, Ստ. Տ. Մելիք–Բախշյանի, Հ. Խ. Բարսեղյանի հոդվածները,*[35] *իսկ 1918 թ. գարնանը զորավար Անդրանիկի զորամասի դեպի Ախալքալաք չարժվելու հանգամանքների վերաբերյալ՝ Ծ. Աղայանի ստվա-*

---

[33] Хармандарян С. В., Ленин и становление закавказской федерации, Е., 1969.

[34] Հարությունյան Բ., Մեծ Հայքի Գուգարք աշխարհը ըստ «Աշխարհացոյց»–ի, ԲԵՀ, 1977, թիվ 2, Ղաֆադարյան Կ., Նյութեր Ախալցխայի հայ համայնքի պատմության վերաբերյալ, ՊԲՀ, 1967, թիվ 1, էջ 117–124, Դարբինյան Մ., Ախալցխա, Հայկական սովետական հանրագիտարան, հ. 1, Ե., 1974, էջ 196, Ախալքալաք, նույն տեղում, էջ 197–198, նույնի՝ Վավերագրեր պարսկահայերի և արևմտահայերի 1828–1830 թթ. գաղթի վերաբերյալ, ԲՀԱ, 1973, թիվ 2, էջ 135–146, նույնի՝ Արևմտահայերի 1829–1830 թթ. գաղթը Հայկական մարզ և հարակից շրջաններ, ՊԲՀ, 1974, թիվ 2, էջ 91–100, Хачатрян Ж. К., Армянские народные пляски Джавахка, автореферат диссертации на соискание ученой степени канд. ист. наук, Е., 1971, Շիրինյան Ս., Արհեստները Ախալքալաքում, Երևանի համալսարան, 1980, թիվ 3, էջ 39–42:

[35] Հայկական սովետական հանրագիտարան, հ. 1, Ե., 1974, էջ 196–198: Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1–5, Ե., 1986–2001: Ախալցխայի ու Ախալքալաքի մասին նմանատիպ հոդվածներ տպագրվեցին 1990–1991 թթ. (տե՛ս Ա. Մելքոնյան, Հայկական համառոտ հանրագիտարան, հ. 1, Ե. 1990, էջ 98–100, Армянский вопрос, энциклопедия, Е., 1991, с. 67–68).

րածավալ մենագրությունը:[36] 1980–ականներին մոռացված այդ խնդրին վերադառնալու յուրահատուկ փորձ էր Հայաստանի հնագիտության և ազգագրության ինստիտուտի կողմից Ե. Լալայանի երկերի ժողովածուի առաջին հատորի հրատարակությունը, որում ամփոփվեցին անվանի ազգագրագետի հայտնի բոլոր աշխատանքները՝ նվիրված Ջավախքի հիմնահարցերին:[37]

1970–1980–ական թթ. Հայաստանի առաջին հանրապետության պատմության մասին ծանրակշիռ աշխատություն ստեղծեց սփյուռքահայ անվանի պատմաբան Ռիչարդ Հովհաննիսյանը: Օգտագործելով տարբեր երկրների արխիվներից քաղված հարուստ աղբյուրագիտական նյութ՝ նա բազմապիսի հիմնահարցերի շարքում լայնորեն անդրադարձավ նաև 1918–1920 թթ. հայ–վրացական հարաբերությունների հիմնահարցերին ու այդ հենքի վրա՝ Լոռու և Ախալքալաքի գավառների խնդիրներին:[38]

Հայկական պետականության վերականգնումից հետո հայ պատմագրության մեջ հնարավոր եղավ, ի թիվս հայոց պատմության կնճռոտ այլ հիմնահարցերի, լուրջ հետազոտության թեմա դարձնել Ջավախքի պատմությունը: Դեռևս խորհրդային պետության տարիներին մի խումբ ջավախքցի մտավորականներ զգալի աշխատանք էին կատարել այդ ուղղությամբ: Ջբավարարվելով հրապարակի վրա եղած սահմանափակ տպագիր գրականությամբ, նրանցից չատերը, չրջելով տարածաշրջանի բազմաթիվ հայկական բնակավայրերով, մեծ քանակությամբ նյութ էին կուտակել: Օգտվելով նոր ժամանակների ընձեռած հնարավորությունից՝ նրանցից չատերը հնարավորություն ունեցան հրատարակել իրենց աշխատանքները: Դրանց մեծ մասը հայրենի գյուղին, բնաշխարհին նվիրված, ճանաչողական բնույթի հետաքրքրական գրքույկներ[39] են, որոնց հեղինակները հնարավորության սահմաններում չարադրել են իրենց հայրենի

---

[36] Աղայան Օ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Ե., 1976:
[37] Լալայան Ե., Երկեր, հ. 1, Ե., 1983:
[38] Hovannisian R. G., The Republic of Armenia, vol. 1, Berkeley, Los Angeles, London 1971, pp. 68–78, 93–125, 341–359, vol. 2, pp. 140–167, vol. 3, pp. 113–115, 124, 204–205.
[39] Բոգդանովկայի շրջան, տեղեկագիրք, կազմողներ՝ Մ. Կարախանյան, Ժ. Սնխչյան, Մ. Սեդրակյան, Լ. Դազարյան, Մ. Եսոյան, Մ. Վարդանյան, Ս. Երանոսյան, Բոգդանովկա, 1992, Դոխոյան Ա., Գյուղն Կարզախ, Ե., 1995, Իսոյան Ա., Սաթխա, Ե., 1995, Միքայելյան Հ. Ս., Ծալկայի ազգագրությունը և բանահյուսությունը, գյուղ Ղուշչի, Ե., 1998, Բերակչյան Լ. Ա., Լոմատուրցխ գյուղի պատմաաշխարհագրական ակնարկը, 1999, Շիրինյան Ս., Ախալքալաքցիներ, Ե., 2000 և այլն:

օջախների, դրանց բնակիչների, կենցաղի, սովորույթների բազմաթիվ ու ուշագրավ մանրամասներ: Առանձին բնակավայրերի ուսումնասիրության տեսակետից ուշադրության արժանանում են հատկապես Ալբերտ Իսոյանի աշխատանքները, որոնցից վերջինը բավական համապարփակ պատկերացում է տալիս Ջավախքի Սաթխա, Մեծ Արագյալ և Փոքր Արագյալ գյուղերի մասին:[40]

Հրատարակվեցին նաև ամբողջ գավառի և հարակից շրջանների պատմական անցքերը ներկայացնող աշխատություններ, որոնց մեջ առանձնանում են Ա. Սանոսյանի, Ա. Դավթյանի և Ս. Արոյանի աշխատությունները: Արխիվային և դաշտային–ազգագրական նյութի հիման վրա Արտյուշա Սանոսյանի հրատարակած բազմաթիվ հոդվածներ ամփոփ տեսքով զետեղվեցին նրա «Ախալցխայի և Ախալքալաքի գավառների 1918 թ. ինքնապաշտպանությունը» արժեքավոր մենագրության[41] *մեջ, որում հեղինակը կարողացավ ցույց տալ, որ Ախալցխայի ու Ախալքալաքի հայությունը 1918 թ. դժնդակ օրերին ոչ միայն ընտրեց արտագաղթի աղետաբեր ուղին, այլև հերոսական ինքնապաշտպանության շնորհիվ պահպանեց իր ֆիզիկական գոյությունը: 2000 թ. լույս տեսավ նաև նույն հարցերին վերաբերող Երվանդ Սիմոնյանի «Ախալցխան կրակե օղակում» ուշագրավ գիրքը, որը դեռ ճեռագիր վիճակում լայնորեն օգտագործվել էր Ա. Սանոսյանի կողմից: Ե. Սիմոնյանի աշխատանքը զուտ գիտական նշանակությունից բացի ունի նաև աղբյուրագիտական արժեք, քանզի նրա հեղինակը, լինելով Ախալցխայի 1918 թ. հերոսամարտի ժամանակակիցն ու մասնակիցը, դեպքերի չարադրանքը ներկայացնում է ականատեսի լավատեղյակությամբ:*

Ավետիս Դավթյանի երկար տարիների շնորհակալ աշխատանքի արդյունքն ամբողջացվեց «Ջավախք» և «Հայկական և հայախառը բնակավայրերը Վրաստանում» գրքերով:[42] *Այս աշխատությունները որոշակի ներդրում եղան Ջավախքի և հատկապես, ներկայիս*

---

[40] Իսոյան Ա., Սաթխա, Մեծ Արագյալ, Փոքր Արագյալ, Ե., 2001: Ա. Իսոյանը հրատարակության է նախապատրաստել նաև «Սամցխե-Ջավախքի նշանավոր հայորդիները» աշխատությունը:

[41] Սանոսյան Ա., Ախալցխայի և Ախալքալաքի գավառների 1918 թ. ինքնապաշտպանությունը, Ե., 1992: Ա. Սանոսյանն իր հրատարակած հոդվածների մի մասը՝ լրացումներով ու նոր նյութերով զետեղել է նաև «...նաև սպիտակ եղեռն» աշխատության մեջ (Ե., 2001):

[42] Դավթյան Ա., Ջավախք, Ե., 1994, նույնի, Հայկական և հայախառը բնակավայրերը Վրաստանում, Ե., 1997:

ամբողջ Վրաստանի հայկական բնակավայրերի ուսումնասիրության բնագավառում:

Ուշադրությունից դուրս չմնաց նաև Ջավախքի կաթոլիկ հայության պատմության ուսումնասիրությունը: Այդ բնագավառում խիստ արժեքավոր աշխատությամբ հանդես եկավ ճանաչված հայագետ Պիոն Հակոբյանը:[43] Նա հարուստ ու բազմաբնույթ նյութի քննությամբ լուսաբանեց 18–րդ դարի վերջին տասնամյակներին քաղաքական չարժառիթներով Ախալցխայի էյալեթի մի շարք հայաառաքելական բնակավայրերի, այդ թվում՝ Ախալցխա քաղաքի հայության կաթոլիկացման բարդ ու հակասական գործընթացը: Նույն թեմայի անդրադարձով աչքի ընկավ նաև Սալավաթ Արոյանը՝ «Բնկորներ Մշո Ջոջ քարի» շահեկան աշխատությամբ:[44] Հեղինակը հայրենասիրական շնչով և գիտական պատշաճությամբ շարադրել է Ջավախքի մի շարք գյուղերի, նրանց մշեցի ակունքների ուշագրավ պատմությունը, վեր հանել հայրենի երկրամասի քաղաքական, սոցիալ–տնտեսական պատմության բազմաթիվ չգրված էջեր, ընդգծել հայ կաթոլիկական ու առաքելական համայնքների միջև ազգային միասնականության պահպանման կենսական անհրաժեշտությունը:

Ինչպես հայկական այլ երկրամասերի, այնպես էլ Ջավախքի պատմամշակութային արժեքների ուսումնասիրության բնագավառում չնորհակալ աշխատանք է կատարում Ս. Կարապետյանը: Հատկապես նրա «Ջավախքի խաչքարերը» աշխատությունը[45] միանգամայն նոր խոսք է գավառի հայկական պատմամշակութային կոթողների, մասնավորապես՝ խաչքարերի մասին: Հետազոտողը կարողացել է անձամբ հայտնաբերել, վերծանել ու թվագրել բազմաթիվ խաչքարեր՝ կրկին վերահաստատելով այդ տարածաշրջանում հայերի վաղնջական մշակութային ու էթնիկ ներկայությունը:

Ջավախքի հիմնահարցերին այս կամ այն չափով անդրադարձան նաև ճանաչված պատմաբաններ Հ. Սիմոնյանը, Գ. Գալոյանը, Հ. Ավետիսյանը, Ծ. Աղայանը, Ա. Համբարյանը,[46] Վ. Ղազախեցյա-

---

[43] Յակոբյան Պ., Հայ կաթոլիկութիւնը պատմա–քննական լոյսի տակ, Հրաւէր ողջմտութեան, էջմիածին, 1993, էջ 25–132:

[44] Արոյան Ս., Բեկորներ Մշո Ջոջ քարի. հայրենագիտական ակնարկ, Ե., 1997:

[45] Կարապետյան Ս., Ջավախքի խաչքարերը, Ե., 1995:

[46] Համբարյան Ա., Ջավախքի ժողովրդագրության պատմությունից, Ե., 1998:

նը,[47] Է. Զոհրաբյանը, Վ. Թունյանը, Ե. Սարգսյանը, Ա. Հարությունյանը, Վ. Դիլոյանը, Պ. Մուրադյանը, ազգագրագետ Վ. Բդոյանը, բանասեր Վ. Մաղալյանը, պատմաբան–քարտեզագիր Գ. Բագդասյանը, տնտեսագետ Գ. Կարապետյանը և ուրիշներ: Ջավախքի պատմությանն ու ազգագրությանը նվիրված Վարդ Բդոյանի անտիպ աշխատությունը 2002 թ. փետրվարից մաս–մաս հրատարակվում է «Ջավախք» հայրենակցական–բարեգործական միության պաշտոնաթերթի «Ասպնջակի» էջերում:

Հ. Սիմոնյանի երկհատոր «Անդրանիկի ժամանակը»[48] գրքում քննության առնված մեծաթիվ հիմնախնդիրների մեջ տեղ են գտել առաջին համաշխարհային պատերազմում Ախալքալաքի գավառի նկատմամբ թուրքական զավթողական ծրագրերի, 1917 թ. Անդրկովկասի վարչական վերաբաժանման շուրջ հայ, վրաց և ադրբեջանական քաղաքական շրջանակների, ինչպես և ժամանակավոր կառավարության ու Անդրկովկասյան կոմիսարիատի մոտեցումների, 1918 թ. ապրիլին դեպի Ախալքալաք զորավար Անդրանիկի ձեռնարկած զինարշավի ընդհատման պատճառների և այլ հարցեր:

Հ. Ավետիսյանի «Հայկական հարցը 1918 թվականին» աշխատությունը բազմաթիվ ու բազմապիսի հարցերի հետ նոր լույս է սփռում հատկապես 1918 թ. մարտ–հունիս ամիսներին Բրեստից մինչև Բաթումի պայմանագրի ստորագրումն ընկած ժամանակահատվածում, մի կողմից՝ Օսմանյան կայսրության զավթողական պլանների, մյուս կողմից՝ Անդրկովկասի ազգային–քաղաքական ուժերի միջև սահմանային խնդիրների շուրջ ընթացող դիվանագիտական սուր պայքարի տակավին չուսումնասիրված խնդիրների վրա:

Գ. Գալոյանն իր «Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ. » մենագրությունում[49] բազմալեզու աղբյուրների հիման վրա ներկայացրել է Հայաստանի նկատմամբ մեծ տերությունների վարած խարդախ քաղաքականությունը, խորը վերլուծության ենթարկել հայ–վրացական, թուրք–վրացական միջպետական հարաբերությունների ողջ բարդ ու հակասական ոլորտը, անդրադարձել

[47] «Հայոց պատմություն, նյութերի ժողովածու», Ե., 1993, էջ 189–193, «Հայոց պատմություն», հանրակրթական դպրոցի 8–րդ դասարանի դասագիրք, Ե., 2000, էջ 17–18: Վ. Ղազախեցյանի հրատարակած արխիվային նյութերի մասին տե՛ս ստորև:

[48] Սիմոնյան Հ. Ռ., Անդրանիկի ժամանակը, գիրք Ա–Բ, Ե., 1996:

[49] Գալոյան Գ. Ա., Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ , Ե., 1999:

Ա 88093

խորհրդային իշխանության առաջին ամիսներին Ջավախքի, Լոռու, Ղարաբաղի և այլ վիճելի տարածքների շուրջ տեղի ունեցած քննարկումներին և այլն:

Գ. Կարապետյանը «Ջավախքը 1830–1930 թվականներին» հոդվածում[50] տպագիր և արխիվային նյութի հիման վրա ցույց է տվել Ախալքալաքի բնակչության տեղաշարժերը, կրթական հոգևոր–եկեղեցական կյանքի առաջընթացն ըստ բնակավայրերի:

Ամփոփելով հայ պատմագրության մեջ Ջավախքի շուրջ ստեղծված գրականության տեսությունը՝ կարելի է նկատել, որ արվածը չի կարող բավարար համարվել:[51] Տակավին բացակայում են հիմնահարցի ամբողջական և համակողմանի պատմությունը ներկայացնող աշխատություններ: Այդ ուղղությամբ, թերևս, արված առաջին քայլը 2002 թ. Բեյրութում «Հայրենի Ջավախք» ստվարածավալ ժողովածուի լույսընծայումն է: Այստեղ տեղ են գտել ինչպես 1920–30–ական թվականներին Ռ. Տեր–Մինասյանի, Ա. Ջամալյանի, Ա. Աբեղյանի տպագրած վերոնշված մի քանի աշխատություններ, այնպես էլ գավառի պատմության, մշակութային կոթողների, ներկայիս աշխարհաքաղաքական խնդիրների, կրթական կյանքի վերաբերյալ մի խումբ պատմաբան–մասնագետների, քաղաքագետների ու լրագրողների ուշագրավ հոդվածները:[52]

Վրացական հեղինակները Ջավախքի և Սամցխեի պատմությանը լայնորեն անդրադարձել են դեռևս 19–րդ դարից: Նախախորհրդային տարիներին վրաց հեղինակներից հատկապես կարևոր աշխատանք է կատարել Թիֆլիսի սբ. Նինոյի իգական վարժարանի

---

[50] Կարապետյան Գ. Հ., Ջավախքը 1830–1930 թվականներին (բնակչություն և բնակավայրեր), ԲԵՀ, 1998, թիվ 2, էջ 97–114:

[51] Հատկանշական է, որ վերջին տարիներին որոշ հեղինակներ ոչ միայն պարզունակ մոտեցումներ են հանդես բերում, այլև վերոհիշյալ աշխատություններն ուղղակիորեն վերապատմում են, երբեմն էլ՝ առանց աղբյուրը վկայակոչելու, հատվածաբար արտագրում, վերջիններիս հայտնաբերած ամբողջական փաստաթղթեր՝ մեկնաբանում կամայականորեն: Այսպես՝ վկայակոչենք միայն մեկը. վերջերս Ս. Ջուռնաջյանի լույս ընծայած «Ջավախք. ժամանակագրություն» (Ե., 2002) գրքում, ուշագրավ նյութի կողքին, ցավոք, առկա են նման շատ դեպքեր: Նշված գրքի էջերը (18, 19, 22-23, 28-29, 33, 100-101, 111 և այլն) համեմատի՛ր տողերիս հեղինակի «Ջավախք. պատմության ուրվագծեր» (Ե., 1999) աշխատության հետ (էջ 13-14, 56-62 և այլն):

[52] Հայրենի Ջաւախք, Պէյրութ, 2002: Ժողովածուում զետեղվել է նաև մեր հոդվածաշարը, որը համառոտ տարբերակով ընդգրկում է Ջավախքի ամբողջական պատմությունը (տե՛ս էջ 39–107, 166–176): Հիմնահարցի ուսումնասիրման խնդրում կարևոր ներդրում հանդիսացավ նաև 2002 թ. մայիսին Ախալքալաքում անցկացված գիտաժողովը, որի

ուսուցիչ Ի. Պ. Ռոստոմովը (Ռոստոմաշվիլի): Նրա հավաքած դաշտային հնագիտական ու ազգագրական նյութը մաս–մաս հրատարակվել է կովկասագիտական զանազան պարբերականներում: Այդ գործերից հիշատակության արժանի է «Ախալքալաքի գավառը հնագիտական առումով» աշխատությունը,[53] որում «Քարթլիս ցխովրեբայում» (Քարթլիի տարեգրությունը) տեղ գտած հիշատակությունների հիման վրա համառոտակի ներկայացվում է Ջավախքի պատմությունը հին ժամանակներից մինչև ռուսական տիրապետության հաստատումը: Աշխատության երկրորդ մասում բերվում են Ախալքալաքի գավառում հայտնաբերված վրացերեն վիմագիր արձանագրությունների վերծանությունները:

Սակայն, ինչպես քաղաքական պատմության, այնպես էլ վիմագիր աղբյուրների ընտրության հարցում Ի. Ռոստոմովի մոտ նկատելի է որոշակի միտումնավորություն: Շրջանառության մեջ դրված բացառապես վրացալեզու աղբյուրների պատճառով չարադրանքը ստացվել է խիստ միակողմանի: Հետագայի շատ ուսումնասիրողներ, առանց այլ աղբյուրների հետազոտության, վերաշարադրելով այս աշխատությունը՝ հաճախ քաղաքական նկատառումներով, կրկնել են միևնույն սխալները: Փաստորեն, ի սկզբանե, հիմնախնդիրը քաղաքականացվել է: Պատահական չէ, որ չուտով հանդես եկած մեկ այլ հեղինակ՝ Իվանե Գվարամաձեն, հայերին հանդիմանել է վրացական տարածքներն ու մշակույթը յուրացնելու, եկեղեցիները քանդելու և այլ «մեղքերի» մեջ:[54]

Վրաստանի և հարևան երկրների, հայ–վրացական հարաբերությունների համակողմանի ուսումնասիրությամբ հանդես եկած վրացի հեղինակների մեջ առանձնանում է հայտնի պատմաբան, հայագետ Իվանե Ջավախիշվիլին: Մեզ հետաքրքրող հարցերի տեսակետից, առավելապես 1918–1919 թթ. հայ–վրացական սահմանային վեճերի առնչությամբ հիշատակելի է նրա «Վրաստանի սահմանները» գիրքը,[55] որում հեղինակն անվիճելի էր համարում վրաց պետության և ժողովրդի «օրինական» իրավունքները վիճելի նկատվող Լոռու և

նյութերը հրատարակվեցին առանձին ժողովածուով (տե՛ս Կերոն – 2002, Ջաւախքեան գիտաժողովի նիւթեր, կազմողներ՝ Հ. Ալվրցեան, Ա. Մադոյեան, Եր., 2002):

[53] Ростомов И. П., Ахалкалакский уезд в археологическом отношении (СМОМПК), вып. 25, Т., 1898.

[54] გვარამაძე ი., "მოგზაური", 1901, N 11, გვ. 1035–1036.

[55] ჯავახიშვილი იუანე, საქართველოს საზღვრები, თბ., 1919.

Ախալքալաքի նկատմամբ: Նրա կարծիքով «վրացիները պետք է խստագույնս արձագանքեն Ջավախեթիան յուրացնելու հայերի փորձերին», որոնք, որպես «եկվորներ», պարտավոր են լքել Ախալքալաքի գավառը՝ իրենց տեղը զիջելով ապօրինաբար Օսմանյան կայսրություն քշված իրական տերերին՝ վրացի մեսխերին:[56] Ի. Ջավախիշվիլու մոտ այդ տեսակետները ավելի խորացվեցին և առավել կարծր դիրքերից ներկայացվեցին խորհրդային իշխանության առաջին տարիներին: Իր կառավարությանը ներկայացրած զեկուցագրում 1920-ական թվականների սկզբին նա պնդում էր, որ սահմանային խնդրում որևէ զիջում հայկական կողմին անընդունելի է: Ավելին, հայերին Վրաստանի կազմում ինքնավար կարգավիճակի տրամադրումը կարող է լրջորեն վտանգել վրաց պետականությունը:[57]

Խորհրդային իշխանության տարիներին հաստատված քաղաքական գրաքննության պայմաններում, Ջավախքի հիմնահարցերի հետազոտության մենաշնորհը թողնվեց բացառապես վրաց պատմագրությանը: Պատահական չէ, որ տասնամյակներ շարունակ խնդրին նվիրված այլազգի, մասնավորապես՝ հայ հեղինակների աշխատություններ հրապարակ չհանվեցին: Թերևս կարելի է հիշատակել 1933 թ. ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի հանձնարարությամբ, ակադեմիկոս Ն. Մառի խմբագրությամբ, ռուսերենով տպագրված «Ջավախեթիա» արժեքավոր ժողովածուն, որն էլ ոչ թե պատմագիտական, այլ Ախալքալաքի սարահարթի բնական ռեսուրսների, բնակլիմայական պայմանների համապարփակ քննությունը ներկայացնող մի կոլեկտիվ աշխատություն էր:[58]

Պետք է նկատել, որ վրաց պատմագրության մեջ նախապես նկատելի էր քաղաքական խնդիրներից խուսափելու և նախապատվությունը օտարալեզու աղբյուրների թարգմանությանն ու հրատարակությանը տալու մոտեցումը: Այդ իմաստով հատկանշական է

---

[56] ჯავახიშვილი ივანე, նշվ. աշխ., էջ 55:

[57] არტანუჯი, ახალგაზრდა ისტორიკოსთა სამეცნიერო პოპულარული ჟურნალი, თბ., 1998, N 7. Լոռին և Ջավախքը «յուրացնելու» հայերի «նկրտումների բացահայտմանը» նվիրված Իվ. Ջավախիշվիլու սույն զեկուցագրի մի տարբերակը, որը հրատարակել է Բ. Արվելաձեն «Լիտերատուրուլի սաքարթվելո»-ում (23 սեպտեմբեր, 1988), թարգմանաբար տե՛ս «Հայ-վրաց գրական, պատմամշակութային հարցերը վրաց մամուլում (1988-1990)», նյութերի ժողովածու, կազմեց, առաջաբանը գրեց և վրացերենից թարգմանեց Հ.Բայրամյանը, Ե., 2001, էջ, 53-62:

[58] Джавахетия, материалы по изучению природных ресурсов ахалкалакского нагорья, Т., 1933.

ակադեմիկոս Ս. Ջիքիայի վերոհիշյալ եռահատոր աշխատանքը, որի վրացերեն և օսմաներեն բնագրերը, ինչպես նշվեց, տպագրվել էին 1940–ական թվականներին: Սակայն հիմնահարցի որոշակի քաղաքականացումից հետո՝ 1950–ական թթ., Ջիքիան հրապարակ հանեց սկզբնաղբյուրի իր մեկնաբանությունը՝ երրորդ հատորը,[59] որն այլևս աչքի չէր ընկնում գիտական անաչառությամբ: Այստեղ որոշակիորեն նկատվում էր Ախալցխայի էյալեթը բացառապես քարթվելաբնակ ներկայացնելու հեղինակի ձգտումը:

Հետպատերազմյան տարիներին խնդրի, մասնավորապես՝ 16–րդ դարից մինչև 19–րդ դարի առաջին կեսն ընկած ժամանակահատվածը, մանրազնին ուսումնասիրվեց Շոթա Լոմսաձեի կողմից: Նրա բազմաթիվ աշխատություններից հիշատակելի է «Սամցխե–Ջավախեթին»: Հեղինակը բավական հարուստ աղբյուրագիտական նյութի և տպագիր գրականության համադրությամբ ներկայացրել է Ախալցխայի փաշայության պատմությունը, ուշ միջնադարում երկրամասին տիրելու համար Քարթլիի թագավորների մղած պայքարի դրվագները, թուրքական և ռուսական տիրապետության շրջանում Ախալցխայի վարչական կառավարման հարցերը, տեղի փաշաների տոհմաբանությունը, նահանգի սոցիալ–տնտեսական կյանքը, քաղաքների, բնակչության ազգային կազմի հիմնախնդիրները:[60] Միաժամանակ հարկ է նշել, որ մի շարք հարցերում նրա մոտեցումներում առկա է կողմնակալություն, մասնավորապես բնակչության էթնոկրոնական և դավանաբանական պատկերը վերականգնելու խնդրում: Հատկապես վիճելի է հեղինակի այն պնդումը, թե մեսխերը միանշանակ ունեցել են վրացական ծագում, և նրանց մեջ չեն եղել այլ քրիստոնյա ժողովուրդներ և թուրքեր: Մերժելի է նաև այն տեսակետը, թե իբր Սամցխե–Ջավախքի կաթոլիկ բնակչությունը, այդ թվում և հայ կաթոլիկները, ունեն բացառապես քարթվելական ծագում:

---

[59] Გურჯისტანის ვილაიეთის დიდი დავთარი, წ. 3, თბ., 1958.
[60] ლომსაძე შ., სამცხე ჯავახეთი, თბ., 1975.

Պատմահնագիտական տեսանկյունից խնդրի ուսումնասիրությամբ առանձնանում են Լ. Դավլիանիձեի,[61] Է. Ջանդիերիի[62] և Վ. Յիսկարիշվիլու[63] աշխատությունները:

Վրացական պատմագրությունը վերջին տարիներին ավելի ու ավելի մեծ տեղ է հատկացրել Ջավախքի հիմնահարցին՝ այն պատճառաբանելով խնդրի արդիական, քաղաքական կարևորությամբ: Այդ իմաստով առանձնակի ջանադրություն են հանդես բերել Դևի Բերձենիշվիլին[64] և Լավրենտի Ջանիաշվիլին:[65] Դ. Բերձենիշվիլին լայնորեն անդրադարձել է տարածաշրջանի պատմական աշխարհագրությանը, իսկ «Ջավախեթի Ախալքալաքը» ընդարձակ հոդվածով հանդես է եկել խնդրի վերաբերյալ վրաց պատմագրության հայեցակարգի ներկայացմամբ և հայկական աղբյուրների տեղեկություններին «քննությամբ», հայ պատմաբանների ու քաղաքական շրջանակների «նկրտումների» քննադատությամբ: Նա զանազան աղբյուրների համադրությամբ փորձում է ապացուցել, որ Ախալքալաքն ու նրա գավառը որևէ առնչություն չունեն հայ իրականության հետ. կասկածի տակ է առնվում Ջավախքում հայերի գոյությունը հաստատող խաչքարերի հավաստիությունը, հայերի մասին աղբյուրներում հանդիպող հաղորդումները համարվում են կամ կասկածելի, կամ ոչ էական:[66]

Լ. Ջանիաշվիլին 1999 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Սամցխե–Ջավախեթի հայ բնակչության կենցաղն ու մշակույթը» թեմայով: Հեղինակը գրում է, որ «Մեր երկրի ոչ վրացի բնակչության ազգագրական ուսումնասիրությունն ունի ոչ

---

[61] Давлианидзе Л. С., К изучению цундско-тмогвских хачкаров (крестов камней), აკად. ვანა შიას სახელობის საქართველოს სახელმწიფო მუზეუმის შრომები, N, XX, თბ., 1958.

[62] Джандиери Е. Г., Ахалкалаки Джавахетский (историко-археологическое исследование). Автореферат диссертации на соискание ученой степ. канд. ист. наук, Тб., 1983.

[63] ცისკარიშვილი ვ. ჯავახეთის ეპოგრაფიკა როგორც საისტორიო წყარო, თბ., 1959.

[64] ბერძენიშვილი დ. ჯავახეთის ისტორიული გეოგრაფიის საკითხები..., თბ., 1975, ნარკვევები საქართველოს ისტორიული გეოგრაფიიდან. ზემო ქართლი თორი, ჯავახეთი, თბ., 1985, ახალქალაქი ჯავახეთისაი, არტანუჯი, 1998, N 7.

[65] ჯანიაშვილი ლ. სომხები სამცხე ჯავახეთში, გამოშცემული ჟურნალი "ქართული ფოლკლორი", თბ., 1995, ეთნიკური პროცესები სამცხე ჯავახეთში, ჟურნალი "პოლიტიკა", 1997, N 1, რამდენიმე საკითხი შესხეთის ქართველ კათოლიკეთა ისტორიიდან, ჟურნალი "მნათობი" 1997, N 3, Джаниашвили Л., Несколько аспектов переселения армян в Самцхе-Джавахетию (см. Интернет, http:caucasia. iatp. org. ge/N1/Rus–Resume/Janiashvili. htm).

[66] ბერძენიშვილი დ. ახალქალაქი ჯავახეთისაი, არტანუჯი N 7, გვ. 18, 19, 24.

միայն գիտական, այլև ներկայիս սոցիալ–քաղաքական և տնտեսական լարվածության պայմաններում գործնական նշանակություն»: Ըստ էության՝ որևէ նոր խոսք չավելացնելով պրոբլեմի ուսումնասիրության բնագավառում՝ Բերժենիչվիլին և Ջանիաշվիլին կրկնում են նախորդ հեղինակների պնդումները Ախալքալաքի գավառի հայ բնակչության «եկվորության», կաթոլիկ հայերի և «մեսխեթցի» թուրքերի վրացական ծագման, Ռուսական կայսրության վարած հայամետ ու վրացատյաց քաղաքականության, երկրամասի բռնի հայացման վերաբերյալ: Թերևս նորությունը, որն ավելի շուտ քաղաքական բնույթի է, քան գիտական, իբր Ջավախքի հայության, հատկապես վերջին տարիներին դրսևորած անջատողականությունն է:[67]

Լ. Ջանիաշվիլու նորամուծություններից մեկն էլ այն է, որ արևմտահայերը, 1829 թ. Ադրիանապոլսի պայմանագրից հետո, հաստատվելով Ջավախքում, լայնորեն «յուրացրել են» վրացական կենցաղի բազմաթիվ գծեր՝ անասնապահությունից, արհեստներից մինչև բնակարանների կառուցման եղանակները: Հեղինակը կամ չի ուզում ընդունել, կամ էլ տեղյակ չէ, որ էրզրումահայերը, ինչպես վկայում են ժամանակի բազմապիսի ու բազմալեզու աղբյուրները, իրենց զարգացման մակարդակով ամբողջ Առաջավոր Ասիայում զբաղեցնում էին առաջատար դիրք և, բնականաբար, չէին կարող այդօրինակ ազդեցություններ կրել, առավել ևս, որ 1830 թ. գաղթի նախօրյակին հիմնականում ամայացած ու անմարդաբնակ դարձած Ախալքալաքի և Ախալցխայի գավառներում վրացական բնակչություն գրեթե չկար: Ընդհակառակը, գաղթից հետո վրացական փոքրաթիվ համայնքն ինքն է կրել հայկական ազդեցություններ: Հատկանշական է, որ ինչպես նախորդ, այնպես էլ ներկայիս վրաց ուսումնասիրողները հիմնականում անտեսել են հայկական նյութը, իսկ վրացական և օտարալեզու աղբյուրների «հայանպաստ» հաղորդումները՝ հաճախ չրջանցել:

Ինչպես Ջավախքի, այնպես էլ ամբողջ Վրաստանի հայերի պատմությանն է նվիրված Շոթա և Օթար Թեթվաձենների «Հայերը Վրաստանում» աշխատությունը, որում հեղինակները չարունակում են «զարգացնել» վրաց պատմագրության մեջ ընդունված այն տե-

---

[67] ბერძენიშვილი დ., ახალქალაქი ჯავახეთისა, არტანუჯი, 7, გვ. 33–34, 73–74 ჯანიაშვილი ლ. სამცხე ჯავახეთის სომხური მოსახლეობის ყოფა და კულტურა, ავტორეფერატი, თბ., 1999, გვ. 3, 23–25.

սակետը, ըստ որի, դեռ 18–րդ դարի վերջից հայ առևտրավաշխառուական դասը և հոգևորականությունը նպատակ են ունեցել Ռուսական կայսրության օգնությամբ հայերի գաղութաբնակեցման հաշվին հայացնել Վրաստանը և այն ենթարկել բռնազավթման:[68]

Հետազոտության առարկա հիմնահարցի և ընդհանուր հայ–վրացական միջեկեղեցական փոխհարաբերությունների խնդիրներին նվիրված աշխատություններից իր կողմնակալությամբ առանձնանում է Բոնդո Արվելաձեի «Հայկակա՞ն, թե՞ վրացական եկեղեցիներ Վրաստանում» գրքույկը,[69] *ըստ որի, ներկայիս Վրաստանի տարածքում եղած հայկական եկեղեցիների մեծագույն մասը նախապես եղել է վրացական: Գաղթական հայերը, այդպիսիք վերօծելով որպես հայ առաքելական, ապօրինաբար դարձել են դրանց տերը: Նույն հեղինակը, որն իր վերոհիշյալ աշխատության մեջ չի խորշել հայությանն հասցեին գործածել զանազան անհարկի արտահայտություններ, վրացերեն մի հոդվածում խորհուրդ է տալիս հայերին հրաժարվել հարևանների նկատմամբ ունեցած տարածքային «նկրտումներից» 1915 թ. դեպքերի (Մեծ եղեռնի – Ա.Մ.) կրկնությունից խուսափելու համար:*[70]

1918–1920 թթ. հայ–վրացական հարաբերությունների, այդ հենքի վրա նաև Ջավախքի տվյալ ժամանակաշրջանի հարցերին անդրադարձել է Ավթանդիլ Մենթեշաշվիլին: Նա հրատարակել է մի շարք աշխատություններ, ինչպես և 1918 թ. հայ–վրացական պատերազմի վերաբերյալ Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության պաշտոնական տեսակետն արտահայտող մի ընդարձակ փաստաթուղթ, որի բնօրինակը պահպանվում է Հարվարդի համալսարանի գրադարանում:[71] *Հետևելով այդ փաստաթղթի կողմնակալ ոգուն՝ Ա. Մենթեշաշվիլին հանգում է այն եզրակացության, որ Լոռիում 1918 թ. աշնանը վրացական իշխանությունները բարյացակամ վերաբեր-*

---

[68] თეთვაძე შ., თეთვაძე ო., სომხები საქართველოში, თბ., 1998, გვ. 40–52.

[69] Арveладзе Б., Армянские или грузинские церкви в Грузии ?, Тб., 1996. 1988-1990 рр. վրացական մամուլում հայ-վրացական հարաբերությունների մասին ինչպես Բ. Արվելաձեի, այնպես էլ այլ հեղինակների կողմնակալ հոդվածները բարգմանաբար տե՛ս «Հայ-վրաց գրական, պատմամշակութային հարցերը վրաց մամուլում (1988-1990)»:

[70] არველაძე ბ., "ახალი საქართველო",1998, N 43–44, გვ. 6–10.

[71] Доклад особой следственной комиссии по обследованию обстоятельств возникновения восстания в Борчалинском уезде и причины войны с Республикой Армением, პოლიტიკა, ჟურნალი, თბ., 1998, N 4–6, გვ. 4–30.

մունք են դրսևորել հայ բնակչության նկատմամբ, մինչդեռ Հայաստանի կառավարությունն առանց օբյեկտիվ պատճառների հայերին դրդել է ապստամբության և ագրեսիա իրականացրել Վրաստանի դեմ: Խոսելով սահմանազատման հարցում հայ քաղաքական շրջանակների առաջադրած ազգագրական սկզբունքի մասին՝ Մենթեշաշվիլին այն համարում է անընդունելի՝ նախապատվությունը տալով տարածքների պատկանելության պատմական սկզբունքին: Ընդ որում, պատմական տարածքներ ասելով, հեղինակն ի նկատի ունի Լոռին և Ջավախքը:[72]

Հյուսիսային Հայաստանի, հատկապես Լոռու հիմնահարցերի քննության, վրացագիտության մեջ «վերջին խոսքը», թերևս, Քեթևան Քուլթաթելաձեի աշխատությունն է, որում հեղինակը, քննադատելով հայ պատմաբանների տեսակետները և խորացնելով Գուգարաց աշխարհը (Ջավախքի և Տաշիրի հետ) հնագույն ժամանակներից որպես վրացական տարածք լինելու վրաց պատմագրության մոտեցումները, հատկապես ծանրանում է Տաշիր–Ձորագետի Կյուրիկյան թագավորության և Օրբելյանների տոհմի պատմության (գլխավորապես՝ 10–14–րդ դարեր) հարցերի վրա: Քուլթաթելաձեի կարծիքով Կյուրիկյանների պատմությունը վրաց ժողովրդի պատմության անքակտելի մասն է, իսկ Գուգարք–Լոռին, Թռեղքը, Աշոցքը և այլ հարակից տարածքներ կազմում են պատմական Վրաստանի Քվեմո Քարթլի (Ներքին Քարթլի) երկրամասը:[73]

Ինչպես երևում է, խնդրո թեմայով ստեղծված վրացագիտական գրականությունն օրեցօր ստվարանում է: Վերջին տարիներին լույս են տեսել ևս երկու ընդգրկուն հատորյակներ՝ նվիրված Ջավախքին և Ասպինձային:[74] *Ջանդրադառնալով սույն հատորներում արծածված խնդիրներին՝ միայն արձանագրենք, որ հիմնահարցը վրացագիտության մեջ արծարծումների նյութ է դարձել բավական լայն, հայագիտության մեջ՝ անհամեմատ նվազ չափերով: Հաշվի*

---

[72] Ментешашвили А., Из истории армяно-грузинских отношений в 1918-1920, პოლიტიკა, ჟურნალი, თბ., 1998, 4–6, გვ. 2–3.

[73] ჭუთათელაძე ქ., ქვემო ქართლი, თბ., 2001, გვ. 43, 58–59. Կյուրիկյան թագավորության, Օրբելյանների իշխանության մասին հայ պատմագրության մեջ շատ է գրվել: Մասնավորապես տե՛ս Մաթևոսյան Ռ. Ի., Տաշիր–Ձորագետ, Ե., 1982, Գրիգորյան Գ., Հախվերդյան Ս., Սյունիքի պատմություն, Ե., 2001 և այլն:

[74] ჯავახეთი. ისტორიულ ხეროთმოძღვრული გზამკვლევი, თბ., 2000, ასპინძა. სამცხისა და ჯავახეთის საზღვარზე, ახალციხე, 2000.

առնելով հայ պատմագրության մեջ ամփոփ ու ամբողջական աշխատությունների բացակայության փաստը, առաջին հերթին չհրապարակված աղբյուրների հիման վրա, փորձել ենք ներկայացնել Ջավախքի 19–րդ դարի և 20–րդ դարի սկզբի պատմությունը հարակից շրջանների հիմնահարցերի ընդհանուր հենքի վրա:

Խնդրո հիմնահարցի համար բացառիկ կարևորություն ունի արխիվային նյութը, որի մեծ մասը դուրս է մնացել հետազոտողների տեսադաշտից: Հարուստ նյութ է պահպանվում Հայաստանի, Վրաստանի և Ռուսաստանի զանազան արխիվներում: Այդ տեսակետից բացառիկ նշանակություն ունեն ՀՀ Պատմության կենտրոնական պետական արխիվի (ՀՀ ՊԿՊԱ) Վրացա–իմերեթական 35, 53, ինչպես և 56, 57 եկեղեցական ու 355–րդ Ախալցխայի հոգևոր կառավարություն հարուստ ֆոնդերի բազմաբնույթ վավերագրերը: Հազարավոր թղթապանակներում զետեղված են ինչպես ամբողջ վրացահայ թեմի, այնպես էլ նրա մեջ մտնող Ախալցխայի, Ախալքալաքի ու Ծալկայի հայության սոցիալ–տնտեսական և հոգևոր–մշակութային կյանքին վերաբերող բազմապիսի փաստաթղթեր (ծխամատյաններ, գյուղացուցակներ, տնտեսական ու եկեղեցական կյանք, դավանաբանական խնդիրներ և այլն), որոնց օգտագործմամբ նոր լույս է սփռվում հիմնահարցի 19–րդ դարի և 20–րդ դարի սկզբի պատմության բազմաթիվ կողմերի վրա: Թիվ 200 ֆոնդում տեղ են գտել 1918–1920 թթ. հայ–վրացական միջպետական հարաբերությունները լուսաբանող պաշտոնական բազմաթիվ վավերագրեր:

Ախալքալաքի 19–րդ դարի և 20–րդ դարի սկզբի պատմության ուսումնասիրությունը, թերևս, անհնարին կլիներ ինչպես առանց ՀՀ ՊԿՊԱ, այնպես էլ ՀՀ Նորագույն պատմության կենտրոնական պետական արխիվի (ՀՀ ՆՊԿՊԱ), Մաշտոցի անվան Մատենադարանի, Վրաստանի Պատմության կենտրոնական պետական արխիվի (Центральный государственный исторический архив Грузии – ЦГИАГ) նյութերի: ՀՀ Նորագույն պատմության արխիվում ուշադրության արժանի են հատկապես թիվ 112, 113, 114, 128 ֆոնդերի նյութերը, որոնց մեծագույն մասը նոր է գաղտնազերծվել և մտել գիտական շրջանառության մեջ:

Մատենադարանի կարապետ արքեպիսկոպոսի, Կաթողիկոսական, Ներսես Աշտարակեցու, Ալեքսանդր Երիցյանի, Լազարյանների և այլ ֆոնդերում պահվող հարյուրավոր վավերագրեր լուսաբանում

են 1830 թ. արևմտահայերի գաղթի, Ախալցխայում և Ախալքալաքում գաղթականության կրած դժվարությունների, երկրամասի սոցիալ–տնտեսական ու հոգևոր–եկեղեցական կյանքի մանրամասնությունները:

Արխիվային հարուստ նյութ է կուտակվել հատկապես Թիֆլիսում, որը ռուսական տիրապետության ավելի քան մեկդարյա տիրապետության շրջանում եղել է Անդրկովկասի վարչաքաղաքական, տնտեսական ու մշակութային, իսկ 19–րդ դարի կեսերից՝ համանուն նահանգի վարչական կենտրոնը, որի կազմի մեջ մտնել է Ախալքալաքի գավառը: Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում երկրամասում ռուսական քաղաքականության, էթնիկ տեղաշարժերի, վարչատնտեսական ու մշակութային կյանքին վերաբերող Վրաստանի ՊԿՊԱ–ի թիվ 2, 11, 16 և այլ ֆոնդերի մի շարք ծավալուն գործեր:

Ռուսաստանի արխիվներից առաջնային նշանություն ունեն Մոսկվայում գտնվող Ռուսաստանի Դաշնության արտաքին քաղաքականության (Архив внешней политики Российской Федерации – АВПРФ), Ռուսաստանի պետական ռազմապատմական (Российский государственный военно–исторический архив – РГВИА) և Սանկտ Պետերբուրգի Ռուսաստանի պետական (Российский государственный исторический архив – РГИА СПб.) արխիվների ֆոնդերը: Հատկապես կարևոր են ռազմապատմական արխիվի թիվ 20, 114, 450, ինչպես և՝ ռազմաուսումնական բաժնի (фонд ВУА) մի շարք գործեր (2875, 4643 և այլն):

Թեմայի մշակման ընթացքում զգալի նյութեր ենք հայտնաբերել նաև ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի Լեոյի անձնական ֆոնդում, Ախալքալաքի գավառադիտական թանգարանում և այլ հաստատությունների արխիվներում:

Խնդրի հետ առնչվող արխիվային նյութի միայն չնչին մասն է հրատարակված: Դրանցից 19–րդ դարում տպագրված փաստաթղթերի մեծ մասը բաժին է ընկնում Կովկասյան հնագրական հանձնաժողովի հրատարակած հանրահայտ «Ակտերի» 12 հատորներին,[75] որոնցում զետեղված են Անդրկովկասի պատմության վերաբերյալ բազ-

[75] Акты, собранные Кавказской археографической комиссией (АКАК), тт. 1–12, Т., 1866–1904.

մաբնույթ ու եզակի պաշտոնական վավերագրեր: Դրանք թեև հաճախ կրում են միակողմանի, պաշտոնական բնույթ, բայց ունեն կարևոր աղբյուրագիտական նշանակություն: Ինչպես ակտերի, այնպես էլ զանազան արխիվների մեծաթիվ վավերագրեր, որոնք լուսաբանում են 19–րդ դարի առաջին երեսնամյակի անցքերը, հրատարակվել են Հայաստանի Գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի «Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին» արժեքավոր ժողովածուում:[76] Այստեղ զետեղված փաստաթղթերից պարզորոշ երևում է խնդրո առարկա երկրամասի կարևորությունը ռուսական տերության ողջ արևելյան քաղաքականության համատեքստում: 19–րդ դարի Անդրկովկասի սոցիալ–տնտեսական պատմության հետազոտության տեսանկյունից հետաքրքրություն է ներկայացնում նաև «Արևելյան Հայաստանի սոցիալ–քաղաքական և տնտեսական դրությունը Ռուսաստանին միանալուց հետո (1830–1870)» փաստաթղթերի ժողովածուն:[77]

20–րդ դարի առաջին տասնամյակներին վերաբերող տպագիր արխիվային նյութի մեջ գերակշռում են Ջավախքի և Լոռու գավառների չուրջ հայ–վրացական հակամարտության անցքերը լուսաբանող փաստաթղթերը, որոնց հրատարակությունն սկսվել էր դեռևս 1919 թ.:[78] Խնդրո թեմայով հայ մասնագետների հրատարակած աղբյուրներից, անկասկած, ամենաարժեքավորը Գ. Գալոյանի և Վ. Ղազախեցյանի խմբագրությամբ 2000 թ. հրատարակված փաստաթղթերի ու նյութերի ժողովածուն է:[79] Հեղինակները չրջանառության մեջ են դրել գաղտնազերծված բազմաթիվ փաստաթղթեր, որոնք հստակ պատկերացում են տալիս հայ–վրացական հարաբերությունների էվոլյուցիայի, երկու երկրների միջև սահմանային հարցերում անգլիական զորահրամանատարության որդեգրած կողմնակալ քաղաքա-

---

[76] Присоединение Восточной Армении к России. Сборник документов. Редактор Ц. П. Агаян, т. 1, 1801–1813, Е., 1972, т. 2, 1814–1830, Е., 1978.

[77] Социально-политическое и экономическое положение Восточной Армении после присоединения Восточной Армении к России (1830–1870), документы и материалы, под. ред. Н. А. Тавакаляна, Е., 1993.

[78] Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, Тифлис, 1919 и Документы, относящиеся к армяно–грузинской войне, աՏրվակիր (հավանաբար՝ Բաքու, 1919):

[79] Հայաստանի հանրապետությունը 1918–1920 թթ. (քաղաքական պատմություն), Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմողներ՝ Գ. Գալոյան, Վ. Ղազախեցյան, Վ. Մելիքյան, Ս. Միրզոյան, Ա. Վիրաբյան, Ե., 2000:

կանութ յան և այլ խնդիրների մասին: Վ. Ղազախեցյանը «Նորք» հանդեսում վերահրատարակել է նաև նույն խնդրի առնչությամբ ժամանակին «Հայաստանի աշխատավոր»-ում տպագրված անվանի արձակագիր Ակսել Բակունցի հույժ հետաքրքրական հոդվածաշարը:[80] Ախալքալաքի 1918 թ. կոտորածների և հայ գաղթականության վիճակի մասին փաստաթղթեր են տեղ գտել նաև գերմանական տարբեր արխիվներից քաղված փաստաթղթերի հիման վրա ակադեմիկոս Վ. Միքայելյանի կազմած բարձրարժեք ժողովածուում:[81]

1921 թ. հայ և վրաց բոլշևիկների միջև Ախալքալաքի ու Ծալկայի վիճարկման մասին որոշ նյութեր, մասնավորապես՝ ՌԿ (բ)Կ Կովկասյան բյուրոյի պլենումի և Վրաստանի կոմկուսի քաղբյուրոյի հուլիսյան որոշումները, խորհրդային իշխանության տարիներին չրջանառության հանվեցին Ս. Խարմանդարյանի կողմից:[82] Այդ բացառիկ նյութերը նախկին Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի գաղտնի ֆոնդերից հայտնաբերել էր ակադեմիկոս Գ. Գալոյանը և տրամադրել նույն արխիվի հայկական մասնաճյուղին:[83]

Գիտակցելով անաչառ արխիվային նյութի չրջանառման գիտաքաղաքական կարևորությունը՝ մենք, Ջավախքի պատմության չարադրանքին զուգընթաց, ձեռնամուխ եղանք հայաստանյան տարբեր արխիվներից քաղված մի չարք կարևոր փաստաթղթերի հրատարակմանը, որոնք վերաբերում են մասնավորապես 1918–1921 թթ. չրջադարձային ժամանակաշրջանի իրադարձություններին:[84] Դրանք նոր լույս են սփռում 1918 թ. Ախալքալաքի գավառ թուրքերի ներխուժման, գաղթական ախալքալաքցիների ողբերգական վիճակի, նրանց նկատմամբ վրացական իշխանությունների վարած քաղաքականության, հայ-վրացական միջպետական փոխհարաբերությունների և այլ հարցերի վրա:

---

[80] «Հայաստանի աշխատավոր», 1919, 24–26 հունիս, թիվ 79–81 և «Նորք», 1999, թիվ 2:

[81] Армянский вопрос и геноцид армян в Турции (1913—1919), сборник (составитель, отв. ред., автор предисловия В. Микаелян), Е., 1995.

[82] Хармандарян С. В., նշվ. աշխ., էջ 72–113:

[83] Մենք շնորհակալությամբ օգտագործել ենք այդ փաստաթղթերը և դրանց մի մասը հրատարակել (տես Մելքոնյան Ա., Ջավախք. պատմության ուրվագծեր, էջ 63–64 և ՀՀ Հասարակական-քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի կենտրոնական պետական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ), Հավաքածու 1, գ. 7, թ. 43–45):

[84] Մելքոնյան Ա., Ջավախք. Պատմության ուրվագծեր, էջ 50–90:

Հետևելով փաստարկված արխիվային նյութով պատմություն շարադրելու սկզբունքին՝ մեր կողմից հայտնաբերված և օգտագործված բազմաթիվ նոր վավերագրեր, առանց տեքստային միջամտության, զետեղել ենք այս աշխատության հավելվածում: Դրանցից, թերևս, հիշատակենք միայն մեկը, որը ներկայացնում է 1921 թ. ամռանը, ի դեմս հայ բոլշևիկների ազգային թևի ներկայացուցիչների (Ալ. Մյասնիկյան, Ա. Մռավյան, Ալ. Բեկզադյան), Խորհրդային Հայաստանի ղեկավարության պաշտոնական դիրքորոշումը հայ–վրացական սահմանային վեճերի, այդ թվում՝ Ախալքալաքի գավառի շուրջ և այդ հարցի վերաբերյալ հանդիսանում է ՀՍԽՀ կառավարության՝ ժողովրդական կոմիսարների խորհրդի որոշման նախագիծը:[85]

19–20–րդ դարերի հայոց պատմության բազմապիսի խնդիրներ իրենց արտացոլումն են գտել ժամանակի մամուլում: Այդ տեսակետից բացառություն չի կազմում նաև Ջավախքի պատմությունը, որի շուրջ ևս մամուլում ստեղծվել է որոշակի գրականություն: Այս խնդրում առանձնահատուկ տեղ ունի հայ մամուլի հսկաներից մեկը՝ Թիֆլիսի «Մշակը», որի էջերում ուղղակիորեն անդրադարձ են գտել 19–րդ դարի վերջին քառորդի և 20–րդ դարի ջավախքյան իրադարձությունները: «Մշակի» էջերում կարելի է առանձնացնել ախալքալաքցի հայտնի մտավորական Բագրատ Պիճիկյանի թղթակցությունները, որոնց մեջ հեղինակն անաչառորեն ներկայացրել է գավառի հասարակական–քաղաքական, սոցիալ–տնտեսական ու մշակութային կյանքը: Հատկապես ծովածավալ նյութ է պարունակում 20–րդ դարի սկզբի մամուլը: 1917–1921 թթ. բուռն իրադարձությունները, որոնց բովում հայտնվել էր նաև Ախալքալաքի հայությունը, լայնորեն լուսաբանվել են ինչպես «Մշակ» թերթի, այնպես էլ «Հորիզոն», «Ձանգ», «Աշխատավոր», «Հայաստանի աշխատավոր» պարբերականներում: Տպագրված զանազան հոդվածների, նամակ–խնդրագրերի, թղթակցությունների հեղինակների մեջ հիշատակության արժանի են Պողոս Աբելյանի և Արսեն քահանա Բլրցյանի անունները, որոնք մամուլի էջերում դեպքերը լուսաբանելուց բացի մեծ աշխատանք են տարել ախալքալաքցի գաղթականությանն օգնելու ուղղությամբ: Այդ ժամանակի մամուլի նյութերից իր արժանահավատությամբ աչքի է ընկնում Ախալցխայում տպագրվող «Շարժում»

[85] ՀՀ ՍՊԿՊԱ, ֆ. 113, ց. 3, գ. 75, թ. 3–5:

թերթը: Մշակութային կյանքի ուսումնասիրության համար կարևոր նյութեր են գետեղված Վարդան Շահպարոնյանի հրատարակած Ախալքալաքի առաջին պարբերականի՝ «Ջավախք» շաբաթաթերթի (1913–1916) էջերում:

1920–ական թվականներին սփյուռքահայ մամուլում տպագրվեցին բազմաթիվ հոդվածաշարեր հայ–վրացական փոխհարաբերությունների, Լոռու և Ջավախքի տարածքային խնդիրների վերաբերյալ: Խորհրդահայ մամուլում այդ թեման դրվեց արգելքի տակ: Հետագայում սփյուռքի մամուլը, նախապատվությունը տալով հայ դատի, հայապահպանության ու այլ կենսական թեմաների և չունենալով անհրաժեշտ լրատվություն Խորհրդային Միությունում ազգային խնդիրների վերաբերյալ, ավելի նվազ անդրադարձ ունեցավ Ջավախքի հիմնահարցին: Հայ մամուլն այդ խնդրին վերադարձավ միայն 1990–ական թթ.: Կրկին հրապարակ եկան հետաքրքրական նյութեր, մասնավորապես՝ գիտական հանդեսներում և սփյուռքի մի քանի ազդեցիկ պարբերականներում:[86]

Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում վերջին տարիներին ինչպես Ջավախքում, այնպես էլ երևանում լույս տեսնող «Ջավախք», «Ասպնջակ», «Լեռնաշխարհ», «Հզոր հայրենիք» և այլ թերթերում տպագրված բազմաթիվ հոդվածներ:

Բացի վերոնշված սկզբնաղբյուրներից ու տպագիր գրականությունից, ուսումնասիրվող թեմայի շուրջ կան նաև բազմապիսի այլ նյութեր, որոնք լիարժեքորեն չեն օգտագործվել: Դրանց զգալի մասը շրջանառության մեջ է դրվում ներկա աշխատության հրատարակությամբ: Շրջանառությունից դուրս մնացած պատկառելի նյութը, որը գլխավորապես վերաբերում է Ջավախքի 1828–1918 թվականների ժողովրդագրական, սոցիալ–տնտեսական, մշակութային պատմության հիմնահարցերին, կընդգրկվի «Ախալցխայի և Ախալքալաքի գավառները Ռուսական կայսրության կազմում» խորագիրը կրող մեր առանձին մենագրության մեջ, որը լույս կտեսնի առաջիկա տարիներին:

---

[86] Իրան–Նամե, 1998, թիվ 1–2–3, էջ 12–16, Լրաբեր հասարակական գիտությունների, 1998, թիվ 3, էջ 17– 32, Հանդես ամսօրեայ, 1998, թիւ 1–12, էջ 325–344, Կանքեղ, Գիտական հոդվածների ժողովածու, հ. 2, Ե., 2001, էջ 166–179, «Ազդակ», բացառիկ, Պէյրութ, 1999, 24 ապրիլ, էջ 106–114, «Ազատամարտ», 1992, 24 ապրիլ, Դրոշակ, 1999, հոկտեմբեր, թիվ 16, Նորք, 1999, թիվ 2, Խորհրդային Հայաստան, 1989, 14 նոյեմբեր, Հայաստանի Հանրապետություն, 1998, 27 հունիս, էջ 7 և այլն:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՋԱՎԱԽՔԸ ՀԻՆ ԵՎ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐՈՒՄ

Ա) Հնագույն տեղեկությունները Ջավախքի ու Գուգարքի մասին

Պատմական Հայաստանի Մեծ Հայքի թագավորության 15 նահանգներից (աշխարհներ) տասներեքերորդը՝ Գուգարքը, զբաղեցնում էր Հայկական լեռնաշխարհի հյուսիսային հատվածը: Այն արևելքից սահմանակից էր Ուտիք, արևմուտքից՝ Տայք, հարավից՝ Այրարատ նահանգներին, իսկ հյուսիսից՝ Իբերիային (Վիրք, Վրաստան): Նրա վարչական կենտրոնը Յուրտավ քաղաքն էր: Գուգարքը[87] Հայկական թագավորության չորս սահմանակալ բդեշխություններից մեկն էր և ժամանակ առ ժամանակ օգտվում էր որոշ ինքնուրույնություններից: Գուգարքի հիմնական ինները գավառներն էին Ջորափորը, Կողբափորը, Ծորափորը, Տաշիրը, Թռեղքը, Կանգարքը, Կղարջքը, Վերին Ջավախքը և Արտահանը:[88] Մինչև Հայաստանի առաջին բաժանումը (387 թ.) նահանգն իր մեջ ընդգրկում էր նաև հարակից Մանգլեացփոր, Բողնոփոր և այլ գավառներ:[89]

Գուգարաց գավառներից Ջավախքը հիշատակվում է ուրերորդը: Այն ընկած էր նահանգի կենտրոնական մասում և զբաղեցնում էր գլխավորապես համանուն սարահարթի (Ախալքալաքի սարա-

---

[87] Ըստ վրաց առանձին պատմաբանների՝ Գուգարք տերմինը վրացական ծագում ունի, և այդ տեղանունն առաջացել է երկրամասը բնակեցնող գոգարների կամ գարգարների անունից: Սակայն հայկական աղբյուրներում այդպիսի էթնոսի գոյության մասին հստակ հիշատակումներ չկան: Իսկ ինչ վերաբերում է գարգարացվոց երկրին, ապա այն, ըստ Ն. Ադոնցի, Ս. Երեմյանի և այլ ուսումնասիրողների, կապ չունի Գուգարքի հետ (Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Ե., 1987, էջ 472, Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Ե., 1963, էջ 46):

[88] Երեմյան Ս., նշվ. աշխ., էջ 110:

[89] Տաշիրը հիմնականում համապատասխանում էր Խորհրդային Հայաստանի Ստեփանավանի և Կալինինոյի (այժմ Տաշիր) շրջաններին, Թումանյանի շրջանի հարավային մասին, Կողբափորը՝ Նոյեմբերյանի, Ջորափորը՝ Թումանյանի մեծ մասին, Վերին Ջավախքը՝ Վրաստանի Հանրապետության Ախալքալաքի և Բոգդանովկայի (այժմ՝ Նինոծմինդա), Թռեղքը՝ Ծալկայի, Մանգլեացփորը՝ Մանգլիսի, Ծորափորը՝ Մառնեուլի, Բողնոփորը Բոլնիսի, Կանգարքը՝ Դմանիսի շրջաններին: Հարավի՝ Կղարջք, Արտահան և այլ գավառներ, ինչպես և Ջավախքի հարավային և հարավարևմտյան մի հատվածը՝ Չլդր և Խոզափին լճերի շրջակայքը, այժմ Թուրքիայի տարածքում են: 16 գավառների ընդհանուր տարածքը 16,5 հազ. քառ. կմ–ից ավելի էր:

վանդ, Ջավախքի լեռնագաշտ) ու վերջինս շրջափակող լեռնակազմությունների տարածքը, հյուսիսից սահմանակցում էր Թռեղքի (Թրիալեթի), հյուսիս–արևելքից՝ Սամսարի, արևելքից՝ Ջավախքի լեռներին (Կեչուտի, Մթին), իսկ հարավ–արևելքում՝ Ախալքալաքի սարավանդի չարունակությունը կազմող Աչոցքի սարահարթին, հարավ–արևմուտքում՝ Եղնախաղի (Ջղրի) լեռներին:

Ջավախքի միջին բարձրությունը ծովի մակերևույթից 1800 մ է: Ամենաբարձր գագաթը գեղատեսիլ Մեծ Աբուլն է՝ 3301 մ: Այն վեր է խոյանում Սամսարի լեռնաշղթայի մեջ և իրենից հարավ ընկած Փոքր Աբուլի (2799 մ) հետ, աշխարհահռչակ աշխարհագետ–երկրաբան Գ. Աբիխի խոսքերով՝ ուղղակի հիշեցնում է երկու Արարատները:[90] Կլիման խստաչունչ է. ձմեռը՝ ցուրտ և երկարատև, ամառը՝ կարճատև ու զով (տարեկան միջին ջերմաստիճանը՝ 4–4,5 աստիճան): Գավառը հարուստ է լճերով՝ Փարվանա, Տաբածղուրի, Սաղամո, Խոզափին, Խանչալի, Մադաթափա և այլն: Փարվանայից սկիզբ է առնում Թափարվան (հավանաբար նշանակում է Փարվանայից Թավվող՝ Թափփարվան) վտակը, որը Խերթվիսի բերդի մոտ խառնվում է Կուրին: Լեռնագաշտը ծածկված է սևահողով: Բացի հյուսիսայինն մասից, Ջավախքն անտառազուրկ է: Նախկինում անտառածածկ է եղել նաև գավառի կենտրոնական մասը՝ Թափարվան գետակի ու Թռեղք–Սամսարի լեռների միջև ընկած տարածքը, որը հայտնի է եղել «Անտառային Ջավախք» անունով:

«Ջավախք» տերմինի մասին պատմագրության մեջ հայտնվել են տարբեր տեսակետներ: Ըստ վրաց «Քարթլիս Ցխովրեբայի» (Քարթլիի տարեգրությունը, նաև Քարթլիի կյանքը) մատենագիր Լեոնտի Մրովելու՝ Կուրի դաշտավայրը, Փոցխով գետի շրջատարածքը (պատմական Սամցխե գավառ, այժմ՝ Ախալցխա) և հարակից այլ հողեր ժառանգություն են հասել վրացիների նախահայր Քարթլոսի թոռանը՝ Ջավախոսին, Մցխեթոսի որդուն: Ջավախոսի անունից էլ երկրամասը կոչվել է Ջավախք, վրացերեն՝ Ջավախեթի: Ըստ մեկ այլ ավանդապատումի՝ այդ անունը երկրամասին տրվել է առասպելական Ջավախ իշխանի պատվին[91]: Սակայն այս «հիմնավորումներն» իրավամբ համարելով առասպելական և խիստ պարզունակ՝ հետագա-

[90] Abich G., Geologische Beobachungen auf Reisen in den Gebirgsländern zwischen Kur und Araxes (ЗКОИРГО), книга 8, Т., 1873, с. 3.

[91] Ростомов И. П., Ахалкалакский уезд в археологическом отношении, с. 2.

յի ուսումնասիրողներից չատերը փորձել են գտնել ուրիչ բացատրություններ: Ոմանք, հաշվի առնելով Ջավախքում ցրտադիմացկուն հացազգիներ աճեցնելու համար բարենպաստ կլիմայական պայմանները, նրա անունը կապում են վրացերեն ჭვავი (ճվավի)[92] տարեկան (աշորա) բառի հետ:

Ջավախք տեղանունը, ինչպես երևում է ուրարտական (Վանի թագավորության) արձանագրություններից, մ. թ. ա. 9–րդ դարի վերջից Հայկական լեռնաշխարհի հյուսիսում հիշատակվող Ջաբախա կամ Ջաբախյան երկրի անվան տառադարձված տարբերակն է՝ Ջաբախա–Ջաբախա–Ջավախա–Ջավախք:[93] Վ. Սարգսյանն իր «Ջաւախք տեղանվան ծագումը» գրքույկում լեզվաբանական նյութերի վերլուծության, հայ–բասկական լեզվական առնչությունների հետազոտության հիման վրա հանգում է այն հետևության, որ Ջաբախան Ջավախք տեղանվան ամենահին տարբերակը չէ: Հնագույնն ունի հայկական ծագում: «Ջաւախք տեղանունը, գրում է նա,– ծագում է հայերեն ճապաղ՝ «փուված, տարածված, ծավալված» բառից, որը համապատասխանում է տեղանքի ֆիզիկական առանձնահատկություններին, քանի որ Ջավախքը գտնվում է ընդարձակ հարթավայրում ...»:[94] Տ. Դալալյանն այդ տեղանվան մեջ փնտրում է օտար, բայց կրկին՝ հնդեվրոպական արմատներ: Ըստ նրա՝ այն ծագում է ալաններեն (օսերեն) «ձաբախ»՝ լավ, բարեբեր բառարմատից:[95] Բառի իմաստային նշանակության առնչությամբ հետաքրքիր բացատրություն է տալիս Ս. Պետրոսյանը: Նրա կարծիքով Ջաւախ տերմինի մեջ

---

[92] Ի դեպ, Շոպենը ჭვავი (ճվավի) բառը ռուսերեն տառադարձմամբ կարդացել է ջավի և սխալմամբ թարգմանել գարի: Մինչդեռ գարին վրացերենում կլինի ქერი (քերի): Այնպես որ Շոպենի պարագայում Ջավախքի անունը շինծու ջավա բառից բխեցնելու վարկածը (տես Լալայան Ե., Երկեր, հ. 1, էջ 35) լիովին զուրկ է գիտական հիմքից:

[93] Կարագեոզյան Հ., Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբյուրներում, հ. I, գիրք 1, Ե., 1998, էջ 94, 132, 195, 203–204, Հայ ժողովրդի պատմություն, ՀԽՍՀ ԳԱ հրատ., հ. 1, Ե.,1971, էջ 420, Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. Ա., Ուրարտական աղբյուրներ. Ե., 1981, էջ 58, 67 և Չահուկյան Գ. Բ., Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, էջ 431: Նիկողայոս Ադոնցը փորձել է Ջավախք տեղանունը նույնացնել ոչ թե ուրարտական Ջաբախա, այլ Դիաուխի (Դայա, Տայք) տեղանվան հետ (Ադոնց Ն., Հայաստանի պատմություն, Ե., 1972, հմմտ. Սարգսյան Վ., նշվ. աշխ., էջ 6):

[94] Սարգսյան Վ., Ջաւախք տեղանվան ծագումը, Ե., 1999, էջ 5–41:

[95] Դալալյան Տ., Սկյութական ցեղերը Շիրակում և հարևան գավառներում, Շիրակի պատմամշակութային ժառանգությունը, հանր. 4–րդ նստաշրջանի զեկուցումների հիմնադրույթներ, Գյումրի, 2000, էջ 11–12:

Ջաւ բաղադրիչն ունի «որդի, զավակ» իմաստը, իսկ ախ–ը՝ նշանակում է «ջուր»: Այսինքն՝ ամբողջ բառն ունեցել է «ջրի զավակներ» իմաստը, առավել ևս, որ ինչպես Շիրակում, այնպես էլ ջրառատ Ջավախքում, մեծ տարածում է ունեցել ջրի պաշտամունքը:[96] Այս տեսակետներից յուրաքանչյուրը, որ դեռ վերջնական ապացուցման կարիք ունի, հետաքրքրական է այն առումով, որ տեղանվան մեջ անվիճելիորեն տեսնում է հնդեվրոպական ակունքներ:

Աղբյուրներում ի՞նչ հիշատակումներ կան Ջավախքի մասին: Արգիշտի Ա–ի (մ. թ. ա. 786–764 թթ.) թողած խորխոռյան արձանագրության մեջ Ջաբախան նշվում է 785–784 թթ. գրավված Դիաուխի կամ Դայա (Տայք), Տարիունի (Դարույնք՝ Բասեն) և այլ երկրների թվում: Այդ տարածքները միավորելու Արգիշտիի քաղաքականությանը մեծապես ընդդիմացել է էթիունի երկիրը, սակայն հաջողություն չի ունեցել:[97] Այս հանգամանքը որոշ հիմք է տալիս պնդելու, որ մինչև վանի թագավորության հզորացումը, Ջավախքը կամ մտել է էթիունիի կազմի մեջ կամ՝ եղել նրանից կախյալ երկիր: Բացի Արգիշտիից, հիշյալ գավառը հիշատակվում է նաև ուրարտական հաջորդ մի քանի թագավորների թողած արձանագրություններում:

Ջավախքի մասին վերոհիշյալ վկայություններից վաղ, այլ տեղեկություն չկա: Սակայն, ուսումնասիրելով մինչուրարտական շրջանը, կարելի է ենթադրել, որ այն ուշբրոնզեդարյան ժամանակաշրջանում եղել է Սև ծովի առափնյա քաղաքները Շիրակի, Արարատյան դաշտի, Վանանդի ու Ճորոխի ավազանի բնակավայրերի հետ կապող առևտրական ուղիների վրա ընկած երկրամաս:[98] Այդ գավառը կամ վարչականորեն մաս է կազմել մ. թ. ա. 2–րդ հազարամյակում գոյություն ունեցած հայկական հնագույն պետական կազմավորումներից Դայա–Դիաուխիի (Տայք), էթիունիի և Հայասայի, կամ էլ եղել է բավական ընդարձակ ինքնուրույն կազմավորում՝ ընդգրկելով հետագայի Գուգարք աշխարհի ամբողջ արևմտյան հատվածը: Արգիշտիի վերոհիշյալ արձանագրությունում Ջաբախան հիշատակվում է

---

[96] Պետրոսյան Ս. և ուրիշներ, Ջրերի պաշտամունքի արտացոլումը սեպագրային մի քանի տեղանուններում, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ Շիրակի հայագիտ. հետազոտ. կենտրոն, Գիտական աշխատություններ, Գյումրի, 1998, հ. 1, էջ 80–81:
[97] Խաչատրյան Վ., Հայաստանը մ. թ. ա. 15–7–րդ դարերում, Ե., 1998, էջ 115:
[98] Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, էջ 220:

իբրև գրավված երկիր: Նշանակում է մինչև մ. թ. ա. 8-րդ դարի սկիզբը Ջավախքը եղել է ինքնիշխան ցեղապետություն և, որպես հայ էթնոսով բնակեցված տարածք, միավորվել է Վանի միասնական թագավորության մեջ՝ կազմելով նրա հյուսիսարևմտյան սահմանամերձ ու ամենաընդարձակ նահանգը:[99]

Երվանդյան Հայաստանի ժամանակաշրջանից (մ. թ. ա. 6–2-րդ դդ.) Ջավախքի մասին ուղղակի տեղեկություններ գրեթե չկան: Միայն կարելի է վկայակոչել առասպելախառն, բայց ուշագրավ երկու հիշատակություն՝ Մովսես Խորենացու «Հայոց պատմությունից» և «Քարթլիս Ցխովրեբայից»: Պատմահայրը նշում է, որ Վաղարշակ Ա–ն «զկէս մասինն Ջաւախաց» ժառանգություն է տալիս Շարայի ցեղից Գուշարին և նրան նահանգի վրա կարգում բդեշխ՝ Հայոց երկիրը հյուսիսկովկասյան լեռնականներից պաշտպանելու համար:[100]

Նույն վկայությանը փոքր–ինչ այլ տարբերակով, հանդիպում ենք նաև Ստեփանոս Տարոնեցու (Ասողիկ) մոտ. «Իսկ Գուշարայ, որ յորդւոցն Շարայի՝ ժառանգեաց զլեառն մթին, որ է Կանգարք, և (զ)կէս մասին Ջաւախաց, զԿողբ և զԾոփ և զՋորն մինչև ցամուրն Հունարակերտ»:[101] Հավաքական կերպար Վաղարշակի այս ձեռնարկումը ուսումնասիրողներից չատերը վերագրում են մ. թ. ա. 3-րդ դարին: Ստացվում է, որ այդ ժամանակ Ջավախքը եղել է Երվանդյան պետության կազմում և տրվել է Գուշարին, որի անվան հետ է կապվում Գուգարք տեղանունը, այսինքն՝ երկրամասը դադարել է ընդարձակ նահանգ լինելուց և մտել է նորաստեղծ Գուգարք սահմանակալ բդեշխության մեջ, ըստ երևույթին, տրոհվելով երկու մասի, որոնք ընդունված է անվանել Ջավախք Վերին և Ջավախք Ներքին:

Վերին Ջավախքը նույնանում է Խորենացու նշած «կէս մասինն Ջավախաց»–ի այն հատվածի հետ, որը ղբաղեցրել է գավառի հարավային ու հյուսիսարևելյան բարձրադիր մասերը և տրվել է հարևան Շարայի՝ Շիրակի գավառին: Ներքին Ջավախքը, բնականաբար, առաջինի համեմատությամբ պետք է ունենար ավելի ցածրա-

---

[99] Երեմյան Ս., Ուրարտու պետությունը. քարտեզ, Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Ե., 1971:

[100] Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1881, գիրք Բ, գլ. Ը:

[101] Ստեփաննոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 35:

դիր դիրք: Այդպիսի աշխարհագրական դիրք չրջակայքում ունի միայն դեպի արևմուտք և հյուսիս–արևմուտք ընկած պատմական Ասպնջակ (վրաց.՝ Ասպինձա) գավառակը: Ս. Երեմյանը իրավացիորեն Ջավախքի երկու հատվածների բնական սահմանը մի հատվածում համարում է Կուր գետը: Սակայն նա Ներքին Ջավախքը տեղադրում է Ասպնջակից հարավ, Արտահանից հյուսիս՝ մասնավորապես Էրուշեթի բարձրավանդակում, որը տարածվում է գրեթե նույն բարձրության վրա, ինչ Վերին Ջավախքը: Հետևաբար Էրուշեթը տարածքով չէր կարող համապատասխանել Ներքին Ջավախքին: Նկատելով այդ հանգամանքը՝ Բ. Հարությունյանն առաջարկում է այլ տարբերակ. Վերին Ջավախքը գավառի լճերով հարուստ հյուսիսարևելյան հատվածն է, որը մտել է Գուգարաց բդեշխության մեջ, իսկ հարավային մասը, որ սահմանակից է Աչոցքին, հանդիսացել է Ներքին Ջավախքը և ենթարկվել է Աչոցքի նախարարությանը:[102] *Բայց քանի որ նույն Աչոցքը ևս գտնվում է Ջավախքի բարձրության վրա (1700–2100 մ), չի կարող նույնանալ Ներքին Ջավախքի հետ: Այնպես որ տրամաբանորեն Ներքին Ջավախքը կարող է տեղադրվել միայն Էրուշեթի բարձրավանդակից հյուսիս–արևելք, Վերին Ջավախքի արևմտյան սահմանը կազմող Կուր ու Թավարվան գետերի խառնարանից հյուսիս–արևմուտք և Ծորաբերդի անտառից ու համանուն գետակից արևմուտք՝ Կուրի գետի հոսանքն ի վար, մինչև պատմական Սամցխե գավառը:*[103] *Այսինքն՝ մոտավորապես համապատասխանում էր Խորհրդային Վրաստանի Ասպինձայի վարչական շրջանի հյուսիսային մասին:*

Հատկանշական է, որ Խորենացու վերոհիշյալ վկայությունը մ. թ. ա. 3–րդ դարում Ջավախքի մասին ձևավորված «վրացական» տարբերակով բերվում է «Քարթլիս Ցխովրեբայում», որի համաձայն, ինչպես վերը հիշատակվեց, այն բաժին է ընկել այս անգամ Ջավախոսին: Բանն այն է, որ մ. թ. ա. 270–ական թթ. Մեծ Հայքի հյուսիսային հարևանությամբ կազմավորվել է Վրաց Փառնավազյան պետությունը (Իբերիա, Վիրք), որը, օգտվելով հայ Երվանդյանների հակառակորդ Սելևկյանների օժանդակությունից, Հայոց երկրից

---

[102] Հարությունյան Բ., Մեծ Հայքի Գուգարք աշխարհը՝ ըստ «Աշխարհացոյց»–ի, ԲԵՀ, 1977, թիվ 2, էջ 190, 194:

[103] Սամցխեին հիմնականում համապատասխանում էր Խորհրդային Վրաստանի Ախալցխայի և Ադիգենի վարչական շրջաններին:

գրավել և անջատել է Գուգարքն ու Ջավախքը, ինչպես և հարակից այլ շրջաններ: Այդ ժամանակ Ջավախքի կենտրոնը Ծունդա[104] ամրոցն էր, որը հայերը կոչում էին Քաջատուն կամ Քաջայ քաղաք: Վերը թվարկված տարածքները վրացիներից հետ վերցնելու մասին վկայում է հույն հեղինակ Ստրաբոնը: Նա գրում է, որ մ. թ. ա. 2–րդ դարում հայոց Արտաշես Ա թագավորը (189–160), ի թիվս այլ հողերի, իբերներից գրավել (այն է՝ վերադարձրել է – Ա.Մ.) և իր երկրին է միացրել Գոգարենն՝ Գուգարքը:[105]

Նմանօրինակ վկայության հանդիպում ենք վրացական աղբյուրներում: Ըստ Լեոնտի Մրովելու՝ քարթվելները՝ վրացիները, Ջավախեթը գրավելու համար Արտաշեսի դեմ պայքարում դուրս են բերել օսերին, հայկական աղբյուրներում հիշատակվող ալաններին:[106] Կնշանակի՝ հայ–ալանական պատերազմը, որի մասին պատմում է Մովսես Խորենացին «Արտաշես և Սաթենիկ» հայտնի առասպելում, ընթացել է նաև Ջավախքի համար: Սկզբում վրաց–ալանական ուժերն ունենում են հաջողություն. ներխուժում են Սոմխիթ (Հայաստան) և Ցելի (Ծովակ Հիւսիսոյ, Զլդր) լճի մոտ գերում հայոց արքայորդի Ջարեհին: Սակայն չուտով Արտաշեսի որդիներից Արտավազդն ու Տիգրանը հայկական բանակով կարողանում են հասնել Թռեղք և ստիպել հակառակորդին հաշտություն կնքել, որով Մեծ Հայքին է վերադարձվում ողջ Գուգարքը և գերությունից ազատվում է Ջարեհը:

Արտաշեսյանների և Արշակունիների ժամանակաշրջանում ևս Ջավախքի վերաբերյալ հիշատակություններն աղքատիկ են, և գավառի մասին պատկերացում կարելի է կազմել հիմնականում ամբողջ նահանգի՝ Գուգարքի միջոցով: Վերջինս մինչև Արշակունիների անկումը՝ 428 թ., շարունակել էր մնալ իբրև Մեծ Հայքի հյուսիսային պաշտպանական նահանգը և նրանից չէր անջատվել նույնիսկ մ. թ.

---

[104] Ծունդան հաճախ նույնացվել է այժմյան Ախալքալաքի Սուլդա գյուղի հետ: Ոմանք էլ այն տեղադրել են Կուրի ձորում Նաքալաքև գյուղի տեղում: Վրաց հեղինակ Վախուշտ Բագրատիոնը գրում է, որ Ծունդան նախապես կոչվել է Հուր, ապա հայերը վերանվանել են Քաջատուն (Քաջքա տուն), ապա Քաջքա ցիխե, այն է՝ Քաջաբերդ (տես ქართლის ცხოვრება, ტ. IV, თბ., 1973, გვ. 670).

[105] Ստրաբոն. Օտար աղբյուրները հայերի մասին, հ. 1, Ե. 1940, էջ 54–57, Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, էջ 196:

[106] ქართლის ცხოვრება, ტ. I, თბ., 1955, გვ. 48–49.

առաջին դարի առաջին կեսին (1–52 թթ.), երբ Հայոց գահին, ի թիվս այլ օտարների, բարձրացել էին նաև վրացիներ:

Բայց այդ ժամանակաշրջանում (37 թ.), Գուգարքի արևմուտքում, Ջավախքի հարևանությամբ ընկած Սամցխեի կամ Մեսխեթի գավառի արևմտյան և հյուսիսարևմտյան մասը միացվում է Վրաստանին: Պատահական չէ, որ այդուհետ, այդ գավառը Հայկական աղբյուրներում հաճախ հիշատակվում է իբրև վրացական թագավորության մաս:[107] Ըստ Հ. Մանանդյանի՝ այդ ժամանակ Հայ–վրացական սահմանն անցել է ներկայիս Ախալցխայից 8 կմ հարավ–արևելք ընկած Կուրի գետանցումներից մեկի և Պևտինգերյան քարտեզում դեռ Տիգրան Մեծի (մ. թ. ա. 95–55) ժամանակներից հայտնի Md Metcurium *կայանի մոտով:[108] Վերոհիշյալից հետևում է, որ այդ գծից դեպի հարավ–արևելք, Ջավախքի սահմանակցությամբ ընկած Սամցխեի գավառի մի հատվածը 37 թ. հետո էլ մնացել է Մեծ Հայքի կազմում:[109]*

Խնդրո առարկա գավառին վերաբերող ժլատ հիշատակումներից, թերևս խիստ արժեքավորը, որը նրա ժողովրդագրական վիճակի գողտրիկ վկայությունն է, պատկանում է վրաց տարեգրի գրչին: Ըստ ավանդության՝ Հռիփսիմյան քրիստոնյա քարոզիչ քույրերից Նինոն՝ հայկական աղբյուրների Նունեն, Հայաստանից փորձում է անցնել Վրաստան և լինում է Ջավախքում, որտեղ Փարվանա լճի ափին հանդիպում է հովիվների և, նրանց հետ խոսելով հայերեն, կարողանում է պարզել Մցխեթ տանող ճանապարհը:[110] Այս վկայությունը որոշակի պարզություն է մտցնում երկու կարևոր հարցում: Նախ, որ Նունեն մինչև Վիրք անցնելը, եղել է Հայաստանում, ծանոթացել հայերենին և, ի թիվս այլ քարոզիչների, այնտեղից քրիստոնեութ-

---

[107] Տե՛ս օրինակ Ղևոնդ, Պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները՝ Ա. Տեր–Ղևոնդյանի, Ե., 1982, էջ 112:

[108] Սանամյան Հ., Հայաստանի գլխավոր ճանապարհները՝ ըստ Պևտինգերյան քարտեզի, Ե., 1936, էջ 131:

[109] Սամցխե–Ախալցխայի գավառը շատ ուսումնասիրողներ մտցնում են պատմական Մեծ Հայքի Տայք աշխարհի մեջ (տե՛ս Зубов П., Картина Кавказского края, с. 277, Обозрение российских владений за Кавказом, ч. 4, с. 201–202).

[110] ქართლის ცხოვრება, ტ. I, გვ. 85–86: Լեոն կարծում է, որ Նունեն Ջավախք է անցել Շիրակի վրայով (Լեո, Սահմանավեճեր, Թ., 1919, էջ 101): Ինչ վերաբերում է այդ ժամանակ Փարվանայի ափին գտնվող բնակավայրին, այն անշուշտ, Փոկան էր, որով անցնում էր Արշակունյաց Հայաստանի առևտրական ճանապարհներից մեկը: Այդ մասին կխոսվի ստորև:

յունը տարածել վրաց աշխարհում:[111] Երկրորդ՝ Ջավախքի գործածական լեզուն հայերենն էր, այն հայաբնակ էր, այլապես Մցխեթից եկած հովիվների համար անհրաժեշտություն չէր լինի սովորելու հայոց լեզուն:

Ուշագրավ է, որ նույն ժամանակ, 4–րդ դարի սկզբին՝ հայոց և վրաց քրիստոնեական դարձի շրջանում, Գուգարաց աշխարհը Ջավախքի հետ միասին չարունակում էր մնալ հայկական թագավորության սահմանակալ ուժեղ վարչամիավորներից՝ բդեշխություններից մեկը: Նրա տիրակալ բդեշխը, որին անվանում էին «մյուս բդեշխ», առանձնակի դիրք ու ազդեցություն ուներ հայոց արքունիքում: Հատկանշական է, որ նա այն 16 մեծամեծների թվում էր, որոնք Տրդատ Գ Մեծի հրամանով Գրիգորին՝ հայոց ապագա առաջին կաթողիկոսին ուղեկցել են Կեսարիա՝ վերջինիս այնտեղ ձեռնադրության նպատակով:[112] Իր հերթին բդեշխն ուներ ենթակա վասալներ, որոնց մեջ առանձնանում էին Ջավախքի Վարձավունի նախարարները:[113] Նրանք 3–4–րդ դդ. պահպանում էին իրենց ներքին ինքնուրույնությունը: «Դահնամակում» 70 նախարարների մեջ Վարձավունիները հիշատակվում են 23–րդը: Պատերազմի ժամանակ Հայաստանի չորս զորավարություններից Արևելյան ուղղության զորքերի մեջ նրանք ունեցել են 200 զինվոր:[114] Ըստ Ղևոնդ Ալիշանի՝ Ջավախքի մեջ մտնող այս երկրամասը հայտնի է եղել նաև Վարձունիք և Վարձառունիք անուններով: Այնտեղ, ըստ ավանդության, գտնվել է սուրբ Մեսրոպի ձեռքով դրված Վարձունյաց խաչը:[115] Ալիշանի վերջին պնդման համար հավանաբար հիմք է ծառայել Վարդան Բարձրբերդցի պատմիչի գրի առած մի ավանդապատում, որի համաձայն, «Ի Դպրավանից տարան զխաչն, որ յանուն սուրբ Աստուածածնին, որ արդ Վարձիոյ կոչի՝ յայնժամ Ճոնեացն կոչիւր»:

---

[111] Պատահական չէ, որ վրաց Սիրիան (Սիհրան) թագավորը 320–ական թթ. Տրդատի օրինակով և օժանդակությամբ քրիստոնեական դարձի է բերել վրաց ժողովրդին:

[112] Ագաթանգեղոս, Պատմություն Հայոց, Ե., 1983, էջ 447:

[113] Ամենայն հավանականությամբ Վարձավունիների անունից է ծագել հետագայի Վարձիա քաղաքի (10–13–րդ դդ.) անունը (Ասպինձայի նախկին վարչական շրջանում):

[114] Ադոնց Ն., Հայաստանը Յուստինիանոսի դարաշրջանում, էջ 282, 294, հմմտ.՝ Ալիշյան Ղ., Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 424–425: Բ. Հարությունյանը գտնում է, որ Կղարջքը ենթարկվել է Վարձավունիների նախարարությանը և եղել է արքունական կալվածք (Հարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 194):

[115] Ալիշան Ղ., Նշմարք հայկականք, պր. 1, անթվական, էջ 15, հմմտ.՝ Լալայան Ե., Երկեր, հ. 1, էջ 43–44:

Այդ ամենահզոր, հիվանդություններ բուժող խաչը, որ «է սրբոյն Մեսրովբայ աւրհնեալ և կամ Բարսղի սրբոյն Ճոնին և ունի գիր հայերէն յայլ թևն»:[116]

4–րդ դարի կեսերին վրաց Բակուր թագավորը պայքար է սկսում Հայաստանի դեմ՝ Ջավախքին և ողջ Գուգարքին տիրելու համար: Նրա դրդմամբ և պարսից արքայի օժանդակությամբ Գուգարաց բդեշխը ապստամբում է Արշակ Բ–ի (350–368) դեմ. «Եւ յետ սորա Գուգարաց բդեշխն, և յետ սորա Ջորայ գաւառին տէրն, և Կողբայ գաւառին տէրն...,– գրում է Փավստոս Բուզանդ պատմիչը,– ապստամբեցին ի թագաւորէն Հայոց Արշակայ. և չոգան գնացին առաջի կային թագաւորին Պարսից Շապհոյ»:[117] *Սասանյանների դեմ Հայաստանի մղած քառամյա պատերազմի շրջանում (364–368), երբ պարսից Շապուհ Երկարակյացը մահ ու ավեր էր սփռում ամենուր, վրացիներին ժամանակավորապես հաջողվում է տիրել Էրուշեթին և Ջավախքի հարավային մասին՝ Կուր գետի կիրճի և ձախափնյակի շրջանին: Բայց չուտով՝ Պապ թագավորի օրոք (370–374), Մուշեղ սպարապետը ազատագրում է Գուգարքը, պատժում բդեշխին ու նրան օժանդակած իշխաններին և վերականգնում հայ–վրացական սահմանը՝ Կուր գետով. «...զհին սահմանսն, որ յառաջուն էր լեալ յերկիրն Հայոց և ընդ յերկիրն Վրաց, որ է ինքն մեծ գետն Կուր»:*[118] *Ջավախքի բնակավայրերի մասին առաջին հիշատակումներին հանդիպում ենք Պևտինգերյան քարտեզում, որն արտացոլում է 4–րդ դարի երկրորդ կեսի վիճակը: Հ. Մանանդյանը, ուսումնասիրելով Հայաստանի ճանապարհները, գալիս է այն համոզման, որ դրանցից մեկը, որ կապում էր Արտաշատը Սեբաստոպոլսի (այժմ՝ Սուխում) հետ, անցնում էր Ջավախքի Փոկա* (Pagas), *Աբուլ* (Apulum) *և Խոսպիա* (Caspiae)[119] *գյուղերով, ապա՝* Ad Metcurium *բնակավայրի մոտ*

---

[116] Մեծին Վարդանայ Բարձրբերդեցւոյ Պատմութիւն Տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 96–97:

[117] Փավստոս Բուզանդ, Պատմություն Հայոց, թարգմանությունը և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանի, Ե., 1987, էջ 246:

[118] Փավստոս Բուզանդ, Պատմություն Հայոց, էջ 322:

[119] Մանանդյան Հ., Երկեր, հ. Բ, Ե., 1978, էջ 398 և հ. Զ, Ե., 1985, էջ 112–113: Ըստ նույն գիտնականի Caspiae–Խոսպիան հայտնի է եղել դեռևս մ. թ. ա. 1–ին դարից՝ իբրև հռոմեական բանակների հավաքատեղի, որտեղով մ. թ. ա. 66–65 թթ. Իբերիա է անցել Պոմպեոս զորավարը, իսկ Ներոն կայսրը (54–66) նախատեսել է կազմակերպել արշավանք ալանների դեմ (տե՛ս Մանանդյան Հ., Երկեր, հ. Բ, էջ 11 և նույնի՝ Տիգրան երկրորդը և Հռոմը, Ե., 1940, էջ 198–200, 206): Պևտինգերյան քարտեզում Ջավախքի

անցնելով Կուր գետի վրայով (Մցխեթա – Մտկվարի Կուրի վրացերեն անվանումը), այժմյան Ախալցխա–Ադիգեն–Ջեգարի լեռնանցք երթուղով, դուրս գալիս Սև ծովի ափերը:

387 թ. Հայաստանի բաժանումից հետո Մեծ Հայքի ազդեցությունը Գուգարքի և նրա մեջ մտնող Ջավախքի վրա զգալիորեն թուլացավ: 428 թ. հայ Արշակունիների կործանումից հետո Գուգարաց բդեշխությունը միացվեց Սասանյան Իրանից կախյալ և փաստորեն սովորական պարսկական մարզպանության կարգավիճակ ունեցող Վրաց թագավորությանը: Այստեղից էլ ծագեց բդեշխի նոր տիտղոսը «բդեշխ վրաց և Գուգարաց»: Նկատենք, որ ճիշտ նույն ժամանակ էլ Արցախը կցվեց պարսկահպատակ մեկ այլ մարզի Աղվանքին:

Այն, որ այդ տարածքի անցումը տեղի է ունեցել Արշակունիների թագավորության անկումից հետո, հստակորեն երևում է 5–րդ դարի հայ մատենագիրների հաղորդած տեղեկություններից: Կորյունը, խոսելով Հյուսիսային Հայաստանում 5–րդ դարի սկզբին Մեսրոպ Մաշտոցի քարոզչական գործունեության մասին, նշում է, որ «իշխանն տաչրացւոց», այսինքն Գուգարքի ամենահայտնի գավառներից մեկի Տաչիրի տեր Աշուշան, որ պատվական ու աստվածասեր մարդ էր, զգալի նպաստ է բերել երկրամասի քրիստոնեացման գործին:[120] Մինչդեռ, դարի կեսերին տեղի ունեցած դեպքերի մասին պատմելիս Ղազար Փարպեցին նույն Աշուշայի հասցեին «իշխան տաչրացւոց» տիտղոսի փոխարեն գործածում է «յաշխարհէն Վրաց», «բդեշխն Վրաց, «իշխանն Վրաց» բառերը:[121] Նշանակում է Գուգարաց բդեշխությունն իր Տաչիր գավառի հետ արդեն մարզպանական Հայաստանի կազմում չէր: Բայց միաժամանակ, ինչպես երևում է աղբյուրների հաղորդումներից, օգտվում էր ներքին ինքնավարությունից և ուղղակիորեն մաս չէր կազմում վրաց պետությանը, այլ նրան, ինչպես և պարսից թագավորությանը ենթակա սահմանակալ բդեշխություն էր:[122]

վերոհիշյալ բնակավայրերը տես 4–րդ դարի հռոմեական մղոնաչափքի (Պևտինգերյան աղյուսակի) մի մասը, Հայկական ՍՍՌ ատլաս, Երևան–Մոսկվա, 1961, էջ 110:

[120] Կորյուն, Վարք Սեսրոպ Մաշտոցի, աշխատասիրությամբ Ա. Մաթևոսյանի, Ե., 1994, էջ 99:

[121] Ղազար Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց. Թուղթ առ Վահան Մամիկոնեան, քննական բնագիրը Գ. Տեր–Սկրտչյանի և Ստ. Մալխասյանցի, Ե., 1982, էջ 108, 120, 128, 138, 256, 266:

[122] Գուգարքի կարգավիճակի մասին տես Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 252, 260:

Այդ միտքը հաստատվում է վրաց Ջվանշիր պատմիչի մի վկայությամբ, ըստ որի, 5–րդ դարի երկրորդ կեսին Ջավախքը և Կղարջքը պատկանում էին ոչ թե վրացական թագավորին, այլ նրա հորեղբորորդի Գուրամ կուրապաղատին: Գուգարքի՝ որպես երկար ժամանակ հայ–վրացական միջանկյալ (բուֆերային) դիրք և յուրահատուկ կարգավիճակ ունեցող վարչամիավորի մասին պատմագիտական գրականության մեջ շատ է գրվել և, որպես կանոն, հաճախ հայտնվել են միանգամայն իրարամերժ տեսակետներ: Տարբեր հեղինակների մեջ առանձնացնենք թերևս երկուսը: Ըստ Միքայել Ջամչյանցի՝ «Այս աշխարհ էր ի ձեռս վրաց ընդ իշխանութեամբ հայոց. և երբեմն ընդ իշխանութեամբ վրաց. և իշխան սորա որ կարգիւր երբեմն ի հայոց և երբեմն ի վրաց կոչիւր բդեշխ գուգարացւոց, և բդեշխ վրաց», ընդ որում, ինչպես այստեղ, այնպես էլ Տայքում՝ բնակիչները «...հայք էին, բայց խառն ընդ վրացիս»:[123] Բ. Հարությունյանը ճիշտ է նկատել, որ պարսից արքունիքը, անջատելով Գուգարաց բդեշխությունը Արևելահայկական թագավորությունից և նրան տալով հատուկ ինքնուրույն կարգավիճակ, այն հակադրում էր նաև Վրաց պետությանը, բդեշխին դարձնում լուրջ հակակշիռ վրաց թագավորին:[124]

Արշակունյաց հարստության անկումից հետո ևս հոգևոր–եկեղեցական առումով Վրաստանը չարունակում էր մնալ Հայ առաքելական եկեղեցու ազդեցության տակ, թեև արդեն վտրձում էր ձեռք բերել ինքնուրույնություն: Նման քայլերն ավելի որոշակի դարձան 5–րդ դարի երկրորդ կեսին՝ Վախթանգ Գորգասարի օրոք: Վերջինս ինչպես էրուշեթում, այնպես էլ Ջավախքում՝ Ծունդայում, հիմնադրից առանձին եպիսկոպոսություն: Շուտով Գորգասարի որդին՝ Միհրդատը, Խոզափին լճի արևմտյան ափին կառուցեց Մղարոսթավի եկեղեցին: Ինչպես երևում է, վրաց արքունիքն ու հոգևորականությունը հայ Արշակունիների թագավորության կործանումից հետո ոչ միայն ձգտում էին հեռանալ հայ եկեղեցուց, այլև հոգևոր առումով ամրապնդվել Ջավախքում: Պատահական չէ, որ Ծունդայում վրաց հոգևոր աթոռի ստեղծումը որոշակիորեն թուլացրեց հայ եկեղեցական նվիրապետության դիրքերը գավառում, ուստի հարկ եղավ հայերի հոգևոր աթոռանիստն այնտեղից տեղափոխել այլ վայր:

---

[123] Չամչեանց Մ., Պատմութիւն Հայոց, հ. Գ, բաժին «Ժամանակագութիւն», էջ 142:
[124] Հարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 185:

երբեմնի հայաշատ Մունդայում տեղի ունեցան քարթվելացման առաջին երևույթները: Թերևս այդ մասին է վկայում Մխիթար Այրիվանեցու մոտ պահպանված մի հիշատակություն, որում բերված «Մադ» բնակավայրն ու Փարսման քահանայի կողմից «ի Վիրս» դարձած, այսինքն՝ վրացացած «Մոնդէցիսն», վերաբերում են Մունդային և նրա բնակիչներին: «Յաւուրս տէր Դաւթի Փարսման քահանայ Կակաղեցի,– գրում է մատենագիրը,– որոշեալ ՚ի հայոց ՚ի Վիրս դարձոյց զՄոնդէացիսն, այս է Մադն, որ կան այժմ ի Հոռոմս»:[125]

Մունդայի դերի ժամանակավոր թուլացումից հետո Ջավախքի հոգևոր կենտրոնի փոփոխության հարցում պարզություն մտցնելու խնդրում, օգնության է գալիս Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցու մի վկայությունը, որն ավելի մանրամասն տարբերակով հանդիպում ենք նաև Ստեփանոս Օրբելյանի մոտ: Այդ հաղորդումն առ այսօր պատմագրության մեջ ուշադրությունից դուրս է մնացել կամ սխալ մեկնաբանություն է ստացել: Ըստ Դրասխանակերտցու՝ նշանավոր Մաքենացիների (նաև՝ Մեքենացիների) միաբանության տրոհումից հետո, նրա միաբանների մի մասը Սողոմոն՝ «...հայրն հարանց հասարակ բաժնիւ կրօնաւորական դասուն երթեալ բնակէր ՚ի Զրեսկ որ ՚ի Շիրակ գաւառի»:[126] *Օրբելյանի տարբերակով՝ 727 թ. պարտության մատնելով արաբ զորավար Մրվանին, Ատրպատականում ճանաչված պարսիկ Բաբանը (խուրրամյան շարժման առաջնորդ Բաբեկը – Ա.Մ.) իր հերթին ավերածություններ է կատարում Բաղասական գավառում, իսկ հաջորդ տարում Գեղարքունիքում կոտորում է 15 հազ. մարդ, կողոպտում ու քարուքանդ անում Մաքենոցաց կամ Մաքենեցոց վանքը: Նախապես տեղեկանալով գալիք արհավիրքի մասին՝ վանքի հոգևորականների մի մասը հեռանում է Աղվանք, մյուս մասը՝ Սողոմոն վանահոր առաջնորդությամբ, տեղափոխվում է Շիրակ և հաստատվում Սուրբ Զրեսկի վանքում, ուր Սողոմոնը դառնում է ճանաչված ՚ճգնավոր:*[127]

Այս հաղորդման ուշադիր քննությունը համոզում է, որ եթե 10–րդ դարի սկզբի հեղինակ Դրասխանակերտցին թույլ է տալիս

---

[125] Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն հայոց, Մոսկուա, 1860, էջ 54: Այս քաղվածքում «հոռոմների» մասին հիշատակումը, կարծում ենք, գործածված է հունադավան իմաստով:

[126] Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի, Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Գ. Բ. Թոսունյանի, Ե., 1996, էջ 114:

[127] Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա. Ա. Աբրահամյանի, Ե., 1986, էջ 165–166:

միայն տեղագրական բնույթի սխալ, ապա 13–րդ դարի վերջի և 14–րդ դարի սկզբի պատմիչ Օրբելյանը՝ իրենից 5–6 հարյուր տարի առաջվա վերոհիշյալ դեպքերի կապակցությամբ ոչ միայն կրկնում է նախորդի վրիպումը, այլև խճճվում ժամանակագրական բնույթի սխալների մեջ, որոնք սպրդել են նաև հետագա ուսումնասիրողների՝ Մ. Օրմանյանի, Ղ. Ալիշանի, Ն. Ակինյանի, Հր. Աճառյանի և այլոց ուշադրությունից: Վերջիններս, հավաստի համարելով Շիրակում Զրեսկի վանք լինելու մասին պատմիչների հաղորդած տեղեկությունը, իրենց հերթին այդ սխալը թողել են գիտական շրջանառության մեջ:

Բանն այն է, որ մեքենացի վանականների տեղաշարժի մասին հաղորդման մեջ, տվյալ դեպքում՝ Ստեփանոս Օրբելյանը ճիշտ է նշել միայն նրանց չարժման ուղղությունը՝ դեպի հյուսիս–արևմուտք, դեպի Շիրակ, որտեղ էլ նա տեղադրել է Զրեսկը: Մինչդեռ, Շիրակում Զրեսկ անունով տեղանուն չկա: Բայց այն կա հյուսիս–արևմուտքից Շիրակին ու Աշոցքին սահմանակից Ջավախք գավառում: Ի դեպ, վերջինս առ այսօր էլ գոյություն ունի Ախալքալաքի շրջանում Զրեսկ *կամ* Զրես *անունով:*

Երկրորդ վրիպումը, որ թույլ է տրված վերոհիշյալ հաղորդման մեջ, վերաբերում է ներկայացված դեպքի ժամանակին: Ա. Աբրահամյանը և ուրիշներ նկատել են, որ Օրբելյանը 9–րդ դարի անցքերը վերագրել է 8–րդ դարին՝ սխալվելով ճիշտ մեկ դարի կտրվածքով: Նշանակում է, Զրեսկում հաստատվելու դեպքերը վերաբերում են ոչ թե 728, այլ 828 թվականին: Այսպիսով, առնվազն 9–րդ դարից առաջ Ջավախքում եղել է հոգևոր կենտրոն՝ Զրեսկ անունով: Այդ բնակավայրի, որպես Հայ առաքելական եկեղեցու հոգևոր կենտրոն լինելու օգտին են վկայում նաև այնտեղ գտնված խաչքարերը: Ուշագրավ է, որ Ջավախքում հայտնի հնագույն խաչքարը, որը վերաբերում է 1072 թ., նույնպես գտնված է Զրեսկի տարածքից:[128]

Արդեն 6–րդ դարում Գուգարքի և Տայքի տարածքում ձևավորվեցին կիսանկախ իշխանություններ, որոնք վրացական աղբյուրներում հայտնի են «էրիսթավություններ» անունով: Դրանք փաստորեն փոխարինեցին նույն բդեշխություններին: Այդպիսի իշխանություններից մեկը, որն ընդգրկում էր նաև Ջավախքը, հիշատակվում է մինչև 575 թ.: Այն համառ պայքար է մղել վրաց թագավոր-

[128] Կարապետյան Ս., Ջավախքի խաչքարերը, էջ 7:

ների, բյուզանդացիների ու պարսիկների դեմ: Վիճակը փոխվել է 7-րդ դարի 40-ական թվականներին, երբ սկսվել են արաբական արշավանքները:

Ջավախքի մասին պահպանված մի հիշատակություն վերաբերում է 6-րդ դարի երկրորդ կեսին և 7-րդ դարի սկզբին: Այդ ժամանակ ծագած հայ-վրացական դավանաբանական վեճերի առնչությամբ Ուխտանես պատմիչը գրում է, որ վրաց Կյուրիոն կաթողիկոսը, որը 607-608 թթ. վրաց եկեղեցին հանեց Հայ Առաքելական եկեղեցու ենթակայությունից՝ նախընտրելով քաղկեդոնականությունը, ծնվել էր Ջավախքի Սկուտրի գյուղում. «Սա էր աշխարհաւ և ազգաւ ի Վրաց՝ ի գաւառէ Ջաւախաց՝ ի գեղջէ՝ որ կոչի Սկուտրի»:[129] Որոշ ուսումնասիրողներ ենթադրում են, որ Սկուտրին Ջավախքի Կոթելիա գյուղն է: Ըստ այս տեսակետի, որը բավական համոզիչ է թվում, ստացվում է, որ Կոթելիան երկրամասում հիշատակվող հնագույն բնակավայրերից է:

627 թ. Թիֆլիսից Պարսկաստան անցնելու ճանապարհին բյուզանդական կայսր Հերակլ I-ի զորքը, շարժվելով Կուրի հոսանքն ի վեր, Բորժոմի կիրճով մտել է Ջավախք և Խոսպիայով (Caspiae) *անցել Շիրակ ու Արարատյան դաշտ:[130]*

7-րդ դարի կեսերին՝ արաբական արշավանքների առիթով, նորից հանդիպում ենք Ջավախքի մասին հիշատակությանն: Դեպքերի ժամանակակից հեղինակ Հովհան Մամիկոնյանը «Պատմություն Տարոնի» երկում գրում է, որ արաբ զորավար «...Աբդռահիմ անցանէ ի Հարք և ի Բասեան, ի Վիրք և ի Ջաւախս և ի Վանանդ. և առեալ

---

[129] Ուխտանես, Պատմութիւն բաժանման վրաց ի հայոց, Վաղարշապատ, 1871, էջ 3-4, հմմտ.՝ ეს ტანეს, ისტორია გამოყოფისა ქართველთა სომეხთაგან, სომხური ტექსტი ქართული თარგმანითა და გამოკვლევით გამოსცა ზაზა ალექსიძემ, თბ., 1975, გვ. 20. Ուխտանեսի կողմից Ջավախքը Վրաց աշխարհում տեսնելու հանգամանքն այդ ժամանակ միայն պայմանավորված չէր երկրամասի՝ Վրաստանի քաղաքական ենթակայության տակ լինելու հանգամանքով: 7-րդ դարի սկզբին հայ-վրացական դավանական բաժանումն իրականացրած Կյուրիոնը հայ հեղինակի համար ավելի շուտ կարող էր ներկայանալ որպես Վրաց աշխարհի ծնունդ: Կյուրիոն կաթողիկոսի գործունեության մասին տե՛ս Ակինյան Ն., Կիւրիոն կաթողիկոս Վրաց: Պատմութիւն հայ-վրացական յարաբերութեանց եօթերորդ դարու մեջ (Ազգային մատենադարան), Վիեննա, 1910:

[130] Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, ե., 1960, էջ 165-166:

հարկս, դառնայ ի Տաճկաստան»:[131] *Նույն իրադարձության մասին, գրեթե առանց էական տարբերությունների, կարդում ենք նաև մեկ այլ աղբյուրում. «Աբդուահիմ քեռորդին Մահմետի՝ ելանէ ուխտատան հազարաւ ի Հայս... և անցանէր ի Հարք և ի Բասեն, ի Վիրք և ի Ջաւախս և ի Վանանդ...»:*[132] *Այստեղ հատկանշականն այն է, որ Ջավախքը թվարկվում է Վիրքից անկախ, հայոց Վանանդ գավառի հետ միասին: Նշանակում է 7–րդ դ. 40–50–ական թթ. այս գավառն արդեն ոչ թե Վիրքի, այլ Հայաստանի կազմում էր: Միայն դարավերջին այն գրավվել և մտցվել է Արաբական խալիֆայության ենթակա Արմինիա ոստիկանության կազմի մեջ:*

Արաբական տիրապետության տակ Ջավախքը մնում է մոտ մեկ դար՝ մինչև 9–րդ դարի սկիզբը: 774 թ. արաբական լծի դեմ բռնկվում է նոր ապստամբություն, որի համար ազդանշան է ծառայում Կումայրիում (Գյումրի) Արտավազդ Մամիկոնյանի ջոկատի հարձակումը արաբ հարկահավաքների վրա: Խուսափելով արաբական կանոնավոր զորքերի հետապնդումներից, ինչպես վկայում է Ղևոնդ պատմիչը, հայ ապստամբները Շիրակից (անկասկած՝ Ջավախքով – Ա.Մ.) անցնում են Վիրքին ենթակա Սամցխե գավառ, ապա, Եղերայ աշխարհում հայտնվելով բյուզանդական ազդեցության գոտում, ազատվում հետապնդումներից:[133] *Այս վկայությունից կարելի է ենթադրել, որ Շիրակը, հավանաբար և նրան հյուսիս–արևմուտքից սահմանակից Ջավախքը, դեռ արաբների տիրապետության տակ էին, իսկ Սամցխեն՝ Վրացական պետության կազմում էր:*

Շուտով Ջավախքը ևս ազատագրվում է օտար լծից: Աչոտ Մսակեր Բագրատունի իշխանը, որը ձեռնամուխ էր եղել արաբներից հայկական տարածքների վերադարձման գործին, 785 թ. վերջին Ներսեհ կամսարականի սպանությունից հետո, վերջինիս հաջորդներից գնում է Արշարունիքն ու Շիրակը և ընդհուպ մոտենում Ջավախքի սահմաններին: 9–րդ դարի սկզբին, խուսափելով Վրաստան ներխուժած արաբ զորավար Խալիլի հետապնդումներից, Աչոտ կուրապաղա-

---

[131] Յովհաննու Մամիկոնեանի եպիսկոպոսի, Պատմութիւն Տարօնոյ, Վենետիկ, 1832, էջ 57–58, հմմտ.՝ Հովհան Մամիկոնյան, Տարոնի պատմություն, Ե.,1989, էջ 114, Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, էջ 682:

[132] Պատմութիւն սրբոյն Ներսիսի և գիւտ նշխարաց, Սոփերք հայկականք, հ. է, Վենետիկ, 1853, էջ 43–44 և Սանասարյան Հ., Երկեր, հ. Բ, էջ 509–510:

[133] Ղևոնդ, Պատմություն, էջ 112:

տի զորքերը հասնում են Փարվանա լճի ափը: Շուտով այստեղ են գալիս նաև թշնամու զորքերը: Աչոտը, համախմբելով իր ուժերը, կարողանում է արաբներին պարտության մատնել:[134] *Կարծում ենք, որ այս դեպքի առիթով «Քարթլիս ցխովրեբայում» հիշատակվող Աչոտ Բագրատունին նույն Աչոտ Մսակերն է, որը 804 թ. նշանակվել էր Հայոց իշխանաց իշխան: Նշանակում է Փարվանայի հաղթական ճակատամարտից հետո, ամենայն հավանականությամբ, Ջավախքը ևս առժամանակ միացվել է հայ Բագրատունիների տիրույթներին:*

Բ) Ջավախքը 9-15-րդ դարերում

9–րդ դարի 40–ական թթ. Ջավախքի և նրա հնագույն ու հայանուն գյուղերից մեկի՝ Խոզաբիրի[135] *մասին հիշատակում է Ասողիկ պատմիչը: «Ձմզ (841– Ա.Մ.) թուականին Խալիֆ իպն Եզիտ Հայոց ամիրայ,– գրում է նա,– եկն և էանց բազմութեամբ ի Վիրս. և մեռաւ ի Ջաւախս, ի գիւղն որ կոչի Խոզաբիր»:*[136] *Այսպիսով, ինչպես Հովհան Մամիկոնյանի մոտ, այնպես էլ այստեղ Վիրքը և Ջավախքը ընկալվել են որպես աշխարհագրական տարբեր հասկացություններ: Ուրեմն, խոսք չի կարող լինել դրանց նույնության մասին:*

Արաբական տիրապետության թուլացմանը զուգընթաց, 9–րդ դարի սկզբներից Գուգարք աշխարհի չուրջ պայքար են ծավալում հայ և վրաց Բագրատունիները, մինչև որ դարավերջին Հայոց թագավոր Սմբատ Ա–ն (890–914), Հովհաննես Դրասխանակերտցու վկայությամբ՝ «երթեալ չուէ զկողմամբք Գուգարաց՝ և զայնս ևս

---

[134] Ростомов И. П., Ахалкалакский уезд, с. 7.

[135] Խոզաբիրը գտնվել է Ջավախքի հարավում, համանուն լճի ափին, կարծախ գյուղից ոչ հեռու: Այժմ նույն տեղում պահպանվում են գյուղի ավերակները: «Խոզաբիր» անվան առաջին մասը կապվում է «խոզ» բառարմատի հետ: Երկրորդը կարելի է հասկանալ բեր – բերել, կամ «բիւր», տաս հազար, այսինքն՝ բազմահազար խոզերի վայր: Բայց ամենահավանականը «բուն» բառն է: Ստացվում է, որ ճիշտ անունը պետք է լիներ Խոզաբուն: Գյուղի տեղանքն իրապես նպաստավոր է եղել խոզաբուծության համար: Խոզաբիրի անունը հիշատակվում է նաև ավելի ուշ շրջանի աղբյուրներում: Այդ մասին կխոսվի ստորև:

[136] Ստեփաննոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, էջ 106, հմմտ.՝ Քաջունի Մ., Աշխարհագրութիւն հին և նոր Հայաստանեայց, Վենետիկ, 1857, էջ 27:

ամրոցս իւրոյ տէրութեանն առհասարակ յինքն գրավէր նուաճէր»:[137]

Բագրատունյաց դարաշրջանում, տնտեսական կյանքի աչխուժացմանը զուգընթաց, վերականգնվում են հնագույն առևտրական ուղիները: Դրանցից մեկը, որ Դվինից տանում էր Թիֆլիս, անցնում էր Կոտա գյուղով: Մարկվարտի կարծիքով այդ երթուղին Կողբով, ապա Շիրակի վրայով հասնում էր Կոտ գյուղը, ապա՝ ուղղվում Թիֆլիս: Գիտնականը Կոտը համարում է սահմանային կետ Հայաստանի և Վրաստանի միջև, բայց դժվարանում է նշել կոնկրետ տեղը:[138] *Հ. Մանանդյանը, զարգացնելով Մարկվարտի միտքը, հիշյալ երթուղու շարունակվող հատվածը տեսնում է Ջավախքում, ուր և տեղադրում է Կոտ գյուղը՝ տրամաբանորեն այն նույնացնելով Հայտնի Կոտելիա (Կոթելիա, Սկուտրի) գյուղի հետ:*[139] *10–րդ դարի 50–ական թվականների վերջից, երբ Ջավախքը կրկին, առժամանակ անցել էր վրաց թագավորության հսկողության ներքո, սկսվում է Կումուրդո (Գումբուրդո) գյուղի ուղղափառ եկեղեցու շինարարությունը, որը շուտով դառնում է գավառի վրաց հոգևոր կենտրոնը:*

10–րդ դ. 60–70–ական թթ. Գուգարքի մեծ մասը մտնում է ընդհանուր Բագրատունյաց պետության մեջ հատուկ վարչաքաղաքական կազմավորման կարգավիճակ ունեցող Լոռվա կամ Կյուրիկյան (նաև՝ Գուգարքի, Տաշիր–Ձորագետի) թագավորության տարածքի մեջ:[140] *Վերին Ջավախքը, հատկապես նրա հարավային մասը՝ Գոգչենը, որոշ ժամանակ դեռ մնում է հայ Բագրատունիների ազդեցության տակ:*[141]

Այդ ժամանակաշրջանի մեզ հետաքրքրող տարածքի և հայ–վրացական համագործակցությանը վերաբերող մի դողտրիկ պատառիկ պահպանվել է Ստեփանոս Ասողիկի «Պատմութիւն տիեզերական» աշխատությունում: 988 թ. Տայքի Դավիթ կուրապաղատը և

---

[137] Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1912, էջ 244: Տե՛ս նաև էջ 178:

[138] Markwart J., Das Itinerer von Artaxata nach Armastica, Wien, 1920, S. 55–57.

[139] Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, էջ 348–349, հ. Ձ, էջ 184:

[140] Տաշիր–Ձորագետի թագավորության կազմավորման ժամանակի, ունեցած հատուկ կարգավիճակի մասին մանրամասն տե՛ս Մաթևոսյան Ռ. Ի., Տաշիր–Ձորագետ, էջ 50–75:

[141] Այժմ Ախալքալաքի հարավում կա Գոգաշեն անունով գյուղ: Շատ հնարավոր է, որ այդ անունը կապվում է «Գուգարք» անվան հետ և նախապես եղել է Գուգարաշեն:

վրաց Բագրատ Թագավորը աբխազների դեմ պայքարում օգնության խնդրանքով դիմում են Հայոց Բագրատունյաց Թագավոր Սմբատ Բ Տիեզերակալին (977–990): Սմբատն իր եղբոր՝ Գագիկի հետ, Հայոց բանակով, իսկ Կարսի Աբաս Թագավորն՝ իր Թիկնապահ գնդով, շարժվում են դեպի Հյուսիս «... ի գաւառն Ջաւախաց. և բանակին ի գիւղն, որ կոչի Դլիվեկն»:[142] Արշավանքի չորհիվ Անիի Բագրատունիներն ամրապնդում են իրենց դիրքերը Ջավախքում:

1000 թ., երբ Դավիթ կուրապաղատն իր իշխանապետությունը կտակում է Բյուզանդիային, անմիջական վտանգ է կախվում Գուգարքի վրա: Վրաց Բագրատունիները 1010–ական թվականներին, օգտվելով կայսրության դեմ Բուլղարիայում սկսված ապստամբություններից, գրավում են Ներքին Ջավախքը, Տայքի արևելյան մասը, ապա նաև բուն Վերին Ջավախքը:[143] Շուտով վրաց Թագավորները Ջավախքն ու նրան արևմուտքից հարևան Սամցխեն վերածում են իրենց Թագավորության հարավում ընկած ուժեղ պաշտպանական գավառների՝ կենտրոնախույս ուժերի, Բյուզանդական կայսրության, մի փոքր ավելի ուշ՝ սելջուկ–Թուրքերի դեմ:

Բյուզանդական կայսր Վասիլ (Բարսեղ) Բ–ն 1022 թ. արշավում է Արևելք և վրաց Գեորգի Թագավորից պահանջում է զորքերը ետ քաշել Դավիթ կուրապաղատի կտակով կայսրությանն անցած տարածքներից: Վրաց Թագավորի համառ դիմադրությունից գաղափած՝ բյուզանդական բանակը բնակչության կոտորած է կազմակերպում Կարսի, Արդահանի և Ջավախքի բնակավայրերում: Վրացիները ստիպված համաձայնում են կայսեր առաջադրած պայմաններին:[144]

11–րդ դ. առաջին կեսին վրաց Բագրատունիները շարունակում են պաշտպանական կառույցների ստեղծման աշխատանքները Ջավախքում և Հյուսիսային Հայաստանի այլ գավառներում: Բագրատ Գ–ն կառուցապատում ու ամրացնում է գավառի բնակավայրե-

---

[142] Ստեփաննոս Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, էջ 252: Ամենայն հավանականությամբ Դլիվեկ գյուղը ներկայիս Դիլիֆ (Դիլիվ) գյուղն է այժմյան Նինոծմինդայի շրջանում:

[143] Հ. Սանանդյանը, հենվելով «Քարթլիս Ցխովրեբայի» և Ջուանշիր պատմիչի հաղորդումների վրա, նշում է, որ որոշ տարածքներ Ջավախքում և հարակից գավառներում դեռ մնացել են Բյուզանդիայի տիրապետության տակ և Վրաստանին անցել միայն 11–րդ դարի երկրորդ կեսին (Սանանդյան Հ., Երկեր, հ. Գ, Ե.,1977, էջ 72–73):

[144] Սանանդյան Հ., Երկեր, հ. Գ, էջ 21:

ըից մեկը և կոչում Նոր Քաղաք, վրացերեն՝ Ախալքալաք ახალი (ախալի)՝ նոր, ქალაქი (քալաքի)՝ քաղաք: Բագրատ Դ–ն 1044–1047 թթ. Լիպարիտ Օրբելյանի դեմ պատերազմի ժամանակ Թափաւրվան դեսի և նրա ձախակողմյան Քառասնաղբյուր վտակի գոյացրած թեբրակղզու վրա կառուցում է Ախալքալաքի բերդը: Վրաստանից այստեղ է բերվում որոշ թվով վրաց բնակչություն:

11–րդ դարի վրաց հեղինակ Եփիմոս Երուսաղեմցին հիշատակում է Ղրտիլա գյուղը, որտեղ 1046 թ. իր և հայոց Սոսթենես վարդապետ Մարմաշենցու միջև տեղի է ունեցել հայ–վրացական բանավեճ: Ուսումնասիրողներից ոմանք Ղրտիլան տեղադրում են Ջավախքում՝ այն նույնացնելով Իխտիլա գյուղի հետ:[145] Այդ մոտեցումը թվում է բավականաչափ տրամաբանական: Բանն այն է, որ իրոք, Ջավախքն այդ ժամանակաշրջանում վերածվել էր ոչ միայն հայ–վրացական դավանական, այլև, վրացական բնակչության ներհոսքի ուժեղացումով պայմանավորված, նաև՝ էթնիկական բուռն տեղաշարժերի թատերաբեմ և կարող էր նրա գյուղերից մեկը իսկապես դառնալ նմանօրինակ բանավեճի վայր:

Նույն դարի կեսերին Ջավախքի համար սրվում է պայքարը Բյուզանդիայի և Վրաստանի միջև: Վրացիները մեծ դժվարությամբ կարողանում են պահպանել իրենց ազդեցությունն այս երկրամասի վրա: Բայց դա երկար չի տևում: 1064 թ. Հայաստանն ու Վրաստանը ենթարկվում են սելջուկյան հերթական ասպատակություններին: Այդ թվականին սուլթան Ալփ–Արսլանը, ի թիվս Անդրկովկասի շատ քաղաքների, գրավում է նաև Ախալքալաքը: Այս իրադարձության մասին հատկապես հարուստ ու արժեքավոր տեղեկություններ են հաղորդում 12–14–րդ դարերի հայկական աղբյուրները: Պատմիչ Մատթեոս Ուռհայեցին գրում է. «...և իջեալ բանակեցաւ ի գաւառն, որ կոչի Ջաւալիս (Ջաւախս– Ա.Մ.) և պատերազմաւ մեծաւ պատեաց զքաղաքն, որ կոչի Ալախ (Ախալ– Ա.Մ.) և ուժգին զօրութեամբն առաւ Ալախ քաղաքն. և առ հասարակ զամենայն քաղաքն սրով կոտորեաց՝ զայր և զկին՝ անողորմ և զամենայն քահանայսն և զկրօնաւորսն և զիշխանսն սրախողխող արարեալ. լցաւ ամենայն քաղաքն արեամբ. և անհամար մանկունս և աղջկունս տարան ի Պարսիկս ի

[145] Վրաց աղբյուրները, հ. Ա, էջ 106:

գերութիւն, և գանձս ոսկւոյ և արծաթոյ՝ ականց և մարգարտացն որ ոչ էր թիւ»:[146]

Այս հաղորդումից երևում է, որ 11–րդ դարի կեսերին Ախալքալաքը, որ փոխարինել էր վարչական կենտրոն Ծունդային, սարսափելի կոտորածների ու բռնագաղթի հետևանքով կորցրել էր իր բնակչության զգալի մասը: Նույն հիշատակությունը պերճախոս վկայություն է նաև այդ ժամանակաշրջանում Ախալքալաքի՝ իբրև հարուստ, բարգավաճ ու մարդաշատ քաղաք լինելու, նրանում մեծ թվով մեծահարուստների, իշխանների ու հոգևորականների բնակվելու մասին:

Նույն դեպքի մասին պատմում են Սամուել Անեցին և Ստեփաննոս Օրբելյանը: Վերջինս, լինելով ավելի ուշ շրջանի հեղինակ, ձեռքի տակ ունեցել է Սամուել Անեցու աշխատությունը և տառացիորեն կրկնել Ախալքալաքը գրավելու մասին պատմությունը, միայն այն տարբերությամբ, որ այդ իրադարձությունը վերագրել է ոչ թե 1065 թ., ինչպես սխալմամբ կարծում է Անեցին, այլ 1064 թվականին: Անին գրավելուց, նրա բնակչությանը կոտորելուց ու գերեվարելուց հետո Ալփ-Արսլանը «էառ և զԱխալ քաղաք. և ի սոյն ամի Բագարատ զ Կիւրիկէ կալաւ՝ և զՇամշուլդէ էառ»:[147]

Վերոհիշյալի մասին Վարդան պատմիչի մոտ կարդում ենք. Տուղրիլի հորեղբոր որդին՝ Ալփ–Արլսանը «...եկն դարձեալ հարիւր հազարաւ, եւ առ զնոր քաղաք, զոր Վիրք Ախալ–քաղաք ասեն»:[148] *Վերջին վկայության մեջ ուշադրություն է հրավիրում այն հանգամանքը, որ Ախալքալաքի հասցեին գործածվում է նոր հաղաք հայկական ձևը, որին վրացիներն անվանել են Ախալ քաղաք: Կարևոր է, որ վերջին դեպքում էլ բառի վրացական յալաქი (քալաքի) ձևի փոխարեն, ինչպես Վարդանի, այնպես էլ այլ հեղինակների մոտ բերվում է հայկական քաղաք տարբերակը: Միջնադարյան հայ ժամա-*

---

[146] Սատթեոս Ուռհայեցի, ժամանակագրություն, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Հ. Բարթիկյանի, Ե., 1991, էջ 158:

[147] Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 112, հմմտ.՝ Ստեփաննոսի Օրբելեանի ժամանակագրութիւն, Ե., 1942, էջ 18:

[148] Մեծին Վարդանայ Բարձրբերդեցւոյ Պատմութիւն Տիեզերական, էջ 136: Վարդան պատմիչի այդ վկայությունից հետևում է, որ հայերը քաղաքը կոչել են ոչ թե վրացական ձևով Ախալքալաք, այլ Նոր քաղաք: փաստորեն նույն միտքը կա նաև Ուռհայեցու մոտ, որը գործածում է միայն Ախալ՝ նոր տեղանունը: Չպետք է մոռանալ, որ Ախալ և քաղաք բառակապակցության մեջ վերջին բառը միայն վրացերեն չէ. քալաքը նաև հայկական քաղաք բառն է:

նակագիրներից մեկը ևս գործածում է քաղաք բառը. «դարձեալ եկն ճՌ (100000) –աւ առ զԱխլքաղաք և զ(Ս)ամչոյոլէ (Սամչվիլդե – Ա. Մ.) և զԱնի»:[149] *Հետևելով միջնադարյան պատմիչներին, հետագայի հայտնի պատմաբան Միքայել Չամչյանցը ևս Ախալքալաքի մասին գրում և իբրև* Ախալ բաղաք*:*[150]

Այսպիսով վկայակոչված բոլոր հիշատակումներում, բացի Ուռհայեցուց և Իբն ալ–Ասիրից, Ջավախքի կենտրոնն անվանվում է Ախալ բաղաք*, հանգամանք, որը հուշում է բնակավայրի նախնական տարբերակի* Նոր բաղաք *կամ* Ախալբաղաք *լինելու մասին: Մինչդեռ, վրաց հեղինակներից Դևի Բերժենիշվիլին պնդում է, թե քաղաք ձևի գործածությունը հայկական աղբյուրներում թարգմանություն է վրացերենից: Ինչ վերաբերվում է Մատթեոս Ուռհայեցու կողմից* Ախալի *փոխարեն* Ալախ*, իսկ Ջավախեթի (իմա՝ Ջավախքի –Ա.Մ.) փոխարեն՝ Ջաւալիս սխալ տարբերակներ գործածելուն, ըստ Դ. Բերժենիշվիլու, անհերքելի փաստ է այն մասին, որ այդ երկրամասը անծանոթ ու խորթ է եղել հայերին, այդ թվում՝ հայ պատմիչին:*[151] *Այստեղից էլ հետևություն է արվել, որ իբրև թե՝ ըստ հայ ժամանակագրի, Ջավախքը վրացական տարածք էր և հայաբնակ չէր: Բայց տարօրինակ է, որ հարդարժան պատմաբանը չի փորձում տալ այն հարցի պատասխանը, թե ինչու՞ Ալփ-Արսլանի կողմից Ախալքալաքի գրավման մասին «երկրամասին անծանոթ» հայ պատմիչի վերոհիշյալ հաղորդումը, ինչպես ժամանակի, այնպես էլ հետագայի հայ, վրացի հեղինակների հաղորդած տեղեկությունների մեջ, թերևս, ամենաընդարձակն ու արժանահավատն է: Ավելին՝ վերոհիշյալ հաղորդումների հեղինակների մի մասն էլ օգտվել է Ուռհայեցուց և առանձին դեպքերում էլ ուղղակիորեն կրկնել նրան: Կասկած չկա, որ Ուռ-*

---

[149] Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 133: Ախալքալաք հայկական ձևով այն հիշատակվում է նաև մատենադարանի թիվ 1737 ձեռագրում: Հմմտ.՝ Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 500:

[150] Չամչեանց Մ., Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տեառն 1784, հ. Բ, Ե., 1984, էջ 997: Մարկվարտը և Սեն–Մարտենը Ալփ-Արսլանի այս արշավանքի ժամանակ գրավված Սիպետշահր (Սպիտակ քաղաք) բնակավայրը, որը հիշատակում է արաբ պատմիչ Իբն ալ–Ասիրը, նույնացնում են Ախալքալաքի հետ (տես Markwart J., Skizzen zur historischen Topographie und Geschichte von Kaukasien, Wien, 1928, S. 39–40 և Մանանդյան Հ., Երկեր, հ. 9, էջ 60): Մանանդյանն ավելի տրամաբանական է համարում Ախալքալաքի նույնացումը վերոհիշյալ հեղինակի վկայակոչած մեկ այլ բնակավայրի՝ Ալլալի հետ:

[151] ბერძენიშვილი დ., ახალქალაქი ჯავახეთისა, არტანუჯი, 1998, N 7, გვ. 17, 57.

հայեցին պետք է ճշգրիտ լսմանար ոչ միայն այդ իրադարձության մանրամասները, այլև Ջավախքի տեղանունները:

Ամեն դեպքում, Մատթեոս Ուռհայեցին իրազեկ կլիներ երկրամասի տեղանքին, քանի որ այդ ժամանակի վրաց իրականությանն ու հայ–վրացական առնչություններին ամենատեղյակ հեղինակներից էր: Տեղանունների աղավաղումը պետք է համարել կամ ձեռագրի հետագա արտագրողների թույլ տված սխալի կամ հրատարակիչների կողմից ոչ ճիշտ ընթերցանության հետևանք: Առաջին Ալախ *ձևում սխալ արտագրության հետևանքով կամ լ և խ հնչյունների տեղերն են փոխվել կամ, որ ավելի հավանական է, լ–ն, ինչպես հաճախ, տառադարձվել է խ –ի և ղ–ի: Երկրորդ դեպքում Ջաւալիս, որ պետք է կարդացվեր* Ջավախս, լ *–ն, որ չի եղել, հավանաբար ավելացվել է, կամ էլ ղ–ի իմաստ է ունեցել (այսինքն՝ բառը կարող էր լինել նաև* Ջավաղխս *), իսկ խ –ն սխալմամբ կարդացվել է որպես ի՝ առանց վերջնամասնիկի: Այս թյուրիմացությունը նկատել են Ուռհայեցու աշխատության հրատարակիչները և որոշ հրատարակություններում գործածել են տեղանունների ճիշտ տարբերակները: Օրինակ՝ Ուռհայեցու ժամանակագրության 1898 և 1973 թվականների հրատարակությունում գրված է ոչ թե* Ալախ, *այլ՝* Ախալ:[152] *Այն, որ մեր պնդումները միանգամայն ճիշտ են, վերջնականապես հաստատվում են, երբ ուսումնասիրում ենք Ուռհայեցու աշխատության ձեռագրերը, որոնցից մի մասում հանդիպում ենք* Ախալ *ձևին:*[153]

12–րդ դարի սկզբին վրաց Դավիթ Շինարարը (1089–1125) և հայ զինական ուժերը կարողանում են սելջուկ–թուրքերից ազատագրել Հյուսիսային Հայաստանի մեծ մասը, այդ թվում՝ նաև Ջավախքը: Այստեղ՝ Բոժանո (Բեժանո) գյուղում 1123 թ. վրաց թագա-

---

[152] Տես Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 146 և Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, Ե., 1973, էջ 96:

[153] Հօգուտ այն տեսակետի, որ հայ իրականությունը քաջածանոթ էր Ջավախքին, խոսում են նաև Իբն ալ–Ասիրի հիշատակած «Սիպետշահրը»՝ Մարկվարտի և Սեն–Մարտենի կողմից Ախալքալաքի հետ նույնացնելու վերաբերյալ (Markwart J., նշվ. աշխ., էջ 39–40 և Սանանդյան Հ., Երկեր, հ. Գ, էջ 60): Պատահական չէ, որ հետագայի աղբյուրներում Ախալքալաքն ու նրա շրջակայքը հիշատակվում են Ակշեհիր՝ Սպիտակ քաղաք ձևով: Այդ տեսակետից ուշագրավ է, որ բնակավայրի անվան «Սիպետշահր» ձևում, բառի արմատներից մեկը՝ սպիտակը, պահպանվել է հայկական տարբերակով:

վորին են ներկայանում Անիի բնակիչները և խնդրում իրենց քաղաքը ևս միացնել քրիստոնյա Վրաց պետությանը:[154]

Սակայն ամբողջ 12–րդ դարի ընթացքում Ջավախքը, ի թիվս այլ գավառների, ձեռքից ձեռք է անցնում: 1175 թ. օգոստոսին Գանձակի սուլթան–աթաբեկ Ելդկուզի զորքերը ասպատակում են Ջավախքն ու Թռեղքը: Վրաց Գեորգի Գ–ն (1156–1184) խուսափում է ճակատամարտից և չի կանխում սելջուկների գործողությունները:[155] *Անին ու Շիրակը ավերելուց հետո Ելդկուզը «...ընդ նմին աւերէ զԱխալքաղաք և զՋաւախեթ և առժամայն դառնալով ի Դուին սատակի ինքն և սուլտանն և այլ բազում ի մեծամեծաց»:*[156] *Միայն 12–րդ դարի վերջին, Թամար Թագուհու (1184–1213) պատմիչի վկայությամբ, սելջուկների նկատմամբ Զաքարե և Իվանե Զաքարյաններ տարած հաղթանակներից հետո Վրաստանին է ենթարկվում Ջավախքից մինչև Սպեր ընկած տարածքը:*[157]

Այս շրջանում շարունակվեցին քարթվելական (վրացական) էթնիկական նոր խմբերի ներթափանցումները Ջավախք, այնտեղ ուղղափառության՝ վրացադավանության տարածման, վրացական եկեղեցիների կառուցման[158] *դեպքերը, երևույթներ, որոնք վրաց Բագրատունիների ուժեղացման ժամանակաշրջանում (12–րդ դ. – 13–րդ դ. սկիզբ) բնորոշ էին ոչ միայն Ախալքալաքի, այլև հայ–վրացական զինակցության չնորհիվ Վրաստանին անցած Հյուսիսային Հայաստանի մյուս գավառներին: Այսուհանդերձ, այդ գավառներից Լոռին, Սամցխե–Ախալցխան, Տաուշը, Սևանի շրջակա գավառները, ինչպես և Ջավախքը շարունակում էին գերազանցապես մնալ Հայաբնակ: Պատահական չէ, որ այդ տարածքները վրաց արքունիքը հանձնեց հայ Զաքարյաններին, որոնք Վրաստանի հովանավորության ներքո ստեղծեցին իրենց իշխանապետությունը:*

---

[154] Վրաց աղբյուրները, հ. Գ, էջ 42:

[155] Մարգարյան Յ. Գ., Հյուսիսային Հայաստանի և Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր, Ե.,1980, էջ 122:

[156] Մանր ժամանակագրություններ, հ. 2, Ե. 1956, էջ 500 և 502, հմմտ.՝ Ստեփաննոս Օրբելեանի ժամանակագրութիւն, էջ 18–19:

[157] Жизнь царицы Тамары, Памятники грузинской исторической литературы, т. V, Тб., 1985, с. 37,46.

[158] Ջավախքում կառուցված եկեղեցիների և նրանց պատերի վրա ու շրջակայքում հայտնաբերված արձանագրությունների մասին տե՛ս Ростомов И. П., Ахалкалакский уезд в археологическом отношении.

Թամար թագուհու պատմիչը գրում է, որ Ջավախքում կուսակալներ էին Սարգիս Երկայնաբազուկ Թմոգվելին (Թմոգվեցին) և Շալվա Թորելին (Թորեցի): Առաջինը նստում էր Թմոգվի, հայկական Թմուկ կամ Թմկա բերդում, որը գտնվում էր Կուրի ձորում, Ծունդա ավանից ոչ հեռու, իսկ երկրորդը Ջավախքի հյուսիսում Թոր գյուղում: Այն, որ Ջավախքում եղել են երկու կուսակալներ գավառապետեր, պատահական չէ: Այդ նշանակում է, որ չարունակում էր պահպանվել գավառի նախկին վարչական բաժանումը: Թորեցիները նույնպես ենթարկվում էին Թմկաբերդի Զաքարյաններին: Ըստ Ստեփանոս Օրբելյանի Ջավախքում նստող իշխաններին երկրի անունով անվանում էին Ջավախուլներ:[159] Ախալքալաքը, որն օգտվում էր քաղաքային ինքնավարությունից, ամբողջ գավառի վարչական ու տնտեսական կարևորագույն կենտրոնն էր:

13–րդ դ. 20–ական թվականների կեսերին Ջավախքը ենթարկվեց միջինասիական տիրակալ Ջալալեդդինի, իսկ 30–ականներին մոնղոլների ասպատակություններին:[160] Սակայն մի քանի գավառներում, այդ թվում Ջավախքում, Զաքարյանների ինքնավար վիճակը պահպանվեց: Ըստ 1245 թ. նոր վարչական բաժանման Ջավախքը թողնվեց Թորեցիներին մոնղոլների հսկողությամբ: 1266 թ. Թմկաբերդի տեր Սարգիս Ջաղեցին, օգտվելով վրաց թագավորների և մոնղոլների հակամարտությունից, կարողացավ հիմնադրել Սամցխեի ընդարձակ իշխանությունը, որն իր մեջ ընդգրկեց Տաշիրից մինչև Էրզրում ընկած տարածքը: Նրա մեջ մտավ նաև Ջավախքը: Այստեղի իշխանը կրում էր աթաբեկի տիտղոս, որի համար իշխանությունը հայտնի էր նաև Սաաթաբագո (այսինքն աթաբեկին ենթակա) անունով: Հայկական աղբյուրներում այն հիշատակվում է «Իշխանաց երկիր» ձևով:[161] Այդ իշխանապետության կազմում Ջավախքը ևս ունեցավ սոցիալ–տնտեսական, քաղաքական ու մշակութային զարգացում: Հատկապես վերելք ապրեցին Թմոգվի և Ախալքալաք քաղաքները: Այդ մասին են վկայում նաև վերջինիս քաղաքատեղիից հայտնաբերված խաչքարերը, որոնցից մեկի վրա պահպանվել է բե-

---

[159] Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, էջ 303:

[160] Վրաց ժամանակագրություն (1207–1318), թարգմանությունը հին վրացերենից Պ. Մուրադյանի, Ե. 1971, էջ 66, 73:

[161] Բազմավեպ, Վենետիկ, 1887, էջ 138 և Լէօ, Սահմանավեճեր, էջ 105: Հակոբոս Տաշյանի համոզմամբ այս իշխանության մեջ ընդգրկվել են նաև Կիսկիմն ու Թորթումը (Տաշեան Հ. Յ., Տայք, դրացիք եւ Խոտորջուր, Վիեննա, 1973, էջ 61:

կորված արձանագրություն՝ թվագրված 1289 թվականով:[162] *Ախալքալաքում ամիրսպասալար Շահնշահի օրոք՝ 1291 թ. Քորգի (Գորգի, Գևորգ) անունով մեկի միջոցներով կառուցվեց հայկական եկեղեցի: Այդ մասին վկայում է Հովսեփ Օրբելու կողմից հայտնաբերված Անիի Վիմաձոր եկեղեցու արևմտյան պատին ագուցված արձանագրությունը. «Կամա (ւն) ...Ա3. (աստուծոյ Ա.Մ.) Պարոնութեան աթաբակ ամիրսպասալար Շահնշահի ես Քորգի կենայկից իմ սթէէս կատա(րե)ցաք մեր հալալ արդ(եան(ց) ղէկէղեց(իս).....Ախէլքաղաքի(իս) .... . (Թուին) Զխ: Սարգիս»:*[163] *Ուշագրավ է, որ 13–րդ դարի վերջին ևս վիմագիր արձանագրության մեջ գործածվում է քնակավայրի անվան հայկական տարբերակը՝ «քաղաք» ձևով:*

Շատ ուսումնասիրողներ, որոնք Սամցխեի տարածքում ապրած «մեսխ» ցեղախմբին համարում են հայ–քարթվելական կամ զուտ հայկական էթնոս, այս իշխանության ստեղծումը գնահատում են իբրև «Մեսխերի ինքնագլխության արտահայտություն»,[164] *այսինքն՝ ազգային, էթնիկ հողի վրա պետական կազմավորման երևույթ: Մինչև 14–րդ դ. սկիզբը, մոնղոլներին որոշ քանակությամբ հարկեր վճարելով, Հայաստանի Հյուսիսում և Հյուսիս–արևմուտքում կազմավորված, հիմնականում հայաբնակ այս իշխանությունն իր ինքնուրույնությունը պահպանեց մինչև 1535 թ.՝ պայքար մղելով Քարթլիի, Լենկ–Թեմուրի, նրա հաջորդների՝ Թեմուրյանների, 15–րդ դարից՝ թուրքմենական կոյունլու ցեղերի դեմ: Արդեն 13–րդ դ. վերջին Բեքա Ա–ն և 14–րդ դ. սկզբին՝ նրա որդի Սարգիս Բ–ն հարկադրեցին վրաց թագավորներին իրենց չնորհելու աթաբեկի տիտղոսներ և ճանաչելու այդ իշխանության լիակատար անկախությունը: Միայն ժամանակ առ ժամանակ Քարթլիի թագավորներին հաջողվել է իրենց ազդեցությունը տարածել Սամցխե–Սաաթաբագոյի վրա, նույնիսկ նրան ենթակա հողերից նվիրատվություններ կատարել եկեղեցուն: Այսպես. պահպանվել է մի փաստաթուղթ, որը ուսերեն թարգմանաբար զետեղվել է հայտնի Հնագրական հանձնաժողովի հրատարակած «Ակտերի» առաջին հատորում: Ըստ փաստաթղթի հրատարակիչների՝ այն պետք է վերաբերի 1398–1498 թվականնե-*

[162] Կարապետյան Ս., Զավախքի խաչքարերը, էջ 7:
[163] Դիվան հայ վիմագրության, պր. 1, Անի քաղաք, կազմեց Հ. Օրբելի, Ե.,1966, էջ 68, լուսանկ. տախտ. 25:
[164] Լեո, Սահմանավեճեր, էջ 106:

րին, այսինքն, բոլոր դեպքերում 14–15–րդ դարերին: Փաստաթուղթը Քարթլիի Թագավորների չնորհագիրն է՝ գրամոտան եկեղեցուն չնորհված հողերի, այդ թվում Ջավախքի, Թռեղքի ու Սամցխեի բնակավայրերի թվարկումով: Շնորհիվ այս վավերագրի պարզվում են տվյալ ժամանակաշրջանում մի շարք բնակավայրերի անուններ, որոնց մի մասը հիշատակվում է թերևս առաջին անգամ. Թրիալեթում՝ կարմիր եկեղեցի (Կղզքիլիսա–Ա.Մ.), Բեչկենաշեն (հավանաբար՝ Բաշ Դաշ), Փարվանայի մոտ՝ Փոկա, Ախալքալաքի դավառում՝ Գոկիա (Կոկիա), Ալաստան, Ջեմո Գոմի (հավանաբար՝ Վերին Գոմ կամ Գոման), Հոկամ, Կուրի ափին՝ Տոլոշ, Ախալցխայում՝ Մինուբան գյուղնր և այլն:[165]

Ինչպես երևում է վերոհիշյալից, հիշատակվում են բազմաթիվ բնակավայրեր, իրողություն, որը հաստատվում է նաև այլ աղբյուրներով և վկայում տարածաշրջանում սոցիալ–տնտեսական կյանքի բարգավաճ վիճակը: Այսպես՝ նույն ժամանակի՝ 14–րդ դարի վրաց անանուն տարեգրի վկայությամբ Սարգիս Բ–ի հաջորդ Բեքա Բ–ն, ի թիվս շատ գավառների, գրավել է Ջավախքում եղած բազմաթիվ գյուղեր:[166]

Ինչպես Բագրատունիների, Զաքարյանների, այնպես էլ վերջիններիս հաջորդներ Ջալեցիների օրոք հայ մշակութային կյանքը Ջավախքում և ամբաբեկութեյան այլ շրջաններում զգալի վերելք ապրեց, որի պերճախոս վկայություններն են Ախալքալաք քաղաքում, Թմուկ բերդում, Օրջա, Ջամդուրա, Մուրջախեթի, Կոկիա, Կուլիկամ, Դիլիսկա, Կարծախ և այլ գյուղերում պահպանված բազմաթիվ հայկական ճարտարապետական կոթողները, հատկապես խաչքարերը, որոնց մի մասը թվակիր է և վերաբերում է 1289–ից 1516 թ. ընկած ժամանակաշրջանին:[167] *1895 թ. Թմկաբերդ այցելած ազգագրագետ Սեյլանը վկայում է 24 եկեղեցիների ավերակների և բազմաթիվ խաչքարերի մասին: Վերջիններիս մի մասի արձանագրությունները*

---

[165] АКАК, т. 1, Тифлис, 1866, с. 1–2.

[166] Մելիքսեթ Բեկ Լ.,Վրացական աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Բ, Ե., 1936, էջ 61:

[167] Տես Կարապետյան Ս., Ջավախքի խաչքարերը, էջ 7–11: Ծունդայում, Թմբկաբերդում և այլուր հայտնաբերված XIV–XV դարերի հայերեն արձանագրություններ ունեցող խաչքարերի մասին աշխատություններ ունի նաև վրաց պատմաբան Լ. Դավլիանիձեն (տես არტანუჯი, ახალგაზრდა ისტორიკოსთა საშეცნიერო პოპულარული ჟურნალი, თბ., 1998, N 7, გვ. 19, 58).

բարբարոսաբար քերված են եղել: Այնուամենայնիվ, դրանց մի մասի վրա նա հայտնաբերել է վիմավիր արձանագրություններ, այդ թվում՝ թվակիր: Դրանցից մեկի վրա գրված է. «Թվին Հայոց ՊԼ (830+551=1381) Սուրբ խաչս կանգնեցաւ»: Ապա կարդում ենք Սուրբ Նիկողայոս, Սբ. Աբգար և Գրիգոր, Սբ. Սարգիս և Աստվածածին, ինչպես նաև Սարգիս երեց, Ականկեանց իշխան, պարոն Մխիթար և այլ անունները: Սեյլանին հանդիպած հուշարձանների վրա կան նաև հայոց 868 (1419), 874 (1425) թվականների հայերեն արձանագրություններ:[168]

Ախալքալաք բերդատեղիից հայտնաբերված դերեզմանաքարերի վրա եղել են 1294, 1362, 1451 և այլ տարեթվեր:[169] *Ջավախքում հայտնաբերված խաչքարերից հնագույնը, ինչպես արդեն նշվել էր, վերաբերում էր 1072 թ.: Կան 13–15–րդ դարերի այլ հուշարձաններ:*

Աթաբեկության նստավայր Ախալցխան դարձավ տեղի հայ բնակչության հոգևոր–մշակութային խոշոր կենտրոնը: Այնտեղ գործում էին բազմաթիվ հայկական եկեղեցիներ: Նրանցից հնագույնի՝ Ս. Հովհաննես Մկրտչի եկեղեցու բարավորի վրա պահպանվել է 1298 թ. հայերեն արձանագրություն: Երկրորդ եկեղեցին՝ Ս. Աստվածածինը, որ կառուցվել է 1356 թ., նորոգվել է 1442–ին, վաչե անունով մի հայի կողմից: Ս. Նշան կամ Երևման Ս. Խաչ եկեղեցու պատերի մեջ ագուցված խաչքարերի վրա վրացագետ Բրոսսեն կարդացել ու ընդօրինակել է հայերեն արձանագրություններ՝ թվագրված 1451, 1454, 1475 և 1491 թվականներով, հայտնաբերել 1478 թ. տապանաքար՝ նույն եկեղեցու բակում, հետազոտել քաղաքի արվարձան Իվլիտայում հայ մեծահարուստ Մելիքյանների կառուցած Ս. Խաչ եկեղեցու 1641, 1691 թթ. և ավելի ուշ շրջանի արձանագրություննե-

---

[168] Սեյլան, Նշմարներ, էջ 17–20:

[169] Լալայան Ե., Երկեր, հ. 1, էջ 55: Երբեմն, չկարողանալով շրջանցել հնագույն ժամանակներից Ջավախքում հայերի բնակության փաստը հաստատող բազմաթիվ իրեղեն ապացույցները, վրաց հեղինակներն առանձին դեպքերում անուղղակիորեն խոստովանել են իրականությունը: Օրինակ, Շ. Լոմսաձեն, թվարկելով մինչև Ռուսաստանին միացումը Ախալքալաքում ապրած մահմեդական, կաթոլիկ և ուղղափառ «վրացիներին», հիշատակել է նաև «սակավաթիվ» հայ առևտրականներին: «Այնպես, որ քաղաքում,– գրում է նա,– ըստ հավատի 5 գերեզմանոց կար և զարմանալի չի լինի, եթե Ախալքալաքի տարածքում հայտնվեն այլ և այլ լեզվի, հավատի ու բովանդակության գերեզմանաքարեր» (ლომსაძე შ., სამცხე ჯავახეთი, էջ 475): Նման խոստովանություն անում է նաև Դ. Բերձենիշվիլին՝ հիշեցնելով, որ իբրև թե հայտնաբերված հայկական խաչքարերը միայն եկվոր հայերի կողմից թողնված և մի կարճ ժամանակահատվածի (1365–1425 թթ.) վերաբերող հուշարձաններ են (არქანელი, 1998, N 7, էջ 18–19, 58):

րը:[170] *Ախալցխայի հայկական եկեղեցիների պատերին պահպանված հայերեն արձանագրություններին, որոնք վերաբերում են 1351, 1356, 1442, 1451, 1511 թվականներին, անդրադարձել են նաև նշանավոր կովկասագետներ Մ. Բրոսսեն և Լ. Մելիքսեթ–Բեկը:*[171] *Ըստ մի ձեռագրի՝ Ախալցխայում 1473 թ. նստում էր հայ Գրիգոր եպիսկոպոսը՝ իբրև «առաջնորդ Սամցխեու երկրիս»:*[172] *Նշանակում է, որ այդ ժամանակ Սամցխեն առանձին թեմ էր, որն հավանաբար Մունդայի դերի նվազումից հետո, իր մեջ միավորում էր նաև Ջավախքը: «Ախալցխան,– գրում է հայագետ Պ. Հակոբյանը,– ...ըստ աւանդական կարգի, էջմիածնական թեմ էր: Նրա առաջնորդը Ամենայն Հայոց Կաթողիկոսն էր, որն իր փոխարէն կարող էր երեք կամ հինգ տարի ժամանակով ուղարկել նուիրակներ՝ թեմի գործերին ընթացք տալու համար»:*[173]

Ախալցխան նաև հայ գրչության օջախներից էր. այստեղ գրվել են հայերեն բազմաթիվ ձեռագիր աւետարաններ ու հիշատակարաններ: Դրանցից մեկը, որ հասել է մեզ, վերաբերում է 1396 թ.: Նրանում հիշատակվում են ավետարանի նվիրատուն՝ Ամիր–Սարգիսը, վերջինիս ընտանիքի անդամների, տեղի աթաբեկի, հոգևոր առաջնորդների (Հակոբոս, տեր Ներսես) անունները:[174] *«Արդ գրեցաւ սուրբ աւետարանս,– կարդում ենք այստեղ գրված մեկ այլ հիշատակարանում,– ...յերկիրս Ախալցխոյ ի վանքս պարոն Յակոբայ, ի մեծ թուիս հայոց ՊԾԷ (1438)»:*[175] *17-րդ դարի առաջին քսանամյակին ախալցխյան հիշատակարաններում հանդիպում ենք Մաքանդար ու Սիմոն քահանա գրիչներին «ի Ախլցխոյ մայրաքաղաքէն»: Վերջինս վկայում է նաև տեղի Սուրբ Նշան եկեղեցու և ժամատան մասին:*[176] *Ախալցխացիները, որպես հիշատակարանների գրիչներ,*

---

[170] Brosset M., Voyage archeologique en Transcaucasie, SPb., 1850, էջ 140–161, հմմտ.՝ Յակոբեան Պ., Հայ կաթոլիկութիւնը պատմա–քննական լոյսի տակ, էջ 50:

[171] Վրաց աղբյուրները, հ. Գ, էջ 91 և Поездка в Ахалцихский уезд в 1872 г./Записки КОИРГО, Т., 1873, кн. 8, с. 18–19.

[172] Վրաց աղբյուրները, հ. Գ, էջ 91:

[173] Յակոբեան Պ., նշվ. աշխ., էջ 53:

[174] ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, գիրք երկրորդ, Ե., 1950, էջ 614:

[175] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, գիրք առաջին (1401–1450), Ե., 1955, էջ 486:

[176] Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1601–1620), հ. Ա, կազմեցին Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Ե., 1974, էջ 262, 687:

գործել են նաև իրենց ծննդավայրից շատ հեռու, Հայաստանի զանազան գավառներում: 1419 թ. Հերմոնի վանքում Գրիգոր Ախալցխացին գրել է հիշատակարան:[177]

15–րդ դարից Ջավախքը հայտնվեց զանազան նվաճողների տեսադաշտում: Թեմուրյանների և թուրքմենական ցեղերի բախումներն ընդգրկեցին նաև Հայաստանի հյուսիսարևմտյան շրջանները: Դարասկզբին ավերվեց ու թալանվեց Ախալցխան. «Եւ գնացեալ ի քաղաքն Ախըլցխէ, – գրում է ժամանակի պատմիչ Թովմա Մեծոփեցին,– եւ ժողովեալ զմանկունս քրիստոնէից՝ վրաց եւ հայոց, ...եւ զոսկերսն տարեալ ի մզկիթ նոցա լցին»:[178] *Քաղաքը նոր արհավիրքի ենթարկվեց մի քանի տարի անց՝ 1416 թ. կարա–կոյունլուների առաջնորդ կարա Յուսուֆի կողմից: Նա սրի քաշեց բազմաթիվ տղամարդկանց, իսկ «...զկին եւ զորդիսն գերեաց՝ աւելի քան զՋՌ (6000) ոգիս: Եւ լցաւ երկիր լալով եւ կոծով, եւ աղգս ամենայն յուսահատ եղեն, թէ վասն է՞ր մատնէ Աստուած զհաւատացեալս իւր ի ձեռն անհաւատից»:*[179] *Պահանջվեցին տարիներ երկրամասը կրկին վերականգնելու համար:*[180]

1440–ական թվականներին Ախալցխայից քանիցս գերեվարություն կազմակերպեց կարա–կոյունլուների առաջնորդ Ջահանշահը:[181] *1445 թ. նրա հերթական արշավանքի ժամանակ Ախալցխայից կազմակերպված գերեվարության մասին կարապետ գրիչը պատմում է. «ի յայսմ ամի գնաց բազում զօրօք յԱխալցխայ և բազում քրիստոնեայս գերի արար, զոր տեսաք աչօք մերովք զխիղճ և զկսկիծ սոցա»:*[182] *1484 թ. երկիրն ավերեցին, կրակի մատնեցին, բնակչությանը կոտորեցին ու գերեվարեցին պարսից Յաղուբ խանի զորքերը:*[183] *Այսպիսով՝ Սամցխե–Ջավախքի իշխանապետության տարիներին երկրամասում չհաստատվեց կայուն իրավիճակ: Տարբեր նվաճողների արշավանքների հետևանքով բնակչության մի մասը կոտորվեց, չա-*

---

[177] Կիրակոսյան Գ. Ե., Հայաստանը Լանկ–Թամուրի և թուրքմեն ցեղերի արշավանքների շրջանում, Ե., 1997, էջ 278:

[178] Թովմա Մեծոփեցի, Պատմագրություն, աշխատասիրությամբ Լ. Խաչիկյանի, Ե., 1999, էջ 127:

[179] Նույն տեղում, նշվ. աշխ., էջ 236–237: Հմմտ. ՝ Կիրակոսյան Գ. Ե., էջ 82:

[180] ქართული საბჭოთა ენციკლოპედია, საქართველოს სსრ, თბ., 1981, გვ. 70.

[181] Ջաքարեայ սարկաւագի Պատմութիւն, հ. Ա, Վաղարշապատ, 1870, էջ 4, Սամր ժամանակագրություններ, հ. 2, էջ 515 և Ալիշան, Այրարատ, էջ 2:

[182] Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, գիրք առաջին, էջ 584 և Կիրակոսյան Գ. Ե., նշվ. աշխ., էջ 103:

[183] Էփրիկեան Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Ա, էջ 62:

տերն արտագաղթեցին: Այդուհանդերձ, տարածաշրջանը չարունակեց պահպանել իր էթնոկրոնական դիմագիծը: Մահմեդական բնակչությունը նախկինի նման մնաց չնչին փոքրամասնություն: Շուտով սկսվեցին օսմանյան թուրքերի և Սեֆյան պարսիկների ասպատակությունները, որոնց արդյունքում նկատվեցին ժողովրդագրական նոր տեղաշարժեր:

Այսպիսով՝ միջնադարյան աղբյուրների տեղեկությունների համադրությամբ պարզորոշ երևում է, որ հնագույն ժամանակներից Հյուսիսային Հայաստանի մեծ մասը կազմող Գուգարք աշխարհի Ջավախք գավառը, որն ի թիվս հայկական այլ երկրամասերի՝ օտար տիրապետությունների պայմաններում չարունակել է ապրել բավական բուռն ու բովանդակալից հայեցի կյանքով, պահպանել է իր հայահոծ էթնիկ նկարագիրը:

Գ) Ջավախքն ու շրջակա գավառները թուրքական տիրապետության շրջանում (16-18-րդ դդ.)

14–րդ դարի ընթացքում կատարելով մի շարք նվաճումներ Փոքր Ասիայի արևմտյան ծովափնյա շրջաններում և Բալկաններում՝ նորաստեղծ Օսմանյան պետությունն ակտիվացրեց իր զավթողական քաղաքականությունը նաև Արևելքում և 1473 թ. Դերջանի ճակատամարտում հաղթելով ակ-կոյունլու թուրքմենական ցեղերին՝ ներխուժեց Հայաստանի արևմտյան գավառներ: 16–րդ դարի սկզբից Հայաստանի ու Անդրկովկասի համար կատաղի մրցակցություն սկսվեց Օսմանյան կայսրության և Սեֆյան Պարսկաստանի միջև: Մասնատված Վրաստանի թագավորները, փոխանակ ընդհանուր ճակատ կազմելու պարսկաթուրքական վտանգի դեմ, պայքար ծավալեցին Սամցխեի իշխանապետության հյուսիսարևելյան գավառներին, այդ թվում՝ Ջավախքին տիրելու համար: Իմերեթիայի Բագրատ Գ և Քարթլիի Լուարսաբ Ա թագավորները 1535 թ. Գուրիայի տիրակալի օժանդակությամբ Ջավախքի Մուրջախեթ դյուղի մոտ պարտության մատնեցին Սամցխեի աթաբեկի զորքերին և տիրեցին Ախալքալաքին ու Ախալցխային: Այդպես այդ քաղաքներն իրենց շրջակայքով ժամանակավորապես անցան Իմերեթիայի հսկողության ներքո:

Սակայն շուտով, 1545 թ. հայտնվեցին օսմանյան թուրքերը: Հալածակեցված երկրամասի կառավարումը նրանք հանձնեցին Քայխոսրոյին, որը հավանաբար սերում էր տեղի իշխանական տներից:

Վերջինս 1547 թ. ապստամբեց թուրքերի դեմ և օսմանցիների թշնամի Սեֆյան Պարսկաստանի օգնությամբ ձեռք բերեց անկախություն: 1549 թ. թուրքական մեծաքանակ զորքերը մեկ ու կես ամիս տևած արյունալի կռիվների արդյունքում, ճնշեցին ապստամբությունը:[184] *1555 թ. Ամասիայում կնքված պարսկա–թուրքական հաշտությամբ Ջավախքն անցնավ Պարսկաստանին, իսկ Սամցխեն՝ Օսմանյան կայսրությանը:*

1578 թ. թուրք–պարսկական պատերազմը վերսկսվեց: Թուրքերը նորից ներխուժեցին Սամցխե ու Ջավախք: Ջղդրի մոտ տեղի ունեցած արյունալի ճակատամարտում նրանք պարտության մատնեցին պարսիկներին և տիրեցին Սամցխեի իշխանությանը: Ջղդրի, Ախալցխայի, Ախալքալաքի, Խերթվիսի և այլ բերդեր ընդունեցին օսմանցիների գերիշխանությունը:[185] *Աթաբեկի պաշտոնը կրկին թողնվեց տեղացիներին, որոնք ընդունեցին մահմեդականությունը: «Երևելիք ոմանք ի վրաց յայսոսիկ կողմանս տաճկացեալք,– գրում է Ղ. Ինճիճյանը,– այս գաւառ (Ախալցխան – Ա.Մ.) իբրև օջախլըխ՝ նոցա պարգևեցաւ ժառանգութեամբ ի տաճկէն»:*[186] *1582 թ. օգոստոսին թուրքական զորքերը Երզրումից նորից շարժվեցին դեպի Կարս և անցան Ջավախք: Ախալքալաքում նրանց միացան մահմեդականություն ընդունած Մանուչար իշխանի (Մուստաֆա փաշա) զորքերը և համատեղ ուժերով չարժվեցին Թիֆլիսի վրա:*[187]

1625 թ. տեղի աթաբեկ Մանուչար 2–րդի սպանությունից հետո, որն ամենայն հավանականությամբ հրահրվեց օսմանցիների կողմից, իշխանության համար ծայր առան արյունալի կռիվներ մահմեդականություն ընդունած տարբեր իշխանական տների միջև:[188] *Երկիրն ավերվեց, նկատվեց բնակչության արտագաղթ: Վիճակն ավելի ծանրացավ, երբ 1634–1636 թթ. Ախալցխա և Չրջակա դավառներ ներխուժեցին պարսիկները: Թուրքերը դիմեցին պատասխան*

---

[184] ქართული საბჭოთა ენციკლოპედია, საქართველოს სსრ, გვ. 71.

[185] Թուրքական աղբյուրները, հ. Ա, 35–37:

[186] Ինճիճեան Գ., նշվ. աշխ., էջ 124–125:

[187] Ջուլալյան Ս., Հայ ժողովրդի 13–18–րդ դարերի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, գիրք Ա, Ե., 1990, էջ 128:

[188] Վրացագետների մեծ մասի կարծիքով 1628 թվականից՝ Սաֆար (Սեֆեր) փաշայից մինչև Յուսուֆ փաշայի մահը՝ 1744 թ. Ախալցխայի էյալեթի կառավարումը գտնվել է մահմեդականացած, վրացական ծագում ունեցող Ջաղելի (Ջաղեցի) տոհմի ձեռքին, որից

քայլերի: Ախալցխայի համար ընթացած երկարատև ու կատաղի մարտերում զգալիորեն տուժեց տեղական բնակչությունը: Ախալցխան և նահանգի ևս մի քանի բերդեր, որպես սահմանային մասնավոր հողեր՝ օջաքլըքներ, այս անգամ հանձնվեցին Սեֆեր փաշային:[189] Պարսիկների հետ կնքած 1639 թ. Կասրե–Շիրինի հաշտությամբ թուրքերը վերջնականապես բռնազավթեցին ողջ Արևմտյան Հայաստանը, ինչպես և Ախալցխան ու Ախալքալաքը, որոնք մինչ այդ դեռ 17–րդ դարի վերջին տասնամյակներից, մտցվել էին նորաստեղծ Զլդրի, հետագայում՝ Ախալցխայի նահանգի (էյալեթ, վիլայեթ) մեջ: Պատմական Ջավախքի տարածքը տրոհվեց մի քանի ինքնուրույն գավառների՝ լիվա–սանջակների կարգավիճակով՝ Ախալքալաք, Խերթվիս և Քենարբել կենտրոններով: Սկսվեց թուրքական ծանր տիրապետության մի երկարատև ու մղձավանջային ժամանակաշրջան:

Խնդրո առարկա հիմնահարցի համակողմանի լուսաբանման նպատակով, այժմ փորձենք ներկայացնել նորաստեղծ Օսմանյան կայսրության ընդհանուր վիճակը և այդ հենքի վրա քննության առնել ինչպես Ջավախքի, այնպես էլ ամբողջ Զլդրի (Ախալցխայի) նահանգի վարչաժողովրդագրական պատկերը:

17–րդ դարի սկզբին Օսմանյան կայսրությունը հսկայածավալ տերություն էր: Նրա տարածքն ընդգրկում էր Հյուսիսային Աֆրիկան, Բալկանյան թերակղզին, Փոքր Ասիան, Սև ծովի առափնյա շրջանները, Արևմտյան Հայաստանը, Սիրիան, Պաղեստինը, Իրաքը և այլ երկրներ: Վերահսկելով Եվրոպայից Ասիա տանող ցամաքային առևտրական ճանապարհները՝ սուլթանական կառավարությունը մեծ շահույթներ էր ստանում: Սակայն Եվրոպայում չուկայական հարաբերությունների հետագա զարգացմանը զուգընթաց, Թուրքիայի հետամնաց ռազմաավատատիրական համակարգը, հետզհետե խոչընդոտ էր դառնում Արևելք–Արևմուտք տնտեսական հարաբերություններին: Եվրոպացի առևտրականները շրջանցում էին Օսմանյան կայսրության տարածքը և Արևելքի երկրների, հատկապես Հնդկաստանի, Չինաստանի հետ առևտուրն իրականացնում ավելի

հետո անցել է թուրքական զանազան տոհմերի ներկայացուցիչների (մանրամասն տես ლომსაძე შ., სამცხე ჯავახეთი, გვ. 211–254).

[189] Джихан-нюма и фезляке Кятиба Челеби как источник по истории Армении. Предисловие, перевод и комментарии А. А. Папазяна, Е., 1973, с. 78.

հեռավոր, բայց անհամեմատ ապահով ու շահավետ ծովային ճանապարհներով:

Շարունակվում էր Օսմանյան տերության հետագա թուլացումը: Կառավարման ոլորտում միապետական, բռնատիրական համակարգի, իսկ տնտեսության մեջ՝ ռազմաավատատիրական համակարգի առկայությունն արգելակում էին երկրի զարգացումը, օրեցօր խորացնում ընդհանուր ճգնաժամը: Ծովային ուղիների հանդես գալով՝ տնտեսական շահույթի նվազումը, մյուս կողմից՝ արդեն միայն պարտություններ բերող երկարատև պատերազմները, կայսրությանը կանգնեցրին տարածքային կորուստների իրողության առջև: Պատահական չէ, որ շուտով Թուրքիայից անջատվեցին մի շարք երկրներ:

Օսմանյան կայսրությանը ենթակա երկրներն ու ժողովուրդները գտնվում էին քաղաքական, սոցիալ–տնտեսական և մշակութային զարգացման տարբեր մակարդակների վրա: Տերության զանազան մասերը միմյանց հետ կապված չէին ամուր տնտեսական կապերով: Նվաճված ժողովուրդների վրա սուլթանական իշխանությունը պահպանվում էր բացառապես ռազմական ուժի շնորհիվ: Ինչպես լայնարձակ տերության ուռճացած վարչական համակարգը, այնպես էլ մեծաքանակ ենիչերիական զորքերը պահելու համար, օսմանյան սուլթանները մղում էին թալանչիական ու արյունալի պատերազմներ: Դրանք մեծ աղետներ էին բերում ինչպես հպատակ, այնպես էլ հարևան երկրների ժողովուրդներին:

Բռնազավթված հողերը հայտարարվում էին սուլթանի ու մահմեդական աշխարհիկ և հոգևոր դասի սեփականություն: Այդ հողամասերը տրվում էին օգտագործողներին պայմանական իրավունքով՝ հարկեր վճարելու և զինվորական ծառայության դիմաց: Բայց տևական պատերազմներից դժգոհ զինվորականությունը հետզհետե հեռանում էր զինվորական գործից, դառնում հողի սեփականատեր: Զուգահեռաբար շարունակվում էր գյուղացիության անանկացումը:

Ընդհանուր ճգնաժամն առավել ցայտունորեն արտահայտվում էր ազգային շրջաններում: Օգտվելով երկրում տիրող խառնակ իրավիճակից՝ ծայրամասային նահանգների կառավարիչները, քրդական ցեղերը՝ աշիրեթներն սկսեցին հրաժարվել օրեցօր թուլացող կենտրոնական իշխանության ենթակայությունից և ձեռք բերեցին կիսանկախություն: Նրանց հպատակեցնելու կառավարության ձեռնարկումներն ապարդյուն անցան: Տեղերում անիշխանության խորացումն ավելի վատթարացրեց թուրքահպատակ ժողովուրդների վիճա-

կը: Արևմտյան Հայաստանը դարձավ մի կողմից կառավարական զորքերի ու քրդերի, մյուս կողմից՝ միջցեղային բախումների թատերաբեմ:

Թուրքահպատակ քրիստոնյա ժողովուրդները՝ հայերը, հույները, ասորիները, բուլղարները, սերբերը, խորվաթները, գտնվում էին ազգային հալածանքների ու արժանապատվության ոտնահարման, մարդկային տարրական իրավունքների անտեսման պայմաններում: Նրանց մշտապես սպառնում էր ֆիզիկական բնաջնջման վտանգը: Քրիստոնյաների հասցեին գործածվում էին «գյավուր» (անհավատ), ռայա, զիմմի և այլ վիրավորական տերմիններ: Նրանք զրկված էին բանակում ծառայելու, դատարանում վկայություն տալու, զենք կրելու և այլ տարրական իրավունքներից: Տերության արևելյան նահանգներում՝ Արևմտյան Հայաստանում պահպանվում էր, այսպես կոչված, «ղչլաղության» համակարգը, ըստ որի՝ հայերը պարտավոր էին ճմռան ընթացքում պահել ինչպես քրդերին, այնպես էլ նրանց բազմաքանակ ոչխարներին:

Կայսրության ընդարձակ տարածքը բաժանվում էր վարչական մեծ ու փոքր միավորների: Դրանցից խոշորագույնները կոչվում էին էյալեթներ կամ վիլայեթներ (հայկական աղբյուրներում՝ նահանգ), որոնց գլուխ կանգնած էին սուլթանի կողմից նշանակված կառավարիչները՝ վալիները. նրանք տեղերում օժտված էին և՛ քաղաքացիական և՛ զինվորական իշխանությամբ:[190] Էյալեթները բաժանվում էին սանջակների կամ լիվաների (գավառ), սանջակները՝ կազաների (գավառակ), իսկ կազաները՝ նահիեների (գյուղախումբ):[191] Ընդ որում, հնարավոր էր, որ յուրաքանչյուր լիվա ունենար կամ կազաներ, կամ միայն նահիեներ, ինչպես և դրանցից թե՛ առաջինը, և թե՛ երկրորդը: Լիվաները կառավարվում էին միրլիվաների (կամ սանջակբեյ), կազաները՝ կազիների, նահիենները՝ մյուդիրների (գեղջավագ) կողմից: Սահմանամերձ մարզերի միրլիվաները ևս, որպես կանոն, նշանակվում էին սուլթանի կողմից, թեև այդ պաշտոնը կարող էին ստանալ համապատասխան վալիից:[192] Բոլոր նշանակումները կատարվում

[190] АВПРФ, ф. Главный архив , д. 13, ч. 17, л. 13.

[191] Վերոհիշյալ վարչամիավորների համար աշխատությունում հավասարապես գործածել ենք ինչպես պաշտոնական էյալեթ կամ վիլայեթ, սանջակ կամ լիվա, կազա, նահիե, այնպես էլ համապատասխանաբար՝ հայկական նահանգ, գավառ, գավառակ և գյուղախումբ տերմինները:

[192] РГВИА, ф. ВУА, д. 4643, л. 1–2.

էին կաշառքով: Պաշտոնավարում էր նա, ով «... առատաձեռն էր հանդիսանում»:[193] Թուրք պատմագիր Ջևդեթի վկայությամբ նոր կաշառատուների հայտնվելու հետևանքով «վալիները չուտ-չուտ հեռացվում էին, այնպես, որ մի էյալեթ մի տարվա ընթացքում երկու և երբեմն երեք անգամ մեկից մյուսին էր փոխանցվում»:[194]

Նվաճված երկրամասում թուրքական վարչաժողովրդագրական քաղաքականությունը, պայմանավորված մահմեդական վերնախավի ազգային-քաղաքական և տնտեսական շահերով, աչքի ընկավ անկայունությամբ և մշտատև փոփոխություններով: Տարբեր ժամանակներում նահանգների թիվը տատանվում էր մինչև 30-ի սահմաններում: Ըստ թուրք հեղինակ Ֆերիդուն բեյի՝ 16-րդ դարի 80-ական թվականներին Օսմանյան կայսրության տարածքն ընդգրկում էր ավելի քան 30 էյալեթ:[195] Էվլիյա Չելեբին 17-րդ դարի երկրորդ կեսին նշում է 20 էյալեթ (ընդամենը՝ 176 լիվա):[196] 18-րդ դարում հաշվվում էր 26 էյալեթ, որոնք միասին ունեին 163 սանջակ և 1800 կազա,[197] իսկ 1831 թ.՝ 29 նահանգ՝ 179 գավառով:[198]

Տարածքների նվաճմանը զուգընթաց, սուլթանական կառավարությունը՝ հպատակեցված երկրներում իր դիրքերն ամրապնդելու, բնակչությանը հարկման ենթարկելու նպատակով, հնարավորինս արագ տեմպերով ձգտում էր մտցնել նոր վարչակարգեր: Արևմտյան Հայաստանում նոր վարչակարգերի արմատավորման, նահանգների կազմավորման գործընթացն սկսվել էր դեռ 16-րդ դարից՝ պարսկա-թուրքական թեժ պատերազմների շրջանում: Այդ ժամանակ ստեղծվեցին Էրզրումի, Վանի, Կարսի, Ախալցխայի, Սեբաստիայի և Դիարբեքիրի էյալեթները:[199] Հայաշատ վարչամիավորներ էին Տրապիզոնի, Կեսարիայի, Մալաթիայի, Մարաշի, Ադանայի և այլ նահանգները:[200] Յուրաքանչյուր նահանգ ուներ տարբեր քանակությամբ գավառներ: Արևմտահայաստանի յուրաքանչյուր էյալեթի սանջակների

---

[193] Լեո, Հայոց պատմություն, հ. 3, Ե., 1946, էջ 55:
[194] Թուրքական աղբյուրները, հ. Ա, էջ 277:
[195] Նույն տեղում, հ. Բ, էջ 212–222:
[196] Նույն տեղում, հ. Գ, էջ 22,
[197] Ubicini M. A., Lettres sur la Turquie, Paris, 1853, p. 44.
[198] Belleten Türk Tarih Kurumu, c. 15, ekim Ankara, 1951, sayi 60, s. 617–628.
[199] Birken A., Die Prowinzen des osmenischen Reiches, Wiesbaden, 1976, S. 142–150, 154–160, 170–195.
[200] Ինճիճեան Պ., Աշխարհագրութիւն, էջ 58, 282, 309–384:

թիվը տատանվում էր 5–ից 17–ի սահմաններում:[201] Օսմանյան տերության արևելյան վարչամիավորների մեջ իր ընդարձակ տարածքով և ռազմաքաղաքական նշանակությամբ առանձնանում էր Էրզրումի նահանգը:[202] Նրա վալին, որ համատեղում էր կայսրության արևելյան մարզերի զորքերի հրամանատարի՝ սերասկյարի պաշտոնը, կրում էր Հայաստանի կառավարչի տիտղոսը և օգտվում էր բազմաթիվ արտոնություններից:[203] Շատ դեպքերում Էրզրումի վալի–սերասկյարին էր վերապահված արևելյան նահանգների կառավարիչների նշանակման իրավունքը:

Բացի պաշտոնական վարչամիավորներից, Օսմանյան Թուրքիայում գոյություն ունեին բազմաթիվ կիսանկախ քրդական իշխանապետություններ՝ դերեբեյություններ (Հովտապետություն), որոնց կառավարիչներին սիրաշահելու նպատակով, սուլթանական կառավարությունը նրանց չնորհում էր փաշայի տիտղոսներ: Այդօրինակ միավորները, որոնք իրենց տարածքով հաճախ ամփոփվում էին մեկ–երկու լիվայի շրջանակներում, շատ հաճախ սխալմամբ դիտվում էին իբրև էյալեթ–փաշայություններ: Այդպիսի միավորներից էր Բայազետի լիվա–փաշայությունը, որը միայն պաշտոնապես էր շարունակում մնալ Էրզրումի նահանգի կազմում:

Արևմտյան Հայաստանում վարչամիավորների կազմավորման առաջին փուլում 16–րդ դարում, ստեղծված նահանգների մեջ իր ուրույն տեղն ու դիրքն ուներ սահմանամերձ Զլդրի էյալեթը: 1625 թ. Զլդրի բերդաքաղաքի ավերումից հետո, նահանգի կենտրոնավայրը տեղափոխվեց Ախալցխա: Այդ պատճառով վարչամիավորը նախկին «Զլդրի էյալեթ» անվան կողքին, սկսեց կրել նաև «Ախալցխայի էյալեթ» անվանումը: Այս վարչամիավորի տարածքային բաժանման վերաբերյալ առաջին ամբողջական վկայությանը հանդիպում ենք թուրք պատմիչ Ֆերիդուն բեյի «Սուլթանների դրություններ» աշխատությունում: Նրա օգտագործած պաշտոնական նյութերի համաձայն՝ 16–րդ դարի 80–ական թթ. սկզբին Զլդրի նահանգն ընդգրկում էր 16 գավառ՝ Մեծ Արտահան, Էրլի (Օլթի), Բերմեքդեք (Բեր-

---

[201] РГВИА , ф. ВУА, д. 4643, л. 17, Belleten Türk Tarih Kurumu, c. 15, ekim Ankara, 1951, sayi 60, s. 622– 623, 626.

[202] Էրզրումի նահանգի 18–րդ դարի վերջի և 19–րդ դ. առաջին երեսնամյակի վարչաժողովրդագրական իրավիճակի մասին մանրամասն տես Սելքոնյան Ա., Էրզրում, Ե., 1994:

[203] РГВИА, ф. ВУА, д. 4643, л. 2.

դագրակ–Ա.Մ.), Էրլուհ, Շուչատ, Նըսֆի Լիվանե, Մամեհջել (Մահջել), Լիք, Վերին Աջարա, Ստորին Աջարա, Էմիրհոյ, Էսթիչե, Բոսջոք (Փոսխով), Խերթվիս, Ալթունկալա՝ Օսթհերտի հետ միասին, Մեհրենք:[204]

Այս նահանգի վարչատարածքային բաժանման, ժողովրդագրական իրավիճակի և տնտեսական կյանքի մասին, անտարակույս, առաջին լուրջ և համապարփակ զրավոր աղբյուրը «Գյուրջիստանի վիլայեթի մեծ դավթարն» է: Այդ եզակի փաստաթղթի քննությունը համոզում է, որ խնդրո առարկա վարչամիավորը հիմնականում ընդգրկել է նախկին Սամցխե–սաաթաբագոյի իշխանության տարածքը՝ ընդհուպ մինչև 19–րդ դարի առաջին երեսնամյակը, թեև այդ ժամանակահատվածում ենթարկվել է բազմաթիվ վարչական վերաձևումների: Ժամանակ առ ժամանակ Զլդր–Ախալցխայի էյալեթը, հիմքում պահպանելով պատմական բաժանումը, ավելի ընդարձակվել է և իր մեջ միավորել ոչ միայն ամբողջ պատմական Տայք աշխարհն ու Գուգարքի մեծ մասը, այլև՝ առանձին գավառներ Բարձր Հայքից, Այրարատից, Խաղտիք–Լազիստանից: Ինչևէ, բոլոր դեպքերում, զանազան օբյեկտիվ հանգամանքների ազդեցությամբ, վարչական համակարգում չարունակել են գերակշռել պատմաաշխարհագրական գործոնները:[205]

Զլդրի էյալեթը, քանի որ հյուսիսից սահմանակից է եղել վրացական թագավորությանը և իր մեջ ներառել է պատմական Վրաստանի որոշ գավառներ, թուրքերի կողմից նախապես անվանվել է Գյուրջիստանի (Վրաստան) էյալեթ կամ վիլայեթ:[206] Նման անվանակոչումը հուշում է, որ թուրք նվաճողները, ինչպես այս ժամանակաշրջանում, այնպես էլ հետագա դարերում, չեն բավարարվել ձեռք բերածով և նպատակ են ունեցել «Գյուրջիստան» անվանված միավորին միացնել նաև բուն Վրաստանը:

Ըստ «Մեծ դավթարի», որն արտացոլում է հիմնականում 1580–ական թվականների վերջից մինչև 1595 թ. ընկած ժամանակահատվածի վիճակը, Զլդրի նահանգն ունեցել է 9 լիվա–գավառ՝ Ախալցխայի, Խերթվիսի, Ախալքալաքի, Զլդրի, Փոսխովի, Պեարնի,

---

[204] Թուրքական աղբյուրները, հ. Բ, էջ 219–220:
[205] Մատենադարան, Պատկանյանների արխիվ, թղթ. 142, վ. 170, թ. 12ա:
[206] Հմմտ.՝ Ինճիճեան Պ., նշվ. աշխ., էջ 122 և Զուլալյան Ս. Կ., Արևմտյան Հայաստանը 16–18–րդ դդ., Ե., 1980, էջ 182:

Փանաքի (Փեննեք, Բանակ), Մեծ Արտահանի և Օլթիի, որոնցում հաշվվում էր 37 նահիե–գյուղախումբ:[207] *Սուլթանական կառավարության հրամանով, թուրք պաշտոնյաների կազմված այս ընդարձակ հարկացուցակի համաձայն, ամբողջ վիլայեթի տարածքում հարկման է ենթարկվել ավելի քան 1250 բնակավայր, ինչպես և եկամուտ ապահովող այլ վայրեր՝ լճերի ու գետերի ձկնային տնտեսություններ, ջրաղացներ, այգիներ և այլն: Ընդ որում (բացի Օլթիի լիվայից), հիշատակված են ոչ միայն բոլոր մարդաբնակ ու ամայի բնակավայրերի անվանումները, այլև դրանցում ապրող ծխերի առաջնորդների անունները, նրանցից գանձվող բնամթերային ու դրամական հարկի տեսակն ու չափը և այլ մանրամասներ:*

Քարտեզի վրա տեղագրելով հիշատակվող բնակավայրերը՝ փորձենք վեր հանել նահանգի վարչաէթնիկ պատկերն ըստ առանձին լիվաների.

<u>1. Ախալցխայի լիվա</u>*: Եղել է ամենաընդարձակ գավառը և ունեցել է 9 նահիե՝ Արևահար (Արևային) կամ Ախալցխայի*[208] *Ստվերահայաց կամ Ստվերոտ*[209] *Ուդեի, Քոբլիանի, Ածղուրի, Ալթունկալայի, Օցխեի, Ասպինձայի և Ճաճարակի: Բոլոր նահիեներում միասին հաշվվել է հարկման ենթակա 341 բնակավայր:*[210] *Նշանակում է ամբողջ նահանգի բնակատեղիների մեկ քառորդից ավելին բաժին է ընկել այս գավառին:*

ա) Ախալցխայի *կամ* Արևահայաց (Güney) նահիեի *30 բնակավայրերն ընկգրկում էին Ախալցխա բերդաքաղաքը և նրանից հյու-*

---

[207] Գուրչանիձեան յովհաննէսի դուքս դաշտարան, Տոմար 2, տիւ., 1941, էջ. 7–21, 332–386, 393–402.

[208] Այս նահիեն թուրքերեն բնագրում կրում է Güney (Գյունեյ) անվանումը, որը նշանակում է Հարավային: Բայց այս գյուղախումբը գտնվում է ոչ թե նահանգի հարավում, այլ՝ կենտրոնում և հյուսիսում: Բանն այն է, որ Güney–ը գործածված է ոչ թե հարավի, այլ ավելի տաք՝ արևին հարող մասում գտնվելու իմաստով: Ուստի այն Չիքիայի կողմից վրացերեն թարգմանվել է ՃՁვარეს (մզվարես) բառով, որ նշանակում է Արևահայաց կամ Արևահար: ՃՁვარეს ձևով թարգմանված են նաև մնացած բոլոր գավառների Güney նահիեների անունները: Թյուրիմացությունից ու շփոթից խուսափելու համար այդօրինակ գյուղախմբերը կոչել ենք նաև այդ վարչամիավորի գլխավոր բնակավայրի անունով, տվյալ դեպքում՝ Ախալցխայի:

[209] Թուրքերեն բնագրում այս նահիեն անվանված է Kuzey, որ ուղղակի նշանակում է «հյուսիսային»: Բայց քանի որ գործածված է ստվերոտ, ստվերային իմաստով, վրացերեն օրինակում թարգմանված է ոչ թե ჩრდილო (հյուսիսային), այլ՝ ჩრდილის, այն է՝ Ստվերահայաց, Ստվերահար:

[210] Գուրչանիձեան յովհաննէսի դուքս դաշտարան, Տ. 2, էջ. 7–13.

սիս ընկած Ծուղրութ, Ծիրա, Անի, Կլդե, Իվլիտ, Սվիր և այլ գյուղերի չրջանը:

բ) Ստվերոտ (Kuzey) ձահիճն *ունեցել է 28 բնակավայր (Սուխլիս, Սածել, Օրալ, Խակ, Աբաթխև, Վերին և Ներքին Պամաճներ, Մարդա, Վերին Նեոխրեք և այլն), որոնք տարածվել են Ախալցխայից արևմուտք, Փոցխով գետի աջափնյակի չրջանում:*

գ) Ուդեի ձահիճն *ամենաբազմամարդ և հայաշատ գյուղախմբերից էր: 58 գյուղերի թվում հիշատակվում են Ուդեն, Բոլաջուրը, Արալը, Վերին և Ներքին Զանավները, Սաիրմեն, Սոմեխթուբանը (Someçtoçbaba)[211] և այլն: Ընդգրկում էր Քոբլիան գետի ստորին հոսանքի չրջանը:*

դ) Քոբլիանի ձահիճն *եղել է փոքր գյուղախումբ՝ 17 գյուղերով: Հավանաբար գտնվել է համանուն գետի ավազանում, Ուդեի նահիճի հարևանությամբ:*

ե) Ածուրի ձահիճում *հիշատակվում է 61 բնակավայր: Կենտրոնը համանուն բերդաքաղաքն էր: Գյուղախմբի տարածքը Կուր գետի ձորով, հյուսիսարևելյան ուղղությամբ, ձգվում էր մինչև Բորժոմի կիրճի հյուսիսային մուտքը: Հայտնի գյուղերից էին Ագարան (Ագարակ), Բլորձան, Զեդուբանը, Դվիրը և այլն:*

զ) Ալթունկալայի (Ոսկեբերդ) ձահիճի *17 բնակավայրերը (Ալթունկալա կամ Ադիգեն, Վարխան, Խևաչեն, Փերխո) գլխավորապես սփռված էին Քոբլիան գետի վերին հոսանքի և նրա ձախակողմյան Աբասթուման վտակի միացման չրջանում:*

է) Օցխեի ձահիճում *հիշատակվում էր 25 բնակավայր, այդ թվում հետագայի նշանավոր Աբասթուման առողջարանային գյուղաքաղաքը: Զբաղեցնում էր Ալթունկալայի նահիճից հյուսիս՝ մինչև Զեգարի լեռնացքն ընկած անտառապատ տարածքը:*

ը) Ասպինձայի ձահիճում *թվարկվում է 43 բնակավայր: Գյուղերը սփռված էին Ասպինձա գյուղաբերդի չորս ուղղություններով: Հյուսիսում ընկած էին Օթա, Վերին և Ներքին Օչորաններ, Մլաշխև, արևելքում՝ Դամալա կամ Տամալա, Ճորբաբեթ, արևմուտքում՝ Ռուսթավ, Մուսխ, Զուրզել, հարավում՝ Վարնեթ և այլ գյուղեր:*

---

[211] Սոմեխթուբան բառի somçe արմատը նշանակում է հայ: Բնակավայրը թարգմանաբար կարելի է կոչել Հայաշեն, Հայկաշեն կամ Հայաթաղ:

բ) Ձաճարակի նահիեում հաշվվում էր ավելի քան 60 բնակավայր: Հիշատակվում են Վերին և Ներքին Ձաճարակները,[212] նրանից հարավ՝ հանքային ջրերով հայտնի Ուրավելը, Անդան և այլն:

Ախալցխայի լիվայում հիշատակվող բոլոր գյուղախմբերը տեղադրելով քարտեզի վրա, ստանում ենք գավառի սահմանների հետևյալ պատկերը. արևմուտքում պատմական Տայքի Արսյաց լեռների հյուսիսային զանգվածն էր և Աչարիան, արևելքում՝ Թռեղքի (Թրիալեթի) լեռնաշղթան և Խերթվիսի լիվան, հարավում՝ Էրուշեթի բարձրավանդակը, հյուսիսում՝ Քարթլիի թագավորությունը:

II. Խերթվիսի լիվա: Այս գավառի կազմում նշվում է 3 գյուղախումբ (Խերթվիս, Անտառային Ջավախք և Բուզմարեթի), որոնց բոլոր 119 բնակատեղիների[213] մեծ մասը գտնվում էր պատմական Վերին Ջավախքի տարածքում:

ա) Խերթվիսի նահիեի 38 բնակավայրերը զբաղեցնում էին համանուն բերդաքաղաքի շրջատարածքը. հյուսիսում՝ Խիզաբավրա, Սարո, Ազգյուդա (Ածկուտա; այժմ՝ Ածղվիթա), արևմուտքում՝ Տոլոշ, արևելքում՝ Ջավախքի սարահարթի արևմտյան մասում, Թափարվան գետի ձախ ափի երկայնքով՝ Պրտենա, Ջունչխա, Դիլիսկա (զոլոգչկա, Դիլիցկա) գյուղերն էին:

բ) Անտառային Ջավախի (ტყიანი ჯავახეთი) գյուղախումբն իր մոտ 70 բնակավայրերով զբաղեցնում էր պատմական Վերին Ջավախքի հյուսիսային հատվածը՝ Թափարվան գետի աջափնյակից մինչև Թռեղքի լեռնաշղթան: Այստեղ էին հինավուրց Կոթելիա, Օրջա (վրացերենում՝ ორჯვა), Կոկիա, Բարալեթի,[214] Խորենիա (Խորոնք, Եարոան–Խարիան), Ղրտիլա (Իխտիլա), Կաճո, Խանդո, Վերին և Ներքին Ալաստաններ, Ազավրեթ, Ջակ, Բուռնաշեթ, Վերին և Ներքին Սամսարներ, Մերենիա (աղբյուրում՝ Յերոնոա – Մերոնիա), Ագանա, Բեժանո (ფოზანი – Փոզանի), Ջանջղա (Ճանճղա),[215] Վարևան, Սիրգ

---

[212] Այս գյուղերը հայտնի են նաև ճալա անունով: Ընկած էին Ախալցխա քաղաքից ոչ հեռու, նրա հարավ–արևելակողմում:

[213] Խերթվիսի գյուղերի ցանկը տես გურჯისტანის ყოლაფეთის დიდი დავთარი, წ. 2, გვ. 13–15.

[214] Ի դեպ, Բարալեթը հիշատակվում է հայահունչ Բարալես՝ Բարիլույս ձևով, տե՛ս გურჯისტანის ყოლაფეთის დიდი დავთარი, წ. 2, გვ. 196.

[215] Հետագայում Բեժանոն և Ճանճղան նույնացվել են՝ իբրև միևնույն գյուղի անվան տարբերակներ: Բայց այստեղ, նրանց առանձին–առանձին հիշատակումները վկայում են, որ դրանք իրականում նախապես եղել են տարբեր գյուղեր:

(Սիրկվա), Տուրցխ, Լոմատուրցխ, Ալաթուման, Մոլիտ, Բալանթա, Մոդեգամ, Վարգավ և այլ գյուղեր:

Վերոհիշյալ գյուղերի մեծ մասը, որ գերազանցապես հայաբնակ է, գոյությունն ունի նաև ներկայումս: Բայց 16–րդ դարի վերջին հիշատակվում են նաև հայկական ու վրացական անուններ ունեցող, ցայսօր չպահպանված մի շարք այլ բնակավայրեր: Պետք է ենթադրել, որ դրանք կամ ավերվել են կամ ենթարկվել անվանափոխության: Այդ բնակավայրերից են Մուրջը (Մուրճ),[216] Կուրաչենը, Քարթաչենը (Քարտաչաչեն), Մոխրաչենը, (վրաց.՝ მუხრაშენ), Գավաչենը,[217] Օլդան, Ճարուլը, Խումբիսը և այլն:[218] Դատելով յուրաքանչյուր բնակավայրից գանձվող հարկաչափի գումարից՝ կարելի է պնդել, որ առավել մարդաշատ գյուղերը էին Օրջան, Մերենիան, Ադանան, Բարալեթը, Տուրցխը, Ղրտիլան, Կաճոն, Փոկան, Խանդոն, Ազավրեթը, Բալանթան, Կոթելիան, Վերին Ալաստանը, Սիրկվան, Բուռնաչեթը, Ջակը և այլն:

գ) Բուզմարեթի նահիեն *փոքրիկ գյուղախումբ էր և ներկայացված էր ընդամենը 12 բնակավայրերով: Այն զբաղեցնում էր Խերթվիսից արևմուտք, Էրուշեթի բարձրավանդակի մի հատվածը: Հայտնի էին Վերին և Միջին Բուզմարեթ, Վան գյուղերը:*

<u>III. Ախալքալաքի լիվա</u>: *Ախալքալաքի լիվան ընդգրկում էր պատմական Ջավախք գավառի կենտրոնական հատվածը: Նրա երկք նահիեներում (Ազչհիրի (բառացի նշանակում է Սպիտակ քաղաք), Թմոգվի (Թմկա) և Նիալիսղուրի) հաշվվում էր 139 բնակավայր և հարկատու այլ բնակատեղի:*

ա) Ագշեհիրը *ոչ միայն այս գավառի, այլև ամբողջ նահանգի ամենաբազմագյուղ նահիեներից էր: Ուներ 84 գյուղ և հարկատու այլ բնակատեղի: Սակայն գյուղերի մեծ մասը սակավամարդ էր: Բավական է նշել, որ գավառի և այս նահիեի կենտրոն Ախալքալաք*

---

[216] Սուրճը գտնվել է Խերթվիսի գավառի Անտառային Ջավախք գյուղախմբում (տե՛ս Գուրչանթանի ցոլայոյոսի դոխո դացոտարո, წ. 2, გვ. 14.), Կոթելիայից կես կմ հյուսիս (տե՛ս Ս. Ջիքիայի կազմած քարտեզը՝ Գուրչանթանի ցոլայոյոսի რუკა, თბ., 1953): Սուրճի ավերակների մասին տե՛ս Լալայան Ե., Երկեր, հ. 1, էջ 77:

[217] Ս. Ջիքիան Գավաշենը տեղադրում է Կուրի աջ ափին՝ Գոգաշենի տեղում (Գուրչանթանի ցոլայոյոսի რუკა): Սակայն այդ տեսակետը համոզիչ չէ, քանզի «Մեծ դավթարում» Գոգաշենը ևս հիշատակվում է որպես Թմուկ (Թմոգվի) նահիեի գյուղերից մեկը (Գուրչանթանի ցոլայոյոսի դոխո դացոտարո, წ. 2, გვ. 16).

[218] Գուրչանթանի ցոլայոյոսի դոխո դացոտարո, წ. 2, გვ. 16.

բերդաքաղաքում, անչուշտ տեղի ունեցած սրյունալի կռիվների արդյունքում, մնացել էր ընդամենը 3 ծուխ բնակիչ:[219] Այս նահիեում հիշատակվող գյուղերի մի մեծ խումբը գտնվում էր Ախալքալաքից արևմուտք և հարավ–արևմուտք՝ Վաչիան, Ափնիա, Քարծեփ (Քարցեր), Հոկամ, Գումբուրդա, Նաքալաքև, Գավաշեն, Քիլդա և այլն: Գյուղերի երկրորդ փունջը զբաղեցնում էր Ախալքալաքի սարահարթի կենտրոնական մասը՝ Ներքին և Վերին Խոսպիաներ, Ջիգրաշեն, Մեծ և Փոքր Մալադիաներ, Կորխ, Օլավերդ, Գոման (Գոմ), Խուլգումա, Կուլիկամ, Աբուլ, Թորիա, Հեչտիա, Ուլմանա, Մեծ և Փոքր Խորենիա, Զրեսկ, Ղաուրմա,[220] Մեծ, Միջին և Փոքր Մուրջախեթ, Մամզարա, Պատկանա, Խանչալի և այլ գյուղերով: Ագչեհիրի գյուղերի երրորդ խումբը տարածվում էր Փարվանա և Սաղամո լճերի շրջանում՝ ընդգրկելով Գանձա, Սուղամո, Փոկա, Փարվանա,[221] Ասպարա բնակավայրերը: Այս նահիեում ևս հիշատակվող մի քանի գյուղեր՝ Սամզոբ (վրաց. թարգմ.՝ նամწუბი), Սակոդրիա (ნაკუდრია), Զարմա և այլն: Հիշատակվում են նաև այսօր անմարդաբնակ բնակատեղիներ, ինչպես Կուրի աջ ափին ընկած Քիլդան (Նաքալաքևից հյուսիս) և Ղարթան (Քարծեփից արևմուտք), Այազման (Քարծեփի և Հոկամի միջև), Ալմալին (թարգմանաբար՝ խնձորուտ, Խոսպիա գյուղից հարավ) և այլն:[222]

բ) Թմուկի (վրաց. თმოგვი) նահիեն ընկած էր Ախալքալաքից արևմուտք՝ հիմնականում Կուր գետի ձորում, հինավուրց Վարձիա այրաքաղաքի շրջակայքում: 22 գյուղերի թվում առանձնանում էին մի խումբ պատմական բնակավայրեր՝ Թմուկ բերդաքաղաքը, Վարձիան, Զեղա Վարձիան, Մունդան, ինչպես և Մարաչխանը (Կուրի աջ ափին, Քարծեփից արևմուտք, Ղարթայից հյուսիս, այժմ լքյալ վիճակում), Վաչլոբը, Դանեթը և այլն:

---

[219] Նույն տեղում, էջ 235.

[220] Թուրքերեն բնագրում՝ Ղուրումքա, վրացերեն թարգմանությունում՝ ღაურმეჯი (Ղաուրմեքի).

[221] Փոկայի և Փարվանայի միաժամանակյա հիշատակումը հուշում է, որ դրանք եղել են տարբեր գյուղեր և նրանց նույնացումը սխալ է: Փոկան ընկած էր Փարվանա լճի հարավային, Փարվանա գյուղը՝ արևելյան ափին, այժմյան Ռադիոնովկայի տեղում: Փոկան թուրք հեղինակ Իսմայիլ Ասըմ էֆենդին սխալ տառադարձմամբ հիշատակում է «Փոկս» ձևով (տե՛ս Թուրքական աղբյուրները, հ. Ա, էջ 129):

[222] Այդ գյուղերի տեղագրությունը տես Բադալյան Գ., Ձավախք և հարակից շրջաններ, քարտեզ, մասշտաբ 1: 260000, Ե., 1995:

գ) Նիալիսղուրի ենահիեի *33 գյուղերը՝ Վերին և Ներքին Նիալա, Ագարակ, Վարնեթ (չշփոթել Ասպինճայի Վարնեթի հետ) և այլն, բաժին էին ընկնում Կուրի ձախափնյակին՝ Թմուկ նահիեից արևմուտք:*

IV. Զղդի լիվա: *Զղդրի գավառը տրոհվել է երեք գյուղախմբի (Ջանբազի, Քանարբելի և Գայլաբերդի) և ունեցել է 100 բնակավայր: Խերթվիսի և Ախալքալաքի գավառներն ու այս լիվայի մեծ մասը միասին հիմնականում նույնանում են պատմական Վերին Ջավախքի տարածքի հետ: Այս գավառն ընդգրկել է Զղդր և Խոզաբուն լճերի միջնատարածքը՝ կազմելով Ախալքալաքի սարահարթի հարավային սահմանագիծը: Այն մասամբ էլ ժամանակին եղել է պատմական Վանանդի հյուսիսային հատվածը:*

ա) Ջանբազի ենահիեի *51 բնակավայրերի մեծ մասը սփռված էր Զղդր լճից հյուսիս: Այստեղ էր Զղդր բերդաքաղաքը՝ ամբողջ նահանգի ու գավառի միաժամանակյա կենտրոնավայրը: Վերջինիս հարևանությամբ Զուրզունա (Ծուրծունա), Ջանբազ, ավելի հեռու՝ Ջամդուրա,*[223] *Աղջաղալա և այլ գյուղերն էին:*

բ) Քանարբելի գյուղախումբն *ընկած էր Ջանբազից հյուսիս և ուներ 33 բնակավայր՝ կենտրոնավայր Քանարբելը (Խոզաբուն լճի հարավարևմտյան ափին), Խավեթը, Մեծ և Փոքր Կարծախները, Մրագվալը, Ծղարոսթավը, Սուլդան, Պետաշենը (Բեգնչեն), Էրինջան (Երնջակ),* [224] *Խոզաբունը, Դլիվը (հնում՝ Դլիվևկ, այժմ՝ Դիլիֆ), Դադեշը, Քարծեփը և այլն:*[225]

գ) Գայլաբերդի *(վրաց.՝ მგელცოხის)* ենահիեի *16 բնակավայրերի թվում հանդիպում ենք Ջոջորթա, Ջաք, Օխորա, Լոռի, Սարուխան և այլ գյուղերի, որոնք սփռված էին Քանարբելի նահիեից արևմուտք:*

V. Փոցխովի լիվա: *Այս գավառի 81 բնակավայրերից 49–ը բաժին էր ընկնում* Արևահայաց (Güney) *կամ* Փոցխովի, *32–ը՝* Ստվերոտ (Kuzey) *նահիեներին: Լիվան ընդարձակ տարածք չուներ: Այն ձգվում էր Փոցխով գետի ակունքների շրջանից մինչև Ախալց-*

---

[223] Ջանբազի Ջամդուրա (վրաց. ՝ ჩამჯვრალი) գյուղը չպետք է շփոթել Ախալքալաքի համանուն գյուղի հետ:

[224] Հատկանշական է, որ այս գյուղը տվյալ դեպքում հիշատակվում է ոչ թե Խոզափին, այլ՝ հայկական Խոզաբուն ձևով, այսինքն՝ այնպես, ինչպես միջնադարյան աղբյուրներում:

[225] გურჯისტანის ვილაიეთის დიდი დავთარი, ტ. 2, გვ. 18.

խայի լիվայի հարավային սահմանը՝ իր մեջ ներառելով նաև Ծղալթբիլա և Միհնուբան գյուղերը:[226]

VI. Պետրեի լիվա: *Տարածվում էր Թռեղքի լեռների արևելյան անտառապատ հատվածում: Հարավում՝ Խերթվիսի լիվան էր, հյուսիսում՝ վրացական թագավորությունը: Ուներ 2 նահիե՝ Պետրեի և Քաշվեթի: Առաջինում հաշվվում էր 38 (Ցիխիսջվար՝ Բերդախաչ, Ծաղվեր և այլն), երկրորդում՝ 11 (Բակուրիան, Քվիչխեթ և այլն) բնակավայր:*

VII. Փանակի (Բանակի) լիվա: *Տեղագրվում է պատմական Տայքի Բերդացփոր գավառում: Ունեցել է 3 նահիե* (Փանակ, Քիամխիս, Փանասկերտ) *և 109 բնակավայր:*

VIII. Մեծ Արտահանի լիվա: *Բնակավայրերի բազմաքանակությամբ (222 գյուղ և ավան) զիջում էր միայն Ախալցխայի լիվային: Ուներ 3 նահիե՝* Արևահայաց, Ստվերոտ և Անտառային: *Զբաղեցրել է Կուրի վերին հոսանքի չրջանը՝ հավանաբար իր մեջ ընդգրկելով նաև Կոզ (Կոլա, Կոլե) գավառի տարածքը:*

IX. Օլթիի լիվա: *Դավթարում այս գավառի մասին կա միայն մի համառոտ ու խրթին ցանկ, որում հիշատակվում են 8–9 նահիեներ: Մոտ 90 բնակավայրերի անունների մեծ մասն անընթեռնելի է: Այս հանգամանքը հիմք է տալիս ենթադրելու, որ Օլթիի լիվան լիարժեքորեն կազմավորված չէր, իսկ նրա բնակավայրերը՝ դեռ մանրամասն հաշվառման ենթարկված չէին: Ավելի ճիշտ՝ այն նույնիսկ դուրս էր մնացել օսմանյան ենթակայությունից և միայն անվանապես էր Զլդրի նահանգի կազմում: Հետագայի աղբյուրներից երևում է, որ Օլթիի գավառի հպատակեցման և այն թուրքական վարչամիավորի վերածվելու գործընթացը տեղի է ունեցել ավելի ուշ:*

Ահա ընդհանուր գծերով այսպիսի վարչատարածքային իրավիճակ էր Զլդրի (ապա՝ Ախալցխայի) նահանգում 16–րդ դարի վերջին: Սակայն «Գյուրջիստանի վիլայեթի մեծ դավթարում» թվարկվում են ոչ միայն գավառները՝ իրենց գյուղերով, այլև՝ բերվում են յուրաքանչյուր բնակավայրում ապրող ընտանիքների թվաքանակը, նրանցում ապրող ծուխերի նահապետերի անվանացանկերը, որոնք բացառիկ նյութ են տարածաշրջանի ժողովրդագրական պատկերը

[226] Նույն տեղում, էջ 19–20.

վեր հանելու համար: Տրվում է նաև ամեն մի բնակավայրից ու հարկման ենթակա այլ վայրից վճարվող ընդհանուր հարկի չափը, այդ թվում՝ դրամահարկը (իսփենջ, որը յուրաքանչյուր բնակչից գանձվում էր 25 միավոր), հարսանեկան և այլ կարգի հարկերը, մշակվող հացահատիկային (ցորեն, գարի, տարեկան, կորեկ, ոլոռ) և բոստանային կուլտուրաների, պահվող անասունների ու մեղվափեթակների, ձկնորսության (Տաբածղուր, Սաղամո, Փարվանա, Խանչալի լճերից) դիմաց գանձվող հարկաչափերը և այլն: Հարկման ենթակաների անվանացանկերից հստակ երևում է, որ Ջավախքի ու նրա շրջակա գավառների բնակավայրերի մեծ մասում բնակվիչները քրիստոնյաներ էին և կրում էին հայկական ու վրացական կամ հայերի և վրացիների մեջ մեծ տարածում գտած անուններ: Հայկական կամ հայերի կողմից լայնորեն գործածվող անուններ հանդիպում ենք Ջավախքի հետևյալ բնակավայրերում. [227]

Աղյուսակ 1

N:	Բնակավայրի անվանումը	Ընտանիքների թիվը	Հարկի չափը դրամով (իսփենջ)	Գանձվող ամբողջ հարկը (միավոր)	Հիշատակվող հայկական կամ հայերի շրջանում մեծ տարածում ունեցող անձնանունները	էջը ըստ հարկա ցուցակի
1.	Ախալցխա	174	4350	30000	Յարալ Սիմոնի, Շահվել Միրխանի, նրա որդի Աս-վա(ծա)տուր, Ռոստոմ Դովլաթիարի, նրա որդի Շահմուրադ, Դավթի որդի Աս-վա(ծա)տուր, Արտաշես, Մանվել Շերգիլի, Խաչատուր Դուրալի, Մանաս Սարգսի, նրա եղբայր Աստուր, Արմանա Ղազարի, նրա եղբայր Գոզալ, Մղվդել Սոմ(ե)խի (հայի -Ա.Մ.), Մասուր Ավանոսի (Ավանեսի)	22-24

[227] Ցանկում վկայակոչել ենք նաև Ախալցխայի գավառի մի քանի բնակավայրեր: Աղյուսակի վերջին սյունակում նշված է վկայակոչված նյութի էջը՝ ըստ հարկացուցակի վրացերեն թարգմանության:

2.	Ծուղրութ	32	800	26600	Սարգիս, Գաբրիել	25-26
3.	Տատանիս	30	750	20000	Կարապետ	27
4.	Ծիրա	8	200	18500	Ջաքարի որդի	29
5.	Սածել	57	1425	22200	Կիրակոս, Միհրան	39
6.	Վ.Պամաճ	18	450	13000	Սիմոն	44
7.	Բալաջուր	24	600	4000	Կիրակոս Միտիչի (Մկրտչի)	60
8.	Ասպինձա	50	1250	25000	Սարգիս Մուրադի, Կիրակոս Շահվելի, Սպենդիար, Հազարգուլ, նրա եղբայր Աբրահամ	130-131
9.	Տամալա	5	125	8000	Բասիլ (Վասիլ), Ոսեբ	136-137
10.	Խերթվիս	127	3175	25000	Խոսիկ Դավթի, Գաբրիել, Պապու Գրիգորի, նրա եղբայր Մելիք, Ջաքար, նրա եղբայր Գրիգոր, Սարգիս Մելիքի, Հանես, Խաչատուր Հայրապետի, Բատատա Խաչատուրի, Բագրատի թոռ, նրա եղբայր Միտիչ, Սարգիս, Ումիկ Խանդամայի, նրա եղբայր Ասվա(ծա)տուր, Խաչատուր Սորազանի, Գաբրիելի եղբայր Խաչատուր, Աբրահամ Մազանայի, Կիրակոս, Աբոյի եղբայր Բայանդուր, Խաչատուր Ջատիկի, Բատատա Կիրակոսի, Ումիկ Խաչատուրի	171
11.	Օրջա	18	450	20000	Հանես Իշխանի, նրա եղբայր Սարգիս, Ավագ Հանեսի, Կիրակոս, Սիմոն, Ղազար, Նազարի որդի	192
12.	Ն. Օրջա	14	350	13000	Վահրամ, Եղիազար, Սիմոն, Սարգիս Վելիջանի	226
13.	Կոթելիա	3	75	10000	Ջաքար	194
14.	Բարալեթ (Բարալիս)	21	525	25000	Միտիչի (Մկրտչի) թոռ, նրա որդի Սարգիս, Սամսոնի որդի	196
15.	Վերին Ալաստան	15	375	10500	Արզուման	196
16.	Տուրցխ	10	250	15000	Մասուրի որդի Սարգիս, Ավագ	198
17.	Խանդո	61	1525	15000	Հակոբ	202
18.	Վաչիան	17	425	19500	Քերոբ	214

19.	Ափնիա	35	875	10000	Աբաս, Իսագուլ	214 .
20.	Լոմա-տուրցխ	8	200	10500	Ոոստոմի որդի Ալիբեկ, Նորսես (Ներսես)	198
21.	Քարծեփ	54	1350	14630	Բայանդուր	215-216
22.	Հոկամ	20	500	31000	Մանվել Սարգսի	217
23.	Քիլդա	8	200	14500	Խաչատուր	218
24.	Վ. և Ն. Խոս-պիաներ	9/16	225/ 400	3200/ 5490	Միտիչ (Մկրտիչ) Տեր-Բեկի, Խոսիկ-Հուսիկ, Սահակ	218, 233
25.	Ջիգրաշեն	16	400	11160	Ջաքարի քոռ	219
26.	Մեծ Մաջաղիա	18	450	13000	Հակոբ	219
27.	Փոքր Մաջաղիա	4	100	4000	Դավիթ Խուդավերդի	221
28.	Արագովա	6	150	16000	Միհրան, Իսահակի քոռ, Սարգիս	220
29.	Նաքալաքև	7	175	8000	Հավաքեղ Կարապետի	220
30.	Կորխ	19	475	12000	Ոոստոմ, նրա որդի Կիրա-կոս, Շահաբա Մկրտչի, Հաճես Սարգսի, Կիրակոս Ասվատուրի	221
31.	Գումբուրդո	20	500	25000	Խարաբայի որդի Դավիթ, Մկրտիչ՝ Ամիրխանի որդի, Յարալ Կիրակոսի, Շահ-կուլի որդի Աբրահամ, Սա-նուկ	222
32.	Օլավերդ	27	675	11000	Աբաս	223
33.	Խուլգումո	19	475	9000	Ասվա/ծա/տուր, Արտաշես	224
34.	Հեշտիա	12	300	21000	Տեր-Հակոբ	225
35.	Մեծ Խորենիա և Չամդուրա	28	700	20000	Գրիգոր, նրա եղբայր Մոսե, Սահակ Գրիգորի, նրա եղբայր Սարգիս, Տեր-Հակոբ, նրա եղբայր Յա-րալ, Խաչատուր, Մուրադ Ջիհանշեի	225
36.	Ջրեսկ	16	400	10000	Շահմուրադ, Ոոսեփ (Հովսեփ), Սիմոն, Սամսոն, Ասվա/ծա/տուր	227
37.	Ղաուրմա	3	75	12000	Սարգիս	227-228
38.	Բավրա	6	150	7665	Բայանդուր	228
39.	Թորիա	21	525	13000	Առաքել, Բայանդուր, Ջանիբեկ Սարգսի, Մկրտիչ	229
40.	Աբուլ	12	300	14000	Եղիազար, Դավիթ, Սարգիս	229
41.	Ախալքա-լաքի բերդ	3	75	7000	Մուրադ, նրա եղբայր Ջաղիկ	235

42.	Փոքր Սուրջախեք	6	150	2000	Հաճես Սարգսի	236
43.	Փոքր Մամզարա	11	275	8000	Դոլիկ Ասվա/ծա/տուրի	237
44.	Ծուռնդա	12	300	13000	Ջոջիկ Ջհանշեհի, նրա եղբայր Մանուկ	242
45.	Բեժանո	12	300	10000	Սիմոն	195
46.	Ջակ	7	175	10000	եղիազար, Ոսկեփ-Հոսեփ	204
47.	Բուռնաշեթ	11	275	14000	Սարգիս	205
48.	Գոմ (Գոման)	25	625	6000	Իսահակ	222
49.	Գավաշեն՞	27	675	12000	Դավիթ Կիրակոսի, նրա եղբայր Կարապետ, Դեսպազ Սուքիասի	217

Ուշագրավ է, որ կային բնակավայրեր, որոնք գրեթե լիովին հայաբնակ էին: Այսպես. վերոհիշյալ Օրջա, Վերին Օրջա, Կորխ *գյուղերում հիշատակվող բնակիչների մեջ միայն քչերն էին, որ հայկական անուններ չէին կրում: Այդ հանգամանքը հաստատվում է նաև առ այսօր հատկապես Օրջայի շրջատարածքում պահպանվող բազմաթիվ եզակի խաչքարերով: Ս. Կարապետյանի կողմից ուսումնասիրված այնտեղի 12 խաչքարերից 7–ի վրա կան արձանագրություններ, ընդ որում՝ երեքն էլ թվակիր են և վերաբերում են 1463–1465 թվականներին:*[228] *Նույն ժողովրդագրական իրավիճակն էր տիրում նաև նշանավոր* Թմուկ (Թմոգվի) *բերդաքաղաքում: Այնտեղ հանդիպում ենք հետևյալ անուններին. Սարգիս Առաքելի, Ռոստոմ, Անանիայի որդի, նրա եղբայր Մկրտիչ, որդի Վարդանի, որդի Եղիգարի, Հովհաննես Բայանդուրի, Պապու Շիրինի, Բերիկ Փիրազիզի, նրա որդի Մկրտիչ, Մուրադ, Տեր–Հակոբ, Բերիկ Մուրադի, նրա եղբայր Մարգար, Հակոբ, Սարգիս Մելիքի և այլն: Ջուտ հայաբնակ էր Ջղդրի գավառի* Քենարբել (Քանարբել) *գյուղը՝ Ծառուկի որդի, նրա եղբայր Ասվա(ծա)տուր, Մարգարի որդի, Ղուլիջանի որդի Նորսես (Ներսես), Խոսիկ–Հուսիկ, Ռոստոմի որդի, Սարգիս Մուխթարի, Միկկիրտիչ Վելիջանի, Միտիչի որդի, նրա եղբայր Սարգիս, Մուրադ Կարապետի, Մարտիրոս Ավանեսի, Հովհաննես Ամիրազիզի, նրա եղբայր Կարապետ, Խաչիկ Համբարձումի, Թոռնիկ Ծառուկի, Խաչա-*

---

[228] Կարապետյան Ս., Ջավախքի խաչքարերը, էջ 9:

տուր Ալեքսանի, Մարգար, Պապու Մարգարի և այլք, Մրագվալ գյուղը՝ Ասվա(ծա)տուր և այլն:

Հայաշատ էին նաև նույն գավառի Մեծ և Փոքր Կարծախ գյուղերը՝ Նաղար Շահնազարի, Վարդան, Գրիգոր Սուքիասի, Ջհանչե Կիրակոսի, Մկրտիչի որդի, նրա եղբայր Վարձել, Բայանդուր, Խաչիկ Յարալի, որդի Սահակի, որդի Անտոնի, Տեր–Հակոբ Ջոմերդի, նրա որդի Շահազիզ, Յարազիզ Տեր–Հակոբի, Սարգիս, Ասվա(ծա)տուր, Դիարբեկ Սահակի, նրա եղբայր Ասվա(ծա)տուր և այլն: Սուլդայում հանդիպում ենք Շերմազանի որդի Սիմոն, էրինջայում (Երնջակ)՝ Եղիազարի որդի Մանաս, Խոզաբուն կամ Խոզափին լճի արևմտյան ափին ընկած համանուն Խոզաբունում՝ Մանուկ Ասվա(ծա)տուրի, Ծղարոսթավում՝ Այվազի որդի Շահում, նրա եղբայր՝ Շիրին, Սահակի որդի Կիրակոս, Ավագ, Պարոնվարդ, Խաչատուր և այլ անուններ:[229] Հատկանշական է, որ վերոհիշյալ անունների մեջ բազմիցս հիշատակվում է Տեր–Հակոբ անունը, իսկ Խոսպիայում՝ Տեր–Բեկը, հանգամանք, որը վկայում է տվյալ բնակավայրում հայ քահանայի, այն է՝ նաև հայկական ծխի ու եկեղեցու առկայության մասին: Ուշագրավ է նաև Ծղարոսթավում Պարոնվարդ անվան հիշատակումը, որը պետք է հասկանալ որպես պարոն Վարդ, ամենայն հավանականությամբ՝ հողատեր մարդու մասին վկայություն:

Ինչպես նրևաց վերոհիշյալ աղյուսակից, գրեթե նույն իրավիճակն էր նաև Ախալցխայի գավառում, ուր հայաշատ էր ոչ միայն քաղաքը, այլ նաև շրջակա գյուղերը: Այս հանգամանքը հաստատվում է նաև եվրոպացի ուղեգիրների վկայություններով, որոնց համաձայն 17–րդ դարում Ախալցխա քաղաքում ապրում էր 50 հազ. մարդ՝ մեծ մասամբ հայեր և հրեաներ:[230]

Ջղրի էյալեթի տարածքում հայ բնակչությունը բացարձակ գերակշռություն էր կազմում Մեծ Արտահանի լիվայում: Փարականի բերդում հիշատակվում են Մկրտիչ Անտոնի, Խաչատուր Ասվատուրի, Մելիք, նրա եղբայր՝ Կիրակոս, Գրիգորի թոռ, Հա(յ)րապետի թոռ, Վարթան (Վարդան) Տղապարոնի (Տղա պարոնի), Դուդունա

---

[229] «Դավթարի» մի ընդարձակ հատվածում հիշատակվող վերոհիշյալ բոլոր անուններն ըստ բնակավայրերի տե՛ս ვურჭუმელაშვილი ჯულაევის ლაკი დავთარი წ. 2, გვ. 191–243, 275–278, 285.

[230] Иоселиани, Города существовавшие в Грузии, Т., 1850, с. 29. Լto, Սահմանագծեր, էջ 108:

գյուղում՝ Տեր Հակոբ, Խաչիկ, Մարգար, Վելում՝ Եղիազար և այլ հայկական անուններ:[231]

Այսպիսով՝ հնարավոր չէ համաձայնվել «Գյուրջիստանի վիլայեթի մեծ դավթարի» թարգմանիչ և հետազոտող Ս. Ջիքիայի, ինչպես և այլ հեղինակների հետ այն հարցում, թե այս սկզբնաղբյուրի տվյալները վկայում են այդ վարչամիավորում ամբողջապես վրացական (целиком грузинский) բնակչության առկայության մասին:[232] Անշուշտ, շատ բնակավայրերում կարելի է հանդիպել վրացական անունների. օրինակ՝ Պրտեճայում Գիորգի, Պետրե, Գոգիչա, Դադեշում՝ Գագուչա, Էլիա, Լոմկացի, Պապունա, Կարտիկամում՝ Գոգուչա, Սաբա, Գիորգի, Խավեթում՝ Գրիգոլ, Աբեսալոմ և այլն:[233] Բայց, անկասկած, դա հիմք չի տալիս նմանօրինակ «ընդհանրացումների» համար, որոնք ավելի շուտ հետապնդում են քաղաքական նպատակներ՝ «ապացուցել», որ Ջավախքում և նրա շրջատարածքում հայ բնակչության հայտնվելը կապվում է միայն 1830 թ. արևմտահայերի գաղթի հետ:

Հետևելով նույն սկզբնաղբյուրում հիշատակվող մարդկանց անունների ցանկին՝ կարելի է նկատել, որ այս տարածաշրջանում թե՛ հայերի և թե՛ վրացիների շրջանում մեծ տարածում են ունեցել քիչ գործածվող այնպիսի անուններ, ինչպիսիք են «Վարձելը», «Յարալը» և այլն: Կարծում ենք, որ Վարձել անվան գործածությունը պատահական չէ և կարող է կապված լինել այս շրջանում խիստ հարկի «Վարձավունիք» կամ «Վարձիա» պատմական անունների հետ: Աչքի է զարնում նաև մեկ այլ փաստ. մխևնույն անունը կրել են և՛ հայերը և՛ վրացիները: Հաճախ կարելի է հանդիպել դեպքերի, երբ հայրն ունեցել է վրացու, որդին՝ հայի, կամ եղբայրներից մեկը՝ հայի, մյուսը՝ վրացու անուն: Օրինակ. Զունչխա (Զունչխել) գյուղի բնակիչ, վրացանուն Մամուկայի որդիներից մեկը՝ Բայիթառն էր, մյուսը՝ Վարդանը (էջ 176): Նման փաստերը վկայում են խառը բնակչություն ունեցող գյուղերի գոյության և նրանցում երկու ազգերի միջև ոչ միայն հանդուրժողական, այլև բարյացակամ վերաբերմունքի առկայության մասին: Այսպիսի իրավիճակը ձևավորվել

---

[231] Գյուրջիստանի վիլայեթի մեծ դավթարի, էջ. 2, գյ. 403, 462–464.

[232] Пространный реестр Гюрджистанского вилайета, турецкий текст издал, перевел С. .С. Джикия, книга 1, Тб., 1947, с. XV (թուրքերեն):

[233] Գյուրջիստանի վիլայեթի մեծ դավթարի, էջ. 2, գյ. 176–177, 230, 276.

էր նախորդ ժամանակաշրջանում՝ Սամցխեի աթաբեկության շրջանում և կարող էր լինել նաև հայության շրջանում քաղկեդոնականության տարածման հետևանք:[234]

Ամփոփելով տարածաշրջանի ժողովրդագրական իրավիճակի քննությունը՝ ընդգծենք ևս մի քանի բնորոշ հատկանիշներ: Թուրքական նվաճման սկզբնաշրջանում հիշատակվում են ավելի շատ բնակավայրեր, քան հետագայում: Մի շարք գյուղեր, որոնք 16–րդ դարի վերջին տրոհված են եղել երկու մասի՝ Մեծ ու Փոքրի, կամ՝ Վերին ու Ներքինի (Օրջա, Ալաստան, Մաջադիա, Մուրջախեթի, Մամզարա, Խանդո (հիշատակվում է նաև երկրորդ Խանդոն), հետագայում միավորվել են կամ մնացել է նրանցից միայն մեկը: Որոշ գյուղեր էլ առհասարակ վերացել են, ինչպես Գավաշենը, Տիկաշենը, Ալմալին, Ազմանան և այլն: Բնականաբար, այս ոչ նպաստավոր միտումները օսմանյան դաժան տիրապետության հետևանք են եղել:

Մյուս բնորոշ հատկանիշն այն էր, որ խոշոր բնակավայրեր՝ քաղաքներ ու ավաններ գրեթե չեն եղել: Բացառություն կարելի է համարել միայն Ախալցխա քաղաքը, իսկ բուն Ջավախքում՝ Խերթվիս և Թմուկ բերդերը: Համապատասխանաբար առաջինը ունեցել է 174 (յուրաքանչյուր ընտանիքում 7 չունչ հաշվելով՝ 1200 մարդ), երկրորդը՝ 127 (մոտավորապես՝ 900 չունչ), երրորդը՝ 63 ընտանիք (մոտավ.՝ 500 չունչ) բնակիչ:[235] *Ամենամեծ գյուղերը բաժին են ընկել Ջավախքի սարահարթի հարավային հատվածին: Այստեղ Քարածեփն ունեցել է 54, Քանարբելը՝ 52, Խավերը՝ 36 ծուխ բնակիչ:*[236] *18–27 ծուխ, այն է՝ 150–200 չունչ բնակչություն ունեցող գյուղեր են եղել Գավաշենը, Օլավերդը, Գոմը, Թորիան, Բարալետը, Կորխը,*

---

[234] Այսօրինակ հայ–վրացական էթնոկրոնական միավորն էր, որ թուրքական դժնդակ տիրապետության պայմաններում, մահմեդականացավ և օրեցօր ներթափանցող թյուրքական էթնոտարրի հետ, սկսեց հանդես գալ «մեսխեթցի»՝ հավաքական աշխարհագրական անվան տակ: Մյուս կարևոր հանգամանքը՝ բնակիչների մեջ մահմեդական անունների գրեթե բացակայության փաստն է: Այն, անշուշտ, այդ փուլում պայմանավորված էր դեռ օսմանյան գերիշխանության թուլությամբ, հանգամանք, որի մասին արդեն չենք կարող ասել հաջորդ ժամանակաշրջանի վերաբերյալ: Հետաքրքրական է, որ ակադ. Ն. Մառը մեսխերի կամ մոսոխների մեջ տեսնում է հայկական արմատներ, բայց միաժամանակ առաջ է քաշում մի անհամոզիչ վարկած, ըստ որի՝ վերջիններս գաղթել են Վանա լճի շրջանից և, բնակություն հաստատելով Սվանեթիայում, կազմել սվանների էթնիկ հիմքը (Марр Н., К дате эмиграции мосохов из Армении в Сванию/Известия Императорской академии наук, СПб., 1916, с. 1689—1692).

[235] გურჯისტანის ვილაიეთის დიდი დავთარი, ნ. 2, გვ. 22–24, 171, 240–241.

[236] Նույն տեղում, էջ 215–216, 275–276:

Խուլգուման, Գումբուրդան, Օրջան, Կոկիան, Վարևանը, Մեծ Մաջաղիան և այլն:[237]

Գյուղերի մյուս խումբն ունեցել է 10–18 ծուխ կամ 80–150 չունչ բնակիչ, իսկ ամենասակավ բնակչությամբ գյուղերում հաշվվել է 80–ից պակաս մարդ: Այս խմբի բնակավայրերի մի մասում ապրել է ընդամենը մի քանի ընտանիք: Դրանց թվում հանդիպում ենք նույնիսկ Ախալքալաք բերդաքաղաքին՝ 3 ընտանիք բնակիչներով: Դա նշանակում է, որ երկրամասի թուրքական բռնագավթման ընթացքում այն մեծապես տուժել է՝ բնակչությունը կոտորվել է, գերեվարվել կամ արտագաղթել:

Այժմ փորձենք անդրադառնալ նաև Ջավախքի տեղանուններին, մասնավորապես՝ բնակավայրերի անունների խնդրին, որը միշտ զանազան մեկնաբանությունների տեղիք է տվել կամ՝ ուղղակի չրջանցվել է: Գոյություն ունի այն կարծիքը, թե դրանց մեծ մասն ունի զուտ արաբաթուրքական կամ վրացական ծագում: Սակայն առաջին դեպքում անհասկանալի է դառնում, երբ բնակավայրերի ճնշող մեծամասնությանը, ինչպես տեսանք, հանդիպում ենք վաղ չրջանում՝ մինչև արաբական ու թուրքական տիրապետությունները: Նշանակում է, տեղանունների մահմեդական ծագում ունենալու վարկածը, բավական հեշտությամբ հերքվում է: Նույնիսկ մահմեդականների չրջանում տարածում ունեցող «Աբուլ» հատուկ անունը, ոչ մի կապ չունի Աբուլ *լեռան ու համանուն գյուղի անվան հետ, քանի որ* Apulum *ձևով հիշատակվում է դեռևս Պևտինգերյան քարտեզում: Ինչ վերաբերում է առանձին դեպքերում որոշ տեղանունների ուղղակի թուրքերենով թարգմանվելու հանգամանքին (օրինակ՝ Ջամդուրա. իբր՝ չամ (փայտի տեսակ) և դուրան՝ հարթավայր), դրանք ավելի չուտ պատահական զուգադիպություններ են կամ՝ մտացածին բացատրություններ: Տվյալ դեպքում կասկած չի մնում, երբ Ջամդուրայի անունը նախապես հանդիպում ենք այլ ձևով՝ Ջամվրալա տարբերակով: Մահմեդական անուններ ունեցող առանձին տեղանունները հիմնականում ավելի ուշ չրջանի ծնունդ են: Օրինակ. Խոջաբեկ, Օրոջալար (լար՝ թուրքերենում հոգնակերտ մասնիկ է, որ տվյալ դեպքում կնշանակի Օրոջաներ կամ Օրջաներ):*

---

[237] Գյուղական վայրերում յուրաքանչյուր ծխում միջինը հաշվվել է 8 մարդ (տես Մելքոնյան Ա., էրզրում, էջ 103–112):

Տեղանունների մի մասի՝ վրացական հիմքեր ունենալու տեսակետը, անշուշտ, առանձին դեպքերում, կասկած չի հարուցում: Օրինակ՝ Սաղամո (վրաց.՝ საღამო երեկո), Դիլիսկա (հնարավոր է՝ დილი (դիլի, նշանակում է՝ առավոտ) և კარი (կարի՝ դուռ), այսինքն՝ առավոտյան դուռ, Արշալույս) և այլն: Սակայն այդպիսի դեպքերը շատ չեն: Իրականությունն այն է, որ տեղանունների զգալի մասը, դժվար է, շատ դեպքերում էլ ուղղակի անհնարին է ստուգաբանել. այսպես՝ Մաջադիա, Գոնդուրա, Տուրցխ, Վաչիան, Խանդո, Բավրա, Խուլգումա, Կարտիկամ, Կորխ և այլն: Սակայն խնդրի ուշադիր քննության դեպքում, այնուամենայնիվ, հնարավոր է լինում նկատել որոշակի օրինաչափություններ: Աչքի է զարնում այն հանգամանքը, որ շատ տեղանուններ կրում են բազմաթիվ լեզուներում, ինչպես և հայերենում, տեղ, երկիր նշանակող «իա», «ստան» վերջավորություններ (Կոկիա, Կոթելիա, Մաջադիա, Խորենիա, Խոսպիա, Ալաստան և այլն): Մյուս մասը կրում է կամ հայկական «չեն» տեղանունակերտ արմատը, կամ ուղղակի ունի հայկական ու հայահունչ անվանում՝ Ափնիա (Կուրի ափին ընկած բնակավայր), Քարծեփ (քար և ծեփ), Բարալես (Բարիլուս, որ հետո դարձել է Բարալեթ), Խորենիա (Խորոնք, Խորակերտ, Խորաչեն), Երնջակ (հետագայում՝ Էրինջա), Գոմ (Գոման), Մերոնիա (մյուռոնի երկիր, ապա՝ Մերենիա), Խոզաբուն (խոզերի բուն, այնուհետև՝ Խոզափին), Առաքյուլ (առաքյալների վայր, հետագայում՝ Արագյալ), Գավաշեն (հավանաբար՝ Կավաշեն), Տիկաշեն, Ջիդրաշեն, Ասպնջակ (Ասպինձա), Գանձ (Գանձա), Մունդա (Մնունդ, Մննդաձին), Թմուկ (Թմբուկ, Թմոգվի), Մարգաստան (մարգերի երկիր), Բռնաշեն (հետագայում աղավաղվելով՝ Բուռնաշեթ) և այլն: Եվ վերջապես, կան դեպքեր, երբ տեղանվան կեսն ունի հայկական, կեսը՝ վրացական ծագում՝ Սամսար (სამი – սամի, վրացերեն՝ երեք և սար – հայերեն՝ լեռ, այսինքն՝ Եռալեռ): Նկատենք, որ դժվար բացատրելի տեղանունների մի մասն էլ ուղղակի ունի իր զուտ հայկական բացատրությունը: Օրինակ. ըստ ազգագրագետ Սեյլանի Գումբուրդո տեղանվան հայկական տարբերակը Արևածագն է:[238]

Այժմ վերադառնանք ուսումնասիրվող վարչամիավորի տարածքային խնդիրներին: Ախալցխայի նահանգի վերաճևումները չարունակվեցին: Տարբեր աղբյուրների հիման վրա Անդրեաս Բիրքենի

[238] Սեյլան, Նշմարներ, էջ 11:

կատարած հետազոտությունների համաձայն այս էյալեթի կազմում ընդհանրապես հիշատակվում է 33 լիվա:[239] Բացի վերոհիշյալ գավառներից, տարբեր ժամանակներում հանդիպում ենք նաև հիշատակումներ հետևյալ լիվաների մասին՝ Փոքր Արտահան,[240] Գյոլե (Կող, Կոլա), Մահջիլ, Մամրվան (Նարիման), Թավուսկեր (պատմական Տայոցքար գավառ) և այլն: Կարճ ժամանակով Ախալցխային են ենթարկվել նույնիսկ Քութայիսը՝ Իմերեթիայի կենտրոնը,[241] Սպերը, և որը հիմնականում եղել է Էրզրումի նահանգի կազմում,[242] և այլն: Ախալցխայի ենթակայության տակ հանդիպում ենք նաև գավառների, որոնց տեղագրությունը բավականաչափ բարդ է: Օրինակ՝ Երգան, Սասին և այլն:[243]

16–րդ դ. վերջին և 17–րդ առաջին կեսին՝ օսմանյան տիրապետության ամրապնդմանն ուղղված սուլթանական կառավարության ձեռնարկած միջոցառումների արդյունքում, ինչպես ամբողջ Արևմտյան Հայաստանում, այնպես էլ Զլդրի (Ախալցխայի) նահանգում, տեղի ունեցան վարչաժողովրդագրական որոշակի տեղաշարժեր: Նախ, ինչպես նշվեց, մոտավորապես 17–րդ դարի առաջին կեսին, երկարատև պատերազմների ընթացքում ավերված Զլդր բերդաքաղաքից, էյալեթի կենտրոնը տեղափոխվեց բարգավաճ Ախալցխա քաղաքը: Վերջինս այդուհետ վերածվեց փաշայանիստ քաղաքի: Այն, ըստ Էվլիա Չելեբիի, այդ ժամանակ «սեպաձև ժայռի վրա կառուցված քարաշեն, ամրակուռ և հաճելի բերդ էր» երկու դարպասներով, 1100 հողածածկ տներով, բազմաթիվ գեղեցիկ այգիներով:[244] Նույն ժամանակ Շավշեթի բեկի կողմից վերակառուցված Ախալքալաքի բերդն էլ դարձավ էյալեթի ռազմավարական նշանակություն ունեցող բերդաքաղաքներից մեկը:

---

[239] Birken A., նշվ. աշխ., էջ 154–160:

[240] Այդ ժամանակ Ախալցխային ենթակա Փոքր Արտահանը հիմնականում եղել է Կարսի նահանգի կազմում:

[241] Քութայիսը Ախալցխային ենթարկվել է միայն սուլթան Մահմուդ 4–րդի օրոք (1648–1687), երբ գրավվել է Մուրթեզա փաշայի կողմից, տե՛ս Էվլիյա Չելեբի, Թուրքական աղբյուրներ, հ. Գ, էջ 23:

[242] Տե՛ս Մելքոնյան Ա., Էրզրում, էջ 28, 77–88, 163: Լոռին 16–րդ դարի վերջին մի կարճատև փուլում եղել է թուրքական տիրապետության տակ, ապա՝ վերակցվել Քարթլիի թագավորությանը:

[243] Birken A., նշվ. աշխ., էջ 154–160:

[244] Թուրքական աղբյուրները, հ. Գ, էջ 111:

17–րդ դարի առաջին կեսին Ախալցխայի փաշան, որին հաճախ նախկինի պես անվանում էին աթաբեկ, իսկ նրա նահանգը՝ Չլդրի էյալեթ,[245] լիովին հպատակեցրեց դեռ հարաբերական ինքնուրույնությունից օգտվող Օլթիի տարածքը և դարձավ բավական ընդարձակ նահանգի ինքնիշխան տիրակալը: Ի տարբերություն այլ վարչամիավորների՝ այստեղի փաշան օգտվում էր շատ ավելի լայն ինքնուրույնությունից, երբեմն համարձակվում էր չենթարկվել նույնիսկ օսմանյան սուլթանին:

17–րդ դարի առաջին կեսի թուրք հեղինակների (Այնի Ալի, Կոչիբեյ, Ալի Ջաուշ, Էվլիա Չելեբի և ուրիշներ) հաղորդած տեղեկությունների համաձայն՝ Ախալցխայի էյալեթի լիվանների թիվն արդեն հասել էր 13–ի՝ նախկին 9–ի փոխարեն:[246] Նահանգի հյուսիս–արևմուտքում՝ որպես նոր գավառներ հանդես էին եկել Շավշեթը, Արտանուջը, Աճարան (Աջարիա), Բերդագրակը, Լիվանան, Նիսֆի (Նըսֆի) Լիվանան: Ինքնուրույն լիվայի էր վերածվել Ախալցխայի (Արևահարը) գավառի նախկին Ճաճարակի նահիեն:[247] Այլևս չի հիշատակվում Պետրեի լիվան: Հավանաբար այն արդեն դուրս էր մնացել օսմանյան ենթակայությունից և վերամիացվել էր վրաց թագավորությանը:

---

[245] Էվլիա Չելեբին հստակ նշում է, որ թեև փաշայանիստ քաղաքն արդեն Ախալցխան էր, «սակայն փաղդիշահական (սուլթանական – Ա.Մ.) դևթերխանեում գրվում է «Չլդրի էյալեթի մյութասարիֆ» այսինչ փաշան (տե՛ս Թուրքական աղբյուրներ, հ. Գ, էջ 108):

[246] Էվլիյա Չելեբի, Թուրքական աղբյուրներ, հ. Գ, էջ 23: Է. Չելեբին այդ 13 գավառների թվում հիշատակում է Օլթին, Խերթվիսը, Արտանուջը, Հաջրեքը, Արտահան Բյուզյուքը (անկասկած՝ Բոյուք՝ Մեծ – Ա.Մ.), Փոսխովը, Մախջիլը, Աջարան, Փեներքը, Փերքքերքը (Բերդագրակ), Լիվանեն, Նըսֆի (Նիսֆի) Լիվանեն և Շաշատը (տե՛ս նույն տեղում, էջ 26, 110): Այնի Ալին ևս հաշվում է 13 գավառ, սակայն որոշ տարբերություններով՝ Չլդր, Օլթի, Խերդուշ (Խերթվիս), Արտանուջ, Արտահան, Հաջրեք, Փոցխով, Մախջել, Աջարա, Փեներ, Բերդքերեք (Բերդագրակ), Լիվանե, Նըսֆի Լիվանե, Շավշետ (Ayni Ali, Kavanin–i Ali Osman der hulasa–i mezanin–i defter–i divan, Istanbul, 1280, s. 7, հմմտ.՝ Փափազյան Ա., նշվ. աշխ., էջ 124, 229: Այդ ժամանակի հեղինակներից, թերևս, բացառություն է կազմում Քյաթիբ Չելեբին, որը Ախալցխայի գավառների թիվը հասցնում է 18–ի (Թուրքական աղբյուրները, հ. Բ, էջ 27): Հավանաբար հետևելով նրան, Համմերը հիշատակում է 20 գավառ (Hammer J., Histoire de l'empire ottoman, t. 17, Paris, 1843, p. 58). Այս հանգամանքը հուշում է, որ անընդհատ տեղի է ունեցել գավառների թվի աճ՝ պայմանավորված տեղական հողատեր դասի շահերով:

[247] ჩილდირის ეიალეთის ჯაბა დავთარი, გვ. 80–81, Birken A., նշվ. աշխ., էջ 154–160, Pitcher D. E., Historical Geography, էջ 128, Օսմանյան կայսրության 17–րդ դարի վարչական բաժանման, վարչակարգերի և հողային հարաբերությունների մասին տե՛ս նաև Սաֆրաստյան Ա. Խ., Օսմանյան կայսրության վարչական բաժանումը 17–րդ դարում, Արևելագիտական ժողովածու, թիվ 1, Ե., 1960, էջ 285–301:

Ախալցխայի էյալեթի 17–րդ դ. վերջի և 18–րդ դարի վարչատարածքային իրավիճակն ավելի հանգամանորեն ներկայացնելու համար դիմենք օսմանյան մեկ այլ հարկացուցակի՝ «Զլդրի էյալեթի ջաբա դավթարի» օգնությանը: Ըստ այս ինքնատիպ հարկացուցակի, որն արտացոլում է 1694–1732 թթ. ընկած ժամանակահատվածի իրավիճակը, Ախալցխայի նահանգը, որն աղբյուրում առաջվա նման շարունակում է կրել «Զլդրի էյալեթ» անվանումը, բավականաչափ ընդարձակվել էր և ուներ հետևյալ վարչատարածքային կառուցվածքը.

1. Ախալցխայի լիվա: *Միավորում էր Ախալցխայի, Ածղուրի, Ուդեի, Արևահայաց, Ստվերոտ և Քեռնարբելի նահիեները:*

2. Ախալքալաքի լիվա: *Տրոհվում էր Ակշեհիրի, Նիալիսղուրի և Թմոգվի (Թմկա) նահիեների.*[248]

3. Զլդրի լիվա: *Նահիեներն էին՝ Զաճրազը, Գայլաբերդը (Մգելցիխե) և Քանարբելը:*

4. Փոցխովի լիվա: *Ուներ երեք նահիե՝ Փոցխովի, Արևահայաց և Ստվերոտ:*

5. Խերթվիսի լիվա: *Հիշատակվում են Խերթվիսի, Բուզմարեթի, Անտառային Ջավախքի և Ստվերոտ նահիենները:*

6. Արտանուջի լիվա: *Բաժանվում էր Արտանուջի, Իշխանի, Թավուսկերի և Խումարի (Ծղմարան) նահիենների:*

7. Օլթիի լիվա: *Ընդգրկում էր Բարդուսի, Անճավի, Ստվերոտ և Միսրասորի (Ծոնրախորո) նահիենները:*

8. Մեծ Արտահանի լիվա: *Հայտնի էր Արևահայաց, Ստվերոտ և Անտառային նահիենևրով:*

9. Փոքր Արտահանի լիվա: *Նշվում են Խոջևանի, Արևահայաց, Ստվերոտ գյուղախմբերը:*

10. Փանակի (Բանակի) լիվա: *Բաղկացած էր* Փանակի, Փանասկերտի, Փամխիսի (Յամճոնոն) *նահիենևրից:*

---

[248] «Զաբա դավթարի» տեքստի հետազոտող Սվանիձեն սխալմամբ Ախալքալաքի գավառի կազմում նշում է նաև Յեզյարչն (Սզվարես, այն է՝ Արևահայաց) նահիեն (տես ჩალდირის ეიალეთის ჯაბა დავთარი, გვ. 79). Միևչդեռ, աղբյուրում նման դյուղախումբ այս գավառի կազմում չի հիշատակվում:

11. Մամրվանի լիվա: *Հիշատակվում է երկու գյուղախումբ՝ Մամրվանի և Ախայի (տեսն):*

Հարկացուցակում բացի վերոհիշյալ գավառներից, որոնց կազմում վկայակոչված են կոնկրետ 38 գյուղախմբեր, հանդիպում ենք ևս 10 լիվաների, առանց նահիենների հիշատակումների, հանգամանք, որը ենթադրել է տալիս վերջիններիս կազմավորման փուլում գտնվելու մասին: Դրանք են՝ 12. Ձաճարակի 13. Ասպինձայի 14. Ալթունկալայի (Ոսկեբերդի), 15. Օցխեի, 16. Վերին Աճարայի, 7. Ներքին Աճարայի, 18. Շավշեթի, 19. Լիվանայի, 20. Նիսֆի Լիվանայի և 21. Բերդագրակի լիվաները:

Նախորդ ժամանակաշրջանի աղբյուրների տվյալների հետ համադրությունից երևում է, որ նահանգը զգալիորեն ընդարձակվել է և տեղի են ունեցել նաև սահմանների ներքին վերաձևումներ: Որոշ նահիեներ վերածվել են լիվաների: Նախկինի նման պատմական Ջավախքի տարածքն ընդգրկվել է Ախալքալաքի, Ներթվիսի և Զկդրի լիվաների մեջ:

17–18–րդ դդ. սկզբնաղբյուրները զգալի նյութ են պարունակում նաև յուրաքանչյուր նահանգում և նրա տարածքում հողատիրության ձևերի վերաբերյալ: Պարզվում է, որ Զկդրի էյալեթում եղել են Օսմանյան կայսրությունում գոյություն ունեցած հողատիրության ձևերի մեծ մասը՝ խասեր, զեամեթներ, թիմարներ և այլն:[249] *Բայց այստեղ կային նաև յուրդլուկ և օջաքլըք կոչվող ժառանգական հողեր, որոնք պետության կողմից տրվում էին սահմանային նահանգների, տվյալ դեպքում նաև՝ Զկդր–Ախալցխայի էյալեթի պաշտոնյաներին: Ըստ Էվլիա Չելեբիի՝ 17–րդ դարում խասերը հիմնականում բաժին էին ընկնում Օլթիի, Բերդագրակի, Արտանուջի, Արտահանի, Շավշեթի և մի քանի այլ լիվաներին, յուրդլուկներն ու օջաքլըքները՝ Լիվանեին, Նըսֆի Լիվանեին, ինչպես և Բերդագրակին ու Շավշեթին: Ջավախքում խասեր կային Ներթվիսի պավառում, որոնց եկամուտը կազմում էր 200500 ակչե:*[250] *Այնի Ալիի վկայությամբ Զկդրի էյալեթում կար 67 զեամեթ, 559 թիմար, բեյլերբեյի տա-*

---

[249] Ջանազան ծառայությունների դիմաց տրվող հողերը կրում էին ընդհանուր *դիրլիք* անունը: Դրանցից խաս էին կոչվում այն հողերը, որոնց տասանորդի տուրքը կազմում էր ավելի քան 100 հազ. ակչե, զիամեթ՝ 20 հազ. – 100 հազ. ակչե և թիմար՝ 3 հազ. – 20 հազ. ակչե:

[250] Էվլիյա Չելեբի, Թուրքական աղբյուրները, հ. 9, էջ 29, 110:

րեկան եկամուտը հավասար էր 925 հազ., յուրաքանչյուր միրլիվա-յինը՝ 200–600 հազ. ակչե: Նահանգի զինական ուժը կազմում էր 1800 հեծյալ:[251] 159 զեամեթներ ու 689 թիմարներ հանդիպում էին գրեթե բոլոր գավառներում: Ջլդրի միրլիվայի խասը կազմել է 400 հազ. ակչե:[252]

18–րդ դարի սկզբին «Ջաբա դավթարի» մեջ ամբողջ Ախալց-խայի նահանգում վկայակոչվում է 882 լենային տիրույթ, որից 17-ը՝ խաս, 90–ը՝ զեամեթ և 767–ը՝ թիմար:[253] Կնշանակի՝ նախորդ ժամա-նակաշրջանի համեմատությամբ հողային տիրույթներում խոշոր տե-ղաշարժեր չէին եղել: Նախկինի նման թուրք մահմեդական հողատե-րերի դասը շարունակում էր բացառապես իր ձեռքում պահել նա-հանգի տնտեսական գլխավոր ուժը՝ հողը, որի եկամուտների հաշվին պահվում էին զորքերը: Հողատերերի ավելի քան 60 %–ը տիրել է մեծ հողակտորների, որոնց տարեկան եկամուտը կազմել է 5 հազ. ակչե: Ամենաշատ եկամուտներ ունեցել են սանջակբեյերը՝ 200 հազ. – 500 հազ. ակչե, ընդամենը՝ մոտավորապես 4,5 մլն. ակչե: Խնդրո առարկա նահանգում սանջակբեյերից 15–ը, այդ թվում՝ Խերթվիսի և Ախալքալաքի, խասերին տիրել են յուրդլուկի և օջաքլըքի իրավուն-քով՝ ժառանգաբար:[254]

Ի՞նչ ժողովրդագրական տեղաշարժեր կատարվեցին Ախալց-խայի նահանգում թուրքական տիրապետության առաջին փուլում՝ մինչև 18–րդ դարը: Այդ խնդրում որոշակի պատկերացում ենք կազ-մում, երբ բաղդատում ենք բազմիցս վկայակոչված «Գյուրջիստանի վիլայեթի մեծ դավթարի» և «Ջլդրի էյալեթի ջաբա դավթարի» նյու-թերը, որոնցից առաջինը, ինչպես հայտնի է, արտացոլում է 16–րդ դարի վերջի, այսինքն՝ օսմանյան տիրապետության հաստատման շրջանը, մյուսը՝ 17–րդ դարի վերջի և 18–րդ դարի սկզբի իրավիճա-կը:[255] Անմիջապես աչքի է զարնում այն փաստը, որ մեկ հարյուրամ-յակի ընթացքում չեչտակի նվազել էր նահանգի բնակավայրերի թի-

---

[251] Ayni Ali, Kavanin–i Ali Osman der hulasa–i mezamin–i defter–i divan, s. 7. Քյաթիբ Չելեբին Ախալցխայի նահանգում հաշվում է 97 զեամեթ, 559 թիմար (Թուրքական աղբյուրները, հ. Բ, էջ 27):

[252] Էվլիյա Չելեբի, Թուրքական աղբյուրները, հ. Գ, էջ 111, 114:

[253] ჩილდირის ეიალეთის ჯაბა დაფთარი, გვ. 213.

[254] Նույն տեղում, էջ 213–214.

[255] Այդ ժամանակաշրջանում Ջավախքի երեք լիվաներում (Ախալքալաք, Խերթվիս և Չլդր) հիշատակվող գյուղերի անունները տես ჩილდირის ეიალეთის ჯაბა დაფთარი, გვ. 106–199.

վը: Բերենք տվյալներ հիմնականում Վերին Ջավախքի օրինակով՝ այն ներկայացնող երեք գավառներով.

Աղյուսակ 2

1. Մխալքալաքի լիվայի Ճահիեներ	1595 թ.	1694–1732 թթ.
ա) Ակշեհիրի	84	33
բ) Թմուկի	22	7
գ) Նիալիսղուրի	33	17
2. Խերթվիսի լիվայի Ճահիեներ		
ա) Անտառային Ջավախքի	69	23
բ) Խերթվիսի	38	19
գ) Ստվերոտ	–	2
դ) Բուգմարեթի	12	1
3. Չղոռի լիվայի Ճահիեներ		
ա) Ճանբազի	51	22
բ) Գայլաբերդի	16	6
գ) Քանարբելի	33	12
ընդամենը՝	358	142

Այսպիսով՝ մեկ հարյուրամյակ, կամ մի փոքր ավելի անց, Ջավախքում հիշատակվող բնակավայրերի թիվը 358–ից կրճատվում է 142–ի, այսինքն՝ 2,5 անգամ: Եթե նախկինում հանդիպում ենք մինևնույն անունը կրող մի քանի գյուղերի՝ Վերին և Ներքին, Մեծ, Միջին և Փոքր, ապա այժմ նրանց մի մասն առհասարակ չի հիշատակվում, մյուսներն էլ՝ նշվում են իբրև մեկական գյուղեր:

Ժողովրդագրական աղետալի վիճակը հստակ երևում է նաև Վախուշտ Բագրատիոնիի «Վրաստանի թագավորության պատմություն» աշխատության մեջ բերված չափազանց արժեքավոր մի վկայակոչումից: Ըստ մեծանուն պատմաբան–աշխարհագետի՝ 1705 թ., երբ Ախալցխայում սկսեց կառավարել Ասլան փաշան, Սամցխեում (բացի Ջավախքից), առավելապես՝ Շավշեթում, Աջարիայում և Արտահանում, բացառությամբ փոքրաթիվ գյուղական բնակչության, քրիստոնյաներ չէին մնացել: Բայց չուտով կյանքը բնականոն հունի մեջ է մտնում. «կառուցվում էին գյուղեր ու ավաններ, քանզի այդ ժամանակ այդտեղ խաղաղություն էր տիրում: Եվ Քարթլիից ու Սոմխիթից քշվածները (գաղթեցվածները–Ա. Մ) գերազանցապես՝ գերեվարված իմերները, բնակություն էին հաստատում այստեղ, ավելի շատ՝ Ջավախեթիայում, (որոնք–Ա.Մ.) արագ բազմանում էին (և ընդունում–Ա.Մ.) մահմեդականություն, քանզի բացի տուրքերի

վճարումից, գյուղացիները (այլ) վնասներ չէին կրում»:[256] Վախուշտն իր այս միտքը մեկ այլ տարբերակով կրկնում է նաև քիչ անց: Նրա վկայությամբ Քարթլիում տիրող աղետալի վիճակի պատճառով այնտեղից արտագաղթում էին դեպի Ջավախք ու Սամցխե:[257] Ասվածից հետևում է, որ ամբողջ նահանգում, Ջավախքում՝ ավելի նվազ չափերով պակասել էր քրիստոնյաների թիվը, և հիմնականում իմամների ներգաղթի հաշվին քարթվելական էթնիկ տարրը աճում էր: Բայց օսմանյան տիրապետության պայմաններում նրանք էլ, մյուսների օրինակով՝ արագորեն մահմեդականանում էին:

Մահմեդականացման երևույթը հստակորեն նկատվում էր այդ ժամանակ տարածաշրջանին հատուկ մյուս երևույթի մեջ. գյուղատեր բնակիչների մեջ քրիստոնեական անուններ ունեցողների փոխարեն, գրեթե առանց բացառության, հանդես են գալիս մահմեդական անուններ կրող մարդիկ, հանգամանք, որը վկայում է մահմեդականների կողմից բոլոր հողերի բռնազավթման մասին: Օրինակ, Ուջմանայում հիշատակվում է Մահմեդը, Տիկաչենում՝ Սուլեյմանը, Խուլգումոյում՝ Մուստաֆայի որդի Մեհմեդը, Դիլիսկայում Աբդուլլահը և Մեհմեդը, Բուռնաշեթում՝ Հասանը, Կոթելիայում՝ Աբդուլլահի որդի Հալիլը և այլն:[258] Անկասկած, այս փաստը չի խոսում առհասարակ բնակավայրերի մեծ մասում միայն մահմեդականներ ապրելու տեսակետի օգտին, այլ հուշում է մահմեդականացման գործընթացների արագացման, այս տարածաշրջանում մահմեդականացման, վերջինիս արդյունքում «մեսխեթցիների» էթնոկրոնական համայնքի հանդես գալու միտումների մասին:[259] Օսմանյան կայսրությունում հայերի և մյուս քրիստոնյա ժողովուրդների մշտական կոտորածների, բռնի մահմեդականացման քաղաքականությունը հստակորեն երևում է, երբ քննական վերլուծության ենք ենթարկում արևմտահայ տարբեր վարչամիավորների էթնոժողովրդագրական տեղաշարժերը օսմանյան տիրապետության ողջ ընթացքում: Պարզվում է, որ

---

[256] Вахушти Багратиони, История царства грузинского, Т., 1976, с. 216, հմմտ.՝ Վրաց աղբյուրները, հ. Գ, էջ 74:

[257] Նույն տեղում, էջ 217:

[258] ჩილდირის ეიალეთის ჯაბა დავთარი, გვ. 141, 151, 153, 155, 156, 158, 177.

[259] Ըստ մի աղբյուրի՝ այստեղ քրիստոնյաների զանգվածային կրոնափոխության առաջին դեպքը արձանագրվել է արդեն 1609 թ. (Տաշեան Հ., Տայք, դրացիք և Խոտորջուր, Վիեննա,1973, էջ 161):

էթնիկ հայաթափման միտումները համընդհանուր երևույթ են եղել ողջ Արևմտյան Հայաստանի համար:[260]

Խոսելով 17–18–րդ դարերի ընթացքում խնդրո առարկա նահանգի էթնիկ տեղաշարժերի մասին՝ չի կարելի չնկատել նաև հակառակ գործընթացները: Պարսկաթուրքական ավերիչ արշավանքների ընթացքում այս շրջանից տեղի է ունենում բնակչության ոչ միայն արտագաղթ, ինչպես նշվեց, այլ նաև՝ ներգաղթ, որի շնորհիվ որոշ բնակավայրեր վերաշինվել են և բնակեցվել քարթվելական էթնոտարրով: Օրինակ. 1615 և 1617 թթ., խուսափելով Շահ Աբասի հալածանքներից, Քարթլիի ու Կախեթի բազմաթիվ վրացի բնակիչներ հանգրվան են գտնում Ախալքալաքի գավառում:[261] 17–րդ դարի երկրորդ կեսին Էրզրումում սկսված սովից ու համաճարակներից խուսափելու նպատակով չատ հայեր արտագաղթում են դեպի Հյուսիսային Հայաստան և Անդրկովկասի այլ շրջաններ:[262] Կամ՝ 18–րդ դ. սկզբին, ինչպես տեսանք, Ջավախքի շրջատարածքը բնակեցվում էր Քարթլիից և Սոմխիթից եկածներով: Սակայն ներգաղթի այսօրինակ երևույթները եղանակ չէին ստեղծում և չէին կարող կասեցնել ընդհանուր էթնիկ դիմախեղման գործընթացները:

18–րդ դարում լեզգիական ցեղերի մշտական հարձակումներով և երկրամասի նկատմամբ Ռուսական տերության հետաքրքրությունների աճով պայմանավորված, Անդրկովկասում ստեղծվեց նոր ռազմաքաղաքական իրավիճակ, որի պայմաններում տարածաշրջանի համար պայքարող երկրների համար նկատելիորեն բարձրացավ Ախալցխայի էյալեթի նշանակությունը: Պատահական չէ, որ ինչպես սուլթանը, այնպես էլ ռուսական և իրանական կառավարությունները իրենց քաղաքականության մեջ հատուկ դեր էին վերագրում օրեցօր ավելի մեծ ինքնուրույնություն ձեռք բերող Ախալցխայի փա-

---

[260] Օսմանյան տիրապետության շրջանում Արևմտյան Հայաստանի և մասնավորապես՝ Էրզրումի նահանգի ժողովրդագրական տեղաշարժերի մասին մանրամասն տե՛ս՝ Մելքոնյան Ա., Սուլթանական կառավարության քաղաքականությունն Արևմտյան Հայաստանում և արևմտահայ ժողովրդագրական տեղաշարժերի միտումները, Հայկական հարց, գիտաժողովի նյութեր (23–24 նոյեմբեր, 1998), Ե., 2000, էջ 47–52, նույնի՝ Եղեռնի քաղաքականության ձևավորման ակունքները (16–րդ դար – 1915 թ.), Հայոց ցեղասպանության պատճառներ և դասեր, Ե., 1995, էջ 37–59, նույնի՝ ժողովրդագրական գործընթացների միտումները Էրզրումի նահանգում (16–րդ դար – 20–րդ դարի սկիզբ), ՊԲՀ, 1999, թիվ 2–3, էջ 122–129:

[261] Ростомов И. П., Ахалкалакский уезд, с. 18.

[262] Մանր ժամանակագրություններ, հ. 1, Ե., 1951, էջ 186:

չայի դիրքորոշմանը: Հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչ Իսրայել Օրին համոզված էր, որ բացի հայ մելիքներից ու վրաց թագավորից, օտար նվաճողների դեմ պայքարում հաջողության հասնելու համար պետք է հաշվի նստել Թուրքիային և Պարսկաստանին ենթակա Անդրկովկասի քրիստոնեաբնակ նահանգների, առաջին հերթին Ախալցխայի կառավարիչների ու բնակչության դիրքորոշումների հետ: Հասկանալի է, թե ինչու Անգեղակոթի ժողովից հետո Գերմանիա վերադառնալով, նա Պֆալցի կուրֆյուրստ (մեծ իշխան) Հովհան Վիլհելմին տեղեկացնում էր, որ Ղարաբաղի մելիքները փորձեր են անում պայքարի մեջ ներգրավել նաև Քարթլիի թագավոր Գեորգի 11–րդի եղբորը՝ Ախալցխայում նստող Շահնազար խանին, որը դեռ նախորդ ժամանակներից հայտնի էր թուրքերի դեմ ապստամբական գործողություններ սկսելու տրամադրություններով:[263]

Թեև քրիստոնյաների համեմատությամբ մահմեդականները սակավաթիվ էին, սակայն օտար տիրապետության ավերիչ իրադարձությունները հող էին նախապատրաստում գավառի հետագա էթնիկական դիմախեղման համար: Այդ իմաստով հատկապես ծանր հետևանքներ ունեցավ 1730–ական թթ. կեսերին Նադիր խանի (հետագայում՝ շահ) արշավանքը: Կարսի, Բայազետի, Կաղզվանի, Կարինի և այլ գավառների ավերումից հետո Նադիրը ներխուժեց Հյուսիսային Հայաստան, որտեղից գերված 6000 հայ բնակիչների բռնագաղթեցրեց Պարսկաստան: «...Եւ գերեցին զ Նարիմանու նահանգն, զ Ջաւախէթու, զ Ջլտրու և զ Ղայի Ղուլու, որք էին բովանդակ ի մեր ազգէ,– գրում է Աբրահամ Կրետացին,– Եւ քշեցին զայր ու զկին, զծեր և զտղայ և տարան ի Խորասան՝ թուով ՋՌ (6000), որպես և լսեմք».[264]

Նադիրի հրամանով 1742 թ. ավերվեցին Կարսը, Ջավախքը և Կոլան:[265] *Պատահական չէ, որ ականավոր վրաց աշխարհագետ ու պատմաբան Վախուշտ Բագրատիոնին, խոսելով երբեմնի մարդաշատ*

---

[263] Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք 2, Ե., 1959, էջ 328, 350:

[264] Աբրահամ Կրետացի, Պատմություն, Ե., 1973, էջ 67:

[265] Մելիքսեթ Բեկ Լ., Վրաց աղբյուրները, հ. Գ, էջ 74: Հավանաբար այս արշավանքի ժամանակ է Նադիրը պաշարել Թմկաբերդը և գրավել այն: Այդ դեպքերի գեղարվեստական արտացոլումն է տրված Հովհ. Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմում:

Ջավախքի մասին, 18–րդ դ. 40–ական թթ. Ախալքալաքի գավառում հիշատակում է միայն երկու նշանավոր բնակավայր՝ Բարալեթի և Կոկիա փոքրիկ քաղաքները, որտեղ հիմնականում բնակվում էին մեսխեր, հայեր ու հրեաներ:[266] *Ի դեպ, նույն էթնոդավանական իրավիճակն էր նաև Ածղոր քաղաքում, ուր ևս ապրող մեսխերը, հայերը և հրեաները ենթարկվում էին մահմեդականների իշխանությանը:*[267]

18–րդ դարի 40–ական թվականներից Վրաստանն ու Հյուսիսային Հայաստանը հայտնվեցին նաև հյուսիսկովկասյան լեռնականների՝ լեզգիների մշտական հարձակումների կիզակետում: 1743 թ. նրանց առաջնորդ Նուրսալ բեկը, թուրքերի դրդմամբ ներխուժեց Վրաստան, մտավ Ջավախք, որտեղից տարալ հարուստ ավար ու գերիներ:[268] *Լեզգիների արշավանքները կրկնվեցին 18–րդ դարի կեսերին: Ռուսաստանի արտգործկոլեգիային վրաց իշխան Օթար Թումանովի հասցեագրած մի զեկուցագրում նշվում է, որ 1754 թ. հուլիսի 28–ին լեզգիները հարձակվել են օսմանյան հողերի վրա, քրիստոնյաներին գերեվարել են, իսկ Ախալցխայի և Կարսի փաշաները ոչ մի արգելք չեն հանդիսացել նրանց գործողություններին:*[269] *Լեզգիների հաջորդ՝ 1755 թ. արշավանքի ժամանակ, ի թիվս բազմաթիվ բնակավայրերի, ավերվել են Կոկիան և Բարալեթը, բնակչությունը թալանվել է, շատերը գերի են տարվել:*[270] *1760 թ. լեռնականները կրկին ներխուժում են Ախալցխայի նահանգի դյուղերը, գերի տանում շատ մարդկանց: Վրաց թագավոր Հերակլ II Կարայազում անսպասելի հարձակումով ջախջախում է լեռնականներին և գերիներին վերադարձնում իրենց բնակավայրը:*[271] *Սիմեոն Երևանցի կաթողիկոսի (1763–1780) հիշատակարանում կարդում ենք. լեզգիներն «...աւերեալ և անմարդաբնակ լեալ էին գաւառք բազումք...մինչև ՛ի սահմանս Կարսայ, և Ախալցխայու»:*[272]

---

[266] ქართლის ცხოვრება, ტ. IV, გვ. 669-670.
[267] Վրաց աղբյուրները, հ. Գ, էջ 84:
[268] Դավթյան Ա. Խ., Ջավախք, էջ 29:
[269] Վրաց աղբյուրները, հ. Գ, էջ 107:
[270] РГВИА, ф. 20, оп. 1/47, д. 549, лл. 13—14, Армяно-русские отношения в XVIII в., сборник документов, т. 3, Е., 1978, с. 13, Վրաց աղբյուրները, հ. Գ, էջ 108:
[271] Ростомов И. П., Ахалкалакский уезд, с. 18.
[272] Դիւան Հայոց պատմութեան, գիրք Գ, հրատարակեց Գիւտ քահ. Աղանեանց, Թիֆլիս, 1894, էջ 162:

Մի կողմից՝ Վրաստանի դեմ պայքարելու, իսկ մյուս կողմից՝ լեզգիների ասպատակություններից խուսափելու նպատակով Ախալցխայի փաշաներն սկսում են լեռնականներին վերցնել իրենց մոտ ռազմական ծառայության՝ որպես վարձկանների: Սուլթանական կառավարությունն առատորեն վարձատրում է ավարական խաներին և խրախուսում նրանց տեղաշարժը դեպի Ախալցխայի էյալեթ ու այնտեղից՝ հարձակումները Վրաստանի վրա:[273] Կարճ ժամանակում Ախալցխան վերածվում է մարդկանց վաճառատեղիի: Այստեղ վաճառում էին Դոնից ու Հյուսիսային Կովկասից առևանգված ռուս աղջիկներ, վրացիներ, հյուսիսկովկասյան ժողովուրդների ներկայացուցիչներ:[274]

Վրաց թագավորներն էլ, իրենց հերթին լեզգիներին պատժելու համար, ներխուժում էին Ախալցխայի ու Ախալքալաքի գյուղերը, կողոպտում և գերի տանում բնակչությանը, հատկապես քրիստոնյաների: «Գալիս էին թուրքերն ու լեզգիները Ախալքալաքից,– կարդում ենք վրացական տարեգրություններում,– ամայացնում էին Քարթլին: Գալիս էին վրացիները Քարթլիից, ամայացնում էին Ախալցխայի երկիրը և Ջավախեթիան, և այդպես էր մշտապես...ամայանում ու ավերվում էին երկու երկրները. ապրել կարելի էր միայն ամրոցներում և ամրացված ու անմատչելի այլ տեղերում»:[275]

Ձեռք բերելով լեռնականների ռազմական աջակցությունը՝ Ախալցխայի փաշաները հաճախ այնքան էին դառնում ինքնուրույն, որ հրաժարվում էին ենթարկվել կենտրոնական իշխանությանը: Նման պայմաններում Բ. Դուռը հարկադրված էր լինում նույնիսկ ընդառաջ գնալ ռուսական կառավարության բողոքներին՝ փաշաների սանձարձակ գործողությունների առթիվ և խստագույնս պատժում էր նրանց, ինչպես դա տեղի ունեցավ 1759 թ.:[276] Սակայն նման դեպքերը եզակի էին և, որպես կանոն, թուրքական իշխանությունները կայսրության արևելյան նահանգների կառավարիչներին, այդ թվում՝ Ախալցխայի փաշային միշտ սիրաշահում էին և օգտագործում Ռուսաստանի դեմ պայքարում: Ավելին, հայտնի են դեպքեր,

---

[273] Карта Грузии или описание политического состояния царств Карталинского и Кахетинского, Т., 1896, с. 15–17.
[274] Кавказ. Народы Кавказа, т. 1, СПб., 1914, с. 336.
[275] Ростомов И. П., Ахалкалакский уезд, с. 18.
[276] Թուրքական աղբյուրները, հ. Ա, էջ 216–217:

երբ սուլթանը նրանց է վստահել անգամ Էրզրումի վալիի մենաշնորհային իրավունքը՝ սերասկյարությունը: Սիմեոն Երևանցու վկայությամբ 18–րդ դարի 60–70–ական թթ. «փաշայն Ախալցխայու էր Սարասկեար և գլուխ ամենայն զօրացն Օսմանցոց հրամանաւ թագաւորին»:[277]

Վերոհիշյալ ժողովրդագրական քաղաքականության հետևանքով Հարավային Անդրկովկասում ստվարանում էր Դաղստանից եկած լեռնականների թիվը և համապատասխանաբար՝ կրճատվում քրիստոնյաների տեսակարար կշիռը, ուժեղանում մահմեդականացման և հայ առաքելականների կաթոլիկացման գործընթացները: Ախալցխայի սանջակում, ուր իսլամի ազդեցությունն ավելի ուժեղ էր, վրացիների մեջ օրըստօրե աճում էր մահմեդականների, իսկ հայերի մեջ՝ կաթոլիկների թվաքանակը: Այդուհանդերձ, դեռ քրիստոնյա տարրը շարունակում էր գերակշռել: 1733 թ. վրաց թագավոր Վախթանգ VI–ը ռուսական կառավարությանը գրած մի նամակում նշում էր, որ Վրաստանին սահմանակից Ախալցխայի փաշայությունում ապրում էին կրոնափոխ եղած շատ իշխաններ, բայց նրանց «հպատակներն ունեն քրիստոնեական հավատ: Երբ վրացական պետությունը կլինի Նորին կայսերական մեծության իշխանության ներքո, վերոհիշյալ պրովինցիաներից կարելի կլինի թուրքերին պատճառել մեծ վնասներ»:[278]

18–րդ դարի կեսերին ռուս–վրացական հետագա մերձեցման արդյունքում, Վրաստանը 1764 թ. Ռուսաստանի դրդմամբ, հրաժարվեց Ախալցխայի փաշայի միջոցով Օսմանյան կայսրությանը հարկեր վճարելու արատավոր պրակտիկայից: Վրաստանին կրկին հարկատու դարձնելու նպատակով սուլթանն Անդրկովկաս ուղարկեց Տրապիզոնի փաշային:[279]

Լեռնականների, ինչպես և նրանց օժանդակող թուրքական ու պարսկական իշխանությունների կազմակերպած ավերածություններից խուսափելու համար վրաց թագավորները փորձում էին էլ ավելի մերձենալ Ռուսաստանին: 1768 թ. սկսված ռուս–թուրքական պատերազմի օրերին ռուսական դիվանագիտությունը կարողացավ վրաց

---

[277] Դիտե Հայոց պատմութեան, գիրք Գ, էջ 347:
[278] Пайчадзе Г. Г., Русско-грузинские политические отношения в первой половине XVIII века, Т., 1970, с. 77.
[279] Թուրքական աղբյուրները, հ. Ա, էջ 217–218:

Հերակլ II-ին ներքաշել ռազմական կոնֆլիկտի մեջ՝ ընդդեմ Օսմանյան կայսրության: Վրաց արքունիքն էլ գնաց այդ քայլին՝ նպատակ ունենալով ռուսների աջակցությամբ գրավել Ախալցխայի ընդարձակ էյալեթը:

1769 թ. ռուսական վոքրաթիվ զորաջոկատը գեներալ Տոտլեբենի հրամանատարությամբ մտավ Վրաստան և հաջորդ տարվա ապրիլին վրացական զորքերի հետ մասնակցեց Ածղուրի բերդի պաշարմանը: Բայց ռուսների անվճռական գործողությունների հետևանքով արշավանքը ձախողվեց: Այդուհանդերձ, ապրիլի 20–ին Ասպինձայի ճակատամարտում Հերակլի զորքերը հաղթանակ տարան թուրքերի նկատմամբ, իսկ 1771 թ. գրավեցին Խերթվիսի բերդը: 1772 թ. Հերակլ II-ը և Իմերեթիայի Սոլոմոն թագավորը պաշարեցին Ախալքալաքի բերդը: Սակայն Սոլոմոնի անակնկալ հիվանդությունը ստիպեց դադարեցնել պաշարումը: Մարտերի ընթացքում զոհվեցին քրիստոնյա բնակիչներ: Բացի այդ, Հերակլն իր անհաջողության «վրեժը» լուծեց Ախալքալաքի շրջակա գյուղերի, Ախալցխայի ու Արդահանի (նաև Արտահան) բնակչությունից. նա կողոպտեց շատ բնակավայրեր ու բազմաթիվ գերիներով վերադարձավ Վրաստան:

1783 թ. ռուս–վրացական Գեորգիևյան դաշնագրի կնքումից հետո, որով Վրաստանն ընդունում էր ռուսական հովանավորությունը, ցարական կառավարության քաղաքականությունն Անդրկովկասում ավելի գործուն ձևեր ընդունեց: Ռուսական արքունիքը փորձեց իր կողմը թեքել նաև թուրքահպատակ վարչամիավորների, մասնավորապես՝ սուլթանական կառավարությունից կլիսանկախ Ախալցխայի վիշային: Այդ նպատակով 1784 թ. մայիսի 22–ին Ախալցխա՝ Սուլեյման վիշային այցելեց Թիֆլիսում հաստատված ռուսական դեսպանը: Բայց Ախալցխայի էյալեթը Ռուսաստանի հովանավորության տակ դնելու ուղղությամբ գործադրած նրա ջանքերն անցյան ապարդյուն: Բ. Դուրը կարողացավ թանկարժեք նվերներով և տրված նոր արտոնություններով Ախալցխայի փաշային ետ պահել ռուսների ազդեցությունից: Ավելին, նրան հանձնարարվեց երկրամասում գլխավորել պայքարը ռուսական նկրտումների դեմ, միավորել բոլոր ուժերը՝ լայնորեն օգտագործելով նաև հյուսիսկովկասյան լեռնականներին: Թուրք հեղինակ Ջևդեթի վկայությամբ՝ ի հակակշիռ Գեորգիևյան դաշնագրի, Ջլդրի (Ախալցխայի) վալի Սուլեյմանը սուլթանական կառավարությունից ստացավ հանձնարարություն «...լինել աչալուրջ, կրոնամոլությամբ, քաջությամբ ու առնակա-

նուիրեմք Հայտնի Դաղստանի ժողովուրդներին ամեն կերպ սիրաշահել, նրանց առաջնորդներին հանձնել մայրաքաղաքից ուղարկված նվերներն ու կայսերական չնորհագրերը՝ կոչ անելով նրանց ջիհադի, սրբազան պատերազմի»:[280]

Խոսելով օսմանյան տիրապետության ժամանակաշրջանում ինչպես ողջ Արևմտյան Հայաստանում, այնպես էլ Ախալցխայի նահանգում տեղի ունեցած ժողովրդագրական տեղաշարժերի մասին՝ հայերի շրջանում կարելի է առանձնացնել էթնիկ զարգացումների հետևյալ միտումները.

ա) Վրացիների զատ, մահմեդականանում են մեծ թվով հայեր:

բ) Հայերի մի զգալի մասը դավանափոխ է լինում. ովքեր ընդունում են ուղղափառությունը, նախ՝ վրացանում են, ապա, կորցնելով ազգային ինքնապաշտպանական հատկանիշները, բավական արագ էլ մահմեդականանում–թուրքանում են՝ համալրելով «մեսխեթցի» էթնոկրոնական չերտերի չարքերը:

գ) Հայության մի հատված, եվրոպական կաթոլիկ քարոզիչներից ստանալով որոշ աջակցություն և անձի ու գույքի ապահովություն խոստումմներ, կաթոլիկանում է:

Այս բոլոր երևույթները հստակորեն նկատել է Ղուկաս Ինճիճյանը: Խոսելով Ախալցխայի էյալեթի ամայացած ու լքյալ բազմաթիվ բնակավայրերի ու եկեղեցիների առկայության մասին՝ նա նշում է, որ դրանց տարածքում այժմ ապրում են «տաճիկներ», որոնք ժամանակին եղել են հայեր ու վրացիներ. «Գիւղօրէք այսր նահանգի սակաւ ըստ մեծութեան նորա, յորս ըստ մեծի մասին երևին մինչև ցայժմ մեներատանք և եկեղեցիք մեծաչէնք, այլ կամ լքեալք և կամ քայքայեալք: Բնակիչք նոցա ըստ մեծի մասին տաճիկք, դարձեալ գրեթէ առհասարակ կամ 'ի հայոց և կամ 'ի վրաց« (ընդգծումն իմն է –Ա.Մ.):[281] *Այսօրինակ զանգվածային մահմեդականացումը*

---

[280] Tarih Cevdet, c. III, s. 149. Վերոհիշյալ քաղվածքի թարգմանությունը բերվում է ըստ Մ. Զուլալյանի (Զուլալյան Մ. Կ., Արևմտյան Հայաստանը 16–18–րդ դդ., Ե., 1980, էջ 127):

[281] Ինճիճեան Ղ., նշվ. աշխ., էջ 123: Այն տեսակետը, ըստ որի տաճիկների՝ թուրքերի զգալի մասը նախապես եղել են ոչ միայն վրացիներ, այլ նաև հայեր, պաշտպանում է Պ. Հակոբյանը. «Ախլցխայի ...հին գիւղերում ապրում էին նաև թուրք ընտանիքներ,–գրում է նա,– որոնք, ամենայն հաւանականութեամբ, երբեմնի հայեր էին եւ բռնութեամբ հաւատափոխ էին դարձել երկրամասի իսլամացման շրջանում, 17–18–րդ դարերի ընթացքում» (Յակոբյան Պ., նշվ. աշխ., էջ 88): Նույն կարծիքին է նաև արևելագետ Ավ. Փափազյանը (Փափազյան Ա., Թուրքական վավերագրերը Հայաստանի և հայերի մասին (16–19–րդ դարեր), Ե., 1999, էջ 27):

թելադրված էր ոչ միայն քաղաքական, այլ նաև տնտեսական դրդապատճառներով. գործում էր մի օրենք, ըստ որի՝ իսլամն ընդունած քրիստոնյան ազատվում էր դրամահարկ՝ իսփենջ վճարելուց:[282]

Ղ. Ինճիճյանը նկատում է նաև Ախալցխային բնորոշ էթնիկ գործընթացների մյուս առանձնահատկությունը՝ հայերի ուղղափառ, այս դեպքում, ավելի ճիշտ՝ վրացադավան դառնալն ու վրացացումը: Նա այն միտքն է հայտնում, որ նահանգի քրիստոնեաբնակ գյուղերի բնակիչների մեծ մասը նախապես եղել են հայեր. «են և գիւղօրէք բնակեալք մինչև ցայժմ՝ ի քրիստոնէից հայոց նաև՝ ի վրաց, որք գրեթէ առհասարակ սերեալ երևին ի հայկազեանց»[283] *(ընդգծումն իմն է–Ա.Մ.): Այնուհետև, հմուտ պատմաբան–աշխարհագետը հստակ ներկայացնում այդ երևույթի ողջ էվոլյուցիան: «Բազմութիւն իշխանաց մերոց, նաև հասարակ ժողովրդեան,– գրում է նա,– որք ապա սակաւ առ սակաւ սովորեալք՝ ի լեզու՝ ի բարս, նաև ոմանք՝ ի ծէսս վրաց, փոխեցան յազգ նոցա»:*[284] *Ի դեպ, «ծէսս» ասելով, Ինճիճյանն ի նկատի ունի դավանական ծիսական խնդիրները, այսինքն՝ վրացադավանության ընդունումը: Այսօրինակ վրացադավան հայերը համալրեցին նախկինների շարքերը, որոնք 17–րդ դարի հեղինակ Հակոբ Կարնեցուն Տայքում ծանոթ էին որպես «ազգաւ և կրօնիւն վրացի, բայց հայի լեզուաւ խօսէին»:*[285] *Բայց արդեն 18–րդ դարում, առավել ևս Ախալցխայի նահանգում իրավիճակն այլ էր: Այստեղ միջավայրը հիմնականում «տաճկախոս» էր և մասամբ՝ վրացախոս. «Հասարակ լեզու նահանգիս է տաճկերէն և վրացերէն՝ որ հասարակ է նաև ի տաճիկս»: Ուստի հայերը, չարունակում է իր միտքը Ղ. Ինճիճյանը «...խօսին՝ ի լեզու վրաց»:*[286]

Մյուս էթնոերևույթը՝ հայերի կաթոլիկացումն սկսվեց ավելի ուշ՝ 18–րդ դարի երկրորդ կեսին և ընդգրկեց հիմնականում Ախալց-

---

[282] Փափազյան Ա., նշվ. աշխ., էջ 44:
[283] Ինճիճեան, նշվ. աշխ., էջ 123:
[284] Նույն տեղում:
[285] Մաճր ժամանակագրություններ, հ. Բ, Ե., 1956, էջ 554:
[286] Ինճիճեան Ղ., նշվ. աշխ., էջ 122–123: Զավեշտական է, որ անդրադառնալով 18–րդ դ. 60–70–ական թթ. Ախալցխայում տեղի ունեցող էթնոդավանական գործընթացներին, Շ. Լոմսաձեն ոչ միայն չի տեսնում հայերի վրացադավանություն ընդունելու ակնհայտ երևույթը, այլև առանց հիմքի, մերկապարանոց «եզրակացության» է հանգում. իբրև թե «...Ախալցիխեի շատ ուղղափառներ այս ճանապարհով *երևի* (ընդգծումն իմն է – Ա.Մ.) Գրիգորյան (առաքելական) հավատն են ընդունել (ლომსაძე შ., სამცხე ჯავახეთი, էջ 303):

խա քաղաքն ու չրջակա գյուղերը: Ախալցխան, ինչպես նչվեց, ինքնուրույն էջմիածնական թեմ էր: Բայց 18–րդ դարի առաջին կեսին էրզրումի Կարմիր վանքի առաջնորդները Ախալցխայի թեմը ենթարկեցին իրենց:[287] *1750–ական թվականներին այնտեղ հայտնված կաթոլիկ քարոզիչների պառակտչական գործունեության հատւանքով հաջողվեց 60–ական թթ. վերջին համայնքը երկփեղկել: Սկսվեց Հայ առաքելական եկեղեցիների բռնազավթման, էջմիածնից հրաժարվելու մի եղծելի չրջան: Ախալցխայում ստեղծված կացությունից անհանգստացած՝ 1769 թ. նոյեմբերին Ամենայն Հայոց կաթողիկոս Սիմեոն Երևանցին կաթոլիկ քարոզիչներին գրում էր. «Ընդէ՞ր ոչ բաւականանայք այնու, քան եկեալ մտանէք իբրև զգող ի մէջ հօտից մերոց, և գողանայք զոչխարս մեր և օտարացուցանէք ի մէնջ և ձերացուցանէք, վեռեկտէք ի միմեանց իբրև զյափչտակող գայլս և զայլայլութիւնս և զյաւիտենական խռովութիւնս արկանէք ի մէջ սոցա: Զինչ գոյր ձեզ ի յԱխալցխա, հայրենի քաղա՞ք է ձեր, եթէ ունէիք անդ զբնիկ ժառանգութիւնս և զժողովուրդս, զի այնքան երկար մնայիք անդ»:*[288] *Յավոք, կաթողիկոսի չանքերը՝ կաթոլիկացած հայերին իրենց դավանանքին վերադարձնելու ուղղությամբ, հաջողություն չունեցան:*[289] *Արդյունքում Ախալցխայի և նրա գյուղերի մեծ մասը դարձավ կաթոլիկ: Նրանց ձեռքն անցան քաղաքի հինավուրց Ս. Նչան և Ս. Հովհաննես եկեղեցիները: Ս. Աստվածածին եկեղեցին հայտնվեց կապուչինականների հսկողության ներքո:*[290] *Եկեղեցիներից զրկված և վոքրամասնության մեջ հայտնված հայ առաքելական համայնքը ստիպված ձևնամուխ եղավ նոր եկեղեցու շինարարության:*

---

[287] Սիմեոն Երևանցի, Ջամբռ, գիրք, որ կոչի յիշատակարան, Վաղարշապատ, 1873, էջ 41, 247 և Դիւան Հայոց պատմութեան, գիրք Գ, էջ 763: Ըստ մի նյութի՝ մինչ այդ Ախալցխան Ախալքալաքի և Չլդրի հետ եղել է Կարսի նվիրապետական աթոռի ենթակայության տակ (Դիւան Հայոց պատմութեան, գիրք Գ, էջ 800 և Օրմանեան Մ., Ազգապատում, հ. Բ, Ս. Էջմիածին, 2001, էջ 3504):

[288] Мартиросян В. М., Чобанян П. А., Документы, Кавказ и Византия, вып. 3, Е., 1982, с. 240.

[289] Ախալցխայի և շրջակայքի գյուղերի կաթոլիկացման պատմությունը մանրամասն տե՛ս Դիւան Հայոց պատմութեան, գիրք Գ, էջ 347, 622–623, 693, 736–737, 763, Օրմանեան Մ., Ազգապատում, հ. Բ, էջ 3537-3540, Мартиросян В. М., Чобанян П. А., նույն տեղում, էջ 237–244 և Յակոբեան Պ., նշվ. աշխ., էջ 51–72:

[290] Ինճիճեան Ղ., նշվ. աշխ., էջ 124, Յակոբեան Պ., նշվ. աշխ., 72:

Կաթոլիկացման գործընթացները բավականին մեծ ծավալներ ընդունեցին նաև Նահանգի այլ գավառներում՝ Արդվինում, Արդահանում և այլուր:

Օսմանյան տիրապետության շրջանում ազգային–կրոնական հալածանքների, լեռնականների ասպատակություններից ազատվելու մղումներով, կաթոլիկացած հայերի մեծ մասը, ստանալով Հռոմի պապի և եվրոպական երկրների որոշ աջակցությունը, առժամանակ խուսափեց մահմեդականացումից ու վրացացումից և չարունակեց պահպանել իր նախկին հայեցի ինքնության շատ տարրեր: Ուստի հասկանալի է 18–րդ դարի վերջին հիմնականում ամայի ու անմարդաբնակ դարձած Ախալցխայի և նրա շրջակա գավառների հայության մեջ կաթոլիկ հայերի թվական գերակշռության և ինքնուրույն կաթոլիկական հոգևոր թեմ, նստավայր ու քահանայական դաս ունենալու փաստը:[291]

18–րդ դարի վերջին կաթոլիկ հայերի մեծ մասը բաժին էր ընկնում Ախալցխա բերդաքաղաքին: «Բնակիչք նորա,– կարդում ենք Ղ. Ինճիճյանի աշխատությունում,– առհասարակ իբրև 30000 տունք (սետք է հասկանալ նույնքան չունէ – Ա.Մ.). որք են տաճիկք, վիրք, և յազգէս հայոց առաւել քան զվիրս»:[292] *Պարզ է, որ «տաճիկների» մեջ իրականում թյուրքական ծագում ունեցողները սակավաթիվ էին և մեծամասնությունն էին դարձել ի հաշիվ մահմեդականացած վրացիների ու հայերի: Վերջիններս, ինչպես նշվեց, ավելի բազմամարդ էին, քան վրացիները: Մխիթարյան միաբանության անդամ Ինճիճյանը, հասկանալի պատճառով անհրաժեշտ չի գտել ընդգծել այդ հայերի կաթոլիկական դավանանքը՝ նրանց իրավամբ համարելով հայեր և նախապատվությունը տվել է միայն դրանց հայ լինելու հանգամանքին: Այդ ժամանակ դուստ հայաբնակ են եղել Ախալցխային կից, փաստորեն նրա թաղամաս դարձած Իվլիտան, Խզաբավլան (100 տուն), խառը՝ հայ–վրացական բնակչություն են ունեցել Ջավախքում՝ Նաքալաքևը, Ախալցխայի շրջատարածքում՝ Վալեն, Արալը, Ուդեն, Աբասթումանը և այլն:*[293] *Ղ. Ինճիճյանն առհասարակ*

---

[291] Յակոբեան Պ., նշվ. աշխ., 83–84:

[292] Ինճիճեան Ղ., նշվ. աշխ., էջ 124:

[293] Նույն տեղում, էջ 125: «Խառը» գյուղեր ասելով՝ Ինճիճյանն ի նկատի ունի ոչ միայն հայ–վրաց բնակչությամբ գյուղերը, այլ նաև՝ հայ և ուղղափառ դարձած, այսինքն՝ վրացացած բնակիչներին:

Ախալցխայի, Խերթվիսի, Քոբլիանի և Ախլգենի եկեղեցիներում հիշատակում է 47 բնակավայր՝ նախկին հարյուրավոր բնակավայրերի փոխարեն:

Ավելի աղետալի վիճակ էր Ջավախքում, որը, լինելով ոչ հայանպաստ էթնոգործընթացների կիզակետում, հիշեցնում էր բազմաթիվ լքյալ բնակավայրերի մի ամայատեղի: Նաքալաքևն ու Խիզաբավրան կաթոլիկացել էին, Կոթելիան և մի շարք այլ գյուղեր՝ քանիցս ենթարկվել բռնագաղթերի: Պատահական չէ, որ երբեմնի մարդաշատ Ջավախքում 18–րդ դ. վերջին Ինճիճյանը հիշատակում է «Խրթէզը»՝ Խերթվիսը, այն էլ որպես «գիւղ մերձ ՛ի յախսալ (Ախալքալաք – Ա.Մ.) և «Փառավանը» կամ «Փառևանը»՝ «գիւղ առ լերամբ և առ լճիւ որք յանուն նորա կոչին»:[294] Թերևս բարվոք վիճակում էր մնացել միայն Ախալքալաք բերդաքաղաքը՝ պարսպապատ ու անխոցելի լինելու պատճառով: Նրա մասին կարդում ենք. «Ունի և բերդ ամուր: Բնակիչք նորա տունք իբր 600 յազգէս հայոց և ՛ի վրաց»:[295] Սակայն, ինչպես կտեսնենք, Ախալքալաքը ևս չմնաց այդ վիճակում և ռուս–թուրքական պատերազմների ժամանակ մեծապես տուժեց:

Այսպիսով՝ հստակորեն երևում է, թե օսմանյան լուծը որքան աղետաբեր էր եղել ինչպես հայ, այնպես էլ վրացի բնակչության էթնոկրոնական վերակերպումների, ազգաճնշման համար: Ցավոք, այս գործընթացները չդադարեցին և շարունակվեցին նաև 19–րդ դարի առաջին քառորդին և, ի վերջո, հանգեցրին երկրամասի ժողովրդագրական պատկերի արմատական փոփոխության:

[294] Նույն տեղում, էջ 127:
[295] Նույն տեղում:

ՋԱՎԱԽՔԸ 19-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԵՐԵՍՆԱՄՅԱԿԻՆ

Ա) Վարչաժողովրդագրական իրավիճակը 19-րդ դարի առաջին տասնամյակներին

1801 թ. Արևելյան Վրաստանը Ռուսաստանին միացնելուց հետո ռուս-թուրքական սահմանագիծն սկսվում էր Սև ծովի արևելյան ափերից, Գուրիական լեռներով հասնում մինչև Երևանի խանության սահմանները: Այդ երկայնքով թուրքերն ունեին մի շարք պաշտպանական ամրոցներ՝ Փոթի, Բաթում, Ածղոր, Ախալցխա, Խերթվիս, Ախալքալաք, Արդահան, Կարս, Մաղասբերդ և այլն, որոնք լուրջ խոչընդոտներ էին ռուսական առաջխաղացման ճանապարհին: Ինչպես պարսկական, այնպես էլ տարածաշրջանում նորահաստատ ռուսական տերության դեմ օսմանյան տիրույթների պաշտպանության գործը, նախկինի պես, դրված էր Էրզրումի սերասկյարի վրա: Նրան ենթարկվում էին Էրզրումի, Վանի, Դիարբեքիրի, Սեբաստիայի, Կարսի և Ախալցխայի նահանգների փաշաները: «Արզրումի սերասկյարը,– գրում էր Ն. Ուշակովը,– որը կառավարում է ինչպես վերոհիշյալ (Ախալցխայի, Կարսի, Բայազետի, Էրզրումի, Մուշի և Տրապիզոնի – Ա.Մ.), այնպես էլ մյուս փաշայությունները՝ Վանի, Մոսուլի, Դիարբեքիրի, Սվազի և Թոխատի, կրում է Հայաստանի և Անատոլիայի կառավարչի տիտղոսը՝ անսահմանափակ իշխանությամբ»:[296]

Ախալցխայի նահանգը, որ հյուսիս-արևմուտքում սահմանակցում էր Տրապիզոնի նահանգին և Սև ծովի առափնյա շրջաններին, տարածվում էր մինչև Փարվանա լիճը և պարսկական տերության սահմանները՝ Շորագյալի սուլթանություն: Այն հարավ-արևմուտքում՝ Ճորոխի ավազանում բաժանվում էր Էրզրումի, հարավում՝ Չղրի լեռներով Կարսի նահանգներից, հյուսիսում՝ Ալջարական, Թռեղքի ու Աբուլ-Սամսարի լեռնաշղթաներով՝ 19-րդ դարի սկզբին ռուսական կայսրությանն անցած Գուրիայից, Իմերեթիայից և Արևելյան Վրաստանից: Ախալցխայի նահանգն ընդգրկում էր Կուր

[296] История военных действий в азиатской Турции в 1828–1829 г., ч. 1, с. 54–55.

գետի վերին հոսանքի և Ճորոխի միջին հոսանքի ավազանները: Այնտեղ հաշվվում էր յոթ լիճ. առավել խոշորներն էին Զլդրը (հնում՝ Ծովակ Հիւսիսոյ), Փարվանան, Խանչալին, Սաղամոն, Խոզափին և այլն:

Ախալցխայի էյալեթը դարասկզբին, ըստ Ղ. Ինճիճյանի, տրոհվում էր 24 սանջակի՝ Ախալցխա, Նարիման, Օլթի, Փենեք կամ Բանակ, Թավուսկեր (Տայոց ձոր), Շավշեթ, Վերին և Ներքին Իմերխևներ, Արտանուջ, Արդահան, Արդվին, Ածղոր, Քոբլիան, Փոցխով, Զլդր, Խերթվիս, Ախալքալաք, Սինգոթ, Մախճել, Վերին և Ստորին Աչարա, Թերալեթ (հավանաբար՝ Թրիալեթի), Պարխալ, Կիսկիմ, Բերդագրակ, Լիվանե: Ընդ որում, նույն հեղինակի վկայությամբ Լիվանեն ավելի մեծ վարչամիավորի նշանակություն է ունեցել և իր մեջ ներառել է Արդվինի, Սինգոթի, Պարխալի ու Կիսկիմի գավառները:[297]

Սանջակները կառավարվում էին փաշաների նշանակած բեկերի կողմից: «Որոշ բեկեր՝ ռազմատենչ համայնքների առաջնորդները, որ ծագում էին ազնվական տոհմերից, ունենալով ժողովրդի վրա ուժեղ ազդեցություն, հաճախ նրանց (փաշաներին—Ա. Մ) չէին հպատակվում»:[298] Ավելի անկախ և ինքնիշխան կարգավիճակ ուներ Ախալցխայի փաշան, որն էլ իր հերթին երբեմն համարձակվում էր չընդունել ոչ միայն սերասկյարի, այլ անգամ սուլթանի իշխանությունը: Հաճախ չկարողանալով զենքի ուժով հպատակեցնել փաշաներին՝ «սուլթանները,— գրում է Պ. Զուբովը,— բավարարվում էին Ախալցխայի քաջարի բնակիչների ինքնակամ հնազանդությամբ՝ նրանց տալով կատարյալ անկախություն իրենց գործողություններում. ամեն մի հանցագործ, փախչելով Ախալցխա, դառնում էր անհասանելի արդարադատության համար: ...Կոստանդնուպոլսի արքունիքն այս (վիճակը—Ա.Մ.) հարկադրված հանդուրժում էր՝ բավարարվելով այն հանգամանքով, որ նահանգը տալիս էր ռազմատենչ զինվորներ, որոնք պահպանում էին սահմանները»:[299] Սուլթանական կառավարությունն այնքան էր զգուշանում Ախալցխայից, որ նույնիսկ չհամարձակվեց նահանգում հրապարակել ենիչերիների վերաց-

[297] Ինճիճեան Ղ., նշվ. աշխ., էջ 124:
[298] Обозрение российских владений за Кавказом, ч. 4, с. 208.
[299] Зубов П., Картина Кавказского края, с. 281—282.

ման ֆերմանը, ուստի վերջիններս այստեղ չարունակեցին իրենց գործունեությունը:[300]

Յուրաքանչյուր գավառում հաշվվում էր մոտավորապես 20–ից 60 գյուղ,[301] *որոնց բնակչության թվաքանակի մասին չկան ճշգրիտ տվյալներ: Թուրքական իշխանությունները, որոնք հարկերը մշտապես գանձում էին կամայական սկզբունքով՝ գյուղական համայնքների ավագների միջոցով, մտահոգված չէին լրացուցիչ ծախսեր պահանջող հստակ վիճակագրություն ունենալու «հոգսով»: Իրենց հերթին, ձգտելով ավելի նվազ քանակությամբ հարկեր վճարել, գեղջավագները արհեստականորեն պակասեցնում էին հարկատու բնակչության թիվը: Ինչևէ, նման պայմաններում պահպանված ոչ ճշգրիտ տվյալներով 1828–1829 թթ. ռուս–թուրքական պատերազմի նախօրյակին Ախալցխայի էյալեթում ապրում էր 34,2 հազ. ընտանիք, որից արական սեռի՝ 136 հաղարը:*[302] *Եթե ենթադրաբար իգական սեռի բնակիչներին համարենք նույնքան՝ 136 հազ., ապա ամբողջ նահանգի բնակչության թիվը կկազմի 272 հազ., այսինքն՝ յուրաքանչյուր ընտանիքում միջինը 8 մարդ, ցուցանիշ, որը համապատասխանում է արևմտահայ նահանգների ընտանիքների անդամների միջին մեծությանը:*[303]

Ամենախիտ բնակեցված էր Ախալցխայի սանջակը՝ առաջին հերթին ի հաշիվ նահանգի կենտրոնավայր Ախալցխայի:[304] *Այս գավառին 1828–1829 թթ. ռուս–թուրքական պատերազմի նախօրյակին բաժին էր ընկնում չուրջ 5 հազ. ընտանիք կամ 40 հազ. չունչ, յուրաքանչյուր քառ. վերստի վրա՝ 408 մարդ:*[305]

---

[300] Зубов П., Картина Кавказского края, с. 282, История военных действий, ч. 1, с. 59–61.

[301] История военных действий, ч. 1, с. 57. Գավառներից, ինչպես կնշվի ստորև, միայն Ասպինձան էր, որ ուներ 20 ընտանիքից պակաս բնակիչ:

[302] Обозрение российских владений за Кавказом, ч. 4, с. 209. 24 սանջակներից 10–ում, որոնք 1829 թ. սեպտեմբերին Ադրիանապոլսի պայմանագրով անցան Ռուսաստանին, հաշվվում էր 13,5 հազ. ընտանիք կամ մինչև 70 հազ. չունչ (Статистическое описание Закавказского края, с. 179). Ուշակովն ավելի ճշգրիտ հաշվում է 34283 տուն, մոտավորապես 140 հազ. արական չունչ (История военных действий, ч. 1, с. 57), հետևաբար, ընդամենը՝ 280 հազ. մարդ:

[303] Տես Մելքոնյան Ա., էրզրում, էջ 112:

[304] Չափազանցված տվյալներով Ախալցխայում հաշվվում էր 40–50 հազ. բնակիչ, որից 16 հազար կարողային գինվորականներ կամ զենքի տակ գտնվող բնակիչներ (Обозрение российских владений за Кавказом, ч. 4, с. 210, 217). Իրականում Ախալցխայի բնակչությունը չէր կարող գերազանցել 25–30 հազարը:

[305] Обозрение российских владений за Кавказом, ч. 4, с. 209.

Ախալցխայի նահանգի քրիստոնյա բնակչության զգալի մասը, հատկապես 18–րդ դարի ընթացքում լեռնականների հարձակումների և 19–րդ դարի սկզբին միջցեղային բախումների, ինչպես և 1806–1812 թթ. ռուս–թուրքական պատերազմների ժամանակ խաղաղ բնակչության կոտորածների, արտագաղթերի ու բռնագաղթերի, մշտատև համաճարակների, զանգվածային մահմեդականացման հետևանքով, նկատելիորեն նվազեց: Ուղղափառ վրացիներն ու կաթոլիկացած հայերը դարձան փոքրամասնություն: «Այս փաշայության բնակչությունը նախկինում ավելի զգալի էր,– կարդում ենք ռուսական աղբյուրներում,– որն ապացուցվում է ամենուր հանդիպող գյուղերի և ամրոցների ավերակներով, անմշակ ու ամայացած դաշտերով: Նման ավերակ պատկերը հատուկ է մահմեդաբնակ (այլ– Ա.Մ.) հողերին»:[306]

Մեծամասնություն դարձած մահմեդականների մեջ դեռ նկատելի էին նախկին վրացիներն ու հայերը: Զգալի թիվ էին կազմում նաև Օսմանյան կայսրության տարբեր շրջաններից ներգաղթած թուրքերը, քրդերը, մասամբ նաև՝ հույները, հրեաները և այլք: Հայ կաթոլիկների մի մասը ցավալիորեն կորցրել էր իր հայկական դիմագիծը, նույնիսկ դարձել էր թուրքախոս կամ վրացախոս:[307] *Տեղաբնիկ ախալցխացի հայերի մասին աղբյուրները վկայում են, որ «...նրանք մեծամասամբ կաթոլիկներ են, չեն հանդուրժում իրենց ցեղակիցներին և նույնիսկ իրենց հայ չեն անվանում, խոսում են ավելի շատ թաթարերեն (թուրքերեն – Ա.Մ.) և վրացերեն, բնույթով հար և նման են այնտեղի վրացիներին, թեև նրանցից խելացի են և շրջահայաց»:*[308]

Կարափափախները, որոնց անվանում են նաև թարաքամաններ, թուրքական ցեղեր էին և Ախալցխայի փաշայությունում հայտնվել էին 18–րդ դարի վերջերին Բորչալուի և Շամշադինի շրջաններից՝ չհագրդռված թուրքական իշխանությունների տված արտոնություններից (հարկ չէին վճարում, զինվոր էին տալու փա-

---

[306] История военных действий, ч. 1, с. 57.

[307] Статистическое описание Закавказского края, с. 180.

[308] Обозрение российских владений за Кавказом, ч. 4, с. 211. Նույն միտքը հանդիպում ենք Պ. Զուբովի մոտ. «Հնաբնակ հայերը վարում են խաղաղ կյանք, զբաղվում են բացառապես գյուղատնտեսությամբ, արդյունագործությամբ և առևտրով: Նրանք բոլորը կաթոլիկներ են և վիրավորվում են հայ անունից (Зубов П., Картина Кавказского края, с. 203).

չային անհրաժեշտության դեպքում):[309] *Նրանք սկզբում բացառապես քոչվորներ էին, հետզհետե անցան նստակեցության՝ հողամշակության և այգեգործության: Կարափափախների մի փոքրաթիվ մասն էլ, որոնք մոտ 40 ընտանիք էին ու կրում էին Էմիր–Հասաններ անունը, կատաղի, ռազմատենչ ցեղեր էին և բնակվում էին Խերթվիսի սանջակի ձմեռանոցներում: Հրեաները բնակվում էին Ախալցխայի առանձին թաղամասում: Քրդեր ավելի շատ կային Ճաճարակի սանջակում:*

Ախալցխայի փաշայի մոտ ծառայության անցած դաղստանյան լեռնականները՝ լեզգիները և այլք, մշտական բնակության վայր չունեին: Որպես վարձկաններ՝ նրանք տեղաշարժվում էին տարբեր գավառներում և ավերիչ հարձակումներ գործում չրջակա տարածքների վրա: Նրանք, ստանալով թուրքական իշխանությունների կողմից բազմապիսի օժանդակություն, հետզհետե անցնում էին նստակեցության և հրաժարվելով վերադառնալ Դաղստան՝ համալրում էին երկրամասի մահմեդականների չարքերը:

Պատմական Ջավախքի տարածքը նախկինի նման ընդգրկում էր ամբողջ Ախալքալաքի և Խերթվիսի, մասամբ Ջղրի գավառները, ինչպես և Ասպինձայի սանջակի մեծ մասը: Այս տարածքը նախորդ չրջանում մեծապես տուժել էր, կորցրել նախկին մարդաշատ պատկերը, հիմնականում զրկվել քրիստոնյա հայ և վրացի բնակչությունից:

Ասպինձայի սանջակը հիմնականում ներառնում էր Ներքին Ջավախքը: Հյուսիսից սահմանակից էր Ածղուրի, արևելքից և հարավից՝ Խերթվիսի և մասամբ՝ Ախալքալաքի, արևմուտքից՝ Ճաճարակի սանջակներին: Այն խիտ չէր բնակեցված: Գավառի 12 գյուղերում հազիվ հաշվվում էր 372 չունչ բնակիչ, մեծ մասամբ՝ թուրքեր:[310] *Գավառային կենտրոն Ասպինձան նույնպես կիսավեր վիճակում էր՝ իր հինավուրց ամրոցով:*

Ածղուրի և Ասպինձայի սանջակներից արևելք ընկած Խերթվիսի սանջակը համեմատաբար խիտ էր բնակեցված: 38 գյուղերում, որոնց մեծ մասը սփռված էր Ախալքալաքի սարահարթի հյուսիսային մասում, ապրում էին հայեր, այդ թվում՝ կաթոլիկներ, վրացիներ, մահմեդականներ և հրեաներ:[311] *Կենտրոնատեղին՝ Խերթվիս պարս-*

[309] Обозрение российских владений за Кавказом, ч. 4, с. 213.
[310] Նույն տեղում, էջ 225–226:
[311] Նույն տեղում, էջ 276:

պապատ բերդաքաղաքը, գտնվելով Կուրի և նրա աջակողմյան Թափարվան վտակի կազմած թերակղզու բարձունքի վրա, դարձել էր անմատչելի, ռազմավարական նշանակության ամրոց:

Խերթվիսի սանջակից հարավ–արևելք Ախալքալաքի գավառն էր: Հարավ–արևմուտքից այն սահմանակցում էր Ջղրի և Արդահանի գավառներին, արևելքից՝ ռուսական տիրույթներին (Քարթլի և Բորչալու): Այս գավառը ևս պատերազմական գործողություններից առավելապես տուժած շրջաններից էր: Հայաշատ և խիտ բնակչությամբ երբեմնի աչքի ընկնող այս գավառում այժմ մնացել էր 35 կիսավեր գյուղ, ուր ապրում էին մահմեդականներ (թուրքեր, լազեր, քրդեր), հայեր և վրացիներ:[312] Գյուղերի մեծ մասը, սփռված լինելով ընդարձակ սարահարթում, ավելի խոցելի էր թշնամիների հարձակումների համար, ուստի ավելի շատ էր տուժել: Վարչական կենտրոն Ախալքալաքի դիրքը ռազմավարական մեծ կարևորություն էր ներկայացնում, քանզի ընկած էր Գյումրիից Ախալցխա, Ծալկայից Ախալցխա և Արդահան–Կարս տանող ճանապարհների վրա: Ախալքալաք բերդաքաղաքը ևս կառուցված էր երկու գետերի՝ Թափարվանի և նրա Քառասնաղբյուր կամ Գոնդուրաջուր վտակի կազմած թերակղզու վրա: Քառանկյան տեսք ունեցող Քարաշեն պարիսպների միջև բարձրանում էին կլոր աշտարակները՝ ատամնաձև կրակակետերով: Հյուսիսային և հարավային կողմերում բացվում էին երկաթե դարպասներ: Արևելյան կողմում երկհարկանի միջնաբերդն էր, որտեղից քարակերտ երկու գաղտնուղիներ իջնում էին Թափարվան և Գոնդուրաջուր գետերը: Ախալքալաքը ևս մարդաշատ չէր: Այնտեղ գլխավորապես տեղակայված էին գավառի ռազմական ուժերը, մինչև հազար մարդ՝ մեծ մասամբ թուրքեր և հյուսիսկովկասյան լեռնականներ:

Արդեն 19–րդ դարի սկզբին Ախալցխայի թեմի առաջնորդությունը կաթոլիկներին անցնելուց հետո, Ջավախքը հոգևոր առումով դրվեց Էրզրումի թեմական առաջնորդ կարապետ արքեպիսկոպոսի իրավասության ներքո: Դա հստակորեն երևում է բազմաթիվ արխիվային վավերագրերից: Այդ փաստաթղթերի մի մասը Ջավախքի ծխականներից իրենց առաջնորդ կարապետ սրբազանին ուղղված խնդրագրեր, նամակներ են, որոնցում արծարծվում են տեղի հոգևոր գործերին առնչվող զանազան հարցեր: Դրանցից մեկում՝ գրված

[312] Նույն տեղում, էջ 230:

1819 թ. մայիսին, Ախալքալաքից ավելի քան տաս երևելիներ՝ երեց Մկրտիչը, Հովհաննես Անանիկյանը, մահտեսի Էգնագիոսը և ուրիշներ խնդրում են Կարապետ արքեպիսկոպոսին՝ Թադեոսին ձեռնադրել և ճանաչել իրենց ծխատեր քահանա:[313]

Տկարացած տեղաբնիկ ջավախքցիները չարունակում էին ապրել Բարալեթի, Կոկիա, Դիլիսկա և այլ գյուղերում: 1828 թ. Կոկիայում հաշվվում էր 29 հայ ընտանիք կամ 233 չունչ (115–ը՝ արական, 118–ը՝ իգական սեռի):[314]

Բ) Ախալցխայի էյալեթն ու Ախալքալաքի գավառը 19-րդ դարի սկզբին ռուսական ռազմաքաղաքական ծրագրերի ոլորտում

18–րդ դարի վերջին ձեռնարկած առաջին լուրջ ռազմաքիլվանագիտական քայլերից հետո Ռուսական կայսրությունը, նպատակ ունենալով մեկընդմիշտ հաստատվել Անդրկովկասում, միայն 19–րդ դարի սկզբից գործնականորեն ակտիվացրեց իր արևելյան քաղաքականությունը: 1801 թ. Արևելյան Վրաստանի միացումը Ռուսաստանին այդ քաղաքականության հաջող սկզբնաքայլն էր: Դրանով ռուսական պետությունը ձեռք բերեց կարևոր հենարան տարածաշրջանում իր ազդեցությունն ընդլայնելու նպատակով: Քարթլի–Կախեթի տարածքը, ինչպես և Հյուսիսային Հայաստանի մի շարք գավառներ, սահմանակից լինելով Օսմանյան կայսրության Ախալցխայի էյալեթին և Արևելյան Անդրկովկասի պարսկական խանություններին, լայն հնարավորություններ ընձեռեցին երկրամասում ցարիզմի նվաճողական քաղաքականության հետագա ակտիվացման համար:

Արևելյան Վրաստանից հետո ռուսական զինվորական իշխանությունները խաղաղ ճանապարհով Երևանի խանությանը տիրելու փորձեր կատարեցին: Նրանք հույս ունեին, որ կհաջողվի համոզել Երևանի Մամադ խանին ընդունել ռուսահպատակություն և իր խանությունը փոխանցել ռուսական գերիշխանության տակ: Այդ հարցում ցարական դիվանագիտությունը որոշակի հույսեր էր կապում Օսմանյան կառավարության աջակցության հետ: Բ. Դուռը խոստա-

[313] Մատենադարան, Կարապետ արք. արխիվ, թղթ. 163ա, վավ. 305, թ. 1:
[314] Դավթյան Ա., Հայկական և հայախառը բնակավայրերը Վրաստանում, էջ 161:

նում էր օգնել ռուսներին՝ իր հերթին ակնկալելով վերջիններիս օժանդակությունը փաստական կխանակախությունից օգտվող Ախալցխայի Շերիֆ փաշային հպատակեցնելու խնդրում: Այսպիսով՝ դարասկզբին Անդրկովկասում ստեղծվել էին բարդ փոխհարաբերություններ, երբ մեկ երկրի հպատակ վարչամիավորի կառավարիչը, ունենալով թշնամական հարաբերություններ իր երկրի իշխանությունների հետ, դաշնակցում էր օտար պետությունների հետ: Ընդառաջ գնալով թուրքական կառավարության խնդրանքներին՝ 1801 թ. ռուսական հրամանատարությունը խռովարար Շերիֆ փաշային հպատակեցնելու համար ռազմական օգնություն ցուցաբերեց էրզրումի սերասկյարին. հայազգի մելիք Աբովն իր զորաջոկատով մասնակցեց Ախալցխայի նահանգի տարածք կազմակերպված արշավանքին: Իսկ երբ Երևանի Մամադ խանը փորձեց օգնության հասնել Շերիֆ փաշային, Վրաստանում ռուսական զորքերի գլխավոր հրամանատար Կարլ Կնորինգն ու Կարսի փաշան փակեցին նրա ճանապարհը և ծանր պարտության մատնեցին: Այս փուլում ռուս–թուրքական համագործակցությունն այնքան խորացավ, որ ձեռք բերվեց նաև համաձայնություն համատեղ ուժերով լեզգիների դեմ պայքարելու նպատակով:[315] Սակայն Երևանի խանությանը խաղաղ եղանակով տիրելու ռուսների ջանքերն արդյունք չտվեցին:

Ալեքսանդր I–ը, Վրաստանում ռուսական զորքերի հրամանատար Կ. Կնորինգի գործողություններն համարելով անարդյունավետ, 1802 թ. նրա փոխարեն նշանակեց վրաց ազնվականական տներից սերված գեներալ Պավել Ցիցիանովին: Վերջինիս թեկնածությունը կարող էր ինչ–որ չափով շոյել պետականության անկումից դժգոհ վրաց արքունիքի անդամների ու ազնվականության ինքնասիրությունը և ստեղծել պատրանք վրացական թագավորության պահպանման խնդրում: Նոր, երիտասարդ գլխավոր հրամանատարն անմիջապես ձեռնամուխ եղավ ակտիվ ռազմաքաղաքական, ինչպես և առևտրատնտեսական գործողությունների. նախ, 1803 թ. ապրիլին նրա հրամանով Արևելյան Վրաստանի և Հարևան պարսկա–թուրքական վարչամիավորների սահմանագլխին տեղակայվեցին չորս մաքսային կետեր, որոնք հսկողության տակ վերցրեցին ոչ միայն ապրանքների ելքն ու մուտքը, այլև ծառայեցին իբրև ռազմական հե-

[315] Присоединение Восточной Армении к России, т. 1, с. 107–109.

նակետեր հնարավոր հարձակումներից Արևելյան Վրաստանի սահմանները պաշտպանելու համար:[316]

Արևելյան Վրաստանի հետ 1801 թ. Ռուսաստանին անցած Ծալկայում տեղակայված մաքսատունը, որը նոր ստեղծված չորս մաքսատների մեջ ուներ առանձնահատուկ նշանակություն, կարևոր դեր խաղաց օսմանյան սահմանակից նահանգների՝ Ախալցխայի և Կարսի շրջանների հետ առևտրատնտեսական հարաբերությունների աշխուժացման գործում: Ընկած Քարթլիի թագավորության հարավում՝ Ծալկան մեծապես տուժել էր Ախալքալաքի կողմից լեզգիների կատարած ավազակային հարձակումներից և դարասկզբին վերածվել լիակատար ավերակի ու գրեթե անմարդաբնակ էր: Ծալկայի մաքսատունը պետք է նաև կանխեր թուրքահպատակ գավառներից, հատկապես Ախալքալաքից, ուր 1802 թ. բռնկվել էր ուժեղ համաճարակ, հիվանդությունների փոխանցումը Արևելյան Վրաստան: Նոր մաքսատներ տեղադրելու Ցիցիանովի այս ձեռնարկումը 1803 թ. հոկտեմբերին արժանացավ Ալեքսանդր I–ի խրախուսական նամակին, որում նա կարգադրում էր դրանցից գանձվող տուրքերը սահմանել՝ ըստ Աստրախանի մաքսատան չափերի և ստացված չահույթը ի սպաս դնել Վրաստանի կարիքներին:[317] Շուտով Պ. Ցիցիանովը նոր քայլեր կատարեց վերոհիշյալ մաքսատներից Օսմանյան Թուրքիա տարվող ապրանքների երկուստեք զննումների, բարձր տուրքերի վճարման կարգը հեշտացնելու ուղղությամբ:[318] Նորանվաճ տարածքը տնտեսապես ամրապնդելու և դրան հարակից շրջանները Ռուսաստանի հետ կապելու նպատակով, անձամբ ցարը, ռուսական սենատը, պետական քարտուղար կոմս Ն. Ռումյանցևը կատարեցին որոշակի քայլեր: Նրանք հատկապես կարևորում էին Կասպից և Սև ծովերի միջև առևտրատնտեսական հարաբերությունների աշխուժացումը, որում հատուկ դեր էին հատկացնում հայերին: Ողջունելով Պ. Ցիցիանովի քայլերը՝ Ն. Ռումյանցևը 1804 թ. հուլիսին գրում էր. «Կարծում եմ, որ այնտեղ տեղակայված մաքսային ծառայությունները գլխավորապես պետք է Կասպից ու Սև ծովերի առևտուրը կա-

[316] АКАК , т. 2, Т., 1868, с. 239.
[317] Նույն տեղում, էջ 242:
[318] Присоединение Восточной Армении к России, т. 1, с. 221.

պեն հայերի առևտրի հետ, որոնք, ինչպես հայտնի է, իրենց շրջանառությունը հասցնում են նույնիսկ մինչև Հնդկաստան»:[319]

Սակայն վերոհիշյալ տնտեսական բնույթի ձեռնարկումները հաջողություն չէին կարող ունենալ, եթե նվաճված երկրամասը, որ մեծապես ավերվել էր նախորդ ժամանակաշրջանում, կրկին չբնակեցվեր ու անխոցելի չդառնար թուրք–լեզգիական ու պարսկական ներխուժումների հանդեպ: Այդ իմաստով առավել մեծ վտանգ էր ներկայացնում սահմանամերձ Ախալցխայի նահանգը: «Մեր սահմանների հանգստությունն ու անվտանգությունն անիմաստ կլինեն,– գրում էր ռազմական պատմաբան Ն. Դուբրովինը,– քանի դեռ Ախալցխայի փաշայությունը չէր լինի մեր ձեռքում: Այն ձեռք բերելուն ռուսական կառավարությունը ձգտում էր ներկա հարյուրամյակի (19–րդ դար – Ա.Մ.) սկզբներից»:[320]

Գեներալ Ցիցիանովի առաջնահերթ խնդիրներից մեկը դարձավ Ախալցխայի փաշայության նկատմամբ ռուսական քաղաքականության մշակումը: Ցարական արքունիքը խիստ կարևորում էր Օսմանյան կայսրության հյուսիսարևելյան շրջանների՝ առաջին հերթին այդ վարչամիավորի գրավումը, սակայն այդ պահին ավելի շատ հակված էր դեպի համեմատաբար թույլ Պարսկաստանից ռազմական ճանապարհով նոր տարածքների ձեռքբերումը: Ուստի, առաջարկում էր առժամանակ ձեռնպահ մնալ Օսմանյան կայսրության հետ դինված բախումից: Սակայն Ցիցիանովն այլ կարծիքի էր: Նա ենթադրում էր, որ առանց Ախալցխայի էյալեթի գրավման, որի տարածքը Վրաստանի վրա լեզգիների հարձակումների հիմնական հենակետն էր, դժվար կլիներ Անդրկովկասում ռուսական դերիշխանության հետագա տարածումը: Նա 1803 թ. խնդրում էր Կ. Պոլսում արտգործնախարարության դեսպանորդ Անդրեյ Իտալինսկուն իրեն թույլատրել քայլեր ձեռնարկելու ռազմավարական նշանակություն ունեցող Ախալցխայի շրջանը Ռուսաստանին միացնելու ուղղությամբ:[321] Ախալցխան նվաճելու Ցիցիանովի ձգտումն այնքան մեծ էր, որ նույնիսկ, չսպասելով արքունիքի պաշտոնական պատասխանին, նա դիմեց ակտիվ քայլերի, հույս ունենալով, որ սուլթանական կառավարությունից դժգոհ տեղի փաշան կարող է Արևելյան Վրաստանի օրի-

[319] АКАК , т. 2, с. 245.
[320] Дубровин Н., История войны и владычества русских на Кавказе, т. 5, с. 362.
[321] АКАК , т. 2, с. 342.

նակով, առանց պատերազմի, նախընտրել ռուսահպատակությունը: Գլխավոր հրամանատարն այս հարցում որոշակի հույսեր էր կապում Կարսի Ռեջիբ փաշայի հետ, որը թշնամական հարաբերություններ մեջ էր Ախալցխայի փաշայի հետ և հաճախ սուլթանի, երբեմն էլ ռուսների օժանդակությամբ արշավանքներ էր ձեռնարկում Ախալցխայի էյալեթի վրա՝ նրա անհնազանդ քայլերը սանձելու, կայսրության արևելյան նահանգներում գերակա դիրք և ռազմավար ձեռք բերելու նպատակով: Արշավանքի հաջողությունը, անշուշտ, Ցիցիանովը կապում էր նաև թուրքահպատակ բնակչության, առաջին հերթին հայերի օժանդակության հետ, առավել ևս, որ նման ձգտումը վերջիններիս մոտ օրեցօր աճում էր: Կարսի հոգևոր առաջնորդ, Խոշավանքի (Հոռոմոս) վանահայր Հովհաննես արքեպիսկոպոսը իր հոտի անունից ռուսներին կոչ էր անում վրկել «անօգնական ազգս հայոց...նուաճեցուցանելով զայլազգեաց զթագաւորսն, և ենթարկանելով ի ներքոյ ծառայութեան»:[322]

1803 թ. հունիսի վերջին Ցիցիանովը Փամբակի մոուրավ, իշխան Գեորգի Օրբելիանուն կարգադրեց պատժիչ արշավանք ձեռնարկել Ախալցխայի լեզգիների դեմ՝ պատրվակելով վերջիններիս կողմից Վրաստանից բազմաթիվ մարդկանց առևանգման փաստը: Ծալկայից Ախալքալաքի գավառ ներխուժած ռուսական զորքերն իրենց հերթին ավերածություններ կատարեցին և առևանգեցին մեծ թվով բնակիչների: Նույն ժամանակ, Ախալցխայից վտարված Շերիֆ փաշան, որն օգտվում էր Երևանի խանի հովանավորությունից, Կարսի էյալեթի տարածքից ավազակային հարձակում գործեց Ախալցխայի գյուղերի վրա և այնտեղից տարավ մարդկանց ու անասուններ: Ախալցխայի Սելիմ փաշան այս վերջին միջադեպն ընկալեց որպես ռուսների կողմից ձեռնարկված թշնամական քայլ: Բողոքելով Ցիցիանովին՝ նա ընդգծում էր, որ Ախալքալաքի գյուղերում ավերածություններ ու առևանգումներ կազմակերպողների մեջ զգալի թիվ են կազմել ռուսահպատակները: Ուստի նրանց չպատժելու դեպքում, սպառնում էր պատասխան գործողություններով:[323]

---

[322] ЦГИАГ, ф. 2, оп. 1, д. 28, л. 102, Присоединение Восточной Армении к России, т. 1, с. 102.

[323] Дубровин Н., История войны и владычества русских на Кавказе, т. 1, кн. 1, с. 159, АКАК , т. 2, с. 894.

Ցիցիանովը թեև ռուսական զորքերի մուտքը էյալեթի սահմաններ պատճառաբանում էր լեզգիներին պատժելու մտադրությամբ, իրականում նրանց հովանավորող Ախալցխայի փաշային ահաբեկելու և ավար ճեռք բերելու նպատակ էր հետապնդում: Այս դեպքերից հետո Սելիմ փաշայի և Ցիցիանովի հարաբերությունները նկատելիորեն սառեցին: Նույն ժամանակ հարավից Ախալքալաքի գավառ ներխուժեց Կարսի փաշան՝ իր հերթին նյութական և մարդկային կորուստներ պատճառելով Ջավախքի բնակավայրերին: Հետագայում, Կարսի փաշայի այդ արշավանքները կրկնվեցին և մեծ վնասներ պատճառեցին Ախալցխային և Ախալքալաքին: Ռուսական հրամանատարությունը բողոք ներկայացրեց Ռեշիբ փաշային՝ ռուսներին «դավաճանելու» և այդ տարածքներն ամայացնելու մեղադրանքով:[324]

Այսպիսով՝ 1803 թ. հունիսից մինչև 1804 թ. գարուն Ախալցխայի, հատկապես Ախալքալաքի գավառները բազմիցս ենթարկվեցին թալանի, ավերածությունների և բնակչության բռնագաղթերի, որոնց արդյունքում քրիստոնյա բնակչության թիվը որոշակիորեն նվազեց, խորացավ տնտեսական անկումը: Այս դեպքերի պատճառով նկատելիորեն սրվեցին թուրք–ռուսական հարաբերությունները, որին առաջին հերթին, նպատակաուղղված էր գեներալ Պ. Ցիցիանովը: Ստեղծված նոր իրավիճակից անհանգստացած՝ ցարական արքունիքը պահանջեց գլխավոր հրամանատարից՝ ճեռնպահ մնալ Օսմանյան կայսրության, կամ նրա ենթակայության տակ գտնվող վարչական միավորների հետ հարաբերությունների հետագա սրումից՝ զգուշանալով, որ վերջիններս կարող են հայտնվել Ռուսաստանի ախոյան պետության՝ Նապոլեոնյան Ֆրանսիայի ազդեցության տակ: Բացի այդ, Ախալցխայի փաշան, դժգոհ մնալով տարածաշրջանում ռուսական հրամանատարության ակտիվ քայլերից, սկսեց կապերն ավելի սերտացնել հակառուսական ուժերի, այդ թվում՝ Իմերեթիայի թագավոր Սոլոմոնի և Գուրիայի իշխանների հետ:

1803 թ. հունիսի 25–ին Ալեքսանդր I–ը Ցիցիանովին հղած նամակում հայտնում էր, որ տվյալ պահին Օսմանյան կայսրության տարածքների միացումը ռուսական տերությանը նպատակահարմար չէ:[325] Ի հավելումն կայսեր ցուցումին՝ օգոստոսի 5–ին կոմս Ալեք-

---

[324] AKAK, т. 2, с. 910.
[325] Նույն տեղում, էջ 456:

սանդր Վորոնցովը գրում էր. «Ներկա պարագայում Ախալցխայի փաշայության միացումը Ռուսաստանին թեև օգուտ կբերեր Ձեր խնամակալությանը տրված երկրամասին, սակայն միանգամայն կհակասեր մեր ընդհանուր շահերին, քանզի Կոստանդնուպոլսի ֆրանսիական դեսպանը բաց չէր թողնի առիթը... և Բ. Դռանը վախեցնելով մեր ձեռնարկումներով՝ կստիպեր նրան հայտնվելու իր ձեռքերում»:[326] Ուստի խորհուրդ էր տալիս առժամանակ հրաժարվել Ախալցխայի հարցից և զբաղվել Իմերեթիայի և Մեգրելիայի միացման խնդրով:

Ստանալով ցարի և բարձրաստիճան պաշտոնյաների բավական կոշտ ցուցումները՝ հարկադրված՝ գեներալ Ցիցիանովը որոշ ժամանակով Ախալցխայի հիմնահարցը թողեց առկախ: Նա փորձեց վերականգնել նախկին բարիդրացիական հարաբերությունները սահմանակից թուրքական փաշաների հետ՝ նախապատվությունը տալով Արևմտյան Վրաստանի ու Երևանի խանության նկատմամբ գերիշխանություն հաստատելու պաշտոնական դիրքորոշմանը:

Պետք է նշել, որ ռուսական զինվորական իշխանություններին հաջողվեց 1803 թ. աշնանը կանխել ռուս–թուրքական հարաբերությունների սառեցումը և նույնիսկ Սելիմ փաշային չահագրգռել ընդհանուր ճակատ ստեղծելու վերջինիս թշնամու՝ վտարված Շերիֆ փաշայի ու նրան հովանավորող Երևանի սարդարի, ինչպես և Իմերեթիայի թագավորի դեմ: Ի դեպ, վերջինս մինչ այդ Ախալցխայի փաշայի հետ այնքան ջերմ հարաբերությունների մեջ էր, որ հաճախ ամռան շոգ օրերին հյուրընկալվում էր նրա մոտ և իր հանդիստն անցկացնում զով Ախալքալաքում:

Այսպես՝ 1803 թ. վերջին Անդրկովկասում նկատվեց ռազմաքաղաքական երկու խմբավորումների ձևավորում. մի կողմից՝ Ռուսաստանը, որին այսպես թե այնպես աջակցում էին Ախալցխայի, մասամբ Կարսի փաշաները, մյուս կողմից՝ Երևանի խանությունը: Վերջինիս գլխավոր հենարանը Պարսկաստանն էր, իսկ օժանդակ ուժեր էին Շերիֆ փաշան, Իմերեթիայի թագավորը, Մեգրելիայի և Գուրիայի հակառուսական դիրքորոշում ունեցող իշխանները, ինչպես և վրաց արքայազն Ալեքսանդրը: 1804 թ. սկզբին ռուսները լուրջ դիվանագիտական աշխատանք կատարեցին Պարսկաստանի դեմ պատերազմ նախապատրաստելու համար: Ռուս–պարսկական պատերազ-

[326] Նույն տեղում, էջ 874:

մում, թիկունքից ապահով լինելու նպատակով, Ցիցիանովը հատուկ պատվիրակներ ուղարկեց Ախալցխայի փաշայի և Իմերեթիայի թագավորի մոտ: Նրանցից ստանալով չեզոքություն պահպանելու խոստումներ՝ ռուսական հրամանատարությունը որոշեց անցնել վճռական գործողություններին:

Նույն ժամանակ պարսից գահաժառանգ Աբաս–Միրզան հատուկ պատվիրակներ ուղարկեց Էրզրում և Ախալցխա (անշուշտ, նաև Կ. Պոլիս)՝ Ռուսաստանի դեմ ռազմական դաշինք կնքելու առաջարկությամբ: Սակայն թուրքական փաշաները մերժեցին այդ առաջարկը, թեև իրենց հերթին քայլեր կատարեցին սեփական սահմաններն ամրապնդելու համար:

1804 թ. գարնանը ռուսների կողմից Գանձակի գրավումը, արշավանքը Երևանի բերդի վրա ավելի անհանգստացրին սուլթանական կառավարությանը, որն օրեցօր ավելի ու ավելի էր հայտնվում Ռուսաստանին հակառակորդ Ֆրանսիայի ազդեցության ոլորտում: Սուլթանի հրամանով 1804 թ. ընթացքում ամրացման աշխատանքներ սկսվեցին Ախալցխայի, Խերթվիսի, Ախալքալաքի բերդերում, ուժեղացվեց հսկողությունը Փամբակից և Ծալկայից եկող ճանապարհների վրա: Ի դեպ, այդ պայմաններում Ցիցիանովին հաջողվեց պահպանել բարեկամական հարաբերությունները Կարսի փաշայի հետ, որն ակնկալում էր ռուսների օժանդակությամբ գերակա դիրքեր շահել հարևան փաշայությունների նկատմամբ:

1805 թ. ընթացքում Ղարաբաղի խանության, ինչպես և Շիրակի միացումը Ռուսաստանին նոր վստահություն հաղորդեցին ռուսական հրամանատարությանը: Պ. Ցիցիանովը չհապաղեց նորից մեջտեղ բերել Ախալցխայի գրավման հանդուգն ծրագիրը, որը ենթադրում էր պատերազմ երկրորդ ճակատով՝ ընդդեմ Թուրքիայի: 1805 թ. աշնանը արտգործնախարար իշխան Ադամ Ջարտորիյսկուն, պետխորհրդական Պյոտր Լիտվինովին դրած զեկուցագրերում նա կրկին հիշեցնում էր Ախալցխայի էյալեթից Վրաստանին սպառնացող վտանգը, լազերի ավազակային հարձակումները, մարդատորան ու անասնագողությունը, բնակավայրերի ավերումը: «Վրաստանի հարևանների վարքագիծը,– նույն Ա. Ջարտորիյսկուն գրում էր Ցիցիանովը,– որն անցնում է համբերության ամեն մի սահման, ինձ պարտավորեցնում է կրկին դիմելու Ձերդ գերազանցությանը իմ

նույն խնդրանքով... »:[327] Ապա ավելացվում էր, որ Ռուսաստանին ենթակա Ղարաբաղից փախած 62 ընտանիք թաթարներին, որոնք արդեն համարվում են ռուսահպատակներ, Ախալցխայի Սելիմ փաշան ապաստան է տվել և հրաժարվում է վերադարձնել նաև լեզգիների կողմից առևանգված բազմաթիվ քրիստոնյաների: Եթե հնարավոր չլինի դիվանագիտական ճանապարհով իր հպատակներին վերադարձնել, ապա ինքը կդիմի ռուսաց ցարին՝ Բ. Դռան վրա ճնշում գործադրելու համար: Եթե դա էլ չօգնի, ինքը ուժով կազատի գերված քրիստոնյաներին և կվերադարձնի Վրաստան, այսինքն՝ կձեռնարկի ռազմական արշավանք, եթե այդպիսին լինի կայսեր կամքը:[328] Բայց ռուսների կողմից արված սպառնալիքներն առանձնապես ազդեցություն չունեցան թուրքերի ու լեզգիների վրա: Ռուսական սահմանամերձ բնակավայրերի նկատմամբ թշնամական գործողությունները չարունակվեցին: Հոկտեմբերի 29–ին Ա. Զարտորիյսկուն հղած զեկուցագրում տվյալներ են բերվում Ախալցխայի փաշայի թշնամական նոր գործողությունների և լեզգիների 1000 հոգանոց հավելյալ խմբաքանակի ժամանման մասին:[329]

Ինչպես երևում է, գեներալ Ցիցիանովը բավական հաստատակամորեն օրակարգ էր մտցրել Օսմանյան կայսրության հետ ռազմական բախման հարցը և որոշակի համոզվածություն ուներ հաջողության հասնելու խնդրում: Պարսկաստանի նկատմամբ նրա ձեռք բերած հաջողությունները փոխեցին նաև ռուսական արքունիքի մոտեցումները Թուրքիայի դեմ պատերազմի վերաբերյալ, առավել ևս, որ սուլթանական կառավարությունը, Նապոլեոնի դրդմամբ, իր հերթին տենդագին ձևով նախապատրաստվում էր պատերազմի: Ցարի մերձավորների շրջանում 1805 թ. վերջից ձևավորված դիրքորոշումը սուլթանական Թուրքիայի դեմ պատերազմելու հարցում այնքան ամրապնդվեց, որ նույնիսկ այդ ծրագրի հեղինակի՝ Ցիցիանովի 1806 թ. փետրվարին Բաքվի տակ ողբերգական վախճանից հետո, ռուսական ռազմադիվանագիտական ծառայությունները չխուսափեցին Օսմանյան կայսրության հետ հարաբերությունների սրումից: Դեկտեմբերին սկսվեց ռուս–թուրքական պատերազմը, որը մինչև 1807 թ. մարտ–ապրիլ ամիսները, մասնավորապես կովկասյան ճակատում,

---

[327] Նույն տեղում, էջ 886–887:
[328] Նույն տեղում:
[329] Նույն տեղում, էջ 889:

միայն անվանական բնույթ էր կրում: Նոր գլխավոր հրամանատար գեներալ–ֆելդմարշալ Իվան Գուդովիչն անմիջապես հարձակողական գործողություններ սկսելու համար սպասում էր ճանապարհների բացվելուն:

Մինչ այդ սուլթանական կառավարությանը հաջողվեց հարթել կայսրության արևելյան նահանգների, առաջին հերթին՝ Ախալցխայի և Կարսի փաշաների միջև եղած տարաձայնությունները, Պարսկաստանի հետ՝ ընդդեմ Ռուսաստանի, համատեղ գործողությունների ծրագրեր մշակել: Ռուսական հետախուզական մարմիններն անկարող գտնվեցին թուրքական փաշաների միջև տարաձայնությունները խորացնելու խնդրում: Նրանք անդամ չկարողացան պահպանել ռուսական հրամանատարության և առանձին փաշաների միջև ստեղծված բարեկամական կապերը: Փամբակում և Շիրակում տեղակայված զորքերի հրամանատար գեներալ Պյոտր Նեսվետաևը բավական ջերմ հարաբերություններ էր հաստատել Կարսի Մամադ փաշայի հետ և հաջողությամբ գործում էր ընդդեմ ընդհանուր հակառակորդի՝ Ախալցխայի փաշայի: Մամադ փաշան այնքան էր մտերմացել ռուսական ռազմական իշխանությունների հետ, որ նույնիսկ արտոնել էր գեներալ Նեսվետաևին իր զորքերի համար անհրաժեշտ մթերքը՝ հացահատիկը և անասնակերը ձեռք բերել Կարսի փաշայության սահմաններում: Բայց, երբ 1807 թ. մարտի սկզբներին այդ նպատակով ռուսները մտան Կարսի նահանգի տարածք, ուր հանդիպեցին թուրքերի հակազդեցությանը: Մամադ փաշայի եղբոր զորքերը կրակ բացեցին նրանց վրա և սպանեցին մեկ տասնյակից ավելի զինվորների և վիրավորեցին 15 հոգու: Ռուսներն անցան հակահարձակման և Բաշ–Շորագյալի մոտ գերեցին չրջակայքի 500 բնակիչների, ամենայն հավանականությամբ՝ քրիստոնյա հայերի և բնակեցրին Ախուրյանի ձախ ափին, ինչպես և Փամբակում:[330] *Մամադ փաշան, որ ինքն էր թուլլատրել ռուսների մուտքն իր տարածք, այս միջադեպի մեղքը փորձեց բարդել Նեսվետաևի վրա: Այնինչ ակնհայտ էր, որ այն թելադրված էր սուլթանական կառավարության կողմից, և Կարսի ու Ախալցխայի փաշաներն այսուհետ հանդես էին գալիս ընդհանուր ծրագրով: Ավելին, ի նշան հավատարմության Բարձր Դռանը, Մամադ փաշան իր որդիներին պատանդ էր ուղարկել Էրզրումի Յու-*

[330] Дубровин Н., История войны и владычества русских на Кавказе, т. 5, кн. 1, с. 152, АКАК, т. 3, Т., 1869, с. 601–602.

սուֆֆ փաշայի մոտ: Նույն Մամադ փաշայի հրամանով ձերբակալվել ու գնդակահարվել էին մի խումբ հայ և ռուս լրտեսներ, ինչպես և Թուրքական տարածքներում առևտրով զբաղվող մի քանի ռուսահպատակներ: Պատահական չէ, որ այս նոր իրավիճակում Ախալցխայի փաշան արդեն իրեն իրավունք էր վերապահում սպառնալից նամակներ ուղարկել գեներալ Գուդովիչին, այն դեպքում, երբ մինչ այդ փորձում էր ամեն կերպ նրա հետ պահպանել բարիդրացիական հարաբերություններ:

Օրեցօր ռուսական զորքերի վիճակը ծանրացավ: Այս ամենին գումարվեց նաև զորքի և զինամթերքի պակասը, ճանապարհների փակվածությունը, Փամբակ–Շորագյալ–Կարս գծում գործող գեներալ Նեսվետաևի և Ծալկա–Ախալքալաք ուղղությամբ շարժվող գեներալ Գուդովիչի զորքերի միջև կայուն կապի և օսմանյան սահմանամերձ նահանգների մասին հետախուզական տվյալների բացակայությունը և այլն: Ջստանալով գլխավոր հրամանատարի մարտի 22-ի գրությունը, որում նախազգուշացվում էր Կարսում թուրքական մեծաքանակ ուժերի կենտրոնացման և այդ ուղղությամբ շարժվելու վտանգի մասին, Նեսվետաևը, հաղթահարելով մեծ դժվարություններ, հասավ բերդի մատույցներին: Միայն հետագայում, ուշացումով տեղեկանալով Գուդովիչի հրամանի մասին, կրկին նահանջեց չհասնելով որևէ հաջողության: Ռուսների առաջխաղացումը էթնիկական նոր տեղաշարժեր առաջ բերեց: Կարսի գյուղերից 500 ընտանիք ռուսական զինվորական մարմինների դրդմամբ ընդունեց ռուսական հպատակություն և տեղափոխվեց Փամբակ:[331]

Ռուսական զորքերի արշավանքը օսմանյան սահմանների վրա կարող էր աղետալի հետևանքներ ունենալ, եթե պարսիկները ևս անցնեին հարձակման: Ուստի արդեն ապրիլին Նեսվետաևը փորձեց լեզու գտնել Երևանի խանի հետ՝ նրան առաջարկելով զինադադար կնքել, սակայն ապարդյուն:

Ախալցխայի Սելիմ փաշան 1807 թ. փետրվարից սկսեց զինաթափել տեղի քրիստոնյա բնակչությանը, զուգահեռաբար զինելով մահմեդականներին, չարունակել խրախուսել Դաղստանից վարձկան լեզգիական ջոկատների ներհոսքը իր նահանգի տարածք: Գեներալ Պ. Նեսվետաևը հայ ազնվական Աղալո Ենիկոլոպյանին հետախուզական նպատակով ուղարկեց հարևան Ախալքալաքի գավառ: Վերջի-

[331] AKAK, т. 3, с. 603, 607–608.

նիս դիտարկումների համաձայն, Ջավախքում լեզգիների թիվը կազմում էր 800 հոգի: Սելիմ փաշան, հավանաբար զգուշանալով ռուսական հետախուզությունից, կարգադրել էր լեզգիական ջոկատներին գործել գաղտնաբար և առժամանակ ձեռնպահ մնալ հակառուսական քայլերից՝ իր տարածքների վրա ռուսներին արշավանքի առիթ չտալու նպատակով: Սակայն Օսմանյան կայսրության նախազգուշական քայլերն անօգուտ էին, քանզի այդ վարչամիավորները գրավելու հանգուցյալ Ցիցիանովի հեղինակած ծրագիրն արդեն գործողության մեջ էր:

1807 թ. ապրիլի 17–ին, դուրս գալով Թիֆլիսից, գեներալ Ի. Գուդովիչն իր գլխավոր ուժերով, որոնք բաղկացած էին հրետանային մարտկոցից, 9 գումարտակից և դրագունների երեք էսկադրոնից (ընդամենը 4500 զինվոր), ամսի 28–ին հասավ Ախալքալաքի գավառին սահմանակից Ծալկա դյուղաքաղաքը: Սակայն առատ ձյան ու բքի պատճառով, մինչև մայիսի 1–ը չհամարձակվեց անցնել ռուս–թուրքական սահմանը, որն անցնում էր Դիք (Թիք) քար կոչվող բարձրադիր լեռնանցքով: Նույն ժամանակ Սև ծովի առափնյա շրջաններում՝ Փոթի–Ռեդուտ կալե հատվածում թուրքերի նկատմամբ ռուսների տարած հաղթանակները Գուդովիչին հույսեր էին ներշնչում, և նա ավելի համարձակ էր դառնում: Սակայն ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, գլխավոր հրամանատարը խիստ գերագնահատել էր իր հնարավորությունները, անտեսել հակառակորդի ուժը՝ հույսը դնելով ռուս զինվորների արիության վրա: Այդ օրերին ցարին դրած զեկուցագրում նա հայտնում էր, որ թեև թշնամին սահմանամերձ դյուղերում շատ ուժեղ է և դեռ կարող է էրզրումի սերասկյար Յուսուֆի օգնության հաշվին ավելի զորեղանալ, ինքն իր հաջողության հարցում կասկած չունի և մտադիր է Կովկասյան ճակատում ի չիք դարձնել թուրքական կողմի բոլոր ծրագրերը:[332]

Ռուսները միայն 1807 թ. մայիսի սկզբին, Փարվանա լճից հյուսիս–արևելք անցան ռուս–թուրքական նոր սահմանագիծը: Դա ռուսների առաջին մուտքն էր միանգամայն անծանոթ երկրամաս՝ Ախալցխայի էյալեթի Ախալքալաքի սանջակ: Իր ուժերի վրա գեներալ Գուդովիչի ավելորդ վստահությունը և թերահավատությունը թշնամու նկատմամբ, թերևս ավելի ցայտուն երևաց մայիսի 23–ին

[332] Նույն տեղում, էջ 579:

Ախալցխայի փաշային և տեղի մեծամեծներին հղած նրա չըջաբերականից, ուր մասնավորապես ասվում էր, որ ռուսական կայսերական օրհնությամբ իր անպարտելի բանակը մտնում է թշնամու հողը և պատրաստ է ռազմական ճանապարհով հպատակեցնել այն: Նրանք, ովքեր առանց կռվի կնախընտրեն ռուսական հպատակությունն, կստանան անձի և գույքի ապահովություն, հակառակ դեպքում, բոլոր անհնազանդները խստագույնս կպատժվեն:[333] Առանց դիմադրության հանդիպելու, մայիսի 5–ին ռուսները հասան Ախալքալաքի բերդի մատույցներին: Հաջորդ օրը Գուդովիչը մի ծանուցագիր ուղարկեց Ախալքալաքի գավառապետին, որում բավականին ամբարտավան ոճով զգուշացվում էր նրա հրամանատարությամբ գործող ռուսական բանակի սխրանքները Սև ծովի ափին, մասնավորապես Անապայում և համոզվածություն հայտնվում, որ կամովին չհանձնվելու դեպքում Ախալքալաքի պատերի տակ կարող են արյան ծովեր հոսել, որի մեղքը լիովին ընկնելու է թուրքական կողմի վրա: «Եթե դուք հնազանդվեք և անմիջապես հանձնեք ամրոցը,– կարդում ենք այդ փաստաթղթում,– ապատ կարձակվեք, իսկ կայազորը ներում կստանա և վստահություն կունենա իր կյանքի նկատմամբ»:[334] Հաղթանակի հանդեպ ռուսական հրամանատարի ավելորդ վստահությունը հասնում է այնտեղ, որ նա խորհուրդ էր տալիս Ախալքալաքի գավառապետին արյունահեղությունից խուսափելու համար հնազանդվելու միջնորդությամբ հանդես գալ նաև իր հորեղբոր՝ Ախալցխայի Սելիմ փաշայի առջև: Վերջինիս ռուսահպատակություն ընդունելու դեպքում Գուդովիչը խոստանում էր նրա ձեռքում թողնել Ախալցխայի փաշայի ժառանգական պաշտոնը: Ծանուցագրում սպառնալիքներ էին հնչում բերդի զեկավարության հասցեին և պահանջվում էր անհապաղ պատասխան:

Դարասկզբին ռուսների դիվանագիտական ձեռքբերումները՝ Արևելյան Վրաստանի, Մեղրելիայի, Ղարաբաղի, Շիրակի միացումն առանց ռազմական միջամտության, գլխապտույտի մեջ էին գցել կովկասյան բանակի հրամանատարությանը, ուստի թվում էր, թե նման կարգի սպառնալիքներով հնարավոր էր նոր տարածքների հպատակեցումը: Այս դեպքում էլ Գուդովիչը նախընտրեց վերջին տարբերակը: Սակայն այն արդեն իրեն սպառել էր: Ցիցիանովի 1804

[333] Նույն տեղում, էջ 580:
[334] Նույն տեղում:

Թ. երևանյան արշավանքի ժամանակ, երբ կորցնելով թանկագին ժամանակը, ռուսներն անիմաստ բանակցություններ վարեցին Երևանի խանի հետ՝ վերջինիս հնարավորություն ընձեռելով այդ ընթացքում ամրապնդել իր դիրքերը և անառիկ պահել բերդը: Գուդովիչի դաժանությունն ու ռազմաքաղաքական սխալ գործելակերպն այս անգամ ծանր նստեցին Գուդովիչի վրա: Այն, որ Թուրքերի դեմ արշավանքը խիստ վատ էր նախապատրաստված, երևում է ավելի շրջահայաց գործելակերպով աչքի ընկնող գեներալ Նեսվետաևին ապրիլի վերջին ռուսական հրամանատարի կատարած մի խոստովանությունից: Նա հայտնում է, որ ինքը չէր կարծում, թե ինչպես կարող էր ամրացված լինել և կուննինային այդքան ուժեղ կայազորներ: Վիճակը շտկելու նպատակով նա կարգադրում է Նեսվետաևին կրկին մտնել Կարսի նահանգի հյուսիսային շրջանը՝ Զարիշատ, այնտեղից Ախալքալաքի բերդի կայազորին օգնելու, Թուրքական ուժերի ճանապարհը փակելու նպատակով: Միաժամանակ հրաման տրվեց Իմերեթիայում և Մեգրելիայում գտնվող գեներալ Ի. Ռիկհոֆի զորքերին անցնել հարձակման՝ Թուրքական ուժերի մի մասն Ախալցխա–Ախալքալաք գծից հանելու և այդ հատվածում Գուդովիչի ուժերի վիճակը թեթևացնելու նկատառումով: Թուրքական ուժերը վճռեցին խուսափել բաց դաշտում ճակատամարտից և, Չղրի գավառապետից ու Սելիմ փաշայից ստանալով օգնական ուժեր, քաշվեցին բերդերը: Երբ Նեսվետաևի ուղարկած 15–րդ եղերական դունդը պեչորսկու գլխավորությամբ մտավ Զարիշատ, տեղի բեկը ևս, առանց մարտի մեջ մտնելու, հավաքելով ռազմամթերքը, նահանջեց և իր ուժերը տեղափոխեց Կարս և Ախալքալաք:

Թուրքերից ու լազերից բաղկացած 1500 հոգանոց կայազորը կարողացավ օգտվել Գուդովիչի դանդաղկոտությունից և ժամանակին իրենց ընտանիքները տեղափոխել Ախալցխա, կուտակել անհրաժեշտ ռազմամթերք և լավ նախապատրաստվել դիմադրության: Բնակչության զգալի մասը քաշվեց Կուրի ձախ ափը և լեռնային գյուղեր: Միաժամանակ թուրքերը գավառում արագորեն կազմակերպեցին ավելի քան 1000 հոգանոց հեծելազոր՝ ռուսական զորքերին մշտական հարվածներ հասցնելու համար: Թշնամու հեծելազորը վնասազերծելու նպատակով գնդապետ Օտտոյի զորաջոկատը՝ կազակների, երկու էսկադրոն դրագունների ու երկու դասակի աջակցությամբ անցավ հարձակման: Թուրքական հեծելազորը նահանջեց

և ի վիճակի չեղավ կանխելու ռուսների հիմնական ուժերի կողմից Ախալքալաքի բերդի օղակումը:

Հասնելով Ախալքալաքին՝ Գուդովիչը ճամբար դրեց բերդից հարավ–արևելք՝ Թափարվան և Քառասնաղբյուր գետերի միջև ընկած դաշտում: Ռուսական զորքը խիստ հոգնել էր, կորցրել մարտունակությունը: Դժվարին կլիմայական պայմանների հետևանքով բազմաթիվ զինվորներ հիվանդացել էին: Բավական է նշել, որ առողջ հետևակային զինվորների թիվը հասնում էր ընդամենը 2900 մարդու: Այդուհանդերձ, Գուդովիչին այլընտրանք չէր մնում, քան գրոհել Ախալքալաքի բերդը: Պատասխան չստանալով բերդն առանց կռվի հանձնելու վերաբերյալ մայիսի 6–ի առաջարկությանը՝ ռուսական հրետանին սկսեց ռմբակոծել քաղաքը: Ռմբակոծությունը էական ազդեցություն չունեցավ: Նախ. բերդի պարիսպներն առանձնակի վնասներ չկրեցին: Զհաջողվեց քաղաքում հրդեհ առաջացնել, քանի որ տների մեծ մասը փայտաշեն չէր, իսկ արձակված կրակը վտանգ չէր ներկայացնում գետնափոր ու հողաշեն հյուղակների համար: Այնպես որ, վերոհիշյալ գործողությունները կայազորի վրա սպասվելիք հոգեբանական ներգործությունը չունեցան:

Թուրքերն սկսեցին պատասխան հրետակոծություն և նույնիսկ փորձեցին դուրս գալ բերդից ու Թափարվան գետի կողմից գրոհել ռուսների աջ թևը: Բայց զոհեր տալով, նահանջեցին: Գուդովիչը կրկին գրավոր առաջարկություն ներկայացրեց կայազորի պարետին՝ հիշեցնելով այն արտոնությունների մասին, որոնք կտրվեին պաշարվածներին առանց կռվի անձնատուր լինելու դեպքում: Պատասխանի փոխարեն նորից թուրքերը հրետակոծեցին ռուսական դիրքերը:

Գեներալ Գուդովիչը, ինչպես երևում է այդ օրերին նրա զեկուցագրերից, ճշտելով ուժերի հարաբերակցությունը, արդեն այնքան էլ համոզված չէր իր հաջողության մեջ: Սակայն « ...հույսը դնելով աստծո վրա,– ինչպես խոստովանում էր նա ցարին,– միայն ունենալով 2900 առողջ հետևակային, ոչ լրիվ համալրված գումարտակներ և վնասակար ու անկայուն կլիմայի պատճառով՝ բազմաթիվ հիվանդներ, հրետանավորների զգալի պակաս..., ես պետք է գրոհի վճիռ կայացնեի՝ թշնամուն սարսափ հաղորդելու համար, քանզի գրավելով այդ ամրոցը՝ իբրև Ախալցխայի բանալի, կկարողանայի տիրել ողջ փաշայությունը»[335] Դժվար չէ նկատել, որ նման արկա-

[335] Նույն տեղում, էջ 582:

ծախնդրությամբ հաղթանակի հասնելը քիչ հավանական էր: Ինչևիցե, գրոհն սկսվեց միանգամայն կանգուն պարիսպներով բերդի վրա, որն անչուշտ, ռազմական կոպիտ սխալ էր:

Մայիսի 9–ի լուսադեմին ռուսական զորքերը երեք շարասյունով անցան ընդհանուր հարձակման:[336] Հատկապես համառ պայքար էր սպասվում ռուսական զորքերի աջ թևում՝ Թափարվան գետի ափին, որտեղ վեր էր խոյանում միջնաբերդը՝ իր աշտարակներով և ամենաուժեղ ամրացված գոտին էր: Բայց զարմանալիորեն, այս ուղղությամբ գրոհեց ընդամենը մեկ շարասյուն, իսկ մյուս երկուսը՝ Գուդովիչի ընդհանուր հրամանատարությամբ առաջացան ձախ թևից:

Հրամայված էր աննկատ մոտենալ բերդին և միայն պարիսպներին հասնելուց հետո, կրակ բացել: Ռուսների ճամբարից նախօրեին թուրքերի մոտ փախած մի թաթար արդեն նախազգուշացրել էր նախապատրաստվող գրոհի մասին: Երբ ռուսները մոտեցան պարիսպներին, ուժեղ կրակ տեղաց նրանց վրա: Երիտասարդ զինվորներից շատերը, չկատարելով հրամանը, պատասխան կրակ բացեցին՝ մինչև պարիսպներին հասնելը: Այդ քայլով ավելի բացահայտվեցին ռուսական շարասյունների շարժման ուղղությունները: Թուրքերը սաստկացնելով կրակը՝ լուրջ կորուստներ պատճառեցին ռուսներին: Վերջիններիս շարքերում սկսվեց խառնաչփոթ: Ծանր կորուստների գնով պարիսպներին հասած զինվորներն էլ ընդհանուր չվոթի մեջ պաշարողական սանդուղքները տեղադրեցին ոչ թե ցածր, այլ բարձր պատերին, որոնց վրա բարձրանալուց հետո էլ հնարավոր չէր լինում իջնել ամրոցի ներսը:

Այնուամենայնիվ, ուժեղ հրաձգային կրակի տակ, վորձառու 15–րդ եգերական գնդի զինվորներից ոմանց հաջողվեց մագլցել պարիսպներին: Սանդուղքները, որոնցով կարող էին միաժամանակ, կողք կողքի բարձրանալ երկու–երեք մարդ, եգերները տեղադրել էին բարձր պարիսպների վրա: Քանի որ շատ դժվար էր մագլցել բերդի պատերը, թուրքերը հեչտությամբ կարողացան արևմտյան պա-

---

[336] Գրոհող շարասյուների հրամանատարներն էին գեներալ–մայոր Տիտովը, գնդապետեր Սիմոնովիչն ու Գոլովաչևը: Պահեստի ջոկատը գլխավորում էր գեներալ Պորտնյագինը: Մեկ ջոկատ էլ առանձնացվել էր գեներալ–լեյտենանտ բարոն Ռոզենի հրամանատարությամբ՝ կեղծ գրոհներ կատարելու համար: Սանրամասն ուժերի դասավորության մասին տե՛ս Дубровин Н., История войны и владычества русских на Кавказе, т. 5, с. 161–165.

րիսպներից, որոնց ուղղությամբ նեղ կիրճով սեղմված գրոհում էին երկու չարասյուններ, քարեր գլորելով և եռացրած ջուր լցնելով, վայր գցել ռուս զինվորներին, ջարդուփշուր անել սանդուղքները: Այսպես զոհվեց չարասյուններից մեկի առաջնորդողներից կապիտան Դը Մոնտը, ծանր վիրավորվեց գնդապետ Գոլովաչևը: Այդուհանդերձ, գեներալ Պորտնյագինի գլխավորած երկրորդ չարասյունը կրկին գրոհեց այս անգամ սանդուղքները տեղադրելով ավելի ցածր պատերի վրա: Առանձին տեղերում 200 զինվորների հաջողվեց բարձրանալ պարիսպների վրա, գրավել ֆորշտատը, որտեղից թուրքերը մեծ վնասներ էին պատճառել ռուսներին, խլել մեկ թնդանոթ և դրոշ: Պորտնյագինի զինվորները կարողացան օգնության հասնել նաև մյուս չարասյունների զինվորներին՝ իրենց վրա վերցնելով լրացուցիչ կրակը և հնարավորություն ստեղծել մեծ թվով վիրավորների դուրս բերել ռազմի դաշտից: Հատկապես աչքի ընկան մայոր և կապիտան Ակսենևները, Ալյուշինը, շտաբս–կապիտան Ժորժը, Կորժենևսկին, պորուչիկ Կադնիկովը և ուրիշներ: Տեղ–տեղ եգերներին հաջողվեց իջնել բերդի ներսը: Սակայն երիտասարդ զինվորները, որոնք զորքի մեջ մեծամասնություն էին կազմում, հանդես չբերեցին վճռականություն և չամրապնդեցին վերջիններիս հաջողությունը: Կտրվեց կապը պարիսպների վրա մագլցած զինվորների և դրոհող հիմնական ուժերի միջև: Գուդովիչը մարտի մեջ նետեց պրեթե բոլոր ռեզերվները՝ իր մոտ պահելով ընդամենը 150 հետևակային, դրագունների չհամալրված էսկադրոն ու մեկ կազակական գունդ՝ թուրքական հեծելազորի հնարավոր հարձակումները կասեցնելու նպատակով:

Արյունալի մարտը տևեց մոտ 5 ժամ: Անհաջողության մատնվեց ծանր հրետանիով քաղաքի դարպասները խորտակելու ռուսների փորձը: Թուրքերը կարողացան իրենց տեղադրած հրետանային մարտկոցով շարքից հանել թնդանոթաձուին ու ձիերին և չեզոքացնել վտանգը: Մայրահեղ հուսահատության մեջ կռվող թշնամին հանկարծակի պայթեցրեց ռուսների գրաված աշտարակում նախապես տեղադրված վառոդի պաշարները և հօդս ցնդեցնել այնտեղ բարձրացած բազմաթիվ ռուս զինվորների: Այդ դեպքն ավելի խորացրեց երիտասարդ զինվորներին պատած չփոթը: Զոհերի թիվը դնալով աճեց ու վիրավորներով կազմեց ամբողջ զորքի ավելի քան մեկ երրորդը: Վերջնական ջախջախումից խուսափելու նպատակով Ի. Գուդովիչը նահանջի հրաման արձակեց: Հրամայվեց մարտադաշ-

տից դուրս բերել հազարավոր վիրավորների ու սպանված ռուս զինվորների մարմինները: Թուրքերի ձեռքն ընկավ դարպասներից 40 քայլ հեռավորության վրա տեղադրված ծանր հրետանին: Այդուհանդերձ, թուրքական կայազորը, որն արդեն փաստորեն թվապես գերազանցում էր ռուսներին, չհամարձակվեց դուրս գալ բերդից և հետապնդել նահանջող ռուսական զորքերին: Միայն Ախալքալաքի լեռնային գյուղերում թաքնվող 700 հոգանոց հեծելազորն անցավ հարձակման և փորձեց խանգարել ռուսների նահանջը, թույլ չտալ ռազմագաչուից դուրս բերել վիրավորներին: Բարեբախտաբար, գնդապետ Օտտոյին հաջողվեց կազակական գնդով և դրագունների երեք էսկադրոնով արգելք հանդիսանալ թուրքական հեծելազորին, և վերջինիս պատճառելով զգալի կորուստներ՝ փախուստի մատնել: Ինչևիցե, ռուսների կորուստներն անհամեմատ մեծ էին: Ծանր պարտությունից հուսահատ, մի քանի օր անց, ցարին գրած իր զեկուցագրում Գուդովիչը դառնորեն խոստովանում էր, որ « ...դժբախտաբար, նահանջելով, տեղակայվեցի այն նույն ճամբարում, ուր նախապես կանգնած էի եղել և տեսնելով, որ զորքերը սակավաթիվ են և կրել են լուրջ վնասներ, ինչպես սպանվածներ, այնպես էլ վիրավորներ, համոզվեցի, որ կրկին գրոհելն անհնարին է»: Ապա հայցելով կայսեր ներողամտությունը՝ ավելացնում էր. « Ձերդ կայսերական մեծությանը նպաստ բերելու իմ անսահման ձգտումին հակառակ, հաջողությունը երես թևքեց ինձանից».[337]

Իր կրած պարտության պատճառը Ի. Գուդովիչը փորձում էր գտնել ոչ թե իր կողմից արշավանքի անփույթ նախապատրաստության, այլ խիստ կլիմայական պայմանների, ձիերի համար անհրաժեշտ կերի պակասի, թշնամու ուժերի գերակշռության, զինվորների մոտ անհրաժեշտ փորձառության բացակայության և այլ անհամոզիչ փաստարկների մեջ: Նրա «փաստարկներն» անհամոզիչ համարելով, ռազմական պատմաբան Ն. Դուբրովինը գրում էր. «Կարիք չկա ասել, թե որքանով կարող են այդ արդարացումները նվազեցնել գլխավոր հրամանատարի պատասխանատվությունը».[338] Վերոհիշյալ զե-

[337] АКАК, т. 3, с. 583.
[338] Дубровин Н., История войны и владычества русских на Кавказе, т. 5, с. 164.

կուցագրում թեև նա իր զորքի զոհերի թիվը նշում էր 267 մարդ, վիրավորները՝ 613, իրականում կորուստներն ավելի շատ էին:[339]

Այս ծանր պարտության տպավորությունն իր կնիքն է թողել ոչ միայն ժամանակի, այլև հետագայի ռուս ուսումնասիրողների վրա: Պատահական չէ, որ այդ ձախողված գործողության առիթով շատերը գործածել են «դժբախտ արշավանք» ձևակերպումը:[340]

Ժամանակի փաստաթղթերի ուսումնասիրությունից երևում է, որ Ախալքալաքի բերդի տակ կրած պարտությունից հետո Գուդովիչին համակել էին չփոթն ու սարսափը: Այդ ճակատամարտից անմիջապես հետո՝ մայիսի 9–ի երեկոյան նա բանագնացներ ուղարկեց պարսիկների մոտ՝ առաջարկելով զինադադար կնքել՝ Ախուրյան – Արաքս գիծը ռուս–պարսկական սահմանագիծ ճանաչելու պայմանով: Մայիսի 10–ին կովկասյան ռազմաճակատի ձախ թևում կռվող գեներալ Նեսվետաևից և աջ թևում՝ Իմերեթիայում տեղակայված ուժերի հրամանատար գեներալ-մայոր Ռիկհոֆից պահանջվեց անհապաղ ետ քաշվել իրենց ելման դիրքերը՝ առաջինը Ախուրյանի ձախ, երկրորդը՝ Ռիոն գետի աջ ափը և անցնել պաշտպանության:[341] *Պահի ազդեցությամբ թելադրված այս անհեռատես քայլերը լուրջ հարված հասցրին ռուսական կայսրության հեղինակությանը տարածաշրջանում: Նախ՝ պարսիկները անպատասխան թողեցին զինադադար կնքելու Գուդովիչի առաջարկը և այդուհետ ավելի համարձակ դար-*

---

[339] Թուրք հեղինակ Ջևդեթը գրում էր. «...ռուսները հարձակվեցին Ախալքալաքի բերդի վրա, սակայն խիստ պարտություն կրելով և շատ մեծ թվով սպանվածներ տալով, հետ նահանջեցին (Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, կազմեց Ա. Խ. Սաֆրաստյան, հ. Ա, Ե., 1961, էջ 293): Ըստ թուրքական կողմի տվյալների՝ Ախալքալաքի տակ ռուսները կորցրել են 5000 մարդ (АКАК, т. 3, с. 530). Այդ թվերը խիստ չափազանցված են, քանի որ ամբողջ ռուսական զորքի թիվը գրոհի նախօրյակին չէր անցում 4500 հոգուց: Մարկիզ Պաուլուչչին, որի գլխավոր հրամանատար եղած շրջանում՝ 1811 թ. հաջողվեց գրավել Ախալքալաքը, իր հաղթանակի նշանակությունն ընդգծելու նպատակով նույն թվականին ցարին գրում էր, թե Գուդովիչի 8 հազար զինվորներից (այս թիվն անշուշտ չափազանցություն է) սպանվել ու վիրավորվել է 2 հազ. մարդ (АКАК, т. 4, с. 183): Ռուս ռազմական պատմաբան Ն. Ուշակովը ռուսների կորուստները հաշվում է 1500 մարդ (տես Ушаков Н., История военных действий в азиатской Турции в 1828–1829 г., т. 1, с. 258), իսկ Վ. Պոտտոն իր աշխատության մի տեղում նշում է 900, մեկ այլ տեղում՝ 1200 մարդ (Потто В., Кавказская война, ч. 1, вып. 3, Т., 1885, с. 439, ч. 4, вып. 3, с. 103). Ռուսական պաշտոնական գրագրություններում բերվում է նաև 1000 թիվը (РГВИА, ф. ВУА, д. 4643, л. 151). Պետք է կարծել, որ իրականում զոհերի թիվը մոտավորապես պետք է լիներ բերված տվյալների միջինը՝ 1000–1500 զինվոր:

[340] РГИА СПб., ф. 1268, оп. 1, д. 9, л. 17.

[341] АКАК, т. 3, с. 542.

ձան իրենց գործողություններում: Երկրորդ՝ գեն. Նեսվետաևի նոր նահանջը Կարսի փաշայության տարածքից, իսկ Ռիկհոֆինը՝ Իմերեթիայից, ի չիք դարձրին ռուսների ձեռք բերած հաջողությունները:

Մայիսի 10–ին վիրավորներին Գուդովիչն ուղարկեց Թիֆլիս: Զորքի մեջ հիվանդների թիվը գնալով աճեց: Հիվանդացավ նաև ինքը՝ գլխավոր հրամանատարը: Մի քանի օր անց, ընդհանուր նահանջի հրաման տրվեց, և ռուսական զորքերը քաշվեցին դեպի Ծալկայի շրջանը՝ իրենց ելման դիրքերը: Հեծելազորով թիկունքից նրանց հարվածելու Ախալցխայի փաշայի փորձն անհաջողության մատնվեց Սեմյոն Պորտնյագինի փոքրաթիվ ուժերի վճռական հակահարվածի շնորհիվ: Վերադառնալով Ծալկա՝ ռուսական հրամանատարությունը սկսեց ամրապնդել սահմանները, կարգի բերել խիստ թուլացած զինված ուժերը՝ համոզված լինելով, որ թուրքերի հարձակման դեպքում դիմադրելն այնքան էլ դյուրին չի լինելու: «Ի լրումն այդ ամենի,– Ծալկայից մայիսի 21–ին արտգործնախարար Անդրեյ Բուդբերգին Ի. Գուդովիչը գրում էր,– Վրաստանը հուսալի չէ, (այստեղ –Ա.Մ.) կան թշնամուն համակիր ոչ քիչ թվով թաթարներ, և ամեն ոք զինված է»:[342] Ուստի խնդրում էր իրեն օգնական ուժեր ուղարկել և ուղիներ փնտրել Պարսկաստանի հետ հաշտություն կնքելու համար:

Օգտվելով առիթից, որ Պ. Նեսվետաևի զորաջոկատը ստացված հրամանի համաձայն, ետ է քաշվել Կարսի նահանգի սահմաններից, տեղի Մամադ փաշան ու Էրզրումի Յուսուֆ սերասկյարն անմիջապես վերագրավեցին թողնված տարածքները և նույնիսկ, անցնելով Ախուրյան գետը, մտան ռուսական նորահաստատ սահմանները: Նեսվետաևին գրած գրության մեջ, հիշեցնելով Ռուսաստանում ռուսների դեմ իրենց դաշնակից Նապոլեոնի հաղթանակը և Գուդովիչի չախչախիչ պարտությունը Ախալքալաքի տակ, Յուսուֆ փաշան պահանջում էր անհապաղ անձնատուր լինել, քանզի «.... դիմադրության և համառության դեպքում, արյունահեղության մեղքն ընկնելու է Ձեզ վրա»:[343] Սակայն մայիսի երկրորդ կեսին Նեսվետաևի զորքերը Գյումրիի մոտ ուժեղ հակահարված տվեցին և ղգալի կորուստներ պատճառեցին թուրքերին: Ստանալով այս հաջողության լուրը՝ Գուդովիչը համալրված ուժերով օգնության չտապեց Շո-

[342] Նույն տեղում, էջ 586:
[343] Նույն տեղում, էջ 530:

բապյալի ռուսական զորաջոկատին: Այս փոքրիկ հաջողությունն Ախալքալաքի ազետից հետո այնքան էր ոգևորել գլխավոր հրամանատարին, որ նա ցարին խնդրում էր արժանին հատուցել գեներալ Նեսվետաևին, որին ռուսական արքունիքը պարտական էր նաև Շիրակը Ռուսաստանին միացնելու հարցում, և նրան պարգևատրել Գեորգի Պոբեդանոսցևի երրորդ աստիճանի չքանշանով:[344]

Ամրապնդելով վերջին հաջողությունը՝ Գուդովիչը նպատակ ուներ վերականգնել իր հեղինակությունը արքունիքում և բեկում մտցնել պատերազմի մեջ: Այս անգամ ռազմական բախտը ժպտաց նրան: Հունիսի 18–ին Ախուրյանի ափին, Փոքր Ղարաքիլիսա գյուղի մոտ Էրզրումի սերասկյար Յուսուֆ փաշայի զորքերի դեմ տեղի ունեցավ ուժեղ ճակատամարտ: Թուրքերին օգնության եկած պարսից գահաժառանգ Աբաս Միրզայի զորքերը չհամարձակվեցին մարտի մեջ մտնել և ետ քաշվեցին: Ավելին, ռուսների այս հաղթանակն այնքան տպավորիչ էր, որ Աբաս Միրզան չուտով ընդունեց զինադադար կնքելու ռուսական առաջարկը, այն դեպքում, երբ մինչ այդ նման քայլը թվում էր անհավանական: Պարսիկների օրինակին հետևեց նաև Ախալցխայի Սելիմ փաշան: Վերջինիս այդ քայլին դրդեց նաև լազերի շրջանում սկսված ուժեղ համաճարակը, որին օրական զոհ էր գնում 50 մարդ:[345] *Ռուսների հետ կնքելով զինադադար՝ նա նպատակ ուներ կանխել հնարավոր հարձակումներն իր վիճայության վրա:*

Ուշագրավ է, որ այդ զինադադարի կնքումը Սելիմ փաշան համաձայնեցրել էր Էրզրումի սերասկյարի հետ, որն էլ իր հերթին այս վերջին պարտությունից հետո զգուշանում էր ռուսների հարձակումից: Փոքր Ղարաքիլիսայի ճակատամարտը բեկում մտցրեց պատերազմի մեջ: Ռուսական կողմի վստահությունն այնքան աճեց, որ Գուդովիչն արդեն սկսեց ուղիներ փնտրել հաստատված զինադադարը թե՛ թուրքերի և թե՛ պարսիկների հետ խախտելու համար, առավել ևս, որ Ռուսաստանը 1807 թ. հուլիսին Տիլզիտում հաշտություն էր կնքել Ֆրանսիայի հետ և Անդրկովկասում կարող էր գործել ավելի անկաշկանդ: Նոյեմբերի սկզբին առիթ դարձնելով լազերի հերթական ավազակային հարձակումը Վրաստանի սահմանամերձ շրջանների վրա՝ նա մեղադրանքներ ներկայացրեց Յուսուֆ սերասկյարին՝

[344] Նույն տեղում, էջ 544:
[345] Նույն տեղում, էջ 53:

Սելիմ փաշայի թշնամական գործողությունների կապակցությամբ: Պատերազմը վերսկսելու նպատակով Գուդովիչն արքունիքին հաղորդում էր, որ իր հետախուզական տվյալներով Սելիմ փաշայի տրամադրության տակ կան առնվազն 3000 հետիոտն և 800 հեծյալ լազեր, որոնց հետ վերջինս նպատակ ունի միանալ Էրզրումի սերասկյարի և Երևանի Հուսեին Կուլի (Ղուլի) խանի զորքերին: Թուրքերը Ախալցխա–Կարս, իսկ պարսիկները՝ Արաքս–Շուշի–Ելիզավետպոլ ուղղություններով պատրաստվում են արշավել, ուստի անհրաժեշտ է նախահարձակ լինել:[346] *Մինչդեռ, Ախալցխայի փաշան ձևացնելով, թե պահպանում է զինադադարը, նոյեմբերին լեզգիներին դրդեց ավազակային նոր գործողությունների: Ախալցխայի լեզգիներն ու զինված թուրք բնակչությունը ներխուժեցին Փամբակի գյուղերը և գերեվարեցին 500 մարդու: Այդ կապակցությամբ դեներալ Նեսլետաևի բողոքները Սելիմ փաշան թողեց անպատասխան: Այս քայլը դիտելով որպես զինադադարի խախտում՝ ռուսական հրամանատարությունը 1808 թ. գարնանը փորձեց ստանալ արքունիքի համաձայնությունը՝ թուրքերի դեմ ռազմական գործողությունները վերսկսելու համար: Դարձյալ հետևեց նույն հրամանը՝ թուրքերի հետ զինադադարը հնարավորինս պահպանելու և Երևանի խանության տարածքը դրավելու մասին:*

Մայիսին, օգտվելով առիթից, որ ռուսական զորքերն իրենց հարձակման հիմնական ուղղությունը դարձրել են Երևանի խանությունը, Ախալցխայի լեզգիներն ու նրանց միացած ավազակային խմբերը, այդ թվում՝ կարափափախները, թալանի նպատակով, Ախալքալաքի գավառից ու Կարսի նահանգի տարածքից կրկին ներթափանցեցին Վրաստան և առևանգեցին մեծ թվով անասուններ: Այնուհանդերձ, ռուսները, նպատակ ունենալով արշավել Երևանի վրա, չարունակեցին պաշտոնապես պահպանել զինադադարը թուրքերի հետ: « ... Ախալցխայի Սելիմ փաշան,– կարդում ենք կոմս Ն. Ռումյանցևի հունիսի 17–ին Ի. Գուդովիչին գրած զեկուցագրում,– բոլոր առումներով խախտում է կնքված զինադադարի պայմանները՝ իր մոտ պահելով փախած 800 ավազակ լեզգիների, որոնց նա Վրաստանի վրա հարձակումներ գործելու և կողոպուտ կատարելու իրավունք է տվել:[347]

---

[346] Նույն տեղում, էջ 100:
[347] Նույն տեղում, էջ 587:

Լեզգիների հարձակումները ռուսական սահմանների վրա չդադարեցին նաև 1808 թ. հուլիս–օգոստոս ամիսներին: Օգոստոսի 3–ին Ախալցխայում ապրող 500 զինված քրդեր ու կարափափախներ գաղտագողի անցան ռուսական սահմանը և Բորչալուի գավառից գողացան 800 գլուխ ոչխար, հապշտապ վերադարձան Ախալքալաքի գավառ: Այս անգամ ռուսական զինվորական իշխանությունները, անշուշտ, Գուդովիչի գիտությամբ, վճռեցին հետապնդել անասնագողերին և մտնելով թուրքական տարածքը պատժել նրանց: Գեներալ–մայոր իշխան Օրբելիանին և Բորչալուի մոուրավ, փոխգնդապետ Էրիստովը ռուսական զորքերով, վրացական տիտղոսներ կրող հայ ու վրացի զինվորականներ Լ. Սումբատովի, Ս. Մելիքովի, Ի. Ջորջաձեի (Գորգաձե) և Ռ. Բարաթովի հեծյալ ջոկատների ու 200 թաթարների հետ, չրջանցեցին Ախալցխայի ավարառուներին, մտան Ախալքալաքի գավառ և դարանակալեցին ռուս–թուրքական սահմանից ոչ հեռու գտնվող Մադաթափա լճի մոտ: Հանկարծակի հարվածով նրանց հաջողվեց կողոպտիչներին փախուստի մատնել և ետ բերել 7800 ոչխար: Տալով 116 զոհ՝ ելուզակները նահանջեցին մինչև Սաթխա գյուղը և կարողացան Ախալցխա հասցնել միայն 200 ոչխար:[348] *Ռուսների այս հակահարձակումը թուրքերի զինադադարը խախտելու պատասխանն էր: Շուտով ռուսական կողմը կրկնեց թշնամու գործելակերպը՝ հակառակորդի տարածքը կողոպտելու և ամայացնելու մարտավարությունը: Նույն իշխան Գ. Օրբելիանին Բորչալուի Ամիրխան և Ղազախի Մուստաֆա աղաներին ենթակա թաթարների ու Կախեթի վրացիների հետ, իր հերթին ներխուժեց Ախալցխայի փաշայության տարածք և այնտեղից առևանգեց 1000 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, 200 էշ, հազարավոր ոչխարներ: Ախալքալաքի 2 գյուղեր ամբողջովին կողոպտվեցին: Ողջ ավարը բաժանվեց մասնակիցների միջև և միայն մի չնչին մաս բաժին հանվեց զորքին:*[349]

Սեպտեմբերին ռուսական զորքերը չարժվեցին Երևանի բերդի վրա: Վերջինիս, որպես Արևելյան Հայաստանի ուժեղագույն ռազմավարական կենտրոնի գրավումը, կարող էր վերականգնել ռուսական կայսրության, այդ թվում գեներալ Գուդովիչի վարկը Անդրկովկասում և ամրապնդել ցարական տիրապետությունն այս տարա-

[348] Նույն տեղում, էջ 588–589.
[349] Նույն տեղում, էջ 585:

ծաշրջանում: Սակայն, փոխանակ ձգտելու բաց դաշտում պարտության մատնել հակառակորդին, Ի. Գուդովիչը սեպտեմբերին կրկին անցավ բերդի պաշարմանը: Ի պատասխան հանձնվելու մասին նրա պահանջին՝ Երևանի Հասան խանը հեգնաբար հիշեցրեց ախալքալաքյան աղետը. «Միթե՞ դուք չգիտեք, թե որքան դյուրին է բերդում պաշտպանվողի և նույնքան դժվարին հարձակվողի համար: Ամեն ոք կարող է պաշտպանվել ամրոցի ներսում և նույն հետևանքի վկան դառնալ, որը բաժին հասավ ձեզ Ախալքալաքի պաշարման ժամանակ»:[350] Այդպես էլ եղավ. պաշարումը ձգձգվեց, իսկ պարսիկներին հաջողվեց անառիկ պահել Երևանը: Այս անհաջողությունից հետո Ի. Գուդովիչի հեղինակությունը կրկին խաթարվեց և չուտով նոր գլխավոր հրամանատարի պաշտոնում 1809 թ. մարտին նրան փոխարինեց գեներալ Ալեքսանդր Տորմասովը:

Նոր գլխավոր հրամանատարը, մինչև ակտիվ գործողությունների անցնելը, վճռեց հանգամանորեն հետախուզել սահմանակից թուրքահպատակ նահանգները, մասնավորապես Ախալցխայի էյալեթը: Պարզվեց, որ 1809 թ. աշնանը Ախալցխայում և գյուղերում սկսվել է ուժեղ համաճարակ: Այս հանգամանքն ավելի կողմնորոշեց Ա. Տորմասովին դեպի ժամանակավոր դադարը, առավել ևս, որ հոգնած բանակը վերակազմավորման և համալրման անհրաժեշտություն էր զգում: Վրաստանի շրջաններում համաճարակի տարածումը կանխելու նպատակով դեպի Ախալքալաք և Ախալցխա տանող ճանապարհների վրա տեղակայվեցին արգելափակոցներ, հաստատվեց խստագույն կարանտինային ռեժիմ: Ա. Տորմասովի հրամանով գեներալ Ֆյոդոր Սիմոնովիչը ջանքեր գործադրեց Ախալցխայի նահանգապետի պաշտոնի համար սկսված պայքարը Շերիֆ փաշայի և նրա կողմից պաշտոնանկ արված Սելիմ փաշայի միջև բորբոքելու նպատակով: Սակայն ռուսների աջակցությունից օգտվող Սելիմ փաշան հաջողություն չունեցավ և նահանջեց դեպի Աջարիա:

Ստեղծված ժամանակավոր դադարը պարսիկներն ու թուրքերն օգտագործեցին ուժերը համալրելու և համատեղ ջանքերով ռուսներին հակահարված հասցնելու նպատակով: 1810 թ. գարնանը Շերիֆ փաշայի առաջարկությամբ հակահարվածի գլխավոր վայր ընտրվեց Ախալքալաքի գավառի տարածքը: Ռուսական կողմին հնարավոր աջակցությունից զրկելու նպատակով՝ նա ապրիլի սկզբին կարգա-

[350] Նույն տեղում, էջ 250:

բեց՝ տեղի հայերին ու վրացիներին բռնագաղթեցնել Կուր գետի ձախ ափը: Ռուսներին, ինչպես նախորդ բաժնում նշվեց, միայն մասնակիորեն հաջողվեց կանխել այդ բռնագաղթը:

Զևավորվող հակառուսական կոալիցիայի ակտիվ դերակատարներ դարձան Երևանի սարդար Հուսեին Ղուլի խանը, Ախալցխայի Շերիֆ փաշան, վրաց գահաժառանգ Ալեքսանդրը և Իմերեթիայի թագավոր Սոլոմոնը: 1810 թ. օգոստոսի սկզբին Հուսեին Կուլի խանի 7 հազարանոց (այլ տվյալներով՝ 10 հազ.) զորաջոկատը, բազմաթիվ ուղտերով ու հարուստ ռազմամթերքով, Բայազետի և Կարսի փաշայությունների տարածքով չարժվեց դեպի Ախալքալաք: Ճանապարհին նրան միացան Կարսի «ռուսամետ» փաշայից դժգոհ, Մաղասբերդի տեր Ղարա բեկի և տեղի կարափափախների ջոկատները, որոնք կողոպուտի մեծ հույսեր էին կապում Վրաստան կատարվելիք արշավանքի հետ: Ալեքսանդրը, որ նպատակ ուներ պարսկաթուրքական աջակցությամբ վերականգնել վրաց պետականությունը, չտապեց թանկարժեք նվերներ ուղարկել Շերիֆ փաշային և անճամբ ժամանեց Ախալքալաք: Սոլոմոնն էլ, օգնական զորք ստանալով Ախալցխայի թուրքերից, Իմերեթիայում բարձրացրեց հակառուսական ապստամբություն: Օգոստոսի 13–ին Ախալքալաքում Երևանի սարդարը հանդիպեց գահաժառանգ Ալեքսանդրին և վերջինիս խորհրդով, հաջորդ օրը ճամբար դրեց Ջավախքի սարահարթում, Կոթելիա գյուղի մոտ: Ռուսներին հաղթելու համոզումն այնքան մեծ էր, որ Ալեքսանդրը հանդգնեց իր սուրհանդակների միջոցով սպառնալիքներ հասցեագրել ռուսական հրամանատարությանը՝ պահանջելով անհապաղ հեռանալ Վրաստանի սահմաններից:[351] *Կարելի է կարծել, որ «դաշնակիցների» ոգևորությունն ու ինքնավստահությունը պայմանավորված էր նաև 1807 թ. մայիսին Ախալքալաքի մոտ ռուսների կրած ծանր պարտության հետևանքով գոյություն ունեցող բարոյահոգեբանական մթնոլորտով: Պատահական չէ, որ այստեղ ռուսներին չախջախելուց հետո ծրագրվում էր արշավել Թիֆլիսի վրա՝ նպատակ ունենալով ընդհանրապես վերջ տալ ռուսական տիրապետությանը Անդրկովկասում:*

Ստեղծված բարդ ռազմաքաղաքական իրավիճակում ռուսական հրամանատարությունը դիմեց վճռական քայլերի: Ռուսահպատակություն ընդունելու և Շերիֆ փաշայի դեմ պայքարելու պայմա-

[351] AKAK, т. 4, T., 1870, с. 128.

նով՝ Սելիմ փաշային Ախալցխայի կառավարչի պաշտոնում վերա-
կանգնվելու համար տրվեցին օժանդակության խոստումներ: Գեներ-
բալ Ա. Տորմասովը կարողացավ օգտվել հակառակորդի թույլ տված
սխալից: Շերիֆ փաշան, հավանաբար անվտանգության նկատա-
ռումներով, իր հիմնական ուժերը դուրս չբերեց Ախալքալաքի բեր-
դից և չմիացավ Կոթելիայի մոտ, բայց դաշտում ճամբար դրած պար-
սիկներին: Այս հանգամանքը դժգոհություն առաջ բերեց Հուսեին
Կուլի խանի զինվորների և կարսեցի թուրքերի ու կարապափախների
շրջանում:

Մինչ Շերիֆ փաշան ուղիներ էր փնտրում կորցրած վստա-
հությունը «դաշնակիցների» մոտ վերականգնելու համար, ռուսա-
կան մի զորաջոկատ (2 գումարտակ, 200 հեծյալ կազակներ) դեներալ
Ֆ. Պաուլուչչիի հրամանատարությամբ սեպտեմբերի 4–ին Գանձա
գյուղից, Աբուլ–Սամսարի լեռներով, մտավ Ջավախքի սարահարթ:
Ամսի 5–ի լույս գիշերը, օգտվելով անձրևոտ ու մառախլապատ եղա-
նակից, ռուսներն աննկատ մոտեցան Ախալքալաքից մի քանի կմ հե-
ռավորության վրա, Թափարվան գետի աջ ափին բանակած պարսկա-
կան զորքերին: Իր ուժերը Պաուլուչչին բաժանեց երկու մասի:
Գնդապետներ Դմիտրի Լիսանևիչին հանձնարարվեց գրոհել պարս-
կական բանակի աջ, իսկ Պեչորսկուն՝ ձախ թևերը: Միայն 100 սաժեն
հեռավորության վրա պարսկական պահակախումբը նկատեց ռուսնե-
րին: Այդ ժամանակ ռուսական երկու շարասյուներից էլ հրանոթա-
յին կրակ տեղաց հանկարծակիի եկած պարսիկների վրա: Ապա ռուս
զինվորները նետվեցին սվինամարտի: Պարսիկների զգալի մասը,
քնաթաթախ վիճակում դիմեց փախուստի Ախալքալաքի ուղղութ-
յամբ՝ հավանաբար հույս ունենալով պատսպարվել թուրքերի մոտ,
բերդի պարիսպների ետևում: Սակայն Թափարվանի ձորում, գտնվ-
թափից իջնելու ժամանակ պարսից զորքերը նոր կորուստներ ավե-
ցին: Դեռ Ախալցխայում գտնվող Շերիֆ փաշայի հրամանով Ախալ-
քալաքի կայազորը նահանջողների առջև փակ պահեց բերդի դար-
պասները՝ բավարարվելով միայն հրանոթային անկանոն կրակոցնե-
րով: Բայց մթնում դիպուկ կրակոցներ չսաստկեցին և ռուսները ոչ
մի վնաս չկրեցին: Պարսիկների շրջանում ավելի խորացավ խառնաշ-
փոթն ու խուճապը:

Հաշվի առնելով հակառակորդի թվային գերակշռությունը և
գրոհի գիշերային պայմանները՝ ռուսական հրամանատարությունը
հրաժարվեց գերիներ վերցնելուց: Այս ամենը մեծաթիվ զոհերի

պատճառ դարձավ. զոհված 700 պարսիկների թվում[352] հիշատակում էին բազմաթիվ բարձրաստիճան պաշտոնյաներ ու զինվորականներ, այդ թվում՝ երեք խաներ: Հուսեին Կուլի խանն ու վրաց գահաժառանգ Ալեքսանդրն առաջին կրակոցներից անմիջապես հետո փախուստի դիմեցին՝ փրկվելով գերի ընկնելուց: Ախալցխայի և Կարսի ուղղություններով պարսկական զորքերի մնացորդները լքեցին գավառի տարածքը:[353] Մարտում լուրջ կորուստներ կրեց նաև Մաղասբերդի բեկի ջոկատը. 500 հոգուց՝ 100 զոհված: Ռուսների ձեռքն անցավ հարուստ ռազմավար թանկարժեք իրեր, շուրջ հազար վրան, նույնքան ձի, դրոշներ և այլն (ի դեպ, կարսեցի թուրքերն ու կարափափախները ճակատամարտում կրած իրենց վնասները «փոխհատուցեցին» պարտված «դաշնակից» պարսիկների գույքի մնացած մասը թալանելու եղանակով): Ռուսական կողմի կորուստները մեծ չէին՝ 4 սպանված և 17 վիրավոր: Թեժ մարտերում հատկապես աչքի ընկան Լիսանևիչը, Պեչորսկին, իշխան Օրբելիանին, կապիտաններ Յուբելիցկին և Մանդրիկինը, Նիժեգորոդյան դրագունների գնդի բազմաթիվ զինվորներ: Ռուսներին մեծ ծառայություններ մատուցեց տեղի գյուղապետ Էլիասը: Պարսկական բանակի տեղադրության մասին նրա հաղորդած ճշգրիտ տեղեկությունների շնորհիվ ռուսական հրամանատարությունը կարողացավ իրագործել անակնկալ գրոհն ու հասնել հաղթանակի:

Լույսը բացվելուն պես բերդից արձակված հրանոթային կրակը դարձավ ավելի դիպուկ: Պաուլուչչին հրամայեց ետ քաշվել պարիսպներից և ճամբար դնել քաղաքից հարավ ընկած Ղաուրմա գյուղում: Պարսկաթուրքական զորքերի պարտությունն Ախալքալաքի մոտ ոգևորության ալիք առաջացրեց Ջավախքի հայերի ու վրացիների շրջանում, որոնք առաջին անգամ էին ականատես լինում մահմեդականների այդօրինակ պարտության: Նրանք նոր եռանդով լծվեցին ռուսական զորքերին օժանդակելու գործին: Հուսեին Կուլի խանը փորձեց պարսից արքունիքի առաջ արդարանալ՝ կրած պարտության մեղքը հիմնականում փնտրելով Շերիֆ փաշայի բռնած դավա-

---

[352] Ըստ նույն՝ ռուսական զինվորական աղբյուրների՝ պարսիկները տվել են 1100 սպանված, որից 800–ը զոհվել է գրոհի ժամանակ՝ ճամբարում, իսկ 300–ը՝ Թափարվանի ձորում, փախուստի պահին (AKAK, т. 4, с. 768).

[353] Հուսեին սարդարը, որքան էլ մեծ էր նրա դժգոհությունը Շերիֆ փաշայից, իր զորքի մնացորդներով հարկադրված եղավ որոշ ժամանակ ապաստանել Ախալցխայում և սեպտեմբերի վերջին մեծ դժվարությամբ վերադառնալ Երևան (AKAK, т. 4, с. 769, 801):

ճանական դիրքի մեջ: Անչուշտ, այդ հարցում սարդարը իրավացի էր. երեք չաբաթ ձգձգելով իր զորքերի հետ Ախալքալաքի բերդում պարսկական ուժերի միավորման հարցը՝ Ախալցխայի փաշան Հուսեին խանին հարկադրեց բանակ դնել բաց դաշտում և անպաշտպան մնալ ռուսների առջև: Այդ ամենը հուշում էր, որ Շերիֆ փաշան ձգտում էր պարսիկների ուժերով, առանց իր ռազմական մասնակցության, Անդրկովկասն ազատել ռուսական ազդեցությունից: Պատահական չէ, որ նա ճակատամարտի վայր ներկայացավ միայն ամսի 6–ին, երբ ամեն ինչ ավարտված էր: Այսպես՝ սեպտեմբերի 5–ի ճակատամարտից հետո պարսկաթուրքական դաշինքը ոչ միայն ի չիք դարձավ, այլև կողմերի միջև ծագեց որոշակի հակադրություն:

Ռազմաքաղաքական անբարենպաստ իրադրությունում պարսից գահաժառանգ Աբաս-Միրզան փորձեց հաշտության եզրեր գտնել ռուսական հրամանատարության հետ: Նա Նախիջևանից ժամանեց Երևան և սուրհանդակի միջոցով խնդրեց հայոց կաթողիկոս Եփրեմին՝ միջնորդել վերսկսելու ընդհատված ռուս–պարսկական բանակցությունները: Անկասկած, իրավիճակի նման շրջադարձը վկայում էր ռուսական ռազմադիվանագիտական հաջողությունը:

Ախալքալաքի ճակատամարտը հօդս ցնդեցրեց նաև վրաց գահաժառանգ Ալեքսանդրի և Իմերեթիայի թագավոր Սոլոմոնի ծրագրերը: Վերջինս սեպտեմբերի 23–ին իրեն օգնող թուրքական մի զորաջոկատի հետ Բորժոմի կիրճում պարտություն կրեց գեներալ Դ. Սիմոնովիչի զորքերից և հարկադրված եղավ հոկտեմբերին ճանաչել ռուսական գերիշխանությունը Իմերեթիայում: Իսկ Ալեքսանդրը հրաժարվեց Թիֆլիսի վրա արշավելու խելացնոր մտադրությունից և շարունակեց վախստականի իր ողիսականը՝ փորձելով նոր դաշնակիցներ գտնել ընդդեմ ռուսների:

Ճակատամարտից հետո Ախալքալաքի թուրքական կայազորի սարսափը ռուսական զորքերից այնքան մեծ էր, որ, ունենալով թվական գերակշռություն (կայազորը բաղկացած էր 400 հեծյալներից և 800 հետևակայիններից), չհամարձակվեց դուրս գալ բերդից և խոչընդոտել Պաուլուչչիի ուժերի անկորուստ հեռանալը դեպի ռուս–թուրքական սահմանագիծ՝ Ծալկայի շրջան:

Ախալքալաքի հաջողությունը գեներալ Ա. Տորմասովին մղեց համարձակ գործողությունների: Ռուսական արքունիքի կողմից առարկությունների չհանդիպելով՝ նա վճռեց իրագործել Ախալցխայի նահանգը Ռուսաստանին միացնելու իր նախորդների՝ Պ. Ցիցիանովի

և Ի. Գուդովիչի վաղեմի ծրագիրը: Դեռ մարտ ամսին Տորմասովը Պ. Բագրատիոնին հայտնում էր. «Այս երկրամասի (Անդրկովկաս — Ա.Մ.) համար Ախալցխայի ձեռքբերումը խիստ անհրաժեշտ է ինչպես այնտեղ մշտապես ապաստան գտած լեզգիների գիշատչական (հարձակումները) դադարեցնելու, այնպես էլ այն բանի համար, որ Պարսկաստանը ձգտում է Ախալցխայի փաշային դրդել համատեղ գործողությունների ընդդեմ Ռուսաստանի»:[354] Այդ համարձակ ծրագիրն իրականացնելու համար առաջին հերթին անհրաժեշտ էր գրավել փաշայանիստ Ախալցխա քաղաքը, որն Անդրկովկասում ռուսական տիրապետության դեմ թուրքերի, վարձկան լեզգիների, կարափափախների, վրաց Թագաժառանգ Ալեքսանդրի, Իմերեթիայի Թագավորի պայքարի գլխավոր հենակետերից էր: Տորմասովը որոշակի հույսեր էր կապում Աջարիայի Սելիմ փաշայի հետ, որն իր հերթին ուզում էր ռուսների օգնությամբ վերականգնել կորցրած իշխանությունը Ախալցխայում՝ պատրաստակամություն հայտնելով ընդունել ռուսահպատակություն:[355]

1810 թ. նոյեմբերի սկզբին գեներալ Ա. Տորմասովը ձեռնամուխ եղավ Ախալցխայի էյալեթի գրավմանը: Գեներալ Սիմոնովիչին հանձնարարվեց 3 գումարտակով և Իմերեթիական ու Մեգրելական միլիցիայի հետ մտնել նահանգի սահմանները և գրավել Թյումրուկ Բողազի բերդը, ուր ամրացել էր Սոլոմոն Թագավորը, ապա միանալով Սելիմ փաշայի զորքերին՝ պաշարել Ախալցխան: Ս. Պորտյագինին հանձնարարվեց 3 գումարտակով Փամբակից չարժվել Ծալկա և այնտեղից անցնել Ախալքալաք: Երրորդ հիմնական զորախումբը Ա. Տորմասովի և բարոն Գ. Ռոզենի հրամանատարությամբ 6 գումարտակներով, 400 դրագուններով և 600 կազակներով Բորժոմի կիրճով ուղղվեց դեպի Ախալցխա: 3 զորախմբերը նոյեմբերի 15–ին պետք է միանային Ախալցխայի բերդի մատույցներում:

Ռուսական հրամանատարության տրամադրության տակ եղած հետախուզական տվյալները հուշում էին, որ Շերիֆ փաշան չէր կարող ակնկալել որևէ օգնություն. Հուսեին Կուլի խանը նրա նկատ-

---

[354] AKAK, т. 4, с. 765–766.

[355] Հետագա դեպքերն եկան ապացուցելու, որ Սելիմ փաշան իրականում ոչ միայն մտադիր չէր ընդունել ռուսական հպատակություն, այլև, լինելով երդվյալ ռուսատյաց, Բ. Դռան հրահանգով ժամանակ առ ժամանակ գինական օգնություն էր ցուցաբերում իր ոխերիմ թշնամուն՝ Շերիֆ փաշային՝ ռուսների դեմ մղված պայքարում (AKAK, т. 4, с. 338).

մամբ թշնամական դիրք էր բռնել, իսկ Էրզրումի սերասկյարը, թեև օգնական զորք էր հավաքում, սակայն, բավական հեռու լինելով, ի վիճակի չէր սկսված աշնանային տեղումների պայմաններում օր առաջ հասնել Ախալցխա: Ուստի պատահական չէ, որ գրեթե առանց լուրջ դիմադրության, ռուսական զորքերը բավական արագորեն գրավեցին փաշայության տարածքի զգալի մասը: Գեներալ Ց. Սիմոնովիչի ջոկատը Մաչասծղալի կոչվող նեղ կիրճում պարտության մատնեց Թուրք–լեզգիական 2 հազարանոց հեծելազորը, որը փորձում էր խոչընդոտել ռուսական զորախմբերի միավորմանը: Այդ պարտությունը հարկադրեց Սոլոմոն Թագավորին առանց կռվի թողնել Թյումրուկ Բողազի ամրոցն ու անցնել Ախալցխա: Գրեթե առանց լուրջ դժվարությունների ընթացավ Ս. Պորտնյագինի զորաջոկատի առաջխաղացումը: Շրջանցելով Ախալքալաքի բերդը՝ թափարվան դեպի ձորով, թուրքերի հետ ունեցած թեթև ընդհարումից հետո, այն ևս արևելքից մոտեցավ Ախալցխային: Բնականաբար, թուրքերն ու լեզգինները առհասարակ չհամարձակվեցին արդելք հանդիսանալ Բորժոմի կիրճով առաջացող Տորմասովի հիմնական ուժերին, որոնք շրջապատելով Ածղուրի բերդը, մյուս զորաջոկատներին միացան նոյեմբերի 14–15–ին:

Տեղի քրիստոնեական գյուղերը ջերմորեն ողջունում էին ռուսներին և հայտնում իրենց հպատակությունը:[356] Ախալցխայում ապրող հայերը, վտանգելով իրենց կյանքը, պարբերաբար կարևոր լուրեր էին հաղորդում թուրքական ուժերի դասավորության, Շերիֆ փաշայի ու Սոլոմոն Թագավորի գործողությունների մասին: Նրանցից հատկապես աչքի էր ընկնում Մելքում անունով մեկը: Ի դեպ, կապը նրանց հետ իրականացվում էր ռուսական բանակում ծառայող հայ թարգմանիչների միջոցով, որոնցից առավել ճանաչված էր հայտնի հայ ազնվականական տոհմի զավակ Իվան Կորգանովը (Հովհաննես Կորգանյան):[357] Շուտով մահմեդականների՝ մեսխեթցիների մի մասը ևս չտապեց հայտնել իր հպատակությունը, իսկ մյուսները հեռացան լեռնային շրջաններ: Վերջիններիս դեմ Տորմասովն ուղարկեց 3 հազարանոց մի ջոկատ՝ բաղկացած զնմտավային միլիցիայից, վրացի, լմներեթցի, մեգրել աշխարհազորայիններից և Ղազախի ու Շամշադինի թաթարներից: Մեսխեթցիների նկատմամբ

[356] AKAK, т. 4, с. 814–815.
[357] Նույն տեղում, էջ 348, 769:

գործադրվեցին բռնություններ: Ցավոք, առանց խտրականության, բռնությունների ու կողոպուտի ենթարկվեցին նաև բազմաթիվ քրիստոնյաներ: Տարօրինակ է, որ գլխավոր հրամանատարն իր մի զեկուցագրում այդ տմարդի քայլի մասին խոսում էր մեծ գոհունակությամբ՝ այն համարելով արդյունավետ գործողություն նահանգը հպատակեցնելու ուղղությամբ:[358]

Ռուսական հրամանատարությունն անհրաժեշտ ուշադրություն չհատկացրեց նահանգի մյուս բերդերի ու բնակավայրերի վրա՝ համոզված լինելով, որ Ախալցխայի գրավումն ինքնըստինքյան կարող է հանգեցնել դրանց հպատակեցմանը: Եվ իրոք, ստանալով դեպի Ախալցխա ռուսների շարժվելու լուրը, Ախալքալաքի կայազորը, որ հիմնականում բաղկացած էր վարձկաններից, լքեց բերդը և հեռացավ Կարս կամ Աջարիա: Բնակչության զգալի մասը ևս դիմեց փախուստի:[359] Շերիֆ փաշան ամրացրեց Ախալցխայի բերդը, և պատանդներ հավաքելով էյալեթի բոլոր խոշոր բնակավայրերի ու բերդերի կառավարիչներից, նախապատրաստվեց երկարատև դիմադրության: Ռուսական զորքերը գրավեցին Ախալցխայի արևմուտքում ընկած Սուխլիս գյուղը, ապա՝ Իվլիտը և օղակեցին ամբողջ քաղաքը: Թուրքերն անհաջող փորձ կատարեցին հրետանային կրակով խափանել բոլոր կողմերից իրենց չրջափակելու ռուսների գործողությունները: Թուրքերը քանիցս փորձեցին դուրս գալ բերդից և հակահարված հասցնել: Սակայն ամեն մի այդօրինակ ձեռնարկում նոր կորուստների պատճառ դարձավ: Մեծ զոհեր եղան նաև Փոցխով գետից ջուր բարձրացնելու նպատակով իրականացված գործողությունների ընթացքում, Մարդա գյուղի համար մղված կռիվներում:

Նոյեմբերի 18–ին ռուսական զինվորները գրավեցին քաղաքի վրա իշխող, ռազմավարական նշանակության «Ղայա փաշա» (փաշայի ժայռ) կոչվող բարձունքը: 3 օր թուրքերը հուսահատ կռիվ մղեցին այն ետ գրավելու համար՝ տալով 300 նոր սպանված: Այստեղ զոհվեց նաև 73 ռուս զինվոր: Ամսի 22–ին քաղաքը ենթարկվեց ուժեղ ռմբակոծության, որի հետևանքով մեծ հրդեհ բռնկվեց: Այն

---

[358] Նույն տեղում, էջ 811–812:

[359] Պահպանված արխիվային փաստաթղթերից երևում է, որ Տորմասովը, լուր ստանալով Ջավախքում ստեղծված խառնաշփոթ իրավիճակի մասին, Դմանիսում տեղակայված ուժերի հրամանատար մայոր Ալյուշինին նոյեմբերի 15–ին կարգադրել է իր վաշտով գրավել Ախալքալաքի գավառը (նույն տեղում): Սակայն, վերջինս, հավանաբար

տևեց 4 օր: Հրկիզվեցին գրեթե բոլոր փայտաշեն տները, այդ թվում՝ փաշայի բնակարանը, զոհվեցին բազմաթիվ խաղաղ բնակիչներ: Թուրքական հրետանին լիովին չարքից հանվեց: Տորմասովը փաշայից պահանջեց իրեն հանձնել Սոլոմոնին և վարձկան լեզգիներին: Շերիֆ փաշան հայտնեց, որ Իմերեթիայի թագավորը բերդում չէ, այլ՝ Երևանի սարդարի մոտ է, իսկ լեզգիները վաղուց լքել են քաղաքը:

Սակայն պաշարման 6–րդ օրը ռուսական զորքերի մեջ բռնկվեց համաճարակ՝ ժանտախտ: Գերի ընկած թուրք զինվորները հայտնեցին, որ հիվանդությունն արդեն մեծ չափերով տարածվել է քաղաքի բնակչության շրջանում: Բանն այն է, որ փաշան, չվստահելով իր հպատակներին, մինչև պաշարումը պատանդներ էր վերցրել նաև այն գյուղերի մեծամեծներից, որոնց բնակավայրերը դեռևս նախորդ տարվանից վարակված էին համաճարակով: Պարզ էր, որ վարակի աղբյուրը քաղաքի բնակիչներն էին: Շուտով հիվանդությունը տարածվեց ռուսական այլ զորագնդերում:

Համոզված լինելով, որ Ախալցխայի գրավման դեպքում անհնարին է խուսափել բնակչության հետ շփումներից, նրա ունեցվածքի կողոպուտից, և բնականաբար, հիվանդության բռնկումից, գլխավոր հրամանատարությունը որոշում կայացրեց դադարեցնել պաշարումը: Անշուշտ, նման վճիռը հետևանք էր նաև պաշարման ձգձգման արդյունքում ռուս զինվորների մեջ ոչ բարենպաստ բարոյահոգեբանական վիճակի ստեղծման. զոհերի թիվը գնալով աճում էր, Սելիմ փաշայի խոստացած օգնությունն ուշանում էր,[360] իսկ պաշարվածներին էրզրումից օգնական զորքեր ժամանելու լուրերն ավելի ահագնալի էին դառնում:

Նոյեմբերի 26–ին Տորմասովը կարգադրեց բերդի պարիսպներից ետ քաշել հրետանին ու զորքերը: Օգտվելով առիթից՝ թուրքերն անցան հակահարձակման, սակայն տվեցին ևս 60 սպանված: Ապա ռուսական հրամանատարությունը խստագույնս պահանջեց զորքից մեկուսացնել հիվանդներին, ճանապարհներին դնել կարանտիններ,

---

բավարար ուժեր չունենալու պատճառով, այդ հրամանը կամ չի կատարել, կամ ստացել է նոր հրահանգ՝ այդ մտադրությունից հրաժարվելու մասին:

[360] Սելիմ փաշան, ինչպես պետք էր սպասել, այդպես էլ չժամանեց: Հետագայում՝ 1811 թ. ապրիլին նա Տորմասովին հավատացնում էր, թե իբր ինքը փորձել է օգնության գալ, միայն թե, մինչև իր ժամանումը Ախալցխա, ռուսներն արդեն հեռացած են եղել այնտեղից և ի «հավատարմություն» ռուսների, այժմ պատրաստ է համատեղ ուժերով գրոհել Ախալքալաքը (նույն տեղում, էջ 439):

հրկիզել բնակչությունից խլված ունեցվածքը, ապա ուղղվել դեպի ռուսական սահմանները: Սակայն հրկիզված ռազմավարը «վերականգնելու» նպատակով թույլատրվեց զորքերին ուղեկցող 3 հազարանոց միլիցիային ու աշխարհազորին թալանել ժանտախտով չվարակված գյուղերը, որոնց մեծ մասը բաժին էր ընկնում Ախալքալաքի գավառին: Այս անգամ էլ հայ–վրացական ու մահմեդական գյուղերի միջև տարբերակված մոտեցում չեղավ: Իրականացվեց սոսկալի կողոպուտ, դրանով իսկ «...փոխհատուցվեցին այն կորուստները, որոնք ամեն տարի կրում են Վրաստանի և Իմերեթիայի սահմանային բնակիչները ախալցխացի թուրքերի և գիշատիչ լեզգիների հարձակումներից,– կարդում ենք ռուսական պաշտոնական զեկուցագրերում,– և ...պատերազմի իրավունքով հակառակորդը դրվեց այնպիսի վիճակի մեջ, երբ նա երկար ժամանակ ի վիճակի չի լինելու (մեզ – Ա.Մ.) վնաս հասցնելու»:[361] Ռուսական հրամանատարությունը միայն թալանով չբավարարվեց և վճռեց էթնիկապես ևս երկրամասը ամայացնել: Վրաց–մեգրելական աշխարհազորի ջանքերով Ախալցխայի փաշայության 1500 ընտանիքներ, այդ թվում՝ քրիստոնյա հայեր ու վրացիներ՝ իրենց 50 հազ. անասուններով տեղահան արվեցին և բռնագաղթեցվեցին Վրաստան:

Այս դեպքերը հիմք են տալիս պնդելու, որ ռուսների ախալցխյան արշավանքը չէր հետապնդում միայն ռազմաքաղաքական նպատակներ: Թշնամուն վերադարձվող տարածքը, անկախ իր էթնիկական կազմից, ռուսական զինվորական իշխանությունների համար ցանկալի էր տեսնել ավերակ ու ամայի վիճակում: Քանի որ այս տարածաշրջանում ռուսական կայսրության ժողովրդագրական քաղաքականության խնդիրը ստորև առանձին քննարկման առարկա է, բավարարվենք վերոնշյալով և անցնենք իրադարձությունների հետագա ընթացքի լուսաբանմանը:

Ամփոփելով ռուսների 1810 թ. ախալցխյան արշավանքի արդյունքները՝ կարելի է պնդել, որ այն լիովին չծառայեց իր նպատակին: Որքան էլ ծանրակշիռ թվային Ախալցխան չգրավելու Ա. Տորմասովի փաստարկները, այնուամենայնիվ, պարզ էր, որ արշավանքը ձախողվել էր. մարդկային զգալի կորուստներ էին եղել, իսկ տեղի բնակչությունից ձեռք բերված «ավարը» չէր կարող փոխարինել ցա-

[361] Նույն տեղում, էջ 813:

բական արքունիքի սպասելիքներին:[362] Ուստի, կարծում ենք, որ այդ ժամանակ անսպասելի չէր ցարի որոշումը Ա. Տորմասովին Անդրկովկասից ետ կանչելու և նրա փոխարեն նախ՝ մարկիզ, գեներալ Ֆիլիպ Պաուլուչչիին, ապա՝ Նիկոլայ Ռտիշչևին նշանակելու մասին:

Գեներալ–լեյտենանտ Ֆ. Պաուլուչչին իր նախորդի կրած անհաջողությանից հետո չհապաղեց խիզախ ձեռնարկումներով մոռացության մատնել ախալցխյան արշավանքի ճնշող տպավորությունը: 1810 թ. սեպտեմբերի 4–5–ի ճակատամարտը մեծ ճանաչում էր բերել Պաուլուչչիին: Սակայն թուրքերը, հատկապես Ախալքալաքի կայազորը, պարսիկների դեմ ռուսների ունեցած այդ հաջողությունը համազոր չէին դիտում իրենց նկատմամբ տարած հաղթանակին: Ավելին, հպարտությամբ հայտարարում էին, որ պարսիկներին հաղթելուց հետո ռուսներն այնքան էին վախենում իրենցից, որ չհամարձակվեցին չարժվել բերդի վրա՝ համոզված լինելով, որ իրենց սպասելու է նույն ճակատագիրը, ինչ 1807 թ. մայիսին Գուդովիչի զորքերին: Այս հանգամանքները մղում էին նոր գլխավոր հրամանատարին ի չիք դարձնելու Ախալքալաքի անառիկության առասպելը: Ալեքսանդր I ցարին գրած իր մի զեկուցագրում Պաուլուչչին հայտնում էր, որ «բացի Ախալքալաքն անառիկ համարող թուրքերի դոռոզությունը կոտրելու իմ անհագ ցանկությունից, ես ցավով նկատում էի, որ Ախալքալաքի մարզի հարևան Բորչալուի հարուստ պրովինցիան, բաց լինելով հակառակորդի առջև, թուրքական հարձակումների ու դերեվարությունների հետևանքով վերջին տարիներին կորցրել էր իր բնակչության մեծ մասը»:[363]

Ախալքալաքի գրավումը ռուսները կարևորում էին մեկ այլ հանգամանքով ևս. տիրելով ռազմավարական նշանակություն ունեցող այդ ամրոցին՝ այն Ռուսաստանին միացնելու հարցը կարելի կլիներ մտցնել առաջիկայում կնքվելիք ռուս-թուրքական հաշտության պայմանագրի մեջ: Շուտով տեղի ունեցան լրադարձություններ, որոնք եկան խորացնելու Ջավախքը գրավելու Ֆ. Պաուլուչչիի համոզումը: 1811 թ. նոյեմբերի կեսին Ախալքալաքի դավառից լեզգիներն ու թուրքերը կրկին ներխուժեցին Բորչալուի սահմանները: Այս

[362] Հետագայի ռազմական փորձագետներն իրենց եզրակացություններում նշել են, որ Տորմասովը պաշարման ժամանակ թույլ է տվել որոշակի սխալներ, մասնավորապես՝ հարձակման գլխավոր ուղղություն դարձնելով քաղաքի արևմտյան անմատչելի պարիսպները՝ հնարավորություն տալով հակառակորդին անառիկ պահել ամրոցը:
[363] АКАК, т. 5, Т., 1873, с. 183.

անգամ մարդկանց առևանգումն ու անասնագողությունը կանխվեց գեներալ Խատունցովի զորախմբի կողմից: Վերջինս նոյեմբերի 20–ին ծանր պարտության մատնեց լեզգիներին և հարկադրեց նահանջել: Ինչևէ, պարզ էր, որ Ախալքալաքի սանջակից Լոռուն սպառնացող վտանգը չի վերացել: Ռազմական մինիստրին գրած զեկուցագրում մարկիզ Պաուլուչչին համոզված գրում էր, որ Ախալքալաքի ու շրջակայքի նվաճումով մենք «...կապահովագրենք Բորչալուի դիստանցիան և ամբողջ ամայացած Սոմխեթիան և ...կվերականգնենք նրանց նախկին ծաղկուն վիճակը, իսկ տեղի բնակչությանը կպարգևենք կայուն խաղաղություն»: Ուստի ինքը որոշել է «անպայման, որքան հնարավոր է չուտ, ոչնչացնել այդ ավազակաբույնը և հպատակեցնել Ախալքալաքի բերդը»:[364]

Ախալքալաքյան արշավանքը նախապատրաստվեց շատ արագ, խիստ գաղտնիության պայմաններում, բայց բավական խնամքով: Երկու արհեստավորների հանձնարարվեց պատրաստել պաշարողական սանդուղքներ: Հակառակորդի տարածքում աննկատ գործելու համար անհրաժեշտ եղավ սահմանափակվել փոքրաքանակ ուժերով: Վրացական գրենադերական գնդի երկու գումարտակով և 100 հոգանոց կազակային ջոկատով:[365] *Այդ զորաջոկատի ընդհանուր հրամանատարությունը վստահվեց քաջարի գնդապետ Պյոտր Սեմյոնովիչ Կոտլյարևսկուն, որն իր արիությամբ քանիցս աչքի էր ընկել դարասկզբին պարսիկների ու թուրքերի դեմ մղված մարտերում:*

1811 թ. դեկտեմբերի 3–ին Կոտլյարևսկին իր գնդի մեկ գումարտակով, դուրս գալով Գորիից, անցավ Կուրի աջ ափը, և այնտեղ միացնելով երկրորդ գունդը, շարժվեց դեպի Ծալկա: Սրընթաց շարժ ապահովելու համար որոշվեց հրաժարվել հրետանուց և ծանր ռազմամթերքից: Փոքրաթիվ գումակի հիմնական սպառազինությունը բաղկացած էր ձիերի վրա բարձած պաշարողական սանդուղքներից

---

[364] Նույն տեղում, էջ 185, Дубровин Н., История войны и владычества русских на Кавказе, т. 5, с. 434–435.

[365] Որոշված էր արշավանքին մասնակից դարձնել նաև 46–րդ եգերական գնդի մի գումարտակ, որը տեղակայված էր Ղմանիսում: Սակայն տեղացած առատ ձյան պատճառով այն չկարողացավ հասնել Ծալկա և միանալ վերոհիշյալ ուժերին (АКАК, т. 5, с. 185). Արշավանքին մասնակցելու էր նաև Ղազախի թաթարների 250 հոգանոց մի հեծելազոր, որը ինչպես Տորմասովի ախալցխյան արշավանքի ժամանակ վրացական աշխարհազորը, կանխելու էր գավառից բնակչության փախուստն ու նրանցից սննդամթերքի առգրավումը: Սակայն, չհասած օսմանյան սահմաններին, թաթարները լքեցին ռուսներին և ցիրուցան եղան տարբեր ուղղություններով (նույն տեղում, էջ 113):

ու հրացանային փամփուշտներով լցված արկղերից: Ռուս զինվորներին վիճակվեց հաղթահարելու անասելի դժվարություններ: Ձմռան սառնամանիքի, բքի ու առատ ձյան պայմաններում, եռօրյա երթից հետո նրանք կտրեցին Թռեղքի սարահարթն ու լեռնաշղթան, ամսի 7–ի լուսաբացին աննկատ մտան Ախալցխայի էյալեթի տարածքը և կանգ առան մի կիրճում՝ Ախալքալաքի բերդից 25 վերստ հեռավորության վրա: Ամբողջ օրը ռուս զինվորները հարկադրված եղան դուրս չգալ թաքստոցից՝ թուրքերի և տեղի բնակչության կողմից չնկատվելու համար: «Հրաշքով մեր ջոկատը փրկվեց,– հետագայում սարսափով հիշում էր Կոտլյարևսկին,– քանզի փաշայության սահմաններում (թուրքերից – Ա.Մ.) մնաց աննկատ»:[366] Մյայն դեկտեմբերի 7–ի ուշ երեկոյան, մթնելուց հետո ռուսական զորաջոկատը սրընթաց մոտեցավ քաղաքին:

Պ. Կոտլյարևսկին անձամբ գլխավորեց առաջին չարասյունը: Երկրորդի և երրորդի հրամանատարությունը համապատասխանաբար ստանձնեցին 16–րդ եգերական դնդի հրամանատար, դնդապետ Ստեպանովը և փոխգնդապետ Ուշակովը: Յուրաքանչյուր չարասյունում հաշվվում էր 200 գրենադեր (նռնակակիր զինվոր), որոնց կցված էին 20–ական հրաձիգներ: Մի վաշտ առանձնացվեց բերդի մերձակա երկու գյուղերը, հավանաբար Դիլիսկան ու Խուլգումոն, գրավելու համար, իսկ 30–ական մարդուց բաղկացած 3 փոքրիկ ջոկատներ հանձնարարություն ստացան կազմակերպելու կեղծ գրոհներ՝ հակառակորդի ուշադրությունը հիմնական ուժերից չեղելու համար: Ինչպես երևում է, ռուսական զորաջոկատը բերդը գրավելու դժվարին խնդիրն իրագործելու էր՝ ունենալով մոտ 800 զինվոր: Անշուշտ, հաջողության հասնելու Կոտլյարևսկու հաշվարկները կառուցված էին հանկարծակի հարձակման իրականացման վրա, որի դեպքում թուրքական 200 հոգանոց կայազորը ի վիճակի չէր լինելու ստանալ օգնական ուժեր:

Միայն պարիսպներից 2 վերստ հեռավորության վրա, երբ կայազորը նկատեց ռուսներին, Կոտլյարևսկին կարճատև դադարի հրաման արձակեց: Ասպա գիշերվա ժամը 2–ին սկսվեց ընդհանուր գրոհը: Ռուսական զորաջոկատի երթն այնքան արագ ու անսպասելի էր, որ քաղաքի հարևան գյուղերի մահմեդական բնակիչները չհասցրեցին պատսպարվել բերդում: Ռուս մարտիկները թշնամու կրակի տակ,

[366] Потто В., Кавказская война, т. 1, вып. 3, с. 529.

Թափարվանի քարքարոտ ձորով, ինչպես կամրջով, այնպես էլ ուղղակի ջրի միջով, պաշարողական սանդուղքները չալակած, անցան գետի ձախ ափը:

Շարասյուններից մեկը մնաց պահեստում, իսկ երկուսի մարտիկները բերված սանդուղքներով անմիջապես սկսեցին մագլցել բերդի արևելյան պարիսպները: Առաջիններից մեկը ամրոց ներթափանցեց կապիտան Շուլտենը: Կիսարթուն ժամապահներից չատերը, հանկարծակիի եկած, առանց լուրջ դիմադրության, քաշվեցին միջնաբերդ: Մինչև ժամը 3–ը ռուսները գրավեցին թշնամու երկու մարակոց: Եվս մեկ ու կես ժամ տևած համառ մարտից հետո միջնաբերդն ու ամբողջ քաղաքը գրավվեց: Կայազորի 200 ենիչերիների մեծ մասը զոհվեց, իսկ 47–ը գերի ընկան: Հաղթողների ձեռքն անցավ անվնաս մնացած բերդը, 16 հրանոթ և մի քանի թնդանոթ իրենց սայլակներով, 40 փութ վառոդ և այլ ռազմամթերք: Ռուսների կորուստները կազմեցին 1 սպանված և 26 վիրավոր:[367] *Մարտում հատկապես աչքի ընկան կազակների առաջնորդ փոխգնդապետ Եժովը, կապիտան Շուլտենը, հայազգի չտաբս–կապիտան Սաղինովը (Սաղինյան), որը ծանր վիրավորվեց, ինչպես և հրամանատար Կոտլյարևսկին:*

Այս լուրջ ռազմական հաջողության համար Վրացական գրենադերական գունդն արժանացավ Գեորգիևյան դրոշի «Ախալքալաքի գրավման համար» վերտառությամբ, Պաուլուչչին՝ սբ. Վլադիմիրի 2–րդ աստիճանի շքանշանի, իսկ Կոտլյարևսկուն շնորհվեց գեներալ–մայորի կոչում: Շատ սպաներ ու զինվորներ ևս ստացան շքանշաններ: Պաուլուչչին, բարձր գնահատելով Կոտլյարևսկու զորախմբի սխրանքը, այն անվանեց «ռազմական գործողությունների առաջին կարևոր քայլը», քանզի ռուսական զորքերը «...լեզգիներին պատճառեցին այնպիսի կորուստներ, որպիսին այս երկրամասը չէր տեսել, իսկ Ախալքալաքի բերդը, որ 1807 թվականից վրացիների համար համարվում էր անմատչելի, գրոհով վերցվեց միասնական արիությամբ ոգեշնչված փոքրաթիվ ուժերով».[368] *Մարկիզ Պաուլուչչին կոմս Ն. Ռումյանցևից ստացավ հատուկ շնորհավորագիր:*[369]

---

[367] РГВИА, ф. ВУА, д. 2875, ч. 3, лл. 173–174 и Присоединение Восточной Армении к России, т. 1, с. 593–594.
[368] АКАК, т. 5, с. 186.
[369] Նույն տեղում, էջ 191:

Մինչև դեկտեմբերի 20–ը Կոտլյարևսկու զորախմբին հաջողվեց իրեն ենթարկել ամբողջ գավառը:[370] *«Ախալքալաքի հպատակեցմամբ,– այդ օրերին գրում էր ցարին Պաուլուչչին,– Վրաստանի համար մշտավտանգ այս մարզն այժմ միացված է Ձերդ կայսերական մեծության ընդարձակ տիրույթներին»:*[371] *Քրիստոնյա բնակչությունը, որ թեև մեկ տարի առաջ Տորմասովի միլիցիայի ու «աշխարհազորայինների» կողմից ենթարկվել էր կողոպուտի, թալանի ու դերեվարությունների, կրկին բարեհաճ վերաբերմունք հանդես բերեց ռուսական զորքերի նկատմամբ: Պատահական չէ, որ ձյան պատճառով Վրաստանի հետ ճանապարհների փակվելուց հետո, ռուսներն իրենց աննգամթերքի խնդիրը հիմնականում լուծեցին տեղացիների հաշվին: Այդուհանդերձ, ինչպես վկայում են ռուսական պաշտոնական աղբյուրները, նրանց այդ քայլն ըստ արժանվույն չգնահատվեց. հայերն ու վրացիները դարձյալ զերծ չմնացին կողոպուտից և գյուղմթերքների առգրավումներից:*

Ախալքալաքի և գավառի գրավումից հետո Պ. Կոտլյարևսկու 800 հոգանոց զորախմբի վիճակը օրեցօր ծանրացավ: Այդպիսի սահմանափակ ուժերով դժվար էր նվաճված երկրամասը պահել հպատակության մեջ, առավել ևս, որ լեռնային գյուղերում շարունակում էին գործել լեզգիական հեծյալ ավազակախմբերը, իսկ Ախալցխայից ամեն վայրկյան սպասելի էին հարձակումներ Շերիֆ փաշայի կողմից: Ի պատասխան նոր ուժեր ուղարկելու Կոտլյարևսկու խնդրանքին՝ Պաուլուչչին բավարարվեց նոր հրահանգով, ըստ որի՝ դարձյալ Ախալքալաք՝ օգնության նպատակով պետք է ուղարկվեին ոչ թե կանոնավոր զորքեր (դրանց անհրաժեշտությունը, ըստ գլխավոր հրամանատարի, ավելի շատ զգացվում էր Վրաստանում՝ օրեցօր հասունացող հակառուսական ապստամբության պատճառով), այլ զապախցի թաթարների հեծելազոր, որն արդեն արշավանքի օրերին աչքի էր ընկել իր դավաճանական գործելակերպով:

Բանն այն է, որ ռուսական հրամանատարությանն ավելի շատ հուզում էր ոչ թե իրական օգնության տրամադրումը, այլ բնակչության և նրա չարժական ինչքի դուրսբերման կանխումը գավառից: Դա հստակ երևում է փոխգնդապետ Ջորաևին Պաուլուչչիի 1811 թ. դեկտեմբերի 25–ի հրահանգից, ուր մասնավորապես խոս-

[370] Потто В., Кавказская война, т. 1, вып. 3, Т., 1885, с. 564.
[371] АКАК, т. 5, с. 184.

վում էր թաթարական հեծելազորի անելիքների մասին: Ղազախի մոուրավ (կառավարիչ) Բեհբութովը պարտավոր էր Ջորաևին տրամադրել 150–250 հոգանոց վստահելի մի հեծելազոր, որը նախկինում Ջավախքից Լոռի (Քոլագերան գյուղը) և Վրաստան բռնագաղթեցված Ախալքալաք քաղաքի ու Կոթելիա գյուղի բնակիչների ուղեկցությամբ, պետք է հասներ գավառ և դրվեր բերդի պարետ նշանակված մայոր Զգորելսկու տրամադրության տակ: Ջոկատի գլխավոր խնդիրը պետք է լիներ տեղացիների թաքցրած հացահատիկի ու այլ սննդամթերքի հայտնաբերումն ու առգրավումը: Յուրաքանչյուր 20 քառորդ հացահատիկի հայտնաբերման համար ամեն մի կոթելիացու նախատեսվում էր 4 արծաթ ռուբլու պարգև: Իսկ անցյալ տարի իրենց թաքցրած հացահատիկի վերոհիշյալ քանակության հայտնաբերման դեպքում, գյուղացիներին տրամադրվելու էր 3–ական արծաթ ռուբլի: Հատկանշական է, որ 20 քառորդ հացահատիկ առգրավելու համար թաթար հեծելազորայիններին տրվելու էր ավելի մեծ գումար՝ 6 արծաթ ռուբլի: Յավալի է, որ նույն հրահանգում Պաուլուչչին Ջորաևին կարգադրում էր հարձակվել գյուղերի վրա և խլել անասունները՝ բանակի համար այսպես կոչված «չարժական զինվորական խանութ» ստեղծելու նպատակով: Նմանապես դեկտեմբերի 29–ին Զգորելսկուն ուղղված կարգադրությամբ Պաուլուչչին պահանջում էր չբավարարվել տեղում մնացած հացահատիկի ու անասունների առգրավումով և, միայն 2 վաշտ թողնելով բերդի պաշտպանության համար, մայոր Բարցովի գլխավորությամբ մնացած ուժերով հետախուզել լեռնային գյուղերը, նույնիսկ հարևան Զլդրի սանջակը:[372] Ջավեշտականն այն է, որ այսքանից հետո էլ նույն հրահանգով խնդիր էր դրվում՝ քայլեր ձեռնարկել նորանվաճ մարզը բնակեցնելու, փախած բնակչությանը վերադարձնելու և ռուսական զինվորական իշխանությունների նկատմամբ վստահության մթնոլորտ ստեղծելու ուղղությամբ:[373]

Կարելի է ենթադրել, որ գեներալ Պաուլուչչին կամ չէր պատկերացնում իրերի վիճակը և վերջին հաջողություններից գլխապտույտ՝ անիրական հրամաններ էր արձակում, որոնց կատարման արդյունքում տեղի քրիստոնյա բնակչությունը նոր արհավիրքների էր ենթարկվում կամ, որ ավելի հավանական է, «կենսագործում էր» ռու-

[372] Նույն տեղում, էջ 188:
[373] Նույն տեղում, էջ 186–187:

սական կայսերական քաղաքականությունն Արևելքում՝ առանց վարանելու ամեն կարգի բռնամիջոցների գործադրման առջև: Նա կարծում էր, որ ռուսական հրամանատարությունը Ջևդրի սանջակին, Խերթվիսի, Ասպինձայի, Ախալցխայի և Բաթումի բերդերին տիրելու համար դեռ կարող է հասնել հաջողության խաղաղ միջոցներով, այն է՝ կաշառելով այդ շրջանների կառավարիչներին, այդ թվում՝ ռուսատյաց Շերիֆ փաշային, կողմնորոշել նրանց դեպի ռուսահպատակության ընդունումը: Պատահական չէ, որ այդ նպատակով նա Զգոբելսկուն ուղարկեց հոլանդական 100 ոսկի (չերվոնեց):[374] Բայց դեպքերն այլ ընթացք ունեցան:

Սանջակի տարածք մտած թաթարական հեծելազորը, որն իրականում մի ավազակախումբ էր, նոր թալանի ենթարկեց բնակչությանը և ավելի շատ զբաղվեց ձեռք բերված սննդամթերքի ու ունեցվածքի յուրացումով, քան այն բանակի կարիքներին հատկացնելով:

Վիճակը բարդացավ հատկապես 1812 թ. հունվար–փետրվարին: Փետրվարի կեսերին Կախեթում ծագեց հակառուսական ապստամբություն: Օգտվելով առիթից, որ ռուսական հիմնական ուժերը կենտրոնացված էին Վրաստանում, իսկ Կոտլյարևսկին վերադարձել էր Թիֆլիս, Շերիֆ փաշան փետրվարի 21–ին 5 հազ. զորքով գրոհեց Ախալքալաքի բերդը: Ռուսական կայազորը, որը բաղկացած էր 46-րդ եգերական, Եժովի Դոնի կազակական գնդերից և 15–րդ գնդի երկու վաշտից, գեներալ–մայոր իշխան Օրբելիանու հրամանատարությամբ 5 ժամ կատաղի դիմադրություն ցույց տվեց՝ թշնամուն պատճառելով ծանր կորուստներ: Շերիֆ փաշան հարկադրված նահանջեց: Անառիկ պահելով բերդը՝ ռուսական զորքերը կանխեցին թուրքերի առաջխաղացումը դեպի Մալկա, Լոռի, Թիֆլիս և հնարավորություն չտվեցին նրանց միանալ Կախեթի ապստամբական ուժերին:[375] Շերիֆ փաշան, որ նոր զորքեր էր հավաքել հարձակումը կրկնելու համար, իմանալով ապստամբության ճնշման մասին, հրաժարվեց իր մտադրություններից:

Վերջին իրադարձություններից հետո ավելի ակնհայտ դարձավ Ախալքալաքի ռազմավարական նշանակությունը տարածաշրջանային խնդիրների շրջանակներում: Դանուբյան ճակատում Մ. Ի.

---

[374] Նույն տեղում, էջ 186–187, 190:

[375] Дубровин Н., История войны и владычества русских на Кавказе, т. 6, Т., 1888, с. 26, АКАК, т. 5, с. 63–64.

Կուտուզովի տարած հաղթանակները Օսմանյան կայսրությանը հարկադրեցին հանդես գալ հաշտության կնքման առաջարկությամբ: Մարկիզ Պաուլուչչիին չտապեց քայլեր ձեռնարկել առաջիկա ռուս–թուրքական հաշտությամբ Ախալքալաքի անցումը Ռուսաստանին ամրագրելու ուղղությամբ: Այդ նպատակով նա 1812 թ. հունվարի 4–ին հատուկ նամակով դիմեց Կուտուզովին, որում մասնավորապես ասված էր. «Եթե Բ. Դուռը առհասարակ չհամաձայնի զիջել ամբողջ Ախալցխայի փաշայությունն ու բուն ամրոցը, ապա ծայրահեղ անհրաժեշտությունը հուշում է, որ պետք է պնդել Ախալցխայի մարզում մեր նվաճած տարածքներին հարող Ածղուրի և Խերթվիսի բերդերի ձեռքբերման վրա»:[376] Ասվածից հետևում է, որ ռուսների համար կենսական էր համարվում ոչ միայն գրավված Ախալքալաքի, այլև Խերթվիս ամրոցի ու Բորժոմի կիրճով Ախալցխայից Թիֆլիս տանող ճանապարհին ընկած Ածղորի միացումը, որոնք կարող էին պատնեշել լեզգիների ու թուրքերի առաջխաղացումը դեպի Վրաստան: Պաուլուչչիին առաջարկում էր ռուս–թուրքական սահմանագիծը տանել Իմերեթիայի հարավով, Ախալցխայի Սակաչեն գյուղով, ապա Կուրով, այնպես, որ Ռուսաստանին մնային վերոհիշյալ ամրոցները՝ մինչև 20 վերստ հոսանքն ի վեր, ուր գետն ուներ բնականից պաշտպանական տեղանք՝ խոր ձոր ու քարքարոտ ափեր, այսինքն՝ Թմկաբերդի ու Վարձավուհիքի հատվածը: Այնուհետև սահմանը կարծես գյուղի մոտից ձգվելու էր մինչև Ախուրյանի ափին ընկած Կայկուլի (Ղայղուլի) գյուղը: «Այդժամ, անկասկած,– համոզված գրում էր Պաուլուչչիին,– այդպիսի սահմանի առկայությամբ Վրաստանի համար այդ կողմից կարելի կլինի ապահովել կայուն խաղաղություն»:[377] Նվաճված հողերը պահելու ձգտումն այնքան մեծ էր, որ կովկասյան զորքերի հրամանատարը Կուտուզովին հավատացնում էր՝ եթե այդ տարածքային զիջումը Օսմանյան կայսրության համար աննշան զոհողություն է, Անդրկովկասում ռուսական տիրապետության համար՝ կենսական խնդիր:

Սակայն ռուսական արքունիքը 1812 թ. մայիսի 16–ին Բուխարեստում կնքված ռուս–թուրքական հաշտության մեջ նախապատվությունը տվեց դանուբյան տարածքներին: Բուկովինան զիջելու թուրքերի համաձայնությանը ռուսական դիվանագիտությունը պա-

[376] AKAK, т. 5, с. 189.
[377] Նույն տեղում, էջ 189–190:

տասխանեց Անդրկովկասում գրավված Ախալքալաքի գավառը, Անապան ու Փոթին վերադարձնելու որոշմամբ:[378] *Անչուշտ, այս քայլը արդարացված չէր: Հետագայում պահանջվեցին նոր ջանքեր այդ երկրամասը վերանվաճելու համար: Թերևս արևմուտքից սպառնացող նապոլեոնյան վտանգն էր, որ ռուսական կողմին ստիպեց սահմանափակվել դանուբյան հողերի միացումով և հաշտվել կովկասյան ճակատում գրավված բոլոր տարածքները վերադարձնելու մտքի հետ:*

Բուխարեստի հաշտությամբ Անդրկովկասում գրավյալ հողերի վերադարձը նախատեսվում էր պայմանագրի վավերացումից հետո, 3 ամսվա ընթացքում: Վավերացումը կատարվեց հուլիսի 2–ին՝ Ռուսաստանի համար ծանրագույն ռազմաքաղաքական պայմաններում՝ նապոլեոնյան Ցրանսիայի ներխուժման օրերին: Կովկասյան տարածքները վերադարձնելու ժամկետը լրացավ հոկտեմբերի 2–ին: Թեև այդ ժամանակ Ռուսաստանի եվրոպական հողերի զգալի մասը ֆրանսիացիների կողմից դեռ բռնազավթված էր, սակայն Նապոլեոնի մոտալուտ պարտությունն օրեցօր դառնում էր օրակարգի հարց: Ձևավորվող նոր իրավիճակում արդեն Ալեքսանդր I ցարը կարող էր Օսմանյան Թուրքիայի հետ տարվող քաղաքականության մեջ ավելի համարձակ գործելակերպ ընտրել: Ուստի ռուսական հրամանատարությունն սկսեց հնարավորինս ձգձգել Անդրկովկասում տարածքների վերադարձման գործընթացը: Գեներալ Ն. Ռտիշչևը հոկտեմբերի 19–ին Ախալքալաքի պարետ Զգորելսկուց պահանջում էր չհապաղել այդ խնդրում, թուրքերի առաջ արդարանալ զանազան պատճառաբանություններով, բայց երբեք հարցը չհանգեցնել նոր պատերազմի:[379] *Էրզրումի սերասկյար Մամադ Էմին փաշան բողոքի իր նոտաներում ռուսական զինվորական իշխանություններին մեղադրեց հաշտության պայմանները խախտելու մեջ: Երբ արդեն բոլոր «հիմնավորումները» սպառվել էին, ռուսները հոկտեմբերի 29–ին*

---

[378] Այս պատերազմում, ինչպես իրավացիորեն նշում է Ն. Դուբրովինը, Ռուսական կայսրության համար ի սկզբանե առաջնայինը Եվրոպայում իր տարածքների ընդլայնումն էր, իսկ կովկասյան խնդիրները համարվում էին ածանցյալ (Дубровин Н., История войны и владычества русских на Кавказе, т. 5, с. 159). Ուստի գիջումներն արվեցին հենց այս ծակատում, առանց հաշվի առնելու հայ բնակչության շահերը: Դժբախտաբար, այս գործելակերպը հետագայում պահպանվեց 19–րդ դարի բոլոր ռուս–թուրքական պատերազմների ժամանակ:

[379] АКАК, т. 5, с. 780–783.

անվնաս վիճակում, թուրքական հրետանիով ու ռազմամթերքով, ինչպես նախատեսվում էր Բուխարեստի հաշտությամբ, հանձնեցին Ախալքալաքի բերդը, իսկ դեկտեմբերի 7–ին՝ Փոթին: Տեղի ունեցավ գերիների փոխանակում: Ախալքալաքի կայազորը տեղափոխվեց Բորչալուի Սադախլո բնակավայրը:[380] *Այս աննպաստ հաշտության մասին Պոտտոն ցավով գրում էր. «Թուրքական կայազորերը կրկին մուտք գործեցին Ախալքալաք, Անապա ու Փոթի և մահմեդական լուսինը (կիսալուսինը – Ա.Մ.) նորից լուսավորեց բարձր աշտարակները, որոնց վրա օրեր առաջ ծածանվում էին ռուսական դրոշները: ...Թուրքիան վերադարձրեց Անդրկովկասում կորցրած ամեն բան, իսկ ռուսները, մի շարք փայլուն հաղթանակներից հետո՝ հայտնվեցին նույն անշահեկան վիճակի մեջ...»:*[381]

Ինչպես Վրաստանում, այնպես էլ նրան սահմանակից արևմտահայ գավառներում ապրող հայությունը, անկախ ցարական զինվորական իշխանությունների հաճախակի անհեռատես, երբեմն էլ ոչ հայանպաստ էմիսարներից, պատերազմում իր նպաստը բերեց ռուսական զորքերի հաղթություններին՝ օգնելով ինչպես աննդամթերքով, այնպես էլ մասնակցելով ռազմական գործողություններին: Ի պատասխան հայերի նվիրվածության՝ Ալեքսանդր I ցարը 1813 թ. սեպտեմբերի 13–ին հանդես եկավ «Վրաստանում ապրող հայ ժողովրդին» ուղղված կայսերական հրովարտակով: Նրանում մասնավորապես ասված էր. «Մեծ բավականությամբ արձանագրեցինք ...այն շնորհակալ նվիրվածության նոր վկայությունները, որոնցով Վրաստանում բնակվող հայերի բոլոր խավերը մշտապես տածել են դեպի կայսերական հպատակությունն ու մեր հայրենին՝ ...զոհելով իրենց ունեցվածքը, բոլոր միջոցներն ու սեփական կյանքը: ...Ողջ հայ ժողովրդի բոլոր խավերի նման սրտացավությունը, ծառայությունները ու սխրանքները մեզ վրա դնում են հաճելի պարտականություն՝ ամբողջ աշխարհի առաջ հայտնել (նրանց – Ա.Մ.) մեր արդարացի երախտագիտությունն ու բարեհաճությունը»:[382] *Ցավոք, այս կարգի շնորհակալական ուղերձներն ու հրովարտակները ասպա-*

---

[380] Նույն տեղում, էջ 780–783: Սուխումի հանձնման հարցը ռուսները հետաձգեցին մինչև հաջորդ տարվա գարուն՝ այդ քայլը բացատրելով այն հանգամանքով, որ Աբխազիան ու նրա կենտրոնը ոչ թե գրավվել են, այլ կամովին ընդունել են ռուսական հպատակություն:
[381] Потто В., Кавказская война, т. 1, с. 562.
[382] АКАК, т. 5, с. 945.

բեզ էին գալիս ժամանակ առ ժամանակ՝ պայմանավորված կայսերական շահերի անմիջական թելադրանքով, իսկ հայ բնակչության կենսական խնդիրները հաճախ մոռացվում էին կամ էլ ստորադասվում Ռուսաստանի մեծապետական նկրտումներին:

Տարածքների վերադարձից հետո օսմանյան կողմն ավելի համարձակ ու հանդուգն դարձավ: Թուրքերին այդ հարցում քաջալերում էին ինչպես Նապոլեոն Բոնապարտը, այնպես էլ Ռուսաստանի դեմ դեռ պատերազմող պարսիկները: Նորից մեջտեղ եկավ թուրք–պարսկական զինակցության հարցը: 1813 թ. մայիս–հունիսին թուրքերը թույլատրեցին պարսիկներին անցնել Ախալքալաքի գավառի տարածքով և ներխուժել Դմանիս: Առևանգվեցին մարդիկ և մեծ քանակությամբ անասուններ: Ետդարձի ժամանակ Սելիմ փաշան[383] նրանց ապաստան տվեց իր տարածքում: Ի փախհատուցումն մատուցած ծառայության՝ պարսիկները ձեռք բերված ավարի մի մասը թողեցին թուրքերին:[384] Այս կապակցությամբ ռուսների կողմից արված բողոքները երբեմնի «բարեկամ» Սելիմ փաշան անպատասխան թողեց: Ավելին՝ նա 700 հոգանոց լեզգիական մի չոկատ ուղարկեց Երևան և այն դրեց սարդարի տրամադրության տակ, սաստկացրեց բռնությունները քրիստոնյա բնակչության նկատմամբ: Բացահայտ հակառուսական քայլերը շարունակվեցին էրզրումի սերասկյարը. նա պահանջեց իրենց հանձնել Իմերեթիան, Մեգրելիան, Դուրիան և Աբխազիան:[385]

Հուլիսի սկզբին պարսիկներն ու թուրքերը Ախալցխայից նոր ավարառություն կատարեցին: Այս անգամ մայոր Զոլոտարյովի 300 հոգանոց կազակական դունդը նրանց հետ մարտի մեջ մտավ և պարտության մատնեց: 50 մարդ զոհվեց, մյուսները փախուստի դիմեցին: Առևանգված մարդիկ ու անասունները վերադարձվեցին: Դեսքերի այսօրինակ զարգացման տրամաբանությունը տանում էր դեպի նոր պատերազմ: Սակայն Ասլանդուզում, Լենքորանում, Ղարաբաղում, Մեղրիում և այլուր կրած ծանր պարտությունների արդյունքում, պարսկական կողմի խնդրանքով կնքված Գյուլիստանի ռուս–պարսկական հաշտության պայմանագիրը (1813 թ. հոկտեմբերի 12),

---

[383] 1812 թ. Սելիմը կարողացել էր Շերիֆ փաշային վտարել և 3–րդ անգամ վերականգնվել Ախալցխայի փաշայի պաշտոնում:
[384] AKAK, т. 5, с. 790.
[385] Նույն տեղում, էջ 790–791:

սթափեցրեց նաև թուրքերին: Այդ հաշտությամբ Պարսկաստանը ճանաչում էր Հյուսիսային Հայաստանի, Արևելյան Վրաստանի, Արևելյան Անդրկովկասի անցումը Ռուսաստանին, հանգամանք, որն արմատապես փոխում էր ուժերի հարաբերակցությունը տարածաշրջանում:

Նոր իրավիճակում թուրքական դիվանագիտությունը գործի դրեց խորամանկելու իր ավանդական գործելակերպը. ռուսական պաշտոնյաների հասցեով ստացվեցին «բարեկամական» նամակներ, պաշտոնից նախ՝ հեռացվեց, ապա գլխատվեց ռուսատյաց Սելիմ փաշան: Որպես «հավատարմության արտահայտություն» փաշայի գլուխն ուղարկվեց Սանկտ Պետերբուրգ:[386] Դրանից հետո ռուս–թուրքական հարաբերությունները առժամանակ նորմալացան: Միայն 1815 թվականի հուլիսին, երբ վրաց գահաժառանգ Ալեքսանդրի դրդմամբ նորից իրենց հակառուսական գործունեությունն ակտիվացրեցին դաղստանյան լեզգիներն ու Էրզրումի սերասկյարը, կրկին նկատվեց լարվածության աճ: Սակայն դիվանագիտական եղանակներով գեներալ Ռտիշչևին հաջողվեց կանխել ինչպես լեզգիների հարձակումները, այնպես էլ սերասկյարի հնարավոր ներխուժումը Դուրիա: Այդ ժամանակ Բ. Դռանը ձեռնտու չէր լարված հարաբերությունների պահպանումը Ռուսաստանի հետ, քանի որ Ախալցխայի փաշան կրկին գլուխ էր բարձրացրել և իշխանություններին դեմ ապստամբության մեջ ներքաշել Վերին Աջարիայի բնակչությանը:[387]

Շուտով Անդրկովկասում ռուսական զորքերի գլխավոր հրամանատար նշանակվեց Ալեքսեյ Երմոլովը: Վերջինս, թուրքահպատակ գավառների կառավարիչներին դեպի Ռուսաստան կողմնորոշելու նպատակով, ակտիվ դիվանագիտական քայլեր կատարեց՝ օգտագործելով նրանց միջև առկա ներքին հակասությունները: Հատկապես մեծ ուշադրություն հատկացվեց Խերթվիսի գավառի վրա, որի կառավարիչ Մամադ Ալի բեկը, լինելով Թշնամի Ախալցխայի փաշային, առերես մտերմություն էր անում ռուսների հետ: Սակայն նրան դեպի ռուսահպատակություն կողմնորոշելու հիմնապուրկ փորձերը, տրամաբանորեն հանգեցին անհաջողության:

---

[386] Նույն տեղում, էջ 825

[387] Թուրքական աղբյուրները, հ. Բ, էջ 174:

Գ) ժողովրդագրական տեղաշարժերը Ախալցխայի էյալեթում 19-րդ դարի առաջին քառորդին

19-րդ դարի սկզբին Արևելյան Վրաստանում հաստատվելը հնարավորություն տվեց ռուսական դիվանագիտությանը մանրակրկիտ նախապատրաստել իր սահմանների ընդլայնման ծրագիրը ինչպես ռազմաքաղաքական, այնպես էլ էթնոհոգեբանական տեսանկյուններով: Այդ շրջանակներում հատուկ ուշադրություն հատկացվեց տարածաշրջանում ժողովրդագրական քաղաքականության հիմնախնդրին: 1800 թ. հունվարի 23-ին Վրաստանում ռուսական զորքերի գլխավոր հրամանատար կ. Ֆ. Կնորինգին տված հրահանգում Պավել I ցարը պահանջում էր երկրամասին տիրելու գործում նախապատվությունը տալ ոչ թե բռնամիջոցներին, այլ կամավոր հպատակություն ընդունելուն, «քանզի, լավ է ունենալ միության մեջ չահագրգիռ դաշնակիցներ, քան անհուսալի հպատակներ»:[388] Դա նշանակում էր, որ ցարական պաշտոնեությունից պահանջվելու էին մեծ ջանքեր Անդրկովկասը և հարակից շրջանները բնակեցնող ժողովուրդներից յուրաքանչյուրի հետ կողմնորոշիչ աշխատանք տանելու ուղղությամբ: Հատկանշական է, որ նոր ցարը՝ Ալեքսանդր I-ը, այդ քաղաքականության մեջ հատուկ զգուշություն էր պահանջում թուրքերի հարցում և ընդգծում էր հայերին վստահելու անհրաժեշտությունը:[389] Ակնհայտ է, որ Ռուսաստանը, ռազմական միջոցներին զուգընթաց, խիստ կարևորում էր ժողովրդագրական քաղաքականությունը, որի կիզակետում տարածաշրջանը զբաղեցնող հայությանը վերապահվում էր առանձնահատուկ տեղ:

Արևելյան Վրաստանի միացումը մեծ ոգևորությամբ ընդունվեց ոչ միայն արևելահայության, այլև արևմտահայության կողմից: Արդեն 1801 թ. հունիսին, ստանալով այդ լուրը, սահմանակից թուրքահպատակ Ախալցխայի էյալեթի Ախալքալաքի սանջակից 17 ընտանիք (120 շունչ) գաղթում են Վրաստան: Ցարական արքունիքը, ողջունելով այդ երևույթը, պահանջում էր խրախուսել քրիստոնյաների ներգաղթը և սուլթանական կառավարության դժգոհությունը չառաջացնելու համար, այդ ձեռնարկումները ներկայացնել իբրև Վրաստանից Օսմանյան կայսրություն վիճած նախկին բնակիչների

---

[388] ЦГИАГ, ф. 2, д. 4, лл. 2–3.
[389] АКАК, т. 1, с. 436.

վերադարձ իրենց հայրենիք: Հրահանգվում էր նաև գաղթողներին բնակեցնել միայն պետական հողերում:[390]

1803 թ. ամռանը գլխավոր հրամանատար Պ. Ցիցյանովը կարողացավ օգտվել Ախալցխայի փաշայի պաշտոնի չուրջ ընթացող կռիվների հետևանքով փաշայությունում ստեղծված խառնակ իրավիճակից և նոր քրիստոնյաների գաղթեցնել Վրաստան: Ցիցիանովին ուղղված օգոստոսի 21–ի նամակում Սելիմ փաշան մեղադրում էր ռուսական կողմին խռովարար Շերիֆ փաշային օժանդակելու, լրտեսների միջոցով իր հպատակներին առևանգելու, գյուղերն ամայացնելու մեջ և սպառնում համարժեք քայլերով:[391]

Համոզվելով, որ միայն դիվանագիտական մեթոդներով հնարավոր չէ երկրամասի միացումը, 1804 թ. Ռուսաստանը պատերազմ սկսեց Պարսկաստանի դեմ: Բայց էթնոժողովրդական գործընթացների կարգավորումը կրկին մնաց ցարիզմի ուշադրության կենտրոնում: Անդրկովկասի նվաճումն արագացնելու համար անհրաժեշտ էր հատկապես ամրապնդել կայսրության նորահաստատ սահմանամերձ գոտին՝ Լոռի–Բորչալուն և Ծալկան: Ուստի, ռուս–պարսկական պատերազմի օրերին, գեներալ Պ. Ցիցիանովը եռանդուն քայլերով չարունակեց թուրքական նահանգներից գաղթած քրիստոնյաների, մասնավորապես կարսեցի, ախալցխացի և ախալքալաքցի հայերի ու վրացիների ներգաղթը դեպի այդ տարածքները: Նա նույնիսկ խնդրում էր արքունիքին իրեն թույլատրել մտնել Ախալցխայի փաշայության տարածքը՝ այնտեղի ողջ քրիստոնյա բնակչությանը Վրաստան գաղթեցնելու, ռուսական սահմանները մշտապես վտանգող լեզգիներին հնազանդեցնելու համար: Սակայն այդ ծրագիրը հավանության չարժանացավ, քանզի Պետերբուրգում վաղաժամ և վտանգավոր գտան Պարսկաստանի դեմ մղվող պատերազմի պայմաններում հարաբերությունների վատթարացումը Թուրքիայի հետ:[392]

Բայց մերժումից հետո էլ Ցիցիանովը չարունակեց աչխատասեր թուրքահպատակ քրիստոնյա բնակչությանը Լոռի և Վրաստան բերելու փորձերը: Հետաքրքիր է, որ ռուսական հետախուզական ծառայություններն այդ նպատակով հաչող աչխատանք տարան նույ-

[390] Նույն տեղում, էջ 431, 441:
[391] АКАК, т. 2, Т.,1868, с. 894–895.
[392] Նույն տեղում, էջ 874:

նիսկ ոչ սահմանակից, Հեռավոր Էրզրումի էյալեթում: Երբ Էրզրումում լուր ստացվեց, թե իբր ռուսները գրավել են Երևանի բերդը, քաղաքից և շրջակա գյուղերից 200 հայ ընտանիք չտապեցին դեպի Արևելյան Հայաստան: Սակայն ճանապարհին, երբ պարզվեց, որ Երևանը դեռ առնված չէ, էրզրումցի գաղթականները ստիպված կանգ առան Կարսում և սպասեցին դեպքերի հետագա ընթացքին:[393] *Բայց արևմտահայերի ոգևորությունը չմարեց, և Արևելյան Հայաստան գաղթելու փորձերը կրկնվեցին:*

Պ. Ցիցիանովին ուղարկած մի գրությունում հայ մելիք Ջիմշիդը Հայտնում էր, որ 1805 թ. գարնանը Կարսի և Ախալցխայի փաշայություններից «իւրենաց կամաւն եկած» 50 տուն բնակիչներ հաստատվել են Բորչալուում՝ իրեն պատկանող կալվածքներում:[394] *Անհանգստացած ստեղծված իրավիճակից՝ թուրքական իշխանությունները հայ հոգևորականության, հատկապես Դավիթ կաթողիկոսի օժանդակությամբ միջոցներ ձեռք առան հայերի արտագաղթը կանխելու ուղղությամբ: 1805 թ. մարտի սկզբին Ցիցիանովն իշխան Ա. Բեբուրովին գաղտնի ուղարկեց փաշայություն՝ այնտեղ հաստատված փամբակցիներին իրենց նախկին բնակավայրերը վերադարձնելու համար:*[395] *Հարկատու բնակչություն ունենալու չհագրգռությունը Վրաստանի ու Լոռու կալվածատերերին ևս մղում էր ակտիվ գործողությունների՝ ներգաղթը խթանելու հարցում: Լոռու ամայացած գյուղերի մի մասն իբրև կալվածք ստացած ղարաբաղցի հայ Մելիք Աբովը ռուսական իշխանություններին խնդրում էր թուլյատ-*

---

[393] ՀԳԻԱԳ, ֆ. 16, օո. 1, դ. 436, լո. 2–3 և Լեո, Հայոց պատմության նորագույն շրջան, հ. 1, Ե. 1926, էջ 17–18: Ի դեպ, այդ նպատակով ռուսական իշխանություններն ակտիվ գործունեություն էին ծավալել նաև Արևելյան Հայաստանում: 1804 թ. հունիսին Պ. Ցիցիանովը փորձում էր Լոռի գաղթեցնել այն բազմահազար երևանցիներին, որոնք, խուսափելով պարսկական իշխանությունների բռնություններից, «ապաստան» էին գտել Կարսում: Խոշավանքի առաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոսը ռուսական հրամանատարության անունից նրանց համոզում էր անցնել ռուսական տիրույթներ, ընդ որում, ռուսների կողմից Երևանի գրավումից հետո՝ խոստանալով կրկին այնտեղ վերադառնալու իրավունք (ՀԳԻԱԳ, ֆ. 2, օո. 1, դ. 79, լո. 227 օբ. Присоединение Восточной Армении к России, т. 1, с. 240). Շատերը, ընդառաջ գնալով ռուսների ձեռնարկումներին, անցնում էին ռուս–պարսկական սահմանագիծը և հաստատվում Լոռիում: 1804 թ. մելիք Աբրահամի և Գաբրիել յուզբաշու առաջնորդությամբ Երևանի խանությունից 200 հայ ընտանիք տեղափոխվեց Ղարաքիլիսա: Գաղթել ցանկացող ևս 500 ընտանիք հայերի նկատմամբ Երևանի սարդարը բռնություններ գործադրեց (Присоединение Восточной Армении к России, т. 1, с. 283–284).

[394] Присоединение Восточной Армении к России, т. 1, с. 310.

[395] ՀԳԻԱԳ, ֆ. 2, օո. 1, դ. 89, լ. 244, Присоединение Восточной Армении к России, т. 1, с. 290.

րել Ախալցխայի փաշայությունից հազար ընտանիք հայերի գաղթեցնել և բնակեցնել իր հողերում:[396]

Արևմտահայերի էթնիկ տեղաշարժերն ավելի մեծ ծավալ ընդունեցին 1806–1812 թթ. ռուս–թուրքական պատերազմի շրջանում: Թուրքական կողմը ռուսների առաջխաղացումն Ախալցխայի նահանգի հայաբնակ գյուղերով դժվարացնելու նպատակով՝ սկսեց բնակչությանը տեղափոխել դեպի Կուրի ձախ ափը:[397] *Ռուսներն իրենց հերթին, ձգտելով ստանալ հայերի ու վրացիների աջակցությունը, ապահովել զորքը սննդամթերքով, շտապում էին օր առաջ գրավել Ախալցխայի փաշայությունը:*

Այդ ժամանակ գեներալ Պ. Նեսվետաևը 1807 թ. մարտին Կարսի տակ պարտության մատնեց թուրքերին և ազատեց 500 բնակիչների (անկասկած՝ հայերի–Ա.Մ.), որոնց, ևս 500 ընտանիքների հետ, Գուդովիչի հրամանով, բնակեցրեց Փամբակում:[398] *Սակայն քրիստոնյաներին «փրկելու առաքելության» հետ մեկտեղ, ռուսական զորքերը պայմաններ ստեղծեցին տեղի բնակչությանը կողոպտելու համար: Նույն թվականի մայիսին՝ ռուսների կողմից Ախալքալաքի բերդի գրոհի օրերին գավառ թափանցած Բորչալուի և Ղազախի թաթարներն ու Կախեթի վրացիները թալանում են շրջակա գյուղերը, առևանգում 1000 խոշոր եղջյուրավոր անասուն, 8000 ոչխար, 200 ձի և քշում դեպի իրենց բնակավայրերը: Ուշագրավ է, որ այս գործողությունները, իբրև թշնամուն հասցված նյութական վնաս, արժանանում են ռուսական ռազմական իշխանությունների հավանությանը:*[399] *Ռուսների հեռանալուց հետո էլ, առիթից օգտվելով՝ լեզգիներն սկսում են անարգել կողոպտել բնակչությանը և նույնիսկ 1809 թ. ներխուժում Բորչալուի գավառ՝ ծանր հարված հասցնելով թե՛ տեղական հայ բնակչությանը և թե՛ այնտեղ հաստատված գաղթականությանը:*[400]

Այդ ամենով հանդերձ, հայ բնակչությունը նախապատվությունը տալիս էր ռուսական տիրապետությանը, նախընտրում արտա-

---

[396] АКАК, т. 1, с. 637.
[397] Дубровин Н., История войны и владычества русских на Кавказе, т. 5, с. 159, АКАК, т. 3, с. 609.
[398] АКАК, т. 3, с. 601–603, 607–608.
[399] Նույն տեղում, էջ 589:
[400] Նույն տեղում, т. 5, с. 54.

գաղթը, նույնիսկ այն դեպքում, որ Ռուսաստանին անցած տարածքներն այնքան էլ ապահով չէին բնակության համար և շարունակում էին մնալ խիստ խոցելի թուրքերի ու լեզգիների հարձակումների առջև:

1809 թ. մարտի վերջին Կարսի սանջակից շուրջ 1000 ընտանիք հայեր (մասամբ՝ կարափափախներ) տեղափոխվում են ռուս–թուրքական սահմանային գոտի՝ Ախուրյանի առափնյա գյուղերը՝ Բաշ–Շորագյալ, Մուլամաս և Աթախուլ:[401] Կարափափախների ներգաղթը, ըստ երևույթին, ոգևորում է ռուսներին, և նրանք 1809 թ. մայիսին կաշառքով փորձում են Կարսի, Բայազետի ու Ախալցխայի գավառներից ավելի մեծ խմբերի չհագեցրնել տեղափոխվելու Լոռի:[402] Բայց, ինչպես երևում է, այդ քայլը հաջողություն չի ունենում: Քոչվոր կենցաղին վարժված կարափափախներին այնքան էլ չէր կարող չհագեցնել քրիստոնյա երկրի տիրապետությունը՝ «նստակյաց կյանքին հարմարեցված» կարծր օրենսդրությամբ: Ուստի առաջին հերթին գաղթողների մեջ տերակշռում էին քրիստոնյա հայերը: Վերջիններիս արտագաղթի դեպքերն ավելի հաճախակի դարձան 1809 թ. և 1810 թ. գարնանը, երբ ռուսական տիրույթներին սահմանակից էյալեթներում վիճակն անտանելի դարձավ՝ Ախալցխայի փաշայի պաշտոնի համար Շերիֆ և Սելիմ փաշաների միջև ծավալված կատաղի պայքարի պատճառով: Ուստի 1810 թ. օգոստոսի 19–ին գրված իր հրահանգում Ռուսաստանի ներքին գործոց նախարարը Ա. Տորմասովից պահանջում էր հետևել գաղթի ընթացքին և քայլեր ձեռնարկել գաղթողներին օժանդակելու ուղղությամբ:[403] Բայց գաղթականները նոր բնակավայրերում մնացին անօգնական՝ կրելով բազում դժվարություններ: Կյանքի անտանելի պայմանները նրանցից շատերին հարկադրեց ռուսական տիրույթներում տեղից–տեղ անցնել, հնարավորինս հեռանալ թուրքական սահմաններին մոտ ընկած գավառներից, հաստատվել Թիֆլիսում և նրա շրջակայքում, Հյուսիսային Կովկասում:

Նոր ու ծավալային էթնոտեղաշարժեր առաջացրեցին 1810 թ. սեպտեմբերին պարսկական զորքերի ներխուժումն Ախալքալաքի գավառ ու նոյեմբերին դեներալ Ա. Տորմասովի կատարած արշավան-

---

[401] AKAK, т. 3, с . 620.
[402] AKAK, т. 4, с. 932.
[403] AKAK, т. 5, с. 18.

քը դեպի Ախալցխա: Ամռանը Շերիֆ փաշան, ինչպես երեք տարի առաջ, ռուսներին քրիստոնյաների հնարավոր ակնկալությունից զրկելու նպատակով, կարգադրեց «Ջավախեթիայում ապրող ժողովուրդներին առանց բացառության» տեղահանել դեպի Կուր գետի ձախ ափը: Վրացի իշխան գեներալ Օրբելիանին ապրիլի 11–ին անմիջապես օգնության խնդրանքով դիմեց Տորմասովին, որը ճամբար էր դրել Բորժոմի կիրճում: Նա ռուսներին հավաստիացնում էր, որ քրիստոնյաները «ոչ միայն համաձայն են ծառայելու մեր զորքերին, այլև պատրաստ են զենքը ձեռքին գնալու ընդդեմ փաշայի, միայն թե մեր կողմից ստանան աջակցություն»:[404] Նա խնդրում էր, որ գնդապետ Պեչորսկուն հանձնարարվի գրավել հայերով ու վրացիներով բնակեցված Ջավախքի հինավուրց Կոթելիա գյուղը թուրքերից ու լեզգիներից սպառնացող աղետը կանխելու համար: Սակայն, մինչև ռուսների գալը, օգոստոսին գյուղ հասան թուրքերին օգնության շտապող Երևանի Հուսեին Կուլի խանի զորքերը: Միայն սեպտեմբերի 5–ին Ախալքալաքի մոտ ռուսներից պարսիկների կրած ծանր պարտությունը կանխեց բնակչության զանգվածային բռնագաղթը:

Նոյեմբերին Ախալցխայի փաշան, նախապատրաստվելով պաշտպանության, իր բերդի պարիսպներից ներս քշեց գավառի գրեթե բոլոր բնակավայրերի մեծամեծներին, համայնքների ղեկավարներին, ինչպես նաև մեծ թվով խաղաղ բնակիչների՝ շուրջ 1500 ընտանիք, իրենց 50 հազար անասուններով ու շարժական այլ ինչքով: Քաղաքում ստեղծվեց անտանելի վիճակ: Շերիֆ փաշայի իրականացրած այդ բռնագաղթի հետևանքով ամայացան բազմաթիվ բնակավայրեր, հատկապես Ախալցխայի շրջակայքի տարածքը, Ախալքալաքի գյուղերից Ղաուրման, Սաղամո լճի ափին ընկած Գանձան, գյուղերի մի մասն էլ թալանի պատճառով հասավ ծայր աղքատության:[405] Պատահական չէ, որ այդ օրերին Վրաստանի կառավարիչ Ախվերդովին գրած իր նամակում Տորմասովը դժգոհում էր, որ Ախալցխայի գյուղերը կիսավեր ու ամայի վիճակում են, իսկ բնակիչները աղքատ են և հացի խիստ պակաս են զգում:[406]

---

[404] AKAK, т. 4, с. 795.
[405] Նույն տեղում, էջ 801–802:
[406] Նույն տեղում, էջ 805:

1810 թ. նոյեմբերին պաշարված Ախալցխան ենթարկվեց ուժեղ հրետակոծության, սկսվեց չորսօրյա հրդեհ, բնակիչների մեջ համաճարակ բռնկվեց: Զոհվեցին մեծ թվով խաղաղ բնակիչներ: Շերիֆ փաշան սկսեց հապշտապ բնակչությանը վտարել քաղաքից: Նրանցից չատերն ընկան ռուսների կրակի տակ և սպանվեցին: Տորմասովը, ինչպես նշվեց նախորդ բաժնում, համաճարակի տարածումը զորքերի մեջ կանխելու պատճառաբանությամբ, դադարեցրեց պաշարումը: Բայց իր անհաջողությունը քողարկելու նպատակով որոշեց գաղթեցնել գավառի բնակչության այդ ստվար զանգվածը: Վեցչաբթյա տանջալից կարանտինից հետո 1500 ընտանիքը՝ 50 հազ. գլուխ անասունով, այսինքն՝ «ձեռք բերված ավարը», ինչպես նշվում էր ռազմական զեկուցագրերում, ճմռան սառնամանիքի պայմաններում գաղթեցվեց: Վրացական միլիցիան չարունակեց գյուղերի թալանն ու բնակիչների բռնագաղթեցումները: Աղբյուրներն աղքատիկ տեղեկություններ են հաղորդում ախալցխացիների այդ զանգվածային գաղթի մասին: Բայց դժվար չէ նկատել, որ բոլորին Վրաստան և Լոռի հասցնելու ծրագիրը լիակատար հաջողությամբ չի իրագործվել:[407] *Մի մասը զոհվել է ցրտից ու համաճարակից, մյուս մասը՝ վերադարձել իր բնակավայրերը, ոմանց էլ հաջողվել է տեղավորել ռուսական սահմաններում: Տորմասովը թուլյատրել էր արշավանքին մասնակցող վրացի, իմերեթցի և կովկասյան թաթար զինվորականներին ու կալվածատերերին այս գաղթականներին տեղավորել իրենց կալվածքներում:*

Ինչևիցե, 1810 թ. Տորմասովի ախալցխյան արշավանքից հետո փաշայության մեծ մասը ծանր հարված ստացավ: Տարեվերջին իշխան Ն. Ռումյանցևին հասցեագրած իր զեկուցագրում գեներալն ինքնագոհ հայտնում էր, որ իր արշավանքից հետո «կարելի է հաստատապես ասել, որ Վրաստանի համար մշտապես ամենավնասակար այս փաշայությունը, այժմ հաղիվ թե կարողանա 10 տարում վերադառնալ իր նախկին վիճակին»:[408] *Զավեշտական է, որ արշավանքի նախօրյակին բնակչությանն ուղղված իր դիմումում գլխավոր հրամանատարը հավաստիացրել էր, որ Ախալցխայի էյալեթի դրավումով*

---

[407] Ե. Լոմսաձեն, վկայակոչելով «Ակտերի» 4–րդ հատորի 187 էջը, գրում է, որ այդ ժամանակ ռուսական տիրույթներ գաղթեցված կոթելիացիների մի մասը բնակեցվել է Բորչալուում (ლომსაძე შ., სამცხე ჯავახეთი, გვ. 325). Սակայն հղում կատարված էջում այդպիսի տեղեկություն չկա:

[408] AKAK, т. 4, с. 813.

միայն ոճրագործ Շերիֆ փաշային պատժելու և նահանգի բնակիչներին բարօրություն ու խաղաղություն պարգևելու նպատակ ունի:[409] *Թուրքերը, ռուսներից վրեժխնդիր լինելու նպատակով, Տորմասովի զորքերի և մլիցիայի հեռանալուց հետո, Ախալցխայի լեզգիներին դրդեցին Բորչալուի գավառում հերթական ավարառության: Բայց այս անգամ էլ նորից տուժեց ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 1810 թ. նոյեմբեր–դեկտեմբերին Լոռիում բնակեցված հայ գաղթականությունը:*[410] *Ռուսական իշխանությունները լեզգիների ավարառությանը պատասխանեցին «համարժեք» քայլերով. իրենց հերթին աշխուժացրին թուրքական նահանգներից քրիստոնյաների արտագաղթը: Օսմանյան սահմանային էյալեթները լիովին մարդաթափելու նպատակով ցարական կառավարությունը նոր արտոնություններ խոստացավ գաղթողներին: Նրանք 5 տարով ազատվելու էին բոլոր հարկերից, ստանալու էին Ռուսաստանի պետական գյուղացիներին համահավասար իրավունքներ, պետական միջոցներով նրանց համար հացահատիկ էր գնվելու և այլն: Ջավախքի վերոհիշյալ Կոթելիա գյուղից գաղթեցված 57 ընտանիք կամ 500 չունչ գաղթականներին, որոնք ռուսական իշխանությունների բոլոր փորձերին հակառակ հաստատվել էին ոչ թե Լոռիում, այլ Թիֆլիսի չրջակայքում՝ Լիլոյում, Տորմասովը հորդորում էր տեղափոխվել Բորչալու՝ նրանց խոստանալով կյանքի օրինակելի պայմաններ, այդ թվում՝ ոչ միայն 5 տարով հարկերից ազատում, այլև պետական միջոցներից ցանքսի համար հացահատիկի ու սննդամթերքի հատկացում, որը պետությանը պետք է վերադարձվեր մաս–մաս՝ 3 տարվա ընթացքում: Այդ ձեռնարկը հաջողությամբ իրականացնելու դեպքում ռուս չինովնիկները կարող էին իշխանություններից ակնկալել չռայլ վարձատրություն:*[411] *Սակայն արդեն 1810 թ. վերջին՝ սկսված ցրտերի, հավանաբար նաև անհրաժեշտ պետական միջոցների անբավարարության պատճառով, այդ հարցը հետաձգվեց՝ առավել ևս, որ գաղթականներն ամենևին էլ ցանկություն չունեին տեղափոխվելու սահ-*

---

[409] Նույն տեղում, էջ 802, Дубровин Н., История войны и владычества русских на Кавказе, т. 5, с. 364.
[410] РГВИА, ф. ВУА, д. 2875, лл. 170–171, Присоединение Восточной Армении к России, т. 1, с. 593.
[411] АКАК, т. 4, с. 52.

մանամերձ ու ավերված գոտի և իրավացիորեն այդ քայլն աղետաբեր էին համարում իրենց համար:

Պարսկաստանի ու Օսմանյան Թուրքիայի հետ Ռուսաստանի մղած միաժամանակյա պատերազմների պայմաններում Լոռին չարունակում էր մնալ անապահով և ամայի շրջան, ուստի արևելահայ և արևմտահայ վերաբնակիչները, կարճատև դադրից հետո, թողնում էին այդ տարածքը և անցնում Վրաստանի խորքերը, որտեղ նրանց չէին սպառնում ավազակային հարձակումները: Այդուհանդերձ, Տորմասովի հաջորդները ևս, ելնելով ռուսական պետության շահերից, չհրաժարվեցին օտարահպատակ քրիստոնյա գաղթականներին հենց Լոռիում տեղավորելու քայլերից: 1811 թ. աշնանը գեներալ Պաուլուչչիի գաղտնի հրամանով Ախալցխայի ու Կարսի էյալեթներին սահմանակից զորքերի հրամանատար Լիսանևիչը եռանդուն գործունեություն ծավալեց այդ վարչամիավորներից նոր ներգաղթ խրախուսելու ուղղությամբ:[412] *Նոյեմբերի սկզբին այդ ջանքերը տվեցին որոշակի արդյունք. 100 ընտանիք կարսեցիներ, որոնց մեջ կային նաև մահմեդականներ, իրենց համայնքի առաջնորդ Աբդուլահ աղայի գլխավորությամբ անցան թուրք–ռուսական սահմանը և բնակություն հաստատեցին Լոռի–Բորչալուում: Ներքին գործերի նախարարին նոյեմբերի 7–ի իր զեկուցագրում Պաուլուչչին խնդրում էր դիմել ցարին գաղթական գյուղացիներին 7 տարով հարկերից ազատելու, իսկ կալվածատերերին տեղի հողատերերին տրված նույնատիպ արտոնություններով օժտելու համար:*[413] *Այսպիսով՝ երկուստեք իրականացվող հետևողական քաղաքականության արդյունքում Ախալքալաքի ու Ախալցխայի գավառները մարդաթափվում էին՝ առաջին հերթին կորցնելով քրիստոնյա բնակչությանը:*

1811 թ. դեկտեմբերին գնդապետ Պ. Կոտլյարևսկու կողմից Ախալքալաքի գավառի գրավումից հետո բնակչության մի մասը հպատակություն հայտնեց, մյուսներն էլ, հատկապես մահմեդականները, հեռացան լեռները և հարևան գավառներ: Պաուլուչչին ցարին հայտնում էր, որ քանզի այս բերդն իր սանջակով նախատեսվում է միացնել Ռուսաստանին, ինքը քայլեր է ձեռնարկում բնակչությանը վերադարձնելու, գավառը չենացնելու ուղղությամբ:[414] *Հատկանշա-*

---

[412] AKAK, т. 5, с. 6.
[413] Նույն տեղում, էջ 6–7:
[414] Նույն տեղում, էջ 184:

կան է, որ 1810 թ. նոյեմբերի վերջին, երբ ռուսական զորքը հեռանում էր Ախալցխայի փաշայությունից, իր հետ բռնագաղթեցնում էր բնակչությանը՝ ամայի թողնելով տասնյակ բնակավայրեր: Այժմ ռազմաքաղաքական նոր իրավիճակում, երբ հնարավոր էր դառնում Ախալքալաքի գավառի միացումը Ռուսաստանին, ռազմական իշխանությունները հարց էին դնում վերակենդանացնել տվյալ տարածքը, կանխել գյուղացիության արտագաղթը, դեռ ավելին՝ հարակից թուրքահպատակ գավառներից բնակչությանը տեղափոխել այստեղ: Դժվար չէ նկատել, որ ռուսական ժողովրդագրական քաղաքականությունն առաջին հերթին պայմանավորված էր կոնկրետ ռազմաքաղաքական իրավիճակով. եթե տվյալ տարածաշրջանը հնարավոր կլիներ պահպանել Ռուսաստանի կազմում, այն դիտվում էր հավատարիմ ու աշխատասեր հայ էթնոտարրով ամրապնդելու շրջան, իսկ նախկին տերերին վերադարձնելու դեպքում, այնտեղից խթանվում էր ներգաղթ դեպի ռուսապատկան գավառներ:

Բայց այս անգամ էլ՝ 1811 թ. վերջին, երբ ռուսական հրամանատարության նպատակներն այլ էին, հնարավոր չեղավ կանխել գավառի էթնիկ մաքրազարդման հերթական գործընթացը: Կոտլյարևսկուց հետո գավառ մտավ փոխգնդապետ Ջորաևի թաթարական հեծելազորը, որը կրկնեց մեկ տարի առաջ վրացական, մեգրելական ու իմերեթական միլիցիայի գործելակերպը: Առանց ազգային խտրականության, սկսվեց բնակչության ունեցվածքի իսկական թալան: Բռնագրավվեցին հացահատիկն ու անասունները: Հալածանքներից խուսափելու նպատակով փախուստի դիմած բնակիչներին վերադարձնելու, թաքցրած սննդամթերքը հայտնաբերելու համար Կոտլյարևսկին ավելի քան հազար հոգանոց մի զորաջոկատով սկսեց շրջել լեռնային գյուղերը և նույնիսկ մտավ Հարևան Ջղրի գավառ, ուր ապաստանել էր բնակչության մի մասը: Ռուսներին հաջողվեց ձեռք բերել 1000 ոչխար, 60 խոշոր եղջերավոր անասուն ու ձի, քիչ քանակությամբ էլ՝ հաց և վերադարձնել բնակիչների որոշ մասին: Սակայն հնարավոր չեղավ բոլոր փախստականներին վերադարձնել իրենց բնակավայրերը: Եվ դա միանգամայն հասկանալի է:

Ռուսական հրամանատարությունը մի կողմից չէր կանխում բնակչության նկատմամբ իր զինվորների ու թաթարների կատարած բռնություններն ու թալանը, մյուս կողմից՝ ակնկալում էր տեղացիների հնազանդությունն ու հավատարմությունը: Ինչպես նախորդ, այնպես էլ այս արշավանքի ժամանակ, թույլ տրված անհեռատես

քայլերի հետևանքով բնակչության մի մասը (այդ թվում՝ հայեր ու վրացիներ) խուսյս տվեց ռուսների հետ հավանական համագործակցությունից: Այդուհանդերձ, նույնիսկ այս դեպքում չավախքցի քրիստոնյաների մի մասը ռուսական զորքերին տրամադրեց որոշակի քանակությամբ սննդամթերք:

Վերոհիշյալից դժվար չէ կռահել, որ վերջին արշավանքը, որի ընթացքում, հուրախության Ջավախքի հայության, վերջապես գրավվեց Ախալքալաքը, անուղղակիորեն խորացրեց գավառի էթնիկական դիմախեղման գործընթացը. չատերն արտագաղթեցին թուրքական կամ ռուսական տիրույթներ, զոհվեցին թաթարական միլիցիայի հետ բախումների ժամանակ, կամ ուղղակի սովի մատնվեցին: Լիովին մարգաթափ եղան չատ գյուղեր, այդ թվում՝ Կոթելիան, որը, ինչպես տեսանք, տուժել էր դեռ 1810 թ. ընթացքում: Ջպետք է զարմանալ, որ 1811 թ. վերջին և 1812 թ. սկզբին ախալքալաքցիների նոր խմբեր հեռացան դեպի Վրաստան ու Բորչալուի գավառ:

Մինչև տարեվերջ գաղթականների հոսքն այնքան ուժեղացավ, որ ռուսական զինվորական իշխանություններն սկսեցին լրջորեն զբաղվել ներգաղթը պետականորեն կարգավորելու խնդրով: Որոշվեց ստեղծել գաղթականության ընդունման և տեղավորման հանձնաժողով, որը պետք է մինչև 1812 թ. գարունը զբաղվեր Վրաստանում և Փամբակում հաստատված չավախքցի, ախալցխացի, կարսեցի հայերին, հույներին ու մահմեդականներին (հիմնականում՝ կարափափախները) Բորչալուի գավառում տեղավորելու, նրանց համար բնակարաններ կառուցելու, հացահատիկով ապահովելու հարցով: «Կարևորվում էր» Կոտլյարևսկու արշավանքից հետո՝ դեկտեմբերի վերջին և 1812 թ. սկզբին բռնագաղթեցված ախալքալաքցիների հարցը: Բանն այն է, որ վերջիններս իրենց տներից նոր էին տեղահանվել և գտնվում էին բաց երկնքի տակ, ծանրագույն պայմաններում:[415] Ռուսական իշխանություններն այս անգամ վճռել էին էթնիկ տեղաշարժերը չթողնել ինքնահոսի, այսինքն՝ բնակավայրի ընտրության հարցում չառաջնորդվել գաղթականների ցանկությամբ և նրանց բնակեցնել ամայի վայրերում: Ընդ որում, այդ որոշումը վերաբերում էր ինչպես նոր գաղթածներին, այնպես էլ տարիներ առաջ տարբեր եղանակներով Բորչալուի գավառից հեռացածներին: Այսպես՝ Լիլոյում տեղավորված չավախքցիները՝ 57 ընտանիք կոթե-

[415] Նույն տեղում, էջ 18:

լիացիները պետք է վերադառնային Լոռի՝ իրենց համար նախապես հատկացված տարածք: 1810–1811 թթ. ընթացքում գաղթեցված կարսեցիները, ախալքալաքցիները և ախալցխացիները (վերջիններիս մեջ կային նաև 38 ընտանիք կաթոլիկ հայեր), տեղավորվելու էին ինչպես Բորչալուում, այնպես էլ Ռուսաստանին անցած հարևան մյուս գավառներում՝ Փամբակում և Շիրակում: Սակայն, ինչպես կտեսնենք, այս «վճռական քայլերը» ևս արդյունք չտվեցին: Բնակչության տեղաշարժերը չարունակեցին «կարգավորվել» տարերայնորեն, իսկ Հյուսիսային Հայաստանը մնաց ամայի ու նոսր բնակեցված տարածք:

1812 թ. մայիսին կնքված Բուխարեստի հաշտությամբ Ախալքալաքի բերդն ու գավառը Օսմանյան կայսրությանը վերադարձնելուց հետո Ջավախքի քրիստոնյաներից առանձին խմբեր ռուսական բանակի հետ անցան Վրաստան: Միաժամանակ, լեռնային չրջաններ հեռացած մահմեդականները, ինչպես և այլ գավառներից եկած թուրքեր ու լեզգիներ, բնակություն հաստատեցին արտագաղթած քրիստոնյաների գյուղերում: Այսպիսով՝ պայմանավորված ռազմաքաղաքական իրավիճակով, դարասկզբին Ջավախքում տեղի ունեցան էթնիկական տեղաշարժեր՝ հայերի ու վրացիների արտագաղթ ու բռնագաղթ, բնակավայրերի ամայացում, «թուրք–մեսխեթցիների» ներգաղթ, որոնց արդյունքում գավառն էլ ավելի կորցրեց իր նախկին էթնիկական նկարագիրը: Նույն երևույթը նկատվում էր ամբողջ Արևմտյան Հայաստանի տարածքում:[416] 1806–1812 թթ. պատերազմից հետո թուրքական իշխանություններն ուժեղացրին ռուսներին օժանդակած արևմտահայության հալածանքները: 1813 թ. հուլիսի 7-ին գեներալ Ն. Ֆ. Ռտիշչևը բողոքի նոտա ներկայացրեց թուրքերին՝ պահանջելով դադարեցնել հայվեհարդարը քրիստոնյա բնակչության նկատմամբ:[417] Սակայն արևմտահայության վիճակը չարունակեց վատթարանալ: 1813 թ. Ախալցխայի և Կարսի էյալեթներում սկսված սովը դրդեց մարդկանց նոր խմբերի հատելու ռուս–թուրքական սահմանը:

1814 թ. Փամբակում ռուսական զինվորական մարմիններն արևմտահայերից ստանում էին բազմաթիվ խնդրագրեր Անդրկովկասի ռուսահպատակ մարզեր գաղթելու թույլտվություն ստանալու

[416] Մելքոնյան Ա., էրզրում, Ե.,1994, էջ 118:
[417] AKAK, т. 5, с. 795.

համար:[418] 1816 թ. ռուսական իշխանությունները փորձեր կատարեցին կազմակերպել հույների ներգաղթ, մասնավորապես՝ Մալկա:[419] Ի տարբերություն դարասկզբի, այժմ ռուսական կողմը խուսափում էր արևմտահայերի զանգվածային գաղթերի բացահայտ կազմակերպումից՝ վախենալով վտանգել 1812 թ. հաշտությամբ հաստատված խաղաղ իրավիճակը[420] և գործում էր չատ զգուշորեն: Բայց երբեք գաղտնի քայլերը չէին դադարում և հաճախ պսակվում էին հաջողությամբ: Դրանք ավելի համարձակ դարձան 1816 թ. հետո, երբ գլխավոր հրամանատարի պաշտոնը վստահվեց գեներալ Ա. Երմոլովին: Նրա անմիջական ցուցումով 1817 թ. Բայազետի փաշայության Ալաշկերտի գավառի Կարասու գյուղից 12 ընտանիք անցավ Շիրակի Քյավթառլու գյուղը:[421] Գնդապետ Լադիանին հանձնարարվեց Խերթվիսի սանջակի կառավարիչ Մամադ Ալիի հետ գաղտնի բանակցություններ սկսել և համոզել ընդունելու ռուսահպատակություն կամ օժանդակելու գավառի բնակչությանը ռուսական տիրույթներ գաղթելու հարցում: Սակայն այդ գավառի բնակչությունը, որ գերազանցապես մահմեդական էր, չկամեցավ տեղափոխվել ռուսական տիրապետության տակ, առավել ևս, որ թուրքական իշխանություններն ամեն կերպ խոչընդոտեցին այդ գործընթացը:[422] Դեպի Շիրակ նոր գաղթ եղավ 1820 թ.:[423] Նույն տարվա հոկտեմբերի 22–ին Ալեքսանդր I ցարի հատուկ հրամանագրով ռուսական սահմանները գաղթածները ազատվեցին հարկերից ու պարհակներից, 3 տարով՝ զեմստվային պարտավորություններից:[424]

1821–1822 թթ. պատերազմ ծագեց Պարսկաստանի և Թուրքիայի միջև: Պարսից արքունիքը, օգտվելով Արևմտյան Հայաստանում մինչև էրզրում իր բանակների առաջխաղացումից, վճռեց պարսկամերձ գավառներից, ինչպես և Ախալցխայի էյալեթից հայ

---

[418] ЦГИАГ, ф. 16, оп. 1, д. 1661, л. 1–5.
[419] АКАК, т. 5, с. 836.
[420] Այդ խաղաղությունը շատ հարաբերական էր: 1814 –1816 թթ. թուրքերի ու լեզգիների կողմից սահմանային հարձակումներն ու մարդկանց առևանգումները շարունակվում էին: Վրաստանից առևանգված մարդկանց վաճառում էին թուրքական շուկաներում (АКАК, т. 5, с. 832–833).
[421] Արևելյան մամուլ, Զմյուռնիա, 1898, 1 դեկտեմբեր, էջ 890:
[422] ლომსაძე შ., სამცხე ჯავახეთის, გვ. 328.
[423] АВПРФ, ф. Главный архив III–6, д. 4, л. 14.
[424] АКАК, т. 7, с. 847.

բնակչության զանգվածային գաղթ կազմակերպել դեպի Պարսկաստան:[425] Շնորհիվ հայ բնակչության ազատագրական պայքարի, հայությանը մի շարք չրջաններից բռնագաղթեցնելու պարսիկների փորձերը ձախողվեցին:[426] Այս դժվարին պայմաններում շատ արևմտահայեր կրկին փորձեցին իրենց ազատության ուղին տեսնել ռուսական տիրապետության տակ անցնելու մեջ: Բայազետում ապրող Արծրունիների տան ներկայացուցիչները կապեր հաստատեցին Թիֆլիսահայ գործիչների հետ դեպի Անդրկովկաս հայության նոր ներգաղթ կազմակերպելու համար:[427] Ստեղծվեց գաղթականների ընդունման պետական հանձնաժողով: 1822 թ. զգալի թվով արևմտահայեր, որոնց մի մասն էլ Պարսկաստանում բռնությամբ հաստատված բայազետցիներ ու ալաշկերտցիներ էին, ստվար խմբով հասել էին Շիրակ: Նրանց մասին Հովակիմ Լազարյանին գրած նամակում Ներսես Աշտարակեցին գրում էր. « ...ողորմելի բազմութիւնք աղքատաց մերազնեաց տարածելոց ընդ ամենայն սահմանս նշանակեալ կողմանս (Արևմտյան Հայաստանի արևելյան չրջանները – Ա.Մ.), առ ուր որ բարբարոսաց կուան եղեալ, ...բարեբախտ զհամարեալ լինին, որք մազապուրծ զանձինս և ընտանիս զօրէն արկանել ...ընդ հովանեաւ դրոշակի կայսերական մեծութեան ամենայն ռուսաց ի Շիրակ գաւառ...»:[428] Գաղթականների ընդունման հատուկ հանձնաժողովը վերոհիշյալ արևմտահայերից միայն 500 ընտանիք բնակեցրեց Գյումրիում,[429] մեկ այլ խումբ էլ Լոռիում:[430] Ի դեպ, այդ տարվա օգոստոս–սեպտեմբերին ռուսական սահմաններն անցան մեծ թվով հուլյներ:[431]

1820 թ. մայիսին Ալեքսանդր I–ի հրամանագրով դեպի ռուսական տիրույթներ գաղթելու թույլտվություն ստացան նաև Թուր-

---

[425] Մատենադարան, ծեռագիր 10195, թ. 3ա:
[426] Մելքոնյան Ա., էրզրում, էջ 123–124 և Հայկունի Ս., Բագրևանդ ջրաբաշխ գավառ, մասն Ա, Վաղարշապատ 1894, էջ 3, Արարատ, 1889, 31 մարտ, էջ 152:
[427] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 58, վավ. 188, թ. 1:
[428] Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 105, գ. 13, վավ. 192, թ. 1–2:
[429] ՀՊԻԱՀ, ֆ. 16, օո. 1, դ. 2973, լլ. 1–2, 4–7.
[430] АВПРФ, ф. Главный архив, ш–6, д. 4, л. 3,8. Այս խումբը բաղկացած էր ալաշկերտցիներից, որոնք 13 տարի Լոռիում ապրելուց հետո, տեղափոխվեցին Ղազանչի գյուղը:
[431] ՀՊԻԱՀ, ֆ. 16, օո. 1, դդ. 2981, 2985.

քիայում հալածանքների ենթարկվող կաթոլիկ հայերը:[432] Սակայն Ախալցխայի կաթոլիկները, որ համեմատաբար ավելի բարեկեցիկ կյանքով էին ապրում, իրենց ձեռքում ունեին զգալի տնտեսական լծակներ, հրաժարվեցին արտագաղթել, առավել ևս, որ կաթոլիկների նկատմամբ գործադրվող բռնությունները կայսրության արևելյան շրջաններում մեծ ծավալներ չընդունեցին:

Ինչևէ, կաթոլիկները ևս ընդհանուր հայակուլ գործընթացներից դուրս չմնացին և ռուս–թուրքական հակամարտության պայմաններում նկատելիորեն թուլացան: Եթե 18–րդ դարի վերջին Ախալցխան, ուր գլխավորապես ապրում էին հայ կաթոլիկներ, ըստ Ինճիճյանի ուներ 30 հազ. բնակիչ (թեկուզև՝ չափազանցված տվյալներով), ապա 1824 թ.՝ 505 ընտանիք կամ 2050 չունչ: Խիզաբավրա և Արդահանի Վել գյուղերն ունեին 100–ական ծուխ բնակչություն, ապա 1824 թ.՝ համապատասխանաբար 46 ընտանիք (262 անձ) և 66 ընտանիք (435 անձ):[433] Մոտավորապես 20–25 տարվա կտրվածքով ավարտվել էր նաև հայ առաքելականների կաթոլիկացման և բավական արագ տեմպերով ընթացել նրանց մի մասի թուրքացման գործընթացը:

Ախալցխայի ողջ նահանգում կաթոլիկ հայերն ապրում էին միայն 17 բնակավայրերում՝ ընդամենը 1191 ծուխ կամ 5937 չունչ, որոնցից 36 ծուխը (240 չունչ)՝ Իվլիտում, 26 –ը (202 չունչ)՝ Վալեում, 12 –ը (105 չունչ)՝ Արալում, 65 –ը (320 չունչ)՝ Ուդեում, 5–ը (18 անձ)՝ Բոլաջուրում, 22 –ը (86 չունչ)՝ Աբասթումանում, 4 –ը (20 անձ)՝ Խերթվիսում, 68 –ը (408 չունչ)՝ Արտանուջում և այլն:[434] Ինչպես երևում է դեպքերի շարադրանքից, 19–րդ դարի առաջին քառորդին ռուսական իշխանությունների ժողովրդագրական քաղաքականության գլխավոր նպատակը Ռուսաստանին անցած Բորչալուի գավառն արևմտահայերի ներգաղթի հաշվին վերաշինելն էր: Բայց որքան էլ մեծ լիներ ռուսների այդ ձգտումը, բավարար ֆինանսական միջոցների բացակայության պայմաններում, կդատապարտվեր ձախողման, ինչը որ և տեղի ունեցավ: Ներգաղթեր եղան, բայց՝ ոչ Լոռի: Կամ լինելու դեպքում էլ

---

[432] ԱՎՊՐՓ, ֆ. Главный архив II–19, д. 1, лл. 1—4. Այս գաղթը թեև ինչ-ինչ պատճառներով տեղի չունեցավ, սակայն նրա կազմակերպման շուրջ ռուսական իշխանությունների ծավալած գործունեությունը վկայում է արևմտահայերի ներգաղթի հարցում ցարիզմի խիստ շահագրգռության մասին (տես Միքայելյան Վ. Ա., Ղրիմի հայկական գաղութի պատմություն (1801–1917), Ե., 1970, էջ 49–54):

[433] Հմմտ. Ինճիճեան Ղ., նշվ. աշխ., էջ 124–125 և Յակոբեան Պ., նշվ. աշխ., էջ 82–83:

[434] Յակոբեան Պ., նշվ. աշխ., էջ 82–83: Պ Հակոբյանը վերոհիշյալ տվյալները բերում է ըստ 1935 թ. Հռոմում Հոֆմանի լույս ընծայած ժողովածուի, տե՛ս G. Hofmann S. J.,Il Vicariato Apostolico Di Constantinopoli, 1453–1830, էջ 271:

գաղթականների մեծ մասը, չստանալով խոստացված տնտեսական օժանդակությունն ու սահմանների ապահովությունը, հեռացավ Անդրկովկասի կենտրոնական ու հյուսիսային շրջաններ: Այնպես որ 1801 թ. Ռուսաստանին անցած Հյուսիսային Հայաստանի գավառները դեռ երկար ժամանակ չարունակեցին մնալ անմխիթար վիճակում: «Երբեմնի արտակարգ մարդաշատ Լոռին, Սոմխեթը, Ծալկայի շրջակայքը և սահմաններին մերձակա այլ տեղեր,– 1819 թ. ապրիլին խոստովանում էր գլխավոր հրամանատար Ա. Երմոլովը,– ներկայումս բացարձակապես ամայի են, թեև ունեն բերրի հողեր»:[435]

Քննարկելով 19–րդ դարի առաջին քառորդին Անդրկովկասի Ռուսաստանին միացման առաջին փուլում տարածաշրջանում ժողովրդագրական իրավիճակի հիմնախնդիրը՝ կարելի է հանգել հետևյալ եզրակացություննների.

ա) Պայմանավորված Անդրկովկասի աստիճանական միացման գործընթացով, ռուսական զորքերի առաջխաղացմամբ, ինչպես արևելահայ, այնպես էլ արևմտահայ ստվար զանգվածներ՝ անձի ու գույքի ապահովություն ձեռք բերելու ակնկալությամբ, ցանկություն հայտնեցին ինքնակամ արտագաղթելու ռուսական հպատակություն ընդունած տարածքներ՝ Քարթլի– Կախեթ, Լոռի, Փամբակ, Շիրակ:

բ) Ռուսական զինվորական իշխանությունները, նպատակ ունենալով տնտեսապես վերականգնել կայսրության նորանվաճ տարածքները, հատկապես նախորդ շրջանում մեծապես տուժած Լոռի–Բորչալուն, հնարավորինս նպաստում էին Արևմտյան Հայաստանից, ինչպես և Ախալցխայի էյալեթից բնակչության ներհոսքի գործընթացին՝ հաճախ հաշվի չնստելով քրիստոնյա բնակչության կամքի հետ և անտեսելով նրանց կենսական շահերը:

գ) Սուլթանական կառավարությունը, ռուսական զորքին հայերի հավանական ռազմական և նյութական աջակցությունից զրկելու համար հաճախ իրենց բանակի նահանջից առաջ ամայացնում էին բնակավայրերը, քրիստոնյաներին քշում երկրի խորքերը, ռազմական հաջողության դեպքում էլ հարվածներ հասցնում ռուսական սահմաններին՝ փորձելով վիժեցնել այնտեղ կայուն էթնոժողովրդագրական և տնտեսական իրավիճակ ստեղծելու ռուսական ծրագրերը:

դ) Վերոհիշյալ գործընթացների հետևանքով Ջավախքն ու հարակից գավառները հայտնվեցին կիսավեր վիճակում. նվազեց հատկապես հայ բնակչությունը, շատ բնակավայրեր դարձան անմարդաբնակ:

---

[435] АКАК, т. 6, ч. 1, с. 26.

ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ԳԱՎԱՌԸ ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ (1828–1917 ԹԹ.)

Ա) Ախալքալաքի և Ախալցխայի գավառները 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի տարիներին: Արևմտահայերի զանգվածային գաղթը

1826–1828 թթ. ռուս–պարսկական պատերազմի արդյունքում կնքված Թուրքմենչայի հաշտության պայմանագիրն ամրապնդեց Ռուսական կայսրության սահմաններն Արևելյան Անդրկովկասում՝ այն հասցնելով մինչև Արաքս գետը: 19–րդ դարի սկզբներին Քարթլիի, Մեգրելիայի, Գուրիայի, Իմերեթիայի միացումից հետո Ռուսաստանի գերիշխանությունը հաստատվել էր նաև Անդրկովկասի հարավարևելյան մի հատվածի վրա: Սակայն այդ շրջանում ռուսական նորահաստատ տարածքները հայտնվել էին Ախալցխայի էյալեթից սպառնացող անմիջական վտանգի առջև, հանգամանք, որը օրակարգի խնդիր էր դարձնում այդ վարչամիավորը Ռուսաստանին միացնելու վաղեմի ծրագրի իրագործումը: Շուտով ցարական արքունիքը այդ խնդրի կենսագործման համար չհապաղեց օգտվել ներկայացած պատեհ առիթից՝ հերթական ռուս–թուրքական պատերազմից:

1826–1828 թթ. ռուս–պարսկական պատերազմում տարած հաղթանակից հետո, երբ Արևելյան Հայաստանի զգալի մասը կազմող Երևանի ու Նախիջևանի խանություններն անցան Ռուսաստանին, Օսմանյան կայսրության հետ ռուսական տերության հարաբերությունները ավելի սրվեցին, որն ի վերջո, 1828 թ. ապրիլին հանգեցրեց ռուս–թուրքական նոր պատերազմի: 40 հազարանոց հատուկ կովկասյան կորպուսից առանձնացնելով 12 հազ. զորախումբ՝ 58 հրանոթներով,[436] գեներալ–ադյուտանտ Ի. Ֆ. Պասկևիչ Էրիվանսկին հունիսի 14–ին Գյումրիի մոտ անցավ ռուս–թուրքական սահմանագիծը՝ Ախուրյան գետը, և չարժվեց Կարսի վրա:[437] Պատերազմի

[436] Широкорад А. Б., Русско–турецкие войны 1676–1918 г., Минск, Москва, 2000, с. 409.
[437] Ռուս–թուրքական պատերազմի մասին տես История Армении, авторский коллектив (Г. Аветисян, Э. Даниелян, А. Мелконян), Е., 1999, с. 126–130, Մելքոնյան Ա., Հայոց պատմություն, ուսումնական ձեռնարկ, Ե., 1998, էջ 132–135:

սկզբում Եփրեմ կաթողիկոսը հանդես եկավ կոնդակով՝ ուղղված Կարսի, Ախալցխայի և Բայազետի հայ բնակչությանը, որում խնդրում էր ամեն կերպ զորավիգ լինել ռուսական բանակին, նպաստել նրա հաղթանակներին, որոնք պայմանավորելու էին հայ ազգի ազատագրության գործը:[438]

Հունիսի 22–ին Կարսի թուրքական կայազորը չկարողացավ ընդդիմանալ ռուսական զորքերի ճնշմանը և քաշվեց միջնաբերդ: Ռուսները հաջորդ օրը հայկական թաղամասով ներխուժեցին քաղաք: Կարսին օգնության եկած Կիոս–Մամեդ փաշայի ուժերը հապշտապ նահանջեցին դեպի էրզրում՝ համոզված լինելով, որ ռուսները Կարսից հետո շարժվելու են դեպի Արևմտյան Հայաստանի այդ կարևորագույն ռազմավարական կենտրոնը: Սակայն գեներալ Ի. Պասկևիչը բանակում սկսված համաճարակի հետևանքով ավելի քան քսանօրյա հարկադիր դադարից հետո, հանկարծակի զորքերը շրջեց դեպի հյուսիս՝ Ախալցխայի փաշայության տարածք՝ նոր անակնկալի բերելով թշնամուն:

Հուլիսի 16–ին գեներալ Բերխմանի հրամանատարությամբ Կարսում թողնելով մի ջոկատ՝ ռուսական հիմնական ուժերն ուղղություն վերցրեցին դեպի Ախալքալաքի գավառ: Ավելի քան 100 կմ երկարություն ունեցող այդ երթուղին անցնելու էր Ջղր լճի մոտով և համանուն դժվարանցելի լեռներով: Հատկապես մեծ բարդություններ էին սպասվում անբարեկարգ ճանապարհներով և տեղ–տեղ էլ՝ ճահճոտ տեղանքով հրետանին տեղափոխելու գործում:

Հուլիսի 17–ին ռուսական կորպուսը գիշերեց Ջահմ գյուղում: Հաջորդ օրն այն շարժվեց դեպի հյուսիս և հասավ Կյումպեթ (Գմբեթ) գյուղը, ապա, հաղթահարելով բազմաթիվ վերելքներ ու շեշտակի վայրէջքներ, բազմաթիվ գետակների առաջացրած ճահճուտներ, Ջղր լճի ափով[439] *մոտեցավ Ախալքալաքի սանջակի հարավային սահմանին՝ Ջղրի լեռներին: Դժվարանցանելի այդ լեռնաշղթան հաղթահարելու համար հարկ եղավ պիոներների երեք վաշտից, 42–րդ եգերական գումարտակից, Դոնի կազակական դնդից և թաթարական հեծելազորից բաղկացած առաջապահ ջոկատը՝ գնդապետ*

---

[438] Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 1170, թ. 74բ–75ա:

[439] Այդ ժամանակ, ի թիվս այլ գավառների, կիսավեր վիճակում էր նաև Ջղր լճի շրջակայքն ընդգրկող համանուն Ջղր գավառը, որը ոչ վաղ անցյալում քրիստոնյաներով բնակեցված տարածք էր (Лотто В., Кавказская война, ч. 4, вып. 1, с. 100).

Կարպովի հրամանատարությամբ ուղարկել առաջ ճանապարհները հարթեցնելու, գետակների վրա կամրջակներ կառուցելու նպատակով:[440] Ինժեներային չոկատներին վիճակվեց կատարել ճանապարհաշինական մեծ աշխատանք: Շուտով ռուսական զորքերը բարձրացան Զլդրի ամենաբարձր լեռնագագաթներից մեկը՝ Գյոք դաղ և, չնայած սառնամանիքին, դիչերեցին այնտեղ:

Հուլիսի 21–ին նախ՝ առաջապահ ուժերը, ապա և ամբողջ զորքը բանակ դրեցին Գոնդուրա գյուղի մոտ, որից հետո չարժվեցին դեպի Ղուլալիս: Թշնամու 400 հոգանոց կարափափախների հեծելազորը, որ ուշի ուշով հետևում էր ռուսների գործողություններին, չհամարձակվեց մարտի մեջ մտնել և անգամ մասնակի խոչընդոտներ հարուցել:

Հուլիսի 23–ի առավոտյան ժամը 4–ին Պասկևիչի ուժերն անցան Գոնդուրա գետակը (Կրխբուլաղ՝ Քառասնաղբյուր) և ընդհուպ մոտեցան Ախալքալաքի բերդին, որի կայազորը բաղկացած էր մոտ 1000 մարդուց: Վերջիններս, իրենց ընտանիքներն ուղարկելով Ախալցխա, վճռել էին կռվել մինչև վերջին մարդը և անառիկ պահել քաղաքը:[441] Նրանց տրամադրության տակ կար 14 հրանոթ: Պատահական չէ, որ երբ Պասկևիչի բանագնացները՝ Սախնո–Ուստինովիչը և մայոր Բերենը, ներկայանալով թուրքերին, պահանջում են անձնատուր լինել, ստանում են կտրուկ մերժում. «Մենք երևանցի և կարսեցի ռազմիկներ չենք, մենք ախալցխացիներ ենք, մեզ հետ չկան ոչ կանայք, ոչ ունեցվածք, կմեռնենք բերդի պարիսպների վրա, բայց չենք հանձնվի»: Ուշագրավ է, որ այստեղ վաղուց չրջանառության մեջ էր այն ասացվածքը, որ «կարսեցին հաղթում է երեք երևանցու, իսկ երկու կարսեցիներ, հաղիվ կարժենան մեկ ախալցխացի»:[442] Համառորեն դիմադրելու իրենց վճռակամությունը «հաստատելու» համար թուրքերը կատարեցին մի ուխտադրուժ քայլ: Մոտենալով քաղաքին՝ ռուսական զորքերը պարիսպների վրա հայտնված թուրքերի

---

[440] История военных действий в азиатской Турции в 1828–1829 г., ч. 1, с. 254.

[441] Այդ ժամանակ Ախալքալաքը փաստորեն չուներ քաղաքացիական բնակչություն, լիովին կորցրել էր իր երբեմնի շքեղությունը և վերածվել էր մի կիսալքյալ բերդագյուղի: «Երբեմնի խիտ բնակեցված Ախալքալաքը,– գրում էր Պոտտոն,– Պասկևիչի ժամանակ միայն հիշեցնում էր ավերակակույտ, որն իր պարիսպների մեջ հազիվ ներառնում էր մի մզկիթ և մինչև 40 աղքատ ու ողորմելի հյուղակներ (Потто В., Кавказская война, ч. 4, вып. 1, с. 103).

[442] История военных действий в азиатской Турции в 1828–1829 г., ч. 1, с. 256, АКАК, т. 7, Т. 1878, с. 755.

չրջանում նկատեցին բանակցություններ սկսելու նշանները: Բայց երբ հարյուրապետ (սոտնիկ) Աբուխովը (նաև՝ Օբուխով) փորձեց հանդիպում կազմակերպել հրավիրել խոսակցության, զոհվեց բերդից արձակած գնդակներից:

Նման վերաբերմունքը ստիպեց Պասկևիչին անցնել վճռական գործողությունների: Մեծաթիվ զոհեր չտալու համար վճռվեց քաղաքը ենթարկել ուժեղ հրետակոծության, որի համար, անշուշտ, ամենանպատակահարմար դիրքը Գոնդուրա գետակի ձախափնյա բարձրադիր տափարակն էր: Այն ուներ իշխող դիրք ամբողջ բերդաքաղաքի նկատմամբ և իր բարձրությամբ հավասարվում էր միջնաբերդի աշտարակներին:

Անձամբ տեղանքի զննումից հետո Ի. Պասկևիչը կարգադրեց գնդապետ Բուրցովին Գոնդուրա գետի ձախ ափին, պարիսպներից մոտ 350 մ հեռավորության վրա տեղադրել հրետանային մարտկոց: Համառ դիմադրության դեպքում տևական հրետակոծություն կատարելու համար որոշվեց միջնաբերդից մոտ 200 մ հարավ, Գոնդուրայի աջ ափին՝ ուղիղ պարիսպների դիմաց ևս տեղակայել մի մարտկոց: Երեկոյան՝ մթնելու հետ մեկտեղ, 42-րդ եգերական գնդի մի գումարտակ և պիոներների մի վաշտ գեներալ-մայոր Կորոլկովի գլխավորությամբ աննկատ մոտեցան բերդին և նախատեսված վայրում սկսեցին մարտկոցների կառուցման աշխատանքները: Գեներալ-մայոր Օստեն-Սակենին հանձնարարվեց դիրքեր բռնել բերդից հյուսիս՝ Թափարվան և Գոնդուրա գետերի խառնման չրջանում ընկած ավերակ արվարձանի տեղում:

Միաժամանակ իրականացվեցին գործողություններ՝ թշնամու ուշադրությունը չինարարական աշխատանքներից չեղելու և ինչպես բերդից, այնպես էլ Արդահանի կողմից եկող ճանապարհներից թշնամու հեծելազորի հնարավոր հարձակումները կասեցնելու ուղղությամբ:[443] *Մթնելուն պես գնդապետ Ռաևսկին դրագունների դիվիզիոնով և 4 հրանոթներով Գոնդուրա գետի աջ ափով ընդհուպ մոտեցավ բերդին: Մթնում թշնամուն չհաջողվեց նշանառու կրակ արձակել: Մինչև հուլիսի 24-ի լուսաբացը Գոնդուրայի ձախ ափին, բերդից 400 մ հեռավորության վրա տեղադրվեց 12 հրանոթից բաղկացած*

[443] История военных действий в азиатской Турции в 1828–1829 г., ч. 1, с. 259–260, АКАК, т. 7, с. 755–756.

մարտկոց: Վերջինից 100 մ դեպի բերդաքաղաքը դրվեց 4 հրասանդով մեկ այլ մարտկոց:[444]

Լուսադեմին ասկյարները, տեսնելով դիշերվա ընթացքում ռուսների կատարած պաշարողական մեծածավալ աշխատանքները, հանկարծակիի եկան: Սակայն դա համառորեն դիմադրելու պաշտպանների մտադրությունը չփոփոխեց: Առավոտյան մեկժամյա նամազից հետո կայազորն առաջինը կրակ բացեց: Ռուսների պատասխան հուժկու հրետակոծության արդյունքում տեղ–տեղ քանդվեցին պարիսպներն ու դրանց ատամնասյուները: Թուրքական զինվորները հապշտապ լքեցին բերդապարիսպներն ու մարտկոցները և փորձեցին ամբակոծությունից պատսպարվել ապաստարանում՝ կազեմատում: Կազեմատի նեղլիկ տարածքում չտեղավորված զինվորները, աղմուկ–աղաղակով, տեղից–տեղ նետվելով, ավելի ուժեղացրեցին սկսված ընդհանուր խուճապը: Ոմանք, կրկին մագլցելով պարիսպների վրա, կարողացան պարաններով իջնել Թափարվան գետի ձորը և փախուստի դիմել:

Ռուսական հրամանատարությունը կարգադրեց դադարեցնել հրետակոծությունը՝ հույս ունենալով, որ գոնե այդ ժամանակ կայազորն անձնատուր կլինի: Գնդապետ Բորոդինը, մոտենալով պարիսպներին, կրկին պահանջեց զենքը վայր դնել: Սակայն ապարդյուն: Բերդի պարիսպների վրա հայտնված կայազորի պետը հիշեցրեց զինվորներին՝ մինչև վերջ կռվելու մասին տված երդումը և ստիպեց մարտը չարունակել: 18 հրանոթներից վերսկսվեց միաժամանակյա կործանարար հրետակոծությունը: Կայազորի զինվորների մեջ ավելի աճեց փախուստի դիմողների թիվը: Հուսահատ կռիվը խլեց ասկյարների նորանոր կյանքեր: Առաջինը քաղաքին մոտեցան Բորոդինի գումարտակի երկու վաշտերը: Ջունենալով պաշարողական սանդուղքներ, ռուս զինվորներն սկսեցին պարիսպների վրա մագլցել փախչողների պարաններով: Ամրակոծությունն այնքան ահարկու էր և գրոհը՝ սրընթաց, որ թուրքերը չկարողացան գործի դնել պարիսպների վրա տեղադրված խոշոր գերաններն ու քարաբեկորները: Տարբեր ուղղություններով ռուսական զինվորները ներթափանցեցին քաղաք: Երբ ռուսական դրոշները հայտնվեցին բերդապարիսպների

[444] Генерал–фельдмаршал князь Паскевич, составил князь А. Щербатов, т. 3, с. 123. Այս աշխատանքները ղեկավարեցին փորձառու հրամանատարներ գեներալ Վադբոլսկին, բարոն Օստեն–Սակենը և Գիլլենշմիդտը (АКАК, т. 7, с. 756).

վրա, կայազորը դադարեցրեց դիմադրությունը և հանձնվեց: Բորոդինի գումարտակի երկու այլ վաշտեր, Կարպովի գլխավորած Դոնի կազակային մի ջոկատ, և Նիժեգորոդյան գնդի դիվիզիոնը, հետապնդելով հակառակորդին, Թափարվանի նեղլիկ ձորում, մեծ մասին անխնա կոտորեցին: Կատաղի ճեռնամարտում հատկապես դաժան գտնվեցին կազակները՝ վրեժ լուծելով իրենց հրամանատար Աբուխովի տմարդի սպանության դիմաց: Առանձին թուրք զինվորներ հուսահատ դիմադրություն ցուցաբերեցին կիրճի քարքարուտներում: Ի դեպ, արիաբար զոհված այդ զինվորների մասին խոստովանել և անգամ հիացմունքով են խոսել ռուս զինվորական հեղինակները: Ն. Ուշակովի խոսքերով Ախալքալաքի պաշտպանները ցուցադրեցին «հազվագյուտ ամրության օրինակ»:[445]

Ռուսների ճեռքն անցավ 14 հրանոթ, 21 դրոշ, մեծ քանակությամբ վառոդ ու թնդանոթային արկեր: Թուրքական կողմից զոհվեց 600 մարդ, այդ թվում՝ բերդի կայազորի պետ Ֆարհադ բեկը՝ Ախալցխայի նախկին փաշա Սելիմի որդին: Գերի ընկած 300 զինվորների մեջ էին Ախալքալաքի սանջակբեյ Մուֆթի բեկը և 16 պաշտոնյաներ:

Հուլիսի 24-ի կեսօրից հետո Ախալքալաքի հյուսիսարևմտյան կողմում երևաց լազերի 1500 հոգանոց մի զորաջոկատ՝ նպատակ ունենալով օգնություն հասնել պաշարվածներին: Պասկևիչը նրանց դեմ ուղարկեց մի հեծյալ ջոկատ: Սակայն, համոզվելով, որ բերդաքաղաքն արդեն ռուսների ճեռքում է, այդ զորախումբը, առանց մարտի մեջ մտնելու, հապշտապ հեռացավ լեռները:

Այդ օրերին Պասկևիչի զորախմբին միանալու փորձ կատարեց ռուս մեծանուն գրող Ա. Գրիբոեդովը: Հուլիսի 18-ին նա դուրս եկավ Թիֆլիսից և Ջալալօղլի–Գյումրի երթուղով ամսի 23-ին հասավ Կարս: Ստանալով Զլդրի լեռներով Կարսից դեպի Ախալքալաք ռուսական զորքերի չարժվելու լուրը՝ նա վերադարձավ Գյումրի: Ապա այնտեղից, Կոզլովյան ու 7-րդ Կարբինների հեծելական վաշտերի, ինչպես և վերքերից ապաքինված մոտ հարյուր զինվորների հետ, Գրիբոեդովը Ղազանչիով (Աչոցք) չտապեց Ախալքալաք: «Ես անմիջապես նրանց բոլորին վերցրեցի իմ հրամանատարության տակ,– գրում էր նա,– չորս թուրք ուղեկիցների ու կալակների հետ, ինքս առջևից, և ահա երկրորդ օրն է նրանց տանում եմ դեպի Ախալքալաք: Ամեն րոպե սպասում ենք հարձակման. աստված տա ողջ

[445] История военных действий в азиатской Турции в 1828–1829 г., ч. 1, с. 262–263.

առողջ տեղ հասնենք»:[446] *Բանն այն է, որ Շիրակից Աշոցքի վրայով Ախալքալաք տանող ճանապարհը չարունակում էր մնալ թուրքական ավազակային ջոկատների հսկողության տակ, և ամեն վայրկյան վերոհիշյալ ռուսական ուժերը կարող էին հայտնվել չրջափակման մեջ: Սակայն, բարեբախտաբար, հուլիսի 26–ին Գրիբոեդովի գլխավորած զորքերն անվնաս հասան Ախալքալաք, որն արդեն մի քանի օր առաջ գրավված էր հիմնական ուժերի կողմից:*

Ախալքալաքի գրավման համար Նիկոլայ I ցարը գնդապետ Բորոդինին արժանացրեց սբ. Գեորգիի III, իսկ Օստեն–Սակենին՝ սբ. Աննայի I աստիճանի ալմաստե նշան չքանշանների: Կայսեր հրամանով Պասկևիչը նշանակվեց մարտում աչքի ընկած Շիրվանյան գնդի ցմահ հրամանատար: Բալկանյան ճակատի հրամանատար Դիբիչին գրած նամակում ցարը գոհունակությամբ գրում էր. «Մեր քաջարի Պասկևիչը գարձյալ փայլուն հաղթանակ է տարել. Ախալքալաքը գրավվել է Շիրվանյան գնդի մեկ գումարտակի գրոհով»:[447]

Ռուսների կողմից գավառի գրավումը, որով հսկողության տակ վերցվեցին դեպի Գյումրի, Ծալկա և Կարս տանող ճանապարհները, հնարավորություն տվեց տեղական բնակչության մի մասին վերադառնալ և մասնակիորեն վերաշինել մի քանի բնակավայրեր՝ Հոկամբը, Բարալեթը, Կոկիան, Գոնդուբան, Արուլը, Դիլիսկան, Մաջադիան, Արագովան և այլն: Պասկևիչն իր հերթին միջոցներ ձեռք առավ՝ բնակչության վստահությունը շահելու և նրանց իրենց տները վերադարձնելու համար: Այդ հարցում ռուսական հրամանատարությունն ունեցավ որոշակի հաջողություններ: Պատահական չէ, որ արդեն պատերազմի վերջում՝ 1829 թ. գավառում հաշվվում էր 1816 հայ ընտանիք (մոտավորապես 10–13 հազար չունչ, որից 5409–ը՝ արական սեռի), 639 մահմեդական (1727–ը՝ արական չնչի) և 179 վրացի ընտանիք (710–ը՝ արական չնչի):[448]

---

[446] Полное собрание сочинений А. С. Грибоедова, Петроград, 1917, т. 3, с. 213–214, Պարսամյան Վ. Ա., Գրիբոեդովը և հայ–ռուսական հարաբերությունները, Ե., 1947, էջ 94–95:

[447] АКАК, т. 7, с. 759, Потто В., Кавказская война, т. 4, вып. 1, с. 110.

[448] Ջամալյան Ա., Հայ–վրացական կնճիռը, Հայրենիք, 28 ապրիլ 1928, էջ 85: Անտեսելով Ախալքալաքի տեղաբնիկ հայության մասին վերը բերված բազմաթիվ փաստերը (այդ թվում՝ վրացական աղբյուրները)՝ առանձին վրաց պատմաբաններ ու գործիչներ, ինչպես վերը նշվեց, փորձում են այս շրջանում հայերի հայտնվելը կապել հիմնականում 1829–1830 թթ. արևմտահայերի ներգաղթի հետ (տե՛ս ლომსაძე შ. სამცხე ჯაყოსეთი, თბილისი 1975,

Ախալքալաքից հետո ռուսական հրամանատարությունը մի պահ վճռեց ուղղություն վերցնել դեպի Արդահան: Սակայն այդ դեպքում թուրքերը, ժամանակ չհելով, կարող էին նոր օգնական ուժեր ստանալ և ամրացնել Ախալցխան: Ուստի որոշվեց գրավել էյալեթի կենտրոն Ախալցխան: Վերջինիս ճանապարհին ընկած Խերթվիսի բերդը հպատակեցնելու համար Օստեն–Սակենի տրամադրության տակ դրվեց 3627 հոգանոց մի զորաջոկատ՝ բաղկացած Երևանյան կարբոներական, Վրացական գրենադերական գնդերից, Կովկասյան գրենադերական բրիգադի 1–ին վաշտից, Դոնի կազակների հեծելազորից՝ 2 պաշարողական ու 6 թեթև հրանոթներով:[449] *Հուլիսի 26–ին այս զորախումբը մոտեցավ Խերթվիսին: Բերդաքաղաքում և նրա շրջակա 50 տներում ապրող 600 բնակիչների (թուրքեր, հայեր և վրացիներ) մեծ մասը, ահաբեկված Ախալքալաքի պաշտպանների հետ տեղի ունեցած կոտորածից, հեռացել էր Կուրի աջափնյակի լեռնային շրջաններ: Տեղ–տեղ կիսաքանդ պարիսպներ ունեցող այս բերդում մնացել էր ընդամենը 200 հոգանոց կայազոր, որի տրամադրության տակ կար 14 թնդանոթ և 6 հրասանդ, սահմանափակ քանակությամբ զինամթերք: Ռուսական հեծելազորի հայտնվելուն պես կայազորի զինվորների մեծ մասը ևս դիմեց փախուստի: Բերդում մնացած 15 զինվորները չտապեցին ռուսների առջև բաց անել դարպասները: Գնդապետ Ռաևսկու ջոկատն անմիջապես ներս մտավ և գրավեց միջնաբերդը: Այսպես Ջավախքի երկու բերդերն անցան ռուսների հսկողության տակ: Ինչպես այս, այնպես էլ նախորդ բերդերի գրավման կապակցությամբ Ի. Պասկևիչը չնորհակալական չրջաբերական հղեց իր զինվորներին՝ կոչ անելով նույն քաջությամբ կռվել Ախալցխայի բերդի համար:*

Դեռ Ախալքալաքի ճամբարում կայանած ռուսական հիմնական զորքերը, ինչպես Մանգլիսից, այնպես էլ Գյումրիից ժամանած Ա. Գրիբոեդովի ջոկատներով համալրելով իրենց չարքերը, Թափարվանի ճախ ափի դժվարանցանելի կիրճով, արդեն գրավված Խերթվիսի մոտով չարժվեցին դեպի Ախալցխա:

Փաշայանիստ Ախալցխան ուներ անհամեմատ ավելի հզոր պաշտպանական համակարգ: Միջնաբերդն ավելի ամուր էր, պա-

---

38. 342–365, Джаниашвили Л., Несколько аспектов переселения армян в Самцхе–Джавахетию (см. Интернет, http:caucasia. iatp. org. gc/N1/Rus–Resume/Janiashvili. htm):

[449] История военных действий в азиатской Турции в 1828–1829 г., ч. 1, с. 267.

բիսպներն ավելի բարձր էին, երկհարկանի և լավ նորոգված, որոնց վրա տեղադրված էր 70 թնդանոթ: Կայազորի թիվը հասնում էր 15 հազարի, որոնց օգնության էին եկել նաև էրզրումի սերասկյարի զորքերը: Քաղաքի 5000 բնակիչների զգալի մասը մնացել էր տեղում, որը վկայում էր համառորեն դիմադրելու նրանց մտադրության մասին:

Օգոստոսի սկզբին ռուսական զորքերը մոտեցան քաղաքին: Թշնամու 30 հազարանոց միացյալ ուժերը, հույսը դնելով իրենց թվական գերազանցության վրա, փորձեցին կասեցնել նրանց առաջխաղացումը: Սակայն օգոստոսի 5–ին և 9–ին Ախալցխայի մոտակայքում կրելով ծանր պարտություն՝ թուրքական զորքերը նահանջեցին և պատսպարվեցին բերդաքաղաքում: Ախալցխայի վրա ռուսների գրոհից առաջ չրջակա գյուղերի բնակիչները, որոնց համար Ախալցխայի բերդում պատսպարվելու հնարավորություն չեղավ «...ցիրուցան եղեալ գնացին յիւրաքանչիւր տեղիս ...»:[450]

Օգոստոսի 15–ին Պասկևիչի զորքերը գրոհեցին քաղաքը: Կայազորի արձակած կրակը զգալի կորուստներ պատճառեց ռուսներին: Պատասխան թեժ հրետակոծության հետևանքով քաղաքում հրդեհ սկսվեց: Միայն 700 զոհերի գնով Ախալցխան գրավվեց: Անշուշտ, պաշտպանների զոհերն ավելի մեծ էին: Սպանվածների մեջ էին նաև քաղաքի բազմաթիվ խաղաղ բնակիչներ: Ախալցխայի գրավման ժամանակ իրենց քաջությամբ աչքի ընկան մի շարք զինվորականներ, այդ թվում հայազգի Վ. Բեհբուտովը, Կորգանյանը, մելիք Բեգլարյանը և ուրիշներ: «Օգոստոսի 15–ի գիշերային մարտը,– Ախալցխայի գրոհի մասին գրում է Ն. Ուշակովը,– այն ցնցող տեսարաններից էր, որոնք երկար ժամանակ կմնան ամենակովփված մարդկանց հիշողության մեջ»:[451] *Ախալցխայի գրավումից մի քանի օր անց անձնատուր եղավ էյալեթի վերջին ամրոցը՝ Ածղորը, իսկ օգոստոսի 28–ին՝ Արդահանը:*

Հույս ունենալով ստանալ եվրոպական տերությունների աջակցությունը՝ 1829 թ. սկզբին սուլթանական կառավարությունը վճռեց ռուսներին հակահարված տալ: Փետրվարի կեսերին սուլթանի

---

[450] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 64, վ. 507, բ. 1–2:

[451] История военных действий в азиатской Турции в 1828–1829 г., ч. 1, с. 334. Ախալցխայի համար մղված մարտական գործողությունների մասին մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 271–340, Потто В., Кавказская война, т. 4, вып. 1, с. 122–179.

դրդմամբ Աջարիայի Ահմեդ փաշան զորքերը չարժեց Ախալցխայի վրա: Ռուսական փոքրաթիվ կայազորը Ախալցխայի փաչայության կառավարիչ Վ. Բեհբութովի գլխավորությամբ համառ դիմադրություն ցույց տվեց: Մարտի 3–ին Բորժոմի կիրճով Ի. Բուրցովի ջոկատի ժամանումից հետո, թուրքական զորքերը դադարեցրին Ախալցխայի պաշարումը:

1829 թ. գարնանը օգնություն ստանալով Անգլիայի, Ֆրանսիայի և Ավստրիայի կառավարող շրջաններից, թուրքերը վերսկսում են ռազմական գործողությունները և անցնում հակահարձակման: Սակայն տնտեսական ու քաղաքական ծայրաստիճան քայքայման հասած Թուրքիան անկարող էր դիմակայել ռուսական զորքերին:

Հունիսի 19–20–ին Սողանլուղի լեռներում ռուսները նոր հաղթանակ են տանում: Հունիսի 24–ին գրավվում են Վերին Բասենի վարչական կենտրոն Հասան կալան, Ա. Ս. Պուշկինի խոսքերով ասած «Արզրումի բանալին»:[452] Հասան կալայի գրավումով ճախողվում է Բասենի հայ գյուղացիությանը գերեվարելու Էրզրումի սերասկյարի ծրագիրը:

Ռազմական գործողությունները մոտենում են Էրզրումին: Համոզված լինելով, որ հայերը կարող են անցնել ռուսների կողմը, սերասկյարը նրանց կոտորելու առիթ է փնտրում: Տեղահանվում և Էրզրում են քշվում շրջակայքի տասնյակ գյուղերի հայ բնակիչներ: Թուրք զինվորների հսկողությամբ նրանք հարկադրված խրամներ են փորում և ամրացնում քաղաքի պարիսպները: Հալածանքների է ենթարկվում Էրզրումի հայ հոգևոր թեմի առաջնորդ կարապետ արքեպիսկոպոսը:[453] «Գազազած ռուսների զորքի ստվարությունից,– գրում է Ե. Գեղամյանցը,– օսմանցիները, նրանց կրոնամոլ մոլլանները, կատաղի «ղարադելիները», լեռնեցի «լազերը», սրերը ձեռքերն առած շրջում էին փողոցներում և սրախողխող անում պատահած քրիստոնյայի: Դա նման էր «բարդուղեմեան (բարդուղոմեոսյան Ա.Մ.) գիշերին»:[454] Բարեբախտաբար, այս վիճակը երկար չի տևում: Համոզվելով, որ դիմադրությունն անիմաստ է, սերասկյարը Պասկևիչին է ուղարկում քաղաքի բանալիները: Հունիսի 27–ին ռուսական

---

[452] Տե՛ս Пушкин А. С., Путешествие в Арзрум во время похода 1829 года. //Пушкин А. С., Полн. Собр. соч., изд. 4–ое, т. 6, с. 466.
[453] Տե՛ս Գեղամեանց Ե., Կարապետ արքեպիսկոպոս, Փորձ, 1876, N. 1, էջ 176–182:
[454] Նույն տեղում, էջ 184:

բանակն առանց մարտի մտնում է Էրզրում: Քաղաքը գրավելու կապակցությամբ ռուսները կազմակերպում են մեծ հանդիսություն, որին հրավիրվում են բազմաթիվ հայ մեծամեծներ, այդ թվում կաթողիկոս արքեպիսկոպոսը: Եփրեմ Սեթ վարդապետը ոդևորված գրում է «Յազատութեան Հայաստանեայց» բանաստեղծությունը:[455]

Էրզրումից հետո ռուսները գրավում են Խնուսը, Քղղին, Դերջանը, Բաբերդը:[456] *Արևմտյան Հայաստանի մի խոշոր հատվածն ընկնում է ռուսական գերիշխանության տակ: Փախած կամ տեղահանված հարյուրավոր հայեր հնարավորություն են ստանում վերադառնալու իրենց հայրենի բնակավայրերը:*

1829 թ. հուլիս–օգոստոսին Բալկանյան ճակատում ռուսների ձեռք բերած խոշոր հաջողությունները ստիպում են սուլթան Մահմուդ II–րդին հաշտություն խնդրել: Սակայն Ռուսաստանը չի կարողանում օգտվել հաղթանակի պտուղներից: Անգլիան, Ֆրանսիան և Ավստրո–Հունգարիան, որոնք դեմ էին Ռուսաստանի դիրքերի ամրապնդմանը Բալկաններում և Արևմտյան Հայաստանում, ռազմական և դիվանագիտական ճանապարհներով ստիպում են հաղթող կողմին համաձայնվել թուրքերի համար անհամեմատ ձեռնտու հաշտության պայմաններին: Հաշտությունը կնքվում է 1829 թ. սեպտեմբերի 2–ին Ադրիանապոլսում: Ռուսական կայսրությանն են անցնում սևծովյան մի քանի նավահանգիստներ, Ախալցխա, Ախալքալաք քաղաքները: Արևմտյան Հայաստանի գրավված մյուս գավառները վերադարձվում են Օսմանյան Թուրքիային:[457] *Ադրիանապոլսի պայմանագրից մեծ ակնկալություններ ունեցող հայ ժողովրդի հուսահատական վիճակի մասին Պոտտոն գրում է. «Այստեղ, Հայաստանի ճիշտ սրտում, այդ հաշտության մասին լուրը խորը հուսահատության մեջ է դրել ամբողջ մի ժողովուրդ, ...որը նպաստել է ռուսական զենքի հաջողությանը և վերջապես, իր ապագայի վառ հույսերը կապել է ռուսական հովանավորության հետ»:*[458]

---

[455] Մատենադարան, արխիվ Ալեքսանդր Երիցյանի, թղթ. 156, վ. 131, բ. 1–3:

[456] Բաբերդում ռուսները մեծ վնասներ պատճառեցին նաև հայերին: «Յորժամ յուռուսական տերութիւն եկաւ,– գրում էին Կարապետ սրբազանին բաբերդցիները,– մեզ ցիրուցան երաւ: Ամէն մեկզս մէկ գացինք գեղացը աստին ան դին» (Մատենադարան, Կարապետ արք. արխիվ, թղթ. 163գ, վ. 1136, բ. 1–2):

[457] Ադրիանապոլսի պայմանագրով անցնող ռուս–թուրքական սահմանագիծը տե՛ս РГВИА, ф. 450, д. 403. Генеральная карта пашалыков Баязетского, Ахалцыхского и части Арзерумского для объяснения границ 1829 г.

[458] Потто В., Кавказская война, вып. 4–ий, т. 4, с. 471.

Օսմանյան լծի տակ հեծող հայության վիճակը դառնում է օրհասական: Թուրքական հրամանատարությունը իր կրած պարտությունների գլխավոր պատճառը համարում էր հայերի դավաճանությունը և պատրաստ էր, ռուսական զորքերի հեռանալուց հետո, հաշվեհարդար տեսնել նրանց հետ: Մահմեդական մոլեռանդ հոգևորականությունը տակավին ռուսական բանակների ներկայության պայմաններում կոչ էր անում պատժել «գյավուրներին», հրահրում էր քրդական ավազակախմբերին կողոպտել հայկական և հունական գյուղերը:

Նիկոլայ I կայսրին 1829 թ. հոկտեմբերին հղած իր հանրահայտ զեկուցագրում[459] Պասկևիչը ևս հայտնում էր կնքված հաշտությունից հետո Ասիայում ռուսների հաղթանակներին մեծապես նպաստած հայությանը սպառնացող վտանգի մասին և խնդրում թուլյտվություն ու միջոցներ Ռուսաստանում ապրել ցանկացող հայերի և այլ քրիստոնյաների գաղթը կազմակերպելու համար: Ցանկանալով ստվարացնել Պարսկաստանից և Թուրքիայից Ռուսական կայսրության անցած տարածքների հայ աշխատավոր ու հավատարիմ բնակչության թիվը՝ ռուսական կառավարությունն այդ ծրագիրն արժանացրեց հավանության:

Հայ պատմագրությունը բազմիցս անդրադարձել է 1829–1830 թթ. արևմտահայերի գաղթի պատմությանը: Ա. Պերպերյանի, Ե. Գեղամյանցի, Գ. Աղանյանցի, Մ. Միրախորյանի և այլոց կարծիքով, այդ գաղթը հիմնականում եղել է ռուսական զինվորական շրջաններ և Էրզրումի հայ հոգևոր թեմի առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոսի հորդորների հետևանք, որին Կ. Պոլիսի հայոց պատրիարքը հանիրավի պաշտոնանկ էր արել:[460] Պահպանված արխիվային վավերագրերից երևում է, որ այն սկիզբ է առել նաև ժողովրդական լայն զանգվածներից և, հասնելով ռուսական ռազմական մարմիններին,

---

[459] Տես РГВИА, ф. ВУА, д. 1019, л. 3.

[460] Տես Պերպերեան Ա., Պատմութիւն հայոց, 1871, էջ 71, Գեղամեանց Ե., Կարապետ արքեպիսկոպոս. Փորձ, 1876, N 1, էջ 187, հմմտ. Գեղամյանց Հ., Կարապետ արքեպիսկոպոս (կենսագրություն), առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Մելքոնյանի, Ե., 1999, էջ 41, Աղանեանց Գ., Կարնո գաղթը, Թիֆլիս, 1891, էջ 4–5, Միրախորեան Մ., Նկարագրական ուղևորութիւն ի հայաբնակ գաւառս Արևելեան Տաճկաստանի, հ. Գ, Կ. Պոլիս, 1885, էջ 140–141: Պետք է նկատել, որ Կարապետ սրբազանը նախապես դեմ է եղել գաղթին՝ գիտակցելով դրա ծանր հետևանքներն ինչպես գաղթողների, այնպես էլ տեղում մնացող հայության համար (տես «Ուշագրավ տեղեկագիր Կարնո գավառի հայության և 1829–1830 թթ. գաղթի վերաբերյալ», ՊԲՀ, 1974, թիվ 3, էջ 94):

կազմակերպված բնույթ է ստացել: Ստանալով հաշտության պայմանագրով գրավված տարածքները թուրքերին թողնելու լուրը՝ հազարավոր հայեր ռուսների հորդորների տակ ցանկություն են հայտնում գաղթել ռուսական տերության սահմանները: Գաղթելով Ռուսաստան՝ իրավացիորեն նկատել է Լեոն «... հայ ժողովուրդը ինքնաբերաբար, իր սեփական բնազդի թելադրությամբ միակերպ էր լուծում իր ֆիզիկական գոյության պահպանման առեղծվածը, ... ռուսաց տիրապետության տակ գոնե կյանքի և գույքի երաշխավորություն էր»:[461]

Ռուսական ռազմական իշխանությունները կարողացան բարեհաճ վերաբերմունքի, չնորհած արտոնությունների միջոցով օգտագործել Կարապետ Բագրատունու անձնական վիրավորվածությունը պատրիարքարանից, ինչպես և անվիճելի հեղինակությունը՝ թուրքերին վերադարձվելիք արևմտահայ գավառներից զանգվածային արտագաղթ հրահրելու նպատակով: Գեներալ Պանկրատևի հրամանով սրբազանին տրված անցաթուղթը նրան և նրա մերձավորներին արտոնում էր բնակության իրավունք ամենուր, այդ թվում Թիֆլիսում, իսկ ռուսական իշխանություններին հրահանգում էր բազմապիսի օժանդակության ապահովում:[462]

Գաղթելու թույլտվություն ստանալու ակնկալությամբ խնդրագրեր են ստացվում Էրզրումում ռուսական զորքերի հրամանատար Պանկրատևի, Բայազետում՝ գեներալ Ռեուտի և այլ ռուս բարձրաստիճան զինվորականների հասցեով: Պասկևիչի կարգադրությամբ Թիֆլիսում կազմվում է գաղթականական կոմիտե: Այն որոշ աշխատանք է կատարում գաղթողներին նյութական միջոցներ տրամադրելու և նրանց նոր վայրերում տեղավորելու համար:

-Արդեն 1829 թ. հոկտեմբերին, չսպասելով գաղթի պաշտոնական թույլտվությանը և ռուսական կառավարության նյութական և ռազմական օգնությանը, Բայազետի, Ալաշկերտի, Էրզրումի և մի քանի այլ լիվաններից, Կարսի էյալեթից գաղթականների առանձին խմբեր բռնում են գաղթի ճանապարհը: Թուրքական դարավոր լուծն արդեն այնքան անտանելի էր և Ռուսաստանում բարեկեցիկ կյանք գտնելու խաբկանքն այնքան մեծ, որ, զոհելով չարժական գույքի մի

[461] Լեո, հայոց պատմության նորագույն շրջան, մասն 2, էջ 15:
[462] Մատենադարան, Կարապետ արք. արխիվ, թղթ. 163գ, վ. 1179, թ. 1:

մասը,[463] 1829–1830 թթ. ձմռան սառնամանիքի պայմաններում, կրելով բազմաթիվ դժվարություններ, ոմանք անցնում էին ռուս–թուրքական նորահաստատ սահմանը և բնակություն հաստատում Արևելյան Հայաստանի ռուսահպատակ շրջաններում: Այսպես, 1829 թ. վերջին Էրզրումի լիվայից Փամբակի գավառ են տեղափոխվում 59 ընտանիք հայ կաթոլիկները, Բայազետի շրջակա գյուղերից Հայկական մարզ՝ 200 ընտանիք:[464]

1829 թ. դեկտեմբերի 15–ին Կարապետ արքեպիսկոպոսն ու 25 այլ մեծամեծներ, պաշտոնական նամակով դիմեցին Պասկևիչին՝ խնդրելով իրենց թուլլատրել ռուսական զորքերի հետ հեռանալ Ռուսաստանին անցած տիրույթներ: Լավ գիտակցելով, թե ինչ է սպասում հայերին ռուսական բանակի հեռանալուց հետո, նրանք գրում էին. «Երևի թէ զօրքն ռուսաց զկնի քանի ամսոց թողլոցեն զայս նահանգս Էրզըրումայ. և մեք ՝ի վաղուց հետէ քաջ տեղեակ գոլով բարբարոսական բարուց օսմանեան ազգին և կառավարութեան, գիտեմք, զի անշուշտ վտանգիմք ...վասն որոյ առ ՝ի չվտանգիլ մեր յօսմանեանց աղէտս արկեալ՝ աղաչեմք և խնդրեմք զպաշտպանութիւն ռուսաց. և անմիջաբար ՝ի Ձերդ պայծառափայլութենէդ նշանակել վասն նուաստութեան մերոյ զտեղի ինչ արժանաւոր յերկրի ռուսաց ՝ի բնակութիւն, յորում մինչ ցերկու հազար տունք հայոց (կամ աւելի և կամ պակաս)՝ ելանելով ի յերկրէ աստի, բնակիցիմք անդր»:[465] Նախապես ունենալով ռուսական հրամանատարության ցուցումը՝ կարապետ սրբազանը կարգադրեց բոլոր քահանաներին՝ քարոզչությունն սկսել գաղթը խրախուսելու նպատակով:[466] Համանման դիմում գեներալ Ն. Պանկրատևին ներկայացրեցին Էրզրումի և շրջակա գավառների 17 գյուղերի հայ կաթոլիկ հոգևորականները՝ շուրջ 560 ընտանիքների գաղթի թուլլտվության խնդրանքով:[467]

---

[463] Գաղթողների մեջ կային նաև խոշոր հողատերեր, որոնք գաղթելով, զոհեցին հսկայական քանակությամբ ունեցվածք: Օրինակ բաբերդցի Հարություն Սեղբոսյանի թողած անշարժ գույքը կազում էր 150 գյուղ, 10 քարաշեն տուն, 6 այգի, 2 քարվանսարա և այլն (տես ՀԳԻԱՀ, ֆ. 2, օո. 1, դ. 2594, լ. 82).

[464] Տես Новые документы о переселении персидских и западных армян в 1828–1830 г., ԲՀԱ, 1977, N. 3, էջ 21:

[465] Կաթողիկոսական դիվան, թղթ. 257, վ. 304ա (պ.):

[466] «Ուշագրավ տեղեկագիր Կարնո գավառի հայության և 1829–1830 թթ. գաղթի վերաբերյալ», ՊԲՀ, 1974, թիվ 3, էջ 83–96:

[467] Присоединение Восточной Армении к России, т. 2, с. 601–602.

Արտագաղթը բացի քաղաքականից ուներ նաև այլ չարժառիթներ: Տնտեսապես անապահով վիճակին գումարվում էին ընդհուպ մինչև 1828 թ. չարունակվող մահաբեր համաճարակները,[468] որոնցից փրկվելու համար առանձին ընտանիքներ դեռ 1827 թ. հանդրվանել էին Վրաստանում: Ուստի պատահական չէ, որ այդ ժամանակ արևմտահայության պատկերացումներում ռուսական տիրապետությունը ներկայանում էր որպես կատարյալ բարեկեցիկ ու ապահով հասարակություն: 1829 թ. ուշ աշնանն առաջինը Ախալքալաքի գավառում հաստատվեցին թուրքական դաժան բռնաճնշումներին մշտապես ենթարկվող Արդահանի Վել գյուղի հայ կաթոլիկները՝ կենդանություն տալով Ախալքալաքից արևելք ընկած Խուլգումո, Բավրա, Կարտիկամ, ինչպես և գավառի հյուսիսային գյուղերից՝ Տուրցխի նոր տարեգրությանը:

Ռուսական հրամանատարության և հայերի փոխադարձ համաձայնությամբ տարբեր գավառներից գաղթողների համար նախատեսվում է բնակության մի չրջան: Էրզրումի, Բասենի, Բաբերդի, Դերջանի կողմերից գաղթողների համար բնակության վայր է նշանակվում Ախալցխայի էյալեթից Ռուսաստանին անցած հատվածը: Արևմտահայ գաղթականության համար Ախալցխայի ու Ախալքալաքի բնակրության հարցը պատահական չէր: Այդ գավառները մինչ այդ ենթարկվում էին Էրզրումի հոգևոր թեմին և իրենց բնակլիմայական, աշխարհագրական պայմաններով քաջածանոթ էին թեմի առաջնորդ Կարապետ Բագրատունուն, առավել ևս, որ Ջավախքն իր այդ տվյալներով չատ նման էր Էրզրումի գավառներին:[469] Անշուշտ, տեղի ընտրության հարցում կարևոր էր նաև ռուսական իշխանությունների չահագրգռությունը, որոնք ցանկանում էին դրավված հողերը բնակեցնել քրիստոնյա հայերով: Այդուհանդերձ, գաղթականություններում տիրող վիճակի մասին ստույգ տեղեկություններ քաղելու նպատակով Կարապետ արքեպիսկոպոսը Ախալցխա, Ախալքալաք և Գյումրի ուղարկեց մի խումբ հոգևորականների՝ Թադեոս վարդապե-

---

[468] Համաճարակների մասին տե՛ս Սատենադարան, Կարապետ արք. արխիվ, թղթ. 163գ, վ. 1010, 1012, 1016, 1022, 1028 և այլն:

[469] Այդ մասին Ի. Պասկևիչը 1831 թ. մայիսի 27–ի զեկուցագրում հայտնում էր. «Ախալցխայի կլիմայի նմանությունը էրզրումին դրդեց այնտեղի հայերին իրենց վերաբնակության վայր ընտրելու Ախալցխան ու մեզ անցած նրա սանջակները: Նկատի առնելով պատերազմի պատճառով այս մարզի բնաչության զգալի նվազումը, կառավարությունը բավարարեց էրզրումցի գաղթականների ցանկությունը (AKAK, т. 7, с. 849).

տին, Սարգիս քահանային և Խաչատուր Գրիգորյանցին: Սակայն վերջիններս, հավանաբար կաշառվելով ռուսական իշխանություննեբի կողմից, այդ ավերակված գավառները ներկայացրեցին իբրև դրախտավայր և, դրանով իսկ, նորանոր մարդկանց կողմնորոշեցին դեպի արտագաղթը:[470]

Բայազետի, Ալաշկերտի, Դիադինի, Խամուրի լիվաններից եկողներին բայազետցի Գ. Արծրունու և Վրաստանի հայոց հոգևոր թեմի առաջնորդ Ներսես Աշտարակեցու խորհրդով որոշվում է բնակեցնել Սևանա լճի ավազանում:[471]

Ձմռան նախապատրաստություններից հետո, 1830 թ. վաղ գարնանը սկսվում է արևմտահայերի զանգվածային գաղթը: Մատենադարանում պահվող մի վավերագրից երևում է, որ մինչև մայիսի 15–ը կարնեցի առանձին ընտանիքներ կարսեցիների հետ ուղղություն են վերցրել դեպի Գյումրի, իսկ տեղ հասնելուց հետո նրանց օգտագործած սայլերը վերադարձրել են և գործածվել են գաղթականների հիմնական զանգվածների համար:[472]

Ռուսական կայսրության մերձակա շրջաններից՝ պատմական Բագրևանդից և Կարսի էյալեթից գաղթն անցավ բավական կազմակերպված:[473] *Կարսեցիները բնակվեցին Գյումրիում, Շիրակի դաշտում և Թալինի շրջակայքում, բայազետցիներն ու ալաշկերտցիները՝ Սևանա լճի շրջակայքում, մասամբ նաև՝ Սուրմալուում, Դարաչիչակում, Ապարանում և Փամբակում: Կաթոլիկ հայերի գաղթի ղեկավարությունը ստանձնեց Վենետիկի Մխիթարյան վարդապետ Եփրեմ Սեթը (Սեթյան):*

1830 թ. մայիսի 15–ից սկսվում է Էրզրումի, Բաբերդի, Դերջանի, Քղղիի, Սպերի, Վերին և Ներքին Բասենների, Թորթումի, Խնուսի (հատկապես՝ Թեքման նահիկի) գավառների հայ բնակչության մի մասի գաղթը: «Էրզրում – Հասան կալա ճանապարհով,– վկայում է դեպքերի ականատես է. Սմիթը,– այս առավոտ հայ գաղթականները չարժվում են դեպի Ռուսաստան: Էրզրումից մինչև Վրաստան ճանապարհները լցված են քրիստոնյա գյուղացիներով: Դրանք Էրզրու-

---

[470] «Ուշագրավ տեղեկագիր Կարնո գավառի հայության և 1829–1830 թթ. գաղթի վերաբերյալ», ՊԲՀ, 1974, թիվ 3, էջ 94–95:
[471] Տե ս Դարբինյան Մ., Արևմտահայերի 1829–1830 թթ. գաղթը, ՊԲՀ, 1974, էջ 94:
[472] Մատենադարան, Կարապետ արք. արխիվ, թղթ. 163գ, վ. 1176, թ. 1–2:
[473] Տե ս Դարբինյան Մ., նշվ. աշխ., ՊԲՀ, 1974, N 2, էջ 94–95:

մի դաշտի գյուղացիներն էին: ... Զկար Էրզրումի փաշայության մի մաս, որտեղից փախուստ չլիներ, բացի Էրզինջանից (Երզնկա – Ա.Մ.)..., Իսպիրի և Թորթումի մի մասից»:[474]

Այս գաղթի ժամանակ, գաղթել–չգաղթելու խնդրի չուրջ չատ ընտանիքներ նույնիսկ երկփեղկվեցին. եղան բազմաթիվ ապահարզաններ: Հայտնի են չատ դեպքեր, երբ ընտանիքի մի մասը գաղթել է, մյուսները՝ մնացել են Էրզրումում: Սրանցից չատերը, հետագայում սթափվելով կայացրած անխոհեմ քայլերից, մեծ ջանքեր գործադրեցին իրենց ընտանիքների միավորման ուղղությամբ:[475]

Էրզրումից և նրա կենտրոնական լիվաններից հայ գաղթականների հոծ խմբերը, որոնց թիվը հասնում էր մոտավորապես 7 հազ. ընտանիքի, զանազան պատճառներով, նչանակված վայրը՝ Ախալցխա հասան միայն մի քանի ամիս հետո:[476] *Նրանց որոշ մասն էլ մնաց Գյումրիում*[477] *և Շիրակի գյուղերում ու Փամբակում: Գաղթականների այս խոշոր զանգվածը հիմնականում հաստատվեց Ախալցխայի, Ախալքալաքի և Ծալկայի շրջաններում: Գաղթականական կոմիտեի ցուցումով, արհեստավորներն ու առևտրականները բնակեցվեցին քաղաքներում, իսկ գյուղացիները՝ գյուղական վայրերում:*

Գաղթականական կոմիտեի պետ Ջավիլեյսկին Կարապետ արքեպիսկոպոսին մանրամասն զեկուցում էր գաղթականների գործերի մասին. որքա՞նը գաղթեց, որքա՞նը մնաց, հունձքը ինչպե՞ս է կա-

---

[474] Smith E., Researches of the rev. E. Smith and rev. H. G. O. Dwight in Armenia, Boston, 1833, էջ 124–140: Երզնկայից գաղթ գրեթե չեղավ, քանի որ տեղի միրլիվա Հաջի Հասան փաշան կարողացավ հարկադրել հայերին հրաժարվել գաղթելու մտադրությունից, տեղում մնալու դեպքում երաշխավորելով անձի ապահովություն: Նա ստիպեց տեղի հոգևոր առաջնորդ Եղիա վարդապետին նամակով դիմել Կարապետ արքեպիսկոպոսին, որում հայտնում էր, որ իբր իրենց գավառի հայությունը գաղթելու մտադրություն չունի և իրեն ապահով է զգում: Իրականում, թուրքերը ծեռք առան խստագույն միջոցներ և կանխեցին արտագաղթը, առավել ևս, որ այստեղ ռուսական զորքերը մուտք չէին գործել և հետևապես, չէին կարող միջամտել այդ գործընթացին: Թորթումի և Սպերի առանձին շրջաններից գաղթ չլինելու պատճառն էլ այն էր, որ հաշտությունից անմիջապես հետո ռուսներն այնտեղից դուրս էին եկել, իսկ թուրքական իշխանությունները զենքով ստիպել էին հայերին մնալ տեղերում (Մատենադարան, Կարապետ արք. արխ., թղթ. 163գ, վ. 1173, թ. 1, թղթ. 1639, վ. 1, թ. 1):

[475] Մատենադարան, Կարապետ արք. արխիվ, թղթ. 163գ, վ. 1182,թ. 1, 1367 թ. 1:

[476] Մանրամասն տե՛ս Աղանեանց Գ., Կարնո գաղթը, էջ 25–28:

[477] Եփրեմ կաթողիկոսի հրամանով ինչպես Կարսից, այնպես էլ արևմտահայ այլ գավառներից Գյումրիում հավաքված գաղթականների խնամատար հաստատվեց Սերովբե եպիսկոպոսը, որին օժանդակելու համար վեհափառը հատուկ նամակով օգոստոսի 28–ին դիմեց Կարապետ արքեպիսկոպոսին (Մատենադարան, Կարապետ արք. արխիվ, թղթ. 163գ, վավ. 1183, թ. 1–2):

տարվում, ինչ կարիքներ ունեն և այլն:[478] Կարինից կազմակերպած գաղթի, բնակության նոր վայրեր բազմաթիվ ձեռագրեր, եկեղեցական շարժական գույք բերելու, գաղթականության շրջանում կատարած ծանրակշիռ գործունեության համար Նիկոլայ I–ը հետագայում Կարապետ արքեպիսկոպոսին պարգևատրեց սբ. Աննայի I աստիճանի շքանշանով, իսկ Եփրեմ կաթողիկոսը Հունիսի 20–ին հանդես եկավ հատուկ շնորհակալությամբ: Իշխան Վասիլի Բեհբութովը ևս, բարձր գնահատելով նրա հայրենանվեր գործերը, Երևանից 1830 թ. նոյեմբերի 28–ին գրած նամակում սրբազանին անվանում էր երկրորդ Մովսես, որի հովանու ներքո գաղթականությունը գտնելու է բարեկեցիկ ապագա:[479]

Որքա՞ն էր արևմտահայ գաղթականների թիվը: Պասկևիչին հասցեագրած Վրաստանի զինվորական նահանգապետ Ստրեկալովի հաշվետվությունից երևում է, որ մինչև 1830 թ. հոկտեմբերի 10–ը ամբողջ Արևմտյան Հայաստանից Անդրկովկաս գաղթած հայերի (մասամբ՝ հույների) թիվը հասնում էր մոտավորապես 14 հազ. ընտանիքի կամ ավելի քան 83 հազ. մարդու:[480] Նույն փաստաթղթի համաձայն՝ Էրզրումի և շրջակա գավառներից գաղթածների թիվը կազմում էր 7154 ընտանիք կամ մոտ 40 հազ. մարդ, իսկ Բայազետի լիվա–փաշայության բնակավայրերից եկածներինը՝ 4215 ընտանիք կամ մոտ 25290 մարդ:[481]

Պատմագրության մեջ, հիմք ընդունելով ռուսական պաշտոնական այս զեկուցագրերում թույլ տված փաստական անփութությունը, քաղաքացիություն էր ստացել այն տեսակետը, թե արևմտահայ գաղթականների թիվը հասել է 85–100 հազ. մարդ:[482] Մեր ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ դեռ 19–րդ դարի երկրորդ կեսին տարբեր հեղինակներ չեն նկատել վերոնշված փաստաթղթում տեղ գտած մի թյուրիմացություն, որի վերացումից հետո պարզվում

---

[478] Մատենադարան, Կարապետ արք. արխիվ, թղթ. 163գ, վ. 1185, թ. 1:
[479] Նույն տեղում, վ. 1180, թ. 1–2, վ. 1188, թ. 1, վ. 1192, թ. 1:
[480] Տե՛ս ЦГИАГ, ф. 2, оп. 1, д. 2594, л. 314–315, հմմտ. Новые документы о переселении персидских и западных армян в 1828–1830 г., ԲՀԱ, 1977, N. 3, էջ 20–21:
[481] Տե՛ս նույն տեղում:
[482] Տե՛ս Երիցեանց Ա., Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի Հայք 19–րդ դարում, հ. Ա., էջ 442, Գեղամեանց Ե., Պատմական քաղվածքներ, պրակ 4, էջ 376, Գրիգորյան Զ. Տ., Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին և նրա պատմական նշանակությունը, Ե., 1978, էջ 298, Հայ ժողովրդի պատմություն, հ. 5, Ե., 1974, էջ 191 և այլն:

է, որ իրականում գաղթականների թիվը կազմել է ընդամենը 12300 ընտանիք կամ 74 հազ. մարդ, որից 9682 ընտանիքը կամ 58 հազ. չունչը՝ Էրզրումի նահանգից:[483] *Ի պնդումն մեր տեսակետի՝ վկայակոչենք նաև մատենադարանում պահվող մի արժեքավոր փաստաթուղթ, որը յուրահատուկ ամփոփագիր է գաղթի վերաբերյալ: Նրանում հստակ նշվում է, որ «...յամի 1830, յառաջին աւուր յունիսի իբր գաղթեցին 'ի ռուսաստան 3200 դաստանք (գերդաստանք–Ա.Մ.) քաղաքացիք ուղղափառ լուսաւորչական հայոց, ևս և 300 տունք 'ի Բասէն և 'ի շրջական կարնոյ բնակեալ ուղղափառ հայք, ընդ սոսին գաղթեցին 'ի կարնոյ ևս իբր 200 տունք 'ի մէնջ հերձեալ և լատինացեալ հայք, այլև իբր 80 տունք յունաց»: Իսկ բոլոր գաղթածների «...հաւաքեալ գումարն լինի 12655 գերդաստանք, կամ իբր 76000 ոգիք»:*[484] *Ինչպես տեսնում ենք, այս թվերը գրեթե նույնանում են վերոնշված տվյալների հետ և լիովին հաստատում գաղթականների՝ 74–76 հազ. չունչ լինելու մեր տեսակետը: Նշենք նաև, որ մոտ 75 հազ. հայ գաղթականների թվի մեջ չեն մտցված հույն*[485] *և եզդի*[486] *գաղթականները:*

Ի՞նչ նշանակություն ունեցավ 1829–1830 թթ. արևմտահայերի զանգվածային գաղթը: Խնդրի քննությանը պետք է մոտենալ Արևմտյան Հայաստանում գաղթից հետո ստեղծված իրավիճակի և Անդրկովկասում հայերի բնակեցման հետևանքով տեղի ունեցած էթնիկական և սոցիալ–տնտեսական տեղաշարժերի տեսանկյուններից:

Փորձենք Արևմտյան Հայաստանում գաղթի հետևանքները վերլուծել Էրզրումի էյալեթի օրինակով, քանի որ այն այդ խոշոր տեղաշարժերից ամենաուժգին երկրամասերից էր: Էրզրումի նահանգից գաղթականների ամենահոծ խմբերը հեռացան Էրզրումի, Վերին և Ներքին Բասենների, Ալաշկերտի, Բայազետի գավառներից: Գաղթից հետո այդ շրջաններում կարելի էր հանդիպել տասնյակ հայալք-

---

[483] Արևմտահայ գաղթականների թվաքանակի ճշգրտման մասին մասնրամասն տե՛ս Սելքոնյան Ա., Էրզրում, էջ 142–144 և նույնի Ազգաբնակչության տեղաշարժերը Էրզրումի նահանգի Բայազետ, Դիադին, խամուր և Ալաշկերտ գավառներում 19–րդ դ. առաջին երեսնամյակին, ԼՀԳ, 1988, թիվ 5, էջ 21–22:

[484] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 68, վ. 411, բ. 1 և Հարություն Աբրահամյանի արխիվ, թղթ. 99, վավ. 11, բ. 1:

[485] Հույների գաղթի մասին տե՛ս ՀՀԻԱՀ, ֆ. 2, դդ. 1990, 2542, 2575, 2594, ֆ. 16, դ. 10766, РГИА СПб., ф. 1377, оп. 1, д. 29 և այլն:

[486] Տե՛ս ՀՀԻԱՀ, ֆ. 2, դ. 2236, Մատենադարան, Ն. Աշտարակեցու արխ., թղթ. 166, վ. 906, բ. 104 և Народы Кавказа. этнографические очерки АН СССР, т. 2, М., 1962, с. 602–603.

ված բնակավայրեր: Հատկապես հայազրկվել էին այն բնակավայրերը, որոնք ազգային կազմով միատարր չէին և ավելի անմիջականորեն ու ավելի խիստ պայմաններում էին կրում ազգային ու սոցիալական ճնշման դառնությունները: Եթե այստեղի բնակավայրերի մի մասը հետագայում կրկին բնակեցվեց, ապա գտնվեցին նաև այնպիսիները, որոնք մեկընդմիշտ կորցրեցին իրենց հայ բնակիչներին, անցան քրդերի ու թուրքերի ձեռքը կամ էլ դարձան անմարդաբնակ վայրեր: Մեծապես տուժեցին նաև հայ կաթոլիկական գյուղերը, որոնց դատարկվելու մասին Եփրեմ Սեթյանը գրում էր. «Ի չըջակայ գիւղօրէս ի Հինճք գիւղ երկու եւեթ տունք մնացին ի մերոց Հարստագոյնք, եւ միւս եւս ի Թոռւանճ: Ի Հայոց գրեթէ կիսով չափ մեկնեցան...»:[487]

Էրզրումը զրկվեց հիմնականում հայ առևտրականներից և արհեստավորներից, որոնք, ինչպես հայտնի է, Օսմանյան Թուրքիայում մեծ դեր ունեին տնտեսության համապատասխան ճյուղերի զարգացման գործում: Մատենադարանի արխիվային վավերագրերից մեկի համաձայն՝ Էրզրում քաղաքից գաղթածների թիվը կազմում էր 3200 ընտանիք,[488] *այսինքն՝ մոտավորապես 20 հազ. մարդ: «Էրզրում քաղաքը,– հանդիպում ենք այդ օրերին գրած գեներալ Պանկրատևի զեկուցագրերից մեկում,– կորցրեց իր բնակիչներից ամենաաշխատասեր մասը, որ թուրքերը դժվարանում են վերաշինել իրենց ջրախողովակները և զբաղվել հասարակ արհեստներով».*[489] *Նույն ճակատագրին արժանացան նաև էյալեթի մի քանի այլ քաղաքներ: Բայազետի հայ բնակչության թիվն այնքան էր նվազել, որ տեղում մնացած հայերը կազմում էին ընդամենը 190 ընտանիք*[490] *և թվաքանակով գրեթե հավասարվել էին փոքրաթիվ քրդերին:*[491] *Է. Սմիթի վկայությամբ, այդ ժամանակ Դիադինում մնացել էր երեք, Խորասանում՝ հիսուն, Մժնկերտում՝ քսանյոթ հայ ընտանիք, իսկ Հասան կալան լիո-*

---

[487] Եփրեմ Սեթը արևմտահայության 1829–1830 թթ. գաղթի մասին, ՊԲՀ, 1997, թիվ 2, էջ 291:

[488] Տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 64, վ. 506, թ. 1 և թղթ. 68, վ. 411, թ. 1:

[489] Новые документы о переселении персидских и западных армян в 1828—1830 г., ԲՀԱ, 1977, N 3, էջ 19:

[490] Տե՛ս Smith E., նշվ. աշխ., հ. 2, էջ 270:

[491] Տե՛ս Վագներ Մ., Ճանապարհորդութիւն ի Հայաստան, թարգմ. Ե. Ճամճեան, Վիեննա, 1851, էջ 141:

վին հայաթափվել էր:[492] Ամայի և սակավամարդ վայր էր դարձել Բաբերդը:[493]

Օսմանյան կառավարությունը, տեղի թուրք և քուրդ ֆեոդալներն իրենց տնտեսական վնասները սկսեցին հոգալ ի հաշիվ չգաղթած հայ գյուղացիության: Բարձրացվեցին հարկերը, տասնյակ հայկական գյուղեր տարբեր մեքենայությունների ճանապարհով զավթվեցին թուրք և քուրդ աղալարների կողմից:[494] Ռուսաստանին անցած շրջաններից եկած մահմեդական բնակչությունը հիմնականում հաստատվեց Վերին և Ստորին Բասենների, Էրզրումի, Թորթումի և Սպերի դատարկված հայկական գյուղերում:[495]

Այսպիսով՝ արևմտահայերի զանգվածային գաղթը Արևմտյան Հայաստանի, հատկապես նրա արևելյան շրջանների համար ունեցավ ծանր հետևանքներ: Տասնյակ հազարներով կրճատվեց հայ բնակչության թիվը, ուժեղացավ ազգային և սոցիալական ճնշումը, անկում ապրեցին արհեստներն ու առևտուրը, անմշակ վիճակում թողնվեցին հազարավոր հեկտար հողատարածություններ:

Միաժամանակ, Անդրկովկասի, այդ թվում՝ Ռուսաստանին անցած Ախալքալաքի ու Ախալցխայի կիսավեր դարձած գավառների համար նույն գաղթն ունեցավ շրջադարձային նշանակություն: Այնտեղ, չեչտակի աճելով հայ բնակչության տեսակարար կշիռը, վերականգնվեց նախորդ ժամանակների էթնիկ իրավիճակը: Այսպես. Էրզրումի քաղաքից գաղթածները Ախալցխայի հին թաղամասի դիմաց, Փոցխով գետի ալ ափին, որտեղ բանջարանոցներ էին, հիմնադրեցին նոր և ընդարձակ մի թաղամաս: Հնաբնակ ախալցխացիները, որ ինչպես հայտնի է, մեծամասամբ կաթոլիկ հայեր էին և հրեաներ, մնացին բերդի թաղում, գետի ձախ ափին:

Հետաքրքրական է, որ գաղթականները փորձեցին զատվել ոչ միայն տեղացիներից, այլև բնակության նոր վայրերում հաստատվել

---

[492] Տե՛ս Smith E., նշվ. աշխ., հ. 1, էջ 140, 146–148, հ. 2, էջ 270, 272:

[493] Տե՛ս Потто В., Кавказская война, т. 4, с. 442.

[494] Տե՛ս Սատենադարան, Ձանազան հեղինակների արխիվ, թղթ. 54, վ. 13 (1), թ. 50 և վ. 13(2), թ. 20–21:

[495] Ռուսաստանին անցած շրջաններից գաղթած մահմեդականների թվի մասին աղբյուրներում տվյալներ չկան: Սակայն, դատելով 1828–1829 թթ. ռազմական գործողությունների ժամանակ մահմեդական բնակչության մի մասի արտագաղթի ու ֆիզիկական ոչնչացման և Արևմտյան Հայաստանում նրանց մի այլ հատվածի բնակվելուց հետո լուրջ էթնիկական տեղաշարժերի բացակայության փաստից, կարծում ենք, որ վերջիններս ստվար զանգված չեն կազմել:

իրենց համաքաղաքացիներով և համագյուղացիներով. էրզրումցիների հետ չխառնվելու համար, որոնք հիմնականում հաստատվել էին Ախալցխայում, բաբերդցիները՝ շուրջ 800 ընտանիք, իրենց առաջնորդ Բաբերդցու ղեկավարությամբ ցանկություն հայտնեցին բնակվել Ախալցխայի հին թաղամասում: Սակայն ինչ-ինչ հանգամանքներ խոչընդոտեցին բաբերդցիների այդ մտադրության իրագործմանը, և վերջիններս ստիպված տարալուծվեցին էրզրումցիների մեջ, թեև հետագայում, առիթը բաց չթողեցին էրզրումահայերի դեմ «ըմբոստանալու» համար:[496]

Գաղթականները փորձեցին իրենց նախկին ծննդավայրի անունով այն կոչել էրզրում, սակայն ռուսական իշխանությունները, այդ թվում՝ Ի. Պասկևիչը, ձգտելով վերաբնակիչների մեջ մոռացության մատնել նախկին հայրենիքի գաղափարը, արգելք հանդիսացան նման նախաձեռնությանը: Թաղամասը ստացավ «Պլան» անվանումը, որը կառուցվեց նախապես մշակված հատակագծի համապատասխան: Նոր Ախալցխայի հիմնադրման հանդիսավոր արարողությունը տեղի ունեցավ 1830 թ. օգոստոսի 15-ին՝ ռուսական զորքերի կողմից քաղաքի գրավման երկրորդ տարեդարձի օրը:[497] Շուտով էրզրումցի արհեստավորներն ու առևտրականներն իրենց հռչակը հաստատեցին նաև Ախալցխայում՝ այն դարձնելով Անդրկովկասի խոշորագույն տնտեսական կենտրոններից մեկը: Այստեղի արհեստավորները ստեղծեցին իրենց համքարությունները:[498]

Միայն Ախալքալաքի գավառում էրզրումահայերը տեղացիների հետ վերաշինեցին կամ հիմնադրեցին շուրջ 50 գյուղ: Արևմտահայ գավառներից, հատկապես էրզրումի դաշտից ու Բասենից գաղթածները հնարավորինս տեղակայվեցին միասնաբար՝ ըստ առանձին գյուղերի: Սակայն անհրաժեշտ հողատարածքների բացակայության և այլ պայմանների թելադրանքով շատ գաղթականներ, նույնիսկ միևնույն ընտանիքի անդամներ, ստիպված եղան տեղավորվել զանազան գյուղերում: Նույն գյուղի հայ առաքելական ու հայ-կաթոլիկական դավանանքի համայնքները հիմնականում երկփեղկվեցին:

---

[496] Մատենադարան, Կարապետ արք. արխիվ, թղթ. 163գ, վ. 1216, թ. 1, թղթ. 163ե, վ. 134, թ. 1–3:
[497] Տես Դաֆադարյան Կ., Նյութեր Ախալցխայի հայ համայնքի պատմության վերաբերյալ, ՊԲՀ, 1967, թիվ 1, էջ 123:
[498] Մատենադարան, Հ. Աբրահամյանի արխ., թղթ. 99, վ. 41, թ. 1–2:

Ըստ բնակավայրերի գաղթականները 1830–ական թվականների սկզբին տեղակայվեցին հետևյալ կերպ.

Աղյուսակ 1

Գաղթականների հաստատման վայրը	Տեղաբնիկ հայերի առկայությունը ներգաղթից առաջ: Որտեղի՞ց են գաղթել[499]
1. Ախալքալաք	Էրզրում քաղաքից և շրջակա գյուղերից
2. Աբուլ	Էրզրումի գավառի Ումուդում գյուղից
3. Ագանա	Էրզրումի գավառի Բրդոնք գյուղից
4. Ազավրեթ	Էրզրումի գավառի Կարակյոպեկ գյուղից
5. Ալաթուման	Էրզրումի գավառի Մեծ Գաղտառիճ գյուղից
6. Ալաստան	Էրզրումի գավառի Արծաթի, Թվանջ գյուղերից
7. Արագովա	Էրզրումի գավառի Ջինիս գյուղից, Դերջան ավանից
8. Բալխո	*տեղաբնիկներ*, Էրզրումի նահանգի գյուղերից[500]
9. Բավրա	Արդահանի գավառի Վել գյուղից
10. Բարալեթ	*տեղաբնիկներ*, Էրզրումի նահանգի գյուղերից, Արդահանի շրջակայքից, մասամբ՝ Ալաշկերտից[501]
11. Բեժանո (Ճանճղա)	Էրզրումի գավառի տարբեր գյուղերից[502]
12. Բուղաշեն	Էրզրումի գավառի Բռնակապան գյուղից
13. Բուռնաշեթ	Էրզրումի գավառի Օրթիզ գյուղից
14. Գանձա	*տեղաբնիկներ*, Էրզրումի Կրճնկոց գյուղից
15. Գումբուրդո	*տեղաբնիկներ*, Էրզրումի Շակավ գյուղից
16. Դամալա	Էրզրումի գավառի Շիփեկ, Գառնկոթ (Գառվըր) գյուղերից և Դերջանի գավառի կենտրոն Ռաբաթ ավանից

[499] Էրզրումի նահանգի ներքոհիշյալ գյուղերի մասին (որտեղից գաղթել են արևմտահայերը) տե՛ս Մելքոնյան Ա., Էրզրում, էջ 43–102, 160–165:

[500] Ըստ Ա. Դավթյանի՝ բալխոցիները Էրզրումի գավառի Մեղրի գյուղից են (Դավթյան, նշվ. աշխ., էջ. 70): Էրզրումի գավառում այդօրինակ գյուղ չի եղել: Հավանաբար պետք է նկատի ունենալ Թորթումի Մեղրագոմ գյուղը:

[501] Բարալեթում Պ. Մուրադյանի ուսումնասիրած մի քանի տապանաքարերի արձանագրություններից երևում է, որ այս գյուղում հաստատվել են նաև ալաշկերտցիներ (Մուրադյան Պ. Մ., Հայաստանի վրացերեն արձանագրությունները, հ. 1, Ե., 1977, էջ 151):

[502] Ա. Դավթյանը գրում է, որ բեժանոցիները գաղթել են էրզրումի Թովազ և Չավուշ գյուղերից (Դավթյան Ա., նշվ. աշխ., էջ 78): Սակայն էրզրումի գավառում այդպիսի անուններով գյուղեր չեն եղել: Համոզված ենք, որ խոսքը մեկ գյուղի՝ Թուխալ– Չավուշի մասին է:

17. Դիլիսկա	*տեղաբնիկներ*, էրզրումի գավառի Կրճնկոց, Գեղախոռ և այլ գյուղերից
18. Դիլիֆ	Մուշի և Խնուսի գավառների գյուղերից
19. Ջակ	էրզրումի գավառի Կամպիր գյուղից
20. էխտիլա (Իխտիլա)	էրզրումի Ջիթահանք, Կարակյոպեկ Բասենի գավառի Ալվար և այլ գյուղերից
21. Թախչա	Ջավախքի Աբուլ գյուղում հաստատված էրզրումի Ումուդում գյուղացիներ՝ 1833-1834 թթ.
22. Թորիա (Ջիթհանքով)	Խնուսի գավառի Ջիթհանքով գյուղից
23. Խանդո	էրզրումի գավառի Խաչկավանք գյուղից, Կարս քաղաքից
21. Խերթվիս	արևմտահայ զանազան գյուղերից
22. Խոսպիա (Մեծ)	*ախալքալաքցի բնիկներ*, էրզրումի Շխնոց գյուղից
23. Խորենիա	*տեղաբնիկներ*, էրզրումի զանազան գյուղերից
24. Խուլգումո	Արդահանի գավառի Վել գյուղից
25. Կարծախ	*տեղաբնիկներ*, Բասենի Ալվար, Մեծ և Փոքր Դու, Օկումի և Նիստ գյուղերից
26. Կարտիկամ	Արդահանի գավառի Վել գյուղից
27. Կոկիա	*տեղաբնիկներ*, էրզրումի նահանգի զանազան գյուղերից
28. Կորխ	էրզրումի գավառի Երկան-Մասուր գյուղից
29. Կուլիկամ	էրզրումի գավառի Սնկառիճ գյուղից
30. Հեշտիա	*տեղաբնիկներ*, Խնուսի Քյուլլի գյուղից
31. Մամզարա	*տեղաբնիկներ*, էրզրումի տարբեր գյուղերից
32. Մաջադիա	էրզրումի գավառի Ումուդում գյուղից
33. Մեծ Արագյալ	Ագանայում հաստատված Բրդոնք գյուղից եկած գաղթականները 1830–ական թթ.
34. Մեծ Գոնդուրա	էրզրումի գավառի Թարգունի, Նորշեն և այլ գյուղերից
35. Մեծ Խանչալի	էրզրումի գավառի Հինձք գյուղից
36. Մեծ Սամսար (Թոք)[503]	էրզրումի գավառի Դինարիգոմ և Ումուդում գյուղերից

[503] Ա. Դավթյանը սխալմամբ Մեծ Սամսարի վերաբնակեցումը համարում է ոչ թե 1830–ականներին, այլ ավելի ուշ շրջանում (Դավթյան Ա., Հայկական և հայախառը բնակավայրերը Վրաստանում, էջ 146):

37. Մերենիա	Էրզրումի գավառի Սալածոր, Գոմք, Ղուշչի, Փոչիկ և այլ գյուղերից[504]
38. Մուրջախեթ	Արևմտահայ զանազան գավառներից
39. Չամդուրա	Էրզրումի Կիլլի (Գիլլի, Քյուլլի)[505], մասամբ՝ Բլուր գյուղերից
40. Չիֆթլիկ (Ագարակ)	Արևմտահայ զանազան գյուղերից
41. Չիգրաշեն	Էրզրումի գավառի Օձնի, Արշունի, Չիթահող և այլ գյուղերից
42. Սաթխա	Էրզրումի գավառի Սոգյութլի, Ծաղկի, Չինիս և այլ գյուղերից
43. Սուլդա	Վերին Բասենի Թորդան գյուղից
44. Վաչիան	Էրզրումի գավառի Թվանջ գյուղից
45. Վարևան	Էրզրումի գավառի Թվանջ գյուղից
46. Տուրցխ	Արդահանի գավառի Վել գյուղից
47. Փոքր Գոնդուրա	Կարսի և Մուշի գյուղերից 1829 թ., Էրզրումի Սալածոր գյուղից 1830 թ.[506]
48. Փոքր Խանչալի	Էրզրումի գավառի Դինարիգոմ, Քյոշք գյուղերից
49. Փոկա	*տեղաբնիկներ*, Մուշից, Արդահանից
50. Օրջա	Էրզրումի գավառի Քյոշք գյուղից[507]
51. Օրոջալար	*տեղաբնիկներ*, հետագայում՝ Ծալկայի տարբեր գյուղերի գաղթականներից

Վերոհիշյալ աղյուսակից երևում է, որ Ջավախքի գյուղերի մեծ մասը, որն անմարդաբնակ ու լքյալ վիճակում էր, վերաշինվեց արևմտահայ գաղթականների կողմից: Սակայն տեղերում մնացած առնվազն մեկ տասնյակից ավելի գյուղերի տեղաբնիկները ևս զգալի նպաստ բերեցին իրենց բնակավայրերի վերակառուցման, նորեկ հայրենակիցներին նյութական օժանդակություն ցուցաբերելու հարցում: Գավառի հնադույն գյուղերից մեկում՝ Կոկիայում ապրող տե-

---

[504] Շատ ուշագրավ է, որ այս գյուղում այսօր կան ազգանուններ իրենց նախկին բնակավայրերի անուններով՝ Սալածորցյաններ, Գոմքցյաններ, Ղուշչյաններ, Փուչիկյաններ:

[505] Չամդուրացիների նախահայրենի գյուղի՝ Գիլլի–Կիլլի–Քյուլլիի տեղի հարցը դեռ ճշտման կարիք ունի. այն Խնուսի Թեքման գավառակի Քյուլլին է՝ Արաքսի վերին հոսանքի շրջանում, թե՞ Վերին Բասենի Կիլլին է՝ Էրզրում քաղաքից արևելք, Մուրցաջրի ակունքների մոտ: Կարծում ենք, որ ավելի հավանական է Բասենի Կիլլին, քանի որ Խնուսի քյուլլեցիները, որոնք հիմնականում հաստատվեցին Ջավախքի Հեշտիա գյուղում, նախ՝ խոսում են Մշո բարբառով և երկրորդ՝ կաթոլիկներ են: Սինչդեռ, Բասենի կիլլիցիների բարբառը, ինչպես և այսօրվա չամդուրացիներինը՝ պատկանում է Կարնո ճյուղին, իսկ իրենք էլ առաքելականներ են:

[506] Բոգդանովկայի շրջան. տեղեկագիրք, էջ 27:

[507] Ա. Դավթյանի մոտ Քյոշքը դարձել է Քոչքակ (Դավթյան Ա., նշվ. աշխ., էջ 220):

ղացի հայերը, որոնց թիվը 1828 թ. վիճակով կազմում էր 29 ընտանիք կամ 233 մարդ, մեծ օգնություն ցույց տվեցին արևմտահայ գաղթականներին:[508] *Պատերազմական գործողությունների ընթացքում փախուստի դիմած տեղացի հայերի զգալի մասը ևս վերադարձավ հայրենի օջախներ: Ախալքալաք քաղաքի փոքրաթիվ համայնքը տեղավորվեց մոտակա Խոսպիա գյուղում: Գյուղ վերադարձան Մամզարայի տեղաբնիկները:*[509]

Այսպիսով՝ արևմտահայերի գաղթի հետևանքով ոչ թե հայացավ այս տարածաշրջանը, ինչպես պնդում են վրաց գիտական ու քաղաքական շրջանակները, այլև՝ Ջավախքի տեղաբնիկ հայության թիվը համալրվեց արևմտահայերով: Վերջիններս, մեծամասնություն կազմելով, գլխավորապես արևելահայերենով խոսող տեղացիներին՝ եռլիներին պարտադրեցին արևմտահայերենը,[510] *ինչպես և իրենց կենցաղն ու սովորությունները: Այսպես՝ 1831 թ. ամբողջ Ախալքալաքի գավառի հայության թիվն անցավ 30 հազարից, որոնցից, ինչպես վերը նշվեց, 1816 ընտանիք, մոտավորապես 10–13 հազար մարդ (5409–ը՝ տղամարդ), տեղաբնիկներ էին:*

1830–ական թթ. արևմտահայ գաղթականների փոքր մասը, չստանալով ռուսական իշխանությունների խոստացած բարեկեցիկ պայմանները, հեռացավ Արևմտյան Հայաստան,[511] *իսկ մեծագույն մասը, հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ, մնաց և չենացրեց երկրամասը: Շուտով Ախալցխան և Ախալքալաքը կրկին դարձան Անդրկովկասի էթնիկապես հայահոծ գավառներ, քանի որ տեղի «մեսխեթցիների» մի զգալի զանգվածը՝ չկամենալով մնալ ռուսական տիրապետության տակ, գաղթեց Օսմանյան կայսրություն:*

---

[508] Նույն տեղում, էջ 161:

[509] Նույն տեղում, էջ 42, 198:

[510] Ջավախքի գյուղերից այսօր արևելահայերենով խոսում է միայն Բարալեթը, որի մասին հիշատակում է Վախուշտ պատմիչը: Այն մյուս գյուղերի նման զանգվածաբար չբնակեցվեց էրզրումահայերով և պահպանեց թե՛ իր արևելահայ տեղական բարբառը և թե տեղաբնիկներին հատուկ սովորությունները: Փաստորեն բարալեթցիների միջոցով այսօր որոշ պատկերացում կարելի է կազմել Ջավախքի տեղաբնիկ հայերի մասին:

[511] Մատենադարան, Կարապետ արք. արխ., թղթ. 163 ९ , վ. 1216, թ. 1, վ. 1223, թ. 1, թղթ. 163 ո, վ. 1331, թ. 1–3, վ. 1403, թ. 1, թղթ. 163 ե , վ. 78, թ. 1, ЦГИАГ, ф. 11, д. 418, док. 713, ф. 2, оп. 1, дд. 3396, 4587, 4619, АКАК, т. 8, с. 884.

Բ) Վարչաժողովրդագրական իրավիճակը 19-րդ դարի 30-60-ական թթ.

19–րդ դարի 30–60–ական թվականները՝ ռուսական տիրապետության առաջին փուլը նոր՝ ռուսական վարչաքաղաքական համակարգի արմատավորման, գավառի վերաշինության, երբեմնի հայաբնակ գյուղերի նախկին ժողովրդագրական պատկերի վերականգնման, տնտեսական հարաբերությունների աչխուժացման, հոգևոր–եկեղեցական կյանքի կազմակերպման ժամանակաշրջան է:

Նորանվաճ երկրամասում ամրապնդվելու համար ցարական իշխանությունները ձեռնամուխ եղան նոր վարչակարգերի ստեղծմանը: Ադրիանապոլսի պայմանագրով Ախալցխայի էյալեթի 24 տանջակներից Ռուսաստանին ամբողջությամբ անցան 8–ը՝ Ախալցխան, Խերթվիսը, Ախալքալաքը, Ասպինձան, Ճաճարակը, Բորչալուն, Արապեումանը և Ածղուրը: Զղըրի և Փոցխովի գավառների հարավային և կենտրոնական շրջանները մնացին թուրքերին: Ռուսական կայսրությանը հանձնվից Զղըրի տանջակի հյուսիսային մասը, որը համապատասխանում էր պատմական Վերին Ջավախքի հարավային հատվածին: Այդ մասում սահմանագիծն անցնում էր Զղըրի լեռների ջրբաժանով և Խոզափին լճի մեջտեղով:

7,8 հազ. քառ. վերստ (մոտավ.՝ 8,3 հազ. քառ կմ –Ա.Մ.) տարածք, մոտ 120 վերստ (127 կմ) երկարություն և 100 վերստ (106 կմ) լայնություն ունեցող այս ընդարձակ երկրամասը պայմանականորեն սկսեց կրել «Ախալցխայի պրովինցիա», «Ախալցխայի մարզ», նույնիսկ նախկինի նման՝ «Ախալցխայի փաշայություն» անվանումները: Այն տարածվում էր հյուսիսային լայնության 41° և 42°, արևելյան երկարության 60° 20′ և 61° 42′–ի շրջանակներում:[512] Հյուսիսից սահմանակից էր Իմերեթիային, հյուսիս–արևելքից՝ Քարթլիի նախկին թագավորությանը, հարավ–արևելքից՝ Բորչալուի դիստանցիային, հարավից՝ Կարսի էյալեթին, հարավ–արևմուտքից՝ Ախալցխայի էյալեթից օսմանյան կայսրությանը մնացած գավառներին:

---

[512] РГВИА, ф. 450, оп. 1, дд. 276, 403, Статистическое описание Закавказского края, сост. Орест Евецкий, с. 174, 179, Зубов П., Картина Кавказского края, с. 283–284. Обозрение российских владений за Кавказом, ч. 4, с. 202.

Պրովինցիայի կառավարումը հանձնարարվեց Ախալցխայի ժամանակավոր վարչությանը: Վարչությունը, որի մեջ ընդգրկվեցին բարձրաստիճան զինվորականներ, գլխավորում էր վարչության նախագահը:[513] Ինչպես Ախալցխայի պրովինցիայում, այնպես էլ Անդրկովկասում նվաճված այլ շրջաններում առժամանակ պահպանվեցին նախկին թուրքական համակարգի շատ տարրեր: Սանջակների կառավարումը թողնվեց սանջակբեկներին (սանջակբեյ), որոնք տեղերում ներկայացնում էին ինչպես քաղաքացիական, այնպես էլ զինվորական իշխանությունը: Որպես կանոն, այդ պաշտոնը տրվում էր տվյալ գավառում տեղակայված զորքերի հրամանատարին: Սակայն առանձին դեպքերում այդ պաշտոնը թողնվում էր նախկին թուրք պաշտոնյաներին՝ տեղի մահմեդական բնակչության համակրանքը շահելու, թուրք կալվածատերերի աջակցությունը ստանալու համար: Օրինակ, Ախալքալաքի սանջակբեկ, խոշոր կալվածատեր Մուֆթի բեկը, որն ապրում էր Խոսպիա գյուղում, պահպանեց վարչական որոշակի լծակներ և նույնիսկ ռուսական իշխանություններից ստացավ կապիտանի կոչում: Նրա որդին՝ Դեդա բեկը չուտով դարձավ գավառի ամենահարուստ հողատերերից մեկը:[514]

Բոլոր սանջակներում չէ, որ նշանակվեցին սանջակբեկեր: Ածղորի զինվորական պարետին վստահվեց սանջակի, իսկ Խերթվիսի բերդի պարետին՝ միաժամանակ Ասպինձայի, Խերթվիսի և Ախալքալաքի սանջակների կառավարչի պաշտոնները: Այսօրինակ ռուս պաշտոնյաների միջոցով յուրահատուկ հսկողություն սահմանվեց սանջակբեկերի վրա:

Սանջակբեկերի պարտականությունների մեջ մտնում էր կարգ ու կանոնի պահպանումը գավառում, վարչության հրահանգների կատարումը, տեղի զինվորական ջոկատի խնդիրների լուծումը և այլն: Նրանք պետությունից ռոճիկ չէին ստանում: Բայց կոնկրետ գյուղերից ստանում էին եկամուտներ. նախկին թուրքական սովո-

---

[513] 1828 թ. օգոստոսի 16–ին Ախալցխայի պրովինցիայի ժամանակավոր վարչության առաջին նախագահ նշանակվեց Վասիլ Բեհբութովը: Նրան 1829–ի հուլիսին մեկ ամսով փոխարինեց բարոն Օստեն–Սակենը: 1829 թ. հուլիսից 1831 թ. մարտն այդ պաշտոնը զբաղեցրեց փոխգնդապետ Դրեշերնը: Մինչև 1840 թ. միմյանց արագորեն փոխարինեցին ևս 8 պաշտոնյաներ: Նրանց ազգանուններն ըստ կառավարման տարեթվերի տես ლომსაძე Შ., საძიებე ჯავახეთი, էջ 253–254:

[514] Загурский Л., Поездка в ахалцихский уезд в 1872 г., (ЗКОРИГО), кн. 8, с. 68.

րուլթին համապատասխան՝ հավաքված 60 միավոր բերքից՝ 16 միավորը և ամեն մի ոչխարից՝ 2 փարա (2 կոպեկ):[515]

Գյուղերի կառավարումը նախկինի նման իրականացվում էր գյուղական համայնքների միջոցով: Տեղաբնիկ վրացիներն ու հայերը գյուղավագին անվանում էին մամասախլիս (მამასახლისი), թուրքերը, կարափափախները և քրդերը՝ ակսակալ, արևմտահայ գաղթականները՝ յուզբաշի (հարյուրապետ):[516] *Նրանք պարտավոր էին կարգավորել գյուղերի միջև ծագած վիճելի հարցերը, զբաղվել հարկերի հավաքման, ջրանցքների անխափան աշխատանքի ապահովման և այլ խնդիրներով: Իրենց ծառայության դիմաց գյուղավագներն ազատվում էին ամեն կարգի հարկերից ու պարհակներից: Խոշոր գյուղերում նրանք ունենում էին օգնականներ՝ չավուշներ կամ դեսյատնիկներ (տասնապետ): Գյուղավագներին և չավուշներին ընտրում էր համայնքը: Ախալցխայում ստեղծվեց քաղաքային ոստիկանություն:*

1830–ականների սկզբին վարչական կենտրոն Ախալցխան հիշեցնում էր չինարարական մի մեծ հրապարակ: Փոցխովի ձախ ափին, բլրի վրա բարձրացող բերդի ու նրա թաղամասի կողքին, գետի աջ ափին սկսեց կառուցվել Նոր քաղաքը, ուր հաստատվել էին արևմտահայերը: 1831 թ. կամերալ վիճակագրության համաձայն՝ Ախալցխայում ապրում էր 2468 ընտանիք կամ արական չնչի 5447 մարդ: Տեղաբնիկների մեջ 385 ընտանիքը (623 արական չունչ) հայ–կաթոլիկներ էին, 44–ը՝ ուղղափառ վրացիներ, 26–ը՝ հայ–առաքելականներ, 117–ը՝ հրեաներ, 24–ը՝ մահմեդականներ: Գաղթականների մեջ ևս գերակշռում էին հայերը: Նրանք կազմում էին քաղաքի ամբողջ բնակչության կեսից ավելին: Միայն հայ առաքելականները 1542 ընտանիք (4 հազ. արական սեռի) էին, իսկ հայ–կաթոլիկները՝ 130 ընտանիք (296 ար.):[517] *Հաշվի առնելով, որ պատերազմի պատճառով կանանց թիվն ավելի մեծ էր, նրանց համեմատաբար ավելի՝ մոտ 6 հազ. չունչ հաշվելու դեպքում, քաղաքի ամբողջ բնակչության թիվը պետք է, որ անցներ 11 հազարից:*

Ախալցխայում հաշվվում էր հինգ եկեղեցի, որից հայկական՝ չորսը (մեկը՝ հայ կաթոլիկական), վրաց ուղղափառ՝ մեկը: Հրեաներն

[515] Картина Кавказского края, с. 297–298.
[516] Статистическое описание Закавказского края, с. 185.
[517] Обозрение российских владений за Кавказом, ч. 4, с. 219.

ունեին մեկ սինագոգ: Քաղաքում կար 2 իջևանատուն, 484 խանութ և այլ հաստատություններ: Պետական, մասնավոր և եկեղեցական շենքերի ընդհանուր թիվը հասնում էր 700–ի: Բնակչության թիվը 1830–ական թվականների կեսերին 13500 մարդ էր:[518] Ռուս վիճակագիր Օ. Եվեցկին ևս Ախալցխայի բնակչության վերաբերյալ նշում է գրեթե նույն թվաքանակը՝ 13 հազ. մարդ, որից միայն արական չնչի դաղթականները՝ 5445–ը: Ընդ որում, դրանցից մոտ հազար հոգին ունևորներ էին, 2500–ը՝ միջակներ և 1945–ը՝ աղքատներ:[519] Երկու սեռի գաղթականները, որ չնչին բացառությամբ հայեր էին, միասին պետք է կազմեին մոտավորապես 9 հազ. մարդ, այն է՝ բնակչության բացարձակ մեծամասնությունը:

Ախալցխայի մարզի մյուս քաղաքներն ավելի փոքր էին: Ինչպես 1830 թ. տեղում հաստատված, այնպես էլ մեկ տարի անց Ախալցխայից եկած մի քանի տասնյակ ընտանիք արևմտահայ գաղթականներ կիսավեր Ախալքալաքի բերդի հարավային մասում, ընդարձակ տափարակի վրա հիմնադրեցին նոր և ընդարձակ թաղամաս: Բերդում մնաց միայն 1828 թվականից տեղակայված ռուսական կայազորը: Նոր թաղամասում կառուցվեցին բնակարաններ, փուռ, սրճարան: Շատ չուտով նրանց թիվը հասավ մոտ հարյուր ընտանիքի, որոնցից յուրաքանչյուրին տրամադրվեց 50–ական արծաթ ռուբլի:[520] Վերջիններս ցանկություն հայտնեցին Ախալքալաքի հարավարևելյան տափարակում հիմնադրել նոր արվարձան: 1830–ական թվականների կեսերին այն արդեն ուներ մոտ հազար բնակիչ (մեծ մասամբ՝ հայեր): 1836 թ. Ախալքալաքին տրվեց ավանի կարգավիճակ:

Խերթվիս բերդաքաղաքում ապրում էր 600 թուրք, հայ և վրացի: Ճաճարակի սանջակբեկը նստում էր 200 բնակիչ ունեցող Ուրավել գյուղում: Փոցխովի կենտրոնը Դուգուր (Դուղուր), Քոբլիանինը՝ Մոխե, Զլդրինը՝ Կարծախ գյուղերն էին: Աբասթումանի, Ածղորի և Ասպինձայի վարչական կենտրոնները նույնանուն գյուղաքաղաքներ էին:[521] Ըստ Օ. Եվեցկու՝ Ախալցխայի պրովինցիայի բնակչութ-

[518] Картина Кавказского края, с. 298–299.
[519] Статистическое описание Закавказского края, с. 188.
[520] АКАК, т. 6, с. 850.
[521] Картина Кавказского края, с. 299–304.

յան. թիվը կազմում էր 13,5 հազ. ընտանիք կամ 70 հազ. մարդ,[522] հիմնականում՝ հայեր, վրացիներ, ինչպես նաև՝ քրդեր, օսմանցի թուրքեր և կարափափախներ: Վերին Ջավախքի տարածքը, որն ընդգրկում էր Ախալքալաքի, Ներթվիսի և Ջղրի սանջակները, պետրազանցապես հայաբնակ էր: Ախալցխայի սանջակում բնակեցված էր 18 գյուղ՝ (2859 ընտանիք, կամ արական սեռի 7143 բնակիչ, մեծ մասամբ՝ արևմտահայեր), նույնքան գյուղ՝ Ածղորի (366 հայ առաքելական ընտանիք), 12 գյուղ՝ Ասպինձայի սանջակներում:

1831 թ. արևմտահայ վերաբնակիչների մի հոծ զանգված, կյանքի տարրական միջոցներից զուրկ, տեղավորվել էր Ներթվիսի սանջակում, որի պատճառով այստեղ ստեղծվել էր ծանր իրավիճակ: Միայն Ներթվիսի բերդում, 38 գյուղերում և 7 ճմեռանոցներում, որոնց մեծ մասը տարածվում էր Կուրի աջ ափի տափարակում՝ Ախալքալաքի սանջակի սահմանակցությամբ, բնակություն էին հաստատել 942 հայ առաքելական և 137 հայ կաթոլիկ ընտանիքներ: Էթնոկրոնական մյուս համայնքերի՝ վրացիների, հրեաների և մահմեդականների ընդհանուր թիվը մոտ 500 ընտանիք էր:[523]

Վերին Ջավախքի հիմնական մասն ընդգրկող Ախալքալաքի սանջակը ևս Ախալցխայի պրովինցիայի համեմատաբար հոծ բնակեցված տարածքներից էր, թեև 1831–ին մոտ 50 ամայի գյուղերից բնակեցված էին միայն 35–ը: Դրանցից 13–ը պետական գյուղեր էին, ուր ապրում էին 122 ընտանիք ընիկներ և 216 ընտանիք գաղթականներ, ընդամենը՝ 1209 մարդ: Սանջակում ապրում էր 586 հայ առաքելական, 51–ական հայ կաթոլիկ և վրացի ուղղափառ ընտանիք: Մահմեդականների թիվը 282 ընտանիք էր:[524] Ինչպես երևում է, Ախալցխայի պրովինցիան, հատկապես Վերին Ջավախքի տարածքը, 1830–ականներին հիմնականում հայաբնակ վարչամիավոր էր:

Մինչև 1833–1834 թթ. ռուս–թուրքական համատեղ հանձնաժողովն ավարտին հասցրեց սահմանի վերջնական ճշտման աշխատանքները: Նախապես որոշված էր այդ հատվածում սահմանադիծն անցկացնել Ջղրի լեռների հարավային լանջերով: Հետևապես, Ջղր լճից հյուսիս, մինչև այդ լեռնալանջերի շրջանում գտնվող Ջամդուրա, Կարակալա, Բաշքոյ և այլ գյուղեր, պետք է մնային Ռուսական

---

[522] Статистическое описание Закавказского края, с. 179.
[523] Обозрение российских владений за Кавказом, ч. 4, с. 226.
[524] Նույն տեղում, էջ 230–232.

կայսրությանը: Ի դեպ, այդ գյուղերն անմարդաբնակ էին, իսկ Ջամդուրան 1830 թ. բնակեցված էր Բասենի դաշտի Ալվար, Նիստ, Մեծ և Փոքր Դու, Օկումի գյուղերից գաղթած հայերով: Սակայն ռուսական կողմը, պատճառաբանելով լեռներով այդ չրջանի բնաաչխարհագրական կտրվածությունը Ախալքալաքի սանջակից և գյուղերի մեծ մասի ամայի վիճակը, այդ գյուղախումբը հանձնեց Օսմանյան կայսրությանը: Բասենցիներին հարկ եղավ կրկին տեղահան լինել և այս անգամ՝ հաստատվել ռուսական պետության սահմանագլխին հայտնված Կարծախ գյուղում: Այստեղի թուրքերն էլ տեղափոխվեցին Ջղրի Ջամդուրա գյուղը: Կարծախը, որ թուրք կալվածատերերի գյուղ էր և կարճ ժամանակով եղավ Ջղրի սանջակի ռուսական մասի վարչական կենտրոնը, 83 քիսա թուրքական փարայով (մոտավ. 2 հազ. ռուբ.) գնվեց Կարապետ արքեպիսկոպոսի կողմից:[525] Ջղրի և Փոցխովի սանջակներից Ռուսաստանին անցնող հատվածները՝ որպես առանձին վարչամիավորներ, չուտով վերացվեցին: Ջղրի այդ մասը միացվեց Ախալքալաքի սանջակին:

1834 թ. հետո, մինչև 1840 թ. Ախալցխայի պրովինցիան (մարզը) վարչական լուրջ փոփոխությունների չենթարկվեց: Ինչպես այստեղ, այնպես էլ ամբողջ նորանվաճ Անդրկովկասում դերակշռեցին կառավարման նախկին օսմանյան և պարսկական եղանակները: Այդ վիճակը փոխելու, երկրամասի կառավարումը Ռուսական կայսրության նահանգների հետ համապատասխանեցնելու համար ցարական կառավարության հրամանով սկսեց գործել հատուկ հանձնաժողով սենատոր Գանի գլխավորությամբ:[526]

1840 թ. ապրիլի 10–ին Անդրկովկասում անցկացվեց վարչատարածքային նոր բաժանում: Լուծարվեցին նախկին բոլոր վարչամիավորները, այդ թվում՝ Ախալցխայի պրովինցիան: Վրաստանն ու Արևելյան Հայաստանի մեծ մասը մտցվեց Վրացա–իմերեթական նահանգի մեջ:[527] Այս ընդարձակ վարչական միավորը բաժանվեց 11 գավառների՝ Թիֆլիսի, Քուռթայիսի, Գուրիայի, Ախալցխայի, Գորիի, Թելավի, Բելոկանի, Ալեքսանդրապոլի, Երևանի, Նախիջևանի, Ելի-

---

[525] Լալայան Ե., Երկեր, հ. 1, էջ 57–58:

[526] Գանի հնձնաժողովի, վարչական բարեփոխումների նախագծերի մասին տե՛ս Евангулов Г. Г., Местная реформа на Кавказе, СПб., 1914, с. 11.

[527] 1843 թ. ամբողջ Անդրկովկասի բնակչությունը կազմեց 1483 հազ. մարդ, որից 979 հազ. Վրացա-իմերեթական նահանգում (АКАК, т. 9, Т., 1884, с. 605).

զավետպոլի: Ախալցխայի պրովինցիան վերակազմվեց Ախալցխայի գավառի, որն իր հերթին տրոհվեց տեղամասերի՝ Ախալցխայի, Աբասթումանի, Քոբլիանի, Ածղուրի, Խերթվիսի և Ախալքալաքի: Ղեկավար վարչակազմը՝ գավառապետը (уездный начальник), քաղաքապետը (городничий), նրա օգնականը, նահանգային քարտուղարը (губернский секретарь), պետական գույքի հոգաբարձուն (попечитель государственного имущества) հողաչափը (землемер), գավառային գանձապետը, բժիշկը և այլք նստում էին Ախալցխայում:[528] Ինչպես գավառային, այնպես էլ տեղամասային պաշտոնները սկզբնական շրջանում հիմնականում վստահվում էին ազգությամբ ոչ կովկասցի զինվորականների ու զանազան աստիճանավորների: Այսպես, 1845 թ. Ախալցխայի գավառապետը Ե. Ժապորոժչենկոն էր, Աբասթումանի տեղամասային ատենակալը՝ Ի. Վոլկովը, Խերթվիսինը՝ Դանիլովը, Ախալքալաքինը՝ Ն. Կրիժանովսկին, գավառային դատավորը՝ Ա. Լյուլինը:[529] 1850–ական թթ. պաշտոններ ստացան նաև որոշ թվով տեղացիներ: 1850 թ. Խերթվիսի տեղամասային ատենակալը՝ Մուրթաֆյանն էր, Ածղորինը՝ Մեպիսովը (Մեպիսյանը): 1850–ականների կեսերին Ախալցխայի վարչական մարմիններում երկարամյա աշխատանքի անցավ պրապորշչիկ Սարգիս Հազարապետյանը (Սերգեյ Ազարապետով):[530] Բայց մյուս տեղամասային ատենակալները (Ախալքալաքում՝ ոմն Սաևիչ), ոստիկանության աշխատակիցները՝ ռուսներ կամ ուկրաինացիներ էին:

Վարչատարածքային այս համակարգը պահպանվեց մինչև 1846 թ. դեկտեմբերը, երբ նախկին Վրացա–իմերեթական նահանգը բաժանվեց Թիֆլիսի և Քութայիսի նահանգների: Յուրաքանչյուր նահանգի մեջ ընդգրկվեց 5–ական գավառ: Ախալցխայի գավառի կազմում Ախալքալաքի տեղամասը միացվեց Քութայիսի նահանգին: Այսպիսով, վարչատնտեսական կառավարման առումով Ախալքալաքի ենթագավառը հայտնվեց շատ անբարենպաստ վիճակում: Նախ, նահանգային կենտրոնի հետ անուղղակի՝ Ախալցխայի միջոցով կապի պարտադրանքը, Ջավախքի տնտեսական զարգացման համար

[528] Кавказский календарь на 1846 г., Т., 1845, с. 169.
[529] Նույն տեղում:
[530] Սարգիս Հազարապետյանի որդին՝ Իսահակ Հազարապետյանը 70–80–ական թվականներին ևս զբաղեցրեց կարևոր պաշտոններ: Նա դարձավ Ախալքալաքի գավառապետի օգնական:

ստեղծեց արհեստական խոչընդոտներ: Երկրորդ, աչխարհագրորեն բավական հեռու գտնվող Քութայիսը Ախալքալաքի, հատկապես նրա հարավային մասի բնակչության համար փաստորեն դարձավ դժվարամատչելի: Պատահական չէ, որ այդ ժամանակաշրջանում հիշյալ տարածաշրջանը չարունակեց մնալ իբրև տնտեսապես ամենաթույլ զարգացած շրջաններից մեկը:

Եղած նյութի մանրազնին դիտարկումից հետևում է, որ ստեղծված այդ անհարմարությունները ստիպել են իչխանություններին Ախալքալաքի տեղամասը Քութայիսի նահանգի Ախալցխայի գավառի կազմից հանելու և Թիֆլիսի նահանգում Ջավախքին հարևան Ալեքսանդրապոլի գավառին միացնելու նախագծեր մշակել: Այդպիսի նախագծերից մեկը կազմվել է 1854 թ.:[531] *Կարծում ենք, որ 1853 թ. սկսված Ղրիմի պատերազմի ժամանակ, երբ թուրքերին հաջողվեց ներխուժել Ախալցխայի գավառի տարածք և ստեղծել բավական վտանգավոր իրավիճակ,*[532] *Ախալքալաքի տեղամասի կտրվածությունը Քութայիսից է՛լ ավելի ընդգծվեց: Հետաքրքրական է, որ 1854 թ. հետո փաստաթղթերում Ախալքալաքի տեղամասը մեկ հանդիպում է Քութայիսի նահանգի Ախալցխայի գավառի, մեկ՝ Թիֆլիսի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի մեջ: Ամենայն հավանականությամբ, նման փոփոխության համար պաշտոնական որոշում չի եղել, բայց ներքին կարգով Ախալքալաքի տեղամասն իր վարչական խնդիրները կատարել է հարևան Ալեքսանդրապոլի հետ:*

1867–1868 թթ. սկսվեց Անդրկովկասի վարչատարածքային վերաձևումների նոր փուլ: 1867 թ. ապրիլի 16–ի կանոնակարգով վերակազմվեց Թիֆլիսի նահանգը, որն իր մեջ ներառեց Ախալցխայի, Գորիի, Դուշեթի, Թիֆլիսի, Թելավի, Սղնախի գավառները և Թիանեթի օկրուգն ու Շիրակի (Հայաստանի Շիրակի հետ կապ չունի –Ա. Մ) պրիստավությունը: Դեկտեմբերի 9–ի կանոնադրությամբ վերակազմվեց նաև Քութայիսի նահանգը: Կովկասի փոխարքայի 1868 թ. փետրվարի 12–ի հրամանով այս վերջին փոփոխությունները գործողության մեջ մտան փետրվարի 19–ին: Նույն հրամանագրով Ախալքալաքի նախկին տեղամասի տարածքը՝ պրիս-

[531] РГИА СПб., ф. 1268, оп. 1, д. 974а, л. 5.

[532] 1853 թ. աշնանը Ախալցխայի գավառ ներխուժեցին թուրքական զորքերը: Նրանց հաջողվեց ներթափանցել անգամ Ախալցխայի արվարձանները: Քաղաքի պաշտպաններին ոգեշնչում էր Կարապետ արքեպիսկոպոսը (Գեղամյանց Հ., Կարապետ արքեպիսկոպոս (կենսագրություն), էջ 85–87):

տավուԹյան կարգավիճակով միացվեց արդեն Թիֆլիսին ենԹակա Ախալցխայի գավառին: Այս քայլը Ախալքալաքին վարչականորեն հարաբերական ինքնուրույնություն տալու առաջին քայլն էր:

Վերջապես, 1874 Թ. նոյեմբերի 3–ին հրապարակվեց Պետական խորհրդի հրամանագիրը Թիֆլիսի նահանգի կազմում ևս երկու՝ Ախալքալաքի և Թիանեթի գավառների ստեղծման վերաբերյալ: Ախալքալաքի գավառը ընդգրկելու էր նախկին պրիստավության տարածքը, ինչպես նաև Ախալցխայի գավառի հարավարևելյան հատվածի 10 և Գորիի գավառի 2 գյուղեր: 1875 Թ. ապրիլի 1–ին Ախալքալաքի ու Թիանեթի գավառներն սկսեցին պաշտոնապես գործել:[533]

Նորաստեղծ գավառի սահմանազատման համար իշխանությունները վերջապես հրաժարվեցին կամայական բաժանման «սկզբունքից» և սկսեցին առաջնորդվել բնական–աշխարհագրական գործոններով: Նման մոտեցման արդյունքում նոր վարչամիավորը հիմնականում ընդգրկեց պատմական Վերին Ջավախքի տարածքը: Արևմուտքում Ախալցխայի գավառի հետ սահմանի ղգալի մասն անցկացվեց Կուր գետով, հյուսիսում՝ Գորիի գավառի հետ՝ Թռեղքի լեռներով և Տաբածղուրի լճով, արևելքում՝ Բորչալուի գավառի հետ՝ Ջավախքի լեռներով, հարավ–արևելքում՝ Երևանի նահանգի հետ՝ Աչոցքի և Ջավախքի սարահարթերի ջրբաժանով և հարավում՝ Օսմանյան Թուրքիայի հետ՝ Ջղրի լեռներով և Խոզափին լճով:[534] *1877–1878 ԹԹ. ռուս–Թուրքական պատերազմից հետո Ռուսաստանին անցած Կարսի մարզը հյուսիսից սահմանակից դարձավ Ախալքալաքի գավառին:*

Ինչպես այլ գավառների, այնպես էլ Ախալքալաքի գավառի կառավարումը դրվեց գավառապետի վրա: Գավառները նախկինի նման բաղկացած էին տեղամասերից, որոնց կառավարիչ տեղամասային ատենակալները հաշվետու էին գավառապետի առջև: 1860–

Շուտով թուրքերը ջախջախվեցին Ախալցխայի Սուխլիս գյուղի մոտ: 1853 թ. նոյեմբերին 3–ին փոխգնդապետ Ցիմմերմանի փոքրաթիվ ջոկատը կասեցրեց Ախալքալաքի ենթագավառ ներթափանցած թուրքերի առաջխաղացումը, իսկ 1855 թ. հունիսի 23–ին Սուղդա գյուղի մոտ գեն. Օրբելիանիի ախալքալաքյան ջոկատը ջախջախեց թշնամու 1500 հեծելազորը (Кавказский календарь на 1862 г., Т., 1861, с. 232, 237).

[533] ЦГИАГ, ф. 7, оп. 11, д. 1, л. 109–112.

[534] Ախալքալաքի գավառի քարտեզը տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, էջ 110: Սույն բառարանում Ախալքալաքի գավառի ստեղծման տարեթիվը համարվում է 1860 թ. (նույն տեղում, էջ 109):

70–ական թվականների բարեփոխումների ընթացքում տեղերում գործող ոստիկանությունները զրկվեցին դատական իշխանությունից:

Գավառի կարգավիճակը, որը պահպանվեց մինչև 1930–ական թվականները, Ախալքալաքի վարչատնտեսական զարգացման համար անհամեմատ նպաստավոր պայմաններ ստեղծեց:

Ռուսական իշխանությունների առջև ծառացած դժվարին խնդիրներից մեկը գաղթականության ծանրագույն վիճակը թեթևացնելու հիմնահարցն էր, որին նրանք բացարձակապես նախապատրաստված չէին: Այդուհանդերձ, ռուս աստիճանավորները թե՛ գաղթի ընթացքում և թե՛ դրանից անմիջապես հետո որոշ քայլեր կատարեցին ներգաղթողների համար ստեղծված աղետալի վիճակը շտկելու ուղղությամբ: Այդ խնդրում նրանք մեծ հույսեր կապեցին Կարապետ արքեպիսկոպոսի հետ, որը գաղթականների շրջանում օգտվում էր անվերապահ հեղինակությունից: Ախալցխայի փաշայության կառավարչի հունիսի 30–ի հրամանով Ասպինձայի շրջանում գտնվող ձմեռանոցները գաղթականներին տրամադրելու գործը վստահվեց Կարապետ սրբազանին:[535] Ի. Պասկևիչի կարգադրությամբ իշխան Դավիթ Բեհբութովի միջոցով 1831 թ. մայիսին Կարապետ արքեպիսկոպոսին հանձնվեց նաև որոշ քանակությամբ ոսկեղեն՝ գաղթականների կարիքները հոգալու համար: Օգոստոսին Պանկրատևի հրամանով վերացվեց գաղթականներից մաքսատուրք գանձելը:[536] Եկվոր հայրենակիցներին զգալի օգնություն ցուցաբերեցին տեղաբնիկ հայերը: Այսպես. Կոկիա գյուղի բնակիչները տրամադրեցին 270 ղուրուշ դրամ, 19 սոմառ ցորեն, 29 սոմառ գարի, 15 հախա յուղ:[537] Սակայն այս միջոցառումները նույնիսկ չէին կարող մասնակիորեն շտկել ստեղծված աղետալի իրավիճակը:

Կարապետ Բագրատունին, խորապես գիտակցելով գաղթականության նկատմամբ իր ունեցած ողջ պատասխանատվությունը, մեծ ջանադրություն հանդես բերեց վիճակը շտկելու համար: Ցավոք, երբ նա 1831 թ. սկզբին գործերով մեկնեց Թիֆլիս, գաղթականության վիճակը կրկին վատթարացավ:[538]

---

[535] Մատենադարան, Կարապետ արք. արխիվ, թղթ. 163գ, վավ. 1181, թ. 1:
[536] Նույն տեղում, թղթ. 163գ, վավ. 1218, թ. 1, վավ. 1250, թ. 1–2:
[537] Դավթյան Ա., Հայկական և հայախառը բնակավայրերը Վրաստանում, էջ 161:
[538] Մատենադարան, Կարապետ արք. արխիվ, թղթ. 163գ, վավ. 1206, թ. 1:

1830–ական թթ. սկզբներին Ախալցխա և Ջավախք ներթափանցած թուրքական լրտեսները, օգտվելով ստեղծված դժվարություններից, գաղթականներին դրդում էին հակառուսական գործողությունների, ամեն կերպ խրախուսում էին գաղթականների հետդարձը:[539] *Փախուստը դեպի Արևմտահայաստան հատկապես մեծ ծավալ ընդունեց 1832 թ. գարնանից: Նախորդ տարում, չստանալով խոստացված «դրախտը» և հիասթափվելով բնակության նոր վայրերից, գաղթականները դիմեցին հետդարձի դժվարին քայլին:*[540] *Այդ օրերին գրված մի վավերագրում փախուստի մասին կարդում ենք. «Մինչ ի 27–ըն մայիսի հանդարտ էին ժողովուրդք մեր, բայց ի նոյն աւուր սկսեցին փախուստ առնել ոմանք տունք...աներևոյթ է գործ փախչողացն...»: Իշխանությունները 50 հոգանոց կազակական մի հեծելաջոկատ ուղարկեցին փախչողներին կանգնեցնելու համար: Սակայն վերջիններս զինված դիմադրություն ցուցաբերեցին, և ի վերջո, կարողացան հատել ռուս–թուրքական սահմանը:*[541]

Գաղթականների հետդարձը կանխելու համար սահմանի վրա՝ Ախալցխայի, Կարծախի, Ալեքսանդրապոլի և այլ հատվածներում տեղակայվեցին հատուկ պատժիչ ուղեկալներ, որոնց իրավունք էր վերապահվում խստագույնս պատժել սահմանախախտներին: Ընդունվեց հատուկ օրենք՝ այդօրինակ մարդկանց դեմ քրեական գործ հարուցելու մասին: 1831 թ. հուլիսի 28–ին Կարապետ արքեպիսկոպոսին հասցեագրված նամակում ռուսական իշխանությունները «խնդրում էին» այդ օրենքի մասին տեղեկացնել բոլոր գաղթականներին:[542]

Դժգոհություն ծնող սուբյեկտիվ պատճառներից մեկն էլ ռուս պաշտոնյաների չարաշահումներն ու ապաշնորհ գործելակերպն էր:

---

[539] Նույն տեղում, թղթ. 163գ, վ. 1230, բ. 1, թղթ. 163դ, վ. 1331, բ. 1–6, վ. 1344, բ. 1, վ. 1403, բ. 1, վ. 1415, բ. 1–3:

[540] Նույն տեղում, թղթ. 163ե, վավ. 66, բ. 1, վ. 77, բ. 1, վ. 79, բ. 1–2, վ. 90, բ. 1, վ. 102, բ. 1–3, վ. 119, բ. 1–3:

[541] Մատենադարան, Կարապետ արք. արխիվ, թղթ. 163ե, վ. 78, բ. 1–2: Որքան էլ նկատելի լիներ Արևմտյան Հայաստան վերադարձողների թիվը, միևնույն է, վերջիններիս շնորհիվ լքյալ բնակավայրերը վերականգնելու թուրքական իշխանությունների սպասելիքները չարդարացան, ուստի սուլթանը 1835 թ. ընդունեց հատուկ ֆերման Ռուսաստանին անցած տիրույթներից մահմեդականների ներգաղթ հրահրելու, ցանկացողներին պետական օժանդակություն ցուցաբերելու մասին (նույն տեղում, թղթ. 163դ, վավ. 1476, բ. 1):

[542] ՀՀ ԳԱԱ ՊԻ Լեոյի անձն. թիվ 1 ֆոնդ, ց. 1, գ. 28, բ. 1–1ա:

Այդ իմաստով հատկապես բացասական դեր կատարեց Ախալցխայի գավառապետ, փոխգնդապետ Դրեչերնը: Ռուս պաշտոնյաները, առանց անհրաժեշտ փաստաթղթերի ստուգման, արևմտահայ գաղթականներին տեղավորեցին նաև մահմեդականների լքած մասնավոր հողերի վրա: Շուտով դրանց տերերը կրկին վերադարձան և ներկայացնելով այդ հողերի նկատմամբ իրենց «իրավունքը» հաստատող փաստաթղթեր (որոնց մի մասը, ինչպես հետագայում պարզվեց, կեղծված էին), պահանջեցին կամ մեծ գումար վճարել հողերի դիմաց կամ ազատել դրանք: Իշխանություններն այս անգամ հարկադրեցին գաղթականներին տեղափոխվել այլ վայրեր: Բայց քանի որ այլևս ազատ հողակտորներ չկային, այդ գաղթականների մեծ մասը մնաց հողազուրկ: Նրանք ստիպված եղան թափառել Ախալցխա, Ախալքալաք քաղաքներում, Ածղորում, Շիրակի գյուղերում և այլուր, կամ էլ մնալով տեղում տնտեսական ծանր կախվածության մեջ հայտնվել մահմեդականներից էժանագին գներով հողեր ձեռք բերած նոր հողատերերից: Պետությունը, փոխանակ կալվածատերերից հողեր գնելու, որոնք կարող էին տրամադրվել գաղթականներին, թույլ տվեց, որ բազմաթիվ մասնավոր անձինք՝ ռուս զինվորականներ, տեղացի հայ կալվածատերեր թուրք հողատերերից էնչին գներով տեր դառնան գյուղերի մեծ մասին: Իշխանությունները 3600 ռուբլով գնեցին միայն տարբեր սանջակներում գտնվող Մուշի բեկի 29 փոքրիկ ու ամայի գյուղեր:[543] *Դրանցից, ինչպես վերը նշվեց, միայն 13–ն էին Ախալքալաքի գավառում: Նորաթուխ կալվածատերերը, օգտվելով անպատժելի իրավիճակից, սկսեցին դաժանորեն հարստահարել գաղթականներին: Փաստորեն, միայն պետական հողերի վրա բնակեցնելու ցարական կայսերական որոշումը կոպտորեն խախտվեց: Այսպես, ռուսական տիրապետության հաստատմամբ Ախալքալաքի և Ախալցխայի գյուղերում ամրագրվեց գերազանցապես կալվածատիրական հողատիրությունը, որը մեծապես խոչընդոտեց տարածաշրջանի գյուղատնտեսության զարգացմանը:*[544]

---

[543] Радде Г., Поездка в Ахалцихский уезд в 1872 г., (ЗКОРИГО), книга 8, Т., 1873, с. 8.

[544] Ախալքալաքի գավառում գյուղատնտեսության, հողային հարաբերությունների, հողատիրության ձևերի, հարկերի մասին ստեղծվել է բավական հարուստ գրականություն: Աշխատությունը չծանրաբեռնելու նպատակով այդ հարցերին հանգամանորեն չենք անդրադարձել: Այդ մասին մանրամասն տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2418, թ. 35–38, գ. 2961, թ. 154–155 և Ք. Ա. Վերմիշևի, Մ. Ն. Կուչաևի, Ի. Լ. Բախտածեի, Ա. Վ. Պարվիցկու, Յ. Ս. Մեդվեդևի, Ի. Զ. Անդրոնիկովի, Ֆ. Տ. Մարկովի, Ի. Վ.

Արդեն 1831 թ. մարտին մասնավոր հողերի վրա բնակվող մի խումբ գաղթականներ Կարապետ արքեպիսկոպոսին ուղղված խնդրագրում հայտնում էին, որ իրենց հարստահարում են ոչ միայն օտարազգի հողատերերը, այլև Թիֆլիսեցի, տեղացի (եռլի) և իրենց հետ գաղթած ու այսօր մասնավոր հողատեր դարձած բարերդցի մահտեսի Հարությունը, որոնք ոստիկանությունում ծառայող իրենց մտերիմների միջոցով ստիպում են կամ հալատակվել՝ վճարելով բազմապիսի ու ծանր հարկեր կամ «ժողովելով ի մերս գիւղականաց զ800 տունս աստի և անտի, ուստի յաղագս այսորիկ ստիպէ բռնութեամբ կառավարութեան տեղւոյս մերս գիւղականաց ելանել յուղաչէլի (մասնավոր – Ա.Մ.) գիւղից և գնալ ի թագավորականն: ...Դիտաւորութիւն ...բայբերդացւոյ ոչ այլ ինչ է՝ եթէ ոչ զամենեսին զմեզ զքաղաքացիս և զգիւղականս ծառայս ինքեան կացուցանել, զոր ճորտ անուանեն...»:[545] *Այս ամենին ավելացնենք նաև այն, որ պատարեցվել էր պետության կողմից գաղթականներին տրվող թոշակն ու հատկացվող հացահատիկը, «վասն որոյ չուարեալ և յուսահատեալ խղճալիքն չգիտեն զինչ արասցեն, ...զրամս վատնեալ զընակութիւնս և զեկեղեցիս են չինեալ և զանդաստանս հերկեալ և զայլս սերմանեալ յաչնան և ի գարնան..., յաղագս այսորիկ աղմուկ մեծ է ի ժողովրդեան և յուսահատութիւն անհնարին, գոչեն, աղաղակեն»: Գաղթականների հուսահատությունը հասնում է այնտեղ, որ նրանք պերազատում են «ծառայել օսմանցւոց, քան ճորտ այսպեսեաց լինել»:*[546]

Ծանր վիճակում էին նաև Ախալցխայում, Ածղորում և Ախալքալաքում հաստատված քաղաքաբնակները: Վրանների տակ ապրող գաղթականներից Դրեչկինը պահանջում էր կացարաններ կառուցել՝ տրամադրված չնչին միջոցներով, պետության կողմից նախատեսված հատուկ հատակագծերով: Վերաբնակիչներն ի վիճակի չէին առանց պետական լուրջ աջակցության իրականացնել այդ դժվարին խնդիրը և բացի այդ, ձգտում էին բնակարաններ կառուցել իրենց ճաշակով, արևմտահայ ճարտարապետական ոճով՝ դրանով ևս փորձելով զանազանվել տեղացիներից՝ եռլականներից: Երբ գաղթականները կրկին

Գոպածեի, Վ. Իվանովի, Ա. Միքելածեի, Խ. Ասմարովի (Ասմարյան), Կ. Գրիգորովի (Գրիգորյան) և այլոց աշխատություններում (այդ աշխատությունները տես ատենախոսության գրականության ցանկում):

[545] ՀՀ ԳԱԱ ՊԻ Լեոյի անվան անձն. թիվ 1 ֆոնդ, ց. 1, գ. 27, թ. 1:

[546] Նույն տեղում:

բողոքեցին գավառապետի վերոհիշյալ պահանջների դեմ, վերջինս իր ապաշնորհությունը և կատարած չարաշահումները սքողելու նպատակով, Պասկևիչի անունից անցավ սպառնալիքների:[547]

Առանձնակի աղետալի վիճակ էր ստեղծվել Ածղորում: Այստեղ հաստատված 283 ընտանիք գաղթականներին ավելացան Գյումրիից և Ասպինձայից սակավահողության պատճառով եկած կամ մասնավոր կալվածքներից խուսյս տված 27 ընչազուրկ ընտանիքներ:[548]

Ախալցխայում հաստատված արհեստավորների ու նրանց ապրանքներն իրացնող առևտրականների դժգոհության պատճառներից մեկն էլ այն էր, որ նրանք զրկված էին Օսմանյան կայսրության և եվրոպական երկրների հետ ազատ առևտուր անելու հնարավորությունից և ամեն պատեհ առիթ օգտագործում էին ռուսական իշխանություններից իրենց դժգոհությունն արտահայտելու համար:[549]

1831 թ. օգոստոսին Ախալցխայում և Ախալքալաքում հաստատված գաղթականների մի մասը դեռ չէր կարողացել իրականացնել իրենց ունեցվածքի վաճառքը, այն դեպքում, երբ ևս երեք ամիս ուշացնելու դեպքում, ըստ համաձայնության, այդ կայքը մնալու էր թուրքական կառավարությանը: Ուստի Կարինում մնացած հատուկ հանձնախմբի անդամներ Հարություն Մուրթաֆյանը, Աղաջան Հայրապետյանն ու Կարապետ Հարությունյանը մեծ ջանքեր գործադրեցին այդ գործն ավարտելու ուղղությամբ:[550] *Այդուհանդերձ, մեծ քանակությամբ ունեցվածք, այդպես էլ չվաճառվեց: Վերոհիշյալ հանձնախմբի ջանքերով, որի գործունեության մասին փաստեր կան մինչև 1835 թ. օգոստոսը, հաջողվեց ոչ միայն չգաղթած էրզրումահայերի համոզել տեղափոխվելու ռուսական սահմաններ, այլև կրկին վերադարձնել Ախալցխա–Ախալքալաքից էրզրում փախած գաղթականների:*[551]

---

[547] Մատենադարան, Կարապետ արք. արխիվ, թղթ. 163գ, վ. 1187, թ. 1–3:
[548] ՀՀ ԳԱԱ ՊԻ Լեոյի անվան անձն. թիվ 1 ֆոնդ, ց. 1, գ. 27, թ. 2:
[549] Մատենադարան, Կարապետ արք. արխիվ, թղթ. 163գ, վ. 264, թ. 1–3:
[550] Նույն տեղում, թղթ. 163գ, վ. 1231, թ. 1:
[551] Նույն տեղում, թղթ. 163դ, վ. 1480, թ. 1–8: Դրանից հետո, այս խմբի անդամներն էլ արտագաղթեցին Ախալցխա, որից հետո Կարին փախած գաղթականներին ետ վերադարձնելու գործը դրվեց այնտեղի ռուսական հյուպատոսի վրա (նույն տեղում, թղթ. 163դ, վ. 1507, թ. 1–2, թղթ. 163ե, վ. 136, թ. 1, վ. 161, թ. 1–2): 1830–ական թթ. սկզբին Կարապետ արքեպիսկոպոսի կարգադրությամբ էրզրումում գործում էր ևս մի հանձնախումբ ուսուցիչ Գրիգոր Շեքերճյանի գլխավորությամբ, որին էլ հանձնարարված էր քարոզչական աշխատանք տանել արտագաղթը դեպի Անդրկովկաս խրախուսելու

Նույնիսկ Ջավախք և Ախալցխա գաղթածների ընդհանուր դժգոհության և որոշ գաղթականների փախուստի պայմաններում, ռուսական իշխանությունները չարունակեցին Արևմտյան Հայաստանից ներգաղթը խրախուսելու ջանքերը: Նրանք, նախ՝ եկածների վերադարձը կանխելու նպատակով, Օսմանյան կայսրությունից համաճարակների մուտքը կանխելու պատճառաբանությամբ, սահմանի վրա տեղակայեցին մի քանի կարանտինային անցակետեր, որտեղից կազակական ջոկատները բազմաթիվ փախստականների վերադարձրեցին իրենց նոր հաստատված վայրեր: Այդ կարանտինները, որ կոչված էին բռնությամբ կանխելու արտագաղթը, հաճախ արգելք էին հանդիսանում դեռ Արևմտյան Հայաստանից Անդրկովկաս չարունակվող տարերային ներգաղթի համար, որը չարունակելու գործում էրզրումում գործող ռուս պաշտոնյաներն ու Գրիգոր Շեքերճյանի հանճնախումբը, Հարություն Մուրթաֆյանի խմբի հետ միասին, մեծ ճիգեր էին գործադրում: Վերջիններիս քարոզչական աշխատանքի շնորհիվ 1831 թ. նորանոր խմբեր կարինից ու գյուղերից տեղափոխվեցին Ախալցխա ու Ախալքալաք:[552] Գրիգոր Շեքերճյանը դժգոհում էր Արդահանում տեղակայված ռուսական կարանտինից, որի պատճառով դժվարություններ էին ծագում գաղթողների համար:[553]

1830–ական թթ. կեսերից նկատվեց համեմատաբար խիտ բնակեցված, բայց ավելի սահմանափակ տարածք ունեցող Ախալցխայի, Ածղորի շրջաններից տեղաշարժ դեպի Ախալքալաքի սարահարթ և Շիրակ:[554]

1837 թ. հունիսին՝ Նիկոլայ I ցարի Ախալցխա այցելության նախօրյակին, մի խումբ նորաբնակ ախալցխացիներ հատուկ նամակով դիմեցին Կարապետ արքեպիսկոպոսին՝ իրենց արտոնյալ հարկային պայմանները պահպանելու, առևտրականներին մաքսային արգելքներ չներկայացնելու խնդրանքով կայսեր առջև միջնորդության համար հանդես գալու համար:[555] Կարապետ սրբազանը կարողացավ

համար: Այս խմբում ընդգրկված էին շատ գյուղական քահանաներ, որոնք 1834–1835 թթ. հետո ևս տեղափոխվեցին Ախալցխա և շրջակա գյուղեր (նույն տեղում, թղթ. 163դ, վ. 1424, թ. 1): Բայց, ինչպես վկայում են արխիվային վավերագրերը, մինչև 1840–ական թվականների վերջերը անհատական գաղթերը ռուսական տիրույթներ չդադարեցին (նույն տեղում, թղթ. 129, վավ. 68, թ. 1):

[552] Նույն տեղում, թղթ. 163գ, վավ. 1227, թ. 1–2, վ. 1262, թ. 1, թղթ. 163դ, վ. 1292, թ. 1:

[553] Նույն տեղում, թղթ. 163դ, վ. 1310, թ. 1–2,

[554] Նույն տեղում, թղթ. 163դ, վ. 1509, թ. 1, վ. 1528, թ. 15

[555] Նույն տեղում, Կաթողիկոսական դիվան, թղթ. 90, վավ. 56, էջ 1–2:

ցարին հավուր պատշաճի ներկայացնել խնդիրը և իրավունք ստանալ գաղթականների նախկին վեցամյա արտոնությունները երկու տարով երկարաձգելու համար: Այդ հանգամանքը զգալիորեն մեղմացրեց գաղթականների դժգոհությունը իշխանություններից:

1830–ական թթ. ինչպես ամբողջ Ախալցխայի մարզի, այնպես էլ Ախալքալաքի սանջակի գյուղատնտեսությունը դեռ մնում էր քայքայված վիճակում: Զգալիորեն կրճատվել էին հացահատիկի ցանքատարածությունները: Որոշ չափով զարգացում էին ապրել խաղողագործությունը, այգեգործությունը Ածղորի, Ասպինձայի, մասամբ Խերթվիսի սանջակներում, մեղվապահությունը՝ Ախալքալաքի գյուղերում: Հատկապես ծանր էր անասնապահության վիճակը: Թուրքական տիրապետության շրջանում մշտական անասնագողության, ռուս–թուրքական պատերազմի շրջանում զանգվածային մորթի պատճառով խիստ կրճատվել էր անասնագլխաքանակը: Բավական ընդարձակ մարզի տարածքում հաշվվում էր ընդամենը 45 հազ. գլուխ խոշոր, 42 հազ. գլուխ մանր եղջեղավոր անասուն, 7 հազ. ձի և ավանակ:[556]

Տնտեսական աշխուժացում ավելի շատ նկատվում էր միայն Ախալցխայում, որը շնորհիվ էրզրումցի գաղթականների, արագորեն վերականգնեց արդյունագործության, առևտրի ու արհեստագործության կենտրոնի իր նախկին համբավը: Շուտով առևտրական կապեր հաստատվեցին Թիֆլիսի, Էրզրումի, Կ. Պոլսի, Տրապիզոնի և այլ քաղաքների հետ:

Ախալցխայում կարնո ինքնատիպ արհեստագործական ավանդույթների պահպանմանն ու զարգացմանը նպաստեց 1843 թ. մարտի 15–ին էսնաֆությունների՝ համքարությունների կանոնադրության ընդունումը:[557]

Ռուսական տիրապետության երկրորդ շրջանում՝ 1840–ական թվականների վերջից նոր Ախալքալաքի գավառում սկսվեց սոցիալ–տնտեսական ու մշակութային կյանքի վերելք: Ախալքալաքը դարձավ արհեստավորական կենտրոն, իսկ գյուղերը սկսեցին կարևոր դեր խաղալ Անդրկովկասում հացահատիկի արտադրության բնագավառում: Կարսի և Արդահանի հետ առևտուր անելու համար հիմնա-

[556] Статистическое описание Закавказского края, с. 181.
[557] Մատենադարան, Հարություն Աբրահամյանի արխիվ, թղթ. 99, վավ. 41:

կան ճանապարհի վրա, կարծես դյուղի մոտ բայլեց Խոզափինի մաքսատունը:

Պահպանված արխիվային վավերագրերի չնորհիվ հնարավոր է դառնում ցույց տալ Ախալքալաքի գավառի առաքելական դյուղերի, այսինքն՝ բնակավայրերի մեծ մասի բնակչության չարժը ինչպես 19–րդ դարի 30–40–ական թթ., այնպես էլ հետագա ժամանակաշրջանի համար: Փորձենք բաղդատել ձևոքի տակ եղած եկեղեցական մատյանների նյութեն ըստ տարեթվերի՝ 1838–1850 թթ. կտրվածքով, և ըստ չնչերի. [558]

Աղյուսակ 2

Բնակավայրի անվանումը		1838թ.	1840թ.	1842թ.	1844թ.	1847թ.	1850թ.
1.	Ախալքալաք	928	976	1119	1204	1264	1461
2.	Աբուլ	251	238	251	274	280	289
3.	Ագանա	174	169	180	202	210	219
4.	Ազավրեթ	356	371	393	426	500	364
5.	Ալաթուման	120	130	153	177	162	178
6.	Արագովա	333	657	650	698	272	328
7.	Բալխո	108	127	139	160	160	176
8.	Բարալեթ	245	274	363	384	330	304
9.	Բեժանո (Ճանճղա)	221	196	224	260	350	364
10.	Բուզավեթ	307	–	–	–	88	115
11.	Բուղաշեն	114	111	98	360	184	198
12.	Բուռնաշեթ	296	330	350	378	105	109
13.	Գանձա	105	–	206	232	350	368
14.	Գոմ (Գոմամ)	–	–	–	–	214	222
15.	Գումբուրդո	392	379	387	421	447	460
16.	Դաղեշ	–	–	–	–	–	310
17.	Դամալա	160	249	303	334	260	305
18.	Դիլիսկա	621	499	476	513	490	522
19.	Դիլիֆ	342	151	183	204	218	251

[558] 1838 թ. ծխական վիճակագրության նյութերը տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 53, ց. 1, գ. 1361, թ. 6–12, 1840 թ.՝ գ. 3800, թ. 4–4ա, 1842 թ.՝ գ. 3805, թ. 76ա–79, 1844 թ.՝ գ. 3809, թ. 13–19, 1847 թ.՝ գ. 3814, թ. 32–36, 1850 թ.՝ գ. 3820, թ. 51ա–55: Ցանկերում, ուր բնակչության թվական տվյալները ներկայացված են ինչպես ըստ սեռերի, այնպես էլ ընդհանուր գումարային կարգով, տեղ են գտել թվաբանական առանձին սխալ հաշվարկներ, որոնք մեր կողմից ուղղվել են: Ցուցակներից դուրս են մնացել ինչպես կաթոլիկ, այնպես էլ առանձին առաքելական գյուղեր: Բնակավայրի մասին տվյալների բացակայությունը նշված է (–) նշանով: Ինչպես 1830–70–ականներին, այնպես էլ հետագա տարիներին Ջավախքի բնակչության տեղաշարժերի վերաբերյալ բերված աղյուսակները հմմտ.՝ Կարապետյան Գ. Հ., Ջավախքը 1830–1930 թվականներին, ԲԵՀ, 1998, թիվ 2, էջ 97—114:

20.	Դրկնա	–	–	–	–	52	53
21.	Ջակ	161	171	155	176	206	220
22.	էխտիլա (Իխտիլա)	580	576	525	566	630	482
23.	Լոմատուրցխ	–	–	–	–	–	150
24.	Խանդո	301	291	361	392	400	327
25.	Խերթվիս (Խրթրոց)	293	244	263	294	204	173
26.	Խոջաբեկ	–	–	–	–	182	220
27.	Խոսպիա	96	99	107	121	111	126
28.	Խորենիա	147	145	159	184	–	151
29.	Կաճո	80	65	63	73	57	83
30.	Կարծախ	613	617	639	689	930	942
31.	Կոկիա	92	84	–	–	–	14
32.	Կորխ	434	493	500	531	375	416
33.	Կուլիկամ	215	213	246	271	263	295
34.	Մամզարա	101	113	137	162	168	183
35.	Սաջադիա	–	258	298	320	304	325
36.	Մեծ Արագյալ	192	149	190	210	201	767
37.	Մեծ Գոնդուրա	241	256	254	277	325	336
38.	Մեծ Խանչալի	204	189	225	254	311	341
39.	Մեծ Սամսար (Թոր)	230	201	185	207	223	119
40.	Սերենիա	312	321	299	322	390	444
41.	Մուրջախեթ	92	73	89	101	29	30
42.	Չամդուրա	291	307	283	302	390	390
43.	Չիֆթլիկ	300	220	286	312	240	255
44.	Ջիգրաշեն	259	367	345	376	420	452
45.	Սաթխա	414	456	494	529	650	210
46.	Սիրկ	–	–	–	–	–	37
47.	Սուլդա	354	369	315	349	440	536
48.	Վաչիան	344	407	431	476	535	595
49.	Փոկա	152	155	94	114	272	238
50.	Փոքր Գոնդուրա	110	157	170	188	202	178
51.	Փոքր Խանչալի	–	–	–	–	–	42
52.	Օրջա	272	380	416	439	276	335
Ընդամենը բնակավայր		44	43	43	43	46	52
Ընդամենը բնակիչ		11953	12233	13004	14462	14670	16008

Վերոհիշյալից հետևում է, որ 1838 թ., երբ դեռ տակավին չէր դադարել գաղթականության փախուստ–վերադարձն Արևմտյան Հայաստան, Ախալքալաքի գավառում հաշվվում էր հայ առաքելական-

ների 44 բնակավայր, այն է՝ մեկ ավան և 43 գյուղ՝ ընդամենը մոտ 12 հազ. ծխականներով: Բնակչության հոսունության կանգին զուգընթաց, նկատելիորեն աճել էր ինչպես մարդկանց ընդհանուր թվաքանակը, այնպես էլ բնակավայրերի թիվը: 1850 թ. հայ առաքելական դավանանքի բնակավայրերի թիվն Ախալքալաքի տեղամասում արդեն 52 էր, իսկ բնակիչներինը՝ ավելի քան 16 հազար: Այսինքն՝ սակավահողության պատճառով բնակեցվել կամ հիմնադրվել էր 7–8 գյուղ:

Այսպես. 1845 թ. չիֆթլիկցիներից մոտ 70 չունչ (Բիչախչոնք, Սուքիասենք, Ափիկենք և այլոք) տեղափոխվում են և վերաբնակեցնում Բուզավեթ գյուղը:[559] Նույն 1845–1846 թթ. Արագովա գյուղից մի մեծ զանգված արտագաղթում է, որի պատճառով այնտեղի բնակչության թիվը չեչտակի նվազում է՝ 698–ից իջնելով 272–ի: Արտագաղթած արագովցիներից 22 ընտանիք կամ 204 մարդ վերահաստատվում է Գոմ կամ Գոման գյուղում:[560] Չիֆթլիկում և Ջամդուրայում հաստատված էրզրումցի գաղթականների մի խումբ էլ, համալրելով գավառի հարավում ընկած Դադեչ գյուղի տեղաբնիկ (նուլի) հայերի թիվը, նոր չունչ է հաղորդում այս գյուղի կյանքին: Էխտիլայում բնակվող բասենցիներից յոթ ընտանիք 1848 թ. հաստատվում է ամայացած Դրկնա գյուղում, 1849 թ. մոտ տաս ընտանիք՝ Լոմատուրցխում:[561] Այս տարիներին վերակենդանացան նաև լքյալ Սիրկ ու Փոքր Խանչալի գյուղերը:[562] Ուշագրավ է, որ 1840–ականների վերջին Ախալքալաքի գավառում մի քանի ամայի գյուղեր կենդանացան ոչ միայն հարևան բնակավայրերի, այլև հարևան գավառ-

---

[559] Դավթյան Ա., Հայկական և հայախառը բնակավայրերը Վրաստանում, էջ 88: Չիֆթլիկցիների տեղաշարժը դեպի Բուզավեթ հստակորեն երևում է նաև վերոհիշյալ աղյուսակից: Մինչև 1844 թ. Չիֆթլիկի բնակչությունն անշեղորեն աճել է՝ հասնելով 312 մարդու, ապա՝ շեշտակի նվազել՝ 1847 թ. կազմելով միայն 240 շունչ: Համապատասխանաբար՝ 1847 թ. մինչ այդ անմարդաբնակ Բուզավեթում հանդիպում ենք 88 բնակչի:

[560] Նույն տեղում և ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3809, թ. 16–17, գ. 3814, թ. 34ա:

[561] Դավթյան Ա., Հայկական և հայախառը բնակավայրերը Վրաստանում, էջ 124, 202: Էխտիլայի բնակչության անկումը և Դրկնայի ու Լոմատուրցխի ածը տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3814, թ. 33–34, գ. 3820, թ. 53:

[562] Էրզրումի գավառի դիմաորիգոմցի գաղթականների կողմից Փոքր Խանչալիի վերահիմնադրումը Ա. Դավթյանը սխալմամբ համարում է 1854–55 թթ.: Այնինչ, 1850 թ. վերոհիշյալ եկեղեցական գյուղացանկի համաձայն՝ այն այդ թվականին արդեն մարդաբնակ էր և ուներ 42 բնակիչ: 1847 թ. գյուղացուցակում Փ. Խանչալին չկա նշված: Հետևաբար, գյուղի վերաբնակեցումը պետք է տեղի ունեցած լիներ 1848–1849 թթ. ընթացքում:

ներից եկած բնակիչների հաշվին: Օրինակ, Ագրիչայ գետակի ափին ընկած Խոջաբեկ գյուղը վերաչինվեց Ալեքսանդրապոլի և շրջակա մի քանի գավառներից եկած գաղթականների[563] ջանքերով:

1845 թ. սենատի որոշումով Ախալքալաքին տրվեց արտահաստիքային քաղաքի կարգավիճակ՝ տեղական միջոցներով պահվող ինքնուրույն ոստիկանական համակարգով: «Այդ օրվանից,– գրում է Ախալքալաքի առաջին ոստիկանական կոմիսար Վ. Պերևալենկոն, – քաղաքն սկսեց նկատելիորեն ընդարձակվել ի հաշիվ (նոր–Ա.Մ.) շինությունների»: «Կովկասյան օրացույցում» և «Կավկազ» թերթում բերված տվյալների համաձայն՝ Ախալքալաքը 1851 թ. ուներ 2675 բնակիչ (2619–ը՝ հայեր), 10 փողոց, 300 կրպակ, 187 քարե ու 8 փայտե շինություններ, 4 կամուրջ, 20 խանութ, 1 իջևանատուն, 23 գինետուն և սրճարան, 4–ական փուռ և վարսավիրանոց, 9 դարբնոց: Ըստ գավառի գլխավոր հողաչափի օգնական Կորգանովի նյութերի՝ քաղաքի ընդհանուր հողատարածքը մեծ չէր և կազմում էր մոտ 433 դեսյատին (մոտ 472 հեկտար–Ա.Մ.), որից արոտավայրեր՝ 344 դեսյատինը (375 հեկտար), չենքերի և փողոցների համար՝ 44 դեսյատինը (48 հեկտար), բանջարանոցներ և տնամերձեր՝ ավելի քան 44 դեսյատինը[564] (48 հեկտարից ավելի): Գործում էին ոմն Յակուբովին (Հակոբյան) և Պետրոսովին (Պետրոսյան) 10 տարով վարձակալությամբ տրված պետական բաղնիքներ, ինչպես և Մուրջախեթի գետակի (Քառասնաղբյուր) վրայի մի քանի ջրաղացներ:[565] 1851 թ. սեպտեմբերի 1–ին 15 օրով Ախալքալաքում բացվեց տոնավաճառ: Ածեց Խոզափինի մաքսատնով Կարսի, Արդահանի հետ տարվող առևտրի ծավալը: Քաղաքային հիվանդանոց չկար: Միայն կայազորի համար կար հազիվ 15 տեղանոց փոքրիկ բուժմաս՝ լազարեթ:

Այսպիսով, Անդրկովկասի Ռուսական կայսրությանը միացված տարածքներում 1840–ական թվականների երկրորդ կեսից հայ բնակչության արտաքին էթնիկ տեղաշարժերը գրեթե դադարեցին: Այլևս զանգվածային արտագաղթ և ներգաղթ տեղի չէր ունենում դեպի Արևմտահայաստան կամ՝ հակառակ ուղղությամբ: Առավելապես

---

[563] Այդ գաղթականների մեծ մասը 1830 թ. գաղթել էր Էրզրումի գավառի Ձիթող, Քյոշք գյուղերից:

[564] Кавказский календарь на 1852 г., Т., 1851, с. 292, 295, հմմտ. Кавквз, Тифлис, 1851, N 56.

[565] ლიმანოვ შ., სამცხე ჯაყელთა ეპ 476–477:

նկատվում էին էթնիկ ներքին տեղաշարժեր՝ Հարավային Կովկասի ռուսահպատակ գավառների չրջանակներում և բնակչության բնականոն աճ:

1840–ական թթ. Ռուսական կայսրության զանազան նահանգներից սկսվեց ռուս դուխոբոր աղանդավորների ներհոսքը Ջավախք: 1840–1845 թթ. հիմնականում Տավրիայի նահանգի Մելիտոպոլի գավառից աքսորված դուխոբորները Ախալքալաքի գավառի Հարավային մասում (այժմյան Նինոծմինդայի չրջան) հիմնեցին 8–9 գյուղեր: Դրանցից Բոգդանովկան, Սլավյանկան, Գորելոյեն, Սպասսկոյեն, Օրլովկան, Եֆրեմովկան, Տրոյիցկոյեն ընկած էին գավառի Հարավարևելյան անկյունում՝ Ալեքսանդրապոլի գավառ տանող ճանապարհի վրա, իսկ Տամբովկան, Ռադիոնովկան՝ արևելքում, Փարվանա լճի չրջակայքում: Այդ չրջատարածքը հաճախ սկսեց կոչվել Դուխոբորիե: 1850 թ. Սլավյանկա, Սպասսկոյե, Գորելոյե և Տրոիցկոյե գյուղերում ապրում էր 299 ընտանիք ռուս դուխոբոր:[566] Դուխոբորների համայնքում հոգևոր մեծ ազդեցություն ուներ Կալմիկովների ընտանիքը, նախ՝ Լարիոն Կալմիկովը, ապա՝ նրա որդի Պյոտրը և վերջինիս կին Լուկերիան: Այսպես Ջավախքը դարձավ բազմազգ:

Ախալքալաքի բնակչության աճի տեմպերն արագացան 19–րդ դարի կեսերից, երբ գաղթականությունը վերջնականապես ամրապնդվեց նոր բնակավայրերում: Տեղի ունեցավ առաջին սերնդափոխությունը, համեմատաբար բարելավվեցին կյանքի պայմանները: Յուրաքանչյուր ընտանիք ստեղծեց իր քիչ թե լավ սեփական կացարանը: Ավելացավ ծնելիությունը և համեմատաբար պակասեց մանկական մահացությունը: Այդ երևույթները նկատելի են նաև ներքոհիշյալ աղյուսակից, որը ներկայացնում է Ախալքալաքի հայ առաքելական գյուղերի բնակչության թվաքանակը (չնչերով) 1856–1878 թթ.[567]

[566] Кавказский календарь на 1851 г., Т., 1850, с. 103.

[567] 1856 թ. ծխական վիճակագրության նյութերը տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3828, թ. 58–61, 1858 թ.՝ գ. 3850, թ. 137–140, 1860 թ.՝ գ. 3833, թ. 65–68, 1865 թ.՝ գ. 3848, թ. 11–14, 1869 թ.՝ գ. 3856, թ. 19–20, 1878 թ.՝գ. 3850, թ. 217–220: 1872 թ. տվյալները տե՛ս գ. 3859, թ. 56–59:

Բնակավայրի անվանումը		1856թ.	1858 թ.	1860թ.	1865թ.	1869թ.	1878 թ.
1.	Ախալքալաք քաղաք	1670	–[568]	2045	2263	2476	3178
2.	Աբուլ	358	355	367	428	455	648
3.	Ազաևա	221	246	268	318	355	370
4.	Ազավրեթ	586	601	628	884	995	1184
5.	Ալաթուման	229	197	205	204	281	374
6.	Արագովա	457	483	424	531	614	778
7.	Բալխո	190	205	214	245	278	340
8.	Բարալեթ	347	373	399	448	684	445
9.	Բեժանո (ճանճղա)	375	438	454	537	619	776
10.	Բուզավեթ	178	241	282	206	239	314
11.	Բուղաշեն	211	210	212	245	248	337
12.	Բուռնաշեթ	435	351	417	537	290	345
13.	Գանձա	458	469	469	599	699	949
14.	Գոմ (Գոմամ)	397	425	424	519	578	710
15.	Գումբուրդո	532	564	563	649	739	941
16.	Դադեշ	317	420	450	543	611	674
17.	Դամալա	273	315	315	384	429	527
18.	Դիլիսկա	693	614	637	712	826	987
19.	Դիլիֆ	319	307	332	407	451	511
20.	Դրկնա	96	87	90	100	112	130
21.	Զակ	381	177	–	254	283	320
22.	Էխտիլա (Իխտիլա)	382	415	429	551	479	511
23.	Լոմատուրցխ	136	128	138	165	196	220
24.	Խանդո	612	525	544	563	637	754
25.	Խերբվիս (Խրբզզ)	75	87	88	90	–	94
26.	Խոջաբեկ	262	282	294	358	348	439
27.	Խոսպիա	150	199	–	179	205	267
28.	Խորենիա	215	230	231	257	280	336
29.	Կաճո	90	58	60	92	188	245
30.	Կարծախ	775	999	1029	1147	1208	1558
31.	Կոկիա	–	92	–	–	–	–
32.	Կորխ	483	496	482	571	656	525
33.	Կուլիկամ	321	290	–	347	397	514
34.	Ղադոլար	–	–	–	–	304	324
34.	Ղաուրմա	86	95	102	136	160	202
35.	Ղուլալիս	–	–	–	–	–	83
36.	Մամզարա	241	262	245	338	388	458
37.	Մաջադիա	337	346	364	412	463	479
38.	Մեծ Արագյալ	272	273	295	320	335	440
39.	Մեծ Գոնդուրա	428	471	497	461	728	661
40.	Մեծ Խանչալի	371	396	421	475	559	688
41.	Մեծ Սամսար (Ծոր)	138	158	160	218	233	322

[568] Փաստաթղթում ինչ–ինչ պատճառով բացակայում է Ախալքալաք քաղաքի 1858 թ. բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալը: Համեմատելով երկու տարի առաջվա՝1856 թ. (1670 մարդ) և երկու տարի հետո՝ 1860 թ. տեղեկության հետ (2045 մարդ) և մոտավորապես հաշվի առնելով միջին բնական աճը՝ մոտավորապես այն այդ տարեթվի համար կարելի է համարել 1800 մարդ: Այս տվյալը մտցրել ենք ընդհանուր հանրագումարի մեջ:

42.	Մերենիա	444	519	551	270	636	733
43.	Մոլիտ (Ղալքիլիսայի հետ)	–	–	–	–	–	264
44.	Մրագովալ	–	–	–	–	–	100
45.	Սուրջախեք	35	36	–	39	–	37
46.	Չամդուրա	408	355	301	419	461	507
47.	Չիֆթլիկ	284	261	266	328	361	423
48.	Չխարոլա	–	–	–	73	73	104
49.	Ջիգրաշեն	521	551	574	647	713	868
50.	Սաթխա	843	853	872	1042	1201	1292
51.	Սիրկ	–	40	41	44	47	76
52.	Սուլդա	461	508	539	703	807	809
53.	Վաչիան	650	730	776	884	973	1057
54.	Փոկա	324	372	393	435	516	631
55.	Փոքր Արագյալ	–	–	–	156	178	246
56.	Փոքր Գոնդուրա	203	216	231	297	369	479
57.	Փոքր Խանչալի	88	94	104	147	163	267
58.	Փոքր Սամսար	177	186	194	461	296	352
59.	Օլավերդ	252	278	289	346	381	535
60.	Օրջա	431	433	450	420	483	569
61.	Օրոջալար	–	–	–	–	330	319
Ընդամենը		19218	18312 + 1800 = 20112[569]	20155	24404	28014	33626

Վերոհիշյալ աղյուսակից երևում է, որ 20 տարում նկատելիորեն աճել էր բնակավայրերի թիվը: Նախկինում եղած 52–ի թիվը հասել էր 61–ի: Խոշորագույն գյուղերի՝ Կարծախի, Սաթխայի, Ազավրեթի, Վաչիանի բնակչությունն անցել էր հազար մարդուց: Այդ ընթացքում բնակեցվել կամ հիմնադրվել էին Օրոջալար, Փոքր Արագյալ, Չխարոլա, Մրագվալ, Մոլիտ, Ղուլալիս և Ղադոլար գյուղերը: Չավախքի տարբեր գյուղերում հաստատված ումուդումցիներ, դինարիգումցիներ, կարսեցիներ, բասենցիներ և այլք՝ մինչև 1860–ական թվականները, բնակվեցին Փոքր Արագյալում:[570] Էրզրումի նահանգի Օրթիզ գյուղից 1832 թ. Բուռնաչեթ գյուղում հաստատված գաղթականների սերնդից 12 ընտանիք 1867 թ. հիմնադրեց Ղադոլարը: 1868–ին Ծալկայի Աչկալա, Դարաքյով և Հյունիա գյուղերում հաստատված գաղթականները, տեղափոխվելով Օրոջալար, ստվարացրեցին տեղաբնիկ հայերի չարքերը: 1860–ականների սկզբին կաճո և այլ գյուղերից եկածները բնակեցրեցին Տաբածղուրի լճի հարավարևմտյան մասում ընկած Չխարոլան, իսկ 1870–ականների սկզբին Ծալկայից եկածները համալրեցին 1860–ականների

[569] 20112 բնակիչների մեջ մտցված են մոտավորապես 1800 ենթադրյալ քաղաքաբնակ ախալքալաքցիները, որոնք դուրս էին մնացել գյուղացուցակից:
[570] Իսոյան Ա., Սաթխա, Մեծ Արագյալ, Փոքր Արագյալ, էջ 494–502:

սկզբից մի քանի տուն բնակիչ ունեցող հարևան Մոլիտը: 1870–ականներին ծալկացիները վերաշինեցին նաև Ղուլալիսը:[571] 1870–ականների երկրորդ կեսին վերաբնակեցվեց Մրագովալը:

Նկատելիորեն արագացել էին 1867 թ. պրիստավային կենտրոնի կարգավիճակ ստացած Ախալքալաք քաղաքի բնակչության աճի տեմպերը: Քաղաքի աճը մեծապես պայմանավորվել էր նաև առաջին պրիստավ Մ. Ի. Նևտոնովի ժրաջան գործունեությամբ: Այդ տարիներին Ախալքալաք այցելած Լ. Զագուրսկին գրում էր. «Ախալքալաքն ունի հրապարակ, մայթեր, սալարկված փողոցներ և բավական բարետես շինություններ: ...Շնորհիվ Ախալքալաքի պրիստավության կառավարիչ Մ. Ի. Նևտոնովի հոգացողության, քաղաքն օրեցօր ավելի ու ավելի գեղեցիկ տեսք է ձեռք բերում: Բնակիչների թիվը հասնում է մինչև 2500 շնչի. բնակչությունը գերազանցապես բաղկացած է էրզրումցի գաղթականներից սերված հայ–լուսավորչականներից»:[572] Նույն հեղինակի վկայությամբ ախալքալաքցիներն ունեին իրենց մշտական զբոսատեղին՝ քաղաքի հարավ–արևելքում վեր խոյացող Տավշան թափա գեղատեսիլ բլուրը:

Թուրքական տիրապետության վերջին շրջանում էրզրումին ենթակա Ախալքալաքի ենթաթեմի գործունեությունը փաստորեն դադարել էր: Կարապետ արքեպիսկոպոսը ձեռնամուխ եղավ հոգևոր–եկեղեցական կյանքի կազմակերպմանը: Կաթոլիկների կողմից Ախալցխայի թեմի յուրացումից հետո, զրկվելով հոգևոր հովանավորությունից, Ջավախքը եկեղեցական առումով մտցվեց Կարնո թեմի մեջ: 1830 թ. Կարնո թեմի առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունին էրզրումահայ գաղթականների համար բնակության վայր ընտրեց այս երկրամասը, որը չուտով վերականգնեց ոչ միայն իր նախկին էթնիկ դիմագիծը, այլև ընդլայնեց հոգևոր–եկեղեցական կառույցները: Դաղթի ժամանակ Կարապետ սրբազանի ցուցումով էրզրումի նշանավոր բոլոր վանքերի ու եկեղեցիների շարժական գույքի մեծ մասը՝ եկեղեցական սպասքը, հարյուրավոր ձեռագրեր, թանկարժեք իրեր 13 սայլերի վրա բարձած հասցվել էր Ախալցխա,[573] որի մի մասը տրվեց նոր եկեղեցիներին: Միայն 1830–

[571] Դավթյան Ա., Հայկական և հայախառը բնակավայրերը Վրաստանում, էջ 172, 177–178, 183, 218, 229:
[572] Загурский Л., Поездка в ахалцихский уезд в 1872 г., (ЗКОРИГО), кн. 8, с. 63.
[573] ՀՀ ԳԱԱ ՊԻ Լեոյի անձն ֆ. 1, ց. 1, գ. 54, թ. 2:

40–ական թվականներին Ախալցխայի և Ախալքալաքի գավառներում, Մալկայի ենթագավառում վերականգնվեց կամ հիմնադրվեց ավելի քան 75 հայ առաքելական եկեղեցի, որոնցում հոգևոր ծառայություն էր կատարում մեծ մասամբ Կարապետ սրբազանի կողմից ձեռնադրված շուրջ 190 հոգևորական:[574]

Մինչև 1837 թ. այս ողջ տարածաշրջանի հայությունը ռուսական իշխանությունների թույլտվությամբ դրվեց Կարապետ արքեպիսկոպոսի հոգևոր հովվության ներքո՝ իբրև արևմտահայ գաղթականների ինքնուրույն ու ինքնատիպ մի թեմական կառույց: Երբ Կարապետ սրբազանը նշանակվեց 1837 թ. օգոստոսի 5–ին բացված Վրացա-իմերեթիական թեմի առաջնորդ, Ախալցխայի, Ախալքալաքի և Մալկայի ավելի քան 100 գյուղեր մտցվեցին այդ թեմի մեջ՝ որպես Ախալցխայի հոգևոր կառավարության ենթաթեմ: 19–րդ դարի 30–40–ական թվականներին Ջավախքի և Հարակից գավառների հայկական գյուղերի մեծ մասում կային եկեղեցիներ, հիմնականում՝ փայտաշեն կամ փայտածածկ գմբեթով:[575]

Նախ բոլոր երեք գավառները միասնաբար, ապա՝ 1850–ական թթ. կեսերից՝ Ախալցխան առանձին, իսկ Ախալքալաքն ու Մալկան միասին դարձան հոգևոր «վիճակներ»՝ «վիճակավոր կառավարության ենթակայության ծխաշրջան, գործակալ ավագ քահանաների» առաջնորդությամբ: Վերջիններս անմիջականորեն չէին ենթարկվում թեմակալ առաջնորդին: Նրանք ուղղակիորեն ենթակա էին Ախալցխայի հոգևոր կառավարությանը, որի առաջնորդանիստ եկեղեցին 1836 թ. հիմնադրված Ախալցխայի Ս. Փրկիչ եկեղեցին էր: Այդ եկեղեցուն Կարապետ արքեպիսկոպոսը նվիրաբերեց Ախալքալաքի գավառում իր գնած կալվածատիրական գյուղերի՝ Կարծախի, Դաղնչի, Խոզափինի, Կարավի և այլոց հողերից ստացվող եկամուտը: Ախալքալաքի ավագ քահանա գործակալի նստավայրը դարձավ 1830–ական թվականների սկզբին կառուցված Ս. Խաչ եկեղեցին:

1837 թ. հունվարին Ախալցխայի գավառային վարչությունը որոշում ընդունեց Կարապետ արքեպիսկոպոսից խլել Սուլդա (մասնակիորեն), Օպլախ, Բուզալ և այլ գյուղերի կալվածքները՝ պատճառաբանելով դրանք նախկին տիրոջ՝ Շարիֆ Մահմեդ բեկից գնելու վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթեր չունենալու հանգամանա-

[574] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3931, թ. 4–17, գ. 4077, թ. 19–41:
[575] Նույն տեղում, գ. 3805, թ. 76–77:

քով:[576] Կարապետ սրբազանը կարողացավ ապացուցել իր իրավացիությունը: Շուտով բարոն Ռոզենը փորձեց համոզել Կարապետ արքեպիսկոպոսին վերոհիշյալ հողատարածքները վաճառել պետությանը: Սակայն այդ փորձերը ևս անհաջողության մատնվեցին: Ախալցխայի ժամանակավոր վարչությունը ստիպված եղավ 1838 թ. ճանաչել Ս. Փրկիչ եկեղեցու իրավունքներն այդ հողերի նկատմամբ,[577] որոնցից ստացված եկամուտները ծախսվում էին եկեղեցական և կրթաբարեգործական նպատակների համար:

1850–ական թվականներին սկսվեց փայտաշեն եկեղեցիների փոխարեն քարաշեն եկեղեցիներ կառուցելու գործընթացը: Հարկ եղավ առաջին հերթին հիմնովին վերակառուցել Ախալքալաքի կիսախարխուլ Ս. Խաչ փայտաշեն եկեղեցին, որի «...հնութիւն չինութեան այնորիկ արդէն իսկ կարծիս տայ փլման, և յաւուր միում մեծի վտանգի բազմաթիւ աղօթաւորաց ի նմին»:[578] Նախապատրաստական աշխատանքները ծավալվեցին 1854 թ. հունվարից: Շուտով ստացվեց կաթողիկոս Ներսես Աշտարակեցու թույլտվությունը, և սկսվեցին շինարարական աշխատանքները: Նոր եկեղեցու չափերը կազմեցին «զերկայնութիւնն երեքտասան սաժէն զլայնութիւն ընդ առաջնոյն ութն սաժէն և բարձրութիւնն երեք սաժէն, զչրջապատն հնգետասան պատուհանս, և այլն ընդ կարգին ու ընդ յարմարութեան...»:[579] Եկեղեցու կառուցման ծախսերը հոգաց մահտեսի Կարապետ Յաղուբյանը: Կառուցման աշխատանքներն ավարտվեցին 1856 թ.:

Հատկապես 1860–ական թվականներից սկսած՝ կառուցվեցին կամ քարակերտ չենքերի վերածվեցին փայտաշեն ու կիսաքանդ տասնյակ եկեղեցիներ: Մինչև դարավերջ գյուղերի ճնշող մեծամասնությունն ունեցավ ինքնուրույն եկեղեցի՝ ծխատեր քահանայով: Պատկերը 19–րդ դարում ողջ Ախալցխայի հոգևոր կառավարության

---

[576] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 90, վ. 69, թ. 1–2:
[577] РГИА СПб., ф. 1263, оп. 1, д. 1192, л. 628–630.
[578] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 56, ց. 1, գ. 3245, թ. 1–4:
[579] Նույն տեղում: Մեկ սաժենը հավասար է 2,134 մետրի: Նշանակում է եկեղեցու երկարությունը եղել է 27,3 մ, լայնությունը 16,8 մ, բարձրությունը 6,3 մ:

Ներքո Ջավախքի եկեղեցիները (առանց Ախալցխայի և Ծալկայի գյուղերի), հետևյալներն էին.[580]

Աղյուսակ 4

Ախալքալաքի ենթավիճակ (ենթաթեմ)		
Բնակավայրի անունը	Եկեղեցու անունը	Կառուցման տարեթվերը
1. Ախալքալաք	ս. Խաչ	1830թ.
2. Աբուլ	ս. Հարություն ս. Աստվածածին	1830–65 թթ. 1881–84 թթ.
3. Ագանա	ս. Հրեշտակապետաց	1830–64 թթ.
4. Ազավրեթ	ս. Մաթեոս և Մարկոս Ավետարանիչ ս. Մեսրոպ	1830–64 թթ. 1868–70թթ.
5. Ալաթուման	ս. Երրորդություն	1830–62 թթ.
6. Ալաստան*	ս. Աստվածամոր Վերափոխման	1856–63 թթ.
7. Արագովա	ս. Գևորգ	1830–63 թթ.
8. Բալխո	ս. Հարություն կամ ս. Սահակ	1830–63 թթ.
9. Բավրա*	ս. Խաչ	1830–87 թթ.
10. Բարալեթ	ս. Խաչ (ս. Աստվածածին) ս. Ստեփանոս	1830–55 թթ. 1861 թ.
11.Բեժանո (Ճանճղա)	ս. Մինաս	1830–63 թթ.
12. Բուզավեթ	ս. Գր. Լուսավորիչ	1845–68 թթ.
13. Բուղաշեն	ս. Հարություն	1830–55 թ.
14. Բուռնաշեթ	ս. Մաթևոս ավետարանիչ (ս. Գր. Լուսավորիչ՞)	1830–63 թթ.
15. Գանձա	ս. Աստվածածին ս. Կարապետ	1862 թ. 1864 թ.
16. Գոման	ս. Լուսավորիչ	1847 թ.
17. Գումբուրդո	ս. Համբարձման	1837 թ.
18. Դաղեշ	ս. Աստվածածին	1848–61 թթ.
19. Դամալա	ս. Խաչ	1830–45 թթ.
20. Դիլիսկա	ս. Սարգիս	1830–48 թթ.
21. Դիլիֆ	ս. Գևորգ	1847 թ.

[580] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, թ. 4–4ա, գ. 3820, թթ. 51–68, 127–141, 198–203, գ. 3839, թթ. 26–31, Արծագանք, 1885, 31 դեկտեմբեր, էջ 367–368: Հմմտ.՝ Դավթյան Ա., Հայկական և հայախառը բնակավայրերը Վրաստանում, էջ 37–40: Աստղանիշով առանձնացված են հայ–կաթոլիկ գյուղերը: Եկեղեցիների հիմնադրման տարեթվերը մոտավոր են: Աղյուսակ 4–ի տվյալները հմմտ.՝ Կարապետյան Գ. Հ., Ջավախքը 1830–1930 թվականներին, ԲԵՀ, 1998, թիվ 2, էջ 104–106:

	ս. Վարդանանց	–
22. Դրկնա	ս. Նշան	1840–68 թթ.
23. Զակ	ս. Միհաս	1830–ական թթ.
24.Էխտիլա (Իխտիլա)	ս. Ստեփանոս	1830–ական թթ.
25. Թախչա	ս. Միհաս	1870 թ.
26.Թորիա (Զիթհանքով)*	ս. Հովհաննես Մկրտիչ	1803 թ.
27. Լոմատուրցխ	ս. Ամենափրկիչ	1840–ական թթ.
28. Խանդո	ս. Մարկոս ավետարանիչ	1830–39 թթ.
29. Խերթվիս	ս. Հովհաննես	1860 թ.
30. Խիզաբավրա*	Ս. Աստվածածնի ս. Խաչ	1840 թ. 1900 թ.
31. Խոջաբեկ	ս. Սարգիս	1861 թ.
32. Խոսպիա	ս. Առաքելոց	1830–63 թթ.
33. Խորենիա	ս. Երևման Խաչի	1830–ական թթ.
34. Խուլգումո*	ս. Աստվածամոր	1856–61 թթ.
35. Կաճո	ս. Միհաս	1860–ական թթ.
36. Կարծախ	ս. Կարապետ	1830–ական թթ.
37. Կարտիկամ*	ս. Աստվածածին	1843 թ.
38. Կոկիա	ս. Ղուկաս ավետարանիչ.	–
39. Կորխ	ս. Ստեփանոս	1830–61 թթ.
40. Կուլիկամ	ս. Երրորդություն	1864–71 թթ.
41. Հեշտիա*	ս. Աստվածամոր	1856 թ.
42. Ղադոլար	ս. Գր. Նարեկացի	1868 թ.
43. Ղաուրմա	ս. Աստվածածին	1862 թ.
44. Մամզարա	ս. Գր. Լուսավորիչ	1847 թ.
45. Մաջադիա	ս. Հարություն (ս. Գր Լուսավորիչ)	1840–60–ական թթ.
46. Մեծ Արագյալ	ս. Խաչ	1863 թ.
47. Մ. Գոնդուրա	ս. Աստվածածին ս. Հակոբ	1867 թ. 1860–ական թթ.
48. Մ. Խանչալի	ս. Աստվածածին	1830–64 թթ.
49.Մ.Սամսար (Թոք)	ս. Աստվածածին	1848–61 թթ.
50. Մերենիա	ս. Աստվածամոր	1830–ական թթ.
51. Մրագվալ	ս. Սարգիս	–
52. Մոլիտ	ս. Սիմոն	1861 թ.
53. Մուրջախեթ	ս. Վարագա խաչի	1830–ական թթ.
54. Չամդուրա	ս. Հարություն	1830–ական թթ.
55. Չիֆթլիկ	ս. Գևորգ	1830–ական թթ.
56. Ջիգրաշեն	ս. Հրեշտակապետ	1861 թ.
57. Սաթխա	ս. Աստվածածին (Մեծն Ներսես)*	1865 թ.
58. Սիրկ	ս. Գևորգ	1864 թ.

59. Սուլդա	ս. Խաչ	1830–ական թթ.
60. Վաչիան	ս. Սիոն	1830–ական թթ.
61. Վարևան*	ս. Աստվածածին	1842–43 թթ.
62. Տուրցխ*	ս. Աստվածամոր	1856 թ.
63. Ուջմանա*	ս. Հովհաննես Մկրտչի	1851 թ.
64. Փոկա	ս. Գր. Լուսավորիչ ս. Նշան	միջնադար 1862 թ.
65. Փոքր Արագյալ	ս. Աստվածածին ս. Ստեփանոս	1864 թ. –
66. Փ. Գոնդուրա	ս. Ղևոնդ	1861 թ.
67. Փ. Խանչալի	ս. Հակոբ	1864 թ.
68. Փ. Սամսար	ս. Հարություն	1860–ական թթ.
69. Քարծեփ	անանուն	–
70. Օլավերդ	ս. Աստվածածին	1856 թ.
71. Օրջա	ս.Թադեոս–Բարդուղիմեոս	1830–ական թթ.
72. Օրոջալար	ս. Հակոբ	1870թ.

Ախալցխայի և Ախալքալաքի մեկ տասնյակից ավելի հայ կաթոլիկ գյուղերը հոգևոր առումով դրվեցին Ախալցխայի կաթոլիկ առաջնորդի իրավասության ներքո: Հռոմի ազդեցությունից հնարավորինս հեռու պահելու նպատակով՝ ցարական իշխանությունները կաթոլիկների շատ իրավունքներ սահմանափակեցին: Փաստորեն նրանց առաջնորդի պաշտոնը դարձավ նշանակովի: 1830–ական թվականների վերջին Ախալցխայի հայ կաթոլիկների հոգևոր առաջնորդի պաշտոնում նշանակվեց Պողոս Շահկուլյանը:[581]

1860–70–ական թվականներին ինչպես Վրաստանի տարածքում, այնպես էլ Ախալցխայի և Ախալքալաքի գյուղերում վրաց ուղղափառ եկեղեցին չարժում ծավալեց կաթոլիկ հայերին «վրացադավանության վերադարձնելու» ուղղությամբ: Ամենուր սկսվեց քարոզչություն այն մասին, որ իբրև թե կաթոլիկ հայերի մեծ մասն իրականում վրացիներ են և հայ առաքելական եկեղեցու ազդեցությամբ՝ նախ դարձել են հայախոս, ապա՝ ընդունել կաթոլիկություն: Ջավեչտականն այն է, որ նման անհեթեթ պնդումներ անելուց առաջ այդ արշավի հեղինակները չէին բացատրում, թե ինչպե՞ս հայ եկեղեցու ազդեցության տակ այդ «վրացիները» առաքելականություն ընդունելու փոխարեն, նախընտրել են կաթոլիկությունը:

Նման քարոզչության առաջին «զոհը» դարձան Արդահանի Վել գյուղից Ջավախքի կարտիկամ, Բավրա, Խուլգումո և մասամբ՝

[581] AKAK, т. 9, T., 1884, 113, 117.

Տուրցիս գյուղերում հաստատված կաթոլիկ հայերը: Այդ ընտրությունը պատահական չէր: Քարոզարշավի կազմակերպիչները վերոհիշյալ գյուղերում ակնկալում էին հաջողություն: Նրանք կարծում էին, որ այդ գյուղերի բնակչությունը, մասնակիորեն թրքախոս ու դավանանքով կաթոլիկ լինելով, հեշտությամբ կարող է հակադրվել հայ առաքելականներին և ընդունել վրացադավանություն: Այդօրինակ քարոզիչները 1872 թ. Ախալքալաքի գավառ այցելած Լ. Զագուրսկուն ևս հավատացնում էին, որ վերջիններիս նախնիները նախապես ապրել են Վրաստանում, ապա, խուսափելով հալածանքներից, վերաբնակվել են Արդահանում: Այնտեղ, թուրքական միջավայրում, նրանք դարձել էին թուրքախոս:[582] *Զագուրսկուն ևս չէր տրվում որևէ բացատրություն, թե ինչու՞ էին վելցիները թուրքերենին զուգահեռ պահպանել հայերենը, հայկական անունները, կենցաղը, ծիսական արարողակարգը, հայկական ինքնագիտակցությունը և ի՞նչ հիմքեր կային այդ մարդկանց «վրացի վերաօծելու» համար: Զարմանալի չէ, որ «վերավրացանալու» վրաց հոգևորականության ու գործիչների առաջարկությունը, նախկին վելցիների շրջանում վրդովմունք առաջացրեց և կտրականապես մերժվեց: Եղծելի այդ քարոզարշավը հետագայում ևս չարունակվեց:*

Երկրամասի հոգևոր–եկեղեցական կյանքում տեղի ունեցած կարևոր իրադարձություններից մեկն էլ մահմեդականացած հայերի ու վրացիների վերադարձն էր իրենց դավանանքին: Օգտվելով բարոն Ռոզենի արձակած հատուկ հրամանով ընձեռվող հնարավորություններից, Ախալցխայի ու Ախալքալաքի մահմեդականացած հայերի մի զանգված, որը դեռ պահպանել էր իր ազգային ինքնագիտակցությունը, կրկին վերաօծվեց հայ քրիստոնյա:[583]

Արևմտահայերի ներգաղթից հետո Ախալցխայի և Ախալքալաքի տնտեսական վիճակի հետզհետե կայունացմանը զուգընթաց, դանդաղորեն սկսեց վերականգնվել մշակութային կյանքը, որը դարասկզբին լիովին խաթարված էր: Ընդ որում, ինչպես Ջավախքի պարարվեստի ուսումնասիրության արդյունքում իրավացիորեն նկատել է Ժ. Խաչատրյանը, սկսեց ձևավորվել միանգամայն ինքնատիպ մշակույթ, որն իր մեջ ներառնեց տեղաբնիկ հայության և էրզ-

[582] Загурский Л., Поездка в ахалцихский уезд в 1872 г., (ЗКОРИГО), кн. 8, с. 68.
[583] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 86, վավ. 269, թ. 1:

րումահայերի մշակութային ժառանգության տարրերը:[584] *Հատկանշական է, որ այդ մշակույթը գրեթե օտար ազդեցություններ չկրեց՝ տեղում ձևավորված հայահոծ էթնիկ իրավիճակի պատճառով:*

1830–ական թթ. սկզբներին Կարապետ արքեպիսկոպոսի նախաձեռնությամբ բացվեցին ծխական դպրոցներ, Ախալցխայում՝ Կարապետյան, Ախալքալաքում՝ Մեսրոպյան արական վարժարանները: Այս կրթօջախներում սկսեցին դասավանդել Էրզրումից եկած մի խումբ հայտնի ուսուցիչներ, որոնց մի մասը հարուստ մանկավարժական փորձ էր ձեռք բերել նախկին Կարապետյան (Էրզրում) վարժարանում: Դպրոցներն անհրաժեշտ միջոցների բացակայության պատճառով երկար ժամանակ մնացին անմխիթար վիճակում: Ձկային չենքային պայմաններ, դասագրքեր, գրենական պիտույք և այլն: Միայն որոշ բարելավում նկատվեց Կարապետյան վարժարանում, երբ Կարապետ արքեպիսկոպոսի ձեռք բերած կալվածքներից ստացվող եկամտի մի մասը տրամադրվեց դպրոցին:

Մեսրոպյան վարժարանն սկսեց գործել Ս. Խաչ եկեղեցու անհարմարավետ գավթում: Երկար ժամանակ այն մնաց գավառի միակ կրթօջախը, ուր հնարավոր էր ստանալ ժամանակի համար քիչ թե շատ ընդունելի կրթություն: 1838 թ. այնտեղ սովորում էր 70 աշակերտ: 1830–ականներին բացվեցին ևս մի քանի դպրոցներ, որոնցից, թերևս կարելի է առանձնացնել Կարծախի (1836 թ. հիմնադրված) և Արագովայի (բացվել է 1836 կամ 1837 թ.) դպրոցները:[585]

1860–ական թվականների սկզբին ձեռք առած մի քանի քայլերի շնորհիվ հաջողվում է որոշ չափով բարելավել Ախալքալաքի վարժարանի վիճակը: 1862 թ. սկզբներին Ախալքալաքի վիճակի առաջնորդ Ստեփանոս քահանա Դեմիրճօղլյանը նյութական օգնության խնդրանքով դիմում է մոսկվաբնակ ձեռներեց Հովհաննես Հովհաննջանյանին: Վերջինս, որ նշանավոր Հովհաննջանյանների (Օհանջանյան) ուսումնասեր ընտանիքի զավակ էր, համաձայնվում է վարժարանին տրամադրել տարեկան 150 ռուբ. գումար: 1862 թ. փետրվարին տեր Ստեփանոսին հղած նամակում նա գրում էր. «Ես միայն յոյս ունիմ, որ այդ վարժարանը Ձեր բազմաչխատ կառավարութեան և մեծարգոյ քաղաքացիների ազգասէր խնամակալու-

---

[584] Хачатрян Ж. К., Армянские народные пляски Джавахка, с. 4–6.

[585] Ախալքալաքի և Ախալցխայի առաջին դպրոցների, նրանց աշակերտական կազմի մասին տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3931, թ. 8–78:

թեան...ներքոյ կարողանայ յառաջացնել այն պտուղները, որոց մեծ կարօտութեամբ սպասում է ազգը»:[586] Ի պատասխան մի խումբ ախալքալաքցիների խնդրագրի, Մատթեոս Ա կաթողիկոսը 1863 թ. հոկտեմբերի 20–ի կոնդակով կարգադրում է Վրացա–իմերեթական թեմի առաջնորդ Մակար արքեպիսկոպոսին՝ Ախալքալաքում մոմա-վաճառութ յունից ստացված եկամուտը, որ նախատեսված էր Թիֆլիսի նշանավոր Ներսիսյան դպրոցի համար, պահել տեղում՝ Ախալքալաքի դպրոցի կարիքների համար:[587]

Այդուհանդերձ, ստացված միջոցները միայն մասնակիորեն են փակում վարժարանի ծախսերը, և դպրոցի վիճակը չարունակում է մնալ ծանր:

1860–70–ական թվականներին բացվեցին նոր դպրոցներ: 1864 թ. Ախալցխայում սկսեց գործել Գալֆեյան, 1866–ին՝ Վարդանյանց ազգային, 1868 թ. դեկտեմբերի 1–ին՝ Նոր Արշալույս Սաղաթելյան, 1870–ի մարտի 9–ին՝ Եղիսաբեթյան իգական, 1871 թ.՝ Գազազյանց վարժարանները: Եվս 7 վարժարաններ կային Ախալցխայի գյուղերում: 1871–ի փետրվարի 12–ին Ախալքալաքի Ս. Խաչ եկեղեցու գավթում բացվեց իգական առաջին վարժարանը՝ Սանդխտյան օրիորդաց դպրոցը:[588] 1873 թ. սկսեց գործել Բարալեթի արքունական դպրոցը՝ 30 աշակերտներով:[589]

Ախալքալաքի Մեսրոպյան վարժարանում հաշվվում էր 167 աշակերտ, 8 ուսուցիչ: Մուտք գործող մոտ 1200 ռուբ. գումարից 850 ռուբլին գոյանում էր Հ. Հովհաննջանյանի նվիրատվությունից և հանգանակվում բնակչությունից, իսկ 300 ռուբ.՝ ստացվում կարապետ արքեպիսկոպոսի կտակով նախատեսված միջոցներից: 1880 թ. ախալքալաքցիները խնդրում են կաթողիկոս Գևորգ Դ–ին՝ Ս. Փրկիչ եկեղեցու կալվածքների եկամտից իրենց դպրոցին ևս 1000 ռուբ. գումար հատկացնելու համար:[590] Սակայն Ախալցխայի հոգևոր կառավարության հարուցած խոչընդոտների պատճառով այդ խնդիրը բավական երկարաձգվում է:

---

[586] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3964, թ. 10–11:
[587] Նույն տեղում, թ. 29:
[588] Кавказский календарь на 1874 г., Т., 1873, с. 111–112.
[589] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3998, թ. 9–10:
[590] Նույն տեղում, գ. 3993, թ. 163–163ա:

Ծանր նյութական վիճակում էր Սանդխտյան իգական դպրոցը, որի միջոցներն ավելի համեստ էին՝ ընդամենը 500 ռուբ.: Գավառում ճանաչում ունեցող կրթական օջախներից էին Բուռնաշենի օրիորդաց վարժարանը՝ ընդամենը 150 ռուբ. միջոցներով, Գանձայի, Սաթխայի, Վաչիանի և Դիլիսկայի դպրոցները, որոնք ունեին 40–ից մինչև 120 աշակերտ:[591]

Գ) Ախալքալաքի գավառը 19-րդ դարի վերջին տասնամյակներին և 20-րդ դարի սկզբին: Ջավախքցիների մասնակցությունը արևմտահայ ազատագրական շարժմանը

Ժողովրդագրական տեղաշարժերը: *1880–ական թվականներին ինչպես ամբողջ Անդրկովկասի, այնպես էլ Ախալցխայի ու Ախալքալաքի գավառների ժողովրդագրական զարգացման առանձնահատկություններից մեկը քաղաքներում հայ ազգաբնակչության թվաքանակի չնչտակի աճն էր: Դա առաջին հերթին պայմանավորված էր չուկայական հարաբերությունների սաղմավորմամբ ու զարգացմամբ: Բազմաթիվ ձեռներեց հայ առևտրականներ, արհեստավորներ ավելի ու ավելի էին համախմբվում քաղաքներում: Այստեղ նրանց գործունեության համար բացվում էր լայն ասպարեզ: Այդ գործընթացը նկատելի էր հատկապես Թիֆլիսի, Ելիզավետպոլի և Բաքվի նահանգներում: «Թիֆլիսի նահանգի բոլոր քաղաքներում,– կարդում ենք «Կովկասյան օրացույցում»,– հայերը կազմում են դերակշիռ տարրը. Թիֆլիս քաղաքում բնակչության գրեթե կեսը հայեր են (45 %), մյուս կեսը բաժին է ընկնում վրացիներին (26 %), ռուսներին (24 %) և թաթարներին (5 %): Մնացած քաղաքներում իրենց թվաքանակով հայերը գերակշռում են վրացիներին: Ահա այսպես, Ախալցխայում հայերը 93 % են: Նույնիսկ զտարյուն վրացական երկրում, Թելավ և Սղնախ (Սիգնախ) քաղաքներում բնակիչները գրեթե բացառապես հայեր են՝ 73 և 89 %, այն դեպքում, երբ Թելավի գավառի գյուղերի 49103 բնակիչներից հայեր են ընդամենը*

[591] Մատենադարան, Կաթողիկոսական դիվ., թղթ. 91, վ. 150, թ. 1–6:

2869–ը, այսինքն՝ 6 %–ը, Սղնախի գավառի 74142 բնակչից՝ 5567-ը, այսինքն՝ 7,5 %–ը»:[592]

Թիֆլիսի նահանգի գյուղական բնակչության մեջ հայերը մեծամասնություն էին կազմում մի քանի գավառներում:

Ախալքալաքի գավառի տարածքն իր կազմավորումից հետո լուրջ փոփոխություններ չկրեց: Այն 19–րդ դարի վերջին տասնամյակներին կազմում էր 2392,86 քառ. վերստ (249255 դեսյատին) կամ 2723,12 քառ. կմ: Գավառը տրոհվում էր ոստիկանական երկու տեղամասի, որոնցից Հարավայինի կենտրոնը Բոգդանովկան էր, Հյուսիսայինինը՝ Բարալետը: Բոգդանովկայի տեղամասն ավելի ընդարձակ էր՝ 1491,55 քառ. վերստ կամ 1697,41 քառ. կմ, Բարալետինը՝ 901,31 քառ. վերստ կամ 1025,71 քառ. կմ:[593] *Յուրաքանչյուր տեղամասում կար հավասար 5–ական գյուղական համայնք: Սակայն տարածքով ավելի փոքր Բարալետի տեղամասն ավելի խիտ էր բնակեցված: Ամբողջ գավառի 110 գյուղերից 65–ը բաժին էր ընկնում Բարալետին, 45–ը՝ Բոգդանովկային:*[594]

Մինչև առաջին համաշխարհային պատերազմը, ըստ ազգությունների, ժողովրդագրական պատկերը հետևյալն էր.

Աղյուսակ 5

Տարեթվեր[595]	Հայ	Վրացի	Ռուս	Հույն	Հրեա	Սահմ.	Այլք	Ընդամենը
1886 թ.	46386	3735	6674	102	53	6824	14	63788
1894 թ.	49807	3714	7272	56	52	4962[596]	6 լեհ	65869
1897 թ.	48403	6322	4750	35	22	6827	910[597]	67269
1914 թ.	81014	6905[598]	7185	–	–	3036	19 լեհ	98159

[592] Кавказский календарь на 1882 г., Т., 1881, с. 312. Թիֆլիսի նահանգի բոլոր 6 քաղաքներում միասին (առանց Թիֆլիսի) հայերը կազմում էին բնակչության 79 %–ը (նույն տեղում, էջ 314–315):

[593] Մինչև 1913 թ. գավառի տարածքը մի փոքր ընդարձակվեց և հասավ 2407 քառ. վերստի (Кавказский календарь на 1913 г., Т., 1912, с. 212).

[594] Кавказский календарь на 1891 г., Т., 1890, с. 2–3. Ախալքալաքի գավառի 110 գյուղերի 10 գյուղական համայնքներն ըստ կենտրոնների և գյուղերի թվաքանակի բաշխված էին հետևյալ կերպ. Արագովա (13 գյուղ), Բարալետ (23), Վարևան (9), Վաչիան (11), Գորելովկա (8), Դիլիսկա (9), Կարծախ (10), Սաթխա (8), Խերթվիս (11), Հեշտիա (8):

[595] 1886 թ. տվյալները տե՛ս Ахалкалакский уезд тифлисской губерни, с. 18–19, 1894 թ.՝ Լալայան Ե., Երկեր, հ. 1, էջ 96, 1897 թ. մարդահամարի տվյալները՝ Кавказский календарь на 1907 г., Т., 1906, с. 129–130, 1914 թ.՝ Кавказский календарь на 1915 г., Т., 1914, с. 242–243.

[596] 4962 մահմեդականներից 4372–ը թուրքեր էին, 590–ը՝ քրդեր:

[597] 910 այլազգիների մեջ 810–ը քրդեր էին, 53–ը՝ լեհ, 17–ը՝ լիտվացի կամ լատիշ, 17–ը՝ գերմանացի, 9–ը՝ լեզգի և չեչեն, 3–ը՝ պարսիկ, 1–ը՝ օս:

[598] 6905 մահմեդականների մեջ մտցված են135 մահմեդական «վրաց.ները»:

Աղյուսակ 5–ի տվյալները բաղդատելով՝ ներկայացնենք ամբողջ բնակչության համեմատությամբ տարբեր ազգությունների տոկոսային հարաբերությունը.

Աղյուսակ 6

Տարեթվեր	Հայ	Վրացի	Ռուս	Հույն	Հրեա	Մահմ.	Այլք
1886 թ.	72,7%	5,8%	10,4%	0,1%	0,08%	10,7%	0,02%
1894 թ.	75,6%	5,6%	11%	0,08%	0,07%	7,5%	0,009%
1897 թ.	72%	9,3%	7%	0,05%	0,03%	10,1%	1,3%
1914 թ.	82,5%	7%	7,3%	–	–	3%	0,01%

Պարզորոշ երևում է, որ հայ բնակչությունը մշտապես պահպանել է թվական գերակշռություն: Շնորհիվ բարձր ծնելիության առաջին աշխարհամարտի նախօրյակին հայության հարաբերական կշիռը հասել է 82,5%–ի, իսկ մահմեդականներինը՝ մշտական արտագաղթի պատճառով, նվազել: Վրացի և ռուս ազգաբնակչության տոկոսային հարաբերությունը հիմականում մնացել է նույնը՝ տատանվելով մոտ 6%–ից 10%–ի սահմաններում: Վրացիների մոտ նկատելի աճ գրանցվել է 1894–97 թթ., նույն ժամանակ, ռուսների մոտ տեղի է ունեցել կտրուկ անկում: Այս երևույթը նկատել է Լինչը, երբ 1880–ականների վերջին այցելել է Ախալքալաք:[599]

Արդեն 1880–ական թվականներին հազար մարդուց ավելի բնակչություն ունեցող հայկական բնակավայրերի թիվը հասել էր 14–ի: 1885–ին խոշորագույն հայկական գյուղերից Կարծախն ուներ 1612, Հեչտիան՝ 1546, Սաթխան՝ 1374, Ալաստանը՝ 1298, Վաչիանը՝ 1276, Գումբուրդոն՝ 1121 բնակիչ և այլն:[600] *Մինչդեռ, խորթվիսից դեպի գավառի գյուղեր հայ բնակչության տևական արտագաղթի հետևանքով այս բերդաքաղաքը վերածվել էր հիմնականում սունների մահմեդականներով բնակեցված ավանի: Նույն ժամանակ այնտեղ ապրում էր ընդամենը 1314 մեսխեթցի թուրք, որոնք դեռ չարունակում էին պահպանել իրենց երբեմնի քրիստոնյա լինելու հիշողությունը: 1890 թ. գավառի գյուղերի կեսը՝ 55–ն ուներ մինչև 50 ծուխ*

[599] Линч Х. Ф. Б., Армения, т. 1, Т., 1910, с. 112.
[600] Кавказский календарь на 1886 г., Т., 1885, с. 118.

բնակիչ, 33–ը՝ 50–ից 100, 20–ը՝ 100–ից 200 և երկուսը՝ 200–ից ավելի ծուխ բնակիչ:[601]

1880–ական թվականների սկզբին սակավահողության պատճառով Զիֆթլիկ, Մոդիգյա և Խումրիս գյուղերի ողջ բնակչությունը՝ մոտ 130 ընտանիք և ռուս դուխոբորների գյուղերից 52 ընտանիք (435 մարդ), արտագաղթեց Նորանվաճ Կարսի մարզի տարածք:[602] Ախալքալաք քաղաքից 1–1,5 կմ արևմուտք, Քառասնաղբյուր գետակի ձախ ափին ընկած Զիֆթլիկի արտագաղթը դեպի Կարսի Մաղրա գյուղ, հրահրվեց իշխանությունների կողմից: Գյուղի տարածքն օգտագործվեց ռուսական զորամասի համար կայանատեղ հիմնելու համար: Շուտով կիսաքանդ բերդից ամբողջ կայազորը տեղափոխվեց այստեղ:

19–րդ դարի վերջին և 20–րդ դարի սկզբին Ախալքալաքն ավելի ու ավելի էր ձեռք բերում քաղաքի տեսք: Կենտրոնական փողոցում Ստեփանոս Անանիկյանի ջանքերով կառուցվեց ռուսական եկեղեցին: Բարեկարգվեց Ս. Խաչ եկեղեցու և նրա գավթում գործող հայկական դպրոցների շրջատարածքը: Ս. Խաչ եկեղեցու մոտ, կենտրոնական փողոցի հետ հատվող փողոցի արևմտյան ծայրամասում, միմյանց միացնող մի քանի փողոցների խաչմերուկում 1880 թ. հիմնվեց քաղաքային զբոսայգին, որն ախալքալաքցիների կողմից վաղաքչորեն ստացավ «Խաս բախչա» անվանումը: Զբոսայգին, որ ուներ 40 սաժեն (85,3 մ) երկարություն և 22 սաժեն, մեկ արշին (մոտ 47,6 մ) լայնություն, ցանկապատկվեց: Այնտեղ տնկվեցին ծառեր, կառուցվեց հովանոց: 1885 թ. Ախալքալաք այցելած ճանապարհորդներից մեկը գրում էր. «Քաղաքիս շինությունները քարուկիր են, շատերը՝ սրբատաշ քարով. և բաժանուած կանոնաւոր ընդարձակ փողոցներով»:[603]

1912 թ. Գասպար Շահպարոնյանի և նրա որդու՝ Վարդան Շահպարոնյանի նախաձեռնությամբ Ախալքալաքում, Թափարվան գետի վրա կառուցվեց առաջին հիդրոէլեկտրակայանը: Շահպարոնյանները կառուցեցին նաև ջրաղաց, մսի կոմբինատ, ձեթ–օճառի, կաշվի, փայտամշակման գործարաններ: Նրանց ջանքերով 1912 թ.

[601] Кавказский календарь на 1891 г., Т., 1890, с. 2–3.
[602] Вермишев Х. А., նշվ. աշխ., էջ 22–23:
[603] Ճանապարհորդական յիշատակարան, Արծագանք, 1885, 21 հուլիս, էջ 42–43:

չահագործման հանձնվեց ծխական դպրոցի նոր շենքը:[604] 1890 թ. Ախալքալաքին տրվեց 2–րդ կարգի քաղաքի կարգավիճակ, 1896 թ.՝ քաղաքային պարզ ինքնավարություն:

19–րդ դարի վերջին և 20–րդ դարի սկզբին Ախալքալաք քաղաքի բնակչության տեղաշարժը, թվաքանակը, ազգային կազմը դիտարկենք ներքոհիշյալ աղյուսակի տվյալներով.

Աղյուսակ 7

Տարեթվեր[605]	Հայ	Վրացի	Ռուս	Հույն	Հրեա	Մահմ.	Այլք	Ընդամենը
1886 թ.	4079	45	61	40	53	15	10	4303
1894 թ.	4290	48	55	29	52	22	6 (լեհ)	4502
1897 թ.	4136	129	703[606]	40	189	44	199	5440
1914 թ.[607]	6697	262 + 35 = 297[608]	284	–	–	35	6	7284

Աղյուսակ 7–ի տվյալներից կարելի է անել հետևյալ եզրակացությունները. նախ՝ ինչպես ամբողջ դավառում, այնպես էլ Ախալքալաք քաղաքում մյուս ազգերի նկատմամբ մշտապես պահպանվել է հայ բնակչության թվային գերակշռությունը: 1894 թ. հետո 30 տարում հայերի թիվն աճել է ավելի քան 50 %–ով: Սակայն նույն ժամանակում ռուսների թիվն ավելացել է 5 անգամ, վրացիներինը՝ ավելի քան 6 անգամ: Բանն այն է, որ այդ ժամանակահատվածում գավառի ղեկավար մարմիններում օրեցօր աճել է ռուս և վրացի պաշտոնյաների թիվը, այն դեպքում, երբ երկրամասը միշտ գերադանցապես հայաբնակ է եղել: Հայերի նկատմամբ կադրային խտրական քաղաքականությունը հստակ երևում է, երբ Կովկասյան օրա-

---

[604] Շիրինյան Ս. Խ., Ախալքալաքցիներ, Ե., 2000, էջ 107–108, Նազարյան Ս., «Ջավախք» շաբաթաթերթը, ԲԵՀ, 1992, թիվ 1, էջ 201: Վարդան Շահպարոնյանի կառուցած դպրոցի նոր շենքը կանգուն է առ այսօր: Այնտեղ խորհրդային իշխանության առաջին տարիներին գործել է տեղի հայկական դպրոցը: Այժմ շենքի մի մասը պատկանում է ռուսական դպրոցին, մյուսը՝ մշակույթի շրջանային տանը:

[605] Բերված տվյալների սկզբնաղբյուրները տե՛ս աղյուսակ 5–ում: Հայերի թվաքանակի մեջ մտցված են մոտ 30 ընտանիք հայ բոշաները, որոնք ապրում էին քաղաքի հյուսիսային մասում (տե՛ս Վանցեան Գ., Պատմական ակնարկ բոշաների անցեալից, Մուրճ, 1894, թիվ 7–8, էջ 1074):

[606] Կարծում ենք, որ 1897 թ. 703 ռուս բնակիչների մեջ մտցված են զինվորական քաղաքի սպայական կազմի ընտանիքների անդամները:

[607] 1914 թ. տվյալների մեջ հույների, հրեաների մասին թվերը բացակայում են: Կիսատ են նաև այլ ազգերի (Այլք), հետևաբար, նաև ամբողջ քաղաքի մասին տվյալները:

[608] 262 ուղղափառ վրացիների հետ հաշվարկված են նաև 35 մահմեդական «վրացիները»:

ցույցի ամենամյա հատորներում հետևում ենք պաշտոնյաների ազգային կազմի անվանացանկերին:

Հետաքրքրական է, որ Ախալքալաքի քաղաքային բյուջեն անհամեմատ լավ վիճակում էր, քան Թիֆլիսի նահանգի մյուս քաղաքներում: «Թիֆլիսի նահանգի բոլոր քաղաքները,– հաղորդում է Կովկասյան օրացույցը,– թաղված են պարտքերի մեջ, բացառությամբ Ախալքալաքի, որն ունի պահեստային կապիտալ 23 հազ. ռուբլի»:[609] *Սակայն այս փաստը չի վկայում քաղաքի բարգավաճ վիճակը: Վերոհիշյալ հանդամանքը հետևանք էր այն բանի, որ լինելով փոքր քաղաք, բնականաբար, ունենալով համեստ կարիքներ, հաճախ այն անտեսվել է իշխանությունների կողմից: Այնպես որ նրա բյուջեի բարվոք վիճակը թվացյալ էր:*

Դարավերջին գավառի ժողովրդագրական իրավիճակի վրա անդրադարձավ բնական մեծ աղետը: 1899 թ. դեկտեմբերի 19–ին տեղի ունեցավ ուժգին երկրաշարժ, որի էպիկենտրոնը գտնվում էր Մերենիա գյուղում: Առավելապես տուժեցին գավառի հյուսիսում ընկած մոտ 30 գյուղեր: Առանձին բնակավայրերում զոհերի թիվը կազմեց ամբողջ բնակչության 10 տոկոսը: Մերենիայում զոհվեց 86, Բեժանոյում՝ 48, Մեծ Սամսարում՝ 46, Փոքր Սամսարում՝ 27, Ագանայում՝ 14 մարդ: Ընդամենը 28 գյուղերում զոհերի թիվը հասավ 248–ի: Նույնքան բնակավայրերում եղած 2043 առանձնատներից, որոնք չնչին բացառությամբ կառուցված էին հողաշաղախով, քանդվեց 672–ը, այսինքն՝ մոտ մեկ երրորդը, 15140 անասունից սպանվեց 2357–ը: Վերոհիշյալ գյուղերում կիսականգուն մնացին հատուկենտ տներ: Այսպես, Իխտիլայում 72 տներից ավերվեց 69–ը, Փոքր Սամսարում՝ 54–ից 51–ը, Բեժանոյում 125–ից 117–ը, Բալխոյում՝ 48–ից 45–ը, Մերենիայում՝130–ից 117–ը, Դրկնայում՝ 21–ից 19–ը, Լոմատուրցխում՝ 26–ից 19–ը և այլն: Փոքրիկ Սիրգ գյուղում հողին հավասարվեցին բոլոր 10 տները:[610] *Մեծ վնասներ կրեցին գավառի եկեղեցիները:*

Բնական աղետն այնքան մեծ էր, որ նրա արձագանքները հասան մինչև Ռուսական կայսրության մայրաքաղաք Սանկտ Պետեր-

---

[609] Кавказский календарь на 1887 г., Т., 1886, с. 186.

[610] 1899 թ. երկրաշարժի հասցրած վնասների մասին ավելի մանրամասն տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 35, ց. 1, գ. 103, թ. 68: Փաստաթուղթը, որի տվյալների հավաստիությունը հաստատել է գավառապետը, ամբողջությամբ բերված է աշխատության հավելվածում:

բուրգ: Նիկոլայ II ցարը հանդես եկավ աղետյալներին օգնելու չրջաբերականով և իր անձնական միջոցներից հատկացումներ կատարեց տուժյալների ֆոնդին: Հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը Մայր Աթոռի միջոցներից մի պատկառելի գումար տրամադրեց աղետյալներին, պատվիրեց Վիրահայոց թեմի առաջնորդին՝ վիճակային միջոցներից ևս 1000 ռուբլի հատկացնել այդ նպատակին, ինչպես և բոլոր թեմերին հրահանգեց հանգանակություն սկսել:[611] *Բացի հայկական կազմակերպություններից, նկատելի օգնություն ցուցաբերեցին նաև համառուսական և համակովկասյան զանազան բարեգործական ընկերություններ:*

Հասարակական-մշակութային կյանքը: *1880-ական թվականներին Ախալքալաքի գավառի ներհամայնքային անդորրը խախտվեց հայության նկատմամբ վրաց ուղղափառ եկեղեցու նոր ոտնձգության պատճառով: 1883 թ. կարտլիկամ, Բավրա և Խուլգումո գյուղերի բնակչության ազգային-դավանաբանական պատկանելության չուրջ վեճերը կրկին բորբոքվեցին: Գյուղացիներն այս անգամ ևս բողոքեցին իրենց նկատմամբ արված ոտնձգությունների դեմ: Պետական մի քանի հանձնախումբ ուղարկվեց վերոհիշյալ գյուղերը: Կաշառքի, զանազան սպառնալիքների տակ որոշ մարդկանցից հաջողվեց իրենց՝ դավանանքով իբրև թե մինչև 1841 թ. ուղղափառ, ազգությամբ «վրացի» լինելու մասին «տեղեկություններ» կորզել: Սակայն գյուղացիների բացարձակ մեծամասնությունը հակահարված տվեց վրաց ազգայնականների նկրտումներին և կտրականապես մերժեց դավանափոխ ու ազգափոխ լինելու որևէ տարբերակ:*

1886 թ. մարդահամարի ժամանակ վերոհիշյալ գյուղերի բնակիչներին «վրացի» գրելու փորձ արեց նաև Ախալքալաքի գավառապետ Սումբատովը (Սումբատաշվիլի): «Սակայն,— ինչպես գրում է Ե. Լալայանը,— միմիայն մի տուն վախից վրացի է գրվել, մյուսներն ասել էին, թե հայ են»:[612] *Ստիպված՝ առժամանակ վրաց գործիչներն*

---

[611] Կոստանդյան է. Ա., Մկրտիչ Խրիմյան, Հասարակական-քաղաքական գործունեությունը, Ե., 2000, էջ 401:

[612] Լալայան Ե., Երկեր, հ. 1, էջ 87: Վելցիների մասին տե՛ս նույն տեղում, էջ 85–87: Վրաց պատմաբան Շ. Լոմսաձեն ափսոսանք է հայտնում, որ վրաց ազգությանն ու դավանանքին վելցիներին «վերադարձնելու» քայլերը, հաջողություն չեն ունեցել (ლომსაძე შ., ჯამცხე-ჯავახეთი, էջ 365)՝ առանց բացատրելու այդ «միջոցառման» անհաջողության պատճառը, այն է՝ այդ մարդկանց խորապես հայ լինելու հանգամանքը: Թեև խնդիրը շատ պարզ է, բայց վրաց քաղաքական գործիչներն ու գիտական շրջանակներն առ այսօր չեն հրաժարվել հայ և վրաց ժողովուրդների հարաբերությունները թունավորող այս անմիտ ու

այս հարցը մոռացության տվեցին՝ խնդիրը թողնելով գիտական շրջանակների «հետազոտությանը»:

1890–ական թվականների կեսերին Ախալքալաքի և Ծալկայի հոգևոր վիճակը տրոհվեց երկու մասի՝ Արևելյան և Արևմտյան: Առաջինի մեջ մտցվեց նաև Ծալկան: Ախալցխայի և Ծալկայի հետ 19–րդ դարավերջին Ախալցխայի հոգևոր վիճակի առաքելական և հայ–կաթոլիկական եկեղեցիների թիվն անցնում էր 100–ից: Եկեղեցիների մի մասը մնում էր խարխուլ վիճակում, ուստի շատ գյուղեր ձեռնամուխ էին եղել նորերի կառուցմանը:[613] Ախալքալաքի վիճակավոր առաջնորդներից 19–րդ դարի երկրորդ կեսին հայտնի էին Ստեփանոս ավագ քահանա Դեմիրճօղլյանը և Հովհաննես ավագ քահանա Քաջազնունին (Հայաստանի Հանրապետության առաջին վարչապետ Հովհաննես Քաջազնունու հայրը, որի անունը նույնությամբ ընդօրինակել էր որդին):[614]

Ախալցխայում և Ախալքալաքում հասարակական կյանքի որոշ աշխուժացում նկատվեց, երբ 1895 թ. ամռանը այնտեղ այցելեց Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը: Օսմանյան կայսրությունում սկսված կոտորածներից արևմտահայերին օգնելու, հայկական բարեփոխումների հարցը ռուսական պաշտոնյաների հետ քննարկելու համար Ռուսաստան այցելելուց հետո, էջմիածին տունդարձի ճանապարհին, նա եղավ Բորժոմում, այնտեղ հանդիպում ունեցավ մեծ իշխան Նիկոլայ Միխայլովիչի հետ: Ախալցխայում վեհափառին դիմավորեցին մեծ չուքով: Հանդիսավոր ընդունելություն կազմակերպվեց նաև Ախալքալաքում: Հայոց հայրապետը գիշերեց տեղի նահապետական ընտանիքներից մեկում՝ Հաջի Մարեի բազմանդամ գերդաստանի հարկի տակ:[615] Ամենուր Խրիմյանին ընդունում էին մեծ ոգևորությամբ: Գյուղերում նրան հանձնում էին նամակ–խնդրագրեր, որոնցում ներկայացվում էին ժողովրդի կյանքի

վտանգավոր թեմայի թմբկահարումից (տե՛ս «Հայ-վրաց գրական, պատմամշակութային հարցերը վրաց մամուլում (1988-1990)», էջ 43-52, 83-93:

[613] Մեսրոպ աբեղայ, Ախալքալաք, Արաքս, Ս. Պետերբուրգ, 1903, մայիս, էջ 434–440:

[614] 19–րդ դ. վերջին գավառի բոլոր հոգևորականների անվանացանկը տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3893, թ. 160–171:

[615] Կոստանդյան Է., նշվ. աշխ., էջ 377: Ռ. Տեր–Մինասյանի հուշագրությունից երևում է, որ այդ բազմանդամ ընտանիքը Օհանջանյանների (Հովհաննջանյան) գերդաստանն է, որոնց ընդարձակ առանձնատունը ճանաչված էր իբրև Ախալքալաքի լավագույն հյուրատեղի (Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. Ձ, էջ 329):

դժվարին պայմանները, բողոք էր հայտնվում քահանաների տգիտության առնչությամբ:[616]

Ախալքալաքի գավառի կրթամշակութային կյանքում 1880–ական թթ. տեղի ունեցան մի շարք նշանակալից իրադարձություններ: 1880 թ. սկզբին բացվեց ռուսական դպրոցը, 1889 թ.՝ բավական հարմարավետ շենքում՝ քաղաքային ուսումնարանը: Նոր դպրոցներ բացվեցին նաև մի շարք գյուղերում. 1881 թ.՝ Գանձայում, Կարծախում, Վաչիանում, Ագանայում, 1882 թ.՝ Դամալայում և Գոմում, 1883 թ.՝ Օլավերդում և Լոմատուրցխում, 1884 թ.՝ Ջամդուրայում, Խանդոյում, Ղաուրմայում և Ջիգրաշենում: Նրանց մի մասը մեկ ուսուցիչ և 20–30 աշակերտ ունեցող ճմեռային դպրոցներ էին: Ամբողջ գավառում, առանց Ախալքալաք քաղաքի դպրոցների, 80–ական թվականների վերջին 15 գյուղերում սովորում էր ավելի քան հազար աշակերտ, որից միայն 48–ն էին աղջիկներ:[617]

Հոգևոր–եկեղեցական ուսումնարաններին կից 1880 թ. մայիսի 24–ից սկսեց գործել հասարակական ընթերցարանը: Այն ստեղծվեց ընդհանրապես գավառի հասարակությանը և մասնավորապես՝ ուսումնարանների աշակերտներին անհրաժեշտ գրականությամբ ապահովելու նպատակով: Առաջին տարիներին չենքային պայմանների բացակայության պատճառով ընթերցարանի վարչությունը ստիպված եղավ եկեղեցուց հեռու վարձել երկու սենյակ (պահանջվող 300 ռուբ. գումարից 80 ռուբին տրվում էր սենյակների վարձակալմանը):

1885 թ. ընթերցարանի վարչությունը խնդրագրով դիմեց Վրաստանի և Իմերեթիայի թեմի առաջնորդ Արիստակես եպիսկոպոսին՝ Ս. Խաչ եկեղեցու գավթի հյուսիսարևմտյան մասում՝ արևմուտքից Դեմիրճօղլյանների տան, հյուսիսից՝ Ջրկիրների փողոցի հարևանության համար, ուսումնարանի կառուցվելիք նոր շենքի հետ ընթերցարանի համար 21 սաժեն տարածքով երկու սենյականոց մասնաբաժին կառուցելու թույլտվություն ստանալու համար: Այդ նպատակի համար բնակչությունը հանգանակեց որոշակի գումար, իսկ «...շինության համար հարկավորված քարը հանձնառու եղավ նվիրել տոհմա-

---

[616] Կոստանդյան Է., նույն տեղում:

[617] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3999, թ. 9–11, հմմտ.՝ Լալայան Ե., Երկեր, հ. 1, էջ 127: Ճմեռային դպրոցները գործում էին 5–6 ամիս ժամանակով: Աշակերտներին սովորեցնում էին միայն տարրական գիտելիքներ: Որպես կանոն, ուսուցիչների մի մասը տեղի քահանաներն էին և աշխատում էին անվճար:

կան պատվավոր քաղաքացի մեծապատիվ Հովհաննես Տեր Կիրակոսյան»:[618]

Սակայն ինչպես այս, այնպես էլ Ախալքալաքի բնակիչ Հակոբ Դարբինյանի կողմից երկսեռ ուսումնարանի շենքի վերանորոգման գործը, որն իրականացվելու էր 1884 թ. ընթացքում, առժամանակ հետաձգվեց: 1885 թ. իշխանությունները, ի թիվս հայկական այլ դպրոցների, փակեցին նաև Ախալցխայի ու Ախալքալաքի ուսումնարանները, որոնք վերաբացվեցին միայն 1886 թ. սեպտեմբերին:[619] *1890–ական թվականներին Ս. Խաչ եկեղեցու նյութական վիճակը որոշ չափով բարելավվեց: 1893 թ. դրությամբ եկեղեցին Ախալքալաք քաղաքում ուներ 20 կրպակ, որոնց մեծ մասը տրվում էր վարձով, իսկ ստացված եկամուտն օգտագործվում դպրոցների և ընթերցարանի շենքային պայմանները բարելավելու, աշակերտներին կրթաթոշակ տալու և այլ նպատակների համար:*

Ինչևէ, նույնիսկ նման նյութական պայմաններում և ընդհանուր առմամբ ցածր կրթական մակարդակի պարագայում այս դպրոցները մեծ դեր ունեցան գավառահայության ուսումնառության համար: Ախալքալաքի ծխական դպրոցում դասավանդեցին պատմաբան Ե. Գեղամյանցը, ազգագրագետ Ե. Լալայանը, «Մուրճի» խմբագիր Ավետիք Արասխանյանը, ուսանեցին Դ. Դեմիրճյանը, Վ. Տերյանը,[620] *ապագա քաղաքական գործիչներ Հ. Օհանջանյանը, Ռ. Տեր–Մինասյանը, Ռ. Դարբինյանը և ուրիշներ:*

Հարգելով 28 ախալքալաքցիների խնդրանքը՝ 1890 թ. հունվարի 21–ին Կովկասի «Հայոց բարեգործական ընկերության» խորհուրդը թույլատրեց մասնաճյուղ բացել Ախալքալաքում: Խորեն ավագ քահանա Բարսեղյանի նախագահությամբ անցկացված մասնաճյուղի հիմնադիր ժողովն ընտրեց վարչություն՝ Աբրահամ Երիցփոխյան (նախագահ), Ջալալ Տեր–Գրիգորյան (գործավար) և Հարություն Հարությունյան կազմով: Գործադիր անդամների թիվը 23–ից հասավ 60–ի: Մասնաճյուղն ավելի եռանդուն աշխատանք ծավալեց, երբ Ջ. Տեր–Գրիգորյանը դարձավ մասնաճյուղի փոխտնօրեն, ապա՝ տնօրեն: Կազմակերպությունը օգնություն տրամադրեց դպրոցնե-

---

[618] Նույն տեղում, գ. 3993, թ. 128–129:
[619] Նույն տեղում, գ. 4002, թ. 54–62:
[620] Ախալքալաքում Վ. Տերյանի ուսումնառության մասին տե՛ս «Վահան Տերյանը ժամանակակիցների հուշերում», Ե., 1964, էջ 12–13, 117–118, 184:

րին, աղքատներին ու հիվանդներին: Աղքատների ու ծնողազուրկ երեխաների համար արհեստանոց բացելու փորձեր արվեցին: Սակայն իշխանությունները արհեստանոցի բացման արտոնություն չտվեցին:[621] Բարեգործականի Ախալցխայի ու Ախալքալաքի մասնաճյուղերը մեծ ու չնորհակալ աշխատանք կատարեցին հատկապես 1895–1896 թթ.՝ կոտորածներից խույս տված արևմտահայ գաղթականներին նյութական օգնություն ցուցաբերելու և նրանց ապաստան տալու գործում:

19–րդ դարի վերջին տեղացի և արևմտահայ գաղթականների ազգային լավագույն ավանդույթների համադրմամբ Ջավախքում ավարտվեց ինքնատիպ մշակույթի ձևավորման գործընթացը: Այն նկատվեց հատկապես պարարվեստի[622] և աշուղական երգարվեստի մեջ: 1830 թ. Էրզրումի գյուղերից գաղթած ընտանիքների ծոցից դուրս եկան Ջավախքի աշուղների նոր սերնդի առաջին ներկայացուցիչները՝ Մաթինը և Սուխանին: Շուտով սկսեցին ստեղծագործել աշուղներ Սիային (Ղազար Կարապետյան, ծնված Կարծախ գյուղում), Թիֆլիլին (Եղո Մանուկյան, գ. Սուլդա), Ֆիրարդին (Մարգար Պապոյան, գ. Դադեչ) և ուրիշներ:[623] Ծագումով Ջավախքցի աշուղների մեջ Ջիվանին (1846–1909, Սերոբ Լևոնյան, գ. Կարծախ) դարձավ հայ երաժշտական արվեստի խոշորագույն դեմքերից մեկը: Նա թողեց հարուստ ստեղծագործական ժառանգություն՝ ավելի քան 800 երգեր ու հարյուրավոր բանաստեղծություններ: Մեծ աշուղն իր գործերում հատուկ տեղ հատկացրեց հայրենի Ջավախքին:

19–րդ դարի վերջից, ավելի բուռն կերպով՝ 20–րդ դարի սկզբից Ախալքալաքում և նրա սահմաններից դուրս սկսեցին գործել Ջավախքցի գրական–մշակութային կյանքի բազմաթիվ նշանավոր դեմքեր՝ գրողներ Արշակ Մադոյանը (Սեյլան), Դերենիկ Դեմիրճյանը, Վարդան Շահպարոնյանը, Ղազար Տեր–Գրիգորյանը (Ջավախեցի), ավելի ուշ՝ վերջինիս երբայր Վահան Տերյանը, հրապարակախոսներ Բագրատ Պիճիկյանը, Պողոս Աբելյանը, պատմաբան Եղիշե

---

[621] Երեսնամեակ հայոց բարեգործական ընկերութեան Կովկասում. 1881–1911, կազմեց Լեո, Թ., 1911, էջ 196:

[622] Տե՛ս Хачатрян Ж. К., Армянские народные пляски Джавахка, автореферат диссертации на соискание ученой степени канд. ист. наук, Е., 1971.

[623] Տե՛ս Քէշիշեան Զ., Ջաւախքի աշուղները, Հայրենի Ջաւախք, ժողովածու, էջ 193–198:

(Հովակիմ) Գեղամյանցը, ծագումով արցախցի Ջալալ Տեր–Գրիգորյանը (Սալլյումյան), ազգագրագետ Երվանդ Լալայանը և ուրիշներ:

Սեյլանը, ազգային–հասարակական գործունեությանը զուգընթաց, ստեղծեց բազմաթիվ գրական–գեղարվեստական և գիտական գործեր, Արևմտյան Հայաստանին և հայրենի Ջավախքին նվիրված պատմագիտական երկեր:

1895 և 1901 թթ. Ջավախք այցելեց հայ մեծանուն բանաստեղծ Հովհաննես Թումանյանը: Ջավախքի մտավորականներ Ջալալ Տեր–Գրիգորյանի, Գրիգոր Վանցյանի, Սեդրակ Աղաբալյանի, Վարդան Շահպարոնյանի, Ղազար Ջավախեցու և այլոց ուղեկցությամբ նա եղավ Ախալքալաքում, Թմկաբերդում, Փարվանայում, մի շարք գյուղերում, շրջեց Թափարվան և Քառասնաղբյուր գետակների ձորերում, Տավշան թափա ծաղկավետ բլրակի շրջակայքում: Ախալքալաքում կազմակերպվեց մեծ ընդունելություն: Ջավախքյան այցելությունների[621] արդյունքում Հովհ. Թումանյանը գրեց իր նշանավոր «Թմկաբերդի առումը» պոեմը և «Փարվանա» լեգենդը: Ամենայն հայոց բանաստեղծը, որ Թիֆլիսից քաջածանոթ էր Ջավախքցի բազմաթիվ մտավորականների, այս այցելություններից հետո ավելի կապվեց այդ երկրամասի, իր խոսքերով «Բիբլիական եդեմի» գրական շրջանակների հետ, մեծ օգնություն ցուցաբերեց երիտասարդ գրողներին:

Ախալքալաքում թատերական արվեստի զարգացման գործում կարևոր դեր ունեցավ Սանդխտյան օրիորդաց վարժարանը: 1890–ական թվականներին կառուցված նրա նոր ու ընդարձակ սրահում բեմադրվեցին բազմաթիվ ներկայացումներ: Դրանցից ստացված եկամտի զգալի մասը նպատակաուղղվեց բարեգործական նպատակների:

Ջավախքը և հայ ազգային–ազատագրական շարժումները: Բեռլինի վեհաժողովից հետո հայ ազգային–քաղաքական և հասարակական կյանքը նկատելի վերելք է ապրում Ախալքալաքի գավառում: Արևմտահայության նկատմամբ Ջավախքի հայության սրտացավ վերաբերմունքը դրսևորվում է 1879 թ., երբ սկսվում է Վանի սովյալներին օգնություն ցուցաբերելու համահայկական շարժու-

[621] Թումանյանի ջավախքյան այցելությունների մասին տե՛ս «Թումանյանը ժամանակակիցների հուշերում», Ե., 1969, էջ 377, 401–404, 417–436:

մը:[625] 1890–ական թվականներին Ջ. Տեր–Գրիգորյանի և Պ. Աբելյանի ջանքերով ստեղծվում է ազատագրական խմբակ:[626] Այստեղ այդ ժամանակ իրենց գործունեությունն է ծավալում Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությունը, իսկ 20–րդ դարասկզբին՝ սոցիալիստ–հեղափոխականները՝ էսէռները: Դաշնակցության համար Ջավախքում համակիրներ գտնելու հենքը ազգային խնդիրներն էին, իսկ էսէռների համար՝ գյուղացիությանը հուզող հողային հիմնահարցերը:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից երևում է, որ Արևմտյան Հայաստանի ազատագրության գաղափարները ջերմ արձագանք են գտել ախալքալաքցիների շրջանում, որոնց զգալի մասը, լինելով ծագումով արևմտահայեր, շարունակում էր պահպանել հոգևոր կապը իրենց նախկին հայրենիքի՝ Էրզրումի նահանգի հետ: Ըստ Ախալքալաքի գավառապետի կազմած մի զեկուցագրի՝ արդեն 1891 թ. հունվարին Ջավախքում շրջում էին երկու հեղափոխական քարոզիչներ, որոնք կոչեր էին անում զորավիգ լինել թուրքահպատակ հայրենակիցների ազատագրական պայքարին՝ կամ մասնակցել նրանց օգտին կատարվող դրամահավաքին կամ զենքը ձեռքին միանալ արևմտահայերի ապստամբական գործողություններին: Այդ գործիչներին հաջողվել է հավաքագրել կամավորներ՝ Արևմտյան Հայաստան անցնելու և այնտեղ ազատագրական պայքար կազմակերպելու նպատակով: Ըստ գավառապետի՝ նրանց այդօրինակ հաջողության պատճառն այն էր, որ գավառում բնակվող հայության, հատկապես քաղաքաբնակների շրջանում մեծ թիվ են կազմել հայկական թագավորության վերականգնման մասին երազող անձինք:[627]

Քարոզիչներին հայտնաբերելու ուղղությամբ Բոգդանովկայի պրիստավ Մ. Ճավճավաձեի փորձերն անցել են ապարդյուն: Բնակչության աջակցությամբ, հատկապես Փոքր Գոնդուրայի բնակիչ Արտաշես Վարդանյանցի ուղեկցությամբ նրանց հաջողվել է անցնել հարևան Ալեքսանդրապոլի գավառ: Ձերբակալվել են «խռովարարներին» աջակցած մի խումբ գործիչներ՝ քահանա Տեր Ստեփան Արվան-

---

[625] Մշակ, 1880, թիվ 10, 26, 31, 35, 59 և այլն:

[626] Ախալքալաքի գավառագիտական թանգարան, գործ 3674, թ. 1–10: Ախալքալաքում հասարակական–քաղաքական կյանքի աշխուժացմանը մեծապես նպաստել է ժամանակի մամուլը, հատկապես «Մշակը», «Տարազը» և այլն (տե՛ս Մշակ, 1875, թիվ 5, 1880, թիվ 25, Տարազ, Թիֆլիս,1901, թիվ 19):

[627] Խուդինեան Գ., Հայ յեղափոխական դաշնակցութեան ծնունդը, Ե., 2000, էջ 116:

յանը, նրա փեսա Շահբազյանը, բժիշկ Արշակը, Դադեչ գյուղի բնակիչներ բժիշկ Դալի քեչիշ Կարսլյանը և քահանա Տեր Կարապետը: Հատկապես մեծ ակտիվություն են հանդես բերել Տեր Ստեփանի որդին՝ նոտարիուս Արվանյանը, Վաչիանի դպրոցի ուսուցիչ Հմայակ Աղեկյանը և Ախալքալաք քաղաքի բնակիչ, գավառում հայտնի հասարակական – քաղաքական գործիչ, լրագրող, Դիլիսկայի համայնքի նախկին գրագիր Բագրատ Պիճիկյանը: Իշխանությունների համոզմամբ վերոհիշյալ մարդիկ հայկական գաղտնի կոմիտեի անդամներ են և գավառում ստեղծել են այդ կազմակերպության մասնաճյուղ: Ուստի, ըստ ոստիկանության, անհրաժեշտ է նրանց նկատմամբ գործադրել պատժամիջոցներ՝ գավառից արտաքսել Հ. Աղեկյանին և Բ. Պիճիկյանին, հեղափոխականների հետ չփվող, նրանց գործունեության մասին իշխանություններին տեղեկություններ հաղորդելուց հրաժարվող մարդկանց նկատմամբ սահմանել մեծ չափերի տուգանքներ, ինչպես նաև պետական քարոզչություն ծավալել՝ ախալքալաքցիներին «չափից դուրս հայրենասիրությունը» զսպելու համար: Գավառապետի համար հատկապես աններելի էր թվում նոտարիուս Արվանովի արարքը, որը, «կրելով ռուսական չինովնիկի գլխարկ՝ ռուսական կառավարության տեսակետներին դեմ քայլեր է արել...».[628]

Ախալքալաքի գավառում ցարական իշխանությունները չկարողացան արմատախիլ անել նորաստեղծ դաշնակցական կազմակերպությունը: Պատահական չէ, որ չուտով Ջավախքը տվեց այդ կուսակցության բազմաթիվ հայանի դեմքեր: Սովորական երևույթ դարձավ ընտանիքի անդամներով այդ կուսակցությանը զինվորագրվելը: Այդպիսի ընտանիքներ դարձան Հովհաննջանյանները (Օհանջանյաններ), Տեր–Մինասյանները, Իգիթյանները (Իգիթխանյաններ, Քաջազնունիներ): Օհանջանյանների բազմանդամ ընտանիքի անդամներից Համազասպը՝ Համոն (ծնվել է Ախալքալաք քաղաքում 1873 թ.) չուտով ձեռք բերեց մեծ ճանաչում, դարձավ կուսակցության ղեկավար գործիչներից մեկը: Նրա եղբայրներից Արմենը, որը մեծ համբավ էր վաստակել ռուս հեղափոխական գործիչների շրջանում, զոհվեց իր ժողովրդի ազատագրության համար մղվող պայքարում: Քույրերից Սաթենիկը վաստակեց սիրված կին հեղափոխական գործչի անուն: Նա հանդես եկավ Ախալքալաքում իշխանությունների

[628] Նույն տեղում, էջ 116–117:

կողմից հետապնդվող դաշնակցական գործիչ Ջալալ Տեր–Գրիգորյանի և նրա ընկերների պաշտպանությամբ:[629]

Դաշնակցությունը Ախալցխայում և Ախալքալաքում ուժեղացավ հատկապես 20–րդ դարասկզբին: Կատարված հանգանակությունների հաշվին, որոնց մեծ մասը նպատակաուղղված էր արևմտահայ զինական խմբերի կազմակերպմանն ու գործունեության ֆինանսավորմանը, տեղական գործիչների ձեռքին հայտնվեցին դրամական զգալի միջոցներ: Այսպես, 1904 թ. Ախալցխա–Ախալքալաքի համատեղ կազմակերպության տրամադրության տակ կար 32 հազ. ֆրանկ գումար, այն դեպքում, երբ Կիլիկիո պատասխանատու մարմինն ուներ 16 հազ., Ամերիկան՝ 15 հազ., Բաքուն՝ 12,5 հազ., Թիֆլիսը, Գանձակը և Շուշին միասին՝ 38,5 հազ. ֆրանկ: Բացի այդ, նույն թվականին հիմնականում «Փոթորիկ» գործողության համար, Ախալցխայից և Ախալքալաքից սպասվում էր ևս 10 հազ. ֆրանկ գումար:[630]

Ախալքալաքցիների և սահմանից այն կողմ ապրող նրանց արևմտահայ եղբայրների հետ օրեցօր կապերն ամրապնդվեցին: Ախալցխայի և Ախալքալաքի հայության հոգևոր կապը արևմտահայության հետ արտահայտվում էր նաև գործնական քայլերով: Արդեն 90–ական թվականների սկզբից բազմաթիվ ախալքալաքցիներ ու ախալցխացիներ, անմասն չմնալով այդ ժամանակ հատկապես երիտասարդությանը համակած ոգևորությունից, միանում էին ամենուր կազմակերպվող զինական խմբերին և անցնում Արևմտյան Հայաստան, մասնակցում թուրքական բռնատիրության դեմ մղվող ազատագրական կռիվներին: Պատմագիտական գրականության մեջ կա հսկայական քանակությամբ փաստագրական նյութ, որում ներկայացված է կովկասահայության գործուն մասնակցությունը արևմտահայ ազատամարտին: Սակայն քանի որ այդ հայդուկ–ազատամարտիկների կենսագրականներում միշտ չէ, որ կարելի է գտնել վկայություններ նրանց իսկական անուն–ազգանունների, ծննդյան վայ-

---

[629] Ախալքալաքի գավառագիտական թանգարան, գործ 3674, թ. 9–10: Հետագայում Սաթենիկը Պոլսում և Կիլիկիայում զբաղվեց բարեգործական աշխատանքներով, առաջին աշխարհամարտի օրերին այցելեց Արևմտյան Հայաստան՝ գաղթականներին օգնելու նպատակով և, վերջիններից վարակվելով համաճարակով, մահացավ: Սաթենիկի գործունեության մասին տե՛ս Ջէյթլեան Ս., Հայ կնոջ դերը հայ յեղափոխական շարժման մէջ, Լոս Անճըլըս, 1992, էջ 145–149:

[630] Վարանդեան Ս., Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Ե., 1992, էջ 364:

րերի մասին, չատ գործիչների ով և որտեղացի լինելը մնացել է անհայտ: Այդուհանդերձ, կցկտուր տեղեկությունների հիման վրա հնարավոր է դառնում վեր հանել ախալցխացի և ախալքալաքցի մի խումբ ֆիդայիների գործունեությունը:

Ինչպես հայտնի է, Արևմտյան Հայաստանում ազատագրական պայքար ծավալելուն ուղղված կովկասահայերի առաջին գործնական քայլը 1890 թ. Սարգիս Կուկունյանի արշավանքն էր: «Կային խումբի մեջ, –գրում է Մ. Վարանդյանը,– և ռուսաց բանակի հայ զինուորներ և մեկ հարիւրապետ, ախալցխացի Ստեփանը, որ կը սորվեցնէր պէտք եղածը կամաւորներուն»:[631]

1892 թ., երբ հայտնի ֆիդայապետ Արաբոն գալիս է Թիֆլիս մասնակցելու ՀՅԴ–ի առաջին ընդհանուր ժողովին, կովկասահայ չատ երիտասարդներ խնդրում են նրան իրենց վերցնել ջոկատի մեջ և անցնել Արևմտահայաստան: Արաբոն չատերին մերժում է և իր հետ 1893 թ. էրգիր է տանում միայն արևմտահայ կամավորականների խնուսցի Մելքոնին, Մշեցի Ավոյին ու Մարտոյին և ուրիշների: Այն ժամանակ արևմտահայ գործիչների չրջանում տիրում էր այն կարծիքը, որ թուրքական բռնատիրության դեմ ֆիդայական պայքարը գլխավորապես արևմտահայերի խնդիրն է: Բացառություն է արվում միայն ախալցխացիներ Վարդանի և Լևոնի հարցում, որոնք, թերևս, ընդգրկվում են խմբի մեջ իրենց արևմտահայ (էրզրումցի) լինելու պատճառով: Արաբոյի 16 հոգանոց ջոկատը, Տարոնի սահմանագլխին, Գյալիսորի (Առաչի) ձորում մարտի մեջ է մտնում քրդերի ու թուրքերի հետ: Բոլոր ֆիդայիները զոհվում են: Արաբոյի կողքին քաջի մահով ընկնում է ախալցխացի Վարդանը:[632]

Ախալցխացի առաջին հայդուկապետերից է դառնում Տիգրան Օքոնյանը Շամիլ մականունով (1868–1893), որի ջոկատը վրեժխնդիր է լինում Օլթիի մահմեդական հարստահարիչներից: Շուտով Շամիլը կարինում հիմնում է ՀՅԴ «Համարձակներ» խումբը:[633]

1890–ականների առաջին կեսին պատմական հայրենիքը թուրքական լծից ազատագրելու գաղափարները լայն տարածում են գտնում Ջավախքում: Մեսրոպյան վարժարանում, քաղաքային գրադարանում, թատերական ներկայացումների ժամանակ, ամենուր խո-

---

[631] Նույն տեղում, էջ 69:
[632] Նույն տեղում, էջ 120:
[633] Յուշամատեան Հ. Յ. Դաշնակցութեան, ալբոմ-ատլաս, հ. Ա, Լոս Անճելըս, 1992, էջ20:

սում էին հայ ազատամարտին նվիրվելու հրամայականի մասին: Թիֆլիսից ստացվող առաջադիմական մամուլի էջերում առաջ քաշված գաղափարները լայնորեն քննարկվում էին մտավորականության և երիտասարդության շրջանում: Այդ տեսակետից առանձնակի ակտիվություն է նկատվում Ախալքալաքի Մեսրոպյան ծխական դպրոցում:

Երկրի մասին խոսակցություններն ավելի հաճախակի են դառնում, երբ 1894 թ. թուրքական լաթաղանից մազապուրծ, առաջին արևմտահայ գաղթականները, յոթ-ութ 350 հոգի, հասնում են Ախալքալաք: Բնակչությունը ջերմորեն է ընդունում նրանց, տեղավորում քաղաքում և Գումբուրդո, Արագովա, Օրլա և այլ գյուղերում: Կովկասի հայոց բարեգործական ընկերության տեղի մասնաճյուղի ջանքերով կազմակերպվում է հանգանակություն:[634] Տղամարդկանց մի մասը, գոյությունը մի կերպ պահպանելու համար, չնչին վճարումով, իբրև քարհատներ, մասնակցում է զինվորական զորամասի շենքերի կառուցմանը: Ծխական դպրոցի մի խումբ դասընկերներ՝ 12–ամյա Մինասը (հետագայում ազատագրական պայքարի նշանավոր գործիչ Ռուբեն Տեր–Մինասյանը), Պարույրը, Բաղդիկը և ուրիշներ, այցելում են նրանց, ունկնդրում համիդեական զարհուրելի կոտորածների մասին նրանց պատմածները: Ռուբենի վրա հատկապես ծանր տպավորություն է թողնում չփումը քարհանքում աշխատող գաղթականներից մեկի հետ, որը, տեսնելով պատանիներին, հիշում է իր «լաճին»: Ռուբենի հարցին՝ թե «ի՞նչ է լաճը», տաճկահայը պատասխանում է. «Իմ զաւակը, որ քեզի նման խորոտ էր, եարապ, ի՞նչ եղաւ»:[635] Պատանիները, համաձայնության գալով Եկատերինոդարից հայրենի քաղաք վերադարձած 11–ամյա Արտաշեսի (Զիլինգարյան՝ հետագայի դաշնակցական գործիչ Ռուբեն Դարբինյանը) հետ, որոշում են «թուրքերից վրեժխնդիր լինելու և Հայաստանն ազատագրելու համար», մեկնել Երկիր: Նրանք ձեռք են բերում «զենք»՝ վառոդ, դանակներ, և իրենցից յուրաքանչյուրի համար ընտրելով նոր անուններ՝ Րաֆֆու վեպերի սիրված հերոսներից, ուղղվում են դեպի ռուս–թուրքական սահման:[636] Այս պատանեկան

---

[634] Դավթյան Ա. Խ., Ջավախք, էջ 42:

[635] Ռուբեն, նշվ. աշխ., հ. 2, էջ 333:

[636] Ռուբենի խոստովանությամբ հայդուկների մասին մեծերի պատմածներն այնքան էին կլանել իրեն, որ այդ տարիներին Ծալկայի և Աբուլ լեռան շրջանում գործող Ղաչաղ Նաբիի և Ալեի ավազակախմբերին ինքն ականայից ընկալում էր իբրև ժողովրդական

աղնիվ պոռթկումը, բնականաբար հաջողություն չի ունենում և կանխվում է: Սակայն այն, լինելով շատ բնութագրական տվյալ ժամանակաշրջանին, խորը հետք է թողնում ինչպես մասնակիցների, այնպես էլ գավառի պատանիների ու երիտասարդների հոգում: «Արշավանքի» մասին հյուսվում է հատուկ երգ, որը մեծ ոգևորությամբ երգում էին փոքրերը, իսկ կեսկատակ՝ նաև մեծերը:[637] *Այդ մասին հետագայում Ռ. Դարբինյանը հիշում էր. «Այդ օրերուն ոչ միայն Կովկասի հայ երիտասարդութիւնը, այլ եւ պատանիները ու 10–12 տարեկան երեխաները կերազէին «Հայաստան» երթալ: Թէեւ կապրեին Կովկասեան Հայաստանի հողին վրայ, բայց բոլորն ալ այն հաւատքն ունէին, որ բուն Հայաստանը ռուսական սահմանի այն կողմն էր, այսինքն՝ Թրքահայաստանը: Եւ ատոր համար դէպի հոն կը ձգտէին՝ թրքական արիւնոտ լուծէն տառապող իրենց եղբայրներուն եւ քոյրերուն օգնելու համար»:*[638] *Նույն Ռ. Դարբինյանի խոսքերով, այդ «ձախողված մանկական» միջադեպը կոչված էր լինելու Ռուբեն Տեր–Մինասյանի ապագա հեղափոխական բուռն գործունեության առաջին, բայց խորապես գիտակցված քայլը:*

Որքան էլ զավեշտական է, այս երեխայական խաղը մեծ իրարանցում է առաջացրել տեղական իշխանությունների շրջանում: Գործով սկսել է զբաղվել գավառապետը: Սաթենիկ Օհանջանյանի վկայությամբ դժվարությամբ է հաջողվել փրկել դպրոցը փակվելուց: Եղել են խուզարկություններ և հարցաքննություններ, այդ թվում իրենց՝ Օհանջանյանների տանը: Չհավատալով, որ միջադեպը պատահինների մտահղացման արդյունք է, այն կազմակերպելու մեջ ոստիկանությունը փորձել է մեղադրել դպրոցի տեսուչ Խաչատուր Դիլանյանին և ուսուցիչներին:

19–րդ դարի վերջին նորանոր ախալցխացիներ ու ախալքալաքցիներ զինվորագրվեցին արևմտահայ ազատագրական պայքարին: Ախալցխայից էրզիր անցածների թվում էին երիտասարդ դաշնակցականներ Շամիլը (Տիգրան Օքոնյան), Հաչի Լևոնը (Լևոն

հերոսների և նույնպես ուզում էր նմանվել նրանց, դառնալ հայդուկ (Ռուբէն, նշվ. աշխ., հ. Ա, էջ 110):

[637] Երգը կոչվում էր «Մէկ չետվէոթ բարութ, մէկ չաթլաղուզով, ոըսթոփին գրպանս Հայաստան կերթամ»: «Չաթուրգան առաջէն կերթա,– երգում էին ջավախքցիները,– շալվարին կոճակը կտրած..., ոըսթոփին գրպանն է դրած: Փախէք առաջէն դուք, անհաւատ թուրքեր, թէ որ դուրս հանէ, դուք կը կործանիք» (Ռուբէն, նշվ. աշխ., հ. Զ, էջ 330):

[638] Ռուբէն, նշվ. աշխ., հ. Ա, էջ 20:

Խզարճյան), Ուսուլ Խեչոն (Խաչատուր Տեր–Կարապետյան) և ուրիշներ, որոնց սպասվում էր բուռն ու փոթորկալից հեղափոխական գործունեությունը:

1897 թ. ամռանը Նիկոլ Դումանի, Վարդանի (Սարգիս Մեհրաբյան), Իշխան Արղությանի և այլ նշանավոր հայդուկապետերի կազմակերպած խանասորի արշավանքին մասնակցություն բերեցին մի խումբ ախալցխացիներ ու ախալքալաքցիներ: Նրանց թվում էին ախալցխացիները 23–ամյա հյուսն Ուսուլ Խեչոն, տասնապետ Ավետիս Շահբազյանը (կեղծանունը՝ Ավո, 27 տարեկան, մասնագիտությամբ՝ կոշկակար, Կարապետյան վարժարանի սան, զինավարժ, ծնողազուրկ, ամուրի), Բաբա Զիմանյանը (26 տարեկան, դերձակ, ամուրի, ռուսական բանակի նախկին զինվոր), Արշակ Մաթևոսյանը (24 տարեկան, կոշկակար, զինավարժ, ամուրի), Հովհաննես Քոսյանը (29 տարեկան, դերձակ, զինավարժ, ծնողազուրկ, ամուրի), Կարապետ Թորգոմյանը (39 տարեկան, զինավարժ, ծնողազուրկ, ամուրի), Ստեփան Գազազյանը (21 տարեկան, զինավարժ, ամուրի), Բաղդասար Թոփչյանը (կեղծանունը՝ Բաղդիկ, 22 տարեկան, հյուսն, զինավարժ, ամուրի), Լևոն Սանթոյանը (Մնտոյան, նաև՝ Հովակիմյան, 22 տարեկան, վաճառական, Կարապետյան վարժարանի 4–րդ դասարանից մեկնած ռուսական բանակ, այնտեղից մոսին հրացանով վախած Արևմտյան Հայաստան, ամուրի, սպանված Ատրպատականում 1902 թ. հայ դյուղացիներին քրդերից պաշտպանելու ժամանակ), Ասլան Ասլանյանը (20 տարեկան, Կարապետյան վարժարանի չրջանավարտ, զինավարժ, ծնողազուրկ), Սարգիս Ցաղանյանը (Եղանյան, Եղանյան, կեղծանունը՝ Սերգո, 20 տարեկան, արհեստավոր, զինավարժ, ամուրի) ախալքալաքցիներ Ստեփան Նազարեթյանը (կեղծանունը՝ Իվան, վաճառական, 24 տարեկան, ամուրի, զինավարժ), Սեդրակ Միհնայանը (26 տարեկան, արհեստավոր, ամուրի):[639] *Նրանք, որ ներկայացնում էին սոցիալական տարբեր խավեր, մեծ մասամբ ծնողազուրկ էին, ամուրի և տակավին երիտասարդ հասակում իրենց նետել էին ազատագրական պայքարի մեջ:*

Խանասորի արշավանքում, որի արդյունքում հայդուկները վրեժ լուծեցին 1896 թ. Վանի ինքնապաշտպանության մասնակիցնե-

[639] Ասո, Խանասորի արշաւախումբը, Պէյրութ, 1986, էջ 88, 100, 102–104, 108, 112, 117: Հմմտ.՝ Յուշամատեան..., էջ 58, 61:

րի նկատմամբ արյունալի կոտորած իրականացրած քրդական մազրիկ ցեղից. հերոսաբար զոհվեցին Ստ. Նազարեթյանն ու Ս. Յաղանյանը: «19 քաջեր ընկան հայրենի հողին վրա այդ կռիվներու ընթացքին,– գրում է խանասորցի զոհերի մասին Մ. Վարանդյանը,– 19 նահատակներ հայոց աշխարհի բոլոր կողմերէն...: Վանեցի, չատախցի, համադանցի, մշեցի, գողթնեցի, ղազախեցի, ղզլարցի, նոր–բայազէտցի, ալեքսանդրապոլցի, թիֆլիզեցի, ղարաբաղցի, ախալցխացի, ախալքալակցի և այլն»:[640]

20–րդ դարի սկզբին հայ ազատամարտին մասնակցած բազմաթիվ ախալքալաքցիների մէջ իր ծանրակչիռ գործունեութեամբ առանձնանում է տակավին երիտասարդ Ռուբեն Տեր–Մինասյանը: Գևորգյան ճեմարանն ավարտելուց հետո նա 1902 թ. Թիֆլիսում ներկայանում է իր հայրենակից, ավագ եղբոր՝ Հարությունի մանկական ընկեր, արդեն ճանաչված դաշնակցական գործիչ Համո Օհանջանյանին և նրա խորհրդով կուսակցական աշխատանքի անցնում Բաթումում: Ավելի քան 50 տոկոս հայ բնակչութիւն ունեցող այս քաղաքում մեծ թիվ էին կազմում այնտեղ տեղափոխված ախալքալաքցիները: Իր համերկրացիներից մի քանիսի հետ Ռուբենին է վստահվում արևմտահայ զինական խմբերի համար միջոցներ հայթայթելու պատասխանատու գործը: Երկու տարի անց Ռուբենը հեղափոխական գործունեութիւնը շարունակում է Կարսում, ուր տեղափոխվում է նրանց բազմանդամ ընտանիքը: Հեղափոխական այս «հնոցում»՝ Ռ. Տեր–Մինասյանն ընկերակցում է հայտնի գործիչ Սերգեյին՝ Արամ Մանուկյանին:

Արամի ու Ռուբենի ջանքերի շնորհով հաջողվում է ուժեղացնել դաշնակցութեյան Կարսի կենտրոնական կոմիտեն՝ նրա մէջ ընդգրկելով առավելապես արևմտահայ ծագում ունեցող մարդկանց: «Այս պարագան պատճառ էր, որ Կ. Կոմիտէն ընդհանրապես բազկանար տեղացիներէ կամ ախալքալաքցիներէ եւ ալեքսանդրապոլցիներէ, որոնք ծանօթ էին իրենց եւ միեւնոյն ժողովուրդն էին՝ Բարձր Հայքէն ծնած: Այս հանգամանքը Կ. Կոմիտէի նկարագիրը կը դարձներ յարատեւ եւ աւանդապաշտ»:[641]

Կարսի կոմիտեի անդամ է դառնում նաև Ռուբենի կրտսեր եղբայր Երվանդը, իսկ ավագ եղբայր Հարությունը, որ անկուսակցա-

[640] Վարանդեան Մ., նշվ. աշխ., էջ 156:
[641] Ռուբէն, նշվ. աշխ., հ. Ա, էջ 136:

կան էր և գործարար մարդ, կուսակցությանն օգնում է նյութական միջոցներով: 1904 թ. գարնանը Նիկոլ Դումանի հետ Ռուբենին վիճակվում է մեկնել Պարսկաստան, իսկ ամռանն անցնել Արևմտյան Հայաստան:[642]

Շուտով հայ ֆիդայիների մեջ մեծ ճանաչում է ձեռք բերում ախալցխացի Արտաշես Սուջյանը, որը ստանձնում է ինչպես դեպի էրգիր զենքի առաքման գործը, այնպես էլ իր նպաստը բերում Վասպուրականում և Դուրան-Բարձրավանդակում հայդուկային խմբերի կազմավորմանը:

1903 թ. սուլթանական կառավարության կողմից ազատատենչ Սասունի նկատմամբ հսկողության սաստկացումը ստիպում է կովկասահայ չատ գործիչների զինական ջոկատներ ուղարկել Երկիր: Դրանցից հաջողությամբ Սասուն է հասնում Թորգոմի (Թուման Թումյանի) 23 հոգանոց «Մրրիկ» խումբը: Այդ փառահեղ անցումը մեծ ոգևորություն է առաջացնում սասունցիների շրջանում: Ջոկատում նշանավոր Քեռու և Տուրբախի կողքին էին ախալցխացի Արտաշեսը և ախալքալաքցի Նիկոլը (Ջավախեցի Նիկոլ):[643] *Առաջինը հետագայում զոհվեց Բիթլիսի շրջակայքում, իսկ Նիկոլը կյանքն անցկացրեց ֆիդայական կռիվներում ու բանտերում:*

Հայդուկային խմբերից ոչ բոլորին էր հաջողվում անկորուստ հասնել Սասուն: Ավելին, եղան դեպքեր, երբ ծանր մարտերի մեջ մտնելով թուրքական ու քրդական զորքերի, երբեմն էլ վերջիններիս աջակցող ռուսական սահմանապահ ջոկատների հետ, հայդուկները տվեցին ցավալի կորուստներ: Այդպիսի ջոկատներիից մեկը, որում ըստ տարբեր տվյալների հաշվվում էր մինչև 150 հեծյալ ու հետիոտն հայդուկ, խանի ու Նևրուզի հրամանատարությամբ 1903 թ. Կարսի մարզից մտնում է թուրքական սահմանը և Բասենի Դելի-Բաբա, Գոմաճոր և Յուզվերան գյուղերի շրջանում շրջափակվում թուրքական գերակշիռ զորքերի կողմից: Թշնամին Նևրուզի հետևակայինների վրա թնդանոթային և հրացանային կատաղի կրակ է տեղում: «Ջաւախցի Շէկ Համոն, որ ռուս բանակի մէջ երեք թել էր

---

[642] Շուտով Երկրում Ռուբենը դառնում է Վասպուրականի և Մուշ-Սասունի դաշնակցական ազդեցիկ գործիչներից մեկը, տեղերում ամրապնդում կուսակցական մարմինները կամ հիմնում նորերը, բազմաթիվ ճանաչված ֆիդայապետերի հետ մասնակցում հայդուկային մի շարք կռիվների, այդ թվում Սուլուխի կռվին (1907 թ. մայիսի 27), որի ժամանակ զոհվում է Գևորգ Չաուշը:

[643] Ռուբէն, նշվ. աշխ., Ա, էջ 147:

վաստակած եւ այժմս խումբի աչքը անոր վրան էր», ոգևորում է ընկերներին՝ կոչ անելով՝ չվհատվել, դիրքեր փորել և պատսպարվել: Հայդուկների դիրքերի թնդանոթային երկարատև ռմբակոծությունից հետո, կարծելով, թե բոլորը զոհվել են, թուրքերը երեք չարաստյունով անցնում են գրոհի: Երբ մինչև ֆիդայիները ասկյարներին մնում է 200 քայլ, հնչում է Համոյի հրամանը, և սկսվում է ուժեղ հրաձգություն: Անակնկալի եկած թուրք զինվորները, տալով մեծ կորուստներ, նահանջում են: Ոգևորված կամավորականներից ոմանք առաջարկում են անցնել հակագրոհի: Բայց Համոն արգելում է և փոխարենն առաջարկում միասին երգել «Դե զարկե՛ք, զարկե՛ք...» հանրահայտ ֆիդայական երգը:

Կառավարական զորքերը, նոր համալրում ստանալով, հակառակ ֆիդայիների սպասումներին, հաջորդ օրն անցնում են ընդհանուր գրոհի: Խանի հեծյալները, որ կտրվել էին Նևրուզի հետևակայիններից, թեև կարող էին հեռանալ և փրկվել, չեն լքում մարտադաշտը: Շրջապատման մեջ, արյունալի կռվում չատերի հետ զոհվում են արշավանքի ղեկավարները, այդ թվում՝ ախալքալաքցի Շեկ Համոն: Նիկոլ Դումանին Մխչոնց Մարգարի, ինչպես և հրաշքով փրկված այլ ընկերների պատմածների համաձայն՝ Շեկ Համոն եղել է ամենախիզախ ու երկար կռվողներից մեկը: «Ան եղած էր ոչ միայն քաջ, այլեւ գիտակցող իրենց վիճակին եւ անվեհեր կերպով»:[644] Այս մարտում թշնամին կորցնում է 800 զինվոր:

Ծանր վիրավորված 4–5 կամավորականների թվում գերի են ընկնում Թորգոմի «Մրրիկ» խմբից մեծ համբավ վաստակած Ջավախեցի Նիկոլը և ախալցխացի Ուսուլ Խեչոն: Նրանց թուրքական իշխանությունները տանում են Էրզրումի բանտը: Բարեբախտաբար, երկուսին էլ հաջողվում է ազատվել բանտից և չարունակել հեղափոխական պայքարը: Նրանք կրկին միանում են զինատար և զինական խմբերին, հետագայում՝ առաջին աշխարհամարտի ժամանակ մտնում հայ կամավորական ջոկատների մեջ:[645]

---

[644] Ռուբէն, նշվ. աշխ., հ. Ա, էջ 172–173:

[645] Նիկոլը, ըստ Ռուբենի, որ անցել էր ազատամարտի փառահեղ ուղի, շատ դաժան կյանք ունեցավ և մահացավ անօգնական վիճակում: Ուսուլ Խեչոյին (նաև Ուսուլ Խաչո: «Ուսուլ» Կարնո բարբառով նշանակում է հանդարտ, հավանաբար նրան այդպես էին անվանում ամենադժվարին պահերին հանդարտություն և սառնասրտություն դրսևորելու համար), վիճակված էր դառնալ իսկական լեգենդ՝ դեռ երկար ժամանակ մնալ հայդուկային շարժման մեջ, քանիցս թուրքական իշխանությունների կողմից ձերբակալվել ու դատապարտվել ցմահ բանտարկության, կրկին փախուստի դիմել,

Դարասկզբին ախալքալաքցիներն ու ախալցխացիները մեծ դեր ունեին նաև զենքի ձեռքբերման և առաքման գործում: Արևմտյան Հայաստան ուղարկվող զենքի հայթայթման ամենահայտնի կենտրոններից մեկը Ալեքսանդրապոլն էր, ուր տեղակայված էր ռուսական կայազորը: Դաշնակցությունն այդ խնդրի վրա սկսեց ավելի մեծ ուշադրություն հատկացնել դարասկզբին, երբ ուժեղացան ոչ միայն արևմտահայերի, այլև՝ արևելահայերի հալածանքները: Պատահական չէ, որ Ախալքալաքի և Ալեքսանդրապոլի զորամասերից գաղտնաբար գնված կամ ուղղակիորեն առևանգված զենքի չնորհիվ տեղի դաշնակցական կոմիտեի ձեռքին կուտակվել էր զգալի քանակությամբ զենք: Դրա մի մասն ուղարկվեց Արևմտահայաստան, մյուս մասը՝ ցրվեց գավառի գյուղերում:

Հայ եկեղեցու գույքի բռնագրավման մասին ցարական կառավարության 1903 թ. հունիսի 12–ի օրենքը դժգոհության ալիք առաջացրեց ամենուր, այդ թվում՝ Ախալքալաքում: Այն ուղղակի կնչանակը նաև տեղի հոգևոր վարժարանների փակում, որոնց մեծ մասը պահվում էր եկեղեցական կալվածքների, մասնավորապես Ս. Փրկիչ եկեղեցուն պատկանող հողերի հաշվին: Բարեբախտաբար, Ախալքալաքում տեղի դաշնակցական կոմիտեի հրահանգով բնակչությունը ձեռնպահ մնաց զենքի գործադրումից, որը կարող էր հանգեցնել մեծ արյունահեղության: Օգոստոսի 24–ին, կիրակի օրը տեղի ունեցավ բողոքի բազմամարդ հանրահավաք: «Վաղ առաւօտուն չրջակայ գիւղերէն հազարաւոր չինականներ խումբ–խումբ եկան լեցուցին քաղաքը,– գրում է Մ. Վարանդյանը,– Կուգային և քահանաներ ու երէցփոխներ: Նաև բազմաթիւ կանայք ու երեխաներ: Ամէն գիւղէ կը բերէին բողոքագիր մը, ուղղած Հայոց Կաթողիկոսին»:[646] Ս. Խաչ

խուսափել ռուսական ոստիկանության հետապնդումներից, մասնակցել 1912–1913 թթ. Բալկանյան պատերազմներին, առաջին աշխարհամարտի տարիներին Քեռու և Համազասպի կամավորական ջոկատներում որպես վաշտի հրամանատար կռվել Վանի և Բիթլիսի նահանգների բնակավայրերի ազատագրման համար մղված մարտերին: Խեչոն ակտիվ մասնակցություն ունեցավ նաև Ախալցխայի ու Ախալքալաքի 1918 թ. ինքնապաշտպանությանը և 1921 թ. վրաց մենշևիկներից Լոռու ազատագրմանը: Սահացել է Թավրիզում 1941 կամ 1942 թ. (Սիմոնյան Ե., նշվ. աշխ., էջ 137–139, 141, Սամոսյան Ա., նշվ. աշխ., էջ 22, 49, 79, 144, 160, 163–165, 173): Մ. Կարապետյանի հրատարակած արխիվային վավերագրերից մեկում Ուսուլ Խեչոյի անունը՝ Խաչատուր Կարապետյան, հիշատակվում է Համազասպի ջոկատի 2–րդ վաշտի, 2–րդ դասակի մարտիկների ցանկում, 104 համարի տակ (Կարապետյան Մ.,Հայկական կամավորական խմբերը և ազգային գումարտակները Կովկասյան ռազմաճակատում (1914–1917 թթ.), Ե., 1999, էջ 138):

[646] Վարանդեան Մ., նշվ. աշխ., էջ 283:

եկեղեցու բակում և հարակից փողոցներում հավաքված ցուցարարների թիվը հասավ 6 հազ. մարդու: Պատարագի ժամանակ դպիրները հրաժարվեցին հիշատակել կայսեր անունը: Բանախոսները կրակոտ ճառերով դատապարտեցին իշխանությունների հակահայ քաղաքականությունը և խոստացան «արեան գնով պաշտպանել մեր դարաւոր իրավունքները»: Ոստիկանությունը չհամարձակվեց արգելել հանրահավաքը՝ արյունալի բախումներ չհրահրելու համար:

1903–1904 թթ. հակացարական ելույթների շրջանում, օգտվելով ողջ կայսրությունում ստեղծված քաոսային վիճակից, Ախալցխայի և Ախալքալաքի դաշնակցական գործիչները նոր քայլեր կատարեցին զինամթերք հայթայթելու ուղղությամբ: Նրանք իրենց ծրագրերը համաձայնեցրին Ալեքսանդրապոլում գործող գաղտնի խմբերից մեկի հետ, որը ղեկավարում էր ճանաչված գործիչ Պադվալի Վաղոն: Համատեղ ջանքերով 1904 թ. տեղի ռուսական զորամասից առևանգվեց մեծ քանակությամբ զենք: Մեկ ամիս տևած այդ վտանգավոր գործողության գլխավոր կազմակերպիչ Վաղոյին օժանդակեցին Սվազցի Բիձան (Չարություն) և գյումրեցի Հակոբը, վերջինիս փորձված ֆիդայի–ընկեր Ուսուլ Խեչոն, Հաջի Լևոնը և Աչիկը, որոնք Արևմտյան Հայաստանից նոր էին վերադարձել Ախալցխա: Նրանց օգնությամբ իրականացվեց ոչ միայն զենքի դուրսբերումը պահեստներից, այլև՝ ռուս մալոկանների 30 սայլերով առաքումը Կարս և Անդրկովկասի զանազան շրջաններ: Ի դեպ, 1905–1906 թթ. հայ–թաթարական կռիվների ժամանակ այդ զենքը ի սպաս դրվեց նաև Անդրկովկասի քաղաքներում հայ բնակչության ինքնապաշտպանության գործին,[647] որին ակտիվորեն մասնակցեց նույն Ուսուլ Խեչոն:

Ալեքսանդրապոլի զինական պահեստներից զենքի առգրավման և առաքման հաջող գործողությունից ոգևորված՝ Հաջի Լևո-

[647] Ռուբէն, նշվ. աշխ., հ. Ա, էջ 215–224: 1905–1906 թթ. Ախալցխայի և Ախալքալաքի գավառներում, ուր կողք–կողքի ապրում էին հայերն ու մեսխեթցի թուրքերը, ընդհարումներ չեղան: Պատճառներից գլխավորն այն էր, որ ի հեճուկս Օսմանյան Թուրքիայից ժամանած գործակալների, սուննի մահմեդական թուրքերը, զգուշանալով մեծամասնություն կազմող հայերի հետ ընդհարման հավանական ծանր հետևանքներից, չպաշտպանեցին շիա թաթարների հակահայ գործողությունները: Բացի այդ, իշխանությունները ևս չկամեցան հայերի դեմ օգտագործել թուրք–մեսխեթցիներին վախենալով Թուրքիայի հնարավոր միջամտությունից, որը խիստ անցանկալի էր ռուս–ճապոնական պատերազմի և սկսված հեղափոխության պայմաններում: Ի դեպ, այս գավառների բնակչությունը 1905–1907 թթ. ակտիվ մասնակցություն չունեցավ ռուսաստանյան առաջին հեղափոխությանը:

նը,[648] Ուսուլ Խեչոն, Աչիկը (Աչըգ), Ասլանը և ուրիշներ, որոշում են ստեղծել մի առանձին զորաջոկատ՝ բաղկացած հիմնականում ախալցխացիներից ու ախալքալաքցիներից, և չաուերի օրինակով՝ մեկնել Երկիր: Վճռվում է Վասպուրական մտնել Պարսկաստանի վրայով: Բանն այն է, որ Արևմտյան Հայաստանի զինատար ճանապարհներից առավել հուսալին Պարսկաստան–Վասպուրական երթուղին էր: Կարսի մարզի թուրքական սահման տանող Բասենի ճանապարհը թուրքական և ռուսական իշխանությունների համագործակցության հետևանքով վտանգավոր էր դարձել:

Ապրիլի առաջին կեսին Հաջի Լևոնի հեծյալ խումբը ժամանում է Սալմաստ, որտեղ համալրվում է երկրին լավատեղյակ վանեցիներով և ապրիլի 17–ին անցնում պարսկա–թուրքական սահմանը: Արշավանքի երկրորդ օրը նրանց ներկայացած բարեկամ քրդերը հայտնում են, որ իշխանությունները ծուղակ են պատրաստել, ուստի անհրաժեշտ է վերադառնալ: Սակայն ֆիդայիների պատվախնդրությունը թույլ չի տալիս բռնել հետադարձի ուղին: Որոշվում է կռիվներով ճեղքել համիդեական զորքերի օղակը և առաջ շարժվել: Հայդուկներին հաջողվում է կոտրել քրդերի դիմադրությունը և հասնել Վանից հյուսիս–արևելք ընկած Լիմ գյուղը: Այստեղ խումբն ընկնում է թշնամու ուժեղ կրակի տակ: Զիների մի մասը սպանվում է, մյուսներին ֆիդայիներն են գնդակահարում՝ թշնամու ձեռքը չանցնելու և բոլորով աննկատ առաջ շարժվելու համար: Զոհվում են վանեցի Հովհաննեսը, Ջոջ Աղան և ուրիշներ:[649] Այդուհանդերձ, ախալցխացիների նախաձեռնած այս համարձակ ձեռնարկումը պսակվում է հաջողությամբ: Խումբը հասնում է Վարադա վանք՝ տեղ հասցնելով նաև որոշակի քանակությամբ զինամթերք:

Դեռևս 19–րդ դարի վերջից Պարսկահայքում՝ Խոյում, Սալմաստում, Մակուում՝ պատմական Ավարայրի դաշտում դործող զինատար խմբերի շրջանում, մեծ ճանաչում են ձեռք բերում Դարալադյազցի (ծնունդով՝ Մալիշկա գյուղից) Սարքաշ Խեչոն և ախալքալաքցիներ Գրիշն ու Սուրենը (Սուրեն Սարգսյան): Վերջիններս, որոնց հաճախ անվանում էին «Ջավախեցի», ռուսական բանակի հեծելազորի նախկին ենթասպաներ էին, տարբեր տեսակի զենքերի քա-

[648] Լևոն Խզարճյանն իրականում հաջի չէր: Նրան այդպես էին անվանում ընկերների շրջանում վաստակած հարգանքի համար:
[649] Ռուբեն, նշվ. աշխ., հ. Ա, էջ 327:

ջատեղյակ ու փորձառու մասնագետները, թողնելով ծառայությունը, տեղափոխվել էին Պարսկահայք և Սարբազ Խեչոյի հետ, ստանձնել Էրգրի ֆիդայական խմբերին զենք մատակարարելու կենսական գործը: 1904 թ. Երկիր անցնելու նպատակով Պարսկաստան ժամանած Ռուբեն Տեր–Մինասյանի այն հարցին, թե իր հայրենակիցներն ինչու՞ են թողել զինվորական գործը, Սուրենն ու Գրիչը վիրավորված պատասխանում են, թե իրենք չեն կարող «ազգի համար նահատակութեան գործը թողած», ծառայել ռուսական բանակում: Ռուբենի վկայությամբ «Հեր ու Զարեւանդ եւ Արտազ հին հայկական գաւառներուն մէջ անոնք արդէն ճանաչուած մարդիկ էին: Ոչ միայն կուսակցական մեր գոյքերի փոխադրողներն էին ռուսական սահմաններէն մինչեւ Վասպուրականի սահմանները, այլեւ դարձած էին պատուհասը հաղորդակցութեան ճամբաները բռնող եւ երթեւեկը խանգարող աւազակներու»:[650] Պատահական չէ, որ պարսկա–թուրքական սահմանով զենքի տեղափոխման դժվարին գործը գրեթե միշտ վստահվում էր Սարբազ Խեչոյին, Գրիչին և Սուրենին: Ավելին, շատ կարավանապետեր, փոստային ծառայողներ, նույնիսկ պարսկական ու թուրքական պետական մարմիններ, իրենց գույքի տեղափոխման համար դիմում էին նրանց: Բանն այն է, որ այս եռյակը մեծ հեղինակություն էր վայելում ոչ միայն երկու երկրների պաշտոնյաների, այլև սահմանային գոտում տեր ու տնօրինություն անող քրդական ավազակախմբերի շրջանում: Եվ որպես կանոն, զանազան բեռների հետ, այն կարողանում էր ապահով Վասպուրական հասցնել նաև զինամթերք:

1904 թ. գարնանը (հավանաբար մարտի վերջին կամ ապրիլի սկզբին), երբ տարբեր շրջաններից բազմաթիվ զինական խմբեր էին անցնում Արևմտահայաստան՝ հատկապես ապստամբած Սասունին օգնության հասնելու համար, Սարբազ Խեչոյի խումբը ևս միացավ Նիկոլ Դումանին, որը Կոստի Համբարձումյանի, Դաշնակցական Խեչոյի, Ռուբեն Տեր–Մինասյանի, Հակոբ Ջավրիյանի և այլ գործիչների հետ կազմակերպեց զինարշավ Պարսկաստանից Երկիր: Հունիսին 17 հոգանոց այդ խումբն անցավ Կոտուրի լեռները, դեպի Վարագ տանող ճանապարհին, Ռազիի մոտ հայտնվեց ծուղակի մեջ: Սկսվում է կատաղի մարտ (Ռազիի կռիվը): Գրիչն իր երգով ոգևորում է ընկերներին: Դիրքեր բռնած ֆիդայիները ձայնակցում են նրան: Սար-

[650] Նույն տեղում, էջ 279–280:

բազի և նրա հավատարիմ ընկերների քաջության չնորհիվ հաջողվում է ջոկատին նահանջել դեպի պարսկական սահմանը և մի քանի խմբերով, փոքրաթիվ կորուստներով հասնել Սալմաստ: Խմբին կործանումից փրկելու գործում որոշակի դեր է կատարում նաև Ռուբենը:[651]

Մայիսի սկզբին Սալմաստում և Խոյում գործող ֆիդայիները ստանում են Սասունի ապստամբության ճնշման և արյունալի կոտորածների լուրը: Վախենալով, որ Անդրանիկի ու ընկերների անցումը Սասունից Վասպուրական կարող է կոտորածների առիթ տալ նաև իրենց մոտ՝ վանեցիներն օգնության խնդրանքով դիմում են Սալմաստի հայդուկներին: Հակառակ Նիկոլ Դումանի կարծիքին, որն այդ ժամանակ ճանապարհների ուժեղացված հսկողության պատճառով, աղետաբեր էր համարում յուրաքանչյուր արշավանք, Սալմաստում հաստատված ֆիդայապետերից Փոխիկը (Վահրամ Հովհաննիսյան, ծագումով՝ չատախցի)՝ վճռում է մի խմբով անցնել Վան: Այդ հանդուգն քայլի համար նա Նիկոլ Դումանին խնդրում է իր տրամադրության տակ դնել ռազմական գործին քաջատեղյակ, դասակապետ Ջավախեցի Սուրենին: Նիկոլը համաձայնում է: Առաջին անգամ Սուրենը ստիպված բաժանվում է իր հավատարիմ ընկերներից՝ Սարբազ Խեչոյից և Ջավախեցի Գրիշից, որոնք չարունակում են մնալ Նիկոլի ղեկավարության ներքո:

Փոխիկի 14 հոգանոց խումբը Երկիր է մտնում մայիսին, «անհայտ» ճանապարհով՝ հարավից, Սարայի մոտով: Սակայն արդեն լեռները բարձրացած քրդերից ջոկատն աննկատ չի մնում և շուտով հայտնվում է ծուղակի մեջ: Բոլոր հայդուկները զոհվում են: Նրանց հետ կռվի բռնված քրդերի պատմածներից պարզվում է, որ կողք կողքի, փողփողացող կամավորական դրոշի ներքո քաջաբար կռվել ու զոհվել են Փոխիկն ու Սուրենը: Քրդերի խոստովանությամբ հայդուկները կռվել են մահվան դատապարտվածի նման, մաուզերներով ու դանակներով, մինչև վերջին մարդը և իրենց պատճառել ավելի մեծ կորուստներ: Ցավով խոսելով Սուրենի զոհվելու մասին՝ Ռուբենն իր հուշերում գրում էր, որ նա իր տաճկահայ ընկերների համար անհայտ երկրից եկած, բայց միանգամայն գնահատված, գիտուն զինվորական էր և ռազմական գործի հրաշալի ուսուցիչ:

---

[651] Ներսիսյան Ա., Ռուբեն (Սինաս–Տեր Սինասեան), Դրոշակ, 1999, թիվ 16, հոկտեմբեր, էջ 37:

«Ի՞նչ էր բուն անունը, չգիտցանք: Ան ախալքալաքցի էր, կարծեմ Խանչալի գիւղէն: Ես ...անոր գեղեցիկ դէմքը բնաւ չեմ կրնար մոռնալ: Ան պէտք չէ, որ մեռնէր այդպիսի մահով...»:[652]

Մեսխեթ–Ջավախքցի ֆիդայիներն անմասն չմնացին Սասունի 1904 թ. ապստամբությանը: Նրանցից ախալցխացի Մարտոն, որ մեծ հեղինակություն էր վաստակել ապստամբության ղեկավարների շրջանում, ապրիլի 13–ին Սեմալից Գելիեգուզան տանող ճանապարհին, Ջայի կուիվներում հերոսաբար զոհվեց իր հրամանատար Հրայրի հետ:[653] *Այս ապստամբության ճնշումից հետո վերջնականապես պարզ դարձավ, որ ֆիդայական կուիվների չնորհիվ անհնար է հասնել արևմտահայության ազատագրությանը և անհրաժեշտ է հրաժարվել պայքարի այդ ձևից՝ նախապատվությունը տալով համաժողովրդական ապստամբությանը: Այդ դժվարին խնդիրն իրագործելու համար նախևառաջ հարկ կլիներ համոզել Արևմտյան Հայաստանում գործող հայդուկապետերին՝ զենքը վայր դնել և հրաժարվել ֆիդայական պայքարից: Հատկանշական է, որ 1906 թ. դաշնակցության որոշմամբ Տարոն անցած 24–ամյա Ռ. Տեր–Մինասյանին հաջողվում է Ղզլաղաճի ժողովում համոզել անդրդվելի Գևորգ Չաուշին ու Սպաղանցի Մակարին՝ ընդունել կուսակցության որդեգրած նոր քաղաքականությունը. այն է՝ հայդուկային կուիվներից անցնել համահայկական ապստամբության նախապատրաստությանը:*

Սուլուխի կռվից և հատկապես, երիտթուրքական հեղաշրջումից հետո, երբ սահմանադրությամբ հռչակվում է ազգերի իրավահավասարություն, ազգային ու կրոնական հալածանքի վերացում, շատ ֆիդայիներ, հավատալով երիտթուրքերի խոստումներին կամ ենթարկվելով իրենց կուսակցությունների ընդունած որոշումներին, դադարեցնում են հայդուկային պայքարը: Շատ կովկասահայերի հետ տունդարձի ուղին են բռնում նաև ջավախեցի ու ախալցխացի հայդուկները, որոնց թվում և նշանավոր Ուսուլ Խեչոն: Մննդավայր Ախալցխայում նրան ժողովուրդն ընդունում է ցնծությամբ:

Ախալքալաքի գավառի վարչատարածքային ենթակայության հիմնահարցը: *Ռուսաստանյան առաջին հեղափոխության շրջանում և դրանից հետո հայ քաղաքական շրջանակները, մասնավորապես*

---

[652] Ռուբէն, նշվ. աշխ., հ. Ա, էջ 330–333:
[653] Վարանդեան Մ., նշվ. աշխ., էջ 231:

դաշնակցականները, ռուսական իշխանությունների առջև հանդես եկան Անդրկովկասում վարչատարածքային վերաբաժանման իրականացման առաջարկությամբ: Ազգային շրջաններում ծագած դժգոհությունների պատճառները նրանք իրավամբ տեսնում էին ցարիզմի վարչաքաղաքական համակարգի հետամնացության մեջ: Խնդիր էր դրվում ի թիվս բազմաթիվ բարեփոխումների, երկրամասում մտցնել ընտրովի տեղական ինքնակառավարման մարմիններ՝ զեմստվոներ, որոնք պետք է կազմվեին էթնիկ–ազգային սկզբունքով՝ մեկ ընդհանուր երկրամասային զեմստվոյի ենթակայությամբ: Այս ծրագիրը հնարավորություն էր տալու Անդրկովկասի հայաշատ շրջանների բնակչությանը, մասնավորապես Երևանի նահանգից դուրս գտնվող միավորների, այդ թվում՝ Ջավախքի հայությանը մասնակից դառնալ տեղական կառավարման մարմիններին: Այս նախագիծը ներկայացվեց Կովկասի փոխարքային: Սակայն 1908–1909 թթ. ընթացքում անդրկովկասյան նահանգապետերին ներկայացված բազմաթիվ առաջարկությունների թվում, այս նախագիծը ևս մնաց թղթի վրա և առժամանակ մոռացության տրվեց: Փոխարքա Վորոնցով–Դաշկովի դրասեն յակը զեմստվոների խնդիրը կրկին օրակարգ մտցրեց միայն 1913 թ.: Առաջարկվում էր ստեղծել նոր նահանգներ, որոնց կազմավորման հիմքում առավելապես պետք է ընկած լիներ տարածքների ազգային կազմի միատարրության սկզբունքը: Նշանակում է՝ երկարատև քննարկումների արդյունքում հաշվի էր առնվել դաշնակցության ներկայացրած նախագիծը: Ստեղծվեց հատուկ հանձնաժողով՝ մասնագետների ընդգրկմամբ:

Թիֆլիսի նահանգի վերաբաժանման հարցերով զբաղվող հանձնաժողովի 1914 թ. հունվարի 24–ի նիստում, որը նախագահում էր նահանգապետ Ջեռնյավսկին՝ հիմք ընդունելով ազգագրական սկզբունքը, առաջարկվեց հետևյալ փոփոխությունները. Ջաքաթալայի օկրուգը միացնել Թիֆլիսին, Ախալցխայի նահանգի հարավային մասը (1582 քառ. վերստ)՝ Կարսի մարզին, ամբողջ Ախալքալաքի գավառը (2407 քառ. վերստ), Բորչալուի մեծ մասը՝ Երևանի նահանգին, իսկ Բորչալուի հյուսիսարևելյան ու Սղնախի (Սիգնախ) գավառի հարավային հատվածները՝ Ելիզավետպոլի նահանգին: Դրանով Թիֆլիսի նահանգը վերածվելու էր գերազանցապես վրացաբնակ

վարչամավորի, իսկ նրա տարածքը կրճատվելու էր մոտ 32 տոկոսով և 35904 քառ. վերստից դառնալու էր 24201 քառ. վերստ:[654]

Թիֆլիսի նահանգային վարչությունը, քննարկելով Կովկասի փոխարքայի գրասենյակի վերոհիշյալ առաջարկությունները, կազմեց հատուկ նախագիծ, որն ուղարկվեց գավառային վարչությունների և այլ շահագրգիռ մարմինների քննարկմանը: Ախալցխայի և Ախալքալաքի գավառային վարչությունները, որոնցում գերակշռում էին վրացիները, տեղի բնակչությունից գաղտնի, գրեթե առանց քննարկման, մերժողական վերաբերմունք դրսևորեցին ներկայացված նախագծի նկատմամբ: Ախալցխայի գավառային հանձնաժողովը դեմ արտահայտվեց գավառի հարավում ընկած Քոբլիանի տեղամասի Ուդեի հիմնականում հայաբնակ գյուղական համայնքի տարածքը Կարսի մարզին միացնելու առաջարկությանը՝ ելնելով Թիֆլիսի հետ այդ շրջանի գյուղերի տնտեսական կախվածության «սկզբունքից»: Միաժամանակ, վարչական այդ վերաձևումը նկատվեց վնասակար տեղի վրացի ու հայ բնակչության համար և ձեռնտու՝ մահմեդականներին:

Ախալքալաքի հանձնաժողովը ևս մերժեց նախագիծը՝ կրկին հիմք ընդունելով Թիֆլիսի հետ գավառի տնտեսական և երիտասարդության կրթական կյանքի կապվածության «փաստարկը»: Այդ եզրակացության մեջ «ապացուցվեց», որ իբր Ախալքալաքի բնակչությունը բացարձակապես ձգտում չունի դեպի Ալեքսանդրապոլը և նրա հետ տնտեսական հարաբերություններ չի պահպանում: Բերվում էր նաև այն փաստարկը, որ իբր թե Ալեքսանդրապոլի հետ կապող խճուղին, ի տարբերություն Թիֆլիս տանող ճանապարհի, ձմռան ամիսներին մշտապես գտնվում է փակման վտանգի առջև: Բանն այն է, որ ոչ միայն Ախալցխան ու Ախալքալաքը, այլև Անդրկովկասի բոլոր շրջանները տնտեսապես կապված էին Թիֆլիսի հետ, իսկ հայ ուսանողության մեծագույն մասը կրթություն էր ստանում այնտեղ: Այդպիսի տրամաբանությամբ երկրամասի բոլոր գավառները պետք է մաս կազմեին միայն այդ նահանգին: Ինչ վերաբերում է ճանապարհների խնդրին, այն ևս համոզիչ չէր: Դեպի Շիրակ տանող խճուղին ձմռանը կարող էր դառնալ դժվարանցանելի, բայց անհամեմատ ավելի ապահով էր, քանզի անցնում էր Ջավախքի և նրա օրգանական շարունակությունը կազմող Աչոցքի սարահարթերով:

[654] Պոլիտիկա, ժուռնալս, 1998, N 4-6, გვ. 10–11.

Իրականում Փարվանայի ափով, ավելի քան 2–2,5 հազ. մետր բարձրությունն ունեցող տեղանքով Թիֆլիս տանող ճանապարհն էր, որ ճմռանը փակվում էր և դառնում անանցանելի: Իսկ Ախալցխայով և Բորժոմով նահանգային կենտրոն տանող մյուս ուղին նախ՝ շատ երկար էր՝ մոտ 300 կմ, և հետո՝ մի մեծ հատվածով անցնում էր վտանգավոր տեղանքով՝ Թափարվան և Կուր գետերի խորը ձորերով: Եթե այս ամենին էլ գումարենք նույն հանձնաժողովի ընդունած խոստովանությունը, որ այս գավառի «...միացումը Երևանի նահանգին հարմար է ...բնակչության մի մասին՝ հայերին (թեկուզև ամբողջ զանգվածի 72 %–ը կազմողներին)»,[655] ապա պարզ կդառնա, որ արված եզրակացությունը չէր բխում տվյալ վարչամիավորի բնակչության կենսական շահերից և չէր համապատասխանում առաջարկվող բարեփոխումների ոգուն՝ էթնիկական սկզբունքով վարչատարածքային բաժանում անցկացնելու պայմաններին:

Վրաց պաշտոնեությունը համանման որոշումների հասավ նաև Բորչալուի գավառի հարցում: Հատկանշական է, որ եթե մի կողմից Թիֆլիսի նահանգային հատուկ խորհրդակցությունն իր հիմնական եզրակացության մեջ վերոհիշյալ բոլոր հայաշատ գավառների անջատումը գտավ անընդունելի՝ գերադասելի համարելով տնտեսական սկզբունքը ազգագրականի համեմատությամբ, ապա մյուս կողմից՝ որոշ թվով վրացիներով բնակեցված Զաքաթալայի օկրուգի միացումն իրենց նահանգին, համարեց «միանգամայն բնական և հնարավոր»:[656] Հասկանալի է, որ ամեն մի դեպքում վրաց քաղաքական շրջանակները գործում էին մի սցենարով՝ առաջնորդվելով միայն սեփական շահերով: Թիֆլիսի այդ խորհրդակցությունում առաջադրված մոտեցումները հատուկ փաթեթով 1914 թ. մարտի 15-ին ներկայացվեցին Կովկասի փոխարքայի գրասենյակ, ուր և մնացին առանց գործածության մինչև 1917 թ. կեսերը: Այսպես ավարտվեց Անդրկովկասի, այդ թվում՝ Թիֆլիսի նահանգի վարչական վերափոխումներին ուղղված աշխատանքների առաջին փուլը:

Բալկանյան պատերազմների (1912–1913) և առաջին աշխարհամարտի տարիներին թուրքական բռնատիրության դեմ ազատագ-

---

[655] Политика, журналы, 1998, N 4-6, გვ. 11–12.

[656] Նույն տեղում, էջ 13: Այս հարցերի քննարկումը տե՛ս նաև Իվ. Ջավախիշվիլու զեկուցագրում («Հայ-վրաց գրական, պատմամշակութային հարցերը վրաց մամուլում (1988-1990)», էջ 56-58):

րական պայքարը նոր փուլ է թևակոխում: 1912 թ. հոկտեմբերի վերջին կովկասահայ մտավորականության ներկայացուցիչների թվում ախալցխացի մի քանի գործիչներ մասնակցում են հայ քաղաքական շրջանակների կազմակերպած ժողովին, ուր որոշվում է բոլոր հայաբնակ շրջաններում կազմակերպել հայկական հարցի վերաբացմանը նպաստող մարմիններ:[657] *Ախալցխայում և Ախալքալաքում նույնպես ստեղծվում են այդօրինակ խմբեր, որոնք զգալի աշխատանք են տանում հայոց կաթողիկոսի, մեծ տերությունների, համաշխարհային հասարակայնության առջև դիմում–խնդրագրերով հանդես գալու, հայկական հարցը միջազգայնորեն վերաբացելու հարցում: Հայ ազատագրական պաքարի մի շարք դեմքեր մասնակցում են Բալկանյան պատերազմին:*

1914 թ. ամռան ամիսներից՝ համաշխարհային պատերազմի մեջ մտնելու ռուսական կայսրության նախապատրաստական աշխատանքների վերջին փուլում, ընդհանուր ռազմական եռուզեռ սկսվեց նաև Ախալքալաքի գավառում, ուր տեղակայված էր կովկասյան բանակի կարևոր զորակայաններից մեկը: Ախալքալաքը, ի թիվս Անդրկովկասի մի քանի այլ քաղաքների, պատերազմի նախօրյակին զգալիորեն ամրացվել էր և թշնամու անակնկալ ներխուժման դեպքում կարող էր որոշակի ժամանակով կասեցնել նրա հետագա առաջխաղացումը, մինչև ռուսական ընդհանուր հակահարձակումը:[658]

Օգոստոս–սեպտեմբերից Ռուսաստանի տարբեր նահանգներից սկսեցին ժամանել նորանոր զորամիավորումներ, որոնց մի մասը հանգրվանեց Ախալքալաքի զինվորական քաղաքում, կարծախ և այլ գյուղերում, մյուսները՝ տեղափոխվեցին Կարսի մարզի տարածք:

Արդեն օգոստոս–սեպտեմբերից սկսվեց ինչպես ընդհանուր զորահավաքը, այնպես էլ հայ կամավորականների հավաքագրումը: Այդ նպատակի համար ազատ գործելու հնարավորություն տրվեց գավառի դաշնակցական կազմակերպությանը, որի գործունեությունը մինչ այդ արգելված էր: Գավառապետի հրահանգով դպրոցներում, հասարակական վայրերում կազմակերպվեցին հայրենասիրական դասախոսություններ, Թիֆլիսից ստացվող հայալեզու մամուլում տպագրվեցին հոդվածներ, որոնցում հեղինակները չէին մոռա-

---

[657] Կիրակոսյան Ջ. Ս., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914–1916 թթ., Ե., 1965, էջ 109:

[658] Арутюнян А. О., Кавказский фронт 1914—1917 г., Е., 1971, с. 162.

նում գաղթական ախալքալաքցիների սերունդներին հիշեցնել իրենց նախկին հայրենիքի՝ Էրզրումի «ազատագրման» անհրաժեշտության, հայ–ռուսական դինակցության, հայրենիքի փրկության դործին նվիրվելու հրամայականի մասին: Հատկապես քարոզչական աշխատանքի մեջ ներդրավվեցին արևմտահայ ազատամարտի ջավախքցի մասնակիցները: Նրանցից չատերը, որպես կամավորականներ, դինվորագրվեցին կազմավորվող հայկական դնդերին: Նորից ասպարեզ եկան մեծ համարում ունեցող Ուսուլ Խեչոն ու Հաջի Լևոնը: Առաջինը տարբեր պատասխանատու պաշտոններ ստանձնեց Համազասպի և Քեռու դնդերում, 4–րդ դնդի 2–րդ վաչտում որպես վաչտապետի օդնական աչքի ընկավ Վանա լճի հարավարևմտյան ափին 1915 թ. հունիսին մղված թեժ մարտերում: Հաջի Լևոնն ու Աչիկը միասին ստանձնեցին Արարատյան դնդի հնձյալ չոկատներից մեկի դեկավարությունը:[659] *Ընդհատելով ուսումնառությունը քաղաքին դպրոցի վերջին դասարանից՝ իր ընկերների հետ կամավորականներին միացավ 20–ամյա ախալցխացի Աղասի Կորկոտյանը:*[660]

Անդրանիկի դլխավորած առաջին կամավորական դնդի կազմում որպես վաչտի հրամանատար իր դործունեությունը վերսկսեց Արտաշես Սուջյանը: Նա չուտով դարձավ իր զորավարի ամենասիրելի զորականներից մեկը: Սուջյանը ծանր վիրավորվեց 1915 թ. ապրիլի 18–ին՝ Անդանիկին մեծ հուչակ բերած Դիլմանի ճակատամարտում: Ապաքինվելուց հետո Արտաշեսը մասնակցեց բազմաթիվ կռիվների, արիության համար արժանացավ Գեորգիևյան խաչի: Քաջարի դինվորականը զոհվեց 1916 թվականին՝ Բիթլիսի շրջակայքում մղված մարտերից մեկում:[661]

Պատերազմի առաջին օրերին ռուսական կովկասյան բանակն ունեցավ ժամանակավոր անհաջողություններ: Թուրքերին հաջողվեց ներխուժել Կարսի մարզի արևմտյան շրջաններ և իրականացնել հայ բնակչության կոտորածներ: Ստեղծված ընդհանուր խուճապի

---

[659] Ձիթող դաշտի Կարնոյ, կազմող՝ Վարդիթեր Կոճոլոզեան–Յովհաննիսեան, Պէյրութ, 1972, էջ 272, 279, 286, 292: Այդ կռիվներում զոհվում է ախալցխացի Շավարշը:

[660] Սանոսյան Ա., նշվ. աշխ., էջ 48: Մի խումբ ախալցխացի կամավորականների լուսանկարը ու ազգանունները տես նույն տեղում, էջ 164:

[661] Ա. Սուջյանին մարտական ընկերները, որոնց թվում և Անդրանիկը, հոդին են հանձնել Թիֆլիսի Խոջեվանքի հայոց գերեզմանատանը՝ նույն թվականին զոհված Քեռու կողքին: Կամավորական շարժման ակտիվ մասնակիցներ են եղել նաև Արտաշեսի եղբայրները՝ Սուրենը, Սանուկը, հորեղբորորդին՝ Յովհաննեսը (Իսոյան Ա., Սամցխե-Ջավախքի նշանավոր հայորդիները, մաս Ա, ծեռագիր, էջ 161):

հետևանքով նկատվեց բնակչության գաղթ դեպի Արևելյան Հայաստան ու Անդրկովկասի այլ տարածքներ: Կարսեցի հայերի մի զանգված էլ նոյեմբերին Արդահանի գավառի վրայով ներթափանցեց Ախալքալաք: Սկսվեց հայ բնակչությանը Ջավախքի գյուղերում տեղավորելու, պարենով ապահովելու եռուն աշխատանք:

Թուրքական հրամանատարությունը կայսրության արևմտյան շրջաններից և Էրզրումից թարմ ուժեր բերելով, փորձեց Արդահանի ու Ախալքալաքի վրայով դուրս գալ Թիֆլիս:[662] Բարեբախտաբար, թուրքերի այդ պլանները ձախողվեցին: Սարիղամիշի հաղթական ճակատամարտից (1914 դեկտեմբեր–1915 թ. հունվար) հետո ջախջախված թուրքական 3–րդ բանակը ետ չպրտվեց մինչև Էրզրում: Մինչև 1915 թ. գարուն Ախալքալաքում հաստատված կարսեցի գաղթականների մեծ մասը վերադարձավ հայրենի օջախներ:

Պատերազմի հաջորդ տարիներին, թեև Ախալքալաքի գավառը ռազմաճակատի գծից բավական հեռու էր, սակայն ռազմական իրավիճակի, առավել ևս 1915 թ. հայոց ցեղասպանության իրողության աղետալի հետևանքները իրենց ուղղակի կնիքը թողեցին նաև այս գավառի կյանքի վրա: Բնակչությունից պահանջվեց սեփական ձիերով ու կառքերով ռազմաճակատ կամ գոնե կարս քաղաք հասցնել բանակի համար պահանջվող սննդամթերքը, որի զգալի մասը ձեռք էր բերվում բնակչության հարկման հետևանքով: Ռազմաճակատի համար գյուղացիությունը տրամադրում էր հացահատիկ, մսամթերք ու կաթնամթերք, ձմեռային տաք հագուստ և այլն: 1915 թ. օգոստոս ամսից կոտորածից խուսափած առաջին արևմտահայ գաղթականները հասան Ախալքալաքի գավառ: Նրանց մեծ մասը կանայք ու երեխաներ էին՝ սովահար ու կիսամերկ վիճակում: Թիֆլիսի հայոց բարեգործական միությունը, տեղի հասարակական կազմակերպությունները որոշակի աշխատանք կատարեցին քաղաքում և գյուղերում նրանց տեղավորելու, հագուստ ու սննդամթերք հայթայթելու ուղղությամբ: «Ջավախք» շաբաթաթերթի հրատարակիչ Վարդան Շահպարոնյանի ջանքերով Ախալքալաքում բացվեց մանկատուն, ուր տեղավորվեցին բազմաթիվ ծնողազուրկ գաղթական մանուկներ: Ճանաչված մտավորականը ստանձնեց այդ մանուկների խնամքի ու դաստիարակության դժվարին գործը:[663]

---

[662] Սիմոնյան Հ. Ռ., Անդրանիկի ժամանակը, գիրք Ա, էջ 413:
[663] Նազարյան Ս. Ս., «Ջավախք» շաբաթաթերթը, ԲԵՀ, 1992, թիվ 1, էջ 201:

1915–1916 թթ. ռուսական բանակի կողմից Արևմտյան Հայաստանի մի զգալի հատվածի գրավումից հետո Ջավախքում ապաստանած արևմտահայ գաղթականների մի մասը վերադարձավ հայրենի գյուղեր: Պողոս Աբելյանի գլխավորությամբ Էրզրում տեղափոխված ախալքալաքցիների խումբը, որը մաս կազմեց «Քաղաքների միության» ազգային–բարեգործական կազմակերպությանը, զգալի նպաստ բերեց արևմտահայ փախստականներին օգնություն ցուցաբերելու գործին:[664]

1917 թ. փետրվարյան հեղափոխությունը արմատապես փոխեց քաղաքական իրադրությունն Անդրկովկասում: Ժողովրդավարական զարգացումներին զուգընթաց, Ռուսական ընդարձակ տերության ծայրամասերում սկսվեց քաղաքական քաոս: Անդրկովկասում ժամանակավոր կառավարության իշխանության մարմին ՕԶԱԿՈՄ–ը երկար ժամանակ ազգային շրջաններում չէր կարողանում ստեղծել իր ենթական մարմինները: Ախալքալաքի գավառապետ Կալինինը, ժողովրդից թաքցնելով ցարիզմի տապալման լուրը, որոշ ժամանակ շարունակում էր գավառը կառավարել նախկին ձևով: Այդ օրերին այնտեղ տիրող իրավիճակի մասին Ներսես Տեր–Գրիգորյանը գրում էր. «Զինվորա–գյուղացիական խորհուրդ առանց զինվորների և գյուղացիների: Գյուղերում տիրում էր անասելի հուզմունք, ...ամեն օր լարված, սպասողական դրություն՝ թե ի՞նչ կըլինի հողի հետ, ...պատերազմը վերջացնելու գործը, հազարավոր միակ կերակրողների տուն վերադառնալու խնդիրը և այլն»:[665]

1917 թ. գարնանը մի քանի ամսով Հայրենի գավառ այցելեց մնծանուն բանաստեղծ, հայանի հասարակական գործիչ Վահան Տերյանը: Այդ ամիսներին նա ծավալեց բուռն գործունեություն: Տերյանի պաշտպանական ելույթների չնորհիվ Ախալքալաքի գավառական դատարանը որոշում կայացրեց ցարական կառավարության կողմից անօրինաբար դուխոբորներին տրված Փոկա գյուղի հողատարածքները կրկին իրենց տերերին վերադարձնելու մասին:[666] *Վ. Տերյանը քանիցս հեղափոխական ելույթներ ունեցավ Ախալքալաքի դպրոցի նորակառույց շենքում, ռազմաքաղաքի ակումբում՝ զինվորների առջև:*

---

[664] Ախալքալաքի գավառագիտական թանգարան, գործ 3674, թ. 1, գ. 3701, թ. 1:
[665] Վահան Տերյանը ժամանակակիցների հուշերում, էջ 383–384: Ն. Տեր–Գրիգորյանը բանաստեղծ Վահան Տերյանի եղբայրն է:
[666] Վահան Տերյանը ժամանակակիցների հուշերում, էջ 390–393, 412–413:

Սակայն սկսված հալածանքների պատճառով նա հարկադրված հեռացավ գավառից:

1917 թ. Ախալքալաքի գավառի պատմության մեջ արձանագրվեց որպես աննախադեպ հարուստ բերքի, տնտեսական լուրջ հաջողությունների տարի: Գյուղատնտեսական ապրանքների կտրուկ աճի շնորհիվ հնարավոր եղավ մթերքներով ապահովել ոչ միայն Անդրկովկասի շատ շրջաններ, այլև ամբարել մեծ քանակությամբ հացահատիկ ու անասնակեր:[667]

1917 թ. եղավ ոչ միայն տնտեսական վերելքի, այլև քաղաքական բուռն զարգացումների տարեթիվ: Ինչպես ամբողջ Անդրկովկասի, այնպես էլ Ախալքալաքի հասարակական–քաղաքական շրջանակներում աչխուժ քննարկումներ սկսվեցին ապագա պետության կառուցվածքի, երկրամասի վարչատարածքային նոր բաժանման, պատերազմի ու խաղաղության, Սահմանադիր ժողովի հրավիրման և այլ կենսական խնդիրների շուրջ:

Այսպիսով 1828–1917 թթ. ժամանակահատվածում Ախալքալաքի գավառը հետզհետե ներքաշվեց Ռուսական կայսրության ընդհանուր վարչաքաղաքական ու տնտեսական համակարգի մեջ, ունեցավ սոցիալ–տնտեսական ու մշակութային լուրջ առաջընթաց: Արտաքին վտանգի ու ֆիզիկական բնաջնջման վտանգի բացակայության պայմաններում ժողովրդագրական զարգացումներն ընդունեցին հայանպաստ ուղղվածություն:

---

[667] 1917 թ. Ախալքալաքի գավառի տնտեսական աճի մասին մանրամասն տե՛ս "Об экономическом положении ахалкалакского уезда" փաստաթուղթը (ՀՀ ԳԱԱ ՊԻ Լեոյի անձն. ֆ. 1, g. 1, գ. 389, թ. 156–157):

ՋԱՎԱԽՔԸ 1917–1923 ԹԹ.

Ա)Ախալքալաքի հիմնահարցը Անդրկովկասի ազգային-վարչատարածքային բաժանման համատեքստում 1917 թ.

1905–1907 թթ. ռուսաստանյան առաջին հեղափոխության տարիներին առաջ քաշվեցին պետական իշխանության ապակենտրոնացման, տեղական ինքնակառավարման, ինչպես և ազգային–էթնիկ վարչատարածքային նոր բաժանման, երկրամասում և ամբողջ կայսրությունում դաշնային (ֆեդերատիվ) կառուցվածք ստեղծելու ծրագրեր: Դրանցում խոսվում էր նաև Ախալքալաքի գավառը Երևանի նահանգին կամ ստեղծվելիք Ալեքսանդրապոլի նահանգին միացնելու անհրաժեշտության մասին:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Անդրկովկասի զանազան ազգային–քաղաքական շրջանակներում կրկին քննարկման խնդիր դարձավ երկրամասի վարչատարածքային բաժանման հարցը, որի անհրաժեշտությունը հայ, վրացի և թաթար (ադրբեջանցի) գործիչները բացատրում էին ցարիզմի կողմից մտցված նահանգային բաժանման մեջ ազգային–տարածքային դրծոնի անտեսմամբ: Ուշագրավ է, որ վրացական առավել ազգայնական շրջանակները, չբացառելով առաջիկա պատերազմում Ռուսական կայսրության պարտության հնարավորությունը, կապեր էին հաստատել երիտթուրքական իշխանությունների հետ: 1914 թ. ամռանը «Վրաստանի ազատագրության կոմիտեն» կազմակերպությունը թուրքերի հետ կնքել էր գաղտնի համաձայնագիր, ըստ որի՝ պատերազմում Ռուսաստանի պարտությունից հետո Թուրքիան պետք է ևրաշխավորեր Վրաստանի անկախությունը՝ Ախալքալաքով, Հայկական Բորչալուով (Հարավային Լոռի – Ա.Մ.) և Սևանա լճի շրջակայքով հանդերձ:[668] *Պատահական չէ, որ հենց այդ հանդամանքով էլ, ինչպես իրավացիորեն նկատել է Բախչի Իշխանյանը, պետք էր բացատրել նույն ժամանակաշրջանում վրացական մամուլում հայերի*

[668] Ջամալեան Ա., Իմ պատասխանը, Յառաջ, 1928, 28 հունիս, թիվ 685, էջ 2:

դեմ սկսված նոր արշավը: Վրաց գործիչները հայերին նկատում էին իրենց թուրքամետ ծրագրերի թշնամիներ և ռուսական իշխանությունների «գործակալներ»: Բացի այդ, «վրաց օրգանները,– գրում էր Իշխանյանը,– հիշեցնում են հայերին, երբեմն նույնիսկ սպառնական տոնով, որ նրանք եկվորներ են և օտար վրացական պատմական հայրենիքում»:[669]

Վերոհիշյալ քննարկումները վերսկսվեցին 1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո, երբ Ռուսական կայսրությունը թևակոխեց զարգացման ժողովրդավարական փուլ: 1917 թ. գարնանը և ամռանը վրաց մենշևիկները գտնում էին, որ Անդրկովկասի տարածքային բաժանման հարցում պետք է առաջնորդվել ազգագրական սկզբունքով, այսինքն՝ որտեղ գերակշռում է տվյալ էթնոսը, այդ տարածքը պետք է միացնել տվյալ վարչամիավորին, ընդ որում, վիճելի տարածքների խնդրում անհրաժեշտ էր նկատվում հանրաքվեն: Հունիսին Անդրկովկասի մենշևիկների համագումարն ընդունեց բանաձև, որում հավանություն տրվեց վերոհիշյալ մոտեցումներին: «Ազգային սահմանների տեղաշարժման ժամանակ,– ասվում էր այդ բանաձևում,– պետք է անցկացվի հանրաքվե այն վայրերում, որոնք սահմանների որոշման ժամանակ համարվում են վիճելի»:[670] Այս ժողովրդավարական դիրքորոշումը ընդունելի էր նաև վրացական այլ կուսակցությունների համար:[671]

Այսպես, ըստ սոցիալիստ–ֆեդերալիստների 1917 թ. ամռանը կայացած խորհրդաժողովի որոշման, Վրաստանի հողային սահմանների մեջ պետք է մտնեին Թիֆլիսի նահանգի Բորչալուի, Ախալցխայի և Ախալքալաքի գավառների միայն այն մասերը, որոնք բնակեցված էին վրացիներով: Ընդ որում, եթե Բորչալուի հայկական մասի հարցում սոցիալիստ–ֆեդերալիստները որոշ վերապահում անում էին՝ ընդգծելով այնտեղ հանրաքվեի կարևորությունը գավառի պատկանելության հարցը վճռելու համար, ապա Ախալքալաքի և Ախալցխայի խնդրում միանգամայն արդարացի էին համարում դրանք Թիֆլիսի նահանգից անջատելու և հայկական բնակչություն ունեցող որևէ վարչամիավորի միացնելու խնդիրը: Նման արդարացի

---

669 Իշխանեան Բ., Հայ–վրացական հարաբերութիւնների պրոբլեմը (քննական վերլուծութիւն), Թ., 1914, էջ 40:

670 Политика, журналъ, тб., 1998, N 4–6, გვ. 2.

671 Հորիզոն, Թիֆլիս, 1918, թիվ 10:

մոտեցումը չէին կիսում միայն վրաց Ազգային դեմոկրատները, որոնք ապագա Վրաստանի կազմում տեսնում էին ամբողջ Թիֆլիսի նահանգը:[672]

Ազգագրական սկզբունքով առաջնորդվող հայ և վրաց քաղաքական շրջանակների մոտեցման կիրառման դեպքում Թիֆլիսի նահանգի կազմում եղած հայկական և գերազանցապես հայերով բնակեցված Բորչալուի (Լոռու հետ միասին) ու Ախալքալաքի գավառների և Ելիզավետպոլի նահանգի հարավարևմտյան հատվածի (Ղարաբաղ և Զանգեզուր) վարչական վերաենթարկման հարցը Երևանի նահանգին կամ նոր ստեղծվելիք Ալեքսանդրապոլին, կդառնար անխուսափելի: Նախկին Երևանի նահանգի հետ այդ տարածքները կկազմեին 54 հազ. քառ. կմ՝ 1մլն. 970 հազ. բնակչությամբ, որից հայեր՝ 1 մլն. 169 հազ., մահմեդականներ՝ 546 հազ., վրացիներ՝ 7 հազ. և այլն:[673]

Ժամանակավոր կառավարության որոշմամբ 1917 թ. գարնանից Պետրոգրադում, ներքին գործերի նախարարությանը կից սկսեց գործել հատուկ հանձնաժողով՝ իրավաբան Զուրաբ Ավալովի[674] *գլխավորությամբ Անդրկովկասի վարչական վերաբաժանման և տեղական ինքնակառավարման խնդիրը քննարկելու համար: Այդ հանձնաժողովը որոշում ընդունեց Բորչալուի՝ Լոռու տարածքի 4/5-ը և Ախալքալաքի գավառը Թիֆլիսի նահանգից հանելու և նոր ստեղծվելիք Ալեքսանդրապոլի նահանգին միացնելու մասին:*[675] *Ընդորում, հանձնաժողովի հայ ներկայացուցիչների առաջարկությամբ Ալեքսանդրապոլի նահանգում հայ բնակչության թվային գերակշռություն ապահովելու համար, Թիֆլիսի նահանգից անջատվող*

---

[672] Ջամալեան Ա., Հայ–վրացական կնճիռը, Հայրենիք, 1928, ապրիլ, էջ 87:

[673] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 104, թ. 45: Գերազանցապես հայաբնակ Ախալքալաքի գավառի տարածքը Ծալկայի (Խրամի) և Տաբածղուրի լճի շրջակա հայկական գյուղերով կազմում էր 3400 քառ. կմ (տե՛ս նույն տեղում, թ. 13):

[674] Այդ հանձնաժողովի կազմում Զ. Ավալովի հետ ընդգրկված էին Գ. Լորդկիպանիձեն, Ս. Ավալիանին՝ վրացիներից, Ալ. Խատիսյանը և Ա. Շահխաթունյանը՝ հայերից, Խան Խոյսկին և Ա. Շեյխուլիսլամովը՝ թաթարներից, Վ. Զաբաթիևը և Ա. Նամիտովը՝ լեռնականներից՝ (Тунян В., Карабахский конфликт, Е., 1999, с. 16).

[675] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 104, թ. 2–8: Եղավ նաև ենթահանձնաժողովի առաջարկը Ղարաբաղի և Զանգեզուրի գավառները՝ իբրև գերազանցապես հայերով բնակեցված տարածքներ Ելիզավետպոլի նահանգի կազմից հանելու մասին: Սակայն ենթահանձնաժողովի մահմեդական ներկայացուցիչները հրաժարվեցին այդ փաստաթղթի տակ ստորագրել՝ իրենց քայլը պատճառաբանելով լիազորություններ չունենալու հանգամանքով (տե՛ս նույն տեղում):

Ախալքալաքի գավառին պետք է միացվեին Թրիալեթի (Ծալկա) տեղամասի Աչկալայի և Նարդևանի գյուղական համայնքները, Ղզլքիլիսա գյուղը և Գորիի գավառի Բակուրիանի տեղամասի Մոլիտ հայկական գյուղը: Ալեքսանդրապոլին պետք է կցվեին նաև գավառներ Լոռուց, Կարսի մարզից և Երևանի նահանգից:[676]

Հետագայում Թիֆլիսում կայացան նաև այլ խորհրդակցություններ, որոնցում հայերի շահերը կրկին ներկայացնում էին Ալ. Խատիսյանը և Ավ. Շահխաթունյանը:[677] *Վերջինս մեկ տարի անց հրատարակեց մի աշխատություն,*[678] *որում հիմնավորում էր ազգագրական սկզբունքով Անդրկովկասի վերաբաժանման նպատակահարմարությունը: Նույն միահամուռ մոտեցումը պաշտպանվեց 1917 թ. սեպտեմբեր–հոկտեմբերին Թիֆլիսում գումարված համահայկական խորհրդաժողովում, որի ժամանակ կազմվեց Արևելահայերի ազգային խորհուրդը՝ հայ քաղաքական կյանքի գլխավոր ղեկավար մարմինը: Խորհրդաժողովի հոկտեմբերի 6–ի և 8–ի նիստերում որոշվեց հավանություն տալ ժամանակավոր կառավարության կազմած նախագծին՝ ըստ էթնիկական սկզբունքի Անդրկովկասում վրացական, հայկական ու թուրքական վարչական խոշոր միավորներ ստեղծելու մասին:*[679] *Ըստ այդ նախագծի՝ հայկական մասը պետք է բաղկացած լիներ Երևանի, Ելիզավետպոլի (Գանձակ) և Ալեքսանդրապոլի նահանգներից: Ինչպես արդեն նշվել է, Ախալքալաքն ու Լոռին պետք է մաս կազմեին Ալեքսանդրապոլի նահանգին: Հավանություն տալով այս նախագծին՝ փաստորեն հայ քաղաքական չրջանակները պաշտոնապես պաշտպանում էին ժամանակավոր կառավարության ազգային և վարչատարածքային քաղաքականությանը, որի հիմքում ընկած էր արդարացի ու ժողովրդավարական էթնիկ–ազգագրական սկզբունքը:*

Հատկանշական է, որ վերոհիշյալ քննարկումների արդյունքում ձեռք բերված հայ–վրացական ընդհանուր մոտեցումը՝ ազգագ-

---

[676] Ալեքսանդրապոլի նահանգը պետք է ուներ հինգ գավառ (Ալեքսանդրապոլի, Ախալքալաքի, Լոռու, Կարսի և Կաղզվանի)՝ 719 հազ. բնակչությամբ, որից 474 հազարը կամ ամբողջ բնակչության 68–ը %–ը՝ հայ: Ախալքալաքի ընդարձակվելիք գավառում, որին, ինչպես նշվեց, միացվելու էին Ծալկան և Տաբածղուրիի հայկական գյուղերը, հաշվվում էր 120 հազ. մարդ, որից 94 հազարը կամ բնակչության 77 %–ը՝ հայ:

[677] Մելիքյան Վ., 1917. Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը, Ե., 1997, էջ 119:

[678] Шахатунян А., Административный передел Закавказья, Т., 1918.

[679] Սիմոնյան Հ. Ռ., Անդրանիկի ժամանակը, հ. Ա, էջ 609:

րական սկզբունքով առաջնորդվելու վերաբերյալ, չմնաց թղթի վրա և քննարկվեց ու հավանության արժանացավ նաև Կերենսկու կառավարության կողմից: Սանկտ Պետերբուրգ հրավիրված հայ և վրաց պատվիրակները նախագծի վերաբերյալ տվեցին իրենց համաձայնությունը, բայց Թուրք–ադրբեջանցիները, ինչպես վերը նշվեց, հրաժարվեցին հայտնել իրենց մոտեցումները՝ պատճառաբանելով լիազորությունները չունենալու հանգամանքը:[680] Սակայն չուտով՝ 1917 թ. աշնանը, հետևելով ադրբեջանցիների օրինակին, տարածքային սահմանազատման սկզբունքների հարցում իրենց դիրքորոշումն արմատական փոփոխեցին նաև վրաց քաղաքական շրջանակները:

1917 թ. սեպտեմբեր–հոկտեմբերին վրաց քաղաքական ուժերը, հատկապես Ազգային դեմոկրատները, հանդես եկան Թիֆլիսի նահանգից Բորչալուի և Ախալքալաքի գավառները անջատելու դեմ: Ընդ որում, «Թիֆլիսի նահանգ» բառերը նրանք նույնացնում էին վրացական ազգային պետականության հետ: Այսպես 1917 թ. քննարկումների արդյունքում վարչական բաժանման հարցը վերածվեց ազգային–տարածքային, պետական սահմանազատման հիմնախնդրի:

1917 թ. հետհոկտեմբերյան փուլում վրաց քաղաքական շրջանակներում Ռուսաստանից անջատվելու ձգտման ուժեղացման հետ մեկտեղ, ազգագրական սկզբունքը հետզհետե մոռացության տրվեց: Լոռու ու Ախալքալաքի հարցում գերակշռեց վրացիների անդիջում ու կարծր դիրքորոշումը: Միայն վրաց առանձին գործիչներ, Դիամամիձեի նախաձեռնությամբ, անարդարացի համարելով իրենց ազգակիցների նման մոտեցումները և դրանցում տեսնելով լուրջ վտանգ հայ–վրացական ավանդական, բարիդրացիական հարաբերությունների համար, նոր խորհրդակցություններ հրավիրեցին վրացի և հայ գործիչների մասնակցությամբ: Այդուհանդերձ, վրացիների մեջ արդեն վիճելի տարածքների հարցում գերակշռում էր պատմական սկզբունքով մոտեցումը: Ընդանք դրա տակ հասկանում էին 1783 թ. Գեորգիևյան դաշնագրով եկատերինա կայսրուհու այն պարտավորությունը, ըստ որի՝ Ռուսական կայսրությունը վրաց Հերակլ II–ին խոստանում էր օտար տիրապետության տակ գտնվող տարածքները գրավելուց հետո հանձնել Վրաստանին: Այդպիսի տարածքների տակ վրացիներն ի նկատի ունեին նաև Ախալքալաքի գա-

[680] Նույն տեղում:

վառը: Թեև ինքնին հասկանալի է, որ ռուսական արքունիքը դրանով չէր արձանագրում Ջավախքի նկատմամբ վրացիների պատմական իրավունքները, որոնք, ինչպես տեսանք վերոչարադրյալից, խիստ վիճելի էին և ոչ համոզիչ: Բացի այդ, հայկական կողմն այդ հանդիպումներում իրավամբ ընդգծում էր, որ պատմական սկզբունքի կիրառման դեպքում կովկասյան թաթարները՝ իբրև եկվորներ, ընդհանրապես կզրկվեին երկրամասի նկատմամբ որևէ տարածքային իրավունքից:[681] Այսպես հերթական հայ–վրացական խորհրդաժողովն ավարտվեց անարդյունք:

Նոյեմբերի 15–ին ՕԶԱԿՈՄ–ին փոխարինած Անդրկովկասյան կոմիսարիատը, որի ստեղծումը երկրամասը Ռուսաստանից անջատելու կովկասյան ազգային ուժերի առաջին լուրջ քայլն էր, հանդես եկավ Անդրկովկասում ազգամիջյան հարաբերությունների մեղմացման, ազգային հարցի լուծման խոստումներով: Նոյեմբերի 27–ին կոմիսարիատի հատուկ դեկրետով երկրամասում մտցվում էր զեմստվային կառավարում, որի մասին նախորդ շրջանում եղել էին բազմաթիվ քննարկումներ, բայց հարցը միշտ ձգձգվել էր ծագած տարաձայնությունների պատճառով: Սակայն զեմստվային համակարգը գործնական կիրառություն չգտավ, քանզի ինքնաբերաբար հանգեցրեց Անդրկովկասի նույն էթնիկ վերաբաժանման ցավոտ խնդրին:[682] Կոմիսարիատին փոխարինած Անդրկովկասյան սեյմը՝ սկսված թուրքական արշավանքի, ընդհանուր անարխիայի պայմաններում, ներքին ազգային սահմանափոխումների խնդիրը մոռացության տվեց:

Ախալքալաքի հայությունը 1918 թ. սկզբին փորձեց յուրովի լուծել այդ հարցը: Հունվարի 21–ին Ախալքալաքի գավառային գործադիր կոմիտեն որոշում կայացրեց վարչականորեն Ալեքսանդրապոլի գավառին միանալու մասին:[683] Այդ քայլը Հայաստանին միանալու ձգտման յուրօրինակ դրսևորում էր:

---

[681] Ջամալեան Ա., Հայ–վրացական կնճիռը, Հայրենիք, 1928, ապրիլ, էջ 82–83:
[682] Սիմոնյան Հ. Ռ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 647–648:
[683] Մշակ, 1918, թիվ 16:

Բ) Ռազմաքաղաքական իրադրությունը Ախալքալաքի գավառում 1918 թ. հունվար-մայիս ամիսներին: Թուրքական ներխուժումը, բնակչության զանգվածային կոտորածներն ու արտագաղթը

1917 թ. դեկտեմբերի վերջին և 1918 թ. սկզբին, ոգևորված Անդրկովկասից ռուսական բանակի հեռանալուց, թուրքական հրամանատարությունն սկսեց ակտիվորեն նախապատրաստվել հարձակման: Թուրքերի դրդմամբ աչխուժացան Ախալցխայի և Ախալքալաքի մահմեդականները՝ «մեսխեթցիները»: Նրանք հարձակվեցին Ախալցխա քաղաքի վրա, որի հայ և վրացի բնակչության հերոսական ինքնապաշտպանությունը գլխավորեց երիտասարդ գործիչ, քաղաքագլուխ Զորի Զորյանը:[684]

1917 թ. վերջին ձևավորվեց Ախալքալաքի Ազգային խորհուրդը, որի ղեկավարությունը ստանձնեց քաղաքագլուխ, դաշնակցական Մկրտիչ Մարգարյանը: Խորհրդի անմիջական օժանդակությամբ նոյեմբերին կազմակերպվեց Ախալքալաքի հայկական հրացանաձիգների (հրաձգային) գունդը,[685] *ստեղծվեց զավառի պաշտպանության ժամանակավոր կոմիտե, որոնք որոշ աշխատանք կատարեցին ակտիվացած մեսխեթցիների սանձարձակությունները զսպելու ուղղությամբ: Ի դեպ, այդ գործում ինչպես Ախալքալաքի, այնպես էլ Ախալցխայի գավառներում հայերն ու վրացիները գործում էին միասնաբար՝ գրելով զինական համագործակցության բազմաթիվ վառ էջեր:*

1918 թ. փետրվար–մարտին Ախալքալաքի գավառի հարավարևմտյան մասում՝ Հոկամ, Խավեթ, Էրինջա գյուղերի թուրքերի դեմ հաջողությամբ համատեղ սլայքար էին մղում հայկական Գում-

---

[684] Ախալցխայի վեցամսյա ինքնապաշտպանության մասին մանրամասն տես Սանոսյան Ա., Ախալցխայի և Ախալքալաքի գավառների 1918 թ. ինքնապաշտպանությունը, Ե., 1992, նույնի՝ «Թշնամու դեմ ուս ուսի, Ախալցխայի 1918 թ. հերոսամարտը», Խորհրդային Հայաստան, 14 նոյեմբեր, 1989 և դեպքերի ականատես ու մասնակից Երվանդ Սիմոնյանի հուշերը (Սիմոնյան Ե., Ախալցխան կրակե օղակում, Ե., 2000):

[685] Սիմոնյան Հ. Ռ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 666: Ա. Հարությունյանի վկայակոչած նյութերի համաձայն այդ զորամասը գործելու էր որպես Հայկական կորպուսի մի ստորաբաժանում և կոչվելու էր առանձին հրաձգային գումարտակ: Ախալցխայում ստեղծվելու էր սակրավորների գումարտակ (տես Арутюнян А. О., Кавказский фронт 1914–1917 г., с. 332–334).

բուրդո, Կարծախ, Սուլդա, Վաչիան և Կուր գետի ձորում ընկած՝ վրացական գյուղերի բնակիչները:

Ախալքալաքի գավառում ձևավորված հայկական ջոկատները կարողացան չեզոքացնել տեղի թուրք մեսխեթցիների ավազակային գործողությունները և նրանց դուրս մղել մի քանի գյուղերից: Ախալքալաքի հայությունը չրջանցիկ ու վտանգավոր ճանապարհներով զգալի քանակությամբ հացահատիկ առաքեց Ախալցխայի պաշտպաններին: Ասպինձայի ձորում թուրքերը փակել էին ճանապարհը Ախալցխայի ու Ախալքալաքի միջև: Արտաքին աշխարհից լիովին կտրված՝ լիակատար չրջափակման մեջ, Դամալա գյուղը հերոսական կռիվներ էր մղում չրջակա թուրք մեսխեթցիների դեմ:

Այդ օրերին Ջավախք ժամանած հայտնի կամավորական Ուսուլ Խեչոն իր հայրենի Ախալցխայի հետ կապը վերականգնելու նպատակով, փորձեց Ախալքալաքի գավառի հյուսիսում ճեղքել պաշարման օղակը և Ճոբարեթով դուրս գալ Դամալա: Հաջողություն չունենալով՝ նա Բակուրիանով անցավ Բորժոմ, ուր ճանապարհը թուրքերից մաքրելու համար օգնության խնդրանքով դիմեց վրաց գեներալ Գ. Արջևանիձեին: Վերջինս բավարարվեց միայն խոստումներով: Խեչոն վերադարձավ Ախալքալաք և վճռեց խնդիրն իրականացնել տեղական ուժերով:

Նպատակի իրականացման ճանապարհին գլխավոր խոչընդոտը թուրքաբնակ Կոկիա գյուղն էր: Ուստի Խեչոն և նրա զինակից ընկերներից բաղկացած մոտ հազար հոգանոց մի զորախումբ, հիմնականում դաշնակցականներ Ախալքալաք քաղաքից, Վարևան, Ալաստան, Ազավրեթ և այլ գյուղերից, մարտի կեսերին հարձակվեցին Կոկիայի վրա: Ինչպես այս, այնպես էլ հարևան մի քանի գյուղերում ապրող թուրքերը երկօրյա դիմադրությունից հետո փախուստի դիմեցին դեպի Արդահան: Սակայն, որքան էլ հայ զինյալների այս քայլը թելադրված լիներ կենսական անհրաժեշտությամբ, անթույլատրելի և անհեռատես գործողություն էր: Նախ՝ դրա արդյունքում հնարավոր չեղավ բացել ճանապարհը դեպի Ախալցխա և երկրորդ՝ գավառում անտեղի սրվեցին հայ–թուրքական հարաբերությունները: Եվ երրորդ՝ Արդահանում թուրք փախստականները, գրգռելով տեղի մահմեդականներին հայերի դեմ, սադրեցին հայկական կոտորածներ: Երկու հազար արդահանցի կանայք, երեխաներ ու ծերեր, կրելով մեծ դժվարություններ, մազապուրծ հասան Ախալքալաքի գավառ, ուր նրանց տրամադրվեց օթևան:

Արդահանցի գաղթականների ողբալի վիճակը, թուրքերի կողմից նրանց հարազատների նկատմամբ գործադրած վայրագությունների մասին լուրերը չավախքցի երիտասարդներին մղեցին վոխադարձ վրիժառուության և անխոհեմ քայլերի: Տեղի դաշնակցական ու էսէռական մի քանի գործիչների առաջնորդությամբ նրանք բունություններ կատարեցին տեղի թուրքերի, այդ թվում՝ խոսպիա գյուղի բնակիչ, մահմեդականների չրջանում մեծ հեղինակություն ից օգտվող կալվածատեր Պալավանդովների նկատմամբ: Այսպես գավառում քրիստոնյա–մահմեդական փոխհարաբերությունները ծայր աստիճան սրվեցին: Տեղական իշխանությունները, Անդրկովկասյան սեյմը, Հայոց և Վրաց ազգային խորհուրդները գործնական քայլեր չկատարեցին Ախալքալաքի և Ախալցխայի գավառներում ազգամիջյան լարվածության թուլացման ուղղությամբ, որն այնքան անհրաժեշտ էր թուրքական զորքերի ներխուժման նախօրյակին: Սեյմը միայն տարբեր ազգերի ներկայացուցիչներից կազմված մի քննիչ հանձնաժողով ուղարկեց տարածաշրջան: Վերջինս էլ ոչ մի շոշափելի արդյունքի չհասավ:[686]

1918 թ. մարտ–ապրիլին Վեհիբ փաշայի զորքերի հարձակումից և հատկապես Կարսի մարզի գրավումից հետո Ախալքալաքի վիճակը խիստ ծանրացավ: Թուրքերի կողմից բռնագրավված տարածքներից նորանոր հայ գաղթականներ հաստատվեցին այստեղ: Ախալքալաքցիները կարողացան բանակցությունների մեջ մտնել թուրքական զինվորականության և Արդահանի մահմեդականների ներկայացուցիչների հետ և ապրիլի 9–ին Արդահանի ու Օլթիի գավառների 1500 հայ բնակիչների՝ հիմնականում կանանց ու երեխաների, վրացական Սարո գյուղում փոխանակել իրենց գավառի Կոկիա, Թոք և թուրքական այլ գյուղերի բնակիչների հետ:[687]

Ասպինձա և Ախալցխա տանող կյանքի ճանապարհը մնում էր Թչնամու հսկողության տակ: Ախալցխայի պաշտպանները զգում էին

---

[686] Ախալցխայում քաղաքապետ Զորի Զորյանի հեռատես քաղաքականության շնորհիվ հնարավոր եղավ խուսափել հայերի ու վրացիների կողմից տեղի թուրք բնակչության նկատմամբ բռնությունների գործադրումից: Այդ հանգամանքը մայիս–նոյեմբերին գավառի թուրքական բռնազավթման շրջանում, ստիպեց ինչպես տեղացի թուրքերին (որոնց մեծ մասն այդպես էլ չհեռացավ գավառից), այնպես էլ օսմանյան զորքերին հրաժարվելու քրիստոնյաներին կոտորելու ծրագրերից, և ամենակարևորը՝ հնարավորություն տվեց հայ և վրաց բնակչությանը խուսափելու աղետաբեր արտագաղթի պարտադրանքից:

[687] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, ց. 2, գ. 3, թ. 125ա–126 և Մշակ, 1918, թիվ 81:

հացահատիկի խիստ պակաս: Ապրիլի վերջին գավառի հյուսիսարևմտյան շրջան տեղափոխված կապիտան Ալեքսիձեի հրետանային մարտկոցի աջակցությամբ՝ Ուսուլ Խեչոյի զորաջոկատը չարժվեց դեպի Դամալա: Ճանապարհին նրանց միացավ դամալացիների վաշտը: Հայ–վրացական ուժերին հաջողվեց Դամալայի մատույցներից ետ չպրտել թուրքերին, ապա նաև ազատագրել Ասպինձան: Նույն ժամանակ հայ–վրացական ուժերի ախալցխայան խմբավորումն ազատագրեց Ախալցխա – Ախալքալաք ճանապարհին ընկած Մուսխ վրացական գյուղը: Սակայն, փոխանակ խճուղին բացելու նպատակով երկուստեք առաջ չարժվելու և միավորելու ուժերը, Անդրկովկասյան սեյմի հրամանով, վրացական ուժերը թողեցին Ասպինձան ու քաշվեցին Դամալա, ապա՝ Վարևան, այնտեղից էլ՝ Բակուրիան:[688]

Ապրիլին հայ–վրացական զինակցության փայլուն էջեր գրվեցին նաև Կուր գետի ափին մղվող մարտերում: Ջավախքի գյուղերից փախած մահմեդականները, որոնց մի մասն ապաստան էր գտել Ախալքալաքի գավառի հարավարևմտյան շրջանում, մեծ սպառնալիք էր ստեղծել Վարձիայի շրջակայքում գտնվող Ջեղաթմոգվի (Վերին Թմուկ) և Ագարա վրացական փոքրիկ գյուղերի բնակչության համար: Շնորհիվ հայկական Գումբուրդո գյուղի զինյալների խիզախ գործողությունների, հնարավոր է դառնում կանխել վրացիների կոտորածը և անվտանգ անցկացնելով նրանց Կուրի աջ ափը՝ տեղավորել Ախալքալաքի գյուղերում:[689]

Վերոհիշյալ դեպքերից հետո նոր աշխուժացում ապրեց օրեցօր առաջացող օսմանյան զորքերի օգտին Ախալցխայի ու Ախալքալաքի մահմեդականների լրտեսական գործունեությունը: Ապրիլի 13–ին տեղի գործադիր իշխանությունների 40 մահմեդական ներկայացուցիչների ստորագրությամբ թուրքական հրամանատարությանը ներկայացվեց մի փաստաթուղթ, որում հարց էր բարձրացվում ռուսական հեղափոխությունների հռչակած ինքնորոշման իրավունքով, մոտ երեք դար Թուրքիայի կազմում եղած Ախալցխայի գավառը և Ախալքալաքի գավառի մի մասը օսմանյան տերությանը միացնելու մասին: Հատուկ ընդգծվում էր այն միտքը, որ այս «...գավառների

[688] Սանոսյան Ա., նշվ. աշխ., էջ 82–87, 160–163, Սիմոնյան Ե., նշվ. աշխ., էջ 38–41, Շարժում, Ախալցխա, 1918, թիվ 29:
[689] Սանոսյան Ա., նշվ. աշխ., էջ 146–147:

մահմեդական բնակչությունը մեծ մասամբ ունի թուրքական ծագում և իր հոգևոր կապերը չի խզել Թուրքիայի հետ»:[690]

Ինչպես երևում է, իրենց անջատողական գործունեության արդարացման համար մահմեդական առաջնորդները վկայակոչում էին ինքնորոշման իրավունքի ընձեռած հնարավորությունը՝ մոռանալով այդ հարցում հաշվի նստել բնակչության մեծամասնության՝ հայերի ու վրացիների կարծիքի հետ: Այս քայլը, ինչպես ապացուցելու եկան հետագա դեպքերը, կազմակերպվել էր թուրքական հրամանատարության կողմից և համաձայնեցվել Անդրկովկասյան սեյմի մուսավաթական խմբակցության հետ:[691]

Հենվելով տեղերում ձևավորված ռազմական, ազգային ու քաղաքացիական մարմինների վրա՝ Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը, հակառակ Վրաց ազգային խորհրդի ձգտումներին, կարողացավ վիճելի համարվող Ախալքալաքի և Բորչալուի գավառների վրա տարածել իր ազդեցությունը, որոշ ռազմական օգնություն ցուցաբերել Ջավախքին: «Այս ամբողջ ժամանակամիջոցում (1917 թ. հոկտեմբեր– 1918 թ. մայիս– Ա.Մ.),– գրում էր Արշակ Ջամալյանը,– մեր հողային չրջանը կազմող բոլոր գավառները, դրանց թվում և Ախալքալակն ու Հայկական Բորչալուն, ենթարկվում էին բացառապես Հայոց Ազգային Խորհրդին: Վրաց Ազգային խորհուրդը որևէ առթիվ, որևէ միջամտություն չի ունեցել այդ գավառների գործում»:[692]

Շուտով Ախալքալաք ուղարկվեց գնդապետ Առաքելովը, տեղում սկսվեց հայկական կորպուսի առանձին գնդի կազմավորման գործը: Ցավոք, ի տարբերություն Ախալցխայի, Ախալքալաքից հեռացած ռուսական կայազորն իր հետ տարավ զինամթերքի մեծ մասը և հնարավոր եղավ զինել գնդին զինվորագրվել ցանկացող 5 հազ. երիտասարդներից միայն 2 հազարին:

---

[690] Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, с. 310–311. Հմմտ. ՝ Ջամալեան Ա., Իմ պատասխանները, Յառաջ, 1928, 4 հուլիս, թիվ 690, էջ 2:

[691] Հետագայում՝ սեյմի մայիսի 26–ի նիստում, երբ արդեն դաշնությունը տանուլ էր տվել պատերազմը և կանգնած էր լուծարման շեմին, մենշևիկների առաջնորդներից Ի. Ծերեթելին իր արտասանած ճառում հարկ համարեց սուր քննադատության ենթարկել մուսավաթականներին՝ Ախալքալաքի ու Ախալցխայի մահմեդականների պառակտչական քայլերը խրախուսելու և թուրքական զավթողական պլաններին աջակցելու համար (տե՛ս Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, с. 324–325): Դրանով նա փորձում էր Անդրկովկասյան դաշնությունը լուծարելու, Թուրքիային տարածքային զիջումներ կատարելու գործում իր կուսակցությանն «ազատել» պատասխանատվության մասնաբաժնից:

[692] Ջամալեան Ա, Հայ–վրացական կնճիռը, Հայրենիք, 1928, ապրիլ, էջ 89:

Ինչևիցե, ակնհայտ է, որ 1917 թ. վերջից մինչև 1918 թ. մայիսի կեսերը Ջավախքում ստեղծվել էր հայկական իշխանություն, որի հետ հաշվի էր նստում Անդրկովկասյան սեյմը: Ի դեպ, վերջինս, հավանաբար ելնելով այդ իրողությունից, ոչ մի չոշափելի քայլ չկատարեց թուրքական ներխուժումն Ախալքալաք կանխելու ուղղությամբ: Անպատասխան մնացին ախալքալաքցի հայտնի մտավորականների՝ գրող Դերենիկ Դեմիրճյանի և հասարակական գործիչ Պողոս Աբելյանի[693] դիմումները սեյմին՝ տեղում եղած հարուստ հացամթերքը թուրքերի ձեռքը չընկնելու համար, նախապես գավառից դուրս բերելու վերաբերյալ:[694]

1918 թ. մարտի վերջին Հայոց ազգային խորհուրդը, հաշվի առնելով, որ սեյմը մոռացության է տվել Ջավախքում լուրջ պաշտպանական ուժեր ստեղծելու խնդիրը, սկսեց այդ ուղղությամբ նոր միջոցներ որոնել: Հայկական կորպուսի հրամանատար գեներալ Թ. Նազարբեկյանի խորհրդով որոշվեց դիմել զորավար Անդրանիկի օգնությանը, որն Ալեքսանդրապոլում ձեռնամուխ էր եղել նոր զորամասի կազմավորման գործին: Նազարբեկյանը մտադիր էր Անդրանիկի զորամասն օգտագործել կամ Մերդենեկում կամ Ախալքալաքում, որոնք թուրքական առաջխաղացման ճանապարհին ամենախոցելի օղակներն էին:[695] Բայց կորպուսի հրամանատարը, անտեղյակ լինելով, որ Ապահովության խորհուրդն իր հերթին ծրագրել է զորավարի ուժերն ուղղել Պարսկաստան՝ այնտեղից Միջագետք անցնելու և անգլիացիներին միանալու համար, առանց Անդրանիկին տեղեկացնելու, ապրիլի 6–ին կարգադրում է հայկական կորպուսի շտաբից

---

[693] Պողոս Գրիգորի Աբելյանը (1877–1943) հայ ազգային–ազատագրական շարժման հայտնի գործիչներից է, տնտեսագետ, իրավաբան, մանկավարժ, գրող, բարգմանիչ: Ծնվել է Ախալքալաքի գավառի Գումբուրդո գյուղում, սովորել Գևորգյան ճեմարանում, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, Մոսկվայի Լազարյան ճեմարանում և համալսարանի իրավաբանական ֆակուլտետում: Հարել է էսէռական կուսակցությանը, Ախալքալաքում հիմնել է ազատագրական խմբակ Արևմտյան Հայաստանում հակաթուրքական պայքարն աշխուժացնելու նպատակով: 1914–ին մասնակցել է հայկական կամավորական ջոկատների կազմակերպման գործին, 1916–1917 թթ. զգալի օգնություն է ցույց տվել արևմտահայ գաղթականներին հայրենիքում տեղավորելու համար: Եղել է կովկասահայ բազմաթիվ ընկերությունների անդամ, Ախալքալաքի հայրենյաց վարչության ստեղծման նախաձեռնողն ու քարտուղարը: Մեծ աշխատանք է կատարել ախալքալաքցի գաղթականներին սովից ու համաճարակից փրկելու ուղղությամբ: Ջավախքը Հայաստանին միացնելու շարժման ղեկավարներից է (տես Մելքոնյան Ա., Աբելյան Պողոս, Հայկական հարց, Ե., 1996, էջ 7):

[694] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, ց. 2, գ. 3, թ. 123ա:

[695] Սիմոնյան Հ. Ռ., Անդրանիկի ժամանակը, հ. Բ, էջ 103:

հեռագրել Ախալքալաք՝ ճանաչված զորավարի դալստյան լուրը հայտնելու համար: Հաջորդ օրը Ալեքսանդրապոլում ստացվում է Ախալքալաքի զինական ուժերի հրամանատար գնդապետ Առաքելովի ոգևորական հեռագիրը. «Խնդրում եմ հայտնեք իմ անկեղծ ուրախությունը Անդրանիկի՝ այդ ազգային հերոսի Ախալքալաք նշանակման մասին: Ես անձամբ կխնդրեի չտապեցնեիք նրա գալուստը, որովհետև միմիայն նրա երևան գալը կոգևորե ժողովրդին, որպիսի ոգևորությունը չափազանց կարևոր է: Մեծ կարիք եմ զգում հրացանների, ընդհանրապես զենքերի»:[696]

Ապրիլի սկզբին Ազգային խորհուրդը, հավանաբար կռահելով, որ գեներալ Նազարբեկյանի այս անակնկալ և չհամաձայնեցված որոշումը կարող է առաջացնել Անդրանիկի հասկանալի դժգոհությունը, իր ներկայացուցիչ Պարույր Լևոնյանի (աշուղ Ջիվանու որդին) միջոցով, պաշտոնապես առաջարկություն ներկայացրեց զորավարին՝ իր 1400 հոգանոց հայկական առանձին հարվածող զորամասով Ախալքալաք անցնելու և Կարսի մարզից թուրքերի մուտքը գավառ կանխելու նպատակով: Անդրանիկը սկզբում թերահավատորեն վերաբերվեց այդ առաջարկությանը: Նա Լևոնյանին հայտնեց, որ Ալեքսանդրապոլից Ախալքալաք անցնելու համար իրեն հարկ կլինի բախվել Աղբաբայի (Ամասիա) մեծաթիվ թուրք բնակչության և այդ շրջանում վխտացող բազմաքանակ թուրքական զինվորականության հետ: «Ասոնց մէջէն անցնելով Ախալքալաք հասնիլ,– ասում էր Անդրանիկը,– այն ալ 1000 հոգիով, ինչ որ կը նշանակէ 6–700 հրացան: Այդքան ուժ անբաւական է»: Երկրորդ հանգամանքը, որն ըստ զորավարի՝ հուշում էր այդ ձեռնարկման անհեռանկարայնությունը, գավառին ու նրա տեղանքին իր անծանոթ լինելն էր. «Ես աչքերս գոց կը ճանչնամ Հայաստանի ամէն մէկ ձորը, բլուրը, կիրճը. իսկ սա քարտէսին վրայ երեւցող երկիրը (Ախալքալաքը –Ա.Մ.) ինձ անծանոթ է»:[697]

Սակայն, ինչպես ցույց տվեցին հետագա դեպքերը, այնուամենայնիվ, Անդրանիկը, ենթարկվելով զինվորական կարգապահությանը, փորձեց իրականացնել այդ խնդիրը: Նա թեև անծանոթ էր Ջավախքին, սակայն տասնամյակներ շարունակ Արևմտյան Հայաստանում կռվել էր ախալքալաքցի փիդայիների հետ, սերտ չփումներ

---

[696] Նույն տեղում, էջ 104:

[697] Չելեպյան Ա., Զորավար Անդրանիկ և հայ հեղափոխական շարժումը, Ե.,1990, էջ 449:

ունեցել ծնունդով ախալքալաքցի հայտնի գործիչներ Ռուբեն Տեր–Մինասյանի, Համո Օհանջանյանի, Ռուբեն Դարբինյանի ու այլոց հետ և չէր կարող անտարբեր մնալ ջավախքցիների ճակատագրի նկատմամբ, առավել ևս, որ պաշտպանության տակ վերցնելով Ալեքսանդրապոլ–Ախալքալաք գիծը, կամրապնդվեր հայկական ուժերի աջ թևը և կփակվեին թուրքական զորքերի ուղիները դեպի Լոռի ու Թիֆլիս: Անկասկած, Ալեքսանդրապոլից մինչև Ախալքալաք գիծը փոքրաթիվ ուժերով պահելու այդ ծրագիրը, ինչպես իրավացիորեն նկատել է ակադեմիկոս Հ. Սիմոնյանը, գրեթե անհնարին խնդիր էր, սակայն արդարացված էր՝ ունեցած սահմանափակ միջոցների պայմաններում:

Դուբս գալով Ալեքսանդրապոլից «1918 թ. ապրիլի 10–ին,– իր հուշերում գրում է Հայկական առանձին հարվածող զորամասի պորուչիկ Կոլմակովը,– մեր ջոկատն ուղղություն վերցրեց դեպի Ախալքալաք՝ գեներալ Անդրանիկից հրաման ստանալով չանցնել Թուրքիայի հետ կնքված զինադադարի նախատեսած սահմանային գիծը՝ Ախուրյան գետը»:[698]

Անդրանիկի զորամասը շարժվեց դեպի Շիրակի հյուսիսային շրջան և հասավ Գյուրջիյոլ (Թորոս) գյուղը: Ապրիլի 13–ին զինվորները դիրքեր գրավեցին Աչոցքից Լոռի տանող ռազմավարական նշանակության ճանապարհի երկայնքով, Կարախաչի լեռնանցքի մուտքի մոտ՝ Դուզխարաբա (այժմ՝ Հարթաշեն) և Ջիֆթլի (Ջուլգաղբյուր) գյուղերում: Ջարգացնելով հաջողությունը՝ ապրիլի 14–ին նրանք հասան Ղազանչի գյուղը և մարտի բռնվեցին տեղի թուրքերի ու քրդերի հետ: Թշնամին ի վիճակի չեղավ դիմադրելու և նահանջեց Ախուրյանի վտակ Ղալիչայի աջ ափը: Այս հաղթական կռվում Հայկական առանձին հարվածող զորամասը ստացավ իր առաջին մարտական մկրտությունը: Ղազանչիից հետո Անդրանիկի զորագունդն ընդհուպ մոտեցավ Ախալքալաքի գավառին: Նրա հսկողության տակ հայտնվեց Աչոցքի սարահարթի զգալի մասը՝ Ղազանչի–Շիշթափա (Սեպասար)–Ջիֆթլի–Բոզյոխուշալի (Մուսայելյան) շրջատարածքը:[699] *Աղբաբայի թուրքերի ու քրդերի սարսա-*

---

[698] Поручик Колмаков о деятельности Андраника в 1918 г., ԼՀԳ, 1988, թիվ 8, էջ 67:

[699] Աղայան Ծ.,Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Ե., 1976, էջ 598–599: Այդ օրերին Ջավախքում մեծ ոգևորությամբ սպասում էին Անդրանիկի գալստյանը:

փից իրենց գյուղերը լքած հայ գյուղացիների զգալի մասը վերադարձավ տուն: Սակայն չուտով թուրքական զորքերը, գրեթե անարգել գրավելով Կարսի մարզի ողջ տարածքը, ապրիլի 16–ին դուրս եկան Ախուրյանի ափը: Մի զորաջոկատ էլ Աղբաբայի թուրքերի աջակցությամբ հասավ Ախուրյանի ակունքների շրջանը և անմիջական վտանգ ստեղծեց Աշոցքն ու Ջավախքը կապող ճանապարհի համար:

Նման ծանր պայմաններում գեներալ Նազարբեկյանը, անհանգստացած ռազմաճակատի փլուզման վտանգից, Ալեքսանդրապոլից հեռագիր հղեց Անդրանիկին՝ հանձնարարելով հարվածող զորամասի ուժերով երկարացնել պաշտպանական գիծը Գյուլիբուլաղ (Վարդաղբյուր) գյուղից հասցնել մինչև Ախալքալաքի գավառի հարավային սահմանները: ՀՀ Պատմության կենտրոնական արխիվում հայտնաբերված այդ հեռագրի տեքստում ասվում էր. «Իրադրության փոփոխության կապակցությամբ, ...հրամայում եմ Ձեր ենթակայության տակ գտնվող ջոկատով անհապաղ մտնել Խանչալը–գյոլ լճի և Մարդատապինսկոյեի (Մադաթափա լճի - Ա.Մ.) շրջանը, որտեղ և ամրանալ, պահպանելով լիակատար հանգստություն Ախալքալաքի գավառի հարավային մասում և հաստատել հսկողություն Կարսի մարզի սահմանի վրա»:[700]

Այդ դժվարին խնդրի իրագործման ճանապարհին Անդրանիկի առջև ծառացան նոր պրոբլեմներ: Բազմաթիվ արևմտահայ ռազմիկներ, չկամենալով մնալ իրենց համար անծանոթ զորահրամանատարների ենթակայության տակ, փախչում էին զորամասերից և, չնայած Անդրանիկի հակազդեցությանը, Աշոցքի սարահարթում միանում Հարվածող զորամասին, որի գինվորների թիվն արդեն հասել էր 2600–ի:[701]

Անդրանիկը Գյուլիբուլաղից մայիսի 2–ին նամակով դիմեց Ախալքալաքի Հայոց ազգային խորհրդին՝ մատչելի գներով իր զորամասին սննդամթերք տրամադրելու առաջարկով: Ախալքալաքի ազգային խորհուրդը մերժեց զորավարի առաջարկը՝ եղած միջոցները գավառում կազմավորված 3500 հոգանոց գնդի և Ալաշկերտից (պետք է լինի Արդահանից – Ա.Մ.) ժամանած 6000 գաղթականների

---

[700] Սիմոնյան Հ. Ռ., Անդրանիկի ժամանակը, հ. Բ, էջ 113, Կարապետյան Հ., Անդրանիկ, հ. 3, Ե., 1994, էջ 496:
[701] Սիմոնյան Հ. Ռ., Նշվ. աշխ., էջ 118:

կարիքները հոգալու պատճառաբանությամբ: Ազգային խորհրդի պատասխանատու Վ. Այվազյանը Անդրանիկին ներողամտաբար խնդրում էր նման քայլը «...չընդունել որպես խուսափողական միջոց ազգային կարիքների դիմաց, այլ անհրաժեշտությունից ստիպված մի հայտարարություն՝ իրազեկ անելու Ձեզ Ախալքալաքի դրության և պայմանների հետ»:[702]

Հայոց Ազգային խորհրդում և քաղաքական որոշակի շրջանակներում կար այն մոտեցումը, որ Անդրանիկին թուրքական ճակատի Ալեքսանդրապոլ–Ախալքալաք հատված ուղարկելը սխալ քայլ է: Նրանց կարծիքով հաստատված զինադադարը, որը նախատեսում էր կրակի դադարեցում և Ախուրյան գետով կողմերի միջև ռազմաճակատի նոր գծի հաստատում, կարող էր խախտվել Անդրանիկի զինվորների ինքնագլուխ քայլերի կամ, որ ավելի հավանական է թուրքերը, զորավարի նկատմամբ ունենալով անհանդուրժողական կեցվածք, կարող էին վերսկսել հարձակումը և անցնել Ախուրյանը: Այդ կարծիքին էր նաև Ապահովության խորհրդի նախագահ Կոմսը Վահան Փափազյանը, որն առաջարկում էր Անդրանիկի ուժերը ետ քաշել ավելի ապահով չրջան: Իրականում զինադադարը խախտեցին թուրքերը և Ղազանչի գյուղի մոտ անցնելով դեմարկացիոն գիծը, կոտորածներ կազմակերպեցին Աշոցքի հայկական գյուղերում:

Նման պայմաններում Անդրանիկը հրաժարվեց Ախալքալաք անցնելու մտադրությունից և Կարախաչի դժվարանցանելի լեռնանցքով դուրս եկավ Վորոնցովկա (այժմ՝ Տաշիր): Թուրքական զորքերն անարգել չարժվեցին Աշոցքի և Ջավախքի ուղղություններով:

Շիրակ–Աշոցքի գրավումից հետո թուրքական մի զորաջոկատ հարավից չարժվեց դեպի Ախալքալաքի գավառ: 1918 թ. մայիսի 7-ին (20) թշնամին Ջավախք ներխուժեց նաև հարավ–արևմուտքից՝ Ջլդրի կողմից: Ախուրյան գետն անցնելու, Ախալցխա ու Ախալքալաք ներխուժելու թուրքերի հանդուգն ու ինքնագլուխ քայլը խիստ դժգոհություն առաջացրեց անգամ Թուրքիայի դաշնակիցների չրջանում: Մայիսի 15–ին գեներալ Ֆոն Լոսովը Բեռլին՝ արտաքին գործոց նախարարությանը գրում էր. «Մաքուր հայկական մարզեր Ախալքալաքի, Ալեքսանդրապոլի և Երևանի նկատմամբ թուրքերի

[702] Սիմոնյան Հ. Ռ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 115–116: Անշուշտ, Ախալքալաքի գնդի զինվորների և գավառում հանգրվանած գաղթականների թվաքանակի վերաբերյալ տեղի ազգային խորհրդի պատասխանատու Վ. Այվազյանի վկայակոչած տվյալները չափազանցված են:

չափից դուրս պահանջները ցույց են տալիս, որ նրանք ձգտում են գրավել Բրեստի պայմանագրով չնախատեսված մարզեր, չհագեցնել Կովկասը և իրականացնել հայերի լրիվ ոչնչացումն Անդրկովկասում»:[703] *Եվ իրոք, Բաթումում, նոր տոմարով մայիսի 26–ի երեկոյան Հալիլ փաշան վերջնագիրը ներկայացրեց նույն օրը իր լուծարման մասին հռչակած Անդրկովկասյան սեյմի նախագահ Ջխենկելուն՝ պահանջելով զիջել Երևանի գավառի կեսը, Էջմիածնի, Նախիջևանի և Շարուր–Դարալագյազի գավառների զգալի մասը, իսկ Սուրմալուի, Ալեքսանդրապոլի, Ախալքալաքի ու Ախալցխայի գավառներն ամբողջությամբ:*

Ախալքալաքում տեղի բնակչությունից կազմավորված փոքրաթիվ ու վատ զինված ջոկատները Կարծախի մոտ՝ Գյոք Դաղ լեռան շրջանում կարողացան կազմակերպել կարճատև դիմադրություն: Գնդապետ Առաքելովը փոխանակ մեկնելու ճակատ, շարունակում էր «ղեկավարել» ինքնապաշտպանական ուժերի գործողությունները Ախալքալաքից՝ 25–30 կմ հեռավորությունից:[704]

Շնորհիվ ռուսական բանակից զորացրված զինվորականների Լյուդվիգ Դեմիրճյանի, Խորեն Մնոյանի, Զարմայր Խանոյանի, Թիֆլիսից ժամանած Պողոս Աբելյանի՝ ռուս սպա Ռեզնիկովի խմբերի մղած պաշտպանական ծանր մարտերի, հնարավոր եղավ ապահովել գավառի բնակչության արտագաղթը:[705] *Վրաց ազգային խորհրդի ենթակայության տակ գտնվող վրացական զորաջոկատն առանց մարտի մեջ մտնելու, թողեց ռազմաճակատի գիծը:*

Գավառի հյուսիսային գյուղերի բնակչությունը՝ մոտ 40 հազ. մարդ գաղթեց դեպի Բակուրիան, իսկ հարավայինը՝ 30–35 հազ.

---

[703] Из истории иностранной интервенции в Армении в 1918 г. Документы, Е., 1970, с. 116, Հարությունյան Ա. Հ., Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918 թ. և ինքնապաշտպանական կռիվները, Ե., 1984, էջ 171:

[704] Անտեղյակ Ախալքալաք թուրքերի ներխուժման հետևանքով ստեղծված իրավիճակից գեներալ Նազարբեկյանը մայիսի 17–ին գնդապետ Առաքելովին հրամայեց միանալ Անդրանիկի զորամասին և գործել միասնաբար (Սիմոնյան Հ. Ռ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 133): Սակայն դա կնշանակեր անպաշտպան թողնել գավառի հայությանը և երկրորդ Անդրանիկն արդեն Լոռիում էր, և նրա հետ միանալու ճանապարհները թուրքերի կողմից գրավված էին:

[705] Թուրքերը, առաջին անգամ Ախալքալաքի գավառ ներխուժելուց մի քանի օր հետո, ձևացրին, թե դուրս են գալիս այնտեղից: Գաղթականների մի մասը հավատաց դրան և ետ դարձավ: Մայիսի երկրորդ կեսին թուրքերը նորից մտան Ախալքալաք և կարողացան տիրել գաղթականների ետ բերած գույքի մի մասին, գերել ու ոչնչացնել հազարավոր մարդկանց:

մարդ, հիմնականում Մալկա՝ տեղում թողնելով իր ամբողջ անշարժ գույքը: Անգամ չհաջողվեց գավառից դուրս բերել հարյուր հազարավոր փութ ալյուր և մինչև 10 մլն. փութ հացահատիկի բերք:[706] *Այդ օրերին «Հորիզոն» թերթում Արսեն քահանա Բլրցյանը գրում էր. «Թուրքերի թնդանոթների և գնդացիրների տարափի տակ, փախստականները չկարողացան իրենց ունեցած ինչքից որևէ բան վերցնել իրենց հետ և ամեն բան թողին գյուղերում: Շատ հայերի գերել են թուրքերը»:*[707] *Զգաղթեցին միայն թուրքախոս հայ կաթոլիկներն ու ռուս դուխոբորները: Այսպես մինչև մայիսի վերջը արտագաղթեց ամբողջ Ախալքալաք քաղաքի և 61 հայկական գյուղերի բնակչությունը:*[708]

Գավառ ներխուժած թուրք ասկյարներն ու տեղի մեսխեթցիները թալանեցին գյուղերն ու սրի քաշեցին տեղում մնացած բնակչության մի մասին: Գերի վերցված բնակչության մյուս մասից էլ առանձնացվեցին աշխատունակ հարյուրավոր տղամարդիկ և աքսորվեցին Օսմանյան կայրուքյուն, իսկ ավելի քան հազար ծեր տղամարդկանց ու կանանց աքսորեցին Բակուրիան՝ գաղթականների ճամբար: Ահավոր աղետի ենթարկվեցին Խորենիա և Թախչա գյուղերի բնակիչները: Մալկա անցնելու ճանապարհին, Աբուլ լեռան ստորոտին մի քանի թուրք լրտեսների՝ անվտանգության երաշխիքների կեղծ խոստումներով հաջողվեց համոզել Խորենիացիների մեծ մասին՝ 800 մարդու, վերադառնալ գյուղ: Ապա նրանք և Թախչա գյուղի 300 բնակիչներ, թուրք ասկյարների կողմից արգելափակվելով մարագներում, վայրագորեն ոչնչացվեցին:[709] *Թուրքական հրոսակները սպանդ կազմակերպեցին նաև Մեծ Արագյալ, Գումբուրդո, Աբուլ, Բեժանո գյուղերում, Ախալքալաք քաղաքում և այլուր:*

Կոտորածն ավելի մեծ մասշտաբներ կընդուներ, եթե բնակչությունը տեղ–տեղ չդիմեր ինքնապաշտպանության: Թշնամին հատկապես համառ դիմադրության հանդիպեց Սաթխա գյուղի մա-

---

[706] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 17, թ. 34:

[707] Արսեն քահանայ Բլրցեան, Ախալքալաքի գաղթականությիւնը, Հորիզոն, 1918, 27 հունիս, թիվ 125:

[708] ՀՀ ԳԱԱ ՊԻՄ, Լեոյի անձն. ֆ. 1, ց. 1, գ. 242, թ. 4–5:

[709] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 17, թ. 34–35 և ՀՀ ԳԱԱ ՊԻՄ, Լեոյի անձն. ֆ. 1, ց. 1, գ. 242, թ. 5: Խորենիա գյուղի կոտորածի մասին տե ս նաև Կիրակոսյան Խ., Խորենիա գյուղի ջարդի 80–ամյակին. Հայաստանի Հանրապետություն, 1998, 27 հունիս, էջ 7:

տուլցներում:[710] Ջավախքցիների դիմադրությունը կոտրելու համար թուրքերին հարկ եղավ Վորոնցովկայում տեղակայված Կովկասյան 9–րդ հրաձգային գնդի կազմից նոր ուժեր տեղափոխել Ախալքալաքի գավառ:

Բորժոմի շրջանում տեղակայված վրացական զորքերի հրամանատար գեներալ Արշևանիձեն ոչ միայն ռազմական ու նյութական օգնություն ցույց չտվեց հայ բնակչությանը, այլև զինաթափեց հայ կամավորներին, որոնք ևս գաղթականների վերջին խմբերին ուղեկցելուց հետո հունիսի 5–ին դուրս էին եկել գավառից: Վրաց գեներալը, ստանալով Վրաց ազգային խորհրդի կարգադրությունը, ախալքալաքցի փախստականներին արգելեց տեղավորվելու Բակուրիան ավանում, նրանից հյուսիս, հյուսիս–արևմուտք և Վրաստանի այլ շրջաններում: «Բակուրիանում,– այդ օրերին գրում էր «Հորիզոն» թերթը,– վրաց կառավարությունը Ջավախքի հայ գաղթականների ձիերը և հրացանները բռնագրաւեց»:[711]

Ջանազան արգելքներ հաղթահարած այն գաղթականները, որոնք հասել էին Թիֆլիս, Նավթլուղ կայարանում շրջապատվեցին վրացական զորքի կողմից և բռնությամբ վերադարձվեցին Ծալկայի շրջանում և Բակուրիանի անտառներում ծվարած մյուս գաղթականների մոտ: Վրաստանի խորքերը տեղափոխվելու արտոնություն ստացան միայն վրացի գաղթականները:[712] Հյուսիսային Կովկաս, հիմնականում Վլադիկավկազ անցած գաղթականների առջև փակվեցին Վրաստան տեղափոխվելու ճանապարհները:

Ինչպես նշվեց, շնորհիվ Զ. Զորյանի խոհեմ քայլերի, լինքնապաշտպանությունից հետո Ախալցխան փոխադարձ համաձայնությամբ ընդունեց թուրքերի գերիշխանությունը և զերծ մնաց արտագաղթից ու բնակչության կոտորածից՝ ախալքալաքցիների համեմատությամբ հայտնվելով շատ ավելի տանելի պայմաններում:

Շուտով թուրքական զինվորական հրամանատարությունը հանդես եկավ Ախալքալաքն ու Ախալցխան Անդրկովկասում «ստեղծվող» Հարավարևմտյան թուրքական հանրապետության մաս

---

[710] Մանրամասն տե՛ս Սանոսյան Ա., նշվ. աշխ., էջ 177–195:
[711] Հորիզոն, 1918, 27 հունիս, թիվ 125:
[712] ՀՀ ԳԱԱ ՊԻԱ, Լեոյի անձն. ֆ. 1, ց. 1, գ. 264, թ. 1–2 և ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, ց. 2, գ. 3, թ. 1217ա, հմմտ.՝ Ջամալեան Ա., նշվ. աշխ, Հայրենիք, 1928, ապրիլ, էջ 90, Հորիզոն, 1918, 27 հունիս, թիվ 125:

ճանաչելու հայտարարությամբ: Ամենուր սկսեցին մտցվել օսմանյան վարչակարգեր: Ախալքալաքի գավառի ժամանակավոր կառավարիչ նշանակվեց Խոսպիա գյուղում բնակվող կալվածատեր Յասոն բեկը, գյուղերում հաստատվեցին մյուդիրներ (գյուղապետեր): Թուրքերն սկսեցին բնակավայրերից դուրս բերել տեղում թողնված չարժական գույքը, հայերից ու վրացիներից դատարկված գյուղերը բնակեցնել մահմեդականներով: Սկսվեց կիսաամայացած ու հայաթափված գավառի ավելի քան վեցամսյա թուրքական տիրապետության մի ծանր ժամանակաշրջան: Լեռնային բնակավայրերում և ընդհատակում ստեղծվեցին հայ վրիժառուների խմբեր, որոնք իրականացրեցին մի շարք ահաբեկչական գործողություններ թուրք պաշտոնյաների նկատմամբ, կարողացան գավառից դուրս բերել բնակչության թաքցրած ինչքի որոշ մասը:[713]

Ախալքալաքի գավառում հաստունացող հացահատիկի հարուստ բերքը հավաքելու համար թուրքական զինվորական իշխանություններն օգտագործեցին հարևան շրջանների բնակիչներին: Այդ նպատակով թուրքերը դիմեցին նաև Զ. Զորյանի օգնությանը, որը մնալով Ախալցխայում, իր հեղինակությամբ ու ճկուն վարվելաձևով շրջունակում էր նպաստ բերել գավառում քրիստոնյաների և թուրքական իշխանությունների ու թուրք բնակչության միջև հաստատված խաղաղության պահպանմանը: Նրա կարգադրությամբ, «որպես բարի կամքի արտահայտություն», բազմաթիվ ախալցխացիներ՝ հունձքի իրենց գործիքներով, մեկնեցին Ախալքալաքի գավառ: Այստեղ հայերին պարտադրվեցին աշխատանքի ծանր պայմաններ: Նրանց ստիպեցին առանց վարձատրության աշխատել օրական մինչև 12 ժամ: Մինչդեռ, դաշտերում աշխատող տեղի թուրքերին ու կայսրության խորքերից եկած այլ մահմեդականների թույլատրվեց յուրացնել հավաքված բերքի մի մասը: Ախալցխայից եկած նորանոր խմբեր ներգրավվեցին բերքահավաքի աշխատանքների մեջ: Նրանցից շատերն իրենց սայլերով մասնակցեցին նաև ավելի քան մեկ միլիոն փութ հացահատիկը կայսրության խորքերը տեղափոխելու գործին:[714]

---

[713] Թուրքական տիրապետության շրջանում ընդհատակում գործող զինական խմբերի գործունեությունն իր գեղարվեստական արտացոլումն է գտել ջավախեցի անվանի արձակագիր Մկրտիչ Սարգսյանի «Խաչված քաղաքը» վիպակում (Ե., 1996):

[714] Սիմոնյան Ե., Ախալցխան կրակե օղակում, էջ 103–104:

Գ) Հայ-վրացական սահմանային խնդիրը Անդրկովկասյան հանրապետությունների անկախության հռչակումից հետո (1918 թ. մայիս - օգոստոս)

Ախալքալաքի զանգվածային գաղթի օրերին կյանքի կոչվեցին Անդրկովկասի երեք հանրապետությունները: Հայոց ազգային խորհուրդը մայիսի 30–ի անկախության հռչակագրում իրեն հայտարարում էր հայկական գավառների ներագույն ու միակ իշխանություն: Անշուշտ, «հայկական գավառներ» անորոշ բառակապակցության ընտրությունը ինքնանպատակ չէր: Նման ձևակերպումով Ազգային խորհուրդը մի կողմից խուսափում էր ռազմաքաղաքական այդ բարդ իրավիճակում օսմանյան թուրքերի և նորաստեղծ հարևան պետությունների հետ տարածքային վեճերի մեջ հայտնվելու վտանգից, մյուս կողմից, թեկուզև անորոշ սահմաններով, հայտնում էր իր իրավունքները հայկական այդ տարածքների նկատմամբ: Տվյալ դեպքում վերջինիս տակ կարելի էր նկատի առնել և՛ Արևմտյան Հայաստանը, և՛ Ղարաբաղը, և՛ Ջավախքը, և՛ այլ վիճահարույց տարածքներ:

Սակայն վրաց մենշևիկներն ավելի գործնական քայլեր էին ձեռնարկել վիճելի գավառների հարցը հօգուտ իրենց լուծելու ուղղությամբ: Նրանք Գերմանիայի ներկայացուցիչ Ֆոն Լոսովի հետ նախապատրաստել էին ոչ միայն իրենց հանրապետության անկախության հռակումը, այլև որոշակի հավաստիացումներ ստացել վիճելի նկատվող Ախալքալաքն ու Բորչալուն Վրաստանի մաս ճանաչելու խնդրում:[715] Ուստի պատահական չէ, որ նրանք 1918 թ. հունիսի սկզբին գերմանացիների հովանավորությամբ հսկողություն սահմանեցին Հյուսիսային Լոռու նկատմամբ (Հարավային Լոռին բռնազավթվեց թուրքերի կողմից), իսկ ամսի 4–ին, Բաթումում Օսմանյան կայսրության հետ կնքած հաշտության պայմանագրով, իրենց իրավունք վերապահեցին հանձնել թուրքերին գերազանցապես հայերով բնակեցված Ախալցխայի և Ախալքալաքի գավառները:

Կարծում ենք, որ նման քայլը թելադրված չէր միայն թուրքերին դիմադրելու անկարողությամբ: Այն նաև հետու դնացող նպատակ էր հետապնդում: Նախ՝ ստեղծվում էր տպավորություն, թե նորահռչակ Վրաստանը ևս Հայաստանի նման լուրջ տարածքային զի-

[715] Ջամալեան Ա., Իմ պատասխանները..., Յառաջ, 1928, 19 հունիս, թիվ 677, էջ 2:

ջումներ է անում ռազմական հաղթանակներ գրանցած Թուրքիային և երկրորդ իր կնքած առաջին միջազգային պայմանագրով, իբրև պայմանավորվող կողմ արձանագրում է իր իրավունքներն այդ գավառների բախտը տնօրինելու հարցում: Պատերազմում Թուրքիայի ռազմական անհաջողության դեպքում Վրաստանը կարող էր նորից վերականգնել իր «օրինական» իրավունքը Ախալցխայի և Ախալքալաքի նկատմամբ: Եվ վերջապես, որ ամենացավալին է, թուրքական բռնազավթումը կարող էր արմատապես փոխել Ջավախքի ժողովրդագրական պատկերը. այն է՝ զրկել նրան իր հայկական էթնոնկարագրից: Հետագա դեպքերը բացահայտելու եկան վրաց քաղաքական շրջանակների այդ ազգայնական ծրագրերը:

Ինչ վերաբերում է Ախալքալաքը և Ախալցխան Թուրքիային բռնակցելու օսմանյան կողմի հաստատակամությանը, այն Անդրկովկասում իր գերիշխանությունը վերականգնելու թուրքական կառավարության ձգտման հետևանք էր: Այդ գավառների և Բորչալուի բռնակցումով թուրքերն անմիջական կապ էին ստեղծում Ադրբեջանի հետ՝ միաժանակ սեպ խրելով Հայաստանի ու Վրաստանի միջև: «Նրանց մի ցանկություն էր,– Բաթումի բանակցություններում թուրքական պատվիրակության նպատակների մասին գրում էր հայկական պատվիրակության նախագահ Ալ. Խատիսյանը,– Բորչալուի միջոցով կապ պահպանել Ախալքալաքի և Ղարաբաղի միջև, մեզ կտրում էին Վրաստանից»:[716]

Հատկանշական է, որ ի տարբերություն վրացիների, Բաթումի ներկայացած հայկական պատվիրակությունն ավելի հստակ էր պատկերացնում հայ–վրացական ընդհանուր սահմանի կենսական անհրաժեշտությունը, որն ապահովվելու էր միայն Բորչալուի և Ախալքալաքի միջոցով: Ուստի պատահական չէ, որ հայկական կողմը կտրականապես մերժեց թուրքական պատվիրակության նախագահ Հալիլ փաշայի առաջարկը՝ հայ–թուրքական սահմանամերձ որևէ շրջանից Հայաստանին 2,5 քառ. կմ տարածք «զիջելու» դիմաց, ստանալ համաձայնություն Ախալքալաքն ու Լոռին Թուրքիային հանձնելու վերաբերյալ:[717] *Մինչդեռ, վրացական պատվիրակությու-*

---

[716] «Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. », էջ 43:

[717] Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թվականին, էջ 249: Հունգարական արխիվներից ակադեմիկոս Հ. Ավետիսյանի հայտնաբերած եզակի փաստաթղթերը վկայում են, որ Թուրքիայի դաշնակից Ավստրո–Հունգարիայի արտգործնախարար Բուրիանին Բաթումի պայմանագիրը համարել է Հայաստանի անկում, որով դարեր

նը, Ախալքալաքի հարցում տալով իր համաձայնությունը, հայկական կողմին կանգնեցրեց կատարված փաստի առջև: Ալ. Խատիսյանին ու Հովհ. Քաջազնուն ոչինչ չէր մնում անել, քան համաձայնվել ինչպես Կարսի մարզից, Ալեքսանդրապոլի, Համամլուի գավառներից, Արարատյան դաշտի զգալի մասից, այնպես էլ Ախալքալաքի ու Ախալցխայի գավառներից հրաժարվելու թուրքական պահանջների հետ:

Բաթումի պայմանագրով Օսմանյան կայսրությանն անցան մեծ մասամբ հայկական և հայաբնակ գավառներ, հանգամանք, որին հանգեցրեց դեռ Անդրկովկասյան դաշնության վրաց–ադրբեջանական մեծամասնության որդեգրած հետևողական քաղաքականությունը: Ստեղծված աչխարհաքաղաքական նոր իրավիճակը նպաստավոր էր վրացիների և կովկասյան թաթարների (ադրբեջանցիներ) համար: Գործելով միասնաբար, մենշևիկներն ու մուսավաթականները փորձեցին օգտվել Հայաստանի ծանր վիճակից և չուտով հանդես եկան տարածքային պահանջներով: Հ. Ավետիսյանի ուշագրավ դիտարկումներից հետևում է, որ վրացիները, որ կազմում էին Անդրկովկասի բնակչության միայն 28 %–ը, ստանում էին երկրամասի տարածքի 33 %–ը (61 հազ. քառ. կմ): 43 % կովկասյան մահմեդականներին բաժին էր ընկնում 38 % տարածք՝ 70 հազ. քառ. կմ: Մինչդեռ, Անդրկովկասի բնակչության 29 % կազմող հայերը, որոնք հավակնում էին միայն 54,5 հազ. քառ կմ կամ 29 % տարածքի, հայտնվեցին հարևանների տարածքային նկրտումների կիզակետում: Հայաստանի նկատմամբ Վրաստանի պահանջները, ներառյալ թուրքերի կողմից բռնագրավված Ախալքալաքի գավառը, կազմեցին 13 հազ. քառ. կմ՝ 261 հազ. հայ և միայն 7 հազ. վրացի բնակչությամբ:[718]

Իր հերթին Վեհիբ փաշան օգտվեց հայ–վրացական տարաձայնություններից: Հունիսին գեներալ Թովմաս Նազարբեկյանին ուղղած հեռագրում նա հաղորդում էր, որ թուրքական զորքերի կողմից մի շարք գավառների, մասնավորապես Լոռի–Բորչալուի՝ որպես հայ–վրացական վիճելի տարածքի գրավումը նպատակ ունի կանխել

շարունակ նրան պատկանող տարածքները, այդ թվում՝ Շիրակն ու Ախալքալաքը, ենթարկվեցին բռնազավթման (նույն տեղում, էջ 256):

[718] Նույն տեղում, էջ 255:

ռազմական բախումը Հայաստանի ու Վրաստանի միջև և այդ իմաստով իբր բխում է հայերի շահերից:[719]

Ընդհանուր բարդ ռազմաքաղաքական իրադրության մեջ, կարևորելով նորաստեղծ հանրապետությունների միջև սահմանների ճշգրտման հարցը, արդեն հունիսի սկզբից Վրաց և Հայոց ազգային խորհուրդները սկսեցին բանակցությունները: Վրաց ազգային խորհրդի նախագահ Ն. Ժորդանիան և վարչապետ Ն. Ռամիշվիլին Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդին՝ ի դեմս Ավ. Ահարոնյանի, Հովհ. Քաջազնունու և Ալ. Խատիսյանի, առաջարկեցին Բորչալուի գավառի հարցում առաջնորդվել ազգագրական սկզբունքով: Ախալքալաքի մասին խոսք չկար, քանզի այն գրավված էր թուրքերի կողմից, թեև, ինչպես նշվեց, վրացիները ապագայում նրա հարցի լուծումը ևս տեսնում էին հօգուտ Վրաստանի: Սակայն չուտով սահմանազատման հարցով Հայոց ազգային խորհրդի նշանակած հատուկ հանձնախմբին (Խ. Կարճիկյան, Գ. Խատիսյան և Գ. Ղորղանյան) վրացական պատվիրակության նախագահ Ի. Ծերեթելին հայտարարեց, որ Վրաստանը ռազմավարական նկատառումներով չի կարող հրաժարվել Ախալքալաքից և Լոռուց, ինչպես և Ալեքսանդրապոլի գավառի Փամբակի շրջանից: Ընդ որում, վրաց գործիչը հավատացնում էր, որ դա բխում է նաև այդ տարածքների հայ բնակչության շահերից, քանի որ Գերմանիայի հովանավորությանն արժանացած Վրաստանում հայերի համար ևս կստեղծվի կյանքի ավելի ապահով վիճակ: Ազգագրական սկզբունքից հրաժարվելու վրացական կողմի այդ քայլի դեմ բողոքեց Խ. Կարճիկյանը՝ վրաց մենշևիկների նման մոտեցումը բնութագրելով Հայաստանը Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի միջև բաժանելու գործելակերպ:[720]

Որոշվեց, հաշվի առնելով կողմերի մոտեցումների տարբերությունները, խորությամբ ուսումնասիրել հարցը և նոր խորհրդաժողովում հանդես գալ միմյանց համար ընդունելի, փոխզիջումային առաջարկություններով: Մինչև նոր խորհրդաժողովը, վիճելի տարածքների հարցը մնալու էր առկախ: Բայց, հակառակ կայացված որոշման, արդեն հաջորդ օրերին վրացական մամուլը հեղեղվեց հոդվածներով, որոնցում ընդգծվում էր, որ Վրաստանի Դեմոկրատական

[719] «Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. », էջ 49:

[720] Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 214–215, Ջամալեան Ա., նշվ. աշխ., Հայրենիք, 1928, ապրիլ, էջ 91:

Հանրապետությունն իր հայեցողությամբ արդեն գծել է ապագա հայ–վրացական սահմանը՝ Վրաստանի մեջ նախատեսելով Բորչալուի հայաբնակ մասը, Ղազախը (ներկայիս Իջևանի շրջանի տարածքի հետ –Ա.Մ.), Թուրքերի հեռանալուց հետո՝ նաև Փամբակն ու Ախալքալաքը: Միևնույնժամանակ, Հայաստանի կառավարությունը, նպատակ ունենալով հարցի կարգավորմանը հասնել միայն խաղաղ եղանակներով, օգոստոսի 3–ին խորհրդարանում հանդես եկավ ծրագրային հայտարարությամբ, որում մասնավորապես խնդիր էր դրվում «Ատրպատականի (ի նկատի է առնվում ներկայիս Ադրբեջանը – Ա.Մ.) և Վրաստանի հետ փոխադարձ համաձայնության գալով, լուծել Հայաստանի և այդ պետությունների սահմանների հարցը, հիմք ունենալով էթնիկական սկզբունքը՝ իբրև միակը, որը համապատասխանում է ռամկավար պետությունների ոգուն և նպատակներին»:[721] *Այսպես՝ ամռանը, սահմանային հարցերում իրարամերժ դիրքորոշումների պայմաններում, հայ–վրացական խորհրդակցությունները մտան փակուղի և վերսկսվեցին միայն աշնանը, երբ թուրքերը սկսեցին հեռանալ գրավված տարածքներից:*

Դ) Ախալքալաքի գաղթականության հիմնահարցը (1918 թ. մայիս - դեկտեմբեր)

Ախալքալաքցի գաղթականների վիճակը շարունակում էր վատթարանալ: Նրանք փաստորեն հայտնվել էին յուրահատուկ արգելափակոցում: Դեպի հյուսիս՝ Բակուրիան ու Բորժոմ ճանապարհը փակել էր վրացական զորքը, իսկ ետդարձի ուղին դեպի գավառ՝ թուրքերը:

1918 թ. հուլիսի սկզբին վրաց կառավարությունը մերժեց Հայոց ազգային խորհրդի միջնորդությունները գաղթականներին Վրաստանի խորքերը տեղափոխելու, ինչպես և Բորչալուից հեռացած մահմեդականների բնակավայրերում տեղավորելու իրավունք արտոնելու մասին՝ իր այդ տարբերվ քայլը «բացատրելով» համաճարակների տարածումը Վրաստանում կանխելու պատճառաբանությամբ:[722] *Վրաց ազգայնական մամուլը ոչ միայն պաշտպանից իր կա-*

[721] «Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ.», էջ 58:
[722] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, ց. 2, գ. 3, թ. 127–127ա և ՀՀ ԳԱԱ ՊԻԱ, Լեոյի անձն. ֆ. 1, ց. 1, գ. 264, թ. 1–2:

ռավարության այդ որոշումը, այլև փորձեց Հայոց ազգային խորհրդին, հատկապես նրա դաշնակցական անդամներին մեղադրել վրաց ժողովրդի դեմ նյութած դավերի մեջ: «Էրթոբա» թերթը հուլիսի 19-ի համարում այն միտքն էր հայտնում, թե դաշնակցականները, որ արդեն թշնամացրել են հայերին թաթարների դեմ, այժմ էլ ուզում են հայ գաղթականությանը Վրաստան մուտք գործելու հնարավորություն տալով, զանազան համաճարակային հիվանդություններ տարածել վրաց ժողովրդի մեջ:[723]

Կասկած չկա, որ այս ամենը հնարանք էր: Նախ՝ դեռ հունիս–հուլիս ամիսներին գաղթականների մեջ համաճարակային հիվանդություններ չկային: Դրանք հայտնվեցին ավելի ուշ՝ աշնանը: Եթե անգամ այդ պատճառաբանությունը հիմնավորված լիներ, չէր կարող վրաց իշխանություններին ազատել ախալքալաքցի փախստականների՝ իրենց քաղաքացիների ճակատագրով մտահոգվելու պարտականությունից: Մինչդեռ, այդ «պարտականության» փոխարեն, գեներալ Արշևանիձևի վերջին ջոկատները հեռացան Ախալքալաքի գավառի հյուսիսային սահմանագծից՝ թուրքական հրոսակներին ու տեղական ավազակախմբերին հնարավորություն ընձեռելով մշտական հարձակումներով նորանոր վնասներ հասցնելու գաղթականներին:[724] *«Երբ թուրքն անսանձ ու տմարդի, ոտքի ու սրի տակ էր առել հայ ժողովուրդը,– այդ մասին գրում էր Ակսել Բակունցը,– Վրաստանը օգնե՞ց արդյոք: Անկարո՞ղ էր, ո՞ւյժ չուներ...Իսկ երբ Ախալքալաքի հայությունը հազարներով կոտորվում էր ամիսների ընթացքում, էլի՞ անկարող էր գեթ մեղմացնել այդ թշվառների տանջանքների, զոհերի չափը»:*[725] *Թելավի, Սղնախի, Սուրամի և այլ շրջանների իշխանությունները դրդեցին տեղի վրաց բնակչությանը*

---

[723] ერთობა, თბ., 1918, 19 ივლისი (Էրթոբա, 1918, 19 հուլիս), Հայրենիք, 1928, սեպտեմբեր, էջ 123:

[724] Այդ հարձակումների ընթացքում թուրքերը Բակուրիանի գաղթականական ճամբարից առևանգեցին կամ սպանեցին մինչև 1500 մարդ, հափշտակեցին մեծ թվով անասուններ ու շարժական գույք (Հորիզոն, 1918, 27 հունիս, թիվ 125): Ծալկայի հայկական գյուղերում՝ իրենց հայրենակիցների տներում ապաստանած ախալքալաքցի գաղթականների վիճակն աննշուշտ, ավելի տանելի էր: Սակայն այստեղ ևս հնարավոր չեղավ խուսափել համաճարակներից: Եղան նաև զոհեր, թալանի բազմաթիվ դեպքեր Ծալկայի մի քանի մահմեդական գյուղերի բնակիչների կատարած ավազակային հարձակումների պատճառով (Հայրենիք, 1928, սեպտեմբեր, էջ 122):

[725] Նորք, 1999, թիվ 2, էջ 21, հրատ. Վ. Ղազախեցյան: Հմմտ. Հայաստանի աշխատավոր, «Երես առածները», 1919, 24 հունիս, թիվ 79:

հանդես գալ հայ գաղթականներին իրենց բնակավայրերից վտարելու պահանջով:[726]

Հայոց ազգային խորհրդի աջակցությամբ Թիֆլիսաբնակ ջավախքցիներից կազմակերպվեց «Ախալքալաքի Հայրենյաց (Հայրենակցական–Ա.Մ.) միությունը», որի վարչության մեջ մտան 10 հոգի, այդ թվում ճանաչված հասարակական գործիչներ Պ. Աբելյանը (քարտուղար), Բ. Օհանջանյանը (նախագահ), Գր. Պապոյանը (տեղակալ), Հովհ. Մալխասյանը, Ջ. Տեր–Գրիգորյանը, Կ. Շահպարոնյանը:[727] *Վարչությունը կոչով դիմեց Թիֆլիսի հայությանը և կարողացավ որոշակի միջոցներ հանգանակել գաղթականների համար:*

Ախալցխա՝ թուրքական հրամանատարության մոտ ժամանած ախալքալաքցի գաղթականների պատվիրակության խնդրանքը՝ իրենց հայրենի գավառ վերադառնալու թույլտվություն ստանալու վերաբերյալ, կտրականապես մերժվեց: Թուրքերը, չթաքցնելով Ախալքալաքի գավառը կայսրությանը վերադարձնելու իրենց պլանները, հայտնեցին, որ հայկական գյուղերն արդեն բնակեցված են Թուրքիայից բերված մահմեդական վերաբնակիչներով: Ուշագրավ է, որ Ախալքալաքը հայաթափելու և այն Թուրքիային բռնակցելու իրենց հայակուլ ծրագրերում երիտթուրքերն այնքան հետևողական էին, որ ախալքալաքցի գաղթականներին հայրենի գավառ վերադառնալու խնդրում անդրդվելի մնացին ոչ միայն հայկական տարբեր կազմակերպությունների, օտարերկրյա բարեգործական հաստատությունների, այլև դաշնակից Գերմանիայի ներկայացուցիչ գեներալ Ֆոն Կրեսի միջնորդություններ նկատմամբ:[728] *Հայաստանի դեկավարությունը դեռ հուլիսի 22–ին Գերմանիայի կառավարությանը ներկայացրած խնդրագրում առաջարկում էր գերմանական զորքեր մտցնել թուրքերի կողմից բռնազավթված գավառներ, այդ թվում՝ Ախալքալաք բնակչության կոտորածն ու թալանը դադարեցնելու համար:*[729] *Սակայն այդ ծրագիրը չիրագործվեց, քանզի Անդրկովկասում ձեռք բերած ռազմական հաջողություններից արբած՝ թուրքական հրամանատարությունը դեմ արտահայտվեց որևէ տարածք,*

---

[726] Հայրենիք, 1928, սեպտեմբեր, էջ 123:

[727] Վարչության մյուս անդամներն էին՝ Բ. Սաղաքյանը, Հովհ. Բադալյանը, Վ. Նազարեթյանը և Թ. Սաղաքյանը:

[728] Армянский вопрос и геноцид армян в Турции (1913–1919), сборник (составитель, отв. ред., автор предисловия В. Микаелян), Е., 1995, с. 560–561.

[729] Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ., էջ 39:

հատկապես՝ Բաքու գերմանական զորք մտցնելու պլաններին՝ նախընտրելով անգամ իր գլխավոր դաշնակցի հետ հարաբերությունների վատթարացման ճանապարհը:

Այսպիսով՝ և՛ վրաց կառավարության, և՛ թուրքական հրամանատարության կողմից որևէ ուղղությամբ տեղաշարժվելու իրավունքից զրկված ջավախքցի գաղթականները դատապարտվում էին բնաջնջման: Օգոստոս ամսին, երբ դեռ չէին սկսվել ցրտերը, արդեն գաղթականների շրջանում օրական մահանում էր մինչև 100 մարդ:[730] *Խոսելով վրացական իշխանությունների նման անմարդկային վերաբերմունքի մասին՝ Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Ա. Ջամալյանը ցավով նշում էր. «Այս տխուր փաստը հիշատակում ենք ոչ թե մեր ահռելի կորուստների կսկիծը վերարծարծելու համար, այլ որպեսզի ցույց տանք, որ Ժորդանիան և իր ընկերները... Ախալքալաքի և Հայկական Բորչալուի հայ բնակիչներին հանրապետության քաղաքացի չէին նկատում, այլ անցանկալի եկվորներ, որոնց մասին հոգալը իրենց պարտականություն չէին համարում»:*[731]

Ի պատասխան սեպտեմբերին և հոկտեմբերի սկզբին Հայաստանի կառավարության, Ախալքալաքի Հայրենյաց վարչության (միության) նորանոր բողոք–դիմումներին՝ գաղթականներին կամ Վրաստան անցնելու, կամ Ախալքալաք վերադառնալու թույլտվության արտոնման մասին, հոկտեմբերի 4–ին վրացական կառավարության գրասենյակի պետ Կոժուխովը Հայոց գլխավոր գաղթականական խորհրդին պաշտոնական գրությամբ ցինիկորեն հայտնեց, որ քանզի Վրաստանում ստեղծվել է պարենային ճգնաժամ, իսկ թուրքական հրամանատարությունը հրաժարվում է թույլ տալ Ախալքալաքի հայությանը վերադառնալ հայրենիք, վրաց իշխանությունները առաջարկում են ամենակարճ ժամանակամիջոցում գաղթականությանը տեղափոխել Հյուսիսային Կովկաս կամ Հայաստանի Հանրապետություն: Արտաշես Աբեղյանը ճիշտ է նկատել, որ այդ ժամանակ «Եթե ո՛չ մարդասիրական տարրական գիտակցությունից, գէթ քաղաքական ողջմտությունից դրդուած՝ պէտք է, որ վրաց կառավարությունը ձեռք մեկնէր կոտորուող ախալքալաքցիներին, ցոյց տալով, որ նրանց հետ է դժբախտութեան օրերին, որպէսզի գէթ դրանով երեսատեղ ունե-

[730] Հորիզոն, 1918, 30 օգոստոս:
[731] Ջամալեան Ա. նշվ. աշխ., Հայրենիք, 1928, ապրիլ, էջ 90:

նար՝ պատեհ առթիւ «հիմնաւորելու» իր «վեհապետական իրաւունքը» Ախալքալաքի վրայ»:[732]

Գաղթականական խորհրդի նախագահ, Հայ ժողովրդական կուսակցութեան ղեկավար Սամսոն Հարությունյանի նախաձեռնութեամբ հրավիրվեց չտապ խորհրդակցություն,[733] որին մասնակցեցին նաև Վիրահայոց ազգային խորհրդի նախագահության անդամները: Ախալքալաքցիների կողմից նիստին հրավիրված Պողոս Արևելյանը հայտնեց, որ ինքը թուրքական առաքելության նախագահ Աբդուլ Քերիմից տեղեկացել է, որ թուրքերը հեռանալու են Ախալքալաքից և դեմ չեն հայերի վերադարձին գավառ, առավել ևս, որ Կ. Պոլսում հայոց պատվիրակությունը (նախագահ Ավ. Ահարոնյան) իր կառավարության հետ այդ հարցում ձեռք է բերել համաձայնություն: Կոժուխովից պահանջվեց թուրքական մերժման պատճենը: Պատասխան չստացվեց: Ակնհայտ դարձավ, որ Վրաստանի կառավարությունը, մեղքը բարդելով թուրքերի վրա, չէր կամենում թույլատրել հայերի վերադարձը: Եվ իրոք, չուտով թուրքական հրամանատարությունը պաշտոնապես հայտարարեց, որ մինչև իրենց զորքերի դուրսբերումը, որի համար ժամկետ էր սահմանված դեկտեմբերի 4–ը, ախալքալաքցի գաղթականներին թույլատրվում է վերադառնալ իրենց բնակավայրերը: Պարզ էր, որ այսպիսի եղանակներով, արհեստականորեն հրահրվում էր գաղթականության սովահարությունը:[734]

Գաղթականության վիճակն օրհասական էր դառնում. սկսվել էին ցրտերը, անձրևները, սպառվում էր անասնագլխաքանակը: Վրացական իշխանությունները Քութայիսից, Գորիից, Բոլժոմից եկած հարյուրավոր ավազակների ու սպեկուլյանտների թույլատրելին չնչին գներով գաղթականներից դնել, առանձին դեպքերում էլ՝ վրացական միլիցիայի օգնությամբ խլել տասնյակ հազարավոր գլուխ անասուններ: «Բակուրիանիի անտառում և չրջանում,– գրում էր ժամանակի մամուլը, – սուր բնոյթ են ստացել աւազակութիւնը և գողութիւնները. զինւած աւազակային խմբեր յարձակւում են հայ գաղթականների վրայ, կողոպտում են մեր եղը, կովը, ոչխարը, ձին,

[732] Աբեղեան Ա., Մենք եւ մեր հարեւանները, Հայրենիք, 1928, դեկտեմբեր, թիվ 2:
[733] Այդ խորհրդակցությանը ներկա են եղել Հովի. Սպենդիարյանը, Լ. Էվանգուլյանը, բժիշկ Տեր-Ստեփանյանը և ուրիշներ:
[734] ՀՀ ՍՊԿՊԱ, ֆ. 114, ց. 2, գ. 3, թ. 131–131ա:

դրամը...»:[735] Այս հատուկ քաղաքականության շնորհիվ Վրաստանի կառավարությունը լուծեց իր բնակչության պարենային խնդիրները:

Գաղթականության հոգսերի ողջ ծանրությունը մնաց Հայոց գաղթականական խորհրդի, Ախալքալաքի Հայրենյաց վարչության, Կովկասի Հայոց բարեգործական ընկերության, Վրաստանում Ամերիկյան առաքելության, մասամբ նաև Վիրահայոց Ազգային խորհրդի, Հայաստանի ներկայացուցիչ Ա. Ջամալյանի ուսերի վրա: Հայաստանի անունից Ազգային խորհուրդը Բակուրիանում մշտական ներկայացուցիչ նշանակեց Արշակ Թորոսյանին, Ծալկայում՝ Արարատ Տեր–Գրիգորյանին:[736] Գաղթականներն էլ իրենց կողմից լիազոր նշանակեցին Մեսրոպ քահանա Մելեյանին: Սովյալներին օգնելու գործում նկատելի աշխատանք կատարեցին Ջավախքի գյուղական քահանաներն ու ուսուցիչները, հատկապես Արսեն քահանա Բլրցյանը, որը մամուլի հրապարակումներով, տարբեր պաշտոնական ու հասարակական կազմակերպություններին հղած նամակներով կարողացավ զգալի նյութական օգնություն ապահովել: Սակայն գաղթականության զանգվածն այնքան մեծ էր՝ 80–85 հազ. մարդ, որ կատարված աշխատանքը չէր կարող բավարարել մարդկանց նվազագույն պահանջները:

Մինչև 1918 թ. դեկտեմբերը բծավոր տիֆն ու խոլերան սկսեցին հնձել գաղթականության: Այդ օրերին «Մշակում» տպագրված մի թղթակցությունում Պողոս Աբելյանը գրում էր. «Ախալքալաքցիների բնաջնջումն այնքան աճող է գնում, որ եթե գաղթականներին փրկելու համար ձեռք չառնվեն ժամանակի պահանջած միջոցներ, ախալքալաքցիների այս սերունդը կլինի վերջինը երկրագնդի վրա»:[737] 1918 թ. հունիսից մինչև նոյեմբեր Բակուրիանի անտառներում զոհվեց ավելի քան 18 հազ. մարդ: Գրեթե նույնքան զոհեր տվեցին Ծալկայի և Մանգլիսի չրջաններում ապաստանած հայ գաղթականները: Մինչև հաջորդ գարուն ախալքալաքցի գաղթականների կորուստները հասան 40 հազարի:[738]

---

[735] Հորիզոն, 1918, 27 հունիս, թիվ 125:

[736] Այս անձնավորություններն ապաշնորհ գտնվեցին, զբաղվեցին նաև գաղթականների համար նախատեսված օգնության յուրացումով (տես ՆՊԿՊԱ, ֆ. 114, ց. 2, գ. 3, թ. 130).

[737] Մշակ, 1919, թիվ 14:

[738] ՀՀ ԳԱԱ ՊԻԱ, Լեոյի անձն. ֆ. 1, ց. 1, գ. 264, թ. 1–2:

Ե) Ջավախքի պատկանելության խնդիրը 1918 թ. վերջին և 1919 թ.

1918 թ. հոկտեմբերի 30–ին Մուդրոսում Անտանտի երկրների հետ կնքած զինադադարի համաձայն թուրքերն սկսեցին զորքերը ետ քաշել մինչև 1914 թ. սահմանը: Հետևաբար, դրվում էր նաև Ախալցխայի և Ախալքալաքի գավառներից զորքերի դուրսբերման հարցը: Ինքնաբերաբար մեջտեղ էին գալիս նաև այդ գավառների պատկանելության և գաղթականության վերադարձի խնդիրները:

1918 թ. նոյեմբերից, հաղթահարելով վրաց զինվորական իշխանությունների հարուցած զանազան արգելքները, հաճախ չրջանցիկ ճանապարհներով, Ախալքալաքի գաղթականության բեկորներն սկսեցին վերադառնալ իրենց ավերված ու թալանված բնակավայրերը: Բակուրիանից հայրենի գավառ անցնելու թույլտվության դիմաց վրաց զինվորականները գաղթականներից պահանջում էին ստորագրություններ՝ վրացահպատակություն ընդունելու, գավառը Վրաստանի մաս ճանաչելու մասին:[739] Դեպքերի զարգացումն ակամայից տանում էր դեպի հայ–վրացական հարաբերությունների սրում:

Կանխազգալով Վրաստանի կողմից Ջավախքի նկատմամբ տարածքային հավակնությունների քաղաքական հետևանքների վտանգը՝ Հայաստանի կառավարությունը փորձեց դիվանագիտական եղանակով լուծել խնդիրը: Նոյեմբերի 12–ին Երևանում Վրաստանի ներկայացուցիչ Բ. Մդիվանու հետ հանդիպման ժամանակ Հայաստանի արտգործնախարար Ս. Տիգրանյանը և ճանաչված գործիչ Գ. Խատիսյանը հայտարարեցին, որ ի կատարումն դեռ 1917 թ. հեղափոխությունների նախօրյակին և ընթացքում վրացական սոցիալ–դեմոկրատիայի ու ՀՅԴ–ի միջև ձեռք բերված համաձայնությունների՝ հայկական կառավարությունը զերազանցապես հայերով բնակեցված տարածքները՝ Ախալքալաքի գավառը, նրան հյուսիսից սահմանակից Գորիի գավառի հարավային հատվածը (Տաքածղուրի լճի չրջանի հայկական գյուղերը–Ա.Մ.) և Բորչալուն՝ մինչև Խրամ գետը, մտնելու են Հայաստանի կազմի մեջ: Այդ զրույցի բովանդակությունը Մդիվանին հեռագրով հաղորդեց Թիֆլիս:[740] Վրաստանի կառավարության պատասխանը եղավ ժխտական: Ավելին, վրացիների կողմից

---

[739] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, ց. 2, գ. 3, թ. 131ա:

[740] Политика, 1998, N 4–6, გვ. 5.

բռնազավթված Լոռիում ավելի սատկացան հայ բնակչության նկատմամբ գործադրվող բռնությունները:

Նման պայմաններում Հայաստանը չմասնակցեց նոյեմբերի 14–ին Թիֆլիսում Վրաստանի, Ադրբեջանի և Հյուսիսային Կովկասի Լեռնականների հանրապետությունների ներկայացուցիչների «միջազգային» կոնֆերանսին: Մեկօրյա քննարկումներից հետո կոնֆերանսի աշխատանքները դադարեցվեցին՝ նոյեմբերի 20–ին, Հայաստանի ներկայացուցիչների մասնակցությամբ վերսկսելու որոշումով:[741] *Հայաստանում Վրաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Մդիվանին իր արտգործնախարար Ե. Գեգեչկորուց հրահանգ ստացավ՝ «հայկական կառավարությանը հասկացնել տալ, որ նրա ներկայացուցիչների բացակայության դեպքում, իրենք հարկադրված կլինեն կոնֆերանսը բացել առանց նրանց մասնակցության»:*[742] *Հարաբերությունները չվատթարացնելու նպատակով հայկական կողմն ընդունեց վրացիների բավական սառն ու կոշտ ոճի «հրավերը»: Միայն պահանջվեց, որ բանակցությունները լինեն երկկողմանի՝ հայ–վրացական, առանց կովկասյան այլ հանրապետությունների մասնակցության: Մդիվանին նոյեմբերի 17–ին Թիֆլիս հղած հեռագրում փորձեց իր կառավարությանը կողմնորոշել դեպի հայերի նախապայմանի ընդունումը: Վրացական կառավարությունը համաձայնեց և նշանակեց կոնֆերանսի հրավիրման նոր ժամկետ՝ նոյեմբերի 30–ը:*[743]

Թվում էր, որ գտնվել է հայ–վրացական հարաբերությունների լարվածության թուլացման խաղաղ ելքը: Սակայն վիճակը չեչտակի փոխվեց թուրքերի յուրահատուկ «միջամտության» հետևանքով: Վիճելի համարվող տարածքներից հեռանալուց առաջ[744] *թուրքական հրամանատարությունը նոյեմբերի 20–ից 25–ն ընկած ժամանակահատվածում, միաժամանակ, միմյանցից գաղտնի և՛ Վրաստանի և՛ Հայաստանի կառավարություններին տեղեկացրեց գավառները նրանց հանձնելու մասին: Վրացական ղեկավարությունը չհապաղեց*

---

[741] Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, с . 434.

[742] Նույն տեղում, էջ 434–435:

[743] Նույն տեղում, էջ 435:

[744] Թուրքական զորքերն Ախալցխայի և Ախալքալաքի գավառներից դուրս եկան նոյեմբերի 27–ին իրենց հետ տանելով մեծ քանակությամբ թալանված գույք:

«օգտվել» թուրքերի ընձեռած հնարավորությունից և անցավ ակտիվ գործողությունների:[745]

Թիֆլիսից նոյեմբերի 29–ին ստացվեց տարածքային հարցերի լուծման վերաբերյալ Վրաստանի կառավարության «նոր» տեսակետը: Վրացական կողմի կարծիքով հայ–վրացական սահմանագիծը պետք է անցներ նախկին Թիֆլիսի նահանգի հարավային սահմանով, այսինքն՝ Լոռին և Ախալքալաքը մտնելու են Վրաստանի կազմի մեջ: Դրան հաջորդեցին ավելի գործնական քայլեր. կազմվեց Ախալքալաքի վրացական վարչություն, նշանակվեց նահանգապետ, զորքերը մարտական պատրաստության բերվեցին:

Ի պատասխան նման մոտեցման, որը հակասում էր խաղաղ միջոցներով և էթնիկ–ազգագրական սկզբունքի հիման վրա վիճելի հարցերը լուծելու վերաբերյալ նախկինում ձեռք բերված համաձայնություններին, դեկտեմբերի 2–ին Հայաստանի արտգործնախարարությունը Մդիվանու միջոցով բողոքի նոտա ներկայացրեց Վրաստանին: «Սահմանային գծի վերաբերյալ վրաց և հայ ներկայացուցիչների (ձեռք բերած–Ա.Մ.) համաձայնության որոշման հիմքում,– ասվում էր արտգործնախարար Ս. Տիգրանյանի ստորագրությամբ ներկայացված այդ նոտայում,– ինչպես հայտնի է, ընկած էր ազգագրական սկզբունքը»: Այդ մոտեցումից վերապահումներ՝ հօգուտ Վրաստանի, նախատեսվում էր միայն տեղագրական (տոպոգրաֆիական) նկատառումներով: Այնպես որ հայկական կողմի պնդումները բխում էին փոխադարձ համաձայնություններից: Հետևաբար, «Ախալքալաքի գավառն ամբողջությամբ և Բորչալուի գավառի մեծ մասը՝ իրենց բացարձակ գերակշիռ հայ բնակչությամբ հանդիսանում են Հայաստանի անբաժան մասերը»:[746]

Հայկական կողմը, հավատարիմ 1917 թ. հայ–վրացական միջկուսակցական համաձայնություններին, վերոհիշյալ նոտայում չէր մոռացել նաև հօգուտ Վրաստանի «տեղագրական անհրաժեշտությամբ թելադրված» բացառությունների մասին: Թեև Հյուսիսային Բորչալուի՝ մինչև Թիֆլիս ընկած տարածքում հայ բնակչության

---

[745] Վրաց քաղաքագետներն ու պատմաբանները, որոշ չափով նաև հայ հեղինակները, նվազ չափով ուշադրություն դարձնելով հայ–վրացական ընդհարումը սանձազերծելու գործում թուրքերի ունեցած ամենամեծ դերին, ավելի կարևորել են միմյանց մեղադրանքներ ներկայացնելու հանգամանքը:

[746] «Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. », էջ 74 և Политика, 1998, N 4–6, გვ. 6.

թվաքանակը դարձյալ գերազանցում էր վրացիներին, Հայաստանն այն դիտում էր վրացական հանրապետության մաս՝ ակնկալելով, որ այնտեղի հայության համար կապահովվի ազգային–մշակութային ինքնավարություն: Ընդհանուր առմամբ այս փոխհամաձայնեցված մոտեցումները չընդունելու դեպքում Հայաստանի կառավարությունը հարկ էր համարում քննարկման նյութ դարձնել նաև հիմնականում հայերով բնակեցված, բայց Վրաստանին տրվելիք Հյուսիսային Բորչալուի խնդիրը:[747]

Դեկտեմբերի 1–ին Հայաստանի կառավարությունը քննարկեց Ախալքալաքի գավառ կանոնավոր զորքեր մտցնելու հարցը: Զինվորական նախարար Հովհ. Հախվերդյանը տեղեկացրեց, որ նախօրյակին բարձրաստիճան զինվորականներ Սիլիկյանի, Դրոյի, Դոլուխանյանի, Զինկևիչի մասնակցությամբ կայացած հատուկ խորհրդակցությունը Ջավախք զորք մտցնելու քայլից առժամանակ ձեռնպահ մնալու որոշում է կայացրել. «...նկատի առնելով սպասվելիք բարդությունները հարավային սահմանի վրա և մի քանի այլ հանգամանքներ...»: Կառավարությունը հիմնավոր գտավ զինվորական նախարարի պատճառաբանությունները և վճռեց «...լիազորել նրան՝ չմտցնել ներկայումս Ախալքալաքի գավառը զորք և առայժմ բավականանալ նախապատրաստական գործողություններով»:[748]

Դեպքերի հետագա ընթացքը ցույց տվեց, որ հայ զինվորականության և նրա խորհուրդներով առաջնորդվող կառավարության նմանօրինակ գործելակերպն արդարացված չէր: Նախ՝ անհասկանալի է, թե այդ ժամանակ հարավում ի՞նչ բարդություններ կարող էին սպասվել հանրապետությանը: Եթե խոսքը թուրքական վտանգի մասին էր, ապա այն խիստ կասկածելի էր: Թուրքերը ոչ միայն ի զորու չէին նոր հարձակում ձեռնարկել հայերի դեմ, այլև Մուդրոսի զինա-

---

[747] Նույն տեղում: Հարկ է նշել, որ Ախալքալաքի և Բորչալուի միացումը Հայաստանի Հանրապետությանը հայկական կողմն արդարացի ու նպատակահարմար էր համարում ոչ միայն էթնիկական, քաղաքական և տնտեսական, այլ նաև աշխարհագրական տեսանկյունից: Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Ա. Ջամալյանը գրում էր. «ամեն մարդ քարտեզի վրա կարող է տեսնել, որ թե Ախալքալաքը և թե Հայկական Բորչալուն անմիջականորեն, առանց որևէ անջրպետի կպած են Հայաստանին կազմելով նրա բնական շարունակությունը: Այնպես որ այս գավառներն իրենց ազգային պատկանելությանը միացնելու համար աշխարհագրական որևէ արգելք չկա» (առաջ, 1928, 28 հունիս, թիվ 685, էջ 2):

[748] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 206, ց. 1, գ. 2, թ. 105, հմմտ.՝ «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ.», էջ 73:

դադարի ուժով, չարունակում էին հեռանալ Անդրկովկասից և այդ մասին պաշտոնապես տեղեկացրել էին Հայաստանի և Վրաստանի կառավարություններին՝ նրանց զորքերին հրավիրելով Ջավախք: Բնականաբար չէր կարող սպասվել որևէ վտանգ նաև բարեկամ Պարսկաստանից: Այնպես որ այդ «զգուշավոր» քայլը, որ ավելի շուտ անվճռականության և իրավիճակում ճիշտ չկողմնորոշվելու հետևանք էր, ինչպես կտեսնենք, բավական թանկ նստեց Հայաստանի և մասնավորապես Ջավախքի հայության վրա: Պատահական չէ, որ հետագայում Ախալքալաքի խնդրով, բավական ուշացումով Հայաստանի ղեկավարության ձեռնարկած քայլերն այդպես էլ շոշափելի արդյունք չտվեցին:

Հայաստանի կառավարության դանդաղկոտ ու սպասողական գործելակերպի համար թերևս միակ, բայց ոչ ծանրակշիռ փաստարկ կարող էր լինել այն հանգամանքը, որ Ջավախքին հարևան Շիրակը, որտեղով անցնում էր Երևանից Ախալքալաք տանող ճանապարհը, այդ օրերին դեռ չարունակում էր մնալ թուրքերի ձեռքում (թուրքերն Ալեքսանդրապոլի գավառից իրենց վերջին զինվորներին դուրս բերեցին դեկտեմբերի 6–ին): Բայց այդ խոչընդոտը լիովին հաղթահարելի էր: Ինչպես երևում է փաստաթղթերից, կառավարության վերոհիշյալ որոշումը՝ Ջավախք զորք չմտցնելու վերաբերյալ, այնուամենայնիվ, կատարվել է մասնակիորեն:

Հայկական զորքերի հրամանատարությունը մի քանի օր անց՝ հավանաբար դեկտեմբերի 6–ին, տեղեկացած չլինելով Ալեքսանդրապոլի գավառից թուրքերի դուրս գալու մասին, Ղարաքիլիսայից, Ծալկայի վրայով մի փոքրաթիվ հեծյալ ջոկատ է հասցրել Ախալքալաքի գավառ: Վերջինս կարողացել է մտնել գավառի հարավային մասը՝ Եֆրեմովկա–Տրոյիցկոյե գյուղերի շրջան: Այդ մասին վկայում է նաև Ջավախք շարժվող վրացական զորքերի հրամանատարության մի հաղորդագրությունը՝ ուղղված կառավարությանը, որում խնդրվում էր միջոցներ առաջարկել ստեղծված իրավիճակից դուրս գալու համար, քանզի սպասվում է անցանկալի միջադեպ, այն է՝ ռազմական բախում Բոգդանովկա մտած հայկական էսկադրոնի հետ:[749] Սակայն, ինչպես կտեսնենք, հայկական կողմը հապաղեց, իսկ վրացիները գրավեցին գավառի հիմնական՝ կենտրոնական և հյուսիսային մասը:

[749] Политика, 1998, N 4–6, გვ. 7.

Դեկտեմբերի 5–ին Ս. Տիգրանյանն անհրաժեշտ համարեց հուշագիր ներկայացնել Մդիվանուն՝ առաջարկելով ձեռնպահ մնալ Ախալքալաքը գրավելու գործողություններից և սկսել բանակցություններ:[750] *Այնինչ Հայաստանի ղեկավարությունն անտեղյակ էր, որ նույն օրը՝ դեկտեմբերի 5–ի առավոտյան արդեն վրացական կառավարությունը, որ մինչև այդ բռնազավթել էր Լոռին,*[751] *զորավար Մակաևի (Մաղաչվիլի) գլխավորությամբ զորք էր մտցրել նաև Ջավախք և գրավել նրա կենտրոն Ախալքալաքը:*

Գերակշիռ վրացական ուժերի հետ չբախվելու նկատառումով, հայկական փոքրաթիվ ջոկատը ստիպված դուրս եկավ գավառից:[752] *Առնվազն տարօրինակ է, որ Վրաստանի արտգործնախարար Ե. Գեգեչկորին դեկտեմբերի 7–ին հայկական կողմին ուղարկած իր պատասխան հեռագրում վրացական զորքերի մուտքը Ախալքալաք պատճառաբանում էր տեղական բնակչության շահերի պաշտպանության անհրաժեշտությամբ և պատմական, քաղաքական ու բարոյական տեսանկյուններից այն Վրաստանին պատկանելու «իրողությամբ»: Ընդ որում, ոչինչ չէր ասվում էթնիկական սկզբունքի մասին: Զարմանալի է, որ այս գավառը ևս գրավելու և հայերին կատարված փաստի առաջ կանգնեցնելու անխոհեմ քայլից հետո էլ «...Վրաստանի կառավարությունը մնում էր լիովին համոզված, որ այդ հանգամանքը (Ախալքալաքի գրավումը– Ա.Մ.) ոչ մի կերպ չի կարող ազդել տարածքային սահմանազատման համար մեր բանակցությունների ընթացքի վրա...»:*[753]

Վրացական զորքերը, Ախալքալաքում «կարգ ու կանոն հաստատելու նպատակով», զինաթափեցին տեղի ինքնապաշտպանական ուժերը, մինչև դեկտեմբերի 10–ը հսկողության տակ վերցրեցին ամբողջ գավառը, ստեղծեցին վրացական վարչություն, սկսեցին խոչըն-

---

[750] Ջամալեան Ա. նշվ. աշխ., Հայրենիք, 1928, ապրիլ, էջ 94 և «Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ.», էջ 75:

[751] 1918 թ. հոկտեմբերին թուրքական զորքերը դուրս եկան Լոռուց: Երբ հայկական զինված ուժերը փորձեցին մտնել գավառ, նրանց կանգնեցրին գերմանական պահակային ջոկատները: Ֆոն Կրեսը Լոռու տարածաշրջան զորք մտցնելու դեպքում Հայաստանին նույնիսկ սպառնաց պատերազմով: Վրացական ուժերը, օգտվելով գերմանական աջակցությունից, ներխուժեցին Լոռի և հսկողություն սահմանեցին հայկական գյուղերի վրա (Յառաջ, 1928, 19 հունիս, թիվ 677, էջ 2):

[752] Վրացյան Ս., նշվ. աշխ., էջ 225–226:

[753] «Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ.», էջ 77, Գալոյան Գ., նշվ. աշխ., էջ 52–53:

դոտել դեռ հայրենի օջախներ չվերադարձած գաղթականների մնացած մասի տունդարձը:

Դեկտեմբերի 16–ին Հայաստանի խորհուրդը (խորհրդարան) հավանություն տվեց Ախալքալաքի և Բորչալուի գավառների հայ բնակչության անվտանգության ապահովմանն ու այդ տարածքները վրացական զորքերից ազատագրելուն ուղղված Քաջազնունու կառավարության ուշացած քայլերին և հատուկ որոշում ընդունեց զործադիր իշխանությանը ազատ գործելու իրավունք արտոնելով: Միաժամանակ, խորհրդարանը համաձայնեց Անդրկովկասում անգլիական զինվորական հրամանատարության ներկայացուցիչ կապիտան Գրինի առաջարկությանը՝ ռազմական գործողություններից ձեռնպահ մնալու և բանակցություններ սկսելու մասին՝ պայմանով, որ հայկական ուժերը չեն հեռանալու վիճելի տարածքներից այնքան ժամանակ, քանի դեռ չի ապահովված տեղի հայ բնակչության անվտանգությունը վրացական զորքերից:[754] Հայաստանի կառավարությունը նորից բողոքեց Լոռու և Ախալքալաքի զավթման կապակցությամբ: Սակայն վրացիները մնացին անդրդվելի: Այսպես՝ դեկտեմբերի կեսերին ծագեց հայ–վրացական պատերազմը, որի սանձազերծման գործում, ինչպես նշվեց, իրենց ամենամեծ դերն ունեցան թուրքերը:

Հայ քաղաքական կուսակցությունները, հասարակական կազմակերպությունները, ժամանակի հայ մամուլը ցավով ընդունեցին եղբայրասպան պատերազմի լուրը: Սակայն միանգամայն արդարացի համարելով հայկական կողմի մոտեցումները՝ հիմնականում հանդես եկան Հայաստանի կառավարության գործողությունների պաշտպանությամբ:[755]

Հայկական ուժերը Դրոյի գլխավորությամբ ազատագրեցին Լոռու մեծ մասը: Դեկտեմբերի 11–12–ին հայկական դիվիզիայի 4–րդ հետևակային գնդի մեկ դումարտակ Ալեքսանդրապոլից շարժվեց դեպի Ախալքալաք և այնտեղ մտած վրացական զորքերի

---

[754] «Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. », էջ 79:

[755] Թադևոսյան Ս., Հայաստանի Հանրապետության քաղաքական կյանքը անդրկովկասյան և սփյուռքահայ մամուլի լուսաբանմամբ (1918 մայիս–1919 մայիս), թեկնածուական ատենախոսություն, ձեռագիր, Ե., 2001, էջ 84–99: Այսպես՝ Հայ ժողովրդական կուսակցության օրգան «Ժողովուրդը» (Երևան) միանգամայն արդարացի էր համարում Ախալքալաքի և Լոռու միացումը Հայաստանին (ժողովուրդ, 1919, 9 փետրվար): Դաշնակցությունը միանշանակ նույն կարծիքին էր: Մամուլի այլ օրգաններ խնդիրը նույնացնում էին ֆրանս–գերմանական վիճելի էլզաս–Լոթարինգիայի հետ (Թադևոսյան Ս., նշվ. աշխ., էջ 95):

հետ ընդհարումից հետո հսկողության տակ վերցրեց գավառի մեծ մասը: Վրացական ուժերը քաշվեցին Հյուսիս:[756] *Դեկտեմբերի 17–ին Վրաստանի խորհրդարանում ճառով հանդես եկավ կառավարության նախագահ Ն. Ժորդանիան, որն սկսված պատերազմի սանձազերծման ողջ մեղքը բարդեց Հայաստանի կառավարության վրա: Վրաստանում հայերի նկատմամբ իսկական մարդաորս սկսվեց: Հազարավոր հայեր հայտարարվեցին ռազմագերիներ և աքսորվեցին Քութայիս:*[757]

Դեկտեմբերի 19–ին Ս. Տիգրանյանը հատուկ ռադիոգրով Վրաստանի արտգործնախարարին տեղեկացրեց, որ հայկական կողմը դեռ հնարավոր է համարում ռազմական գործողությունների դադարեցումը և ուղարկում է հատուկ պատվիրակություն անգլիացի կապիտան Գրինի միջնորդությամբ բանակցություններ սկսելու համար: Միակ նախապայմանն այն է, որ ի կատարումն Հայաստանի խորհրդի որոշման, պահանջվում էին երաշխիքներ Բորչալուի և Ախալքալաքի հայ բնակչության անվտանգության համար: Ռադիոգրում նաև նշվում էր, որ մինչև դեկտեմբերի 13–ը հայկական ոչ մի զորամաս վրացական ուժերի նկատմամբ որևէ ագրեսիվ գործողություն չի կատարել, այն դեպքում, երբ վերջիններս հայ բնակչության նկատմամբ իրենց բռնություններով հարկադրել են Հայաստանին հանդես գալ հայության շահերի պաշտպանությամբ: «Վերջին ամիսներին,– ասվում էր փաստաթղթում,– Հայաստանի կառավարությունը հանդես է բերել ծայրահեղ խաղաղասիրություն: Մինչդեռ, Վրաստանի կառավարությունը Լոռու նկատմամբ ոտնձգությամբ, Ախալքալաքի բռնազավթումով, Բորչալուի (բնակչության նկատմամբ) ռազմական բռնություններով հանդես է եկել իբրև ագրեսիվ, զավթողական քաղաքականության կրող՝ Հայաստանի կառավարության բազմաթիվ դիվանագիտական բողոքներին և խաղաղասիրական առաջարկություններին վերաբերվելով լիակատար քամահրանքով».[758]

Միջնորդի դեր ստանձնած Գրինը դեկտեմբերի 15–ին Ղարաքիլիսայում հանդես եկավ զինադադար հաստատելու իր պայմաններով. այն էր՝ կրակի դադարեցում երկու շաբաթով, վրացական զորքե-

---

[756] Հարությունյան Կ. Ա., Հայկական ազգային զորամիավորումները 1918–1945 թվականներին, Ե., 2002, էջ 58:
[757] Վրացյան Ս., նշվ. աշխ., էջ 242–248:
[758] «Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. », էջ 80–81:

ըի չտապ դուրսբերում Ախալքալաքի գավառից ու Բորչալուից մինչև Խրամ, այն պայմանով, որ այդ տարածքներ չեն մտցվելու նաև հայկական զորքեր, ախալաքալաքցի գաղթականների չուտափուլթ վերադարձ հայրենի օջախներ և այլն:[759] Դժվար չէ նկատել, որ վերոհիշյալ պայմանները, որ արդարացի բնույթ էին կրում, բխում էին Հայաստանի շահերից: Բանն այն է, որ անգլիացիները, որոնք ողջ հայ–վրացական ընդհարման ընթացքում դրսևորեցին վրացամետ կեցվածք, դեկտեմբերի կեսերին հանդես էին գալիս «հայամետ» դիրքորոշումներով՝ միմիայն պատերազմում հաղթանակներ արձանագրած հայերին բանակցային գործընթացի մեջ ներքաշելու նպատակով: Պատահական չէ, որ չուտով, երբ սկսվեցին բանակցությունները, բացահայտվեց անգլիական հրամանատարության իրական դեմքը:

Դեկտեմբերի 15–20–ը անգլիացիներին չհաջողվեց դադարեցնել ռազմական գործողությունները: Պատերազմը շարունակվեց: Հատկապես Լոռիում հայկական զորքերն ունեցան լուրջ հաջողություններ և հասան մինչև Շուլավեր:

Անտանտի ներկայացուցիչները չարունակեցին փորձերը՝ հաշտության եզրեր գտնելու հարցում: Արդեն անգլիացիներն իրենց միջնորդական գործունեության մեջ չառաջնորդվեցին արդարության սկզբունքով: Դեկտեմբերի 25–ին անգլիացի գեներալ Ռայկրոֆտը (նաև՝ Ռեյկրոֆտ, Ռիկրոֆտ) և ֆրանսիացի գնդապետ Շարդինին, առանց Հայաստանի ներկայացուցիչների հետ խորհրդակցելու, Վրաստանի վարչապետ Ն. Ժորդանիայի հետ ստորագրեցին զինադադարի մի համաձայնագիր հիմնահարցի լուծման ուղիների մասին: Այն նախատեսում էր ռազմական գործողությունների դադարեցում, Ջալալօղլի–Դսեղ գծից հյուսիս ընկած տարածքում վրացական, իսկ դրանից հարավ մնացող չրջանում՝ հայկական զորքերի տեղակայում: Ախալքալաքում հաստատվելու էր վրացական վարչկարգ՝ դաշնակից երկրների հսկողությամբ: Վարչակազմի մեջ ընդգրկվելու էին տեղի հայ և մահմեդական ներկայացուցիչներ:[760] Վրացական զորքերի թիվը գավառում պետք է լիներ խիստ սահմանափակ:

Այս համաձայնության տակ Հայաստանի կողմից առաջարկվեց ստորագրել Արշակ Ջամալյանին: Վերջինս կտրականապես հրաժար-

[759] Ձանգ., 1918, 20 դեկտեմբեր:
[760] Վրացյան Ս., նշվ. աշխ., էջ 234—235:

վեց՝ առարկելով Ախալքալաքին վերաբերող ձևակերպմանը: Անգլիացիները համաձայնագրի տակ ավելացրին հետևյալ նախադասությունը. «Պ. Ջամալյանը համաձայն չէ Ախալքալաքի գավառը Վրաստանի կողմից գրավելու կետին»: Փաստորեն դաշնակիցները, հաշվի չնստելով հայկական կողմի կարծիքի հետ, միակողմանի համաձայնագիրը փորձեցին դնել գործողության մեջ: Նման պայմաններում Հայաստանին մնաց հաշտվել ստեղծված իրավիճակի հետ: Դեկտեմբերի 29–ին Մեծ Ղարաքիլիսայում Հայաստանի ներկայացուցիչ Մ. Հարությունյանը անգլիացիների հորդորների ներքո և մի նախապայմանով, որ զինադադարով նախատեսվող պայմանները ժամանակավոր են և դեռ ենթակա են վերանայման, ստորագրեց վերոհիշյալ համաձայնագիրը: Այն բացահայտորեն միակողմանի էր և բխում էր միայն վրացիների շահերից: Այդ մասին վկայում է նաև Ղարաքիլիսայում դաշնակից տերությունների հանձնաժողովի նախագահ Դուգլաս Վիճերսը: Նրա կարծիքով կնքված համաձայնագրից հայկական կողմի դժգոհությունը միանգամայն արդարացի էր: Բայց նույնիսկ այդ պարագայում, ստորագրելով զինադադարի փաստաթղթի տակ, «Հայաստանի կառավարությունը հանդես բերեց լայն մեծահոգություն և խաղաղության անկեղծ ցանկություն»:[761]

Մի քանի օր անց՝ դեկտեմբերի 31–ին հայ–վրացական ընդհարումը դադարեցվեց: 1919 թ. հունվարի 9–17–ը Թիֆլիսում կայացավ հաշտության կոնֆերանս: Այն, որ կոնֆերանսի անցկացման վայր էր ընտրված ոչ թե չեզոք վայր, այլ Վրաստանի մայրաքաղաքը, ենթադրում էր վրացական պատվիրակության համար գերակա դիրք: Հավանաբար անգլիական պատվիրակությունը, որը գլխավորում էր խորհրդաժողովը, ինչպես դեկտեմբերի վերջին, այնպես էլ այժմ, տրամադրված լինելով պաշտպանելու Վրաստանի շահերը, նույնպես պնդեց կոնֆերանսը Թիֆլիսում անցկացնելու վրացական կողմի առաջարկության օգտին: Հայաստանի կառավարությունը, հաշվի առնելով, որ Թիֆլիսում գործող Հայոց ազգային խորհրդի ներկայացուցիչները կարող են ներկայացնել իր շահերը, չառարկեց կոնֆերանսի անցկացման վայրի վերաբերյալ վրաց–անգլիական առաջարկությանը: Ինչպես ցույց տվեցին դեպքերը, այդ հանգամանքը բավական դեր կատարեց կոնֆերանսում ոչ հայանպաստ որոշումներ կայացնելու հարցում:

[761] «Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. », էջ 81:

Կոնֆերանսը նախագահում էր անգլիական բանակի գնդապետ Սոյուարտը: Ֆրանսիական հրամանատարությանը ներկայացնում էր կապիտան Հասսելդը: Հայկական պատվիրակության մեջ ընդգրկված էին Մ. Հարությունյանը (նախագահ), Ստ. Մամիկոնյանը և ուրիշներ, իսկ ռազմական խորհրդականն էր գեներալ Գ. Կորգանովը (Կորգանյան), քարտուղարը՝ Ա. Ա. Ահարոնյանը: Վրաստանի պատվիրակությունն ավելի ներկայացուցչական էր: Այն ղեկավարում էր արտգործնախարար Ե. Գեգեչկորին: Անդամներն էին Կ. Սաբախտարաշվիլին, գեներալ Գեդևանովը և ուրիշներ:

Ախալքալաքի հարցը, որ կոնֆերանսի ամենասուր խնդիրներից էր, քննարկվեց հունվարի 13–ի նիստում:[762] *Գնդապետ Սոյուարտն ի սկզբանե դրսևորեց կողմնակալ պահվածք և ամբողջ նիստի ընթացքում, գործեց վրացիների հետ փոխհամաձայնեցված սցենարով: Նախ՝ նա առաջարկեց, որ հիմնահարցի կարգավորման վերաբերյալ քննարկման դրվի վրացական պատվիրակության առաջարկը, որը մինչ այդ, հայ–վրացական պատվիրակությունների հանդիպման ժամանակ, արդեն մերժվել էր հայ պատվիրակների կողմից: Խնդիրը վերաբերում էր Ախալքալաքում զորքեր տեղակայելուն: Վրացիներն առաջարկում էին Ջավախքում պահել միայն վրացական զորքեր. 200 հոգանոց մի զորաջոկատ պետք է կանգներ գավառի սահմանի երկայնքով, իսկ 360 հոգանոց մեկ գումարտակ՝ չորսական հրանոթներով ու գնդացիրներով, տեղակայվեր Ախալքալաք քաղաքում: Ջավեշտական է, որ գավառում վրացական զորքերի ներկայությունը գեներալ Գեդևանովը «հիմնավորում» էր հայ բնակչության շահերի պաշտպանության «մտահոգությամբ». վրացական զորքը պետք է կանխեր արյունահեղությունը գավառ վերադարձող հայ դաղթականության և նրանց բնակավայրերում հաստատված մահմեդականների միջև: Ինչ վերաբերում է հայ բնակչության անվտանգությանը, ըստ վրաց գեներալի, անհանգստանալու հարկ չկար, քանի որ «ճմռանը, ձյան առկայությունն Ախալքալաքի գավառում անհնարին է դարձ-*

[762] Սահմանային վիճելի հարցերի քննարկման մասին տե՛ս նաև Խառատյան Վ., Լոռու և Ախալքալաքի հարցը 1919 թ. հայ–վրացական խորհրդաժողովում, Հայոց պատմության հարցեր, Գիտական հոդվածների ժողովածու, թիվ 2, էջ 98–103:

նում այդ չրջանում ռազմական գործողությունները, և ուստի, այդ զորքերը չեն կարող օգտագործվել Հայաստանի դեմ»:[763]

Հայկական կողմի առարկությունները չեն ընդունվում անգլիացիների կողմից: Ստյուարտն առաջարկում է որպես երաշխիք գավառ մտցնել դաշնակիցների մեկ վաշտ: Բայց չուտով պարզվում է, որ Հայերի համար քիչ թե շատ ընդունելի այդ տարբերակը հնարավոր չէ իրագործել, քանի որ դաշնակից զորքերն անմիջապես չեն կարող ժամանել տարածաշրջան: Այդ ժամանակ Ստյուարտն ընդունում է վրացական կողմի առաջարկը՝ մինչև դաշնակիցների ժամանումը Ախալքալաքում տեղակայել վրացական 800 հոգանոց մի զորախումբ: Կորգանովն առաջարկում է ի հակակշիռ վրացական զորքերի այդ քանակության, հայերին թույլատրել իրենց ռազմական ուժերն Հարավային Բորչալուում հասցնել 600 զինվորի: Բայց ապարդյուն: Հասկանալի է, որ այս ամենը նախապես մշակված վրաց–անգլիական դիվանագիտական հնարք էր:

Ստյուարտի ճնշման տակ հայկական պատվիրակությունը համաձայնվում է վրացական նախագծի հետ, որը ոչ միայն արտոնում էր Վրաստանին զգալի քանակությամբ զորքեր պահելու Ջավախքում, այլև առանց դաշնակիցների ներկայության և հսկողության, բացառել Հայաստանի որևէ մասնակցություն Ախալքալաքի գավառի գործերին: Ավելին, Գեդևանովի պահանջով արձանագրության մեջ մտցվում է հատուկ կետ, ըստ որի՝ Վրաստանի նկատմամբ Հայաստանի որևէ ագրեսիվ գործողություն գնահատվելու էր իբրև թշնամական քայլ դաշնակիցների հանդեպ:[764]

Կոնֆերանսում դաշնակիցների չանքերով ի վնաս հայերի որոշում է կայացվում նաև Ախալքալաքի վարչակարգի ձևավորման սկզբունքների վերաբերյալ: Չի ընդունվում տեղական մարմիններն ընտրովի դարձնելու մասին հայերի առաջարկը: Ստյուարտը, խուսափելով իրեն ուղղված հայկական կողմի արդարացի հարցադրումնե-

---

[763] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 104, թ. 77: Գեներալ Կորգանովը, ի պատասխան Գեդևանովի արտահայտած վերջին մտքի, հիշեցրեց, որ առաջին աշխարհամարտի կարևորագույն օպերացիաներից երկուսը՝ գերմանական Հինդենբուրգի պաշտպանական գծի ճեղքումը և էրզրումի գրավումը, տեղի են ունեցել ծմռանը: Բացի այդ, Ախալքալաքում զգալի թվով վրացական ուժերի առկայությունը վտանգում է նաև հայկական զորքերի դիրքերը Բորչալուի գավառի հարավում:

[764] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 104, թ. 78–79: Վրացական պատվիրակության վստահությունը Ստյուարտի նկատմամբ այնքան մեծ էր, որ Գեդևանովը պահանջեց, որ Հայաստանին արգելվի Ախալքալաքի գավառի սահմանագլխին պահելու անգամ մեկ զինվոր:

րից, առաջնորդվում էր այն «սկզբունքով», որ այդ խնդիրը դուրս է կոնֆերանսի իրավասությունից և արդեն լուծված է դեկտեմբերի վերջին գեներալ Ռայկրոֆտի նախագծով կնքված զինադադարի համաձայնագրով: Հայկական պատվիրակությանը չի հաջողվում հասնել գոնե այնպիսի որոշման, որ վրացական վարչակարգի գործունեությունը հսկելու համար նախատեսվող հանձնաժողովում հայ անդամների թեկնածությունն առաջադրվի Հայաստանի և Հաստատվի դաշնակիցների կողմից: Այդ հարցը ևս փաստորեն մնում է միայն Վրաստանի իրավասությանը, որը պետք է տեղի հայերից և մահմեդականներից ընտրված ներկայացուցիչներին, դաշնակից երկրների դիտորդների ներկայությամբ, վստահեր իր գործունեության «հսկողությունը»: Բայց քանի որ ոչ դաշնակից զորքերը ժամանեցին Ջավախք, ոչ էլ նրանց դիտորդները, վրացական կառավարությունը գավառում հաստատեց իր լիակատար իշխանությունը, իսկ Վերահսկիչ հանձնաժողովում ընդգրկվելու համար տեղի հայ ու մահմեդական ներկայացուցիչներին ընտրելու գործը դարձավ ձևական և նույնպես հայտնվեց վրացական իշխանությունների ձեռքում:

Այսպիսով՝ բրիտանական պատվիրակությունը Ախալքալաքի հիմնահարցի քննարկումը տարավ այնպիսի ուղիով, որ արդյունքում ընդունվի միայն վրացիների համար ընդունելի որոշում: Հայկական կողմի բոլոր արդարացի առարկություններին, հատկապես այն հարցում, որ անհասկանալի է, թե ինչպես կարելի է Հայաստանին զրկել գերազանցապես հայերով բնակեցված այդ գավառի վարչաքաղաքական կյանքին մասնակցելու իրավունքից, գնդապետ Ստյուարտը դեմագոգիկ ձևով պատասխանեց, որ այդ ֆունկցիան կկատարեն դաշնակիցների զորքերն ու նրանց դիտորդները:

Անգլիացիների կողմնակալ կեցվածքն այնքան ոգևորեց վրացական պատվիրակությանը, որ արտգործնախարար Ե. Գեգեչկորին վստահորեն հայտարարեց, որ «այդ (Ախալքալաքի – Ա.Մ.) վարչակարգի հանդեպ Հայաստանը ոչ մի գործ չպետք է ունենա»՝ նույնիսկ չհամաձայնելով Վերահսկիչ հանձնաժողովի ընտրությունների մասին Հայաստանի կառավարությանը տեղյակ պահելու վերաբերյալ Ստյուարտի առաջարկության հետ: Հատկանշական է, որ վրացական պատվիրակության նախագահի այդ կարծր, հայերի ու դաշնակիցների համար նաև վիրավորական կեցվածքը, անգլիացի գնդապե-

տը բավարար համարեց և, առանց հայկական կողմի բողոքները հաշվի առնելու, հայտարարեց հարցը վերջնականապես լուծված:[765]

Հատկանշական է, որ կոնֆերանսում վրաց պատվիրակության հանդուգն պահվածքը պայմանավորված էր ոչ միայն անգլիացիների վրացամետ կեցվածքով, այլ նաև հետևանք էր հայ–վրացական հակամարտության չրջանում վրաց–ադրբեջանական մերձեցման: Ինչպես իրավացիորեն նկատել է ակադեմիկոս Գ. Գալոյանը, այդ չրջանում ավելի խորացնելով մենչևիկ–մուսավաթական դործակցությունը, կողմերը չուտով կնքեցին վրաց–ադրբեջանական պայմանագիր, որի գաղտնի հոդվածներից մեկի համաձայն հայ–ադրբեջանական պատերազմի դեպքում Վրաստանը պարտավորվում էր չրջափակել Հայաստանի հաղորդակցության բոլոր ուղիները:[766]

Խաղաղության խորհրդաժողովն ավարտվեց հունվարի 17–ին: Կնքված հաշտությունը խիստ ձեռնտու էր վրացական կողմին: Հայկական զորքերի ռազմական հաջողություններն ի չիք էին դառնում: Լոռու ազատագրված ավելի քան 40 գյուղեր՝ մեծ մասամբ հայաբնակ, մտնում էին Ջեզոք գոտու մեջ,[767] իսկ Ջավախքը, թեև դիտվում էր վիճելի տարածք, մնում էր վրացիների հսկողության ներքո:[768] Այնտեղ վրացական կառավարությանը թույլատրվում էր պահել ոչ ավել, քան 225 հետևակային (2 վաշտ՝ 2 գնդացիրով): Տեղի վրացական վարչության գործունեության հսկողությունը, ինչպես նշվեց, ձևականորեն դրվելու էր Անտանտի երկրների ներկայացուցիչների վրա, որոնք այն իրականացնելու էին գավառի հայ և մահմեդական բնակչության օժանդակությամբ:[769] Ավելորդ չենք համարում ընդգծել, որ Ջեզոք գոտու հյուսիսային սահման դառնում էր այն գիծը, որտեղ կանգնած էր վրացական զորքը պատերազմի վերջին օրվա՝ դեկտեմբերի 31–ի վիճակով, այն դեպքում, երբ Հայաստանի հսկո-

---

[765] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 104, թ. 80–82:

[766] Գալոյան Գ., նշվ. աշխ., էջ 54:

[767] Լոռու Ջեզոք գոտին բաժանվեց 3 տեղամասերի, որոնցից յուրաքանչյուրն ուներ 4–5 վոլոստներ՝ գավառակ–գյուղախմբեր: Ալավերդու տեղամասն ուներ 4 վոլոստ՝ 11 գյուղերով, Ուզունլարինը (այժմ Օձուն)՝ 4 վոլոստ՝ 11 գյուղերով, Վորոնցովկայինը՝ 5 վոլոստ՝ 15 գյուղերով: Ջեզոք գոտու գյուղերի ցանկը և սահմանները տես ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, ց. 2, գ. 56, թ. 3–4:

[768] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 113, ց. 3, գ. 75, թ. 3ա, 5ա:

[769] «Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. », էջ 82–83:

ղութ յան տակ անցած ամբողջ տարածքը ազատվելու էր հայկական ուժերից:

Ջբավարարվելով այսքանով հետագա ամիսներին ևս անգլիական զորահրամանատարությունը հանդես եկավ հակահայ և վրացանպաստ նոր «առաջարկություններով» իրականում երկու հարևան ժողովուրդների միջև ավանդական բարիդրացիական հարաբերությունները վերականգնելու փոխարեն, բացասական դեր կատարեց նրանց միջև մշտական սառնություն պահպանելու գործում: Ջմոռանանք, որ անգլիացիները Ղարաբաղի հարցում էլ կանգնեցին Ադրբեջանի չահերի պաշտպանության դիրքերում հայերին «կերակրելով» միայն հայկական հարցի լուծման սին խոստումներով:

Ինչևէ, հայ–վրացական եղբայրասպան պատերազմն ավարտվեց, աղգամիջյան լարվածությունը հետզհետե տեղի տվեց, և երկու երկրների միջև չուտով հաստատվեցին ընդունելի միջպետական հարաբերություններ: Մարտին երկու հանրապետությունները ճանաչեցին միմյանց անկախությունը, վերականգնվեց երկաթուղային երթևեկությունը, աշխուժացան տնտեսական կապերը: Սակայն Վրաստանի կառավարությունը, օգտագործելով իր աշխարհագրական դիրքը, չմոռացավ ժամանակ առ ժամանակ հակահայ քայլեր կատարել ընդհուպ մինչև տնտեսական շրջափակումն ու արտասահմանից հայ սովյալների համար նախատեսված սննդամթերքի թալանը:[770] *Այսպես 1919 թ. ապրիլի վերջին և մայիսի սկզբին, երբ զորավար Անդրանիկը գտնվում էր Թիֆլիսում, դեռ երկաթուղին կանոնավոր և անվտանգ կերպով չէր գործում: Հովհ. Թումանյանի մասնակցությամբ արտոգործնախարար Ե. Գեգեչկորու հետ հանդիպման ժամանակ զորավարը խորհուրդ տվեց վրացական կառավարությանը ձեռնպահ մնալ Հայաստանը շրջափակելու տմարդի քայլերից, որոնք ուղղակիորեն հարվածում են երկու ժողովուրդների չահերին. «...ինչո՞վ մեղավոր են մեր հազարավոր որբերը, որ այնտեղ կոտորվին անոթի, և դուք փակեք Բաթումի ճամփան, ալյուր չի փոխադրվելու դեպի Հայաստան»:*[771] *Անդրանիկի միջնորդությունը դրական աղդեցություն է ունենում Բաթում–Թիֆլիս–Երևան երկաթուղին վերադործարկելու խնդրում:*

---

[770] Գալոյան Գ., նշվ. աշխ., էջ 99–100:

[771] Գրական թերթ, 1964, 18 դեկտեմբեր: Հմմտ. Ջօր. Անդրանիկի Կովկասեան ճակատի պատմական օրագրութիւնը, 1914–1917, Պոսթոն, 1924, էջ 150–152:

Բարեբախտաբար, այս ռազմական կոնֆլիկտից հետո հայ–վրացական քաղաքական շրջանակներում երկուստեք գերակշռեց հարցերը միմիայն քաղաքական ճանապարհով լուծելու մտեցումը, որին կողմերը հետագայում հարազատ մնացին անգամ ամենաբարդ իրավիճակներում: Ուշագրավ է, որ թեև վիճելի խնդիրներից չատերին այդպես էլ լուծումներ չգտնվեցին, սակայն բարեկամական հարաբերությունները պահպանվեցին: Ոչ դյուրին տարածքային վեճերը լուծելու համար ևս պահպանվեց քաղաքակիրթ եղանակով բանակցելու գործելակերպը. ձեռք բերվեց համաձայնություն այդ խնդրով մշտապես բանակցային գործընթաց ապահովելու մասին:

1919 թ. հունվարյան հայ–վրացական կոնֆերանսից հետո անգլիացիների առաջարկած լուծումից դժգոհ մնացած հայկական կողմը փորձեց հարցը տեղափոխել միջազգային ատյաններ. նախ՝ Բեռն՝ 2–րդ ինտերնացիոնալի խորհրդաժողով (1919 թ. փետրվար), ապա՝ Փարիզի խաղաղության վեհաժողով: Բեռնում վրացական սոցիալ–դեմոկրատ մենշևիկները, այդ թվում՝ նրանց պարագլուխ Ա. Ջխենկելին, ընդունեցին Հայ հեղափոխական դաշնակցության ներկայացուցիչների առաջարկությունը՝ հայ–վրացական տարածքային խնդիրը խորհրդաժողովի օրակարգ մտցնելու մասին: Ինտերնացիոնալի կուսակցությունների մեծամասնության առաջարկով վիճելի տարածքների պատկանելության սկզբունք հռչակվեց ազգերի ինքնորոշման իրավունքը, իսկ դրա կիրառման միջոց՝ հանրաքվեն:[772]

Կասկածից վեր է, որ այդ սկզբունքի կիրառման դեպքում Լոռու հայաբնակ մասի և Ախալքալաքի հիմնահարցը կլուծվեր հօգուտ Հայաստանի: Ամենայն հավանականությամբ, Բեռնում վրաց մենշևիկները «ընդունեցին» հանրաքվեի գաղափարը հանուն Եվրոպայի սոցիալիստական կուսակցությունների հետ համերաշխության և ժամանակ շահելու նպատակով՝ առավել ևս, որ անգլիացիների կողմից Լոռու Ջեղոք գոտու ստեղծումով վրացիներն արդեն որոշակի ազդեցություն էին ձեռք բերել այդ տարածքի նկատմամբ, իսկ Ջավախքն էլ առժամանակ մնալու էր իրենց հսկողության ներքո:

Պատահական չէ, որ հետագայում հրավիրված խորհրդաժողովներում խոստացված հանրաքվեի գաղափարը վրաց մենշևիկների կողմից այդպես էլ չպաշտպանվեց: Երբ 1919 թ. դարնանից սկսեց գործել հայ–վրացական սահմանային հաշտարար հանձնաժողովը,

[772] Ջամալեան Ա., Հայ–վրացական կնճիռը, Հայրենիք, 1928, ապրիլ, էջ 95–96:

վրացական լիազորները հրաժարվեցին հանրաքվե անցկացնելու գաղափարից և հատկապես անզիջում դիրք բռնեցին Ախալքալաքի գավառի խնդրում: Վրացական կառավարությունն այդ հարցում ձգտում էր հիմք ընդունել հունվարյան կոնֆերանսի բանաձևը՝ օգտվելով նաև Անդրկովկասում բրիտանական զորքերի հրամանատար գեներալ Վ. Թոմսոնի աջակցությունից: Վերջինս վրացիների դրդմամբ 1919 թ. ապրիլի 14–ին Թիֆլիսում հանդես եկավ սահմանային հարցերի ժամանակավոր լուծման որոշումով: Դիմելով Վրաստանի կառավարության նախագահին և Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչին՝ նա առաջարկում էր, «ի շահ երկու ժողովուրդների», երկուստեք, չուտափույթ համաձայնվել՝ Ախալքալաքի գավառը վրացական վարչական ենթակայության տակ դնելու, Բորչալուի գավառի մեծ մասը (ներառյալ Ալավերդի քաղաքը), Արդահանի գավառի մի մասը (Կուր գետի ողջ ձախափնյակը՝ Արդահան քաղաքով հանդերձ) Վրաստանին հանձնելու իր ծրագրի հետ:[773] Հատկանշական է, որ անգլիական ռազմական առաքելության պարագլխի այս որոշումը, որ քիչ բանով էր տարբերվում դնդապետ Ստյուարտի և անգլիացի մյուս դիվնորականների վերոնշված հակահայ դիրքորոշումներից, քննարկման նյութ չէր դառնալու և ուղղակի պարտադրանք էր հայկական կողմին: Այն ևս՝ հայ–վրացական հունվարյան խորհրդաժողովի օրինակով, հավասար պայմաններ մեջ չէր դնում կողմերին:

Նախ՝ դարձյալ խնդրի արծարծման վայր էր ընտրված Վրաստանի մայրաքաղաքը և երկրորդ, իբրև վրացական կողմի շահերի պաշտպան, որոշումը հասցեագրված էր Վրաստանի վարչապետին, իսկ հայկական կողմից՝ միայն Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչին: Անկասկած, այսքան պատասխանատու խնդրով, դիմելով պաշտոնական դիրքով անհամմատ ցածր կարգավիճակ ունեցող պաշտոնյայի, որպիսին վարչապետի համեմատությամբ դիվներկայացուցիչն էր, անգլիական գեներալը հասկացնել էր տալիս, որ իրենք չեն խորշում անգամ դիվանագիտական էթիկայի նորմերի ոտնահարումից և հաստատապես կանգնած են Վրաստանի շահերի պաշտպանության դիրքերում: Ինչպես երևում է դեպքերի հետագա ընթացքից, Հայաստանի ղեկավարությունն անպատասխան

[773] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 191, թ. 34 և «Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. », էջ 98–99:

թողեց Թոմսոնի այս յուրահատուկ որոշում–առաջարկությունը, իսկ վրացիները՝ քայլ առ քայլ գործողության մեջ դրեցին անգլիական մոտեցումները՝ փորձելով հարցերը լուծել հօգուտ իրենց՝ եվրոպական միջազգային կուսակցական կառույցներում ևս:

1919 թ. գարնանը Ամստերդամում կայացած սոցիալիստական կուսակցությունների խորհրդաժողովում, վրաց մենշևիկները, օգտվելով այնտեղ Հայ հեղափոխական դաշնակցության ներկայացուցիչների բացակայությունից, հայտարարեցին, որ իրենք հայերի հետ տարածքային որևէ խնդիր չունեն: Ի պատասխան այդ քայլի, Հայաստանի գործիչ, Իտալիայում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Միքայել Վարանդյանը դաշնակցության անունից 2–րդ ինտերնացիոնալի գործադիր մարմնին տեղեկացրեց, որ վրացիների այդ հայտարարությունը չի համապատասխանում իրականությանը, և Վրաստանը փաստորեն հրաժարվում է Բեռնի խորհրդաժողովի որոշումից:

1919 թ. մայիսի սկզբներին 2–րդ ինտերնացիոնալի գործադիր մարմինը անդրադարձավ հայ–վրացական տարածքային վեճերին: Վրացիները, համոզված լինելով, որ իրենց կրկին պարտադրվելու է հայերի համար չահեկան հանրաքվեի սկզբունքը, առաջ քաշեցին հիմնահարցի լուծման նոր՝ միջնորդ դատարանի՝ արբիտրաժի տարբերակը,[774] որի չնորհիվ նրանք ակնկալում էին հարցի հետագա ձգձգում և ստեղծված ստատուս քվոյի պահպանում: Ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքը օրակարգից հանելու համար վրացական ազդեցիկ մենշևիկներից Ծերեթելին հայերին հարցրեց, թե դուք «պատրաստ եք նույն սկզբունքը կիրառելու նաև Թուրքահայաստանում»:[775] Բնականաբար, ցեղասպանություն տեսած Արևմտյան Հայաստանում հանրաքվեի սկզբունքի կիրառումը հայ ժողովրդի համար ցանկալի արդյունք չէր կարող ապահովել, և տվյալ դեպքում, շահարկվում էր հայության ապրած պատմական ողբերգության հանգամանքը: Ավելին, վրաց գործիչներն առաջարկում էին 1919 թ. մայիսից Հայաստանի Հանրապետության մաս կազմող Կարսի մարզն ու դեռ միացվելիք Արևմտյան Հայաստանը հայացնել ախալքալաքցիներին այնտեղ վերաբնակեցնելու եղանակով: Այդ

[774] Ջամալեան Ա. նշվ. աշխ., Հայրենիք, 1928, ապրիլ, էջ 99:
[775] Varandian M. Le conflit armeno–géorgien et la guerre du Caucase, Paris, 1919, էջ 144, Ջամալեան Ա. նշվ. աշխ., Հայրենիք, 1928, ապրիլ, էջ 99:

ճանապարհով, ըստ նրանց, «կլուծվեր» Ջավախքի հիմնահարցը և միաժամանակ «կվերացվեր» հայ–վրացական հակամարտության գլխավոր պատճառը:

Անդրկովկասում վիճելի տարածքային խնդիրների լուծման վերաբերյալ անգլիական կառավարության մոտեցումները Փարիզում 1919 թ. մայիսի 16–ին հայկական պատվիրակության նախագահ Ավ. Ահարոնյանին ներկայացրեց անգլիացի դիվանագետ Լուի Մալլեսը: Ի պատասխան Ահարոնյանի այն հարցի, թե ինչո՞ւ են անգլիացիները Հայաստանի համար կենսական տարածքների՝ հայաբնակ Ղարաբաղի, Լոռու և Ախալքալաքի հարցում պաշտպանում Ադրբեջանին և Վրաստանին, Մալլեսը պատասխանեց, որ դրա փոխարեն հայերը կստանան Արևմտյան Հայաստանը:[776]

Եվրոպական տերություններից որևէ օժանդակություն չստանալով՝ Հայաստանը փորձեց ապավինել սոցինտերնի պաշտպանությանը: 2–րդ ինտերնացիոնալի գործադիր մարմինը մերժեց միջնորդ դատարանի վերաբերյալ վրացիների առաջարկը և կրկնեց Բեռնի խորհրդաժողովի որոշումը՝ միակ արդարացի սկզբունք համարելով հանրաքվեն: Լոռիում և Ախալքալաքում հանրաքվե անցկացնելու համար որոշվեց տարածաշրջան ուղարկել սոցինտերնի հատուկ պատվիրակություն: Դաշնակցության ներկայացուցիչները նաև առաջարկեցին, որ հանրաքվեի ժամանակ որևէ ճնշում կամ բռնամիջոց բացառելու և տեղական բնակչությանը սեփական կամքը ազատորեն դրսևորելու հնարավորություն ընձեռելու համար անհրաժեշտ է այդ գավառներից դուրս բերել վրացական զորքը: Վրացական կողմը չընդունեց այս առաջարկությունները, և հարցը նորից մտավ փակուղի: Հայաստանի ղեկավարությունը, ինչպես երևում է կառավարության 1919 թ. հուլիսի 19–ի որոշումից, վրացիների նմանօրինակ կարծր դիրքի պայմաններում էլ հարցի լուծման միակ տարբերակ ընդունեց քաղաքական ուղին: Ուստի հանձնարարվեց արտգործնախարարին վերսկսել բանակցությունները վրացական կառավարության հետ՝ արդյունքները ՀՀ խորհրդարանի օգոստոսի 1–ին սկսվելիք նստաշրջանի հաստատմանը ներկայացնելու համար:[777] Սակայն հետագա ամիսներին ազգերի ինքնորոշման իրավունքի

[776] Սիսարոնյան Ա., Սարդարապատից մինչև Սևր և Լոզան, Ե., 2001, էջ 26–27:
[777] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 206, ց. 1, գ. 84, թ. 28 և «Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ.», էջ 114:

հարգման, հանրաքվեի անցկացման, էթնիկ–ազգագրական սկզբունքի կիրառման և այլ միջազգային նորմերի ու մոտեցումների հիման վրա լուծումների հասնելու հայկական կողմի բոլոր ջանքերն անցան ապարդյուն[1] ինչպես ուղղակի հայ–վրացական բանակցությունների, այնպես էլ 2–րդ ինտերնացիոնալի միջնորդությամբ հրավիրված խորհրդակցությունների ընթացքում:

2) Իրադրությունը Ախալքալաքի գավառում 1919 - 1920 թթ.

Մինչև 1919 թ. մարտ ամիսը հայրենի գավառ վերադարձան ախալքալաքցի գաղթականների մնացած բեկորները: Գավառը լիովին թալանված էր, հացահատիկն ու անասունների մի մասը տարվել էր Օսմանյան Թուրքիա: Բարվոք վիճակում էին միայն թրքախոս հայ կաթոլիկների և ռուս դուխոբորների գյուղերը: Վերջիններս զգալի օգնություն ցույց տվեցին գաղթականներին՝ ցանքս կազմակերպելու, բնակավարերը վերականգնելու գործում: Իրենց հայրենակիցներին որոշակի օգնություն ցուցաբերեց Ախալցխայի հայությունը: Հարյուրավոր գաղթականներ, հատկապես ծնողազուրկ մանուկներ, տեղափոխվեցին Ախալցխա քաղաք ու գավառի գյուղեր:

Հայաստանի կառավարությունը որոշում ընդունեց արտասահմանից ստացվող հացահատիկից բաժին հանել նաև Ախալքալաքի գաղթականությանը: Վրաստանը 1919 թ. գարնանը, ապաշրջափակելով ճանապարհները, հրաժարվում էր Ռուսական կայսրության և Անդրկովկասյան սեյմի փլուզումից հետո իրենց մնացած լոկոմոտիվներից ու վագոններից մասնաբաժին հանել Հայաստանին: Դատապարտելով վրացական կառավարության այդ քայլը՝ գրող Ակսել Բակունցը «Հայաստանի աշխատավոր» թերթում ցավով գրում էր. «Քաղաքական անտարբերությամբ կխրախուսեն տասնյակ հազարավոր հայության մահացումը սովից, հիվանդությունից (օր. ախալքալակցիները): Իրենց ձեռքին գտնված հազարավոր վագոններից ու լոկոմոտիվներից մեկ–երկու տասնյակն էլ չեն տալ, որ Հայաստանի ժողովրդի հացը փոխադրվի, օրական հարյուրավոր, նույնիսկ հազարավոր մեռնողներին սովից փրկելու»:[778] Միայն հունիսին, երբ հայ-

[778] Նորք, Համերաշխության հիմքը, Ե., 1999, թիվ 2, էջ 22 և Հայաստանի աշխատավոր, 1919, 26 հունիս, թիվ 81:

կական կառավարությունը զգալի գումարներով գնեց վագոններ, հացահատիկը ներկրվեց հանրապետություն, ապա Ալեքսանդրապոլի վրայով կամ՝ ուղղակի Թիֆլիսից, Հայաստանի միջոցներով, հասցվեց Ախալքալաքի սովյալներին:

Ստացվող հացահատիկից Ախալքալաքի գավառին բաժին հանելու գործը դրվեց պետական մակարդակի վրա: Թիֆլիսում՝ Հայաստանի ներկայացուցչությունում ստեղծվեց հատուկ հաստիք խնամատարության գծով, որը զբաղեցրեց Դ. Դավիթխանյանը: Միայն 1919 թ. մայիսի սկզբին Հայաստանը Ախալքալաքի սովյալներին հատկացրեց 3 մլն. ռուբլու նպաստ և 74 մլն. ռուբ.՝ սերմացու գնելու համար:[779] Այդուհանդերձ, Ջավախքի տնտեսական իրավիճակը չբարելավվեց: Հայրենիք վերադարձած գաղթականությունը չկարողացավ նախապատրաստվել 1919–1920 թթ. ձմռանը և վառելափայտի ու սննդամթերքի սակավության պատճառով, անասելի զրկանքներ կրեց: Հարկ եղավ 1920 թ. մարտի 9–ին Թիֆլիսում Հայոց ազգային խորհրդի, Հայոց գյուղատնտեսական ընկերության և Ախալքալաքի Հայրենյաց վարչության համատեղ նիստի կողմից լիազորել Պ. Աբելյանին «...մեկնելու Երևան՝ Հայոց կառավարությեան, պառլամենտի և այլ հիմնարկությունների և անձանց առաջ միջնորդելու բաց թողնելու Ախալքալաքի ազգաբնակութեան սերմացուի կարիքների համար ալիւր և դրամական միջոցներ»:[780] 1920 թ. մարտի վերջից Հայաստանի իշխանությունները, հաղթահարելով Վրաստանի հարուցած տնտեսական խոչընդոտները, հացահատիկի նոր խմբաքանակներ ուղարկեցին Ախալքալաք: Վրացական կառավարությունը ծանր մաքսեր սահմանեց ոչ միայն Հայաստան ներմուծվող, այլև Ախալքալաք ուղարկվող այն հացահատիկի վրա, որից մասնաբաժին էր հանվում և՛ հայ, և՛ վրացի գաղթականներին:

Խիստ պակասել էր անասնագլխաքանակը: Զկային լծկաններ և սերմացու 1919 թ. գարնանը ցանքս կազմակերպելու համար: «Եթե ուշանա օգնության գործը,– 1919 թ. մարտի վերջին Ախալքալաքից գրում էին «Ձանգ» թերթի խմբագրությանը,– Ախլքալակի հայ գյուղերի տեղ մենք կգտնենք սովամահների գերեզմանոցներ»:[781]

---

[779] Վրացեան Ս., նշվ. աշխ., էջ 266: 1919–1920 թթ. Ախալքալաքի հայ և վրաց գաղթականությունը Ամերիկյան օգնության կոմիտեից ստացավ զգալի քանակությամբ հագուստ և 250 հազ. փութ սպիտակ ալյուր (տե՛ս ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, ց. 2, գ. 3, թ. 132):

[780] Ախալքալաքի գավառագիտական թանգարան, գործ 3709, թ. 1:

[781] Ձանգ, 1919, 30 մարտ, թիվ 36:

1918 թ. վերջին սկսված սառնամանիքների պատճառով թուրքերը չէին կարողացել իրենց հետ տանել գավառում եղած բոլոր անասուններն ու շարժական գույքը: Պողոս Աբելյանը դիմեց Ախալքալաքում գեներալ–նահանգապետ նշանակված Մակաևին՝ խնդրելով մնացած այդ գույքը հանձնել գաղթականությանը: Սակայն Մակաևը մերժեց նրա խնդրանքը: Ցավոք, վիրահայոց ազգային խորհուրդը, որը հատկապես հայ–վրացական պատերազմի չրջանից դարձել էր անգործուն մի մարմին, ինչպես այլ, այնպես էլ այս խնդրում չաջակցեց Պ. Աբելյանի և հայրենասեր այլ գործիչների նմանօրինակ ձեռնարկումներին:

Գեներալ Մակաևը զինաթափեց հայ բնակչությանը, իմերեթիայից և Թիֆլիսից բերված վրացական միլիցիայի միջոցով հաստատեց խստագույն ռեժիմ: Ընդ որում, վրացիներն ու մեսխեթցի թուրքերը չզրկվեցին զենք կրելու իրավունքից: Հայերից զենք կարող էին ստանալ միայն նրանք, ովքեր «կամովին», բայց իրականում բռնությամբ զորակոչվում էին վրացական բանակ՝ անհնազանդ Աբխազիայի, Օսեթիայի և Աջարիայի դեմ կռվելու համար: «Ախալքալաքցի հայերին,– գրում էր Պ. Աբելյանը,– մենչևիկյան Վրաստանը վաղուց զինաթափ էր արել՝ զինելով գավառի թուրքերին ու վրացիներին»:[782]

Դեռ նոր էր ավարտվել հայ–վրացական պատերազմը, երբ փետրվարին մենշևիկյան կառավարության դեմ Թուրքիայի, հավանաբար նաև Անդրկովկաս մտած զինվորական հրամանատարության դրդմամբ, ապստամբեցին Քոբլիանի և Փոցխովի թուրքերը: Խուլոյի կողմից նրանք ներխուժեցին Ախալցխա: Վրացական սահմանապահ ջոկատներն ու Ախալցխայի կայազորը, առանց դիմադրության, հանձնեցին քաղաքն ու չրջակայքը և փախուստից առաջ թալանեցին ու ավերեցին հայկական Ճաճարակ (Ջաջարակ) գյուղը: 19 օր թուրքերը Սերվեր բեկի գլխավորությամբ գավառը պահեցին իրենց ձեռքում՝ այն «հռչակելով» Վրաստանից անկախ ինքնավար հանրապետություն: Ապստամբության ճնշումից հետո, որին իշխանությունները փորձեցին մասնակից դարձնել հայերին, խռովության կազմակերպիչներ Բախչի, Ջիա բեկերն ու ազդեցիկ այլ անձինք, ոչ միայն անպատիժ մնացին, այլև ստացան զանազան պաշտոններ ու զինվորական աստիճաններ: Նույն «բարյացակամությունը» չնկատ-

[782] ՀՀ ՆՊԿՊԱ. ֆ. 114, ց. 2, գ. 3, թ. 124:

վեց հայերի նկատմամբ: Այսպես, փաստական անկախությունից օգտվող Աջարիայի մահմեդականներին հպատակեցնելու համար իշխանությունները բանակ զորակոչեցին զգալի թվով հայերի: Բոլոր նրանք, ովքեր հրաժարվեցին, ենթարկվեցին խստագույն պատիժների: Մի խումբ ախալցխացի հայ դասալիքներ, գնդակահարվեցին:[783]

Վրացական միլիցիան և ժողովրդական (Ազգային) գվարդիան հայատյաց Ս. Նադիրաձեի գլխավորությամբ հաճախ մտնում էին հայկական բնակավայրերը և կամայականորեն հարկեր հավաքում, բռնագրավում հացահատիկը, գյուղատնտեսական այլ մթերքներ ու անասուններ, համազգեստ պահանջում վրացական բանակի համար: Իրեն շատ սանձարձակ պահող միլիցիայի և գյուղացիության միջև երբեմն լինում էին բախումներ: Մարտի սկզբին ողբերգական դեպք արձանագրվեց Կորխ գյուղում: Երբ գյուղացիները փորձեցին թույլ չտալ թալանել բնակչությանը, ոստիկանները կրակ բացեցին: Զոհվեց երկու բնակիչ:[784] «Այս չրջանում, վրաց տիրապետության օրով,– գրում էր ժամանակի մամուլը,– սկիզբ առած ավազակությունը ավելի ընդարձակվեց, անհատական թալանը փոխվեց մասսայականի, թալանում են ամբողջ գյուղերը. բռնաբարման ու առևանգման դեպքեր են տեղի ունենում: ...Չնայած բազմաթիվ բողոքներին՝...դադարեցնել հաճախակի բնույթ կրող ավազակությունը, կառավարությունը այդ ուղղությամբ ոչ մի դրական միջոցի չէ դիմել և ոչ մի հանցավոր պատասխանատվության չի կանչվել»:[785] Միևնույն վիճակում էր նաև հարևան Ախալցխայի հայությունը: Դեպքերի ականատես Ե. Սիմոնյանը դառնությամբ գրում էր, որ «...թուրքերին հաջորդող վրաց մենշևիկների իշխանությունն էլ մխիթարական չէր. դարձյալ իրար հետևից եկան դառն օրեր, անիշխանություն, խռովություն, ավեր ու բռնություն: ...Կաշառքը, աղգային խտրականությունը, ծնծը, կողոպուտը, սպանություններն՝ ահռելի չափերի էր հասել»:[786]

1919 թ. փետրվարի 3–ին, երբ գավառ վերադարձած գաղթականությունը դեռ գտնվում էր ծայրահեղ աղքատ վիճակում, ցրտի ու սովի պայմաններում, Ախալքալաքում վրացական իշխանությունն-

[783] Սիմոնյան Ե., նշվ. աշխ., էջ 112–113, 117–118:
[784] Ձանգ, 1919, 22 մարտ, թիվ 33:
[785] Նույն տեղում, 30 մարտ, թիվ 36:
[786] Սիմոնյան Ե., նշվ. աշխ., էջ 111, 115:

ները հապշտապ «կազմակերպեցին» գյուղացիական համագումարի, ինչ–որ իմաստով իշխանության տեղական մարմինների ընտրություններ: Հայ բնակչության մեծամասնությունը չմասնակցեց ընտրություններին, որոնք անցան բացահայտ չանտաժի, պետական չրջանակների քաղաքական ու գաղափարական ուժեղ ճնշման պայմաններում: Պատահական չէ, որ բացարձակ փոքրամասնություն կազմող վրացիները գավառում ստացան հինգ, իսկ մեծամասնություն ունեցող հայերը, թուրքերը և ռուս դուխոբորները՝ մեկական տեղ:[787] Ավելի մեծ կեղծիքներով անցկացվեցին Վրաստանի սահմանադիր ժողովի ընտրությունները, որոնք կայացան 1920 թ. ամռանը:[788]

Սկսվեց Ջավախքը վրացիներով «գաղութացնելու» քաղաքականությունը: Մինչև 1920 թ. վերջը պետության հովանավորությամբ Ախալքալաքի գավառ փոխադրվեցին մի քանի հարյուր ընտանիք իմերեթցի վերաբնակիչներ:[789] Տեղի վրաց վարչությունը գավառի հյուսիսում և արևելքում ընկած արոտատեղիների մի զգալի մասը խլեց հայերից և հանձնեց թուշերին: Տարբեր մեքենայություններբի չնորհիվ մի շարք գյուղեր զրկվեցին իրենց վարելահողերից: Ոտնձգություններ եղան Ախալցխայի Սբ. Փրկիչ եկեղեցուն պատկանող Կարծախ, Դադեչ, Սուլդա և այլ գյուղերի հողատարածքների նկատմամբ: Վրացական կառավարությունը կանգ չառավ նույնիսկ այնպիսի մի միջոցի առջև, ինչպիսին ազգաժուլումն էր: Սկսվեց մի արշավ կաթոլիկ հայերին «վրացացնելու» ուղղությամբ:[790]

Վրացական իշխանությունները հատկապես դաժան միջոցներ գործադրեցին ազգային փոքրամասնությունների՝ հայերի, օսերի ու աբխազների նկատմամբ՝ նրանց մեղադրելով անջատողականության մեջ:[791] «Անջատողականության» դեմ պայքարում, բացահայտ ռազմաքաղաքական «միջոցառումներից» զատ, ազգային փոքրամաս-

---

[787] Արաքս, Ախալքալակի գավառի տնտեսական և քաղաքական ներկան, Ջանգ, 1919, 22 մարտ, թիվ 33:

[788] Սիմոնյան Ե., նշվ. աշխ., էջ 118–119:

[789] Իմերեթցիների զգալի մասը, չդիմանալով Ջավախքի խստաշունչ կլիմայական պայմաններին, հետագայում վերադարձավ իրենց բնակավայրերը:

[790] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, ց. 2, գ. 3, թ. 122ա: Գտնվեցին առանձին ընտանիքներ, որոնք համաձայնվեցին փոխել ազգանունները: Սակայն հայ-կաթոլիկների ճնշող մեծամասնությունը չընկրկեց վրացական իշխանությունների այդ ազգայնամոլ ձեռնարկումների առջև և կտրականապես հրաժարվեց ազգափոխվել:

[791] Ջամալեան Ա., Իմ պատասխանը..., Յառաջ, 1928, 28 հունիս, թիվ 685, էջ 2:

նութիւնների նկատմամբ գործի դրվեց նաև մշակութային խտրականության քաղաքականությունը: Հայերը, որ կազմում էին Վրաստանի հանրապետության բնակչության մեկ հինգերորդը, զրկվեցին ինքնուրույն կրթամշակութային կյանքի կազմակերպման հնարավորությունից, մի բան, որն ունեին ցարական տիրապետության ժամանակաշրջանում: Պետական հոգածությունից զուրկ վիճակում, հատկապես խառը՝ հայ–վրացական դպրոցների զգալի մասը փակվեց: Գաղթականության վերադարձից հետո Ախալքալաքի դպրոցների մեծ մասն այդպես էլ չվերաբացվեց: Մինչդեռ, պետությունը ամեն կերպ օժանդակություն ցույց տվեց վրացական գյուղերի դպրոցներին: Դպրոցներին օգնելու նպատակով ստացված օտարերկրյա վարկը հայկական դպրոցներին տրամադրելու Հայոց ազգային խորհրդի ջանքերն անցան ապարդյուն: «Այս անարդարությունը խիստ ծանր էր գալիս վիրահայոց սրտին,– կարդում ենք «Հայրենիք» ամսագրում,– որովհետև նրանք, մի կողմից, տեսնում էին, որ վրաց կառավարությունը արտակարգ չռայլությամբ դրամներ էր բաց թողնում կրթական–մշակութային հաստատությունների ցանցով զուտ վրացաբնակ շրջանները ծածկելու համար, իսկ մյուս կողմից գիտակցում էին, որ պետական և համայնական հաստատների չատ խոշոր մասը հայերից էր գանձվում»:[792]

Հայ բնակչության համար, մասնավորապես Ախալքալաքի և Ախալցխայի գավառներում, լուրջ դժվարություններ ծագեցին պետական գործավարությունը միայն վրացերենով կատարելու կառավարական որոշման կապակցությամբ: Գաղտնիք չէ, որ այդ շրջաններում վրացերեն լեզուն անհասու էր հայ բնակչությանը և վարչական եղանակով որոշման կիրարկումն անհնարին էր: Նման պայմաններում 1919 թ. կեսերից ինչպես Ախալքալաքի գավառից, այնպես էլ Վրաստանի հսկողության տակ գտնվող հայահոծ այլ տարածքներից, նկատվեցին հայ բնակչության խմբակային արտագաղթեր դեպի Հայաստան:[793] *Անշուշտ, Ջավախքի նկատմամբ մենշևիկների վարած այդ չովինիստական քաղաքականությունն աննկատ չէր մնում Հայաստանում: «...Մենք գիտենք,– գրում էր Ա. Ջամալյանը,– հենց վրաց պաշտոնական աղբյուրներից..., թե վրացական իշխանությունները որպիսի՛ անողոք հալածանքների ենթարկեցին այս գավառների*

[792] Հայրենիք, 1929, մարտ, էջ 116:
[793] Նույն տեղում, ապրիլ, էջ 148:

(Ախալքալաք և Բորչալու – Ա.Մ.) հայութիւնը»:[794] Սակայն հայկական կառավարութիւնը, ինչ–ինչ նկատառումներով, հարկ էր համարում 1919 թ. բավարարվել միայն իր հացահատիկից Ախալքալաքին մասնաբաժին հանելով և Վրաստանի հետ վարվող բանակցություններում սահմանների հարցի լուծումը ձգձգելով՝ մինչև Փարիզի վեհաժողովում ցանկալի արդյունքների ձեռքբերումը: Ռուբեն Տեր–Մինասյանն այդ մասին գրում էր. «Անարդար էին Վրաստանի դիտումները Հայաստանի վերաբերմամբ, անարդար էր, որ նա Ախալքալաք գուտ հայաբնակ գավառը խլած էր մեզնից, թեև թե՛ աշխարհագրական, թե՛ ազգագրական տեսակետով այդ գավառը Հայաստանին կպատկաներ: Անարդար էր նաև Լոռիի վերաբերմամբ նրա ձգտումը...Ջնայած այդ վրդովեցուցիչ դրության, Բյուրոն այն կարծիքն ուներ, որ պիտի համբերել և զիջել վրացիներին, ինչքան որ կարելի է»:[795] Նման զիջողական մոտեցման հանդիպում ենք նաև վարչապետ Ալ. Խատիսյանի մոտ: Փարիզում հայկական պատվիրակության ղեկավար Ավ. Ահարոնյանին 1920 թ. փետրվարին գրած նամակում նա հայտնում էր, որ հանուն Վրաստանի հետ բարիդրացիական հարաբերությունների պահպանման, մենք գնում ենք զիջման և «...գրեթե բոլորը հաշտվել են այն բանի հետ, որ Ախալքալաքի գավառն անցնում է նրանց (վրացիներին –Ա.Մ.), իսկ Բորչալուի գավառում մենք սահմանազատվել ենք Լալվար–Այրում գծով»:[796] Բայց հանրապետության ղեկավարները պետք է նկատեին, որ որքան հայկական կողմը զիջող էր դառնում, այնքան Ախալքալաքի ու Լոռու հարցում վրացիներն ավելի պահանջատեր էին ներկայանում: Անկասկած, սխալ էր օրեցօր արմատավորվող այն տեսակետը, թե քանի որ Փարիզի վեհաժողովը լուծելու է Արևմտյան Հայաստանի միացման հարցը, չարժեր վիճելի տարածքների համար վատթարացնել հարաբերությունները հարևան Վրաստանի ու Ադրբեջանի հետ:

Հայաստանի ղեկավարության «զգուշավոր» կեցվածքից հիասթափված՝ 1919 թ. գարնանն ու ամռանը ախալքալաքցիները քանիցս դիմեցին Վրաստան մտած անգլիական զինվորական հրամանատարությանը՝ խնդրելով վերջ դնել հայերի նկատմամբ վրացա-

---

[794] Չամալեան Ա., Հայ–վրացական կնճիռը, Հայրենիք, 1929, մարտ, էջ 118:
[795] Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 7, էջ 242:
[796] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 2, գ. 165, թ. 1–2 և «Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. », էջ 169:

կան իշխանությունների անօրինություններին և միջամտել՝ գավառի իշխանության մարմիններում և միլիցիայում տեղական բնակչության էթնիկ կազմին համապատասխան, ներկայացուցիչներ ընդգրկելու համար: Հունվարից հայ–վրացական միջնորդական առաքելության ստանձնած անգլիական միսիայի ճնշման տակ Հուլիս–օգոստոսից Ախալքալաքի իշխանության մարմիններում որոշ չափով աճեց հայերի, թուրքերի և ռուսների թիվը: Սակայն վրացիները չարունակեցին իրենց ձեռքում պահել կառավարման գլխավոր լծակները: Իսկ անգլիացիների հեռանալուց հետո, 1919 թ. վերջին ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների մեծ մասը հեռացվեց ինչպես Ախալքալաքի, այնպես էլ ազգային այլ շրջանների իշխանության օղակներից:

1919 թ. օգոստոսի 29–30–ին Թիֆլիսում հրավիրված հայ–վրացական խորհրդաժողովում վրացական պատվիրակության նախագահ Ն. Ռամիշվիլին հայտարարեց, որ Վրաստանը կտրականապես դեմ է Լոռու հյուսիսային մասը և ամբողջ Ախալքալաքի գավառը Հայաստանին միացնելուն: Վրացիները «զիջման» գնացին միայն Բորչալուի հայկական մասի հարցում՝ համաձայնելով այն ժամանակավորապես թողնել Հայաստանին, մինչև հայկական հարցի լուծումը և Արևմտյան Հայաստանի միացումը հանրապետությանը:

1919 թ. սեպտեմբերի 17–ին Թիֆլիսում բացվեց հայ–վրացական նոր խորհրդաժողով: Վրաստանը ներկայացնում էին Ն. Ռամիշվիլին և Ս. Մդիվանին, Հայաստանը՝ Ստ. Մամիկոնյանը և Ս. Խաչատրյանը: Վրացիները, հավանաբար վախենալով Լոռու Զեզոք գոտուց անգլիացիների դուրսքերման պատճառով հայ–վրացական նոր կոնֆլիկտի ծագման հավանականությունից, առաջարկեցին սահմանների «փոխզիջումային» տարբերակ. Հայաստանին թողնել Աքորի գյուղից հարավ ընկած տարածքները, Լոռու դաշտը (Ջալալօղլի–Վորոնցովկա), իսկ Վրաստանին՝ այդ գծից հյուսիս ընկած հողերը և Ախալքալաքի գավառը: Ընդ որում, նրանք այս «զիջումը» դիտում էին ժամանակավոր՝ մինչև Փարիզի վեհաժողովի որոշմամբ արևմտահայ գավառների միացումը Հայաստանին:

Հայկական պատվիրակությունը հայտարարեց, որ իր կառավարությունից լիազորված է, հօգուտ Վրաստանի, զիջելու Խրամի (Ծալկա) շրջանը, Ախալքալաքի գավառի հյուսիսային և կենտրոնական մասը: Ջավախքի հարավային մասը՝ լճերի շրջանը՝ Հնեւտիա–Սաթխա–Հոկամ–Ազմանա գյուղերով, մինչև Կուր գետը մնալու էր

Հայաստանին: Լոռիով, ըստ հայկական նախագծի, սահմանը պետք է անցներ Կողբից հյուսիս՝ Լալվար գծով: Թեև կողմերից ոչ մեկին չբավարարեց մյուսի նախագիծը և գրավոր համաձայնություն ձեռք չբերվեց, սակայն քանի որ հայկական կողմը հայտնել էր Ախալքալաքի մեծ մասը և ամբողջ Ծալկան զիջելու պատրաստակամություն, Վրաստանը համաձայնեց Հայաստանին տրամադրել տարանցիկ առևտրի, հեռագրագծի և այլ արտոնություններ: Հատկանշական է, որ «զիջելու պատրաստակամությունը» Վրաստանն ընկալեց իբրև զիջում և Ջավախքի նկատմամբ իրեն վերագրեց ազատ տնօրինության իրավունք: «Վրացիները օգտվեցին մեր ինկած վիճակից, – գրում է Ռուբենը, – և չհագործեցին այդքան խիստ կերպով իրենց աշխարհագրական դիրքը՝ մեր ժողովրդյան թե՛ արժանապատվությունը, և թե՛ կենսական արդար իրավունքները ոտնահարելով»:[797] Ստեղծված «ստատուս քվոն» ձեռնտու էր վրացական կողմին. անգլիացիների հեռանալուց հետո Վրաստանի իշխանությունը տարածվեց ոչ միայն Ջավախքի, այլ փաստորեն նաև Լոռու Ջեղոք գոտու նկատմամբ:

1919 թ. նոյեմբերի 3–ին Թիֆլիսում երկու երկրների միջև վրացիների առաջարկով ստորագրված պայմանագիրը, որը նախատեսում էր վիճելի բոլոր հարցերում առաջնորդվել բացառապես խաղաղ եղանակներով կամ չեզոք արբիտրաժի օգնությամբ,[798] ակամայից ավելի ամրապնդեց վրացական վարչակարգերն այս գավառներում. Հայաստանը զրկվեց այդ հարցում կոշտ դիրքորոշում հանդես բերելու հնարավորությունից և «ապավինեց» միայն անհեռանկար բանակցային գործընթացին: Ուստի պատահական չէ, որ Ստ. Մամիկոնյանն ու Ս. Խաչատրյանը, որոնք մնացին Թիֆլիսում և չարունակեցին հայ–վրացական բանակցությունները, ոչ մի արդյունքի չհասան և, ինչպես այդ օրերին պատկերավոր ասում էին, վրացիների հետ զբաղվեցին միայն սահմանների չուրջ անպտուղ «բազարի» խոսակցություններով: 1919 թ. վերջից Հայաստանի կառավարությունը, համոզվելով, որ անիմաստ է վիճելի տարածքների խնդրում Վրաս-

[797] Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 7, էջ 243:
[798] Աշխատավոր, 1920, 16 հունիսի, թիվ 57:

տանից ակնկալել փոխզիջում, աչխատեց հարցը վերջնականապես տեղափոխել Փարիզի վեհաժողով:[799]

1920 թ. ապրիլի 13–ին Փարիզում լորդ Քերզոնի քարտուղար Վանսիթթարթի հրավերով հայկական, վրացական և թաթարական (ադրբեջանցիների) պատվիրակությունների մասնակցությամբ սկսվեցին խորհրդակցություններ Անդրկովկասում վիճելի տարածքների շուրջ: Հայկական պատվիրակությունը ղեկավարում էր Ահարոնյանը, վրացականը՝ Չխեիձեն, թաթարականը՝ Թոփչիբաչևը: Ապրիլի 21–ի հանդիպման ժամանակ, երբ քննարկվեց Ճորոխի ավազանում Լազիստանը, որպես դեպի Սև ծով տանող միջանցք, Հայաստանին տրամադրելու հարցը, վրացական պատվիրակությունը դեմ արտահայտվեց: Չխեիձեն անընդունելի համարեց Լազիստանի օտարումը, առանց լազերի կամքը հաչվի առնելու, այսինքն՝ կարևորելով ինքնորոշման իրավունքի հարգման անհրաժեչտությունը: Ավ. Ահարոնյանը չտապեց Չխեիձեին հիչեցնել, որ վրացիները, որ վաղուց մոռացության են տվել տարածքային հարցերի լուծման ամենաժողովրդավարական սկզբունքը՝ ազգերի ինքնորոշման իրավունքը, այժմ հանկարծ հիչեցին այն: «Բայց ինչո՞ւ այդ հիչեցիք այժմ լազերի առթիվ,– հայտարարեց Ահարոնյանը,– և այնպես մոռացել եք Ախալքալակը պահանջելիս, ուր 80 հազար հայի դեմ հազիվ 4–5 հազար վրացի կա, և Լոռին ու Բորչալուն պահանջելիս, ուր 60 հազար հայության մոտ հազիվ 4–5 հարյուր վրացի կա»:[800] *Այսպես խորհրդաժողովի աչխատանքը մտավ փակուղի: Այդ կապակցությամբ Լորդ Քերզոնն իր դժգոհությունն հայտնեց անդրկովկասյան պատվիրակություններին:*

1920 թ. մայիսի 7–ին կնքվեց ռուս–վրացական պայմանագիր փոխադարձ ճանաչման մասին: Համաձայնագրում վրացական կողմի պնդմամբ մտցվեցին կետեր Ռուսաստանի կողմից Լոռու, Ախալքալաքի և Ջաքաթալայի նկատմամբ Վրաստանի իրավունքները ճանաչելու մասին: Այդ կապակցությամբ վարչապետ Հ. Օհանջանյանը բողոքի հեռագրեր հղեց ՌԽՖՍՀ և Վրաստանի կառավարություննե-

---

[799] Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թ., էջ 334: Փարիզի վեհաժողովին ներկայացած հայկական պատվիրակությունը 1919 թ. փետրվարի 12–ին հրապարակեց «Հայկական պահանջներ» փաստաթուղթը, որում ի թիվս վիճելի այլ տարածքների, Ախալքալաքի գավառը դիտվում էր Հայաստանի Հանրապետության անբաժանելի մաս (Ջանգ, 1919, 28 մարտ և «Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. », էջ 89):

[800] Ահարոնյան Ա., նշվ. աշխ., էջ 93:

րին՝ հայտնելով, որ Լոռին ու Ախալքալաքը Վրաստանի մաս դիտելով, վրացական իշխանությունները խախտում են 1919 թ. ձեռք բերված հայ–վրացական համաձայնագրերը՝ այդ տարածքները վիճելի համարելու վերաբերյալ:[801] *Արդեն հասկանալի էր, որ այս հարցում վրացական կառավարությունը միայն առերես էր ընդունում խնդրի վիճելի դրվածքը և գործում էր միայն իր հայեցողությամբ:*

1920 թ. հուլիսի 5–ին ընդունված Հայաստանի քաղաքացիության օրենքը, որը փաստորեն հանրապետության տարածքից դուրս ապրող հայերին ևս արտոնում էր քաղաքացիության իրավունք, վրացիների կողմից դժգոհությունների և ավելի շուտ, դեմագոգիկ խաղերի տեղիք տվեց հուլիս–օգոստոսին ընթացող հայ–վրացական հերթական խորհրդաժողովում: Նրանք դեմ էին Վրաստանի հայերին Հայաստանի քաղաքացիություն շնորհելուն կամ այդ դեպքում առաջարկում էին նրանց տեղափոխել Հայաստան: Այս խորհրդաժողովում արդեն վրաց պատվիրակությունը հայերից պահանջեց Ախալքալաքի գավառն ամբողջությամբ՝ լճերի չրջանի հետ, իսկ Լոռին՝ մինչև Սանահին կայարան, Արդահանի ու Օլթիի գավառների մեծ մասը: Հայկական կողմը մերժեց այդ պահանջը:

Չկարողանալով լուծում տալ սահմանային վեճերին՝ հայկական և վրացական պատվիրակությունները դիմեցին Անտանտի երկրների օգնությանը: Պատահական չէ, որ ըստ 1920 թ. օգոստոսի 10–ի Սևրի դաշնագրում մտցված 72–րդ հոդվածի՝ անդրկովկասյան հանրապետությունների միջև սահմանազատման խնդիրը պետք է լուծվեր կողմերի ներկայացուցիչներից բաղկացած չահագրգիռ հանձնաժողովի չանքերով, իսկ չլուծվելու դեպքում, այն մնալու էր դաշնա-

---

[801] Աշխատավոր, 1920, 16 հունիս, թիվ 57: 1920 թ. մայիսի 7–ի ռուս-վրացական պայմանագրում Ջավախքի և Լոռու հարցում Ռուսաստանի վերոհիշյալ կեցվածքը հուշում էր, որ առաջիկա հայ-ռուսական (Շանթ-Կարախան) բանակցություններում վիճելի տարածքների խնդրում դժվար էր խորհրդային կառավարությունից ակնկալել աջակցության քայլեր: Միանգամայն համոզիչ է պրոֆ. է. Զոհրաբյանի այն պնդումը, որ 1920 թ. մայիս-հունիսին Մոսկվայում Խորհրդային Ռուսաստանի փոխարտգործժողկոմ Լ. Կարախանի հավաստիացումները հայկական պատվիրակության անդամ Հ. Տերտերյանին Ախալքալաքի, Ախալցխայի, Խրամի, Բաթումի, ողջ Դաշտային Ղարաբաղի պատկանելության հարցը հօգուտ Հայաստանի տեսնելու Ռուսաստանի պատրաստակամության մասին, միայն անլուրջ դիվանագիտական խաղ և հայկական կողմի տրամադրությունները շոշափելու քայլեր էին (տե՛ս Զոհրաբյան է. Ա., 1920 թ. Թուրք–հայկական պատերազմը և տերությունները, Ե., 1997, էջ 68–70):

կից երկրների հայեցողությանը:[802] Հատկանշական է, որ Հարցը Փարիզ տեղափոխելուց հետո էլ ուղղակի բանակցությունները չարունակություն ունեցան: Դրանք չդադարեցին նաև 1920 թ. սեպտեմբերի վերջին սկսված թուրք–հայկական պատերազմի օրերին: Հոկտեմբերի 25–ին Թիֆլիսում Տ. Բեկզադյանի գլխավորած պատվիրակությունը հանդիպում ունեցավ Ն. Ռամիշվիլու, Կ. Սաբախտարաշվիլու և Ս. Մդիվանու հետ: Ռազմաճակատում հայկական բանակի կրած անհաջողություններից հետո Հայաստանի կառավարության համար առաջնային էր դարձել Վրաստանի հետ թուրքերի դեմ ընդհանուր ճակատ ստեղծելու խնդիրը: Ուստի հայերը հանդես եկան այդպիսի առաջարկով: Վրացական ղեկավարությունը, որ պատերազմի առնչությամբ հայտարարել էր իր չեզոքությունը, իրականում գաղտնի համագործակցում էր քեմալականների հետ:[803] Օգտվելով Հայաստանի համար ստեղծված ռազմաքաղաքական անբարենպաստ իրավիճակից՝ Վրաստանը փորձեց վիճելի տարածքների հարցում հասնել զիջումների: Ս. Մդիվանին հայտարարեց, որ Հայաստանի համար Վրաստանը չի կարող պատերազմել Թուրքիայի ու Ռուսաստանի դեմ, իսկ Ռամիշվիլին խորհուրդ տվեց բավարարվել միայն իրենց բարոյական աջակցությամբ և տված համաձայնությամբ՝ Վրաստանի տարածքում հայերի զորահավաք կատարելու վերաբերյալ:[804]

Պետք էր նկատել, որ Վրաստանում հայերի զորահավաքի թույլտվությունն էլ ոչ այնքան բարի կամքի դրսևորում էր, որքան արդեն տեղի ունեցած փաստի արձանագրում: Բանն այն է, որ Վրաստանի հայությունը, հատկապես Ջավախքի հայերը, արդեն հոկտեմբերից իրենց նախաձեռնությամբ զորահավաք էին սկսել և

---

[802] Անդրկովկասյան անկախ հանրապետությունների ղեկավարությունները միմյանց հաջորդող բազմաթիվ խորհրդակցությունների ընթացքում այդպես էլ չկարողացան լուծում տալ տարածքային վիճելի հարցերին: Երկրամասի խորհրդայնացումից հետո Վրաստանի, Հայաստանի, Ադրբեջանի և Լեռնականների հանրապետությունների վտարանդի կառավարությունների ներկայացուցիչները 1921 թ. հունիսի 10–ին հանդես եկան հրապարակային հայտարարությամբ՝ Անդրկովկասում բոլոր վիճելի հարցերը միայն միջնորդի՝ «արբիտրաժի» օգնությամբ լուծելու վերաբերյալ (Յառաջ, 1928, 10 հուլիս, թիվ 695, էջ 2): Սակայն դրանից հետո էլ, վտարանդիության մեջ, փոխադարձ մեղադրանքներն ու բուռն վեճերը շարունակվեցին: Բացառություն չկազմեցին նաև Ախալքալաքի ու Լոռու հիմնահարցերը: Այդ թեմայով մամուլի էջերում եղան հարյուրավոր հրապարակումներ:

[803] Քեմալա-վրացական գաղտնի կապերի մասին տե՛ս Զոհրաբյան Է. Ա., նշվ. աշխ., էջ 150–152 և Գալոյան Գ., նշվ. աշխ., էջ 311–315, 345:

[804] «Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. », էջ 312–314:

ակտիվորեն մասնակցում էին պատերազմին:[805] Ջավախքցիները նաև զգալի նյութական օգնություն ցուցաբերեցին հայկական բանակին: Նրանք սայլերով մեծ քանակությամբ սննդամթերք, հատկապես հացահատիկ հասցրեցին ինչպես Արդահանի, այնպես էլ Ալեքսանդրապոլի շրջաններում տեղակայված զորքերին: Այդ օգնությունը դադարեց միայն նոյեմբերի սկզբին, երբ Աղբաբայի շրջանում տեղի թուրք–թաթարները խռովություն բարձրացրեցին իշխանությունների դեմ և հսկողության տակ վերցրեցին Ախալքալաքից Շիրակ տանող ճանապարհը, իսկ քեմալականներն էլ գրավեցին Ալեքսանդրապոլը:

Ռազմաքաղաքական ու դիվանագիտական մեկուսացման պայմաններում Հայաստանը ստիպված եղավ տեղի տալ վրացիների ճնշումներին: Նոյեմբերի 13–ին Թիֆլիսում Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև կնքված համաձայնագրով հայկական կողմը, քեմալականների մուտքը Բորչալուի գավառ կանխելու նպատակով, ընդունեց Լոռու Ջեզոք գոտի ժամանակավորապես՝ երեք ամիս ժամանակով, վրացական զորք մտցնելու Վրաստանի առաջարկությունը:[806] Ընդ որում, համաձայնագրի երկրորդ կետով ընդգծվում էր, որ «Ջեզոք գոտում վրացական զորքի գտնվելը չի ծնում որևէ նոր իրավունք (բնականաբար՝ վրացիների համար – Ա.Մ.) այդ տարածքի նկատմամբ»:[807] Սակայն վրացական կառավարությունը, չբավարարվելով Լոռիով, նույն ժամանակ զորք մտցրեց Կարսի մարզի հյուսիսային շրջան՝ Արդահանի գավառ, որի գրավման մասին համաձայնագրում ոչինչ չէր ասվում: Այդ ժամանակ հայ – վրացական վիճելի մյուս տարածքների՝ Արդվինի և Ախալքալաքի գավառների խնդիրը մնաց առկախ, քանզի չուտով դրանք քեմալականների կողմից բռնազավթվեցին:[808]

---

[805] 1920 թ. թուրք. հայկական պատերազմին Ջավախքի հայերի մասնակցության մասին տե՛ս Զոհրաբյան Է., նշվ. աշխ., էջ 179:

[806] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, ց. 2, գ. 56, թ. 47:

[807] Նույն տեղում: Համաձայնագրի ամբողջական տեքստը տե՛ս հավելվածում (փաստաթուղթ թիվ 40):

[808] Հետաքրքրական է, որ 1920 թ. վերջին և 1921 թ. սկզբին, մինչև բոլշևիկների կողմից զանգվածային բռնությունների գործադրումը, նախկին իշխանության ներկայացուցիչները մասնակցեցին հայ–վրացական տարածքային սահմանազատման խնդիրներին: 1921 թ. հունվարի սկզբին հայտնի դաշնակցական գործիչ, ՀՀ նախկին վարչապետ Ալ. Խատիսյանի եղբայր Գ. Խատիսյանի կազմած մի փաստաթղթի համաձայն, այդ

Մտնելով Լոռի՝ վրացիները մոռացան իրենց խոստումները և սկսեցին բռնություններ գործադրել տեղի հայ բնակչության նկատմամբ: Այդ կապակցությամբ Վրաստանի արտաքին գործերի նախարարությանը, ինչպես Հայաստանի Հանրապետության կառավարության, այնպես էլ դեկտեմբերին նրան փոխարինած Հայհեղկոմի բողոք–հեռագրերը մնացին անպատասխան:[809] *Ուշագրավ է, որ 1920 թ. վերջին և 1921 թ. սկզբին խորհրդային Հայաստանի ղեկավար մարմինը՝ Հայհեղկոմը, իրավամբ անօրեն համարելով ինչպես 1919 թ. հունվարյան, այնպես էլ 1920 թ. նոյեմբերի 13–ի հայ–վրացական համաձայնագրերը, դրանք հայտարարեց իրավական ուժը կորցրած փաստաթղթեր*[810] *և գործուն քայլեր ձեռնարկեց Լոռին խորհրդայնացնելու և Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությանը (ՀՍԽՀ) միացնելու ուղղությամբ:*

Իր անկման նախօրյակին Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության ղեկավարությունը թուրքերի հետ փորձեց յուրովի «լուծել» Ջավախքի հիմնահարցը: Տարօրինակ է, որ ինչպես Ջավախքի բնակչությանը, այնպես էլ ողջ հայությանը վրաց գործիչները հանիրավի համարում էին ռուս բոլշևիկների գործակիցներ ու վրացական պետականության թշնամիներ: Հավանաբար այդօրինակ մղումներով էլ նրանք սկսեցին համագործակցել թուրքերի հետ՝ ընդդեմ հայության:

1921 թ. փետրվարի վերջին և մարտի սկզբին Ախալքալաքի գավառը ենթարկվեց նոր արհավիրքի՝ քեմալական Թուրքիայի հարձակմանը: Ներխուժելով Ջավախք՝ թուրքերը փաստորեն խախտում էին թուրք–վրացական գաղտնի համաձայնագիրը Վրաստանի տարածք (որպիսին այդ ժամանակ համարվում էր Ախալքալաքը) չմտնելու վերաբերյալ: Բայց նրանք կանգ չառան այդ որոշման առջև: Բանն այն է, որ անկախ Վրաստանի կառավարությունն իր գոյության վերջին օրերին, քաղաքական նկատառումներով, թուրքե-

---

ժամանակաշրջանում Հայաստանի համար ավելի շահեկան էր ծեռք բերել Արդվինի օկրուգը՝ որպես Սև ծով տանող հուսալի ճանապարհ, քան Ախալքալաքն ու Լոռին (ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, ց. 2, գ. 12, թ. 14–15): Այս սխալ մոտեցումն առաջին հերթին գալիս էր Հայաստանի Հանրապետության ղեկավարության 1920 թ. դիրքորոշումից, ըստ որի՝ տարածքների հարցում արդեն նախապատվությունը պետք է տրվեր ոչ թե անդրկովկասյան հողերին, այլ Կարսի մարզում ամրապնդվելուն ու Անտանտի օգնությամբ Արևմտյան Հայաստանը միացնելու քաղաքականությանը:

[809] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, ց. 2, գ. 12, թ. 13, 110:

[810] Նույն տեղում, գ. 24, թ. 53, 80–81:

րին Ախալքալաքի գավառ մտնելու արտոնություն էր տվել՝ նախապես նորից զինաթափելով հայ բնակչությանը:[811] *Ջավախքի հարցում վրացիների այդ գործելակերպը պատկերավոր է ներկայացված ժամանակի փաստաթղթերում. «վրաց կառավարությունը իր օրով մեզ նեղում էր ըստ ամենայնի,– կարդում ենք Թիֆլիսում Հայաստանի ներկայացուցչին գրած մի խումբ ջավախքցի մտավորականների նամակում,– բացի այդ, երբ երկիրը իրենց էր մնում, գալիս տիրում էին, իսկ երբ թուրքն էր գալիս, հանձնում էին նրան ու հեռանում...».*[812]

Դեռ փետրվարի վերջին Ջավախքում մենշևիկյան կառավարության ներկայացուցիչներ դոկտոր Նիկորաձեն և Ռամիշվիլին (հավանաբար Հայտնի Նոյ Ռամիշվիլու ազգականը) ներկայացել էին թուրք–քեմալական հրամանատարությանը և հայտնել գավառից վրացիների հեռանալու և այն պաշտոնապես թուրքերի հսկողության տակ դնելու իրենց մտադրության մասին: Այդ հարցում քեմալականների կասկածները փարատելու համար նրանք նաև հաղորդել էին, որ այդ որոշումը համաձայնեցված է իբր գավառը պաշտպանելու նպատակով ստեղծված Ախալքալաքի «Պաշտպանության խորհրդի» անդամներ, ախալքալաքցիների նկատմամբ իրենց դաժանություններով աչքի ընկած Վ. Միքելաձեի և և Ս. Նադիրաձեի հետ:[813] *Այսինքն, ընդգծվում էր, որ Ախալքալաքում թուրքերին որևէ դիմադրություն չէր սպասվում:*

Անկասկած, միամիտ կլինի կարծել, որ քեմալականների մուտքը Ջավախք միայն թուրք–վրացական գաղտնի համաձայնության հետևանք էր: Այն մեծապես պայմանավորված էր նախ քեմալա–բոլշևիկյան գործակցությամբ: Վրաց բոլշևիկները՝ Ի. Ստալինը, Բ. Մդիվանին և ուրիշներ, Ջավախքը թուրքերին հանձնելու և դրանով այն հայաթափելու իրենց մոտեցումներով չէին տարբերվում վրաց մենշևիկներից: Նրանք 1920 թ. վերջին հայտնում էին, որ առանձնապես դեմ չեն Ախալքալաքի և Ախալցխայի գավառները դաշնակից Թուրքիային հանձնելուն:[814] *Այդ մոտեցումը քանիցս պաշտպանեց նաև Խորհրդային Ռուսաստանի արտգործժողկոմ Գ. Չիչերինը: Դեկ-*

[811] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, ց. 2, գ. 3, թ. 132:
[812] Նույն տեղում, գ. 46, թ. 65–66:
[813] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 1, գ. 122, թ. 131:
[814] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Հավաքածու 1, գ. 2:

տեմբերի 5–ին նա Անդրկովկասում ՌԽՖՍՀ լիազոր ներկայացուցիչներին ռադիոգրով տեղեկացնում էր, որ «եթե թուրքերը փորձեն գրավել Վրաստանի վիճելի մարզերը, հատկապես Ախալցխան և Ախալքալաքը, չենք առարկի: Միայն կպնդենք, որպեսզի նրանք այլևս առաջ չշարժվեն»:[815] *Ակադեմիկոս Գ. Գալոյանի հայտնաբերած արխիվային փաստաթղթերից կարելի է ենթադրել, որ Ջիչերինի այդ կարծիքը բխում էր ազգությունների ժողկոմ Ստալինի մոտեցումներից և հավանաբար վերջինիս պնդմամբ էլ ընդունվել էր ՌԿ(բ)Կ կենտկոմի համապատասխան որոշում: Այդ որոշումը, որը Ստալինը հաղորդել էր ՌԽՖՍՀ ներկայացուցիչ Մդիվանուն, արձանագրում էր, որ Ռուսաստանը չի խոչընդոտելու Ախալցխայի ու Ախալքալաքի գավառներում թուրքական իշխանության հաստատմանը:*[816] *Գաղտնիք չէ, որ բոլշևիկյան ղեկավարությունն իր դաշնակից քեմալականների ագրեսիան դիտում էր Հայաստանի ու Վրաստանի խորհրդայնացման զորեղ միջոց: Մինչդեռ, մենշևիկյան Վրաստանի ղեկավարությունը, փոխանակ փորձելու նախ՝ համագործակցել անկախ հայկական հանրապետության, ապա նաև խորհրդային Հայաստանի ղեկավարության հետ, որդեգրեց թուրքամետ գործելակերպ: Մենշևիկների հակահայ կեցվածքն ավելի ընդգծվեց Հայաստանի խորհրդայնացումից հետո:*

Պատահական չէ, որ քեմալականները չհապաղեցին օգտվել իրենց համար երկուստեք՝ բոլշևիկների ու վրաց մենշևիկների ընձեռած հնարավորությունից և փետրվարի 23–ին գրավելով Արդահանն ու Արդվինը, ներխուժեցին Ախալքալաքի գավառ: Այս անգամ ևս դրսից բնակչությունը չէր կարող ակնկալել որևէ օգնություն:

Թուրքաբնակ Հոկամ գյուղի մոլլա Բայրամի, Ջամալ աղայի և Արդահանի ու տեղի թուրքական խուժանի ուղեկցությամբ՝ Ղումանտար փաչայի շուրջ զորքը չարժվեց գավառի հարավային 15 գյուղերի, նախ՝ Կարծախի, Սուլղայի, Դադեչի և Գումբուրդոյի վրա: Բազմաթիվ գումբուրդոցիներ, այդ թվում՝ կանայք, ընկան անհավասար մարտում: Թուրքերը Գումբուրդոյում գերի վերցրեցին հարյուրավոր տղամարդկանց, մի մասին սպանեցին Կուրի ձորում, մյուսներին, լցնելով ջրհորները, խեղդամահ արեցին: Կոտորածներ, բռնություններ ու թալան եղան նաև գավառի Կարծախ, Դադեչ, Վաչիան, Մեծ

[815] Գալոյան Գ., նշվ. աշխ., էջ 393:
[816] Նույն տեղում, էջ 407:

և Փոքր Խանչալի, Մեծ ու Փոքր Գոնդուրա, Դիլիֆ, Մամզարա, Խոջաբեկ, Ջիգրաշեն, Սաթխա, Կուլիկամ և այլ գյուղերում, ինչպես և Ախալքալաք քաղաքում: Քեմալականները պարտադրեցին բնակչությանը իրենցից իսկ խլված հացահատիկը, գյուղատնտեսական գործիքները, նույնիսկ անկողիններն ու հագուստը բարձել սայլերի վրա, առանձին դեպքերում նաև՝ ոտքով, հասցնել գավառի հարավարևմտյան գյուղերը՝ այնտեղից Թուրքիա տանելու համար:[817] Այդուհանդերձ, այս անգամ գավառի բնակչությունը չգաղթեց: Թուրքերը հանդիպեցին համառ դիմադրության Ալաստան, Մոլիտ, Տաբածղուրի և այլ գյուղերի մատույցներում:[818]

1918 և 1921 թթ. թուրքական արշավանքների, սովի ու համաճարակների հետևանքով Ախալքալաքի գավառը կորցրեց իր հայ բնակչության 42–45 %-ը: Այսպես օրինակ. եթե Ախալքալաք քաղաքը 1917 թ. ուներ 5070, ապա 1922 թ.՝ միայն 2737 բնակիչ:[819]

Է) Ախալքալաքի և հարակից գավառների հիմնահարցը խորհրդային իշխանության առաջին տարիներին

Ախալքալաքի գավառը, քիչ անց՝ նաև Ախալցխան գրավելուց և թալանելուց հետո, քեմալական թուրքերը փորձեցին ամրապնդվել այդ տարածքներում՝ նպատակ ունենալով ի վերջո հասնել դրանց բռնակցմանը Թուրքիային: Ինչպես հայտնի է, քեմալական կառավարությունը նման մտադրություն ուներ իրենց դաշնակից բոլշևիկների թողտվությամբ գրավված Կարսի մարզի, Ալեքսանդրապոլի, Սուրմալուի, Նախիջևանի և հայկական մյուս գավառների հարցում: Սակայն իր հերթին՝ Խորհրդային Ռուսաստանի ղեկավարությունը, որն հասել էր անդրկովկասյան երեք հանրապետությունների խորհրդայնացմանը, զգալիորեն ամրապնդել իր դիրքերը երկրամասում, արդեն կարող էր թուրքերի նկատմամբ բանեցնել ավելի կոշտ քաղաքականություն՝ առավել ևս, որ քեմալականների նվաճողական ախորժակներն օրեցօր բացվում էին և ուղղակիորեն հարվածում Ռուսաստանի շահերին:

---

[817] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 1, գ. 122, թ. 131:
[818] Մելքոնյան Ա., Ջավախքի գողգոթան, Ազատամարտ, 1992, 24 ապրիլ, էջ 12:
[819] Նույն տեղում:

Մարտի կեսերին թուրքական արևելյան ճակատի հրամանատար Քյազիմ Կարաբեքիրը 11–րդ կարմիր բանակի հրամանատար Գեկկերից պահանջեց չմտնել Ախալքալաք, Ախալցխա և Բաթումի մարզ՝ որպես Անտանտի երկրների համաձայնությամբ Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության կողմից թուրքիային հանձնված տարածքներ: Դրան հաջորդեց մարտի 17–ին Վրաստանում թուրքիայի դիվանագիտական ներկայացուցիչ Քյազիմ բեյի լկտի հայտարարությունը. «Վերջին ժամանակներս, վրացական կառավարության համաձայնությամբ Բաթումի մարզը, Ախալքալաքի ու Ախալցխայի գավառները գրավվել էին մեր զորքերի կողմից: Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարության որոշման համաձայն, որը հիմնված է տարբեր ժամանակներում կնքված պայմանագրերով հաստատված մեր ազգային իրավունքների վրա, այդ մարզերը այսօրվանից վերադարձվում են մայր հայրենիքին և վարչական տեսակետից ենթարկվում են թուրքական ազգային կառավարությանը»:[820] *Ի պատասխան այդ քայլերի, Խորհրդային Ռուսաստանը, ուշացումով, փորձեց զսպել իր իսկ «աճեցրած» քեմալականներին:*

Գեկկերն անմիջապես, հիմք ընդունելով 1921 թ. մարտի 16–ի մոսկովյան պայմանագիրը, ըստ որի՝ «Թուրքիայի հյուսիս–արևելյան սահմանը ... չարժվում է Արդահանի և Կարսի սանջակների հյուսիսային վարչական սահմանագծի երկարությամբ...»,[821] *այն է՝ Ախալցխայի ու Ախալքալաքի գավառների հարավային եզրագծով, հրամայեց իր զորքերին մտնելու այդ շրջաններ: Դրան հետևեց մարտի 20–ին կարմիր բանակի ներկայացուցիչ Ս. Օրջոնիկիձեի նախազգուշական հեռագիրը Ք. Կարաբեքիրին՝ Մոսկվայի նորաթուխ պայմանագիրը կո՞պատորեն խախտելու կապակցությամբ: «Ես անհանդուրժելի եմ համարում երկու բնական դաշնակիցների միջև հանդիսավոր կերպով կնքված... պայմանագրի դեմոնստրատիվ խախտումը՝ Ձեր զորքերի մուտքը Ախալքալաք, Ախալցխա ու Բաթում,– ասվում էր հեռագրում,– ...Ձեր հպատակության տակ գտնվող անձանց կող-*

---

[820] Սարգսյան Ե. Ղ., Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում (1914–1918), Ե., 1964, էջ 512:

[821] «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923)», կազմողներ՝ Զ. Ս. Կիրակոսյան, Ռ. Գ. Սահակյան, Ե., 1972, էջ 500:

մից Բրեստի պայմանագիրը վկայակոչելը ոչ միայն հիմնավորված չէ, այլև վիրավորական է մեզ համար»:[822]

11–րդ կարմիր բանակի զորամասերը Ախալքալաք մտան 1921 թվականի մարտի երկրորդ կեսին: Եթե կարմիր բանակը Լոռի անցավ Հայաստանից, ապա Ախալքալաք մտավ Վրաստանից՝ Բորժոմ–Ախալցխա երթուղով, հանգամանք, որը քիչ դեր չխաղաց հետագայում նրա պատկանելության հարցի վճռման տեսանկյունից: Ինչևէ, 11–րդ բանակի մուտքը Ջավախք գոնե կանխեց բնակչության նկատմամբ թուրքերի բռնությունների հետագա գործադրումը: Եվ իրոք. այդ օրերին գրված մի զեկուցագրում կարդում ենք. «Ժողովուրդը փաստացի պնդում է, որ եթե Խորհրդային Ռուսաստանի զորքերը մի օր էլ ուշանային մտնել Ախալքալաք (Ջավախքի քաղաքը) հայերին սրի էին քաշում»:[823]

Քեմալականները չհամարձակվեցին խոչընդոտել կարմիրբանակայինների մուտքը Ախալքալաք: «Դաշնակիցների» զորքերի միջև ընդհարում չեղավ: Ավելին, մինչև գավառից դուրս գալը՝ ապրիլ ամիսը, թուրքական զորքը կարմիր բանակի զորամասերի հետ «համերաշխորեն» չարունակեց սնվել Ջավախքի բազմաչարչար բնակչության հաշվին:

Թուրքական զորքի հեռանալուց հետո գավառում վիճակն էականորեն չփոխվեց: Այնտեղի նորաստեղծ վրաց–բոլշևիկյան վարչակազմը, որը չնչին բացառությամբ բաղկացած էր միայն վրացիներից, շատ կարճ ժամանակում հայ բնակչության նկատմամբ սկսեց իրականացնել զանազան բռնություններ: «Այժմ, երբ գավառը թալանված ու ծանր վիճակի մեջ է,– կարդում ենք այդ օրերին ախալքալաքցիների կազմած փաստաթղթերից մեկում,– պետք է կարծել, որ վրաց խորհրդային կառավարությունը հոգ կտաներ նրա խաղաղ ապրելուն և աշխատելուն, մինչև իսկ կօգներ նրան, սակայն փաստերը այլ բան են ասում...»:[824]

Նման պայմաններում ավելի հաճախակի դարձան Ջավախքցիների դիմում–բողոքագրերը՝ ուղղված Խորհրդային Հայաստանի, Վրաստանի հեղկոմներին, կարմիր բանակի ղեկավարությանը, ինչպես և զանազան այլ ատյանների՝ գավառը Խորհրդային Հայաստա-

[822] Սարգսյան Ե. Ղ., նշվ. աշխ., էջ 511–513:
[823] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 1, գ. 122, թ. 131:
[824] Նույն տեղում:

նին կամ Ռուսաստանին միացնելու վերաբերյալ: Նրանցից մեկում, գրված ապրիլի 23–ին, Սուլդա, Մրագովալ, Դադեչ, Վաչիան, Կարզախ գյուղերի ներկայացուցիչները Վրաստանում Հայաստանի ներկայացուցչին հայտնում էին. «Մենք խնդրում ենք, որ մեր գավառը, որի 80000 բնակչությունից 60000–ից ավելին հայեր են, ...միացնեք Հայաստանի Հանրապետության: ...Եթե մեր երկիրը չմիանա Հայաստանի հետ, որով ապահովվում ենք կոտորածից..., ճնշումից, ևս առավել, եթե մեր երկիրը չդառնա Սովետական Ռուսաստանի մասը և մեր գլխից չվերանա թուրքական յաթաղանը, մենք այլևս անկարող ենք մնալ մեր հայրենիքում, որ այս քանի տարի է վերածվել է դժոխքի, և մենք ստիպված ենք գաղթելու Ռուսաստանի խորքերը...».[825]

1921 թ. գարնանից Անդրկովկասի նորաստեղծ խորհրդային հանրապետությունների միջև վիճելի տարածքային խնդիրների լուծման համար 1921 թ. մայիսի 2–ին Ռուսաստանի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության Կավբյուրոն ստեղծեց հատուկ հանձնաժողով: Այդ հանձնաժողովին հայկական կողմի մոտեցումները ներկայացնելու նպատակով մայիսի 9–ին հրավիրեց խորհրդակցություն: Այն անցկացրեց ընդամենը մի քանի օր առաջ՝ մայիսի 4–ին Երևան ժամանած ՀՍԽՀ ռազմահեղափոխական կոմիտեի՝ հեղկոմի նախագահ Ալ. Մյասնիկյանը: Ներկա էին Ա. Մռավյանը, Պ. Մակինցյանը, Ս. Լուկաչինը և Գ. Խոջամիրյանը: Լսելով «Ադրբեջանի և Վրաստանի հետ ներքին սահմանների հաստատման հարցի մասին» արտգործժողկոմ Մռավյանի զեկուցումը՝ որոշվեց Մռավյանի նախագահությամբ ստեղծել մի հանձնաժողով, որի մեջ մտցվեցին Ս. Համբարձումյանը, Հ. Լազյանը, Ա. Ղարագյոզյանը և համապատասխան մասնագետները:[826] *Հանձնաժողովն սկսեց աշխատանքներն անհրաժեշտ նյութերի հավաքման ուղղությամբ: Մի չարք դիտակ մարդկանց հանձնարարվեց կազմել զեկուցագրեր Հայաստանի ու Հարևան խորհրդային երկու հանրապետությունների միջև վիճելի համարվող տարածքների, այդ թվում՝ Ախալքալաքի ու Խրամի (Ծալկա) վերաբերյալ: Վերջին խնդրի կապակցությամբ զեկուցագրի կազմման*

---

[825] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, ց. 2, գ. 46, թ. 66: Այս փաստաթղթի ընթերցումից դժվար չէ նկատել Հայաստանին միանալու ախալքալաքցիների հաստատակամ ձգտումը և ունեցած ոուսամետ կեցվածքը:

[826] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 113, ց. 3, գ. 15, թ. 15–17:

գործը դրվեց Պողոս Աբելյանի վրա, որն իր վաղեմի բարեկամ Ալ. Մյասնիկյանի հրավերով հունիսի 16–ին Թիֆլիսից տեղափոխվել էր Երևան:

1921 թ. հունիսի 25–27–ին Թիֆլիսում Կավբյուրոյի հանձնաժողովը հրավիրեց իր անդրանիկ նիստը՝ Ս. Կիրովի նախագահությամբ: Վրաստանը ներկայացնում էին հանձնաժողովի 2, Ադրբեջանը՝ 3, Հայաստանը՝ ընդամենը 1 անդամ (Ալ. Բեկզադյան): Ինչպես երևում է, նման անհավասար ներկայացուցչական կազմով հայ ժողովրդի ազգային–պետական շահերի պաշտպանության որևէ երաշխիք չէր կարող լինել: Եվ իրոք. առաջին իսկ նիստում Բեկզադյանը, նշելով ցարիզմի կողմից անցկացված վարչական բաժանման անարդարացիությունը և մասնավորապես, Օսմանյան կայսրությունում թուրքերի կազմակերպած հայկական կոտորածների հետևանքով աչխարհով մեկ սփռված գաղթականությանը տեղավորելու անհրաժեշտությունը, Խորհրդային Հայաստանի ծանր սոցիալ–տնտեսական վիճակը, խնդրեց հանձնաժողովի անդամներին հայկական հոծ բնակչություն ունեցող Ախալքալաքի գավառը (առնվազն 72 %–ը՝ հայեր), Լոռին և Լեռնային Ղարաբաղը (94 %–ը՝ հայեր) զիջել Հայաստանին: Սակայն նա միայնակ մնաց հանձնաժողովի վրացի և ադրբեջանցի մեծամասնության հանդեպ (վերջիններիս միացավ Կիրովը), որոնք Վրաստանում և Ադրբեջանում հակահեղափոխական տարրերի աչխուժացման համար հող չստեղծելու պատրվակով, մերժեցին տարածքային փոփոխությունների մասին Բեկզադյանի առաջարկը: Վերջինս պահանջեց հարցի վերջնական լուծումը տեղափոխել ՌԿ(բ)Կ կենտկոմի Կավբյուրո:[827]

Ի կատարումն Ա. Մռավյանի հանձնարարության՝ Պողոս Աբելյանը 1921 թ. հուլիսին Ախալքալաքի մասին ներկայացրեց մի ընդարձակ փաստաթուղթ,[828] որտեղ պատմական, աչխարհագրական, ժողովրդագրական և տնտեսական հայեցակետերից հանգամանորեն հիմնավորում էր Ախալքալաքը Հայաստանին միավորելու հայ ժողովրդի արդարացի ձգտումը:[829] «Ջավախքի հայությունը,– գրում

---

[827] Хармандарян С. В., Ленин и становление закавказской федерации, с. 101–102.

[828] Այս փաստաթուղթը (ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, ց. 2, գ. 3, թ. 122-134 և ֆ. 113, ց. 3, գ. 42, թ. 41–53), որ քանիցս վկայակոչել ենք աչխատությունում, ամբողջությամբ ներկայացված է հավելվածում (փաստաթուղթ թիվ 46):

[829] Ջավախքը Հայաստանին պատկանելու լուրջ փաստարկներ է բերում Ռ. Տեր–Սինասյանը (Տես Ռուբէն, Ախալքալակի պայքարը, Դրոշակ, 1926, թիվ 1):

էր այդ դեկուցագրում Աբելյանը,– մենշևիկյան կառավարությանը տաճկականից վատ է համարում: Նրա աչքը այնպես է վախեցել, որ ոչ մի վրացական կառավարություն չի ուզում...: Այս է ճշմարտությունը: Ախալքալաքցին ուզում է, որ Ախալքալաքը լինի իսկական, թուրքի հարձակման համար հավիտյան անմատչելի՝ Ռուսաստան. եթե այդ էլ չեղավ, նա ուզում է իր բախտը կապել Հայաստանի հետ, և նա այժմ ուզում է միանալ Սովետական Հայաստանին»:[830] *Աբելյանը անընդունելի էր համարում որևէ ինքնավարություն: Նա համոզված ասում էր, որ Ջավախքը Մալկայի հետ ծայրահեղ դեպքում պետք է ունենա ինքնավարություն Հայաստանի հովանավորությամբ:*[831]

Խորհրդային Հայաստանի դեկավարությունը, ինչպես երևում է արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությունից, բավական լրջորեն նախապատրաստվել էր հարևան Վրաստանի և Ադրբեջանի հետ սահմանային հարցերով Ռ(բ)Կ կավբյուրոյի առաջիկա նիստին: Պարզվում է, որ Ախալքալաքի և Բորչալուի, հավանաբար նաև մյուս վիճելի տարածքների վերաբերյալ, հայկական կողմը կազմել էր հատուկ փաստաթղթեր, որոնցում տարբեր տեսանկյուններից հիմնավորում էր այդ տարածքները Խորհրդային Հայաստանին միացնելու տեսակետը: ՀՀ Նորագույն պատմության կենտրոնական պետական արխիվում պահպանվել է մի արժեքավոր փաստաթուղթ, որը փաստորեն Վրաստանի հետ վիճելի համարվող Ախալքալաքի և Լոռու գավառների հարցում արտահայտում է Հայաստանի պաշտոնական տեսակետը: Այդ յուրահատուկ ծրագիր–փաստաթուղթը, որ գրված է ռուսերենով (այդ փաստը ևս հուշում է նրա՝ Ռուսաստանի կոմկուսի կովկասյան բյուրոյին հասցեագրված լինելու մասին), ունի մի քանի տարբերակ և, բացառությամբ մեկի, անթվակիր է: Տարբեր ֆոնդերում և թղթապանակներում բազմաթիվ տարբերակների առկայությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ իր բացառիկ կարևորության համար փաստաթուղթը բազմացվել ու բաժանվել է ՀՍՍՀ դեկավար անձանց: Այդ է վկայում մի տարբերակի վրա ռուսերենով ձեռագիր «պատճենահանել 5 օրինակ» մակագրությունը:[832] *Նույն տարբերակի գլխագրում, որպես փաստաթղթի իրավաստւ մար-*

[830] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, ց. 2, գ. 3, թ. 133:
[831] Նույն տեղում, թ. 133ա:
[832] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 113, ց. 3, գ. 75, թ. 2:

մին հիշատակվում է Հայաստանի կոմկուսի (ՀԿԿ) կենտկոմը: Բայց տարօրինակ է, որ վերոհիշյալ տարբերակի ամբողջ տեքստում միայն այդ բառերն են, որ գրչով ջնջված են, իսկ ուրիշ խմբագրումներ չկան:[833]

Այդ «գաղտնիքը» պարզ է դառնում, երբ ծանոթանում ենք փաստաթղթի մյուս տարբերակին, որում «ՀԿԿ կենտկոմ»-ի փոխարեն հանդիպում ենք «Հայաստանի ժողկոմխորհ» բառերին:[834] Պարզ է, որ փաստաթղթի հեղինակները՝ Ալ. Մյասնիկյանը, Ալ. Բեկզադյանը և Ա. Մռավյանը, նախապես այն ներկայացրել են իբրև Հայաստանի կոմկուսի կենտկոմի պաշտոնական կարծիք, ապա փոխարինել ժողովրդական կոմիսարների խորհրդով, ամենայն հավանականությամբ, ենթադրելով, որ վերջինիս, որպես իշխանության գործադիր մարմին, իրավական առումով պետք է որ ավելի զորեղ լիներ:[835]

Փորձենք ճշտել փաստաթղթի ստեղծման ժամանակը: Դրանում «Հայաստանի ժողկոմխորհ» բառերի գործածումը հուշում է, որ այն չէր կարող ստեղծվել 1921 թ. մայիսի 21-ից շուտ, երբ Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեին՝ հայհեղկոմին փոխարինեց ժողովրդական կոմիսարների խորհուրդը և ավելի ուշ, քան հուլիսի սկիզբը՝ սահմանների հարցով ՌԿ(բ)Կ Կավբյուրոյի հուլիսի սկզբին հրավիրված նիստը, որին պետք է, որ հասցեագրված լիներ նախագիծը:

Անդրադառնանք փաստաթղթի բովանդակությանը: Հայաստանի ժողկոմխորհն ավելի նպատակահարմար է գտնում Ախալքալաքի գավառի միացումը ՀՍԽՀ-ին հետևյալ նկատառումներով.

1) Գավառի ժողովրդագրական իրավիճակը՝ հայ ազգաբնակչության բացարձակ գերակշիռ թվաքանակը (ըստ 1917 թ. Կովկասյան օրացույցի՝ 82775 հայ, 10305 վրացի, 6335 մահմեդական, 7542 ռուս և այլն):

2) Վարչական կառավարման համար Հայաստանի ավելի նպատակահարմար դիրքը. «Ախալքալաքի գավառի կառավարումը,- կարդում ենք նախագծում,- ավելի հարմար է Հայաստանի, քան

---

[833] Նույն տեղում և գ. 42, թ. 55:
[834] Նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 3, թ. 3-5:
[835] Ինչպես կյանքը ցույց տվեց, տարածքային վեճերի լուծման խնդրում բոլշևիկյան ղեկավարությունը նախապատվությունը տվեց ոչ թե իշխանության, այլ կուսակցական ղեկավար մարմինների որոշումներին:

Վրաստանի համար: Ախալքալաքը Հայաստանի հետ կապող ճանապարհը (Ախալքալաք–Բոգդանովկա–Երմոլովկա...– Ալեքսանդրապոլ) ամբողջ ճմռան ընթացքում մնում է բաց վիճակում, այն դեպքում, երբ դեպի Վրաստան տանող ուղին ձնաբքի պատճառով, հաճախ մնում է փակ»:

3) Ախալքալաքի գավառի բնակչության թվաքանակի նվազման հետևանքով առաջացած ազատ հողային ֆոնդը արևմտահայ գաղթականների համար օգտագործելու հնարավորությունը:

4) Թիֆլիսի 1919 թ. հունվարի 9–17–ի հայ–վրացական հաշտության պայմանագրով գավառը վիճելի տարածք հռչակվելու հանգամանքը:

Ինչպես երևում է, այս մոտեցումների զգալի մասը դեռ մայիս–հունիսին պաշտպանում էր Հայաստանի արտգործժողկոմ Ալեքսանդր Բեկզադյանը Վրաստանի և Ադրբեջանի ղեկավարություններ հետ հանդիպումներում, հանգամանք, որ կարող է հիմք տալ մտածելու այս նախագծի ստեղծման աշխատանքներին այդ հայրենասեր գործչի մասնակցության մասին: Այդ պնդման օգտին են խոսում փաստաթղթի մի տարբերակում երկու տեղ ռուսերենով, գրչով նրա անվան հիշատակումները՝ «ընկ. Ա. Բեկզադյան» և «Ա.Բ.»[836] *Նույն տարբերակում կա նաև Ա. Մռավյանի ստորագրությունը, որ հուշում է փաստաթղթի պաշտոնական բնույթի մասին:*

Ի՞նչ լուծումներ գտան սահմանային վիճելի հարցերը: 1921 թ. հուլիսի 2–7–ը Թիֆլիսում գումարվեց ՌԿ/բ/Կ կավբյուրոյի պլենումը անդրկովկասյան երեք հանրապետությունների միջև որոշակի լարվածություն ծնող այդ հարցերը վճռելու համար, որին մասնակցեց խորհրդային Ռուսաստանի ազգությունների ժողկոմ, քողարկված հակահայ գործելակերպով հայտնի Ի. Ստալինը: Բազմաթիվ հիմնահարցերի թվում հուլիսի 7–ի նիստում կավբյուրոն անդրադարձավ նաև Հայաստանի և Վրաստանի ՍԽՀ–ների միջև վիճելի համարվող Լոռվա և Ախալքալաքի գավառների խնդիրներին: Ձայների 6 կողմ, 1 ձեռնպահ հարաբերակցությամբ որոշվեց Լոռու Զնզոք գոտին միացնել Հայաստանին, իսկ Ախալքալաքի ու Խրամի (Ծալկայի) շրջանները Հայաստանի ՍԽՀ–ին միացնելու հարցը, տեղափոխել Վրաստանի կոմկուսի կենտկոմ և վերջինիս եզրակացութ-

[836] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 128, g. 1, գ. 674, թ. 7–8:

յունը ներկայացնել կավբյուրոյի պլենումի քննարկմանը:[837] Դժվար չէ կռահել, որ վրաց բոլշևիկների հայեցողությանը թողնված հայկական կողմի պահանջը պիտի մերժվեր: Եվ իրոք, հուլիսի 16–ին Վրաստանի կոմկուսի կենտկոմի քաղբյուրոն անընդունելի համարեց Խորհրդային Հայաստանի առաջարկը՝ իր որոշումը հիմնավորելով Թիֆլիսի հետ այդ գավառների տնտեսական կապվածության չինծու և անհամոզիչ պատճառաբանությամբ և ինչ–ինչ «քաղաքական նկատառումներով»:[838] «Զարմանալի» զուգադիպությամբ, ճիշտ նույնպիսի «փաստարկներով» մի քանի օր առաջ, կավբյուրոյի հուլիսի 5–ի որոշմամբ Հայաստանից անջատվել և Ադրբեջանին էր տրվել հայկական մեկ այլ երկրամաս՝ Լեռնային Ղարաբաղը: 1921 թ. հուլիսին վրաց–ադրբեջանական համերաշխությունն ընդդեմ Հայաստանի ակնհայտ էր: Այսպես՝ կուսակցական մարմինների որոշմամբ պատմական Ջավախքը տրվեց Վրաստանին: Սակայն ինչպես այս, այնպես էլ այլ վիճահարույց հարցերի շուրջ պայքարը չարունակվեց հաջորդ ամիսներին և նույնիսկ, տարիներին:

1918–1921 թթ. հայրենիքի հետ Ջավախքի միավորման խնդիրը մնաց չլուծված հիմնականում հետևյալ պատճառներով: Հայաստանի Հանրապետությունը, առաջնային համարելով Արևմտյան Հայաստանի միացման խնդիրը, անհրաժեշտ ջանադրություն հանդես չբերեց Անդրկովկասում Վրաստանի ու Ադրբեջանի բռնազավթած հայկական տարածքների հարցում: 1918 և 1921 թթ. թուրքական ներխուժումների հետևանքով Ջավախքի հայ բնակչության մոտ կեսը՝ ավելի քան 40 հազ. մարդ զոհվեց, գավառը հասավ տնտեսական լիակատար անկման, հանգամանքներ, որոնք խոչընդոտեցին հայրենիքի հետ միավորվելու ուղղությամբ հայ բնակչության մղած պայքարի ծավալմանը: Անշուշտ, իրենց բացասական ազդեցությունն ունեցան նաև վրաց կառավարության կոչտ դիրքորոշումը, Անդլիայի երկդիմի քաղաքականությունը, 1920 թ. թուրք–հայկական պատերազմը, 1921 թ. քեմալա–թուրքական և քեմալա–մանչևիկյան դործակցությունը, Վրաստանի խորհրդայնացումից հետո 1921 թ. մարտին քեմալականների կողմից ինչպես Ջավախքի, այնպես էլ նրա

[837] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Հավաքածու 1, գ. 7, թ. 45:
[838] Նույն տեղում, թ. 43: Լոռու և Ախալքալաքի հարցերի քննարկման մասին տե՛ս նաև Գալոյան Գ., նշվ. աշխ., էջ 475–476:

հարևան Ալեքսանդրապոլի գավառի բռնազավթված վիճակը և այլն:[839]

Պետք է նաև հիշել, որ եթե Հայաստանին միանալու Լոռու բնակչության հաստատակամության, ՌԿ(բ)Կ Կավբյուրոյի հայանպաստ որոշման պայմաններում, վրացական կողմը Ջեզոք գոտու հարցում առժամանակ հաշտվողական դիրք բռնեց (թեև, ինչպես ստորև կտեսնենք, այդ խնդրում էլ վրացիները համառ պայքար ծավալեցին և հասան որոշակի հաջողությունների), ապա Ախալքալաքի դեպքում, մնաց անդրդվելի: Կարելի է պնդել, որ վրացիների նման դիրքորոշումը՝ անտառներով և պղնձահանքերով հարուստ Լոռու նկատմամբ, հիմնականում գյուղատնտեսական նշանակություն ունեցող Ախալքալաքի գավառին նախապատվություն տալը, պատահական չէր: Ստանալով Ախալքալաքը՝ Վրաստանը ապահովում էր արտաքին կապ դեպի հարևան երկիր՝ Թուրքիա, որին 1921 թ. Մոսկվայի պայմանագրով անցել էին Ջավախքին հարևան Արդահանի գավառը և վերջինիս հարակից Արդվինի օկրուգը: Այդ գավառների նկատմամբ հավակնություններ ունենալով՝ Վրացական հանրապետությունը նպատակ ուներ աչնանը նախատեսվող կարսի կոնֆերանսում հասնել դրանց միացմանը Վրաստանին, որն, անշուշտ, անհնարին կլիներ առանց Ախալքալաքի:

1921 թ. հուլիսի կեսերին ջավախահայությունը, իրազեկ դառնալով Կավբյուրոյի և Վրաստանի կոմկուսի կենտկոմի քաղբյուրոյի վերոհիշյալ որոշումներին, բազմաթիվ նամակ–բողոքներ հղեց Մոսկվա, Թիֆլիս, Երևան: Վրաց հեղկոմը կարծես հատուկ ավելի չի-կացրեց մթնոլորտը: 1921 թ. մարտի վերջին թուրքական զորքերի հեռանալուց հետո խորհրդային իշխանության առաջին ամիսներին Ջավախքում հաստատվեց բռնառեժիմ: Շուտով Ախալքալաքի հեղկոմի նախագահի պաշտոնից ազատվեց հայտնի բոլշևիկ, ախալքալաքցիների չրջանում մեծ հեղինակություն վայելող Առուստամովը: Նրան պաշտոնում վերականգնելու ախալքալաքցիների բողոքները մնացին անհետևանք, և «ընկ. Առուստամովը,– գրում էին այդ օրերին Վրաստանում հայկական առաքելությանը ջավախեցիները,–

[839] Եթե կարմիր բանակը 1921 թ. հունվար-փետրվարին Երևանից մտներ Ալեքսանդրապոլ, ապա Ախալքալաք, անկասկած, և՛ Շիրակում և՛ Ջավախքում թուրքերի կողմից հայ բնակչության կոտորածներն ու կողոպուտն այդպիսի ծավալներ չէին ընդունի, ինչպես և գավառը Հայաստանին միացնելու հայ բոլշևիկների ջանքերը կարող էին հանգեցնել ցանկալի արդյունքի:

ստիպված հեռացավ Ախալքալաքից՝ ժողովրդյան ամենաանկեղծ ցույցերի տարափի տակ»:[840]

Շուտով գավառի միլիցիայի պետ նշանակվեց ժողովրդին ատելի Ս. Նադիրաձեն՝ մենշևիկյան տիրապետության չրջանում հատուկ պատժիչ ջոկատի ղեկավարներից մեկը: Երբ ժողովրդի ճնշման տակ տեղի հեղկոմը նրան ազատեց պաշտոնից, Թիֆլիսի վրաց բոլշևիկները, Նադիրաձեին օժտելով ավելի լայն լիազորություններով, վերադարձրեցին Ախալքալաք: Ժողովրդի նոր բողոքներին հետևեց հատուկ հանձնաժողովի ժամանումը: Հանձնաժողովի որոշմամբ ձերբակալվեցին մի խումբ մարդիկ, այդ թվում գավառում հայտնի հայ բոլշևիկ, հեղկոմի անդամ Մնոյանը և ուղարկվեցին Թիֆլիս՝ Չեկա (Արտակարգ հանձնաժողով): Մեկ ամիս անց Ախալքալաք ժամանեց նոր արտակարգ հանձնաժողով, որը «ազգայնամոլ» գործունեության մեղադրանքով այս անգամ էլ ձերբակալեց ու Թիֆլիս ուղարկեց գավառում խորհրդային իշխանության հաստատման չարժման ակտիվիստ, Ախալքալաքի հեղկոմի հիմնադիր անդամներից մեկին՝ կարապետ Ղազանջյանին: Ուշագրավ է, որ վերջինս 1921 թ. փետրվարին, լինելով 11–րդ կարմիր բանակի վաշտերից մեկի հրամանատար, աչքի էր ընկել վրաց մենշևիկներից Լոռու ազատագրման համար մղված մարտերում: Այսպես գավառի վարչական մարմիններից հետզհետե դուրս մղվեցին հայերը և նրանցում գերազանցապես մնացին բնակչության անվիճելի փոքրամասնությունը կազմող վրացիները:

Օրեցօր աճող կամայականությունների մասին Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչին Ախալքալաքից Վ. Պոյաջյանը հայտնում էր. «Մի խոսքով, հազար ու մի փաստեր կան, բայց գրելը արդյոք ճիշտ կլինի՞: Միայն այս կարող եմ ասել, որ ժողովուրդը դժգոհ, աչքերը (ուղղել է - Ա.Մ.) այս ու այն կողմ, որ իրեն պաշտպանեն, չթողնեն ճնշելու, հալածելու, թալանելու, բայց այդպիսի անձնավորություններին էլ չեզոքացնում են, ստեղծում են կլյաուզներ և խեղդում ամեն բողոքի ձայն: Իհարկե, այս բոլորը Չեզ լավ հայտնի է, որովհետև չատ է բողոքվել»:[841]

Հայ կոմունիստների կադրային չարդին զուգընթաց, 1921 թ. ապրիլ–հուլիսին իրականացվեցին հայ գյուղացիությանը ունեզրկե-

[840] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, ց. 2, գ. 24, թ. 75:
[841] Նույն տեղում:

լու միջոցառումներ: Ամեն կերպ սիրաշահվում էր տեղի թուրք բնակչությունը, որն ակտիվորեն մասնակցել էր հայերի կոտորածներին ու թալանին և խիստ հարստացել թուրքական երկու արշավանքների ժամանակ հայերից թալանված ունեցվածքի հաշվին:[842] Այսպես՝ թուրքական երկու արշավանքների չրջանում տասնյակ հազարավոր զոհեր տված, վրացական տիրապետության չրջանում զանազան հալածանքների ենթարկված ախալքալաքցի հայերը 1921 թ. գարնանն ու ամռանն էլ հայտնվեցին վրաց բոլշևիկների սանձազերծած նոր ազգայնամոլ ձեռնարկումների ոլորտում: Պատահական չէ, որ որոշ գյուղերի (հատկապես կաթոլիկական) ներկայացուցիչներ այդ օրերին քայլեր էին անում իրենց համագյուղացիներին Ռուսաստան գաղթեցնելու ուղղությամբ: Առանձին գյուղացիներ արդեն բռնել էին գաղթի ճանապարհը: Խորհրդային Վրաստանի կառավարությունը, անհանգստացած գավառի ամայացման վտանգից, հատուկ դեկրետով հայերին արգելեց հեռանալ իրենց բնակավայրերից:[843]

Հատկանշական է, որ այդ օրերին Խորհրդային Հայաստանի իշխանություններին ախալքալաքցիների գրած բազմաթիվ նամակ–խնդրագրերում (որոնք հնարավոր չէ ընթերցել առանց հուզմի ու վրդովմունքի), Ախալքալաքում ստեղծված մղձավանջային իրավիճակից դուրս գալու միակ ելքը համարում էին գավառի միացումը Հայաստանին: Դրանցից մեկում կարդում ենք. «... որպեսզի վերացվի Ջավախեթիայի բլոկադան,...որպեսզի կանգ առնի արտակարգ կոմիսարների այցը, որպեսզի վերջ տրվի ամենայն տեսակ տղայական կամայականության և սրբագործված ալան–թալանին, միայն մի միջոց կա, որը և ամբողջ գավառի բնակչության 75% կազմող հայ ազգաբնակչության տենչն ու փափագն է. այն է՝ միացնել Ախալքալաքի գավառը իրեն հարազատ Սովետական Հանրապետության հետ»:[844]

1921 թ. հուլիսի 5–7–ի ՌԿ (բ)Կ կավբյուրոյի և Վրաստանի կոմկուսի կենտկոմի բյուրոյի հուլիսի 16–ի որոշումներից հետո էլ հայ բոլշևիկների ազգային թևի ներկայացուցիչները որոշ փորձեր կատարեցին Ջավախքի (ինչպես և Լեռնային Ղարաբաղի) ենթակա-

[842] Նույն տեղում և գ. 46, թ. 65–66:
[843] ՀՀ ՍՊԿՊԱ, ֆ. 114, ց. 2, գ. 24, թ. 75–76:
[844] Նույն տեղում:

յության հարցը վիճարկելու ուղղությամբ: ՀՍԽՀ արտժողկոմատի կարգադրության համաձայն Թիֆլիսից Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Ա. Սուրխաթյանը Երևան ուղարկեց հուլիսի սկզբին Կավբյուրոյի նիստին հայկական կողմի ներկայացրած փաստաթղթերը, այդ թվում՝ վերը հիշատակված ՀՍԽՀ ժողկոմխորհի հայտնի նախագիծը հայ–վրացական տարածքային խնդիրների վերաբերյալ: Այն, ինչպես երևում է փաստաթղթից, ի թիվս այլ ղեկավար անձանց, վերադարձվել է Ալ. Բեկզադյանին, որը մեկ անգամ չէ, որ աչքի էր ընկել իր ազգային գործելակերպով և համարվում էր հարցի լավատեղյակ պաշտոնյա անձանցից մեկը: Ուշագրավ է, որ այս անգամ էլ, Կավբյուրոյի տխրահռչակ որոշումից հետո, չնչին փոփոխություններով՝ 1921 թ. հուլիսի 27–ին կազմված նոր փաստաթղթով, որի տակ դրված է Ա. Մռավյանի ստորագրությունը, Հայաստանի ղեկավարությունը պնդեց Ախալքալաքի գավառը և Բորչալուի մի մասը ՀՍԽՀ–ին միացնելու մոտեցման օգտին՝ այդ քայլը նկատելով արդարացի ու նապատակահարմար զանազան տեսանկյուններից:[845] *Սակայն ուժերն անհավասար էին: Գավառի պատկանելության խնդիրը հօգուտ Վրաստանի լուծելու վերաբերյալ վերոհիշյալ որոշումներն ավելի սրեցին իրավիճակը: Ոմանք բռնեցին արտագաղթի ուղին:*

Ախալքալաքից հայ բնակչության զանգվածային արտագաղթը կանխելու, նրա վրդովմունքը մեղմելու, խնդրի լուծման ուղիներ գտնելու նպատակով Ախալքալաքի գավառ այցելեց ՀՍԽՀ ժողկոմխորհի նախագահ Ալ. Մյասնիկյանը: Գյուղացիների հետ հանդիպումներում, որոնց մասին Ֆիլիպովկա,[846] *Գումբուրդո, Սուլդա և այլ գյուղերի բնակիչների շրջանում առ այսօր սերնդեսերունդ պատմվում են հիշողություններ, նա փորձեց բնակչությանը բացատրել մեկ ընդհանուր խորհրդային պետության մեջ, թեկուզև տարբեր հանրապետություններում, ապրելու «մեծ հեռանկարները», համոզել հետ կանգնել արտագաղթելու վտանգավոր ծրագրից: Ինչպես կյանքը ցույց տվեց, Մյասնիկյանի այդ առաքելությունը տվեց իր արդ-*

---

[845] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 128, ց. 1, գ. 674, թ. 7–8, հմմտ.՝ Սահակյան Ա., Անդրֆեդերացիայի ղեկավարությունը և Խորհրդային Հայաստանի սահմանների «ճշգրտումը», Դրոշակ, 1999, հոկտեմբեր, թիվ 16, էջ 48:

[846] Ֆիլիպովկան հետագայում Մյասնիկյանի անունով վերանվանվեց Մյասնիկյանի: Վերջինիս հեղափոխական մականունով՝ Մարտունի, կոչվեց նաև գավառի մեկ այլ գյուղ՝ Խոսպիայի հայաբնակ հատվածը:

յունքը. զգալիորեն հանդարտվեցին կրքերը, չաւերի մոտ հույսեր արթնացան Վրաստանի նոր իշխանութիւնների, ստեղծվելիք դաշնային հանրապետութեան՝ Անդրֆեդերացիայի նկատմամբ, և օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներով գավառից զանգվածային արտագաղթ չեղավ:

Մինչ հայ գործիչներն ուղիներ էին փնտրում հայ–վրացական տարաձայնութիւնները հարթելու ուղղութեամբ, վրաց բոլշևիկների մի մասը պայքար սկսեց Հուլիսի 7–ի ՌԿ(բ)Կ կավբյուրոյի որոշման մեջ փոփոխութիւններ մտցնելու համար: Նրանք ամեն առիթ օգտագործեցին այդ որոշումից, մասնավորապես՝ Լոռին «կորցնելու» վճռից իրենց դժգոհութիւնը ՀՍԽՀ և ՌՍԽՖՀ ղեկավարութեանը հայտնելու նպատակով: Նման կեցվածքը թելադրված էր Ախալքալաքն ու Ծալկան Վրաստանին միացնելու որոշումից դժգոհ հայկական կողմին հակակշռելու նկատառումով:

Շուտով վրացիներն ավելի բացահայտորեն հայտնեցին իրենց նպատակները: ՀՀ Նորագույն պատմութեան արխիվի ՀՍԽՀ Ժողկոմխորհի ֆոնդում (թիվ 113) պահվում է մի արժեքավոր փաստաթուղթ, որը Հայաստանի կառավարութեան պաշտոնական տեսակետն է Լոռու Ջեզոք գոտում սահմանային վերաձևումներ անելու վրացական կողմի առաջարկութեան վերաբերյալ: Փաստաթուղթը կազմվել է 1921 թ. Հուլիսի 7–ի հայտնի որոշումից ոչ շուտ և նոյեմբերի 6-ից՝ հայ–վրացական սահմանային համաձայնագրի կնքումից ոչ ուշ:[847] *Վրաստանն առաջարկում էր իրեն հանձնել Սադախլոյի սեկտորում Լամբալու (այժմ՝ Բագրատաշեն) և Քերփիլի գյուղերը, ինչպես և հայ–վրացական սահմանը նախկին Լոռու Ջեզոք գոտու հյուսիսային երկայնքից տեղափոխել մինչև Կուլութաշ լեռնագագաթն ընկած ջրբաժան գիծը, այսինքն՝ Վիրահայոց լեռների գագաթագիծը: Այդօրինակ փոփոխութեան հետևանքով Վրաստանը ձեռք կբերեր հացահատիկով հարուստ 75 վերստանոց չրջանը, Սադախլո–Այրում երկաթգծի 15 վերստանոց հատվածը, իսկ սահմանը Սադախլոյի սեկտորից մինչև Կուլութաշ լեռը ջրբաժանով անցկացնելու դեպքում՝ հայկական Բրդաձոր, Խոժոռնի, Օփրեթ, Աղ–Քյորփի, Ջադար (նաև՝ Ջանդար), թուրքական Սաաթի և այլ գյուղեր՝ 350 քառ. վերստ հարուստ անտառային տարածքով հանդերձ: Այլ կերպ ասած, հարց էր*

[847] Այս վերջին համաձայնագրին կանդրադառնանք ստորև:

բարձրացվում ՌԿ(բ)Կ կավբյուրոյի 1921 թ. հուլիսի 7–ի որոշումը հիմնավորապես վերանայելու մասին:

Փաստաթղթի հեղինակները, որոնք հավանաբար եղել են ՀՍԽՀ ժողկոմխորհի անդամներ կամ ներկայացուցիչներ, վրացիների նման մոտեցումները համարել են Հայաստանի համար խիստ վնասակար և անընդունելի: Առավել ևս, որ վրացական կողմն իր առաջարկությունների մեջ միտումնավոր անորոշություններ էր մտցրել հնարավորության դեպքում տարածքային ավելի խոշոր կորզումներ կատարելու համար, ինչպես օրինակ, Շամլուղի պղնձահանքերի հատվածում: ՀՍԽՀ ժողկոմխորհի մասնագետների կարծիքով ազգագրական, տնտեսական և այլ տեսանկյուններից Աղ–Քյորփի, Օփրեթի, Խոխմել, Բրդաձոր, Գյուլիբաղ, Դամիա, Լիճքաձոր, Խոժոռնի, Զանախչի, Ճոճկան և այլ գյուղեր իրենց հողահանդակներով պետք է լինեն Հայաստանի կազմում: «Սահմանը,– ընդգծվում էր փաստաթղթում,– ոչ մի պայմանով չպետք է տեղափոխվի վրացիների առաջարկած Սադախլո գյուղից մինչև Կուլուբեաչ լեռն ընկած ջրբաժանի գիծը, որը Հայաստանին կզրկի միակ չինարարական անտառանյութից»:[848] Վերոհիշյալից հետևում է, որ Հայաստանի ղեկավարությունը փորձել է պահպանել Զեզոք գոտու սահմանները և դեմ է եղել Վիրահայոց լեռների ջրբաժանից հյուսիս ընկած հայկական գյուղերի միացմանը Վրաստանին:

Սակայն, ի վերջո կենտրոնի ու ադրբեջանցիների աջակցության շնորհիվ վրաց բոլշևիկները հասան վերոհիշյալ գյուղերի կցմանը Վրաստանին: Եվ դա այն դեպքում, երբ վրացական կողմն արդեն շահել էր Ախալքալաքի և Ծալկայի վիճարկման հարցը:

Բուռն քննարկումներից ու նախապատրաստական աշխատանքներից հետո 1921 թ. նոյեմբերի 6–ին Թիֆլիսում կնքվեց համաձայնագիր հայ–վրացական սահմանի մասին: Հայաստանի կողմից այն ստորագրեց ժողկոմխորհի նախագահ Ալեքսանդր Մյասնիկյանը, Վրաստանի կողմից՝ հեղկոմի նախագահ Բուդու Մդիվանին: Համաձայնագրի սկզբում ընդգծվում էր, որ սոցիալիստական երկու հանրապետությունների ղեկավար մարմինների միջև ձեռք բերված «լիակատար համաձայնության» հիման վրա հաստատվում է միջպետական սահմանագիծը: Նման ձևակերպումն ուղղակիորեն հուշում

[848] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 113, ց. 3, գ. 55, թ. 2ա:

էր, որ իրականում պայմանագիրը համաձայնեցվել է մեծ դժվարությամբ և, անշուշտ, Հայաստանի վրա ճնշում է գործադրվել:

Կնքված համաձայնագրով սահմանն սկսվում էր Ուչ–Թափալար լեռնագագաթից՝ Թուրքիայի, Հայաստանի և Վրաստանի սահմանագլխից, ձգվում դեպի արևելք մինչև Օրթուլ Դաղ լեռը, ապա թեքվում հյուսիս–արևելք և արևելք՝ Մադաթափա լիճն ու Տրոյիցկոյե գյուղը թողնելով Վրաստանին, Տատոյ Խարաբա (այժմ Շիրակի մարզի Բավրա գյուղ), Կարմիր Խարաբա և Դարաքեյ (Սարագյուղ) գյուղերը՝ Հայաստանին՝ մինչև Լեգլի Դաղ (այժմ Աչքասար գագաթ Ջավախքի լեռներում): Այնուհետև սահմանն անցնելու էր Վիրահայոց լեռների ջրբաժանով՝ մինչև Պալուխլի Բաչի լեռը, այսինքն՝ ինչպես ցանկանում էր վրացական ղեկավարությունը: Ի դեպ, վերջին լեռնագագաթը միաժամանակ դառնում էր նաև հայ–ադրբեջանական սահմանագլուխ: Զբավարարվելով սահմանագծի վերաձևումով՝ վրացական կողմի պահանջով հատուկ ծանոթագրությամբ փաստաթղթի վերջում արձանագրված էր, որ «Իրգանչայ, Սաաթի, Ջանդար, Աղ–Քյորփի, Օփրեթ, Խոժոռնի, Բրդաձոր, Սադախլո գյուղերը մնում են նշված գծից հյուսիս (Վրաստանի ՍՍՀ սահմաններում)»:[849] Ինչպես երևում է, այս սահմանազատման հիմքում Ալեքսանդրապոլի և Ախալքալաքի սահմանների մասում ընկած էր նախկին ցարական վարչատարածքային բաժանումը, իսկ Լոռու Զեղոք գոտու նախկին սահմանները լիովին փոփոխված էին՝ ի վնաս Հայաստանի: Այսպիսով՝ քաղաքագիտական ու պատմագիտական գրականության մեջ գոյություն ունեցող այն տեսակետը, թե Լոռու Զեղոք գոտին Ռ(բ)Կ Կավբյուրոյի հուլիսի 7–ի որոշմամբ ամբողջովին անցել է Հայաստանին, չի համապատասխանում իրականությանը: Այդ կարծիքը պաշտպանող հեղինակները չեն նկատել, որ հայ–վրացական սահմանագիծը հիմնականում գծվել է 1921 թ. նոյեմբերի 6–ի համաձայնագրով:

Ստորագրված համաձայնագրով ամրագրելով իրենց «իրավունքները» վիճելի տարածքների նկատմամբ՝ վրաց բոլշևիկները չդադարեցրեցին պայքարը Հայաստանից տարածքային նոր կորզումներ կատարելու համար: Այդ պայքարում նրան աջակցում էր Ադրբեջանը, որը նախապատրաստվում էր Ղարաբաղում անցկացնել հանրաքվե՝ վերջնականապես երկրամասի բռնակցումը «օրինակա-

[849] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 113, ց. 3, գ. 116, թ. 29, հմմտ.՝ գ. 55, թ. 3, 10:

նացնելու» համար, ուստի իր հերթին ակնկալում էր Վրաստանի աջակցությունը: Դեռ 1921 թ. գարնանից ձևավորված վրաց–ադրբեջանական գործակցությունը, որն ամենաընդգծված ձևով երևաց ՌԿ(բ)Կ կավբյուրոյի հուլիսի 2–7–ի նիստերում, նոր դրսևորումներ ունեցավ 1921 թ. վերջին և 1922 թ. սկզբին: «Եղբայրական» հանրապետություններն արգելքներ հարուցեցին Ռուսաստանից եկող սննդամթերքը Հայաստանին առաքելու խնդրում: Թիֆլիսում ՀՍԽՀ դիվանագիտական ներկայացուցիչ Ա. Սուրխաթյանին 1922 թ. հունվարի 21–ին հղած հեռագրում արտգործժողկոմ Մռավյանը խնդրում էր միջոցներ ձեռք առնել Վրաստանից Ախալքալաքի, իսկ Ադրբեջանից՝ Ղազախի վրայով Ռուսաստանից ստացվող ապրանքների մուտքը ապահովելու, ճանապարհները ապաշրջափակելու ուղղությամբ:[850]

Բացի այդ, Վրաստանի ՍԽՀ ղեկավարներն սկսեցին հնարավորինս ձգձգել Հայաստանին միացված շրջանները՝ Վորոնցովկան (այժմ՝ Տաշիր) և Պրիվոլնին վրացական իշխանություններից ազատելու և պաշտոնապես հայկական կողմին հանձնելու գործողությունը:[851] *Նման պայմաններում Հայաստանը փորձեց արդարացի լուծումների հասնել գոնե մանր, ներքին սահմանային հարցերում և կամ Վրաստանին մնացած տարածքներում հայության համար ապահովել ինքնավարություն: Դեռ 1922 թ. մի խումբ հայ գործիչներ ներկայացրին նախագիծ Ախալքալաքի գավառից և Բորչալուի վերոհիշյալ հայաբնակ գյուղերից Վրաստանի ՍԽՀ կազմում մեկ հայկական ինքնավար վարչամիավոր ստեղծելու մասին: Սակայն վրաց պե-*

---

[850] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, ց. 2, գ. 136, թ. 20:

[851] ՀՍԽՀ և ՎՍԽՀ արտգործժողկոմներ Ա. Մռավյանի և Սվանիձեի միջև Թիֆլիսում ծեռք բերված համաձայնությամբ Վորոնցովկայի և Պրիվոլնիի տարածքների փոխանցումը պետք է տեղի ունենար 1921 թ. դեկտեմբերի 27–ին: Սակայն Վորոնցովկա ժամանած Վրաստանի ներկայացուցիչները հրաժարվեցին այդ կապակցությամբ որևէ փաստաթուղթ ստորագրել փորձելով իրենց այդ քայլն արդարացնել վրացական կառավարությունից լիազորություններ չունենալու պատճառաբանությամբ: Բայց իրական պատճառն այլ էր: Վրաստանի ղեկավարությունը, անտեսելով 1921 թ. նոյեմբերի 6–ի հայ–վրացական համաձայնագիրը, հայտնում էր, որ վերոհիշյալ տարածքների հանձնումը կարող է տեղի ունենալ այն դեպքում, երբ Սադախլոյի շրջանի Լամբալու և Քերփալի, ինչպես և դրանցից արևմուտք ընկած մի հողատարածք հանձնվի Վրաստանին: Միայն շնորհիվ ՀՍԽՀ ղեկավարության միակողմանի ու վճռական գործողությունների 1922 թ. հունվարի կեսերին հայկական իշխանությունները վերահսկողություն սահմանեցին Վորոնցովկայի ու Պրիվոլնիի նկատմամբ և այնտեղ կազմակերպեցին ՀՍԽՀ խորհուրդների ընտրություններ (տես ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 113, ց. 3, գ. 55, թ. 8–9, հմմտ.՝ Սահակյան Ա., նշվ. աշխ., էջ 48):

տական չրջանակները, մտավորականության ներկայացուցիչներ (հատկապես պատմաբան Իվ. Ջավախիշվիլին) սվիններով ընդունեցին այդ նախագիծը՝ այն դիտելով իբրև Վրաստանն անդամահատելու քայլ և 1923 թ. հասան նրա մերժմանը:[852]

1921 թ. նոյեմբերի 6–ի համաձայնագրի կնքումից հետո էլ սահմանային վեճերը չարունակվեցին: Հարկ եղավ 1923 թ. փետրվարի 6–ին ստեղծել «Անդրֆեդերացիայի կենտգործկոմի Գավառների վարչատարածքային սահմանազատման հանձնաժողով»՝ երեք հանրապետությունների սահմանները մանրազնին ուսումնասիրելու և առաջարկություններ ներկայացնելու համար: Հանձնաժողովն աշխատանքներն ամփոփեց 1923 թ. ապրիլի 30–ին Թիֆլիսում հրավիրված նիստում: Նիստը նախագահում էր Անդրֆեդերացիայի կենտգործկոմի նախագահ Ս. Համբարձումյանը: Հայաստանը ներկայացնում էին ներքին գործերի փոխնախարար Հ. Կոստանյանը, հողժողկոմատի կոլեգիայի անդամ Ա. Աթաբեկյանը, ինչպես և այլ պաշտոնյա–մասնագետներ: Օրակարգի առաջին հարցը վերաբերում էր հայ–վրացական սահմանային գավառներին՝ մի կողմից Ախալքալաքի ու Ալեքսանդրապոլի, մյուս կողմից՝ Լոռու և Բորչալուի (տվյալ դեպքում արդեն Հյուսիսային Լոռի) խնդիրներին: Եթե առաջին դեպքում սահմանային որևէ փոփոխություն չէր նախատեսվում, ապա երկրորդ դեպքում մասնակի ճշտումներ լինելու էին:[853] Որքան էլ վերոհիշյալ համաձայնագրերն ու հանձնաժողովների որոշումները ճշգրտումներ մտցրեցին Անդրկովկասի ներքին սահմաններում, տարածքային վեճերը պահպանվեցին: Դրանից հետո էլ որոշվեց ստեղծել հողային հանձնաժողով, որի կազմը՝ Ս. Կասյան, Ստուրուա և Յեկուբով, հաստատվեց Անդրկենտգործկոմի կողմից 1923 թ. նոյեմբերի 5–ին:[854] Այն հավաքված հսկայական փաստական նյութի հիման վրա զգալի աշխատանք կատարեց, մինչև 1920–ական թվականների վերջը և 30–ականների սկիզբը իրականացրեց սահմանային չտկումներ:

---

[852] ար֊ծանյչ, 1998, № 7, გვ. 29–30. Հմմտ.՝ «Հայ-վրաց գրական, պատմամշակութային հարցերը վրաց մամուլում (1988-1990)», էջ 60-62:

[853] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 112, ց. 1, գ. 95, թ. 100: Ստորագրված համաձայնագիրը նախատեսում էր նաև՝ անցկացնել վրաց–ադրբեջանական սահմանազատում, որի շուրջ ևս ծագել էին լուրջ տարաձայնություններ:

[854] Սահակյան Ա., նշվ. աշխ., էջ 49:

Ամփոփելով Ջավախքյան պատմության 1917–1921 թթ. էջերին նվիրված գլխի շարադրանքը՝ մատնանշենք այդ ժամանակահատվածին բնորոշ ընդհանուր միտումները.

Անդրկովկասի վարչատարածքային վերաբաժանման հարցի շուրջ հայ և վրաց հասարակական–քաղաքական շրջանակներում առաջին աշխարհամարտի նախօրյակին վերսկսված քննարկումների արդյունքում 1917 թ. կողմերը եկան ընդհանուր համաձայնության: Երկրամասի վարչական նոր բաժանման համար, իբրև արդարացի սկզբունք, ընդունվեց էթնիկ–ազգագրական մոտեցումը, որի կիրառման դեպքում հիմնականում հայաբնակ Ախալքալաքի գավառը և Լոռու գավառի մեծ մասը Թիֆլիսի նահանգից պետք է փոխանցվեին կամ Երևանի նահանգին, կամ նոր ստեղծվելիք Ալեքսանդրապոլի նահանգին: Սակայն շուտով վրաց քաղաքական կուսակցությունների զգալի մասը հրաժարվեց ազգագրական սկզբունքից և վիճելի գավառների հարցում բռնեց անզիջում ու կարծր դիրք:

1918 թ. մայիսին Ախալքալաքի գավառ թուրքական ներխուժման պատճառով հայ և վրաց բնակչությունն արտագաղթեց Բակուրիան և Ծալկա: Նորահռչակ վրացական հանրապետությունը հայ գաղթականության նկատմամբ դրսևորեց անբարյացակամ վերաբերմունք, իսկ աշնանը՝ թուրքերի հեռանալուց հետո, բռնազավթեց Լոռին ու Ախալքալաքը: Դեկտեմբերին սանձազերծված հայ–վրացական պատերազմի դադարեցման հարցում միջնորդի առաքելություն ստանձնեց անգլիական զինվորական հրամանատարությունը: Այն վիճելի տարածքների խնդրում բացահայտորեն պաշտպանեց վրացական կողմին՝ Հայաստանին պարտադրելով Լոռին Զեզոք գոտի հռչակելու, իսկ Ախալքալաքը՝ հայ բնակչության անվտանգության որոշ երաշխիքներով, ժամանակավորապես Վրաստանին հանձնելու իր որոշումը: Ամբողջ 1918–1920 թթ. ընթացքում վերոհիշյալ գավառների պատկանելության հարցի շուրջ Թիֆլիսում բազմաթիվ խորհրդաժողովներ գումարվեցին: Սակայն խնդրին որևէ լուծում չգտնվեց: Այդ ընթացքում Ախալքալաքի գավառի հայությունը, մնալով վրացական իշխանությունների հսկողության ներքո, հայտնվեց ազգային ու սոցիալական ճնշումների պայմաններում:

1921 թ. մարտին քեմալական թուրքերը բռնազավթեցին Ախալքալաքի գավառը՝ նոր կոտորածներ իրականացնելով հայ բնակչության նկատմամբ: Թուրքերի կարճատև տիրապետությունից հետո Խորհրդային Վրաստանի իշխանությունները, ցավոք, չարու-

նակեցին գավառի հայության նկատմամբ ազգային խտրականության մենշևիկյան պետության քաղաքականությունը: 1921–1922 թթ. Ախալքալաքի ու Ծալկայի հայաշատ գավառները խորհրդային Հայաստանին միացնելու կամ գոնե Վրաստանի սահմաններում հայերին ինքնավարություն տալու հայ բոլշևիկների ազգային թևի ներկայացուցիչների ջանքերը, դրական արդյունք չտվեցին: Ալ. Մյասնիկյանին և նրա հայ կուսակիցներին դժվարությամբ հաջողվեց կանխել դեպի Ռուսաստան Ջավախքի հայության հնարավոր արտագաղթը: 1920–ական թվականներին իրականացվեցին հայ–վրացական սահմանային վերաճչտումներ, որոնց արդյունքում Հայաստանն ունեցավ տարածքային կորուստներ:

ՎԵՐՋԱԲԱՆ

Ջավախքը պատմական Մեծ Հայքի թագավորության Հյուսիսային ընկած Գուգարք աշխարհի ինը գավառներից մեկն է: Այն մ. թ. ա. 2–րդ հազարամյակում մաս է կազմել Հայասա պետական կազմավորմանը, «Ջաբախա» ձևով հիշատակվում է Արգիշտի I թագավորի (մ. թ. ա. 786–764) արձանագրություններում: Մ. թ. ա. 6–3–րդ դարերում Ջավախքը երվանդյան թագավորության Հյուսիսային գավառներից էր: Կարճ ընդմիջումից հետո Գուգարք նահանգի հետ այն Արտաշես I–ի (մ. թ. ա. 189–160 թթ.) կողմից վերամիացվել է Մեծ Հայքի թագավորությանը, որի կազմում մնացել է մինչև Արշակունյաց հարստության անկումը: Արշակունիների օրոք գավառը հիշատակվում է որպես Վարճավունի նախարարական տան կալվածք:

428 թ. հետո այս երկրամասը սասանյանները մտցրել են պարսկական մարզպանության մեջ: 7–րդ դարի երկրորդ կեսին այն գրավվել է արաբների կողմից: 10–րդ դարում Ջավախքը հայ Բագրատունիների թագավորության կազմում էր, որի կործանումից հետո կարճ ժամանակով 11–րդ դարի կեսերին ենթարկվել է վրաց պետությանը՝ մինչև սելջուկ թուրքերի արշավանքները: 12–րդ դարի վերջից, ի թիվս Հյուսիսային Հայաստանի այլ գավառների, Ջավախքն իր Թմուկ (Թմկա) բերդի ու Ախալքալաքի (Նոր քաղաք) հետ տրվել է հայ Զաքարյաններին՝ որպես ժառանգական կալվածք: Այնտեղի հայ հոգևոր կենտրոնը եղել է Ջրեսկ ավանը: Մոնղոլական լծի տապալումից հետո 1266 թ. այս տարածաշրջանը եղել է Սամցխե–Ջավախք իշխանության կազմում: 1587 թ. այն գրավել են օսմանյան թուրքերը և մտցրել Ջղրի (ապա՝ Ախալցխա) էյալեթի (վիլայեթ, նահանգ) մեջ՝ իբրև առանձին սանջակ (դավառ):

Ի սկզբանե Ջավախքը բնակեցված է եղել հայերով: Այդ մասին վկայում են հայկական, վրացական, արաբական, թուրքական և այլ աղբյուրներ: Ըստ վրաց պատմիչ Լեոնտի Մրովելու՝ 4–րդ դարի սկզբին սուրբ Նունեի, վրաց՝ Նինոյի քրիստոնեական քարոզչության օրերին Ջավախքում բնակչության խոսակցական լեզուն հայերենն էր: 16–18–րդ դդ. թուրքական հարկացուցակների տվյալներով՝ Ջավախքի ու հարակից գավառների բնակավայրերի մեծ մասում ապրում էին հայեր: Նույն վկայությունը հանդիպում ենք նշանավոր աշխարհագետներ, վրաց հեղինակ Վախուշտ Բագրատիոնի և Մխի-

թարյան միաբանության անդամ Ղուկաս Ինճիճյանի և այլոց աշխատություններում:

19–րդ դարի սկզբին Ջավախքը Հարավային Կովկասի այլ դավառների հետ հայտնվեց Ռուսական կայսրության արտաքին քաղաքականության ոլորտում: 1828 թ. հունվարին գեներալ Ի. Ֆ. Պասկևիչի զորքերը գրավեցին Ջավախքի կենտրոն Ախալքալաքը: 1830 թ. Արևմտյան Հայաստանի Էրզրումի, Բասենի, Բաբերդի, Դերջանի և այլ դավառներից 7300 հայ ընտանիքներ Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունու գլխավորությամբ գաղթեցին և բնակություն հաստատեցին Ախալցխայի, Ախալքալաքի և Ծալկայի (պատմական Գուգարաց աշխարհի Թռեղք գավառը) շրջակայքում՝ վերականգնելով ու հիմնադրելով ավելի քան 60 գյուղ և 50 եկեղեցի: Այդ գաղթի շնորհիվ կրկին վերականգնվեց Ջավախքի նախկին հայեցի էթնիկական պատկերը: Տեղացի 1716 ընտանիք (մոտ. 10–11 հազ. չունչ) հայերի, 639 ընտանիք մահմեդականների ու 179 ընտանիք վրացիների կողքին հաստատվեցին 58 հազար արևմտահայեր:

1840 թ. Ախալքալաք գավառը, որ կազմում էր թուրքական նախկին սանջակի հիմնական տարածքը, մտցվեց Վրացա–իմերեթական, իսկ 1846 թ.՝ Թիֆլիսի նահանգի մեջ, 1874 թ. վերածվեց ինքնուրույն գավառի:

1841–1843 թթ. Ռուսաստանի տարբեր մարզերից աքսորված ռուս աղանդավորները՝ դուխոբորները, գավառի հարավային մասում (այժմյան Նինոծմինդայի շրջան) հիմնում են 8–9 գյուղեր: Այսպես Ջավախքը դառնում էր բազմազգ. 1886 թ. գավառում հաշվվում էր 110 գյուղ, որոնք միավորվում էին 10 գյուղական համայնքներում՝ ընդամենը մոտավորապես 63,8 հազար բնակչությամբ, որից 46386-ը, այսինքն՝ 72,7%–ը՝ հայեր էին: Մահմեդականները 10,7% էին, ռուս դուխոբորները՝ 10,4%, վրացիները՝ 5,8%:

Ռուսական տիրապետության շրջանում Ախալքալաքի գավառը սոցիալ–տնտեսական և մշակութային զգալի վերելք ապրեց: Ախալքալաքը դարձավ արհեստավորական կենտրոն, իսկ գյուղերը սկսեցին կարևոր դեր խաղալ Անդրկովկասում հացահատիկի ու մսամթերքի արտադրության բնագավառում: 1830–ական թթ. սկզբներին Կարապետ արքեպիսկոպոսի նախաձեռնությամբ Ախալցխայում բացվեցին Կարապետյան, Ախալքալաքում՝ Մեսրոպյան ծխական արական դպրոցները:

1856 թ. բարերար Կարապետ Յաղուբյանի ջանքերով ավարտվեց Ս. Խաչ եկեղեցու վերաշինությունը: 1870 թ. սկսեցին գործել Սանդխտյան օրիորդաց, իսկ 1880–ական թթ. սկզբին՝ ռուսական դպրոցները, 1889 թ.՝ քաղաքային ուսումնարանը, ստեղծվեց թատերական խումբ:

19–րդ դարի վերջին Ախալքալաքում Ջ. Տեր–Գրիգորյանի և Պ. Աբելյանի ջանքերով ստեղծվեց ազատագրական խմբակ: Այստեղ իր գործունեությունը ծավալեցին Հայ հեղափոխական դաշնակցությունն և Սոցիալիստ հեղափոխականների (էսէռական) կուսակցությունները: Արևմտյան Հայաստանի ազատագրության գաղափարները ջերմ արձագանք գտան ախալքալաքցիների շրջանում, որոնց զգալի մասը, ծագումով լինելով արևմտահայեր, չարունակում էր պահպանել հոգևոր կապը իրենց նախկին հայրենիքի՝ էրզրումի նահանգի հետ: Ջավախքը ծնունդ տվեց ազգային այնպիսի հայտնի դեմքեր, ինչպիսիք էին Հովհաննես Քաջազնունին, Համո Օհանջանյանը, Ռուբեն Տեր–Մինասյանը, Ռուբեն Դարբինյանը, գրողներ Վահան Տերյանը, Դերենիկ Դեմիրճյանը, աշուղ Ջիվանին և ուրիշներ:

1918 թ. մայիսին Ախալքալաքի գավառ թուրքական զորքերի ներխուժման պատճառով բնակչության ճնշող մեծամասնությունն արտագաղթեց Բակուրիանի անտառներ ու Մալկայի շրջան: Գաղթած 80 հազ. հայերից 35–40 հազ. զոհվեց: Նոյեմբերի վերջին գավառից թուրքական զորքերի հեռանալուց հետո Ջավախքի նկատմամբ տարածքային հավակնություն հանդես բերեց մենշևիկյան Վրաստանը: Դեկտեմբերին Ախալքալաքի ու Լոռու համար ծագած հայ–վրացական պատերազմն ավարտվեց անգլիացիների միջամտությամբ: Թեև անգլիացիների ճնշման տակ Ջավախքը ժամանակավորապես դրվեց Վրաստանի հսկողության տակ, սակայն Հայաստանի Հանրապետությունն իր գոյության ողջ ընթացքում (1918–1920) չդադարեցրեց դիվանագիտական ջանքերն այն վերադարձնելու ուղղությամբ: Խորհրդային Հայաստանի ղեկավարությունը (Ալ. Բեկզադյան, Ալ. Մյասնիկյան, Ա. Մռավյան և ուրիշներ), ընդառաջ գնալով գավառի բնակչության ցանկությանը, նույնպես հանդես եկավ Ախալքալաքն ու հարևան Մալկան մայր հայրենիքի հետ միավորելու պահանջով: Սակայն վրաց–ադրբեջանական բոլշևիկ մեծամասնությունը, գործելով միասնաբար, 1921 թ. հուլիսին հասավ ինչպես Ախալքալաքի, այնպես էլ հայկական այլ տարածքների բռնակցմանը Վրաստանին ու Ադրբեջանին: 1921 թ. նոյեմբերի 6–ին

կնքվեց պայմանագիր Խորհրդային Հայաստանի ու Վրաստանի միջև հայ–վրացական սահմանագծի վերաբերյալ, որը մասնակի փոփոխություններով պահպանվեց առ այսօր:

1921 թ. նոյեմբերի 6–ի համաձայնագրից հետո հայ բնակչության նկատմամբ ազգային խտրականության քաղաքականությունը շարունակվեց նոր դրսևորումներով: Ժամանակ առ ժամանակ սահմանային հիմնախնդիրը բարձրացվեցին ոչ միայն անհատ մարդկանց, այլև Ախալքալաքի իշխանության տեղական մարմինների՝ գյուղական խորհուրդների կողմից: Որքան էլ խնդրի քննարկումներն ու արծարծումները խորհրդային ժամանակաշրջանում տեղի էին ունենում գաղտնիության պայմաններում, այնուհանդերձ, իրենց արձագանքներն էին գտնում արտասահմանյան և տեղական մամուլում: Ժամանակի մամուլի ուսումնասիրությունից երևում է, որ այդ հարցը խիստ սրվել է 1925 թ.: Ամենայն հավանականությամբ դա կապված է եղել 1925 թ. փետրվարին ավիավթարից, չբացահայտված հանգամանքներում՝ Ալ. Մյասնիկյանի ողբերգական մահվան հետ: Ինչպես նշվեց, վերջինս կարողացել էր իր անձնական հեղինակությամբ և կոկրետ քայլերով չավախքցիների չրջանում խորհրդային իշխանության նկատմամբ որոշակի վստահության մթնոլորտ ստեղծել:

Կորցնելով աջակցության հույսի վերջին նշույլը՝ գավառի բնակչությունը դարձյալ բարձրացրել է Ախալքալաքը Հայաստանին միացնելու հարցը: Արտահայտելով ժողովրդի կամքը՝ համապատասխան որոշումներով 37 գյուղական խորհուրդներ 1925 թ. դիմել են Հայաստանի, Վրաստանի և ԽՍՀՄ բարձրագույն իշխանական մարմիններին: Երևան ու Թիֆլիս են ժամանել նրանց հատուկ պատվիրակությունները: Ժամանակի համար արտառոց այդ հարցի քննությունը հանձնարարվել է կովկասյան գործերին «քաջատեղյակ» Սերգո Օրջոնիկիձեին: Վերջինս, ինչպես երևում է ՏԱՍՍ–ի տարածած հաղորդագրությունից («Պրավդա» թերթ, 12 մայիսի), 1926 թ. մայիսի 10–ին Թիֆլիսում անդրկովկասյան ընդլայնված կուսակցական խորհրդակցությունում հանդես է եկել զեկուցումով: Նա խորը անհանգստություն է հայտնել երկրամասում տակավին չոչնչացված մենշևիկյան, դաշնակցական ու մուսավաթական կուսակցությունների «պառակտչական», հակախորհրդային գործունեության առնչությամբ: Քննադատելով տեղերում ազգային հարցի նկատմամբ որոշ ղեկավար անձանց «սխալ» մոտեցումները, Օրջոնիկիձեն նշել է, որ

«Անցյալ տարի Ախալքալաքի 37 գյուղեր ցանկություն են հայտնել միանալ Հայաստանին»:[855] Ըստ երևույթին՝ կամենալով ընդգծել, որ գավառի ոչ բոլոր բնակավայրերն են հանդես եկել նման ցանկությամբ, բոլշևիկյան գործիչն անպայմանորեն ընդգծել է «37» թիվը՝ մոռանալով, որ այն գավառի հայկական գյուղերի ընդհանուր թվի մեջ պատկառելի ցուցանիշ է: Եթե ամբողջ գավառի մոտ 80 գյուղերից հանենք մոտ 10–12 ռուս–աղանդավորական և վրացական գյուղերը, ապա կստացվի, որ գավառի հայ բնակչության կեսից ավելին, ճարահատյալ գնացել է այդ վտանգավոր քայլին: Ս. Օրջոնիկիձեն այդ փաստը համարել է «սկանդալ»՝ զարմանք հայտնելով Խորհրդային Վրաստանից հեռանալու և Հայաստանին միանալու հայերի «անբնական» ցանկության կապակցությամբ:

Պարզվում է, որ համանման իրավիճակ ստեղծվել էր նաև Գանձակի (Գյանջա) գավառի լեռնային մասում (խոսքը Ղարաբաղի մասին է –Ա.Մ.): Օրջոնիկիձեն, փորձելով հնարավորինս թաքցնել իրենց ազգային քաղաքականության ձախողումները, ինչպես վրացահպատակ Ախալքալաքի, այնպես էլ Ադրբեջանին ենթակա չրջանների հայության դժգոհության պատճառը համարել է ոչ թե քաղաքական, այլ զուտ տնտեսական: Այն է՝ Անդրկովկասի հողժողկոմատը Ջավախքում հայերին բավարար հողատարածքներ չի տրամադրել և նրանց գժտեցրել է ոչխարաբուծ–խաչնարած (овцевод) վրացիների հետ, իսկ երկրորդ դեպքում՝ Գյանջայի (Ղարաբաղի–Ա. Մ) հայերին առհասարակ չի հատկացրել խոստացված հողակտորները:

Բնականաբար, Ախալքալաքի հայության պահանջը մերժվել է: Ինչպես երևում է եղած կցկտուր նյութերից՝ ախալքալաքցի պատվիրակներն օգնության խնդրանքով դիմել են հայ բոլշևիկներին, այդ թվում՝ Սաքո Համբարձումյանին՝ հույս ունենալով գոնե հասնել Վրաստանի սահմաններում ինքնավարության տրամադրմանը: Սակայն Համբարձումյանը, որ 1925 թ. հավանաբար աղգային քաղաքականության մեջ վերոհիշյալ «ձախողումների» պատճառով Անդրֆեդերացիայի կենտգործկոմի նախագահի բարձր պաշտոնից տեղափոխվել էր ավելի ցածր աշխատանքի,[856] իրեն «ապահովագրելով», ախալքալաքցիներից պահանջել է՝ թողնել ու հեռանալ իրենց տները

[855] Правда, 1926, 12 мая. Հմմտ.՝ Արեղեան Ա., Նշվ. աշխ., Հայրենի Ջաւախք, էջ 335:
[856] Ս. Համբարձումյանը 1922 թ. ընտրվել էր Անդրերկգործկոմի համանախագահ, իսկ 1925-ին՝ նշանակվել ՀՍԽՀ ժողկոմխորհի նախագահ:

և հիշել, որ «կոմունիստական կուսակցությունը դիտե, թե ում եւ երբ պետք է տալ ինքնավարություն»:[857]

Այս դեպքերի մասին Փարիզի «Հառաջ» թերթում կարդում ենք. «...այսօր անհերքելի իրողություն է, որ ախալքալակցիք ձգտում են իրենց գավառը միացնել Հայաստանին: Նրանց գյուղական խորհուրդների այս ուղղությամբ կատարած քայլերը հայտնի են ընթերցող հասարակայնությանը թե՛ մեր և թե՛ բոլշևիկյան մամուլից»:[858]

Առաջնորդվելով մայիսի 10–ի խորհրդակցությունում Ս. Օրջոնիկիձեի ելույթի ոգով՝ «լայն ճակատով չարունակել պայքարն ազգայնականության (նացիոնալիզմ) դեմ», ստալինյան ղեկավարությունը սաստկացրեց բռնությունները «հակախորհրդային» ուժերի դեմ: Հայերի պահանջները ոչ միայն չհարգվեցին, այլև ի վնաս Հայաստանի կատարվեցին նոր սահմանաձևումներ: 1927 թ. օգոստոսի 13–ին ստորագրվեց հայ–վրացական նոր համաձայնագիր՝ ՀՍԽՀ Լենինականի և ՎՍԽՀ Ախալքալաքի գավառների վարչատնտեսական սահմանների անցկացման մասին, որը հաստատվեց Անդրֆեդերացիայի Կենտգործկոմի նախագահության 1929 թ. փետրվարի 18–ի նիստում: Այս անգամ ևս նիստի մասնակիցների մեծամասնությունը վրացիներ ու ադրբեջանցիներ էին: Ինչպես կարելի էր սպասել, կայացված որոշմամբ դարձյալ անտեսվում էին հայերի շահերը: Մերժվում էր Լենինականի գավառի Դարաքյոյ գյուղին (այժմ՝ Շիրակի մարզի Աչոցքի ենթաշրջանի Սարագյուղ) վրաստանից 80 դեսյատին հող հատկացնելու հայկական կողմի խնդրանքը: Մանրամասնորեն նշվում էր Լենինական–Ախալքալաք հատվածում հայ–վրացական սահմանագիծը, որն իբրև թե այլևս փոփոխման ենթակա չէր:[859] *Սակայն հետագայում ևս, մինչև 1933 թ. կրկին եղան մասնակի վերաձևումներ, որոնց արդյունքում ՀՍԽՀ–ն ունեցավ տարածքային նոր կորուստներ:*[860]

Այսպիսով՝ սահմանային հարցերում մնալով միայնակ խորհրդային Ադրբեջանի և Վրաստանի ավելի ազդեցիկ բոլշևիկների և

---

[857] Աբեղեան Ա., նշվ. աշխ., էջ 336:
[858] Յառաջ, 1928, 28 հուլիս, էջ 2:
[859] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 112, ց. 2, գ. 1405, թթ. 171–174: Լոռու հատվածում հայ–վրացական սահմանագիծն անցկացվեց ըստ Անդրկենտգործկոմի նախագահության 1929 թ. սեպտեմբերի 2–ի նիստի որոշման (ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 112, ց. 2, գ. 1412, թ. 84, 87–88):
[860] Սահակյան Ա., նշվ. աշխ., էջ 50:

նրանց աջակցող կենտրոնի առջև, խիստ թուլացած Հայաստանի ղեկավարությունը, ի վերջո տեղի տվեց: Զանգվածային բռնամիջոցների չնորհիվ խորհրդային իշխանությանը հաջողվեց լռեցնել ինչպես ջավախքցիներին, այնպես էլ հարևան հանրապետություններին անցած տարածքների հայությանը:

Հետագա տարիներին, ստալինյան բռնատիրության ամրապնդման պայմաններում հիմնահարցը մոռացության տրվեց, առավել ևս, որ կամա թե ակամա, բնակչության մեջ գերակչռեց խնդիրը «ինտերնացիոնալ բարեկամության» չրջանակներում լուծելու մոտեցումը, իսկ տարածքային վերաձևումների փորձերը դարձան անընդունելի ու խիստ վտանգավոր: Հարցը բարձրացնող անձանց մեծ մասը 1930–ական թվականներին բռնադատվեց:

Ախալքալաքի նախկին գավառի մեծ մասից կազմվեց նույնանուն վարչական գավառը (հետագայում՝ չրջան):[861] Հյուսիսային գյուղերից Տաքածղուրին, Մոլիտը և Ջխարոլան մտցվեցին Բորժոմի, իսկ Դամալան՝ ավելի ուշ կազմավորված Ասպինձայի չրջանների մեջ: 1930 թ. Ախալքալաքի չրջանից անջատվեց նրա հարավարևելյան մասը՝ կազմելով Բոգդանովկայի (այժմ՝ Նինոծմինդա) չրջանը:

Խորհրդային իշխանության տարիներին քաղաքական ու սոցիալ–տնտեսական լծակների անբաբեներպաստ ներգործության հետևանքով սկսված բնակչության արտահոսքը դարձավ Ջավախքի ժողովրդագրական իրադրությանը բնորոշող երևույթ: Այդ առումով պատահական չէր, որ բնակչության տոկոսային հարաբերության տեսակետից, ի թիվս հայկական այլ տարածքների, երկրորդ աչխարհամարտի տարիներին Ախալքալաքն ունեցավ մարդկային ավելի մեծ կորուստներ: Բավական է նչել, որ պատերազմի օրերին բանակ զորակոչված 12684 ախալքալաքցիներից զոհվեց (մասամբ անհետ կորածներ) 7788–ը, այսինքն՝ 61,4 %–ը:[862]

Էթնիկական «մաքրազարդման» ենթարկվեցին նաև մեսխեթցի թուրքերը, որոնց դավաճանության մեղադրանքով ստալինյան ղեկավարությունը 1944 թ. ամռանը Ախալցխայի, Ադիգենի, Ասպինձայի և Ախալքալաքի չրջաններից աքսորեց Միջին Ասիա: Տեղի հայե-

---

[861] Ախալքալաքի գավառի հարավային սահմանագիծն ըստ Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի պայմանագրի անցնելու էր 1829 թ. Ադրիանապոլսի պայմանագրով նախատեսված գծով (տե՛ս ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 113, ց. 3, գ. 56, թ. 28, 38–39):

[862] Մելքոնյան Ա., Ջավախք. պատմության ուրվագծեր, էջ 44, 49:

րին արգելվեց զբաղեցնել Թուրքերից դատարկված գյուղերը: Իմերեթիայից զանգվածաբար այս շրջաններ տեղափոխվեցին վրացի վերաբնակիչներ, որոնց կառավարությունը տեղավորեց մեսխեթցիների բնակավայրերում: Վրաստանի ղեկավարության ժողովրդագրական այդ միջոցառման հետևանքով հայաշատ Ախալցխայի և Ախալքալաքի շրջանների միջև ի հայտ եկավ վրացաբնակ Ասպինձան: Միևնույն ժամանակ, 1946–1949 թթ. զգալի թվով հայեր Վրացական ԽՍՀ հայաբնակ շրջաններից, այդ թվում Ջավախքից, աքսորվեցին Ալթայի երկրամաս և Սիբիր:

1950–70-ական թվականներին տնտեսական և քաղաքական չարժառիթներով հայ բնակչության արտահոսքը Հայկական ԽՍՀ, Հյուսիսային Կովկաս և նախկին ԽՍՀՄ հանրապետություններ, մեծ չափեր ընդունեց: Ահա թե ինչու բարձր ծնելիությամբ և ընտանիքների բազմանդամությամբ աչքի ընկած Ախալքալաքի և Բոգդանովկայի շրջաններում (որոնք միասին հիմնականում կազմում էին նախկին Ախալքալաքի գավառի կամ պատմական Վերին Ջավախքի տարածքը) 1989 թ. բնակչության ընդհանուր թիվը հասավ սոսկ 1917 թ. մակարդակին՝ 105 հազար մարդու:

1989 թ. ապրիլին Աջարիայում տեղի ունեցած երկրաշարժից անօթևան մնացած կամ մասնակիորեն տուժած աջարներին վրաց կառավարությունը չհապաղեց բնակեցնել Ախալքալաքի վրացական մի քանի (Կոթելիա, Հոկամ, Գոգաշեն, Ջունչխա և այլն) և Բոգդանովկայի ռուս դուխոբորների գյուղերում՝ վերաբնակիչների համար կառուցելով երկհարկանի առանձնատներ: Նկատենք, որ խորհրդային իշխանության յոթ տասնամյակների ընթացքում Ախալքալաքն ու Բոգդանովկան այդպիսի մեծ ծավալի պետական շինարարություն չէին տեսել: Այդուհանդերձ, Ջավախքի ժողովրդագրական իրավիճակը փոխելու այդ հերթական քայլն արդյունք չտվեց: Բնակլիմայական ծանր պայմանները աջարների զգալի մասին ստիպեցին վերադառնալ իրենց նախկին բնակավայրերը:

Ներկայումս Ջավախքն ու նրան հարակից հայաբնակ մյուս շրջաններն ապրում են դժվարին օրեր: Այդ տարածաշրջանը խորհրդային ժամանակաշրջանում լիովին անտեսված էր վրացական իշխանությունների կողմից: Վրաստանի անկախացումից հետո ինչպես Ջավախքի, այնպես էլ ողջ Հանրապետության Հայության նկատմամբ, հատկապես 1990-ական թթ. սկզբին՝ Զվիադ Գամսախուրդիայի նախագահական շրջանում, ավելի ուժեղացավ ազգային խտրակա-

նուիրյունը: Թբիլիսիում և այլ խոշոր քաղաքներում հայերին վստահում էին պաշտոնները՝ միայն ազգանունները փոխելու, վրացի դառնալու պայմանով: Ախալքալաքի և Վրաստանի հարավում ընկած մյուս հայաշատ շրջանները մտցվեցին այսպես կոչված «21 կիլոմետրանոց գոտու» մեջ, որտեղ արգելվեց հողի սեփականաշնորհումը, առուվաճառքը: Ջավախքը ազգային կազմի միատարրությունից զրկելու համար Ախալքալաքի, Ախալցխայի, Նինոծմինդայի, Ասպինձայի և Ադիգենի շրջանները միավորեցին վարչական մեկ նահանգի մեջ, որի կենտրոն դարձավ հետզհետե վրացացող Ախալցխա քաղաքը: Դրանով Ախալքալաքն ու Նինոծմինդան դադարեցին անգամ ինքնուրույն վարչական շրջան լինելուց, Ջավախահայությունը կորցրեց Թբիլիսիի հետ ուղղակի հարաբերվելու հնարավորությունը: Վարչական հիմնարկների մեծ մասը տեղափոխվեց Ախալցխա: Գործող ընտրական օրենքով, որը ենթադրում է խորհրդարանի պատգամավորության թեկնածուությունների առաջադրում միայն կուսակցական սկզբունքով, հայ բնակչությունը, որը չունի պաշտոնապես գրանցված կազմակերպություններ, հայտնվեց անհավասար պայմաններում:

Հատկապես ծանր է Ջավախքի տնտեսական վիճակը: Աչխատատեղերի բացակայությունը, ազգային խտրականության առկայությունը, վրացական իշխանությունների նկատմամբ հիմնավորված անվստահության աճը, էլեկտրաէներգիայի մատակարարման անմխիթար վիճակը, հազարավոր մարդկանց հարկադրում են թողնել հայրենի բնակավայրերն ու արտագաղթել Ռուսաստան և այլ երկրներ:

Հայության չրջանում մեծ անհանգստություն առաջացրեց Ախալքալաքում տեղակայված ռուսական զինտեխնիկայի դուրսբերման գործընթացը 2000 թ. հոկտեմբեր–նոյեմբեր ամիսներից: Հայերը ռուսական զորամասի ներկայությունը հոգեբանորեն ընկալում են ոչ միայն իբրև իրենց ապահովության երաշխիք, այլև աչխատատեղեր ունենալու միակ հնարավորություն, քանզի բազմաթիվ ախալքալաքցիներ ծառայում են կամ աչխատում այդ զորամասում:

Անմխիթար վիճակում է նաև Ջավախքի կրթամշակութային կյանքը: Տարիներով հայկական դպրոցների ուսուցիչները չեն ստանում աչխատավարձ: Դպրոցների մեծ մասը կիսաքանդ վիճակում է: Լիովին խաթարված է հոգևոր–եկեղեցական կյանքը: Ախալքալաքում և Նինոծմինդայում բնակչությանը հոգևոր ծառայություն են

մատուցում ընդամենը երկու քահանաներ: Նյութական ծանր վիճակում են թոշակառուները, Ջավախքցի ազատամարտիկները:

Այդուհանդերձ, այսօր պատմական Ջավախքն իր երկու շրջաններով, հիմնականում հայաբնակ մոտ 100 գյուղերով և ավելի քան 100 հազար բնակչությամբ (95 %–ը՝ հայեր, հարևան Ախալցխայի, Ասպինձայի և Ծալկայի շրջաններում հաշվվում է մոտ 30 հայկական գյուղ՝ 60 հազ. հայ բնակիչներով) Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունների տարածքից դուրս գտնվող ամենամիատարր հայաբնակ երկրամասն է, որը ծանրագույն սոցիալ–տնտեսական ու քաղաքական պայմաններում իսկ, չարունակում է ապրել իր հայաշունչ և հայեցի կյանքով:

Ջավախքի պատմության չարադրանքից երևում է, որ այս ինքնատիպ երկրամասը, անցնելով դարերի խորքով, հաճախ է ենթարկվել ավերածությունների, բնակչության արտագաղթի ու կոտորածների, երբեմն էլ դարձել բախտակից ժողովուրդների՝ հայերի ու վրացիների հակամարտության թատերաբեմ: Սակայն, բարեբախտաբար, գերակշռել է համերաշխ ապրելու, երկու ազգերի ընդհանուր շահերը մասնակի շահերից վեր դասելու երկուստեք ձգտումը: Այսօր, հայ–վրացական միջպետական ներդաշնակ հարաբերությունների պայմաններում, պատահական չէ, որ սոցիալ–տնտեսական ծանրագույն պայմաններում գտնվող Ջավախքը, ոչ միայն չի դիտվում որպես հայ–վրացական քաղաքական հակամարտության, առավել ևս՝ անջատողականության դրսևորման գոտի, այլև ընկալվում է՝ երկու ժողովուրդների հետագա մերձեցման ու դարավոր բարեկամության խորացման տարածաշրջան: Այդ իմաստով դարձյալ անհրաժեշտ է հիշել, որ պատմությունը, խնդրի գիտականորեն անաչառ հետազոտությունը մեկ բան է, այսօրվա քաղաքական իրողությունները ճիշտ հասկանալու, ծառացած խնդիրները համատեղ, քաղաքակիրթ եղանակով լուծելու և հայ–վրացական բարեկամությունը սրբորեն պահպանելու ու ամրապնդելու հրամայականը՝ մեկ այլ բան:[863]

---

[863] Հայ–վրացական ներկա փոխհարաբերությունների, Ջավախքի այսօրվա խնդիրների, դրանց լուծման ուղիների մասին տե՛ս Мелконян А., Уроки армяно–грузинских отношений и проблема Джавахка, Կանքեղ, Գիտական հոդվածների ժողովածու, h. 2, Ե., 2001, էջ 166–179, Melkonyan A., Lessons of Armeno–Georgian relations and the current situation, 2nd Armenian–Georgian political and intellectual dialogue, Tbilisi and Yerevan, 12–14 april, 2000, London, 2000, p. 10–14.

Հայ և վրաց ժողովուրդների ընդհանրական ու կենսական շահերը ամեն ինչից վեր դասելու վերաբերյալ մեր միտքն ավելի ցցուն դարձնելու համար տեղին ենք համարում վկայակոչել զորավար Անդրանիկի և Ջավախքի հարցում հայկական կողմի մոտեցումներն անգիջում կերպով պաշտպանելու դիրքորոշման կողմնակից Արշակ Ջամալյանի կարծիքները:

1919 թ. մայիսի սկզբին Անդրանիկի հետ հանդիպման ժամանակ Վրաստանի արտգործնախարար Ե. Գեգեչկորին փորձում է 1918 թվականի հայ–վրացական պատերազմի սանձազերծման ողջ մեղքը բարդել Հայաստանի կառավարության վրա՝ այդ հարցում ակնկալելով զորավարի դրական պատասխանը: Սակայն ստացվում է իրապես իմաստուն, ժողովրդական հերոսին վայել պատասխան. «Քննությունն չպիտի ընեմ, թե որ մեկն է մեղավոր: Եթե դուք այս երկու ժողովուրդներուն մեջ սիրո խարիսխը չի դնեք, երկուքն ալ պիտի տուժեն: Տարբերությունը պիտի ըլլա ձեր և մեր՝ մեկ գիշեր: Իրիկունը մեր դիակը պիտի վերցնեն, առավոտն ալ՝ ձերը»:[864]

Իսկ Ա. Ջամալյանը, 1920–ական թվականներին հայ–վրացական խնդիրների շուրջ սփյուռքահայ մամուլում հանդես գալով վրաց վտարանդիական գրականության սուր քննադատությամբ, չէր մոռանում հիշեցնել, որ Ջավախքի ու Լոռի–Փամբակի հարցի ռազմական լուծումը, նույնիսկ հայերի համար ցանկալի ելքի դեպքում, անթույլատրելի է, և բոլոր միջոցներով անհրաժեշտ է կանխարգելել: «Մեր պարտության դեպքում,– գրում էր նա,– վրացիք ոչինչ չպետք է շահին – անգամ եթե նրանք իրենց սահմանների մեջ առնեն Լոռին և Փամբակը, որ երբեք մարսել չեն կարող: Բայց թուլացնելով մեզ՝ իրենք ևս կթուլանան Մերձավոր Արևելքի և կովկասյան ժողովուրդների դրացիության մեջ: Վրացիների պարտության դեպքում մենք, նույնիսկ եթե մի Ախալքալակի փոխարեն երկուսին տիրանանք, դարձյալ չենք կարող հավասարակշռել այն վնասը, որ պետք է ստանանք վերոհիշյալ ժողովուրդների դրացիության մեջ մեզ մինակ զգալով: Բացի սրանից՝ երկու դեպքում էլ հայերի և վրացիների միջև ատելության և թշնամության մի շրջան պետք է բացվի՝ փոխադարձաբար ջլատելով նրանց ուժերը և կորստյան անդունդը գլորելով երկուսին էլ»:[865]

---

[864] Գրական թերթ, 1964, 18 դեկտեմբեր: Հմմտ.՝ Աղայան Ծ.,Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, էջ 700:

[865] Ջամալեան Ա., Իմ պատասխանը «Պրոմեթե»–ի և «Անկախ Վրաստան»–ի հրապարակագիրներին, Յառաջ, 1928, 11 հուլիս, թիվ 696, էջ 2:

Р Е З Ю М Е

АШОТ МЕЛКОНЯН

ДЖАВАХК В XIX – ПЕРВОЙ ЧЕТВЕРТИ XX ВВ.

В первой главе /"Джавахк в древние и средние века"/ особое внимание уделено истории Джавахка как одного из девяти гаваров /провинций/ *ашхара* /области/ Гугарк, находившейся на севере царства Великой Армении. Во II тысячелетии до н. э. он был частью государственного образования Хайаса и упоминался в форме "Забаха" в клинописных надписях царя Аргишти I /786-764 гг. до н. э./.

В VI-III вв. до н. э. Джавахк был в числе северных гаваров царства Ервандидов. Царь Арташес I /189-160 гг. до н. э./ вновь воссоединил Джавахк, в составе ашхара Гугарк, к Армянскому царству, в составе которого он оставался до падения династии Аршакидов. При правлении Аршакидов гавар упоминался как земельное владение нахарарского дома Вардзавуни.

В 428 г. Сасаниды включили эти земли в состав Персидского государства. Во второй половине VII в. край захватили арабы. В X веке он был в составе царства армянских Багратидов, после падения которых в середине XI в., вплоть до нашествия турок-сельджуков, недолгий период подчинялся Грузинскому государству. С конца XII в., в числе других гаваров Северной Армении, Джавахк со своими крепостями Тмук /Тмка-берд/ и Ахалкалак /Новый город/, был отдан как наследственное земельное владение армянским Захаридам. Армянским духовным центром был Зреск.

После свержения монгольского ига, в 1266 г. эти земли вошли в состав княжества Самцхе - Джавахк, а в 1587 г. были захвачены турками - османами и вошли в состав эялета Члдыр /позже - Ахалцха/, как отдельный санджак /гавар/.

Джавахк издревле был населен армянами, об этом свидетельствуют как армянские, так и грузинские, арабские, турецкие и другие источники. По данным грузинского историка Леонти Мровели, в начале IV в., во время распространения христианства святой Нуне /грузинской Нино/, разговорным языком населения Джавахка был армянский.

По данным турецких налоговых реестров XVI-XVIII вв., в населенных пунктах Джавахка и прилегающих гаваров в основном проживали армяне. Такие же сведения встречаются в трудах знаменитых географов, грузинского автора Вахушти Багратиони, члена конгрегации мхитаристов Гукаса Инчичяна и других.

Во второй /"Джавахк в первом тридцатилетии XIX в."/ и третьей /"Ахалкалакский уезд в составе Российской империи в 1828-1917гг."/ главах рассмотрены вопросы истории Джавахка в начале XIX в. — первом десятилетии XX вв. Джавахк, в числе других областей Южного Кавказа, оказался в сфере внешнеполитичских интересов Российской империи. В июле 1828 г. русские войска под командованием генерала И. Ф. Паскевича заняли центр Джавахка - Ахалкалак. В 1830 г. 7300 армянских семейств из областей Западной Армении - Эрзрум, Басен, Баберт, Дерджан и других, под предводительством архиепископа Карапета Багратуни, переселились и обосновались в районах Ахалцха, Ахалкалака и Цалки /гавар Трехк исторической области Гугарк/, восстановив и вновь основав 60 деревень и 50 церквей. В результате этого переселения вновь восстановился армянский этнический облик Джавахка. Наряду с местными 1716 семействами /около 10-11 тысяч чел./ армян, 639 семействами магометан и 179 семействами грузин, здесь поселилось около 58 тысяч западных армян.

В 1840 г. Ахалкалакский уезд, который занимал основную территорию прежнего турецкого санджака, был включен сначала в состав Грузино-Имеретинской губернии, затем - в состав Тифлисской губернии, а в 1874 г. был преобразован в самостоятельный уезд.

В 1841-1843 гг., сосланные из различных областей России русские сектанты-духоборы, обосновались в южных частях уезда (ныне Ниноцминдский район) и основали 8-9 селений.

В 1886 г. в уезде насчитывалось 110 селений, которые объединялись в 10 сельских общин. Их населяло примерно 63,8 тысяч человек, из которых 48386 были армянами. Количество армян было преобладающим не только в деревнях, но и в городе Ахалкалаки (в 1893 г. из 4303 жителей города 4084 были армянами).

После преобразования Ахалкалака в отдельный уезд Тифлисской губернии серьезных территориальных изменений не произошло. В конце XIX в. он занимал территорию в 2392,86 кв. верст (249255 десятин) или 2723,12 кв. км. До начала первой мировой войны картина этнического состава населения уезда была следующая:

Годы	Армяне	Грузины	Рус..	Греки	Евреи	Мусул.	Другие	Итого
1886	46386	3735	6674	102	53	6824	14	63788
1894	49807	3714	7272	56	52	4962	6	65869
1897	48403	6322	4750	35	22	6827	910	67269
1914	81014	6905	7185	-	-	3036	19	98159

Процентное соотношение народов, населяющих уезд, представляется таким:

Годы	Армяне	Грузины	Русские	Греки	Евреи	Мусул.	Другие
1886	72,7%	5,8%	10,4%	0,1%	0,08%	10,7%	0,02%
1894	75,6%	5,6%	11%	0,08%	00,7%	7,5%	0,09%
1897	72%	9,3%	7%	0,05%	0,03%	10,1%	1,3%
1914	82,5%	7%	7,3%	-	-	3%	0,01%

Очевидно, что армянское население за весь этот период количественно постоянно преобладало. Благодаря высокой

рождаемости, накануне первой мировой войны относительный вес армян достиг 82,5%, и наоборот, процентное соотношение мусульман, ввиду постоянной эмиграции, снизилось. Процентное соотношение грузинского и русского населения, в основном оставалось постоянным, колеблясь между 6-10%.

В период русского владычества Ахалкалакский уезд пережил заметный социально-экономический и культурный подъем. Ахалкалак стал центром ремесленничества, а деревни стали играть важную роль в Закавказье, как производители зерна и мясной продукции.

В начале 1830 г. по инициативе архиепископа Карапета открылись мужские школы – "Карапетян" в Ахалцихе, "Месропян" в Ахалкалаке.

В 1856 г. было завершено восстановление церкви Сурб Хач. В 1870 г. открылась женская школа "Сандухтян", а в начале 80-х гг. - русская школа, в 1889 г. - городское училище. Был также создан театральный кружок.

В конце XIX в. в Ахалкалаке усилиями Дж. Тер-Григоряна и П. Абеляна была создана освободительная организация. Свою деятельность в ней развернула партия Дашнакцутюн. Идеи освобождения Западной Армении нашли горячий отклик в среде ахалкалакцев, значительная часть которых по происхождению были выходцами из Западной Армении, и хранили духовную связь со своей родиной - Эрзрумом. Джавахк дал таких национальных деятелей, как Ов. Качазнуни, Амо Огаджанян, Рубен Тер-Минасян, Рубен Дарбинян; писателей Ваана Терьяна, Дереника Демирчяна, ашуга Дживани и многих других.

В четвертой главе /"Джавахк в 1917-1923 гг."/ показано, что в результате вторжения в мае 1918 г. в Ахалкалакский уезд турецких войск, подавляющее большинство населения ушло в Бакуриани и в

район Цалки. Из 80 тыс. армянских беженцев, 30-35 тыс. чел. погибли. В конце ноября 1918 г., после ухода из уезда турецких войск, территориальные претензии на Джавахк предъявила меньшевистская Грузия. Армяно-грузинская война, вызванная территориальными спорами из-за Ахалкалака и Лори, прекратилась в декабре 1918 г. при посредничестве Англии. Под нажимом англичан Джавахк временно был отдан под контроль Грузии, однако Республика Армения в течение всего периода своего существования (1918-1920 гг.) не прекращала усилий по возвращению Джавахка в пределы родины. Руководство Советской Армении (Ал. Мясникян, Ал. Бекзадян и др.), идя навстречу стремлениям населения Джавахка, также выступило с требованием о воссоединении Ахалкалака и соседней Цалки с Арменией. Однако грузинские и азербайджанские большевики, действуя совместно, смогли в июле 1921 г. решить вопрос о насильственном включении Ахалкалака, а также других армянских территорий в состав Советской Грузии и Советского Азербайджана. Вскоре прежний Ахалкалакский уезд в составе Грузинской ССР был административно разделен между Ахалкалакским и Богдановским (ныне Ниноцминдовским) районами.

В настоящее время исторический Джавахк с его двумя районами, в основном населен армянами и включает 100 сел с более чем со 100-тысячным населением (95% армяне). В соседних Ахалцихском, Аспиндском и Цалкском районах насчитывается около 30 армянских сел с 60-тысячным населением. Джавахк, является моноэтническим регионом вне Республики Армения и, несмотря на тяжелое социально-экономическое и политическое положение, сохраняет свою армянскую национальную самобытность.

SUMMARY

ASHOT MELKONYAN

JAVAKHK IN THE 19th CENTURY AND THE FIRST QUARTER OF THE 20th CENTURY

In Chapter I ("Javakhk in Ancient and Medieval Times") a special attention is paid to the history of Javakhk - one of the nine *gavars* (regions) of the *ashkhar* (province) of Gugark in the north of the Kingdom of Great Armenia. In the second millennium B.C. it constituted a part of the state formation of *Hayasa*. In the first millennium it is mentioned in the form of *Zabakha* in the cuneiform inscriptions of King Argishti I (786-764 B.C.).

In the 6th – 3 rd centuries B.C. Javakhk was one of the northern *gavars* of the Eruandid Kingdom. King Artashes I (189-160 B.C.) again reunited Javakhk, within the province of Gugark, with the Armenian Kingdom and it remained a part of it until the fall of the Arshakid dynasty. At the time of the Arshakids the *gavar* was mentioned as a domain of the Vardzavuni princedom.

In 428 A.D. the Sasanians included that region into the Persian state and later, in the second half of the 7th century it was conquered by the Arabs. In the 10th century it formed a part of the Armenian Bagratid Kingdom and after its fall in the middle of the 11th century, for a short period, it was submitted to the Georgian Kingdom up to the time of the Seljuk-Turkic invasions. Since the end of the 12th century Javakhk with its Tmuke castle (Tmka-berd) and Akhalkalak (*New Town*) among other *gavars* of Northern Armenia was given to the Armenian Zakarians as a hereditary domain. *Zresk* was an Armenian spiritual center of that region.

After the fall of the Mongol yoke in 1266 A.D. the region became a part of the principality of Samtskhe-Javakhk. In 1587 A.D. it was occupied by

the Ottoman Turks and included in the Çhldr (then Akhltsikha) *eyalet* (*vilayet*, province) as a separate *sanjak* (region).

From the outset Javakhk was inhabited by the Armenians. It is testified by the Armenian, Georgian, Arabic, Turkish and other sources. According to the Georgian historian Leonti Mroveli, at the beginning of the 4th century A.D., during the time of the Christian preaching of St.Nune (Georgian - Nino), Armenian was the spoken language of the population of Javakhk.

According to the Turkish tax-lists of the16-18th centuries, the towns and villages of Javakhk and neighbouring *gavars* were mostly populated by Armenians. The same testimony can be found in the works of famous geographers, a Georgian author, Vakhushti Bagrationi and a member of the Mkhitarist Congregation, Ghukas Inchichyan, and others.

In Chapter II ("Javakhk in the first three decades of the 19th century") and Chapter III ("The Akhalkalak *gavar* as a part of the Russian Empire in 1828-1917 A.D.") are analyzed questions concerning the history of Javakhk of the period from the beginning of the 19th century until the first decades of the 20th century. At the beginning of the 19th century Javakhk with other *gavars* of the Southern Caucasus appeared in the sphere of the foreign policy of the Russian Empire. In July of 1828 the troops under the command of general I.F.Paskevich conquered Akhalkalak - the center of Javakhk. In 1830, 7300 Armenian families, headed by Karapet Archbishop Bagratuni, migrated from Erzerum, Bassen, Baberd, Derjan and other *gavars* of Western Armenia and settled in the region of Akhaltskha, Akhalkalak and Tsalka (*gavar* Trekhk of the historical province of Gugark), reconstructing and founding more than 60 villages and 50 churches. Owing to that migration the former Armenian image of Javakhk was restored. 58,000 Western Armenians settled alongside 1716 local Armenian (about 10-11,000 people), 639 Muslim and 179 Georgian families.

In 1840 the Akhalkalak gavar *(uezd)* was involved in the Georgian-Imeretian province, then - in the Tiflis province and in 1874 became a self-dependent *gavar.*

In 1841-1843 the exiled Russian sectarians (*doukhobors*) from different parts of Russia settled in the southern part (nowadays the Ninotsminda region) of the Akhalkalak *gavar* founding 8-9 villages there.

In 1886 there were 110 villages in Javakhk which constituted 10 village-communities with a population of about 63,000 people of whom 46,386 were Armenians. They comprised the most of the population as in villages, as well as in Akhalkalak (in 1893 of the 4303 town population 4084 were Armenians).

Akhalkalak formed a separate *uezd* in the Tiflis province without undergoing serious territorial changes. In the last decade of the 19th century it formed 2392,86 sq. verst (249255 desyatin) or 2723,12 sq. km. Until the First World War the demographic situation in the Akhalkalak *gavar*, according to nationalities, was the following:

Years	Armen.	Georg.	Russ.	Greeks	Jews	Muslims	Others	Total
1886	46386	3735	6674	102	53	6824	14	63788
1894	49807	3714	7272	56	52	4962	6	65869
1897	48403	6322	4750	35	22	6827	910	67269
1914	81014	6905	7185	-	-	3036	19	98159

Putting in comparison the data of this table, let's present the percentage ratio of nationalities, correlated with the whole population of the Akhalkalak *gavar*:

Years	Armenians	Georgians	Russians	Greeks	Jews	Muslims	Others
1886	72,7%	5,8%	10,4%	0,1%	0,08%	10,7%	0,02%
1894	75,6%	5,6%	11%	0,08%	00,7%	7,5%	0,09%
1897	72%	9,3%	7%	0,05%	0,03%	10,1%	1,3%
1914	82,5%	7%	7,3%	-	-	3%	0,01%

It is obvious that the Armenian population constantly preserved priority in number. On the eve of the First World War, owing to high birth-rate, the share of the Armenians' number in the whole population of the Akhalkalak *gavar* reached 82,5%, and of the Muslims – decreased, due to a permanent migration. The percentage ratio of the Georgian and Russian population mainly remained the same, varying within the limits of 6-10%.

In the period of the Russian domination, the Akhalkalak *gavar* was in a process of social-economic and cultural rise. Akhalkalak became a craft centre, villages began to play an important role in the grain and meat production.

At the beginning of the 30s of the 19th century "Karapetyan school" was opened in Akhaltskha and "Mesropyan school" in Akhalkalak by the initiative of Karapet Archbishop.

In 1856 the reconstruction of the church of St. Cross was finished. In 1870 the Sandkhtian girls' school was opened and in the 1880s - a Russian school, in 1889 – a college and a theatre group was founded.

At the end of the 19th century J. Ter-Grigorian and P.Abelian formed a liberating group. The *Dashnaktsutiun* party began to act here. The ideas of liberation of Western Armenia penetrated the circles of the Akhalkalakians who, being Western Armenians themselves, kept their links with the land of their ancestors - the province of Erzerum. Javakhk gave such famous national figures as Hovhannes Kajaznuni, Hamo Ohanjanian, Ruben Ter-Minasian, Ruben Darbinian, writers Vahan Terian and Derenik Demirtchian, poet Jivani and many others.

In Chapter IV ("Javakhk in 1917-1923") are analyzed materials which show that in 1918 the most of the population migrated to the Bakuriani forest and the Tsalka region because of the Turkish invasion in the Akhalkalak region. 30-35,000 Armenians of the migrated 80,000 died. At the end of November, after the Turkish troops left the region, Menshevik Georgia claimed the Javakhk territory.

In December the Armenian-Georgian war for Akhalkalak and Lori ended by the mediation of Britain. Though Javakhk was put under Georgia's control by the pressure of Britain, the Republic of Armenia during its existence (1918-1920) persistently applied efforts to return it within the borders of the Motherland. The leadership of Soviet Armenia (Al.Bekzadyan, Al.Myasnikyan and others) to meet the wishes of the population also demanded to reunite Akhalkalak and neighbouring Tsalka with the Motherland. But the Georgian-Azerbaijani Bolsheviks, acting together, in July 1921 forcibly annexed Akhalkalak, as well as other Armenian territories, giving them to Soviet Georgia and Soviet Azerbaijan. Soon the former Akhalkalak *gavar,* within the borders of the Georgian SSR, was administratively divided into the regions of Akhalkalak and Bogdanovka (now Notsminda).

Nowadays historic Javakhk, with its two regions is mainly Armenian populated with 100 villages and more than 100,000 people (95% Armenians). There are about 30 Armenian villages with 60000 population in neighbouring regions of Akhaltskha, Aspindza and Tsalka. Javakhk is a homogeneously Armenian populated region out of the Republic of Armenia and notwithstanding social-economic and political hardship, it preserves its Armenian originality.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Սկզբնաղբյուրներ

Ա) Ձեռագիր աղբյուրներ

Ի. Մատենադարան

1. 1. Արխիվային բաժին: Ձեռագիր թիվ 1737, 10195:
1. 2. Ալեքսանդր Երիցյանի արխիվ, թղթապանակ 156, վավերագիր 131:
1. 3. Լազարյանների արխիվ, թղթ. 105, գործ 13, վ. 192:
1. 4. Կաթողիկոսական դիվան, թղթ. 58, վ. 188, թղթ. 64, վ. 506, 507, թղթ. 68, վ. 411, թղթ. 86, վ. 269, թղթ. 90, վ. 56, 69, թղթ. 91, վ. 150, թղթ. 129, վ. 68, 188, թղթ. 257, վ. 304ա (պ.):
1. 5. Կարապետ արքեպիսկոպոսի արխիվ
   թղթ. 163ա, վ. 305:
   թղթ. 163զ, վ. 1010, 1012, 1016, 1022, 1028, 1136, 1173, 1176, 1179, 1180, 1181, 1182, 1183,1185, 1187, 1188, 1192, 1206, 1216, 1218, 1223, 1227, 1230, 1231, 1250, 1252, 1262, 1367:
   թղթ. 163ղ, վ. 1292, 1310,1331,1344,1367, 1403, 1415, 1424, 1476,1507,1509:
   թղթ. 163ե, վ. 66, 77, 78, 79, 90, 102, 119, 134, 136,161:
   թղթ. 163զ, վ. 264:
1. 6. Հարություն Աբրահամյանի արխիվ, թղթ. 99, վ. 11, 41:
1. 7. Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վ. 906, 1170:
1. 8. Պատկանյանների արխիվ, թղթ. 142, վ. 170:
1. 9. Զանազան հեղինակների արխիվ, թղթ. 54, c. 13 (1), 13(2),

ԻԻ. ՀՀ Պատմության կենտրոնական պետական արխիվ (ՀՀ ՊԿՊՄ)

1. 10. ֆոնդ 35, g. 1, գ. 103:
1. 11. ֆ. 53, g. 1, գ. 2418, 2961, 3230, 3800, 3805, 3809, 3814, 3820, 3828, 3833, 3839, 3848, 3850, 3856, 3859, 3892, 3893, 3931, 3964, 3993, 3998, 4002, 4077:
1. 12. ֆ. 56, g. 1, գ. 3245:
1. 13. ֆ. 114, g. 2, գ. 3:
1. 14. ֆ. 200, g. 1, գ. 17, 56, 104, 191, g. 2, գ. 165:
1. 15. ֆ. 206, g. 1, գ. 2, 84:
1. 16. ֆ. 276, g. 1, գ. 104:

III. ՀՀ Նորագույն պատմության կենտրոնական պետական արխիվ (ՀՀ ՆՊԿՊԱ)

1. 17. ֆ. 112, g. 1, գ. 95, g. 2, գ. 1405, 1412:
1. 18. ֆ. 113, g. 3, գ. 3, 15, 42, 55, 56, 75, 116:
1. 19. ֆ. 114, g. 2, գ. 3, 12, 24, 46, 56, 136:
1. 20. ֆ. 128, g. 1, գ. 674:

IV. ՀՀ հասարակական - քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի կենտրոնական պետական արխիվ (ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ)

1. 21. ֆ. 1, g. 1, գ. 122 :
1. 22. Հավաքածու 1, գ. 2, 7:

V. ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի արխիվ (ՀՀ ԳԱԱ ՊԻԱ)

1. 23. Լեոյի անձնական ֆոնդ 1, g. 1, գ. 27, 28, 54, 242, 264, 389:

VI. Ախալքալաքի գավառագիտական թանգարան

1. 24. գ. 3674, 3701, 3709:

VII. Центральный государственный исторический архив Грузии (ЦГИАГ)

1. 25. фонд 2, Главнокомандующий в Грузии, опись 1, дело 4, 26, 28, 79, 89, 1990, 2236, 2542, 2575, 2594, 3396, 4587, 4619.
1. 26. ф. 7, оп. 11, д. 1.
1. 27. ф. 11, Дипломатическая канцелярия главнокомандующего закавказским краем, д. 418, док. 713.
1. 28. ф. 16, Грузинский гражданский губернатор, оп. 1, д. 436, 1661, 2973, 2981, 2985, 10766.

VIII. Архив внешней политики Российской Федерации (АВПРФ)

1. 29. ф. Главный архив II—3, д. 3, II—19, д. 1.
1. 30. ф. Главный архив III—6, д. 4, 13, ч. 17.

IX. Российский государственный военно—исторический архив (РГВИА)

1. 31. ф. 20, оп. 1/47, д. 549.
1. 32. ф. 114, оп. 2, д. 63.
1. 33. ф. 450, оп. 1, д. 276, 403.

1. 34. ф. ВУА, д. 1019, 2875, ч. 3, 4643.

X. Российский государственный исторический архив в Санкт–Петербурге (РГИА СПб.)

1. 35. ф. 1263, оп. 1, д. 974а, 1192.
1. 36. ф. 1268, оп. 1, д. 9.
1. 37. ф. 1377, оп. 1, д. 5, 29.

2. Տպագիր սկզբնաղբյուրներ

Ա) Հայերեն

2. 1. Աբրահամ Կրետացի, Պատմություն, Ե., 1973:
2. 2. Ագաթանգեղոս, Պատմություն Հայոց, Ե., 1983:
2. 3. Դարբինյան Մ., Վավերագրեր պարսկահայերի և արևմտահայերի 1828-1830 թթ. գաղթի վերաբերյալ, Բանբեր Հայաստանի արխիվների, 1973, թիվ 2, էջ 135-146:
2. 4. Դիւան Հայոց պատմութեան, գիրք Գ, հրատարակեց Գիւտ քահ. Ադանեանց, Թիֆլիս, 1894:
2. 5. Դիվան Հայոց Պատմության. Նոր շարք, գիրք առաջին: Ղուկաս Կարնեցի, հ. Ա, աշխատասիրությամբ՝ Վ. Գրիգորյանի, Ե., 1984:
2. 6. Դիվան հայ վիմագրության, պր. 1, Անի քաղաք, կազմեց Ա. Օրբելի, Ե.,1966:
2. 7. Ջաքարեայ սարկաւագի Պատմութիւն, հ. Ա, Վաղարշապատ, 1870:
2. 8. Թովմա Մեծոփեցի, Պատմագրություն, աշխատասիրությամբ՝ Լ. Խաչիկյանի, Ե., 1999:
2. 9. Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, կազմեց Ա. Խ. Սաֆրաստյան, հ. Ա, Ե., 1961, հ. Բ, Ե., 1964, հ. Գ, Էվլիյա Չելեբի, Ե., 1967:
2. 10. ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, գիրք երկրորդ, Ե., 1950:
2. 11. ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, գիրք առաջին (1401-1450), Ե., 1955:
2. 12. ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն 2 (1451-1480 թթ.), կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Ե., 1958,
2. 13. Կորյուն, Վարք Մեսրոպ Մաշտոցի, աշխատասիրությամբ՝ Ա. Մաթևոսյանի, Ե., 1994:
2. 14. Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի ժողովածու, կազմողներ՝ Գ. Գա-

լոյան, Վ. Ղազախեցյան, Վ. Մելիքյան, Ս. Միրզոյան, Ա. Վիրաբյան, Ե., 2000:
2. 15. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), կազմողներ՝ Ջ. Ս. Կիրակոսյան, Ռ. Գ. Սահակյան, Ե., 1972:
2. 16. Հայերեն ձեռագրերի ժէ դարի հիշատակարաններ (1601-1620), հ. Ա, կազմեցին Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Ե., 1974:
2. 17. Հովհան Մամիկոնյան, Տարոնի պատմություն, Ե., 1989:
2. 18. Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի, Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Գ. Բ. Թոսունյանի, Ե., 1996:
2.19. Ղազար Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց. Թուղթ առ Վահան Մամիկոնեան, քննական բնագիրը՝ Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանցի, Ե., 1982:
2. 20. Ղևոնդ, Պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա. Տեր-Ղևոնդյանի, Ե., 1982:
2. 21. Մանր ժամանակագրություններ, 13-18-րդ դդ., կազմեց Վ. Ա. Հակոբյան, հ. 1, Ե. 1951, հ. 2, Ե., 1956:
2.22. Մատթեոս Ուռհայեցի, ժամանակագրություն, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Հ. Բարթիկյանի, Ե., 1991:
2.23. Մատթէոս Ուռհայեցի, ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898:
2.24. Մեծին Վարդանայ Բարձրբերդեցւոյ Պատմութիւն Տիեզերական, Մոսկվա, 1861:
2. 25. Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն հայոց, Մոսկուա, 1860:
2. 26. Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1881:
2. 27. Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1912:
2. 28. Յովհաննու Մամիկոնեանի եպիսկոպոսի, Պատմութիւն Տարօնոյ, Վենետիկ, 1832:
2. 29. Պատմութիւն սրբոյն Ներսիսի և գիւտ նշխարաց, Սոփերք հայկականք, հ. է, Վենետիկ, 1853:
2. 30. Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893:
2. 31. Սիմեոն Երևանցի, Ջամբռ, գիրք, որ կոչի յիշատակարան, Վաղարշապատ, 1873:

2. 32. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա. Ա. Աբրահամյանի, Ե., 1986:
2. 33. Ստեփաննոսի Օրբելեանի ժամանակագրութիւն, Ե., 1942:
2. 34. Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885:
2. 35. Ստրաբոն. Օտար աղբյուրները հայերի մասին, հ. 1, Ե., 1940:
2. 36. Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, թարգմանեց Լ. Մելիքսեթ-բեկ, հ. Ա-Բ, Ե.,1934, հ. Գ, Ե., 1955:
2. 37. Վրաց ժամանակագրություն (1207-1318), թարգմանությունը հին վրացերենից Պ. Մուրադյանի, Ե., 1971:
2. 38. Ուխտանէս, Պատմութիւն բաժանման վրաց ի հայոց, Վաղարշապատ, 1871:
2. 39. Ուշագրավ տեղեկագիր Կարնո գավառի հայության և 1829-1830 թթ. գաղթի վերաբերյալ, ՊԲՀ, 1974, թիվ 3, էջ 83-96:
2. 40. Փավստոս Բուզանդ, Պատմություն Հայոց, թարգմանությունը և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանի, Ե., 1987:
2. 41. Փափազյան Ա., Թուրքական վավերագրերը Հայաստանի և հայերի մասին (16-19-րդ դարեր), Ե., 1999:

Բ) Ռուսերեն

2. 42. Акты, собранные Кавказской археографической комиссией (АКАК), тт. 1—12, Тифлис, 1866—1904.
2. 43. Армяно—русские отношения в XVIII в., сборник документов, т. 3, Е., 1978.
2. 44. Армянский вопрос и геноцид армян в Турции (1913—1919), сборник (составитель, отв. ред., автор предисловия В. Микаелян), Е., 1995.
2. 45. Ахалкалакский уезд тифлисской губернии. Статистический временник Кавказского края, вып. 2, Т. 1887, с. 1—95.
2. 46. Вахушти Багратиони, История царства грузинского, Т., 1976.
2. 47. Джавахетия, материалы по изучению природных ресурсов ахалкалакского нагорья, Т., 1933.
2. 48. Джаниашвили Л., Несколько аспектов переселения армян в Самцхе—Джавахетию (см. Интернет, http:caucasia. iatp. org. ge/N1/Rus–Resume/Janiashvili. htm):
2. 49. Джихан—нюма и фезляке Кятиба Челеби как источник по истории Армении. Предисловие., перевод и комментарии А. А. Папазяна, Е., 1973.

2. 50. Доклад особой следственной комиссии по обследованию обстоятельств возникновения восстания в Борчалинском уезде и причины войны с Республикой Арменией, პოლიტიკა, ჟურნალი, თბ., 1998, N 4-6, გვ. 4-30.
2. 51. Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, Т., 1919.
2. 52.. Документы, относящиеся к армяно—грузинской войне, ամբվակիր (հավանաբար՝ Բաքու, 1919):
2. 53. Жизнь царицы Тамары, Памятники грузинской исторической литературы, т. V, Т., 1985.
2. 54. Из истории иностранной интервенции в Армении в 1918 г. Документы, Е., 1970.
2. 55. Мартиросян В. М., Чобанян П. А., Документы по истории армяно—грузинских взаимоотношений и общественной жизни Грузии (II пол. XVIII в.), Кавказ и Византия, вып. 3, Е., 1982, с. 237—244.
2. 56. Новые документы о переселении персидских и западных армян в 1828—1830 г., ԲՀԱ, 1977, N 3, էջ 1—23:
2. 57. Присоединение Восточной Армении к России. Сборник документов. Редактор Ц. П. Агаян, т. 1, 1801—1813, Е., 1972, т. 2, 1814—1830, Е., 1978.
2. 58. Пространный реестр Гюрджистанского вилайета, турецкий текст издал, перевел С. С. Джикия, книга 1, Тб., 1947, (թուրքերեն):
2. 59. Социально — политическое и экономическое положение Восточной Армении после присоединения Восточной Армении к России (1830—1870), документы и материалы, под. ред. Н. А. Тавакаляна, Е., 1993.

Գ) Վրացերեն

2. 60. გურჯისტანის ვილაიეთის დიდი დავთარი, წიგნი 2, თბ., 1941, წ. 1, 1947. თურქული ტექსტი გამოსცა, თარგმანი, გამოკვლევა და კომენტარიები დაურთო სერგი ჯიქიამ, წ. 3, გამოკვლევა, თბ., 1958.
2. 61. უხტანესი, ისტორია გამოყოფისა ქართველთა სომეხთაგან, სომხური ტექსტი ქართული თარგმანითა და გამოკვლევით გამოსცა ზაზა ალექსიძემ, თბ., 1975.
2. 62. ქართლის ცხოვრება, ტ. I, თბ., 1955, ტ. IV, თბ., 1973.
2. 63. ჩილდირის ეიალეთის ჯაბა დავთარი. 1694—1732, თბ., 1979.

3. Մենագրություններ, ժողովածուներ, սեղմագրեր, քարտեզներ

Ա) Հայերեն

3. 1. Ադոնց Ն., Հայաստանի պատմություն, Ե., 1972:
3. 2. Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Ե., 1987:
3. 3. Ալիշան Ղ., Այրարատ, Վենետիկ, 1890:
3. 4. Ալիշան Ղ., Նշմարք հայկականք, պր. 1, անթվական:
3. 5. Ակինյան Ն., Կիւրիոն կաթողիկոս Վրաց: Պատմութիւն հայ–վրացական յարաբերութեանց եօթերորդ դարու մեջ (Ազգային մատենադարան), Վիեննա, 1910:
3. 6. Ահարոնյան Ա., Սարդարապատից մինչև Սևր և Լոզան, Ե., 2001:
3. 7. Աղայան Ծ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Ե., 1976:
3. 8. Աղանեանց Գ., Կարնո գաղթը (1829-1830), Թ., 1891:
3. 9. Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թ., Ե., 1997:
3. 10. Արոյան Ս., Բեկորներ Մշո Ջոջ քարի. հայրենագիտական ակնարկ, Ե., 1997:
3. 11. Բադալյան Գ., Ջավախք և հարակից շրջաններ, քարտեզ, մասշտաբ 1: 260000, Ե., 1995: Նույնի՝ Ջաւախք եւ յարակից երկրամասեր, մասշտաբ 1:400000, Ե., 2002:
3. 12. Բերակչյան Է. Ա., Լոմատուրցխ գյուղի պատմաաշխարհագրական ակնարկը, 1999:
3. 13. Բոգդանովկայի շրջան, տեղեկագիրք, կազմողներ՝ Մ. Կարախանյան, Ժ. Սնխչյան, Մ. Սեդրակյան, Լ. Ղազարյան, Մ. Եսոյան, Մ. - Վարդանյան, Ս. Երանոսյան, Բոգդանովկա, 1992:
3. 14. Գալոյան Գ. Ա., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ, Ե., 1999:
3. 15. Գեղամեանց Ե., Պատմական քաղվածքներ, պրակ 4, Բաքու, 1909:
3. 16. Գեղամյանց Հ., Կարապետ արքեպիսկոպոս (կենսագրություն), առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Մելքոնյանի, Ե., 1999:
3. 17. Գրիգորյան Գ., Հախվերդյան Ս., Սյունիքի պատմություն, Ե., 2001:
3. 18. Գրիգորյան Զ. Կ., Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին և նրա պատմական նշանակությունը, Ե., 1978:
3. 19. Դավթյան Ա., Հայկական և հայախառը բնակավայրերը Վրաստանում, Ե., 1997:

3. 20. Դավթյան Ա. Խ., Ջավախք, Ե., 1994:
3. 21. Դիլոյան Վ. Ա., Արևելյան Հայաստանը 19-րդ դարի առաջին երեսնամյակին և հայ–ռուսական հարաբերությունները, Ե., 1989:
3. 22. Դոխոյան Ա., Գյուղն Կարզախ, Ե., 1995:
3. 23. Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Ե., 1963:
3. 24. Երեմյան Ս., Ուրարտու պետությունը. քարտեզ, Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Ե., 1971:
3. 25. Երեսնամեակ հայոց բարեգործական ընկերութեան Կովկասում. 1881–1911, կազմեց Լէօ, Թ., 1911:
3. 26. Երիցեանց Ա., Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի Հայք 19-րդ դարում, հ. Ա., Թ. 1894:
3. 27. Զէյթլեան Ս., Հայ կնոջ դերը հայ յեղափոխական շարժման մէջ, Լոս Անճըլըս, 1992:
3. 28. Զոհրաբյան Է. Ա., 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տեղությունները, Ե., 1997:
3. 29. Զուլալյան Մ., Հայ ժողովրդի 13-18-րդ դարերի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, գիրք Ա, Ե., 1990:
3. 30. Զուլալյան Մ. Կ., Արևմտյան Հայաստանը 16-18-րդ դդ., Ե., 1980:
3.30ա.Զուռնաջյան Ս., Ջավախք. ժամանակագրություն, Ե., 2002:
3. 31. Զօր. Անդրանիկի Կովկասեան ճակատի պատմական օրագրութիւնը, 1914–1917, Պոսթոն, 1924:
3. 32. Էփրիկեան Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Ա, Վենետիկ, 1902:
3. 33. Թումանյանը ժամանակակիցների հուշերում, Ե., 1969:
3. 34. Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, հ. Ա, Վենետիկ, 1806:
3. 35. Իշխանյան Բ., Հայ–վրացական հարաբերութիւնների պրոբլեմը (քննական վերլուծութիւն), Թիֆլիս, 1914:
3. 36. Իսոյան Ա., Սաթխա, Ե., 1995:
3. 37. Իսոյան Ա., Սաթխա, Մեծ Արագյալ, Փոքր Արագյալ, Ե., 2001:
3. 37ա. Իսոյան Ա., Սամցխե-Ջավախքի նշանավոր հայորդիները, մաս Ա, ձեռագիր:
3. 38. Լալայան Ե., Երկեր, հ. 1, Ե., 1983:
3. 39. Լեո, Հայոց պատմություն, նորագույն շրջան, մասն 1, Ե., 1926, մասն 2, Ե., 1927:
3. 40. Լեո, Հայոց պատմություն, հ. 3, Ե., 1946:
3. 41. Լէօ, Սահմանավեճեր, Թիֆլիս, 1919:

3. 42. Խաչատրյան Վ., Հայաստանը մ. թ. ա. 15-17-րդ դարերում, Ե., 1998:
3. 43. Խատիսեան Ա., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Պէյրութ, 1968:
3. 44. Խուդինեան Գ., Հայ յեղափոխական դաշնակցութեան ծնունդը, Ե., 2000:
3. 45. Կարագեոզյան Հ., Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում, հ. I, գիրք 1, Ե., 1998:
3. 46. Կարապետյան Հ., Անդրանիկ, հ. 3, Ե., 1994:
3. 47. Կարապետյան Մ., Հայկական կամավորական խմբերը և ազգային գումարտակները Կովկասյան ռազմաճակատում (1914-1917 թթ.), Ե., 1999:
3. 48. Կարապետյան Ս., Ջավախքի խաչքարերը, Ե., 1995:
3. 48ա. Կերոն-2002, Ջաւախքեան գիտաժողովի նիւթեր, կազմողներ՝ Հ. Ալվրցեան, Ա. Մադոյեան, Ե., 2002:
3. 49. Կիրակոսյան Գ. Ե., Հայաստանը Լանկ–Թամուրի և թուրքմեն ցեղերի արշավանքների շրջանում, Ե., 1997:
3. 50. Կիրակոսյան Ջ. Ս., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914-1916 թթ., Ե., 1965:
3. 51. Հրաւէր ողջմտութեան, Ս. Էջմիածին, 1993:
3. 52. Համբարյան Ա., Ջավախքի ժողովրդագրության պատմությունից, Ե., 1998:
3. 53. Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. Ա., Ուրարտական աղբյուրներ. Ե., 1981:
3. 54. Հայ ժողովրդի պատմություն, ՀԽՍՀ ԳԱ հրատ., հ. 1–8, , Ե., 1971–1984:
3. 55. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հեղինակներ՝ Հակոբյան Թ. Խ., Մելիք–Բախշյան Ստ. Տ., Բարսեղյան Հ. Խ., հ. 1-5, Ե., 1986-2001:
3. 56. Հայկական ՍՍՌ ատլաս, 4–րդ դարի հռոմեական մղոնաչափքի (Պևտինգերյան աղյուսակի) մի մասը, Երևան–Մոսկվա, 1961, էջ 110:
3. 57. Հայկունի Ս., Բագրևանդ ջրաբաշխ գավառ, մասն Ա, Վաղարշապատ, 1894:
3. 58. Հայոց պատմություն, հանրակրթական դպրոցի 8–րդ դասարանի դասագիրք, Վ. Բարխուդարյանի խմբագրությամբ, Ե., 2000:
3. 59. Հայոց պատմություն, նյութերի ժողովածու, կազմող՝ Վ. Ղազախեցյան, Ե., 1993:

3. 60. Հայրենի Ջաւախք, ժողովածու, Պէյրութ, 2002:
3. 61. Հարությունյան Ա. Հ., Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918 թ. և ինքնապաշտպանական կռիվները, Ե., 1984:
3. 62. Հարությունյան Կ. Ա., Հայկական ազգային զորամիավորումները 1918-1945 թվականներին, Ե., 2002:
3. 63. Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք 2, Ե., 1959:
3. 64. Ձիթող դաշտի Կարնոյ, կազմող՝ Վարդիթեր Կոճոլոզեան–Յովհաննիսէան, Պէյրութ, 1972:
3. 65. Մանանդյան Հ., Երկեր, հ. Ա-Ձ, Ե., 1977-1985:
3. 66. Մանանդյան Հ., Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պտոլեմեոսի քարտեզի, Ե., 1936:
3. 67. Մանանդյան Հ., Տիգրան Երկրորդը և Հռոմը, Ե., 1940:
3. 68. Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, Ե., 1960:
3. 69. Մարգարյան Հ. Գ., Հյուսիսային Հայաստանի և Վրաստանի ԺԲ - դարի պատմության մի քանի հարցեր, Ե.,1980:
3. 70. Մելիքյան Վ., 1917. Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը, Ե., 1997:
Ի կոնսիստօրիս լուեալ զյայտարարութիւն Հոգևոր կառաւարութեան Հայոց Ախալցխոյ ի 15 էն դեկտեմբերի համար 556, ընդ որում մատուցանէ ի տնօրինութիւն կոնսիստօրիս զխնդիր ախալքալաքաբնակ մահտեսի Կարապետի Եաղուբեանց, յորում գրէ, թէ ի գաղթելն իւրեանց, ընդ հովանաւորութեամբ ամենահզոր տէրութեան ռուսաց ի սուզ ինչ միջոցի չինեցաք աստ եկեղեցի յանուն Սուրբ Խաչի, բայց հնութիւն չինութեան այնորիկ արդէն իսկ կարծիս տայ փլման, և յաւուր միում մեծի վտանգի բաղմաթիւ աղօթաւորաց ի նմին: Առ ի զառաջս առնուլ անտի կարծելի վտանգից, մտադիր եմ քանդել զայն ի հիմանց ի 24-ն ապրիլի յառաջիկայ 1854 ամի և վերանորոգել պարտու պատշաճն եղանակաւ. զորման քար և կիր զերկայնութիւնն երեքտասան սաժէն զլայնութիւնն ընդ առաջնոյն ութն սաժէն և բարձրութիւնն երեք սաժէն, զչրջապատն հնդետասան պատուհանս, և այլն ընդ կարգին ու ընդ յարմարութեան, զանխայելով ի չինութիւն նորին զամենայն ջծախս յիւրում իսկ սեպհականութենէն, ըստ հարկելոյ ջերմեռանդն պարտաւորութեան ի յիշատակ հոգւոյ իւրոյ և համօրէն ննջեցելոցն: Զայսօրինակ մտադրութենէ իւրմէ հասուցանելով ի լուր և տեղեկութիւն հոգևոր կառաւարութեան, ամենախոնարհաբար խնդրէ ի շուտափոյթ միջոցի զբարեհաճ կարգադրութիւն նորին, ըստ որում ոչ սակաւս ի նիւթեղինաց պատրաստելով. և զմնացեալսն նոյնպէս ցանկայ պատրաստել զի մի երկարատևեսցի չինութիւն սրբոյ եկեղեցւոյն: Ի վերայ այսր առաջարկութեան Հոգևոր կառաւարութեան Հայոց Ախալցխոյ, Վեհափառ կաթողիկոսն ամենայն Հայոց բարեհաճեալ է մակագրել այսօրինակ «եկեղեցիք որք չինելոցն իցեն բարձրաբերձ գմբէթաւոր կաթողիկէիւք՝ հարկ է հաստատութեամբ տէրութեան ձևոց կամ պլանի այնոցիկ սկզբնաւորել զչինութիւնն. իսկ այնպիսի եկեղեցիք, որք իցեն ընդ ձևոց տանց չինուածք, որք յատկապէս անուանին աղօթարան ի հասարակի ոչ կարօտելով հաստատութեանցն տէրութեանն՝ կարեն կոնսիստօրիայի համաձայն կարգաւորութեամբ վասն արժանաւոր լայնութեամբ, երկայնութեամբ ու բարձրութեամբ հաստակառոյց որմամբ հրաման տալ վայելուչ աղօթարանի չինութեանց. ըստ

որոյ և մեք յառաջադրեմք ընդարձակել մահտեսի Կարապետ աղային Եաղուպեան հրաման տալ զհնացեալ եկեղեցին սուրբ Խաչ անուանեալ վերանորոգել ընդ իւրումն ջերմեռանդութեանց. և սինօդին էջմիածնի և յայտարարութիւն գրել. «կարգաւորեցին. զվերոյ գրեալ բարեհաճութենէ Վեհափառ կաթողիկոսին ամենայն Հայոց տուեալ գիտել Հոգևոր կառաւարութեան Հայոց Ախալցխոյ, պատւիրել նմին վարել համաձայն իսկական մտաց նոյն մակագրութեամբ նորին Վեհափառութեան, զորմէ և յայտնել բարեծնունդ աստիճանաւոր մահտեսի Կարապետ Եաղուբեանց վասն պարտու պատշաճն կատարման, և զայսմ ամէնն ամենախոնարհաբար յայտ առնել Լուսաւորչեան Հայոց Սինօդիդ էջմիածնի:

Անդամք կոնսիստօրի

Թադէոս վարդապետ Յակոբեան
աւագ քահանայ Իսահակ Սահառունի
աւագ քահանայ Սրապիոն Տէր–Մովսիսեանց
Մկրտիչ քահանայ Տէր–Գրիգորեանց
Ատենադպիր Մ. Կարինեանց

Համար 57
ի 26–ն յունվարի 1854
և ազգականն 1303 ամի
ի ք. Թիֆլիզ

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 56, g. 1, գ. 3245, թ. 1-4:

Փաստաթուղթ № 14

(նախորդ փաստաթղթի շարունակությունը)

Ի 12 փետրվարի 1854 ամի

Զյայտարարութիւն վիճակային կոնսիստօրիին հայոց Վրաստանի և Իմերեթիոյ ի 26 յունվարի անցելոյ համարն 57 որով յայտ առնէ, թէ հոգևոր կառավարութիւն հայոց Ախալցխոյ յայտնեալ է նմին, թէ ախալքալաքաբնակ մահտեսի Կարապետն Եաղուբեանց խնդրագրով ծանուցեալ է նոյն կառավարութեան, թէ յետ գաղթելոյ իւրեանց ի Տերութիւն Ռուսաց չինեալ են անդ զնկեղեցի յանուն սուրբ Խաչի, այլ հնութիւն չինութեան այնորիկ այժմ կարծիս տալ փլման և մեծի վտանգի: Վասն որոյ նա մտադիր է քանդել զայն ի հիմանց և վերանորոգել վայելուչ եկեղեցի սեպհական ծախիւք իւրեան, առ որ և խնդրեալ զշուտափոյթ տնօրէնութիւն առ ի պատրաստել վաղագոյն զամենայն հարկաւոր նիւթեղէնս վասն ձեռնամուխ լինելոյ փութով ի գործ չինութեան նոյն եկեղեցւոյն, ի վերայ այսր առաջարկութեամբ հոգևոր կառավարութեան Ախալցխոյ Վեհափառ կաթողիկոսն ամենայն հայոց մակագրեալ է «եկեղեցիք որք

*չինելոցն իցեն բարձրաբերձ դմբէթաւոր և կաթողիկէիւք՝ հարկ է հաստատութեամբ տէրութեան ձևոց կամ պլանի» գրել. ուստի կոնսիստորիայն զմտնոց վերոգրեալ մակագրութեամբ նորին սրբութեան ծանուցեալ է աստիճանաւոր մահտեսի կարապետի Եաղուբեանց վասն պարտու պատչաճն կատարման, զորմէ և տեղեկութեան վասն յայտնէ նմին իս...**

Հրամայեցին

որովհետև տնօրէնութիւն վասն վերանորոգութեան աղոթարանի Ախալքալաքի եկեղեցւոյն ի վերայ ամենայն Հայրապետին մակագրութիւն սրբազանագոյն պատրիարք կաթողիկոս ամենայն Հայոց Ներսեսի, վերայ զարդեան յայտարարութիւն կոնսիստորիային Հայոց Վրաստանի և Իմերեթոյ ի կողմանէ սինոդիս՝ ընդունել ի ծանոթութիւն զգործն համարել աւարտեալ...

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 56, ց. 1, գ. 3245, թ. 1-4:

Փաստաթուղթ № 15

Մոսկվաբնակ բարեգործ Յովհաննես Յովհաննջանյանի նամակը Ախալքալաքի հոգևոր առաջնորդ Ստեփաննոս ավագ քահանա Դեմիրճօղյանին սեփական միջոցներից տեղի հոգևոր վարժարանին տարեկան նպաստ տրամադրելու իր որոշման մասին

Հարգոյս պատիւ Տեառն Ստեփաննոսի ավագ քահանայի
սրբոյ աջոյ համբոյր

Արժանապատիւ Հայրութեանդ նամակը ստացայ սրտի ուրախութեամբ զգացմունքներով նկատեցի տեղւոյդ ուսումնարանի բարեկարգութիւնը և յառաջադայլ ընթացքը: Ուսանելի առարկաների թիւը չատ բաւական է քաղաքիդ երեխաների համար, միայն թէ նշանակած գիտութիւնների դասաւանդութիւնը լինի, որչափ կարելի է կատարեալ և հիմնիաւոր: Աչակերտներին հարկաւոր չէ ունենալ բազմաթիւ և բազմաճիւղ գիտութիւնների վերայ մակերևութական ծանօթութիւն, այլ իւրեանց իմացածը հասուցանել հնարաւոր կատարելութեան խորամուխ և հիմնական կրթութեամբ առարկաների մէջ պակասում է միայն, իմ կարծիքով ազգային պատմութիւնը, սակայն և այդ պակասութիւնը կարելի է լրացնել չուտ միջոցում, այսպէս յոյս ունիմ, և այն ժամանակ կարող ենք ասել, թէ նորաբողբոջ ուսումնարանիդ առարկաները բոլորովին բաւականացնում են տե-

* Այստեղ փաստաթուղթն ընդհատվում է:

ղական պահանջմունքներին: Կրկնում եմ, Տէր Հայր, իմ սկզբնաւորած միտքս ուրիշ բառերով, թէ չատ առաւել հոգալի է ուսումնատուութեան որպիսութիւնը, քան թէ նորա քանակութիւնը. և ես միայն յոյս ունիմ, որ այդ վարժարանը Ձեր բազմաչխատ կառաւարութեան և մեծարգոյ քաղաքացիների ազգաւէտ խնամակալութեան և ...ներքոյ կարողանայ յառաջացնել այն պտուղները, որոց մեծ կարօտութեամբ սպասում է ազգը:

Մյուս կողմից, յայտնի է, թէ որ և իցէ վարժարանի գոյութեան և յառաջադիմութեան անհրաժեշտ պայման է նորա եկամուտքի ապահովութիւնը: Այդ դիպուածումը չէ կարելի մտածել առանց խնայելու, թէ դժբաղտաբար չկայ մեր ազգի մէջ մին ընդհանուր և միաբան խորհրդածութիւն, որ միշտ կարող էր դարման տանել ամեն երկրիս համազգային պիտոյքներին ընդհանուր ազգային լուսաւորութեան ասպարեզումը և միայն այդպիսի համազգային մտքի պակասութեան պատճառով հարկադրուած է իւրաքանչիւր մասնաւոր տեղական հասարակութիւն հոգ տանել իւր երեխաների ապագա բարօրութեանը իւր սեփական և մասնաւոր միջոցներով, թէ և ժամանակաւոր և աղքատիկ: Ի՞նչ անենք, քանի որ չկայ համազգային խորհուրդ կամ մտածութիւն, իւրաքանչիւր մասնաւոր հայազգի ժողովուրդ, որ կասէք թէ առանձնացած և բաժանուած է իւր բոլորից, պետք է ինքը հոգայ իւր պիտոյքը:

Տեսանելով Ձեր յարգելի նամակից, թէ նորաչէն ուսումնարանի եկամուտքը հաւասարութեամբ նորա հարկաւոր ծախքին պակասում են 210 մանէթ յանձն առեցի յօժարութեամբ ընծայաբերել վարժարանիդ մինչ կենդանի իմ իւրաքանչիւր տարի հարիւր յիսուն մանէթ, որը որ միշտ կհասուցանէ Ձեզ Տիխխոից իմ գործակատար Դաւիթ Ստեփանիչ Գուլուլովը: Յուսով եմ, որ արժանընտիր հայրդ և քաղաքիդ գերամեծար բնակիչները իմ սրտիս մերձաւոր և սիրելի քաղաքակիցներն սիրով կընդունէք իմ տարեկան նուիրագործութիւնը, որոյ յետ պակասութիւն չկա թուելոյ բոլոր հասարակութեան ազգասեր սրտին լրացնել մնացած 60 մանէթ ծախքը:

Աչխատեցէք ուրեմն, Հայր պատուարժան յօգուտ ազգի և եկեղեցւոյ, ուսումնարանի եկամուտքը համարեա լրացած և ապահոված են արդէն. այժմ մեր յոյսը պէտք է լինի Ձեր արթուն հոգատարութեան և ջանացողութեան վերայ. և մնք չունենք երկրայութիւն, թէ Ձեր աչխատանքը և հոգայողութիւնը ազգային լուսաւորութեան ասպարէզումը լիովին կպսակեն մեր ակնկալութիւնը:

Այս տեղ պատշաճ ժամ եմ համարում ասել արժանայարգ Հայրութեանդ թէ տեղւոյդ վարժարանի համառօտ և մանրամասն պատմութիւնը շատ և շատ կարևոր էր տպագրել որ և իցէ լրագրի մէջ, և շատ յարմարաւոր այժմեան ժամանակումը, երբ տեղ տեղ սկսանում են ծաղկել և բարեկարգուել ազգային դպրոցներ. եթէ գրուեր մի յօդուած, որի մէջ նկարագրուած լինէին նորածին ուսումնարանիդ սկզբնաւորութեան ժամանակը, հիմնարկութեան անունը, նորա դոյութեան աղբիւրները, նաև եկամուտքը, ուսանելու առարկաները, վերջապէս նորա յառաջադիմութեան թուերը, այսպիսի նկարագրութիւն կպատշաճեր իսկապէս ընդհանուր ազգին և կարող էր մխիթարութեան առիթ լինել նորան, իսկ այլաբնակ մասնաւոր հասարակութիւնների՝ բարի օրինակ բաց յայսմանէ կարող էր օգտաբեր ևս լինել նոյն իսկ վարժարանին, վասն զի ոմանք տեսանելով տեղւոյդ ժողովրդեան ազգասէր փոյթը և դովանի եռանդը ազգային կրթութեան ասպարէզումը, գուցէ կցանկանային նպաստամատոյց լինել վարժարանի աղքատիկ դրութեանը, և համանգամայն նորա ջերմեռանդ և լուսաւոր նպատակին: Այս մտքով շատ կցանկանայի, որ պատուարժան Հայրդ աշխատէիք հասուցանել իմ մօտ մին առաւել մանրամասն տեղեկութիւն Ձեր վարժարանի մասին, որպեսի տուել էիք ինձ Ձեր նամակի մէջ, բայց փոքր ինչ աւելի և ևս ընդարձակ, սկսեալ պատմաբանօրեն 1838 թուականից, երբ սկզբնաւորեալ է վարժարանը, մինչև ներկայ օրերս, որովհետև ես մտադիր եմ տալ այդ տեղեկութիւնը պատուելի Մսեր Մագիստրոսին Մսերեանց ըստ խնդրոյ և ցանկութեան նորա՝ իւր Համբաւաբեր Ռուսիոյ անուանած լրագրութիւնը տպագրելու համար: Եթէ հաճոյ լինի Ձեզ ստորագրեցէք Ձեր կամ այլոց ուրուք անունը այն յօդուածի ներքոյ, իսկ եթէ ոչ, ուղարկեցէք միայն հարկաւոր տեղեկութիւնները, որոց այս տեղ կտան յարմարաւոր կարգ և կերպ առանձին պատշաճաւոր յառաջաբանութեամբ:

Յիսկն ստորագրեալ է. ճշմարիտ յարգանօք և իսկական պատուասիրութեամբ մնամ

Ձյարգոյապատիւ Հօրդ խոնարհ ծառայ
Յովհաննէս Յովհաննիսեանց

Մոսկով
«15 փետրուարի»
1862 ամի:

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3964, թ. 10-11:

Փաստաթուղթ № 16

Մի խումբ ախալքալաքցիների խնդրագիրը Մատթեոս կաթողիկոսին Ախալքալաքի վարժարանի օգտին միջոցներ հայթայթելու գործին նպաստամատույց լինելու մասին

Միակ պաշտպան ազգիս Հայոց

Հասել է ազգային փառաց և բաղդի վերածնութեան ոսկեղենիկ դարը. զարթել է ի սիրտս ամենից եռանդն և փոյթ դէպ ի ճշմարիտն ազգասիրութիւն, և ակներև կտեսնեմք, որ ամէն մէկ հայի վերջին ճիգն է արծարծել ազգայնոց մէջ կրթութեան և լուսավորութեան սէր ու փափագ: Անժխտելի ապացոյց ասածներուս են օրըստօրէ բազմանալ ազգային վարժարանաց, տպագրատանց, օրագրոց և այլոց բազմաշահ գիտութեանց և վարժից այն ամենայն քաղաքաց մէջ, ուր մի անգամ ոտք է կոխել Հայն հանճարեղ, և որոց անքուն հսկող է ազգապարծանք մայր Աթոռդ: Թողումք հեռաւորները. ահա՛ մեր դրացին Թիֆլիզ քաղաք մեծապէս կպարծի իւր Ներսիսեան դպրոցաւ, և չեն ինչ զարմանք, որովհետև նորա ապագայ կեցութեան վիճակը ապահովացած է առատ կալուածներով և եկամտից բազմատեսակ աղբիւրներով. մանաւանդ զի՝ այնտեղ կը գտնուին այնպիսի և այնքան մեծանուն և հարուստ հայեր, որոնք կարող են յիրաւի միշտ փառաւոր պահել տեղւոյն ազգային դպրոցը և պարծանաց ասպարեզի մէջ ժառանգել առաջին տեղը: Բաւական յառաջընթացութեան և օրըստօրէ զարգացման յոյս կուտայ մեզ և Ախլցխոյ ազգային վարժարանը. սակայն ասոր վերայ ալ չէ զարմանալու, որովհետև սորա կեցութեան վիճակն ալ ապահովացած է հանգուցեալ արժանայիշատակ Կարապետ արքեպիսկոպոսի թողած անշարժ կալուածներով. դառնանք այժմ դէպի այս մեր Ախալքալակ քաղաքը՝ տեսնելու և սորա վիճակն ըստ ուսումնարանական մասին:

Այս այժմ իբր յ350 տանց բաղկացեալ փոքրիկ քաղաք, որ գոնէ յայբուբենեան վարժից իւր որդիքը չխորթացնելու համար կպահէր իրան մէջ մի մասնավոր վարժարան, հազիվ կարաց անկործան պահել զայն մինչև 1860 թուականը. և այն ինչ յոգիս ապաստան՝ մերձ էր փչել իւր կեցութեան վերջին չունչը՝ որ բացնելով իւր հարիւրաւոր աչակերտքը, Դուք՝ ազգախնամ Հայրապետ, Դու՛ք ի սա դարձուցանելով Ձեր գթալիր խնամոտ աչքերը, յոյս կենդանութեան չնորհեցիք սմա՝ Հայրապետական սուրբ կոնդակաւ ի 1860 ամի. տնօ-

րինելով, որ նահանգիս մէջ գտնուած Բուռնաշէթի ուխտատեղւոյն արդիւնքը, զոր կատանայր Ներսիսեան դպրոցն, մնայ յօգուտ և ի կիրառութիւն սոյն մեր վարժարանի, որպիսի գերօրինակ խնամարկութիւնք Վեհափառութեան Ձերոյ յիրավի յոտին կացուցին այս մեր աղքատ վարժարանը և յօրէ անտի սկսեալ սա կխոստանայ մեզ յառաջադիմութիւն ի ճանապարհի ուսման, բայց՝ սորա կեցութիւնը չկարէ լինել յարատեւական կամ պսակել ազգասէր Վեհիդ և մեր իսկ յոյսը, եթէ չունենայ մի այլ գոհացուցիչ աղբիւր ևս եկամտից. և այս աղբիւրը դիւրին է ի ձեռս բերել, եթէ միայն Ձեր սուրբ կամաց բարեհաճ տնօրէնութիւնը լինի. այլ թէ ո՞րն է այս, ահա՛ խորին ակնածութեամբ կը յայտնենք Վեհափառ Հայրութեան Ձերոյ սոյն աղերսագրով:

Յայտնի իսկ է Վեհ Սրբութեան Ձերոյ, Սրբազնասուրբ Հայրապետ, որ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը չհերիքանալով իւր մեծաքանակ եկամտիւք և երևելի համազգեաց օժանդակութեամբ, այժմ սկսել է նաև իւր գործնականաց ձեռօք մոմավաճառութիւն առնել Վրաստանի թէմին քաղաքներն և գիւղերը, և նորա օգուտն ևս տանել ի պէտս իւր. բայց ո՞չ ապաքէն և մեք հայք եմք և հարազատ որդիք լուսավորչական սուրբ եկեղեցւոյ, ո՞չ ապաքէն մեզի ալ ցանկալի և սակաւ առ սակաւ մուտ առնել ուսումնական յառաջադիմութեանց ասպարիզին մէջ, ո՞չ ապաքէն այս նահանգն ալ՝ յորում գտանին մօտ երեսուն հազար հայազգիք, կբաղձայ ունենալ իւր մէջն գոնեա մի բարեյոյս վարժարան. ուրեմն եթէ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը վերցունէ միայն այս մեր նահանգէն իւր մոմավաճառութիւնը իրան ոչինչ չի պակասիր, իսկ մեր վարժարանի յառաջընթացութեան համար, վստահանամք ասել, թէ կբացուի մեծ ճանապարհ:

Վասն որոյ իբրև բարեկամք ազգի և հայրենեաց մերոց խորին խոնարհութեամբ դիմելով յոտս մարդասիրութեան Ձերոյ, որդիական համարձակութեամբ մերով ամենախոնարհաբար խնդրեմք Աստուածընտի՛ր Հայրապետ, արձակել հայրենասէր գթոտ աչքերդ դարձեալ դէպ ի այս մեր նորահաստատ վարժարան, որ չնորհիվ Ձե՛ր է ոգևորեալ. բացե՛ք Ձեր անարատ սիրոյն աղբիւրը, ո՛վ Տէ՛ր. և զովացուցե՛ք զծարաւիքս Ձեր հայրենի յատկական չնորհաց և ողորմութեան. բարեհաճեցէ՛ք Տէ՛ր մեր հրամայել Հայրապետական կոնդակօքդ նախ՝ Բարձր Սրբազան վիճակաւոր Մակար Արքեպիսկոպոսին Թիֆլիզոյ, որպէս զի արգելէ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան այ-

սուհետև մոմավաճառութիւն առնելն այս մեր Ախալքալակայ նահանգի մէջն, և երկրորդ՝ հոգաբարձութեան տեղոյս վարժարանի, որպէս զի՝ սա միայն իրաւունք ունենայ մոմավաճառութիւն առնել նահանգիս մէջն յօգուտ վարժարանի քաղաքիս. և յայնժամ յիշեալ հոգաբարձութիւնն թեթև գնով բերելով ի Ռուսաստանէ սպիտակ և դեղին մոմեր, կարող է մշտապէս բաւական նպաստամատոյց լինել վարժարանիս զարգացման և յառաջադիմութեան ի խնդութիւն սրտի ամենայն հայրենասիրաց:

Սրբազնասուրբ Հայրապէտ. Ձեր այսօրինակ քաղցր մարդասիրութիւնն և անկշիռ երախտիքն ևս բարդելով ի վերայ այլոց հայրական ազգախնամ երախտեացդ, երախտապարտութեան անջնջելի կնքաւ կը դրոշմէք գարձեալ մեր սիրտը և հոգին յորդւոց յորդիս անվախճան:

Վեհափառ Տէրութեան Ձերոյ ամենախոնարհ ծառայք բնակիչք

Ախալքալակ քաղաքի՝

Մկրտիչ Շահպարոնեանց
մահտեսի Գրիգոր Տէր Կիրակոսեան
մահտեսի Պապին Կարապետով
Սարգիս Պետրոսեան՞
Հայրապետ Գրիգորեանց
Պետրոս Աղապապ Ղազանճեանց
Եփրանոս Տէր Գրիգորեան
Խաչատուր Սօմբնճեանց
Բարդուղիմէոս Տէր Պետրոսեան
Յակոբեանց
Մատթէոս Տէր Յովհաննիսեան
Յօսէփ Շահպարոնեանց
Մկրտիչ Աւետիքով

Նազարէթ Ղուկասեան
մահտեսի Յովհաննէս Յօհաննիսեանց
Յօհաննէս Մեծատունեանց
Աբրահամ Յակոբով
Յովհաննէս Ստեփանեանց
Սարգիս Տնկոզեանց՞
Մկրտիչ Բախչինեանց՞
Յակոբ Գէորգեան

Մկրտիչ Տօնականեան
Ստեփան Մեծօթանց՞
Նազարեթ՞ Օվանէսով
Սիմէօն Մուրթաֆեանց

Ի 10 հոկտեմբերի, 1863 ամի,

Ախալքալակ

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3964, թ. 30–31:

Փաստաթուղթ № 17

Մատթեոս կաթողիկոսի կոնդակը՝ ուղղված Վրացահիմերեթական թեմի առաջնորդ Մակար եպիսկոպոսին Ախալքալաքի գավառում մոմավաճառությունից ստացված եկամուտը տեղի հոգևոր վարժարանին տրամադրելու կարգադրություն անելու մասին

ՄԱՏԹԷՈՍ *ծառայ Քրիստոսի և անհասանելի կամօքն աստուածոյ եպիսկոպոսապետ և կաթուղիկոս ամենայն Հայոց ծայրագոյն Պատրիարք համազգական, նախամեծար աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր եկեղեցւոյ կաթուղիկէ Էջմիածնի*

Գերապատիւ առաջնորդին Տփխիսու Մակար սրբազան արքեպիսկոպոսի ծանուցանեմք: Համազգի հասարակութիւն Ախալքալակ գիւղաքաղաքին մատոյց մեզ զխնդիր չնորհելոյ զարդիւնս մոմավաճառութեան յօգուտ հոգևոր ուսումնարանի տեղւոյն: Մեք գիտելով թէպետ զի այս արդիւնք նշանակեալ են յօգուտ Ներսիսեան հոգևոր Ազգային ուսումնարանի, սակայն նկատեալ ևս, զի նախ յիշեալ եկամուտքն ոչ առիցի ամին զքանակութիւն, որով աննչան են յարդունս յատկացեալս բազմագումար դրամաց Ներսիսեան վարժարանին. և երկրորդ. զի եկամուտք մոմավաճառութեան գաւառին Ախալքալակու ներքին և արտաքին բարեկարգութեան յառաջադիմութեան հոգևոր ուսումնարանի տեղւոյն ումիտն լինել միջոցի, թերևս աւելի ևս ջերմեռանդն ընծայաբերութեանց ժողովրդականացն առիթ յօգուտ նոյն ուսումնարանի, որոյ առաքմամբ իսկական խնդրոյն առաջադրեմք Սրբազնութեան Ձերում կարգադրել ըստ սահմանադրեալ եղանակի յատկացուցանել այսուհետև զարդիւնս մոմավաճառութեան գաւառին Ախալքալակու յօգուտ յիշեալ հոգևոր ուսումնարանին, և ծանուցանել զայնմանէ հոգաբարձութեան նորին զհոգս և զհանգամանս մոմավաճառութեան նմա յանձնելով: Յարակցիմք և զայս՝ զի ըստ մտաց բովանդակութիւն այսր կոնդակի մերոյ ծանուցանեմք բարեջան հոգաբարձութեան տեղւոյն:

Մատթէոս կաթուղիկոս ամենայն Հայոց

ի 20 Հոկտեմբերի 1863 ամի
ի Ս. Էջմիածին

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3964, թ. 29:

Փաստաթուղթ № 18

Ախալքալաքցիների խնդրագիրը Գևորգ Չորրորդ կաթողիկոսին Ախալցխայի Ս. Փրկիչ եկեղեցուն պատկանող գյուղերից ստացվող եկամտից տարեկան 1000 ռուբ. մշտական գումար Ախալքալաքի ուսումնարանին հատկացնելու մասին

Նորին Վեհ Օծութիւն Սրբազնագոյն կաթուղիկոսի ամենայն Հայոց Տեառն Տեառն Գևորգա Չորրորդի

Ախալքալաքա Հայոց Հոգևոր երկսեռ ուսումնարանաց Հոգաբարձութիւնից

1880 թ. փետրվար 13 խնդրագրավ քաղաքիս հասարակութիւնը պատիվ էր ունեցած դիմել դեպի վեհափառութիւնդ, որով ամենախոնարհաբար աղերսած էր մասնատրել Ախալցխայի Ս. Փրկիչ եկեղեցվո գյուղերից տարեկան եկամտից երկու հազար րուբլի մեր աղքատիկ ուսումնարաններին: Հասարակութիւնը հիմնած էր յուր հիշյալ խնդիրը գլխավորապես այն փաստի վերա, որ Ախալքալակա հայ բնակիչներս, գաղթած լինելով միասին Ախալցխո հայերի հետ և սկզբում նոցանից բոլորովին անբաժան, իրավունք ունինք վայելել գեթ փշրանքը այն եկամտի, որ թողել է մեր նախկին եկեղեցվո անուանով երջանկահիշատակ հանգուցյալ Կարապետ արքեպիսկոպոսը՝ մեր ընդհանուր բարերարը այնպես, ինչպես մի հոր երկու հարազատ որդիք, բնակվելով հազարավոր մղոններ միմյանցից հեռու, հավասարապես պահում են իրանց իրավունքը հայրական ժառանգութեան վերա: Նույն ինքն՝ հիշյալ հանգուցյալ արքեպիսկոպոսը, յուր կենդանութեան օրոք երբեք չէ խտրել միմյանցից Ախալքալաքի և Ախալցխո հայ հասարակութիւններին, բարոյապես և նյութապես խնամելով մեզ և նորանց համահավասար: Բացի դորանից, ինչպես Ախալցխայի Կարապետյան ուսումնարանի, նույնպես և քաղաքիս Ս. Մեսրովբյան ուսումնարանի հիմնադիրը եղած է նույն արքեպիսկոպոսը և նույն գյուղերի այն ժամանակվա տարեկան 700 րուբլ. եկամտի մեկ տասնչորսերորդ մասը՝ 50ր. տալիս էր մեր ուսումնարանին: Այդ նպաստը թեև այժմ չնչին է համարվում, բայց աչքի առաջ ունենալով ժամանակակից դրամի արժեքը և ուսման կարիքի համեմատական փոքրութիւնը, այդ գումարը կարող էր այժմյան 1000 ր. գործը կատարել: Ուրեմն քաղաքիս հասարակութիւնը յուր վերոհիշյալ աղերսագրով խնդրելով Ձեր Վեհափառութիւնից 2000 րուբլ.

նպաստ յուր ուսումնարանին, այն ժամանակ, երբ հիշյալ եկեղեցական գյուղերի եկամուտը 30000-ի էր հասնում, չափազանցություն արած չէր, իսկ այժմ՝ երբ վերջին աճուրդով դուրն եկամուտը 14000-ից ավելի է, հոգաբարձությանս միջոցավ 1000 ռուբլ. տարեկան նպաստ աղերսելով դարձյալ չէ դուրս գալիս համեստության սահմանից, որովհետև ինչպես 50ր. այն ժամանակվա եկամտի (700 ռ), հազարն ևս այժմյան եկամտի մեկ տասնչորրորդ մասն է:

Հոգաբարձությունս, թարգման հանդիսանալով Ձերդ Վեհ Մեծության առաջ, քաղաքիս հայ հասարակության թախանձյալ հայը, ամենախոնարհաբար աղերսում է ամենաջերմածաբար տնօրինել Ախալցխո Ս. Փրկիչ եկեղեցվո տարեկան եկամտից տալ մշտնջենապես մեր բազմակարոտ ուսումնարանին 1000 ր. նպաստ, ինչպես բանավորապես բարեհաճ է խոստանալ Ձերդ Վեհափառության, հարգելով հասարակության հիշատակյալ խնդրանքը:

Հոգաբարձուք՝ Հովհաննես Վահրամյանց
Հովհաննես Առվանյանց
Ստեփանոս քահանա Դեմիրճօղլյանց

Համար 47
ի 5 Հունիսի 1882 ամի.

Ախալքալաք

Ծանոթագրություն

Ինչպես սույն, այնպես էլ գրական արևելահայերենով գրված մյուս փաստաթղթերը տրված են նոր (աբեղյանական) ուղղագրությամբ

Փաստաթղթի վրա կա Գևորգ Չորրորդ կաթողիկոսի հետևյալ մակագրությունը.

«Հանձնեմք սինօդի կատարել զխնդիր սոցա՝ եթէ բաւեցին արդիւնք կտակաւանդ կալուածոց բարեյիշատակ Կարապետ Արքեպիսկոպոսի:
Գէորգ Դ Կաթուղիկոս Ամենայն Հայոց»:

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3993, թ. 163 -163ա:

Փաստաթուղթ № 19

Ախալքալաքի Ս. Մեսրովբյան ուսումնարանի խարխլված շենքը վերանորոգելու Հակոբ Դարբինյանցի պատրաստակամության մասին

Նորին Բարձր սրբազնության
Առաջնորդի թեմին Վրաստանի և Իմերեթի՝ տեառն Արիստակես եպիսկոպոսի Սեդրակյան

Ախալքալաքի Հայոց երկսեռ ուսումնարանաց Հոգաբարձությունից

Մեր կառավարության հաստատած Ս. Մեսրովբյան ուսումնարանի շինությունը գտնվում է ամենաողբալի վիճակի մեջ. քանիցս անգամ քաղաքիս պոլիցական վարչությունը և նախկին թեմական վերատեսուչները կամեցել են փակել այդ ուսումնարանը՝ վտանգավոր համարելով նրա հարկի տակ մանուկների կացությունը: Բայց հոգաբարձությունը կատարելով մի քանի ժամանակավոր անհիմն կարկատանքներ, չէ թույլատրել փակել ուսումնարանը: Հոգաբարձությունը երկյուղ է կրում ահագին պատասխանատվությունից, որին կարող է ենթարկվիլ սա, եթե հանկարծ քանդվի խախուտ շինությունը և ծեծկե յուր ավերակների տակ մանուկներին, ուստի որոշված էր առաջիկա գարունքից խնդրել մեծ թեմական վերատեսուչից փակել ուսումնարանը մինչ դրա վերանորոգությունը:

Հոգաբարձությունս վերանորոգել հիշյալ շինությունը ուսումնարանի միջոցներով անկարող է, որովհետև այդ միջոցները հազիվ բավականանում են դպրոցաց ընթացիկ ծախքերը հոգալու. հոգաբարձությունս մի քանի անգամ հրավիրել է հասարակության ընդհանուր օժանդակությունը, բայց իզուր, ուստի կրկնել նույնը չի կարող՝ աչքի առաջ ունենալով հասարակության դրամական խիստ անճուկ վիճակը, որ ծագում է առևտրի և կալվածների անկումից և անտարբերությունը դեպի ուսումնարանը:

Այսպիսի անել դրության մեջ էր գտնվում հոգաբարձությունս, երբ Ախալքալաքի բնակիչ, վաճառական պ. Հակոբ Դարբինյանցը ցանկություն հայտնեց այս օրերս իր հաշվով կատարելու ուսումնարանի հարկավորված վերանորոգությունը և հասցնել մինչ առաջիկա ուսումնական տարին, այն պայմանով միայն, որ ոչ ոք, ոչ հոգաբարձությունս և ոչ որևէ մասնավոր անհատ իրավունք չունե-

նա նյութականապես մասնակցել այդ գործին: Հոգաբարձությունս, խորհրդակցելով, որ պ. Հակոբ Դարբինյանցի առաջարկությունը իրագործությամբ մեր արական սեռի ուսումնարանը կունենա բավականին հարմար և պատշաճավոր չինություն, վճռեց միջնորդել Ձերդ Բարձր սրբազնության առաջ ըստ կարելվույն չուտով լուծումն տալու, որ հիշյալ պարոնը սկսե իր գովելի գործը:

Անդամք Հոգաբարձության — Արշակ Գրիգորյանց
Հարությունն Նալբանդյանց
Խաչատուր Մելիքյանց

1884 ամի ի 21–ն Հունվարի
Ախալքալակ

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3993, թ. 105-105ա:

Փաստաթուղթ № 20

Ախալքալաքի հասարակության համաձայնությունը Հակոբ Դարբինյանի կողմից ուսումնարանը նորոգելու առաջարկության վերաբերյալ

ստացված է 25 հունվարի 1884 թ.

Նորին Բարձր սրբազնության Առաջնորդի թեմին Վրաստանի և Իմերեթի՝ տեառն Արիստակես եպիսկոպոսի Սեդրակյան

Ախալքալաք քաղաքի
Հայ հասարակությունից

խ ն դ ի ր

Քաղաքիս երկսեռ ուսումնարանի հոգաբարձությունը քանիցս դիմել է հասարակությանս՝ հայտնելով ուսումնարանի վերանորոգության անհրաժեշտությունը, բայց հասարակությունս, գտնվելով դրամական անճոռնի վիճակի մեջ, անկարող է եղել ընդհանուր օժանդակությամբ միջոց տալ հոգաբարձությանը կատարելու Ս. Մեսրովբյան ուսումնարանի անհրաժեշտ վերանորոգությունները:

Իսկ այժմ հայտնվեցավ հասարակությանս, որ իր միջից մինը՝ պ. Հակոբ Դարբինյանցը ցանկանում է իր սեպհական միջոցներով կատարել հիշյալ վերանորոգությունները, այն պայմանով միայն, որ հասարակությունից չլինին մասնակցողներ դույն չինության ծախուց մեջ:

Հասարակությունս բացատրեց, որ ինքը անկարող է յուր միջոցներով կատարել հարկավորված ծախքերը ուսումնարանի շինության համար, ուստի նվիրելով հիշյալ պարոնին խորին շնորհակալություն իր այդ բարեգործության համար, պարտավորվում է ամենևին չմասնակցել այդ ծախուց մեջ, մանավանդ, որ եթե գտնվեն էլ մեր մեջ բարեգործ անձինք, որոնք կամենային մասն ունենալ այդ բարի գործի մեջ, կարող են ուրիշ բարեգործական նպատակի ծառայեցնել յուրյանց դրամը՝ կատարելու բարի գործեր քաղաքիս մեջ շատ կան, որոնցից մատնացույց է լինում հասարակությանս օրիորդական դպրոցի ընթերցարանի շինության և գերեզմանատունը պարսպապատելու վրա: Այս մտքի հիման վրա հասարակությունս իր կողմից ամենախոնարհաբար խնդրում է Ձերդ Բարձր սրբազնությունից լուծումն տալ մեր հարգելի անդամ պ. Հակոբ Դարբինյանցին չուտով սկսելու իրագործել իր բարի նպատակը:

Ավելի քան հարյուր ախալքալաքցիների ստորագրություններ, այդ թվում՝ քաղաքի դեպուտատներ՝ Կարապետ Սոմնիյանց, Հովհաննես Վահրամյանց

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3993, թ. 108-109:

Փաստաթուղթ № 21

Ախալքալաքի ուսումնարանին կից ընթերցարանի նոր շենքի կառուցման խնդիրների մասին

Նորին Բարձր սրբազնության Առաջնորդի Հայոց թեմին Վրաստանի և Իմերեթի՝ տեառն

Ախալքալաքա Հայոց ուսումնարանին կից ընթերցարանի անդամներից և Ախալքալաք քաղաքի բնակիչներից

խ ն դ ի ր

Ախալքալաք քաղաքում 1880 թ. գոյություն ունի այսպես անվանյալ ուսումնարաններին կից հասարակական ընթերցարանը՝ հաստատված կառավարությունից: Ավելորդ ենք համարում բացատրել, թե որքան բարոյական և մտավոր օգուտներ մատակարարել է, մա-

տակարարում է և կարող է մատակարարել այդ հիմնարկությունը քաղաքիս և գավառի ընթերցող հասարակությանը ընդհանրապես և ուսումնարանների սաներիս մասնավորապես՝ ունենալով իր մեջ և մանկական բաժանմունք:

Լիովին հասկանալով այդ հիմնարկության մեծ կոչումը և դրա իրավունքի թանկ գինը՝ ընթերցարանի վարչությունը իր անդամներով և համակրողներով ջանադիր է, ըստ չափու կարողության, ծառայեցնել այդ հիմնարկությունը իր բարձր նպատակին: Այսօր չատ ու չատ պակասություններ ունի ընթերցարանը, բայց այդ թերություններից ոչ մինը այնքան չի վնասում գործին, որքան մի փոքրիշատե հարմարավոր սեփհական շինություն: Այսօր վարչությունը ստիպված է, հակառակ կանոնադրության՝ ուսումնարանի շինությունից հեռու, ժամանակավորապես երկու սենյակներ վարձել, ուսումնարանի մեջ առանձին և հարմարավոր սենյակներ չլինելու պատճառով և տարեկան ութսուն րուբլի վարձ տալ, մի նշանավոր գումար, ի նկատի առնելով ընթերցարանի անձուկ վիճակը: Ընթերցարանը ունի տարեկան մոտավորապես երեք հարյուր րուբլի ծախք, որի ութսունը գոյանում է անդամական վճարներից, իսկ երկու հարյուր քսանը՝ մասնավոր նվերներից ու թատրոնական ներկայացումներից:

Ներքոստորագրյալներս ընթերցարանը այդ ամենաղքալի ծախքից ազատելու համար որոշած ենք առաջիկա գարունքից չինել մի փոքրիկ և հարմարավոր շինություն, բաղկացած երկու սենյակներից ու մի կորրիդորից (միջանցք -Ա.Մ.), որոց համար հարկավորված գումարը առ առավելն երեք հարյուր ռուբլի մեր մեջ սկսած ենք ժողովել և գրեթե պատրաստի է. շինության համար հարկավորված քարը հանձնառու եղավ նվիրել տոհմական պատվավոր քաղաքացի մեծապատիվ Հովհաննես Տեր Կիրակոսյան: Մենք գժվարության մեջ ենք ընկած հատկապես գետնի (տարածք -Ա.Մ.) վերաբերությամբ: Թեև քաղաքիս մեջ բաց գետին կարելի է ճեռք բերել չատ արժան գնով, բայց կանոնադրության համաձայն ընթերցարանը դտնվելու է ուսումնարանի մոտ: Ցանկանում ենք ընթերցարանի շինությունը միացնել ուսումնարանի նորոգ կառուցանելի շինության հետ, բայց տեղի սաստիկ նեղությունը հաղիվ ուսումնարանի շինությանը բավականություն կտա: Մի հարմարավոր գետին կա՝ Ս. Խաչ եկեղեցվո գավթի մեջ, ուսումնարանից փոքր ինչ հեռու՝ եկեղեցվո հյուսիսարևմտյան կողմում, որ սահմանակից է արևմտյան կողմից Դեմիր-

ճօղլյան եղբարց տան, իսկ հյուխսայիին կողից ջրկիրների փողոցի հետ: Շինութեյան համար կկարևորվի ընդամենը 21 քառակուսի սաժեն:

Նույն գետնի վրա շինություն անելու լուծումը կախված լինելով Ձերդ բարձր սրբազնութեյունից, ներքոստորագրյալներս ամենախոնարհաբար խնդրում ենք Ձեզանից այդ լուծումը հարակցելով, որ այդ շինութեյունը հաշվվելու է Սուրբ Խաչ եկեղեցվո անչարժ կալվածք, որի մեջ ընթերցարանը անվարձ կտեղավորվի, քանի որ գոյութեյուն ունի, իսկ եթե որևէ պատճառավ փակվեցավ ընթերցարանը կամ վարչութեյան վճռով հարկավորվեցավ տեղափոխել դրան, այն ժամանակ շինութեյունը կհանձնվի եկեղեցուն: Այս ամենի համար վարչութեյունը պայման կունենա եկեղեցվո հետ:

Թող ներելի լինի մեզ՝ խնդրել Ձերդ սրբազնութեյունից ըստ կարելվույն չուտով բավարարութեյուն տալ մեր ներկա խնդիրներին, վասն զի ընթերցարանի շահերը պահանջում են, և մենք վճռած ենք այժմյանից սկսել գործը:

Մարտիրոս Սամաթքյանց՝
Արտաշես Կարապետյանց
Հարութեյուն Մկրտչյանց
Պողոս Քթոյանց
Խաչատուր Կարապետյանց
Կարապետ Սարկավագյանց
Բագրատ Պիճիկյանց
Կարապետ Մաղաքյանց
Աղապապ՝
Վարդան Նալբանդյանց
Հովհաննես Առվանյանց
Մարտիրոս Այվազյանց
Հովհաննես Մելիքյանց
Կոստանդին Նալբանդյանց
Կարապետ Պապիկյանց
Բարսամ Մելիքսեդեկյանց
Մարտիրոս՝
Տիգրան Աննախասյանց
Հարութեյուն՝
Խաչատուր Շահպարոնյանց

1884 թ. մարտի 4–ին

Ախալքալաք

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3993, թ. 128-129:

Փաստաթուղթ № 22

Ախալքալաքցիների խնդրագիրը Վրաստանի և Իմերեթիայի թեմի առաջնորդին իրենց ուսումնարանին միջնակարգի կարգավիճակ տալու վերաբերյալ

Նորին Բարձր սրբազնության Առաջնորդի թեմին Վրաստանի և Իմերեթի՝ տեառն Արիստակես եպիսկոպոսի

Ախալքալակ քաղաքի
ներքոստորագրյալ բնակիչներից

Խ ն դ ի ր

Ձերդ Բարձր Սրբազնություն՝ այցելելով քաղաքիս անչուշտ կծանոթանա մեր երկսեռ ուսումնարանների նյութական և բարոյական վիճակի հետ և անտարակույս կգտնի դրանց բազմակարոտ ամենայն կողմից, նայելով մանավանդ այն մեծ կոչմանը, որ կատարելու են դույն ուսումնարանները ոչ միայն քաղաքիս, այլև Ախալքալաքա և Ծալկայի վիճակաց բազմաթիվ հայ ժողովրդի համար:

Անտարակույս Ձերդ Բարձր Սրբազնության սրտագին ցանկությունը կլինի բարձրացնել գեթ Ս. Մեսրովբյան արական ուսումնարանը միջնակարգյան ուսումնարանի դրության, որպեսզի դա վիճակի և քաղաքի համար լինի աղբյուր աղգային և հոգևոր կրթության. այդ իսկե և մեր հասարակության ցանկությունը: Բայց ինչպես իրագործել այդ փափագելի նպատակը:

Քաղաքիս փոքրաթիվ հասարակությունը մանավանդ դրամական ներկա ճգնաժամի մեջ անկարող է միայնակ իրագործել այդ ցանկությունը: Թեև չի զլանա ըստ չափու կարողության օգնել իր կողմից, ուրեմն անհրաժեշտ է արտաքին օգնություն և այդպիսի օգնության մենք իրավունք ունենք սպասել հետևյալ աղբյուրներից:

Նախ՝ Ս. Մեսրովբյան ուսումնարանը վերածվելով միջնակարգյան դպրոցի կծառայի անչուշտ և Ախալքալաքի և Ծալկայի վիճակի գյուղական ժողովրդոց մտավոր և բարոյական կարյացը: Հետևապես գյուղական ժողովուրդը վայելելով դույն ուսումնարանի բարիքը պարտավոր կլինի դրամի հավաքին մասնակից լինել և ծանրության: Սույն օրինավոր հիման վրա վիճակի մոտ եկեղեցիներից կարելի է գեթ հնգական րուպլի տուրք ժողովել, որից կգոյանա 300 րուպլի դումար:

բ) Հայտնի է մեզ, որ ուրիշ վիճակներում պսակի հրամաններից մի որոշյալ տուրք յատկացրած է ուսումնարաններին, եթե նույն տիպի տուրք որոշվի ստանալ և մեր գավառում, այն ժամանակ 100-150 րուպլի ևս կարող է դրանից գոյանալ:

գ) Հայտնի է, որ Բուռնաշեթի գյուղի եկեղեցում գտնվող Ս. Գրիգոր անուն ավետարանի եկամուտը հատկացրած է մեր ուսումնարաններին, բայց այդ եկամուտը գրեթե կիսով չափ կորցվում է նույն եկեղեցվո երեցփոխանների ձեռքում և տարեց տարի պակասելով այժմ հազիվ հասնում է 200 րուպլու. եթե այդ եկամուտի հավաքումը կարելի լինի հավատարիմ մարդոց հոգաբարձության հանձնել, տարակույս չունինք, որ կկրկնապատկվի:

դ) Մեր վիճակում կան մի քանի այլ մանր ուխտատեղիներ, ինչպես Ս. Գևորգը Խոսպիա գյուղի մոտ, Ս. Հովհաննեսը Գանձա գյուղի մոտ, Կովացխել անվանվածը Ախալցխո ճանապարհի վրա, Տիլիսկա գյուղի մոտ, Ապլարը Կուլիկամ գյուղի մոտ, Վանք անվանվածը Ախալքալաքի մոտ, կան և մի քանի ուրիշներ Բարալեթ, Խանդո, Վաչիան գյուղերի մոտ, ուր բավական նշանավոր բազմություն ժողովվում է տարվա որոշյալ ժամանակներում: Բայց ցայսօր հայտնի չէ մեզ, թե ուր է գնում դոցանից գոյացած եկամուտը, որ ինչքան էլ աննշան լինի, այնուամենայնիվ, հավաքաբար կարող է մի փոքրիկ գումար կազմել և հատկացվել Ս. Մեսրովբյան ուսումնարանին:

ե) Ախալքալակա Ս. Խաչ եկեղեցվո մոմավաճառության արդյունքը մասամբ միայն պատկանում է ուսումնարանին, բայց կարելի է եկեղեցվո անհրաժեշտ ծախքերը հոգալից հետո մնացորդ բոլոր եկամուտը հատկացնել ուսումնարանին, որ եկեղեցվո բարոյական հաստատության առաջին նեցուկն է:

զ) Համաձայն Ջերդ Բարձր Սրբազնության ողորմած կարգադրության, որոշված է մեր դպրոցներին 1000 րուպլի նպաստ ստանալ Ախալցխո Ս. Փրկիչ եկեղեցվո մեր գավառում գտնվող կայքերի տարեկան եկամտից, բայց որքան տեղեկացանք Ախալցխո ժողովուրդը բողոք բանալով կամենում է արգելակ լինել Սրբազնության իրավացի կարգադրության: Տարակույս չունինք, որ Ջերդ Սրբազնությունը չի փոխի իր ողորմած կարգադրությունը և մեր դպրոցները ներկա տարվանից կստանան հիշյալ նպաստը, որ մեծ նշանակություն ունի նոցա բարգավաճման համար:

Առաջարկելով մեր գիտցած այն աղբյուրները, որոնցով կարելի է Ս. Մեսրովբյան դպրոցի վիճակը բարձրացնել ամենախոնարհաբար

խնդրում ենք անել հարկավոր կարգադրությունները իրագործել մեր ջերմ փափագը և տեսնել մեր ուսումնարանը վերածված գեթ չորեք-դասատնյան հոգևոր դպրոցի:

Ավելի քան հարյուր ախալքալաքցիների ստորագրություններ, այդ թվում՝
քաղաքի դեպուտատք՝ Մարգար Մարգարյանց,
Հովհաննես Վահրամյանց

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3993, թ. 142-144:

Ծանոթագրություն

Փաստաթուղթն անթվակիր է: Բայց նրա վրա կա Վրաստանի և Իմերեթիայի առաջնորդարանում ստացվելու ժամանակը՝ 30 հուլիսի 1884 թ.: Կարելի է ենթադրել, որ այն կազմվել է ոչ շուտ քան նույն թվականի հուլիսի ընթացքում:

Փաստաթուղթ № 23

Ախալքալաքի գավառում Ախալցխայի Սուրբ Փրկիչ եկեղեցուն պատկանող գյուղերի կալվածքները վարձակալության տալու պայմանագրի նմուշը

կ ա ն դ ի ց ի ա

Ի դեկտեմբերի 1896 ամի: Վրաստանի և Իմերեթիի Հայոց Վիճակային Կոնսիստորիայն տալիս է վարձու Ախալցխո Հայոց Սուրբ Փրկիչ եկեղեցվո կալվածները, որոնք գտնվում են Ախալքալակա գավառի մեջ. այն է՝ Կարզախ, Սուլտա գյուղի 2/3 մասը, Խավետ և Տատեչ չեն գյուղերը. նույնպես Խոզաբին, Կարավ, Քոխվաս, Վերանա Կարզախ, Բետաչեն, Պոզալ, Ղատանա, Վերանատատեչ (կամ Ղըռըխս քիլիսե), Կիլերթա, Ասլլախ ավերակները և Քասիկ ղայա անվանյալ տեղին, Հանդերձ նրանց մեջ և շուրջը գտնված խոտնոցներով, լեռներով, արոտատեղերով, դաշտերով և վարելահողերով, հինգ տարի ժամանակով, որը պարտ է հաշվել 1897 թ. հունվարի մեկից մինչև 1901 թ. վերջը: Սահմաններն են Ա) Կարզախի, Սուլտայի, Տատեչի յուրյանց ավերակներով միասին: Այսպես. արևելյան կողմից Արքունի Սովուխ-պուլախ անվանյալ կալվածքը, Տիլիփ գյուղը, Թաթոսյաններին պատկանյալ Վարդիսուբան ավերակը, Փոքր Գոնտուրա գյուղը, Բայսուրտցյանցի Շահտուպան ավերակը: Հյուսիսից դարձյալ Շահտուպան ավերակը, մեծ Գոնտուրա գյուղի սահմանը, Վաչիանի լեռը (Վաչիանի սահմանը), Մուլթաֆյանցների Կործխալա ավերակը, Օգամ (Հոկամ- Ա.Մ.), Երքնճա, Դաբնյա (Դավնյա - Ա.Մ.)

և եկեղեցապատկան Խավետ գյուղերը: Արևմուտքից Արքունի Սամախոռ ավերակը և Խոզաբին լճի մի մասը: Հարավից հին տաճկական սահմանը, որ վերջին ռուս-տաճկական պատերազմից զկնի մնաց Ռուսաստանին: Բ) Խավետ գյուղի սահմաններն են՝ արևելքից Դաբնյա, հյուսիսից Խտրթա, արևմուտքից՝ Օլոտա, Մրակվալ, հարավից՝ Կարզախ գյուղերը: Դ) Աբլախ ավերակի սահմաններն են. արևելքից՝ Ինտիկա ավերակը, Մրակովալ գյուղը, հյուսիսից Կուր գետը: Արևմուտքից և հարավից հին տաճկական սահմանները: Եկեղեցապատկան Սուլտա և Տատեչ գյուղերի սահմանների մեջ գտնվում է Ղռխ Քիսալովի ավերակը, որից կապալառուն չունի իրավունք օգտվելու: Պայմանները հետևյալներն են. 1) Վարձակալը կարող է ստանալ Կարզախ Խավետ, Սուլդա և Տատեչ Շեն գյուղերի բնակիչներից, նույնպես Քոխվաս, Վերանա Կարզախ, Բետաչեն, Պոզալ, Ղատանա, Վերին Տատեչ ավերակներից այն ամեն տուրքերը, որոնք թե՛ երկրային մթերքով և թե՛ դրամով նշանակված են մի առ մի հականե անվանե նույն գյուղերի մեջ մտցրած Ուստավնայա գրամոտայում իրենց հողաբաժնի սահմաններով, համաձայն հողաչափութեյան ընդհանուր օրենքներին: 2) Եկեղեցական ավերակները՝ Խոզապին, Կարավ, Աբլախ, Կիլերթա և Քեսիկ Ղայա անվանյալ հողը իրենց սահմաններով, որոնք որոշված են դատարանների վճիռներով և Ուստավնայա գրամոտայով, մնում են վարձակալի անմիջական տիրապետութեյան և չեհեցողութեյան ներքո, նույնպես վարձակալի հայեցողութեյան ներքո են մնում Կարզախի, Պոզալի և Տատեչու բոլոր լեռները. ևս ավերակներից գրամոտայով ավելացած մասերը: 3) Այն վճռերը, որոնք եկեղեցին ունի թե՛ սահմանների և թե՛ ավերակների վերաբերութեյամբ, եթե ամբողջութեյամբ կամ մասամբ վճռվեն հօգուտ եկեղեցվո հինգ ամյա ընթացքի մեջ, եկեղեցին կստանա հասանելի արդյունքն անցյալ ամաց համար, իսկ վարձակալն կստանա այնուհետև նույն կալվածքից ստանալիք արդյունքը՝ առանց հավելված վճարման վարձուց. իսկ եթե վճռվին ի վնաս եկեղեցվո, վարձակալն չունի իրավունք պահանջելո ինչ Հոգևոր իշխանութեյունից: 4) Հիշատակված գյուղերի մեջ գտնված եկեղեցական տները՝ ամբարները, հողերը և կալերը, որոնք Ուստավնայա գրամոտայում մի առ մի նշանակված են, կթողվին հօգուտ և ի չահեցողութեյան վարձակալի ցվերջ կապալին, որոնք կհանձնվին նորան օրինավոր ցուցակավ հանդերձ չեն և անչեն գյուղերովն: 5) Վարձակալը պարտական է ամենայն հավատարմութեյամբ պաշտպանել եկե-

ղեցվո իրավունքները ամբողջ կալվածքի վերաբերությամբ, սահմանակից կալվածատերերի հափշտակությունից և հարստահարությունից ազատել, ամեն հնարք գործ դնելով անժամակորույս. և այն վեճերը, որոնք կարող են լինել այս առթիվ վարձակալի և հափշտակողների միջև, վարձակալը պարտական է առաջ տանել իրան սեպհական ծախսով: Ամեն մի վեճի և նորա ընթացքի համար հատկապես պարտական է վարձակալը Վիճակային կոնսիստորիային ստեպ ստեպ տեղեկություն տալ: 6) Ամեն մի դաշնադիր, որ վարձակալը կապելու լինի այս և այն անհատի, գյուղացու կամ հասարակության հետ հողաչափությունից դուրս մնացած ավերակները, լեռները, արոտատեղերը և հողերը վարձով տալու համար, պարտավոր է նա գրել տալ պատշաճավոր դրոշմավոր թղթի վերա և նոտարական կարգով, որոնց վավերական պատճենքը միշտ հանձնել Հոգևոր իշխանությանը: 7) Վարձակալը չունի իրավունք որևիցե վնասի պատճառով կալվածոց, թե բնական և թե ամեն տեսակ դիպվածական, չհատուցել. լիովին կամ ըստ մասնյա վարձ կապալին յուր ժամանակին: Նույնպես եթե ոմանք բնակիչներից դուրս գնան եկեղեցական գյուղերից՝ կապալառուն չունի իրավունք պակասեցնել տարեկան վարձի քանակությունը: 8) Վարձակալը չունի իրավունք ծանրաբեռնել հիշյալ գյուղերի բնակիչներին ավելորդ պահանջներով կամ հարստահարել նրանց. հակառակ դեպքում ոչ միայն պետք է ավելորդաբար ստացածը ունի հետս դարձուցանել, այլև տուժել հօգուտ եկեղեցուն կրկնապատիկը, եթե օրինավոր քննությամբ ստուգվին 9) Վարձակալը պարտավոր է դնել Կոնսիստորում գրավական տարեկան վարձի երրորդական մասը, իսկ տարեկան վարձը մատուցել Կոնսիստորիային տարին վարձի երեք անգամ կանխիկ. այն է Հունվարի, մայիսի և սեպտեմբերի մեկին յուրաքանչյուր ամի: 10) Եթե վարձակալը նշանակյալ ժամանակին չներկայացնե վարձը և ժամանակից անցանե հինգ օր, պարտական է հատուցանել հօգուտ եկեղեցուն երեք հազար րուբլի իբրև տուգանք, զրկվելով բոլորովին վարձակալության իրավունքից և յուր գրավականից: Վարձակալը նույնպես կենթարկվի հիշյալ տուգանքին և այն ժամանակ ևս եթե կարժե կամ հակառակ կվարվի սույն դաշնագրի որևիցե պարբերությանը: 11) Վարձակալը չունի երբեք իրավունք առանց նախընթաց հաճության Հոգևոր իշխանության սույն վարձակալության իրավունքը տալ ուրիշին: 12) Կալվածները կհանձնվին վարձակալին Կոնսիստորից կարգված առանձին հավատարմատարի ձեռքով պատշաճավոր կարդով 1897 թ. դարնանը

միայն եկեղեցական ամբարները կմնան նախկին վարձակալի տեսչության ներքո մինչև նոր 1897 թվականի հուլիսի 15-ը: 13) Դաշնագիրը պետք է գրվի պատշաճավոր թղթի վրա, որ կառաջարկե վարձակալը և կմնա Կոնսիստորիայում, իսկ վավերական պատճենը կտրվի վարձակալին:

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2961, թ. 154-154ա:

Փաստաթուղթ № 24

Կարզախ, Սուլդա և Դադեշ գյուղերի քահանաների խնդրագիրը Հովհաննես ավագ քահանա Քաջազնունու՝ իրենց տնտեսական ծանր վիճակի պատճառով եկեղեցապատկան հողերից հողատարածքներ ստանալու մասին

Նորին Բարձրապատուութեան Տէր Գործակալին գաւառացն Ախալքալաքայ և Ծալկայի բարեկրօն Յովհաննէս քահանայի Քաջազնունւոյ ի ծխական քահանայից Կարզախ, Սուլտայ և Տատեչ եկեղեցեպատկան գիւղօրէից Ախալցխոյ՝ ի Մարտիրոսէ Տէր–Մարտիրոսեանց, ի Մկրտչէ Մալխասեանց և ի Կարապետէ Տէր–Գաբրիէլեանց

Խ ն դ ի ր

Յօրէ մուծանելոյն ի գիւղօրայս մեր զօրէնս հողաբաժնից, մեք զրկեցաք ի վարելահողաց մերոց, որք ի ձեռս մեր էին ի նախնեաց մերոց, և բաժանեցան ի վերայ հարկատու ժողովրդականաց: Դիմեալ առ մարմնաւոր իշխանութիւնն և ժողովուրդս՝ ընկալաք զբացասութիւն բազմադիմի խնդրանաց մերոց, պատճառելով թէ, այդ կախեալ է ի կամաց Հոգևոր իշխանութեան ձերոյ: Ահա յայսպիսի տարտամ վիճակի գտանիմք մինչ ցարդ, զրկեալ գոլով ի բերոց հողագործութեան, իսկ քահանայական արդիւնք մեր, որպէս յայտ է Բարձրապատուութեան Ձերում և Հոգևոր իշխանութեան մերոյ՝ օր ըստ օրէ նուազեալ՝ չտան մեզ զչափաւոր սնունդ ըստ քահանայական կոչման մերոյ, այլ տանին զմեզ ի թշուառութիւն և ի մուրացութիւն:

Երջանկայիշատակ Հանգուցեալ Հայրապետին մեր տեսի զայսպիսի աղէտեալք վիճակ ներկայ քահանայից, սրբատառ կոնդակաւ իւրով տնօրինաց, զի ի խնդրել ժողովրդականաց ի վերայ իւրեանց զձեռնադրութիւն նորոգ քահանայի՝ նախապէս համախոսական ստորագրութեամբ պարտաւորեսցին տալ քահանային իւրեանց զվարելահողս: Եւ քանզի մեք ձեռնադրեալ եմք նախքան զայս տնօրինու-

թիւն Հայրապետին մերոյ, վասն որոյ այսու աղերսագրով մերով դիմեալ Բարձրապատուութեան Ձերում՝ իբրև քաջածանօթի և մերձաւորի վիճակաց մերոց՝ խոնարհաբար խնդրեմք միջնորդ լինել առ Հոգևոր իշխանութիւն մեր, չնորհել մեզ յեկեղեցապատկան հողոց, որք արտաքոյ հողաբաժնի գտանին գէթ առ նուազն զտասնական տեսեալին. վարելահողս ի սնունդ գերդաստանաց մերոց, այնու զի մեք առ ըստ օրինակի ժողովրդոց վճարեսցուք եկեղեցւոյն կամ կապալառուացն զտասանորդս բերոցն, որով ազատէք զմեզ ի թշուառ աղքատութենէ ապագային:

ծխական քահանայ Կարզախ գեղ՝ Մարտիրոս քահանայ Տէր-Մարտիրոսեանց

ծխական քահանայ Սուլտայ գեղ՝ Մկրտիչ քահանայ Մալխասեանց
ծխական քահանայ Տատէչ գեղ՝ Կարապետ քահանայ Տէր-Գաբրիէլեանց

ի 4 սեպտեմբեր 1891 ամի,
ի գ. Կարզախ:

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2961, թ. 161-161ա:

Փաստաթուղթ № 25

Ախալցխայի Սուրբ Փրկիչ եկեղեցուն պատկանող կալվածքների գյուղացիների դիմումը Վրացահիմներեթական կոնսիստորիային՝ իրենց հողերի կապալառուների կողմից հարստահարվելու և դրանից ազատվելու իրենց պատկերացումների մասին

Ի վիճակային կոնսիստորիայն Հայոց Վրաստանի և Իմերեթի
Ախալքալաք գավառի Տատեչ գյուղի հասարակութեյան պատգամավորներից Մարգար Մանուկյանից և Զաքար Կուրղինյանից

Խ ն դ ի ր

Վիճակային իշխանութեյանդ արդեն հայտնի են այն ամեն ազգի զրկանքները և հուսահատական ճնշումները, որ եկեղեցական գյուղերից մեն մի հասարակութեյունքը կրել են և մինչև այսօր կրում են կապալառուների քամմնելի հարստահարութեյանց պատճառավ: Ավելորդ համարելով այստեղ մի առ մի հիշել կապալառուների պահանջած և արվեստական (արհեստական-Ա.Մ.) դատավարութեյանց միջոցավ ստացած տուգանքները, դատավարութեյանց ծախսերը և այլն և այլն, վիճակային իշխանութեյանդ ուշադրութեյունից վրիպած չի լինի և այն հանգամանքը, որ այդ անխիղճ գեղծումների պատճա-

ռավ պարզամիտ գյուղացին, թեև հարազատ որդի յուր Հոգևոր իշխանութեյան՝ սակայն անկարող վիճակի մեջ լինելով որոշել, թե ուստի՞ են յուր կրած վնասները՝ խեթ աչքով է սկսած նայել նորա կարգադրութեյանց և դրդել է յուր ջերմեռանդութեյան զգացմանց մշտաբուղի աղբյուրը դեպի ազգային և եկեղեցական ամենակարևոր կենսական այլ առարկաները: Եվ ի՞նչ կարող է մտածել աղքատութեյան հասցրած և հացի կարոտ հայ գյուղացին: Իսկ այժմ, երբ ամեն տեղ մտածում է գյուղականների դրութեյունը բարվոքելու մասին միջոցներ որոնելու, և ի մասնավորի, այդ ընդհանուր տրամադրութեյան մեջ, եկեղեցական գյուղերից բնակիչների անդորրը և բարեկենցաղ վիճակ ունենալը հանգուցյալ Վեհափառ Հայրապետների, Սրբագումար Սինոդի, պատկառելի ատենիդ և ընդհանուր Հոգևոր իշխանութեյան մտածութեյան առարկա է դարձած գյուղական հասարակութեյանց, մեզ վերա ևս պարտականութեյուն է դրված, նույնիսկ մեր օգտի համար, միջոցներ որոնել Հոգևոր իշխանութեյան այդ բարի դիտավորութեյունը իրագործելու: Եվ ամենագլխավոր, նպատակահարմար և եկեղեցուն առավել օգտավետ ենք համարում կալվածները փոխանակ չահամոլ և հարստահարիչ կապալառուաց հանձնելու՝ տալ զայնս մեզ՝ գյուղականաց: Ուստի ի դիմաց մեր ամբողջ հասարակութեյան, ներկայացնելով ընդ այսմ մեզ հանձնված հավատարմաթուղթը, խոնարհաբար խնդրում ենք վիճակային ատենիդ մեր հասարակութեյանը տալ կապալով ինն տարի ժամանակավ մեր Տատեչի հողերը «Գեոկ դաղ» լերան Տատեչի կողմի մասը Քեոսիկ ղայա և Կիլերթա ավերակը, որոց տարածութեյունն է մոտավորապես 3200 տեսյատին (դեսյատին- Ա.Մ.): Խոստանում ենք վճարել կապալադրամ յուրաքանչյուր մի տեսյաթինին մի մի րուբլի, տարեկան երեք անգամ, յուրաքանչյուր քառամսյակը կանխիկ, թողնել գրավական, օրինավոր դաշնագրով, ըստ տնօրինութեյան վիճակային իշխանութեյանդ: Որքան ձեռնտու է մեր առաջարկած պայմանը եկեղեցու համար, այնքան և նպաստավոր ամեն մի գյուղացու: Դորանով խափան կվերջանան այն ամեն տարաձայնութեյուններն, որք չարունակ առաջացել են (չարունակ) կապալառուների անխիղճ կեղեքումների չնորհիվ և Հոգևոր իշխանութեյան ձանձրութեյի պատճառել, դորանով խեղճ չինականը միջոց կունենա վայելելու յուր արյուն քրտինքով աշխատած մի պատառ հացը, դորանով եկեղեցին կստանա առավել եկամուտ, քան մինչև այսօր ստացել է կապալառուներից և դորանով վերջապես կնորոգվի Հոգևոր իշխանութեյան և յուր հարազատ ժո-

ղովրդի մեջ այն որդիական խոնարհ ակնածութիւնը և մտերմութիւնը, որ խախտվել է երկար տարիներից ի վեր՝ ի վնաս երկուստեք կողման, հարազատ հոր և որդվոց և հօգուտ ճարպիկ բաղտախնդիրների, միմյանց հաջորդող կապալառուների:

Ախալցխա, 5 հոկտեմբեր, 1891 ամի

ստորագրութիւններ՝ Մարքար Մանուկյանց, Զաքար Կուրղինյանց

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2961, թ. 158-159:

Փաստաթուղթ № 26

Բարալեթ, Ջխարոլա և Կոթելիա գյուղերի հայ բնակչության խնդրագիրը Մկրտիչ Խրիմյան կաթողիկոսին՝ վրաց հոգևորականության հալածանքներից խուսափելու համար «Խոզաբին» ավերակի տարածքը տեղափոխվելու արտոնություն ստանալու մասին

Նորին Վեհափառութեան
Տեառն Տեառն Մկրտչի Սրբազնագուն կաթողիկոսի ամենայն Հայոց և ծայրագուն պատրիարքի Մայր Աթոռս մերո սրբո Էջմիածնի. *ստորագրյալ Ախալքալաքա գավառի Բարալեթ, Ջխարոլա և Կոթելիա գյուղերի բնակիչներից*

Խ ն դ ի ր

*Անհիշատակ տարիներից ի վեր է, որ մենք բնակութիւն ենք հաստատած վրացի ազգի հետ խառն նույն գյուղերում և նոցա հետ միասին կազմել մի հասարակութիւն և մի համայնութիւն. բայց մեծամասն վրացի հասարակութիւնը մինչև օրս հարստահարող է հանդիսացած սակավաթիվ հայ լուսավորչականներիս վերա, որոնց կողմից միշտ անպակաս են եղած փախցնելն մեր աղջկունքը և նոցա հետ պսակվել. միշտ անպակաս են եղած փախցնելն ի հարկե վրացի քահանայի միջոցավ պսակվել կամ դորա հակառակը. եթե մեր երիտասարդներից ևս փախցրել են վրացիներից աղջիկներ, դարձյալ պսակվել են նոցա եկեղեցում և հետևապես նոցանից առաջացած սերունդը մկրտվելով վրացոց եկեղեցում, ընդունել (է) վրացադավանութիւն, բայց ի՞նչ պետք է անել այսպիսի եղելութեանց դեմ, միմիայն հանձնվելով նախախնամութեանը և լռել: Այսպիսի դեպքերը չունին և չեն էլ կարող վերջ ունենալ՝ քանի որ գյուղական կյանքի պայմաններն միշտ նպաստող են այսպիսի դեպքերն հառաջանալուն երկսեռ հայ և վրացի երիտասարդական հասարակութիւնը, որով-

հետև միշտ թե դաշտում թե հարսնեւտներում և թե այլ այսպիսի տեղերում խառն ման գալով, խառն պարելով, խառն աչխատելով և խառն զբոսնելով, ընկնում են անխուսափելի սիրահարության գիրկն, որի հետևանքն արդեն պարզ է: Սույն ասածներն ապացուցանելու համար հարկ ենք համարում այստեղ ծանոթացնել մի քանի դեպքերու հետ՝ 1) սրանից տաս տարի առաջ մեր Բարալեթի գյուղում Նոնեի (Հովհաննես) Անտոնյանցի դուստրն փախցրեց հարևան վրացի Դավիթ Կոճուևը և վրացի քահանայի ձեռքով պսակվեց, որոնց զավակներն են այժմ վրացի. 2) 1892 թվականումն էր մեզանում կոթելիացի Նազարեթ Մատթեոսյանի աղջիկն պսակվեցավ վրաց եկեղեցում Կիկոլ Պիպիլուիդզեի հետ և բարալեթցի Նիկողոս Ղուլումչյանցի դուստրն հարևան վրացի Մաքսիմ Գվարամաձեի հետ վրացոց եկեղեցում: 3) Նույնպես Բարալեթում հայազգի Գևորգ Աբոյանցը պսակվեցավ վրացի կնոջ հետ. վրացի քահանայի ձեռքով և որի զավակներն դարձյալ մկրտվել են վրացոց ավազանում: Թեև մեր մտածման գլխավոր առարկան միշտ եղել է այսօրինակ նեղակիր դրությունից դուրս գալն, բայց մինչև օրս չենք կարողացել մի եզրակացության հասցնել մեր խորհուրդը և մտածմունքը, իսկ վերջերումս հավաստիանալով, որ կոթելեցի Վարդան Ստեփանյանը խնդրմատույց է եղել Վեհափառությանդ գաղթելու գավառիս մեջ գտնվող եկեղեցական ավերակներից մեկում և այնտեղ բնակություն հաստատելու, մենք ևս որ նման օրինակ ենք նորան և որին արդեն տված ենք հավատարմաթուղթ մեր կողմից դիմելու Վեհափառությանդ Սրբազնասուրբ գարշապարին և խնդրելու օծելույդ ողորմածագույն տնօրինությունը, հարմար համարեցինք միանալ նրա հետ և սույն ամենախոնարհ խնդրագրով հայտնելով մեր վիշտն Վեհափառ հայրությանդ ամենախոնարհաբար աղերսել բարեհաճելու մեր բարոյական վիճակն ապահովել թույլատրելով մեզ հիշյալ Վարդան Ստեփանյանի հետ միասին գաղթելու եկեղեցապատկան ավերակներից «խոզապի» անվանյալ ավերակում և այնտեղ մշտական բնակություն հաստատելու ուստավնի կռամատայի (уставная грамота — Ա.Մ.) կանոնով:

Սույն խնդրագիրն հանձնում ենք հավատարմատար կոթելիացի Վարդան Ստեփանյանին և բարալեթցի Մարգար Խեչոյանցին մատուցանելու ըստ պատկանելույն 15-ն հունիսի 1894 ամի ի գ. Բարալեթի:

Բարալեթ	Չխարոլա	Կոթելիա
1. Մարքար Խեչոյանց	10. Հոհաննես Սերոփյանց	16. Վարթան Ստեփանյան
2. Գրիքոր Մամուլյանց	11. Անդրեաս Սիմոնյան	17. Հոհաննես Պողոսյան
3. Բադո Մանուկյան	12. Ռինան Մկրտչյան	Սոցա գիր չգտնալու մասին
4. Սահակ Բարյանց	13. Եղիազար Յորդանյանց	և իրանց խնդրանոքն
5. Սարքիս Մամուլյանց	14. Սահակ Խաչոյանց	ստորագրեցի և իմ տեղն
6. Գևորք Խեչոյանց	15. Սարքիս Խաչոյանց	18. Խնկիհանոս Հովանեսով
7. Սահակ Ղույումչյանց	Բարալեթցի Ղազար Բերուջանյանց,	
8. Ակոփ Ամրշատյանց	Պետրոս Կարապետյան, Մկրտիչ Մակարյանց,	
9. Վանո Ամրշատյանց	Հահաննես Ջաղալյանց, Մկրտիչ Մամուլով,	
	Սեթրակ Մարտիրոսյանց, Աբրահամ Գրիգորյան	

Սույն խնդրագրի մեջ հիշված եղելությունների իսկության համար վկայում եմ

Բարալեթու հայ ժողովրդո ծխական Կարապետ քահանա Տեր Կարապետյանց

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2961, թ. 264-265ա:

Փաստաթուղթ № 27

Յուցակ գիւղօրեից չինական հասարակութեանց Բարալեթի, Արակովայի *և* Վարևանի *վնասելոց յերկրաշարժէն Ախալքալակայ 19 դեկտեմբերի 1899 ամի*

NN ըստ կարգին	անուանք գիւղօրիից	թիւ տանց ի գեղջն	թիւ տանց կործանելոց յերկրաշարժէն	թիւ անձանց երկուց սեռից	թիւ անձանց մահացելոց յերկրաշարժէն	քանակութիւն անասնոց եղելոց ի գիղջն	քանակութիւն անասնոց սատակելոց յերկրաշարժէն
1.	Մերենիա	130	117	1048	86	2158	622
2.	Փոքր Սամսար	54	51	510	27	1810	319
3.	Մեծ Սամսար	50	39	496	46	2010	614
4.	Բէժանօ	125	117	1160	48	2362	169
5.	Ականայ	66	39	489	14	608	79
6.	Իխտիյա	72	69	654	9	1323	160
7.	Դրկնա	21	19	171	3	221	22
8.	Գոմ	110	4	920	3	30	»
9.	Այաբումաճ	48	15	422	2	394	4
10.	Բայխօ	48	45	440	»	1328	141
11.	Կաճօ	32	1	390	»	»	»
12.	Սիրգ	10	10	120	»	271	29
13.	Բայանդա	30	4	252	»	74	2
14.	Չխարուլա	38	11	416	»	206	»
15.	Լօմատուրս	26	19	312	»	696	16
16.	Ղատօլար	38	12	470	1	6	4
17.	Բուղաշէն	50	5	466	»	2	1

18.	Բարալեթ	130	8	1038	»	»	»
19.	Կօթելիա	78	1	681	»	37	8
20.	Արակովա	228	5	960	1	110	12
21.	Մաճատիա	78	17	740	1	500	49
22.	Խուլկումա	51	2	451	1	100	11
23.	Օլաւէրտ	80	8	652	3	359	33
24.	Կօրխ	84	7	793	»	118	14
25.	Ապուլ	89	2	914	»	46	5
26.	Բզաւէթ	45	3	480	»	73	9
27.	Ազաւրէթ	102	40	1230	»	298	34
28.	Խաճղօ	130	2	1109	3	»	»

Ուղիղ է՝ կատարող պաշտօնի գաւառապետին Ախալքալակայ պաշտօնակատար ատենադպրի
Համեմատ է բնագրին, գործակալ ա) մասին Ախալքալակայ աւագ քահանայ Քաջազնունի:
Ուղիղ է՝ Կիւրեղ վարդապետ Կիւրեղեանց

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 35, ց. 1, գ. 103, թ. 68:

Փաստաթուղթ № 28

Ախալքալաքի Չամտուրա գյուղի 62 բնակիչների համախոհական նամակը Վրացա-իմերեթական կոնսիստորիային իրենց տնտեսական ծանր կացության մասին

Վրաստանի և Իմերեթիայի Հայոց Վիճակային Կոնսիստորիային Ախալքալակա գավառի Չամտուրա գյուղի համայնքից

խ ն դ ի ր

Համայնքս որպես սակավահող գյուղացիներ, որով իսպառ զրկված ենք մեր աշխատավոր անասունների գոյությունը պահպանելու հնարավորությունից, որ միակ նեցուկն է գյուղական հասարակության տնտեսական դրությանը, սկսած քսան տարուց ի վեր կապալով վերցնում ենք գավառումս գտնված Ախալցխայի Ս. Փրկիչ եկեղեցուն պատկանող «Գյոքդաղ» անվանյալ արոտատեղիներից մի մաս, որի համար և վճարում էինք եկեղեցվո կապալառուներին տարեկան 700 րուբ. կապալավարձ, իսկ վերջին տարիները, երբ եկեղեցական կալվածների կառավարությունը հանձնվեցավ ծխական հոգաբարձությանը, տարեկան վճարը բարձրացավ մինչև 1000 րուբլի, որպիսի կապալավարձը որքան որ թանկ և որքան ծանր էր մեզ համար, այնուամենայնիվ մենք ստիպված էինք անտրտունջ ապրիլ, քանի որ քսան տարուց ի վեր մեր համայնքից ամեն մեկը գնված

ունենալով յուր համար ամառվա տներ՝ «յալլա», դոցա քանդելը նշանակում է ենթարկվիլ տնտեսական քայքայման և ավերածութ-յան, մանավանդ, որ մեր չրջակայքում կապալով տրվող ուրիշ արո-տատեղիներ չկան էլ, որ հնար լինի տեղափոխվիլ ուրիշ տեղ: Այս-պես թե այնպես մի կերպ հարմարվել էինք օգտվել այդ տեղով և պահպանել մեր տնտեսական աղքատիկ վիճակը: Բայց այժմ Ախալց-խայի ծխական հոգաբարձութ-յունը՝ այդ ի վաղուց գիտե մեր չահե-ցողութ-յան տակ եղած արոտատեղին առնելով մեզանից տվել է մեր հարևան Տիլիսկա դյուղի հասարակութ-յանը՝ հետևյալ հանգամանք-ների բերմամբ:

5. Մենք խնդրում ենք, որ մեր գավառը, որի 80000 բնակչությունից 60000-ից ավելին հայեր են, մնացած 20000-ը՝ թուրքեր ու դուխոբորներ (որոնք էլ ուզում են գաղթել Ռուսաստան) միացնենք Հայաստանի Հանրապետության, ըստ որում վրաց կառավարությունը իր օրով մեզ նեղում էր ըստ ամենայնի, բացի այդ, երբ երկիրը իրենց էր մնում, գալիս տիրում էին, իսկ երբ թուրքն էր գալիս, հանձնում էին նրան ու հեռանում. դեռ թողած այն, որ մեր հողերը, այն էլ վարելահողերը՝ խլում, տալիս էր թուշերին վարձով, մեզ զրկում ամեն հնարավորությունից ծանր գաղթից հետո տնտեսապես բարելավվելու (Համար - Ա.Մ.): Օրինակներ ու փաստեր չատ կան:

Եթե չլինի այժմիտ մեզ չուտափույթ օգնություն, որ ազատվենք մահի ճանկերից, եթե մեր երեխաների մասին չլինի հոգացողություն՝ որբանոց, եթե մեր երկիրը չմիանա Հայաստանի հետ, որով ապահովվում ենք կոտորածից..., ճնշումից, ևս առավել, եթե մեր երկիրը չդառնա Սովետական Ռուսաստանի մասը և մեր գլխից չվերանա թուրքական յաթաղանը մենք այլևս անկարող ենք մնալ մեր հայրենիքում, որ այս քանի տարի է վերածվել է դժոխքի, և մենք ստիպված ենք գաղթելու Ռուսաստանի խորքերը, և պիտի ավելացնենք, որ այդ ուղղությամբ չատ գյուղեր արդեն քայլեր արել են, ինչպես օրինակ մեր եղբայր կաթոլիկ հայերը, որ պատրաստվում են գաղթելու:

Հույս ունենք, որ մեր այս գրությանը ուշադրություն կդարձնեք և կտնօրինեք ինչ հարկն է և կուղարկեք Ձեր կողմից մի մարդ՝

մեր երկրին ու կենցաղին տեղյակ մարդ, որ գա ամեն ինչ տեսնի ու Ձեզ մանրամասն զեկուցանի: Սակայն ամենից առաջ օգնություն չորի ու սննդի:

Սուլդայի ներկայացուցիչներ՝ Թադեոս Ապաջյանց, Վաղարշակ Ալոպյանց, Գրիգոր Կուջոյան *նրա անգրագիտության պատճառով և իր խնդրանքը ստորագրեցի՝* Մամիկոն Ալթունյան

Մրակովալ գյուղի ներկայացուցիչ՝ Լևոն Կարապետյան

Վաչիան գյուղի ներկայացուցիչներ՝ Լևոն Ալեքյանց, Արտակ Կասպարենց, Վարդգես Պոլոյենց Ափոյենց

Կարզախի ներկայացուցիչներ Ցոլակ Կարապետյան, Մամիկոն Ալթունյան

Դադեշ գյուղի ներկայացուցիչ՝ Մեսրոպ Մովսիսյան:

23 / 4 1921 թ.
Թիֆլիս

ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, ց. 2, գ. 46, թ. 65-66:

Փաստաթուղթ № 42

Ախալքալաքի գավառում տիրող իրավիճակը 1921 թ. ապրիլ-հուլիսին

Զեկուցում
Խորհրդային Հայաստանի Հանրապետության Ջավախքի հայության ներկա դրության մասին

Սույն թվի փետրվար ամսի վերջերին, երբ Խորհրդային Ռուսաստանի զորքերը մտնում էին Վրաստան, այդ նույն ժամանակ վրաց մենշևիկ կառավարության անդամները Ջավախքում - դոկտոր Նիկորաձե և Ռամիշվիլի պաշտոնապես դիմում են քյամիլական (քեմալական -Ա.Մ.) կառավարության, Թրքական հողում գյուղը որոշելով տեսակցության տեղը, և հայտնում, որ իրենք գավառը թողնում հեռանում են, հրավիրում են նրանց մտնելու տիրելու: Նիկորաձեի ու Ռամիշվիլու հետ խարհրդակից են եղել Վալեր. Միկելաձե և Ս. Նատիրաձե, որոնք կազմելիս են եղել սովետ օբորոնի (Պաշտպանության խորհուրդ -Ա.Մ.) և որոնք իրենց ժամանակին բռնություններ են գործ դրել հայ ժողովրդի վրա, պահանջելով նրանից նարոդնի գվարդեցիների համար կոչիկ ու տրեխ և այլն:

Այդպես էլ լինում է. քեմալական չարքերը, տեղական խուժանի հետ մտնում են գավառը և սկսում են թալանն ու բռնաբարութ-

յունները, ապա կոտորածը. նախ թալանում են բոլոր անասունները, չորերը, տեղաշորերը, հացահատիկը, մյուս պաշարեղենները, գործիքները երկրագործական, ապա թե պահած և թե հագի զգեստները, որից հետո ժողովուրդը մնում է միանգամայն տկլոր ու սոված. այդ ամբողջ թալանը թուրքերը բառնում են հայերի սայլերին, մի մասն էլ տալիս հայ տղամարդկանց չալակը և ուղարկում Հոդամ և այլ թրքական գյուղեր. դրանից հետո սկսում են նորատի կանանց և օրիորդների բռնաբարությունները, որի հետևանքով այսօր հղի կանայք կան և ապա սկսում սպանությունները, ինչպես Գյումուրտա գյուղում, որտեղ սպանվածների թիվը հասել է մինչև 60, բացի անտեր կորածներից: Ժողովուրդը փաստացի պնդում է, որ եթե Խորհրդային Ռուսաստանի զորքերը մի օր էլ ուշանային մտնել Ախալքալաք (Ջավախքի քաղաքը), հայերին սրի էին քաշում: Ջմռռանամ ասել, որ սաստիկ ծեծից չատերի ականջները խլացել են:

Ամենից խիստ տուժել են Կա(ր)զախ, Սուլթան (Սուլդա -Ա.Մ.), Դատեչ, Գյումալուրտա, Վաչյան, Մեծ Խանչալի, Խանչալի, Մեծ Գենտուրա, Տիլիֆ, Նամզարա, Խոչաբեկ, Խանբեյտ (Խանդո՞-Ա.Մ.), Ջիդրաշեն, Սադխա, Կուլիգա(մ) և այլ գյուղեր, որոնց հետ և Ախալքալակը:

Այժմ, երբ գավառը թալանված ու ծանր վիճակի մեջ է, պետք է կարծել, որ վրաց խորհրդային կառավարությունը հոգ կտաներ նրա խաղաղ ապրելուն և աշխատելուն, մինչև իսկ կօգներ նրան, սակայն փաստերը այլ բան են ասում. - տեղական վարչությունը, որ կազմված է բացառապես վրացիներից սաստիկ...

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 1, գ. 122, թ. 131:

Ծանոթագրություն

Վերոհիշյալ փաստաթուղթն ամավարտ է: Հավանաբար այն կազմվել է 1921 թ. մայիս-հուլիս ամիսներին:

Փաստաթուղթ № 43

Հայաստանի ժողկոմխորհի որոշման նախագիծը՝ Ախալքալաքի գավառը ՀԱԽԴ-ին միացնելու նպատակահարմարության մասին

Основания, заставляющие Совнарком Армении считать наиболее целесообразным включение Ахалкалакского уезда в пределы С. С. Р. Армении заключаются в следующем:

1. Этническое расселение населения уезда.

Согласно статистическим данным Кавказского Календаря за 1917г. в Ахалкалакском уезде проживало:

Армян	Грузин	Мусульм.	Разных
82, 775	10,305 * Без грузин Мусульман... ... 9, 212	6, 335 **	Русских 7. 542 Разных европейск. национ. – 13 Евреев – 204
* Из них груз. Мусульман – 2. 877 ** Из них курдов – 904			

2. Удобство в управлении

Управление Ахалкалакским уездом представляет большее удобство со стороны Армении, чем Грузии. Путь, соединяющий Ахалкалаки с Арменией, /дорога Ахалкалаки – Богдановка – Ермоловка – Кызыл Коч – Александрополь/ остается открытым в течении всей зимы, в то время как путь, ведущий в сторону Грузии зачастую оказывается закрытым благодаря снежным заносам.

3. Наличие в Ахалкалакском уезде значительного количества вымороченных земель, дает возможность образовать земельный фонд для нужд армян – беженцев.

В результате мировой войны армянское население Ахалкалакского уезда потеряо почти половину своего состава и ныне насчитывает от 45 до 50 тысяч душ. Свободные земли могут быть использованы для расселения на них армян – беженцев Турции, Карсской области и др. районов.

4. *Ахалкалакский уезд вообще считался спорным и по договору от 9 по 17–го января 1919 г. и был передан лишь во*

временное управление Грузии, впредь до окончательного разрешения вопроса о нем.

Крайняя северная часть Ахалкалакского уезда, населенная по преимуществу грузинами, естественно, не предположена к включению в пределы С. С. Р. Армении.

ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 113, ց. 3, գ. 75, թ. 3-5:

Ծանոթագրություն

Սույն փաստաթղթի 1921 թ. հուլիսի 27-ով թվագրված տարբերակի տակ, որն աննշան փոփոխություններով կազմվել է վերոհիշյալ օրինակի հիման վրա, կա Ա. Մռավյանի ստորագրությունը: Ձեռագրով ավելացված է Ալ. Բեկզադյանի ազգանունը (տե՛ս ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 128, ց. 1,գ. 674, թ. 7-8), հանգամանք, որը հուշում է նրա ստեղծմանը վերջինիս մասնակցությունը:

Փաստաթուղթ № 44

ՌԿ(բ)Կ Կավբյուրոյի 1921 թ. հուլիսի 7-ի և Վրաստանի կոմկուսի կենտկոմի քաղբյուրոյի հուլիսի 16-ի նիստերի արձանագրությունները Լոռու Չեզոք Գոտու, Ախալքալաքի և Խրամի (Ծալկայի) գավառների պատկանելության խնդրի վերաբերյալ

Протокол № 13

Зас. пленума Кавбюро 7. VII. 1921
Сталин, Орджоникидзе, Махарадзе, Киров, Нариманов, Мясников, Назаретян, Орахелашвили, Фигатнер.

НКИД* Г. Сванидзе
А. Мравян

1. О присоединении нейтральной зоны к Грузии или к Армении	1. Вся нейтральная зона входит в состав ССР Армении (голосуют за —6, воздержался — 1)
2. О присоединении к Армении Ахалкалакского и Храмского районов	2. Передать на рассмотрение ЦК Грузии, заключения которого внести на следующий пленум.

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Հավաքածու 1, գ. 7, թ. 45:

* Народный комиссар иностранных дел.

Փաստաթուղթ № 45

Протокол № 1

Заседания Политбюро ЦК КПГ 16. VII. 1921 г.

Присутствовали:	Махарадзе Ф., Мдивани Б., Орахелашвили М.
Слушали:	Постановили:
1. О нейтральной зоне	1. Подтвердить постановление Кав. бюро ЦК РКП о передаче этой зоны Сов. Армении. За: Махарадзе, Орахелашвили. Мдивани полагает, что этот вопрос уже предрешен в постановлении Кав. бюро, иначе он считал бы целесообразным производство плебисцита населения.
2. Об уступке Сов. Армении для переселенческого фонда Ахалкалакского и Храмского районов	2. Исходя из соображений политических, равно как экономической связи Ахалкалакского района с Тифлисом, признать предложение т. т. армян неприемлемым.

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Հավաքածու 1, գ. 7, թ. 43:

Փաստաթուղթ № 46

Պողոս Աբելյանի զեկուցագիրը Ախալքալաքի հիմնահարցի մասին

ԱԽԱԼՔԱԼԱՔԻ[1] ԳԱՎԱՌԸ

ԶԵԿՈՒՑՈՒՄ

Խ. Ս. Հայաստանի Արտաքին Գործոց ժողովրդական կոմիսար ընկ. Ասքանազ Մռավյանի համար Պողոս Աբելյանից Ընկեր Մռավյան.

Դուք ինձ առաջարկեցիք առողջանալուց հետո գրել մի համառոտ զեկուցագիր Ախալքալաքի գավառի մասին: Ես կարող եմ ուշ առողջանալ կամ էլ չառողջանալ, իսկ իմ տալիք տեղեկությունները ձեզ այժմ են հարկավոր: Վերջին հանգամանքը ի նկատի ունենալով՝

ես որոշեցի, թեկուզ հիվանդ, տալ Ձեզ մի քանի էական տեղեկություններ Ջավախքի դրության և կյանքի զանազան կողմերի մասին: Անշուշտ, Դուք գրությանս շատ թերություններին ներողամիտ աչքով կնայեք, չմոռանալով, որ նրա հեղինակն անկողնի մեջ պառկած է շարադրում այս զեկուցագիրը:

1. Ջավախքի պատմությունից

17-րդ դարից սկսած մինչև 1828 թ., այսինքն՝ մինչև ռուսական տիրապետությունը, Ախալքալաքի շրջանը, Ախալցխայի փաշայության հետ միասին, Տաճկաստանի տիրապետության տակ էր գտնվում: Նշանակում է, Ռուսաստանն Ախալքալաքը ստացել է պատերազմի իրավունքով (Տաճկաստանից և ոչ թե Վրաստանից):

Մինչև 1829 թիվը Ախալքալաքի շրջանում ապրելիս են եղել մեծ մասամբ տաճիկներ, սակայն նրանք ռուսների գալով, մեծ մասամբ գաղթել են Տաճկաստան, որքան ինձ հայտնի է, Էրզրումի շրջանը՝ այն հայերի վայրերում, որ 1828 և 1829 թթ. կարապետ եպիսկոպոսի[2] ղեկավարությամբ Էրզրումից գաղթեցին մասամբ Ալեքսանդրապոլ, գլխավորապես՝ Ախալքալաք և Ախալցխա: Բայց չի կարելի ասել, թե Ախալքալաքի հայությունը բաղկացած է միմիայն գաղթական տաճկահայերից. դեռ օսմանյան տիրապետության շրջանում այնտեղ ապրելիս են եղել ինձ համար անհայտ քանակությամբ հայեր, որոնց տոհմերին մինչև օրս էլ կարելի է պատահել օր. Տիլիսկա, (Դիլիսկա - Ա.Մ.), Գանձա (Վահան Տերյանի դյուղը) դյուղերում: Այդպիսիներին դավառում անվանում են եռլիներ՝ ընիկներ: Տաճկաստանից, եթե չեմ սխալվում, դավառ են գալիս մոտ 15000 հայ, որ տեղական չնչին քանակությամբ տաճիկների, մի քանի տասնյակ քրդերի և վրացիների համեմատությամբ, կազմում են հենց սկզբից (1829 թ.)[3] բնակչության ճնշիչ մեծամասնությունը: Գաղթական հայերի[4] հետ եկած, ինչպես հայախոս հայ կաթոլիկներին (ներկայումս մոտ 7-8 հազար), այնպես էլ տաճկախոս հայ կաթոլիկներին (թվով մոտ 9000) վրաց մենչևիկյան կառավարության օրոք ու հովանավորությամբ և վրաց մամուլի զգալի մասը և ինքը՝ մենչևիկյան կառավարությունը, զանազան խոստումներով ու ահաբեկումներով, հայտարարեցին վրացի կաթոլիկներ...: Հայ կաթոլիկների մի մասը՝ անգիտակից, աղքատ, ճնշված մասը, ինքը նույնպես ինքնապահպանման բնազդից դրդված, իրեն վրացի սկսեց համարել,

և շատերն իրենց ազգանունները վերածեցին ձե, չվիլի վերջավորությունների: Բայց մյուս մեծ մասը կանգ չառավ մենչևիկյան բլոկի հալածանքների դեմ և իր մարդկային արժանապատվության դեմ ոչինչ չարեց՝ նա իրեն հայ է համարել, հայ էլ համարում է: Եթե չեմ սխալվում, հիսունական թվականներին Նիկոլայ I Բռնապետը Ղրիմից մի մեծ քանակությամբ դուխոբորներ է աքսորում Ախալքալաքի գավառը[3]: Բայց այդ դուխոբորներն Ախալքալաքի չրջանում ստանում են յուրաքանչյուրը մի քանի անգամ ավելի հող, քան հայերը, վրացիները և թուրքերը: Այժմ էլ ամեն մի դուխոբոր, համեմատած բնակչության մյուս տարրերի հետ, իրեն ներկայացնում է մի տեսակ կալվածատեր: Դուխոբորներին տալիս են մեծ մասամբ մոտակա, հայերից խլած հողերը: Այդ է պատճառը, որ ժամանակ առ ժամանակ, մանավանդ հեղափոխությունների սկզբներին, դուխոբորների ու սակավահող հայ գյուղացիների մեջ վեճ է ծագում մի ժամանակ խլված հողերը վերադարձնելու մասին: Դուխոբորների և հայերի այդ վեճը բարեբախտաբար երբեք սուր աստիճանի չի հասել, իսկ այժմ անասնազուրկ և սերմազուրկ հայն իր ունեցած հողն էլ չի կարողանում ցանել և չի հիշում իր հին հողային իրավունքների մասին: Ավելին, այժմ դուխոբորներն ուզում են իրենց հին հայրենիքը վերադառնալ: Գավառի ինչպես ամբողջ հայությունը, այնպես և դուխոբորների հետ դավա դատ ունեցող հայերը պատրաստ են նոր արտոնություններ տալ նրանց, միայն թե չգնան: Ախալքալաքցին առանց նրան վախենում է մենակությունից, այսինքն՝ կարծում է, որ առանց ռսի տաճիկն իրեն ավելի չատ կոչնչացնի, պարզ է, ներկա օսմանյան կառավարության մտքով: Դուխոբորի գնալն Ախալքալաքից ախալքալաքցու համար համազոր է ռուսի գնալուն Կովկասից:

2. Ջավախքի աչխարհագրական դիրքը

Ջավախքը, ինչպես հայտնի է, բաղկացած է ընդարձակ, այսպես ասած լեռնաշաչտից և նրան եզրող բարձր լեռներից: Թե՛ լեռնամասերում և թե՛, մանավանդ, սարահարթերում բուսնում են գարի, ցորեն, կտավատ և առհասարակ զանազան ձիթաբույսեր: Ախալքալաքում գրեթե աչնանացան չկա: Անձրևներ հաճախ են գալիս: Առանց ոռոգման լավ աճում են նույնպես գետնախնձոր և այլ բանջարեղեններ: Բայց Ախալքալաքի ապագան նրա անասնապահության և մեղվաբուծության մեջ է: Ախալքալաքի անասունի միսը և

մեղրը եզակի համ ունեն: Ամեն մի քայլափոխում հիանալի աղբյուրներ կան: Անտառներ գավառը չունի: Ախալքալաքի հյուսիսային մասում՝ Գորվա գավառում, կան յայլաներ, արոտատեղեր, որ հնուց Ախալքալաքի տասնյակ հայ գյուղերի ձեռքումն են եղել: Այժմ աշխատում են, օգտվելով գյուղացիների խեղճացած դրությունից, խլել այդ հողերը, սարերը և տալ դրսի տարրերին՝ թուշերին: Նույնիսկ սակավանասուն ախալքալաքցին զգում է դրա մեջ իր տնտեսական զարգացման համար մահացու սպառնալիք: Բղավող պահանջն է՝ այդ յայլանները պետք է խլել Գորվա գավառից և միացնել իրենց բնական վայրին՝ Ջավախքին: Նրանց արհեստական կերպով մի ժամանակ կտրել են Ախալքալաքից և միացրել են Ռոմանովների տան Բորժոմի կալվածքին: Այժմ այլևս ոչ ոք բռնությամբ չի կարող գավառից կտրել նրա օրգանական մասը, երկրորդ՝ յայլանները պետք է մնան իրենց նախկին իսկական տերերի ձեռքում: Առհասարակ նկատվում է. ինչ հողեր որ այս երկու-երեք տարում պետականացվել են, զարմանալի զուգադիպությամբ հայերին չեն տրվել: Ջեն տրվել հաճախ և այն կալվածատիրական հողերը, որ ի սկզբանե եղել են հայ ժողովրդի ձեռքում: Օրինակ՝ Ախալցխայի եկեղեցիների, ճիշտը՝ դպրոցների հայտնի (15. 000 դեսյատինից ավելի Ախալքալաքի գավառում) կալվածքը՝ «Գեոդ գաղ» արոտատեղերը խլում են եկեղեցուց, բայց և մեծ մասամբ խլում են միաժամանակ մերձակա Սուլտա, Տատեչ և Կարծախ գյուղացիներից, որոնք 1829 թվից ապրում են այդ հողերի մոտ ու վրա: Ասենք (խոսքը- Ա.Մ.) հայերին գավառում խորթ հայտարարելու մասին է:

Ախալքալաքից չորս մեծ ճանապարհներ են գնում ա) մեկը՝ դեպի Ախալցխա, ամենալավն է, որովհետև ձմեռը ձյունով չի ծածկվում բ) մյուսը՝ ոչ այնքան կանոնավոր, Ծալկայի և Մանգլիսի վրայով գնում է դեպի Թիֆլիս, գ) երրորդը՝ մոտ 100 վերստ երկարությամբ (Ախալքալաքից Ախալցխա տանող ճանապարհը 66 վերստ է), տանում է դեպի Ալեքսանդրապոլ և դ) չորրորդը՝ նույն երկարությամբ խճուղին տանում է դեպի Արդահան: Ախալքալաքի գավառի մակարդակը, որքան հիշում եմ, 2200 վերստի չափ է: Այս ճանապարհներից վերջինը՝ Արդահանինը, բնակչության համար 1918 թվից հանդիսացել է ուղղակի մահվան ճանապարհ: Տաճիկները, այդ թվից սկսած մինչև այս տարվա մարտի սկիզբը, չորս անգամ մտել են գավառ, թալանել, կոտորել են գյուղացիությանը, հատկապես՝ հայերին (միայն 1918 թվին վրացիներին էլ, երբ սրանք հայերի հետ միասին

կռվում էին տաճիկների դեմ) և անպատիժ հեռացել: Այդ, այսպես կոչված, Արդահանի դուռը միշտ փակված պետք է պահել թե՛ գավառի և թե՛ առհասարակ Թիֆլիսի շրջանի համար:

Ջե՞ որ տաճիկները 1914 թվին նույնպես այդ դռնով փորձեցին մտնել Անդրկովկաս: Այս լավ էր գիտակցում Ախալքալաքի Հայրենակցական նախկին վարչությունը: Ես և գրող Դերենիկ Դեմիրճյանը դեռ Ախալքալաքի անկումից մի երեք ամիս առաջ, 1918 թվի փետրվար, մարտ և ապրիլ ամիսներին շարունակ դիմում էինք կովկասյան նախկին սեյմին, մեր այն ժամանակվա Ազգային խորհրդին, հատկապես նրա զինվորական նախարար Ստ. Մամիկոնյանին, ցույց էինք տալիս ժողովրդի գլխին պատրաստվող աղետի հնարավորությունը և պահանջում էինք ա) բնակչության մթերքի, գոնե միլիոնավոր փթերով հացահատիկի մի մասն արտահանել հարևան գավառները, որ մի գայթակղություն քիչ լինի ավազակային հարձակման համար գավառի վրա, բ) պատրաստվել հնարավոր էվակուացիայի համար և գ) գլխավորը. գավառը, ճիշտ՝ խեղճ գյուղացիությունը պաշտպանելու համար ուժեր ուղարկել գավառ և կազմակերպել տեղական ուժերը, առհասարակ գավառը համարել կարևոր զինվորական կետ: Մեզ չլսեցին, մեր առաջարկներին Մամիկոնյանը միշտ պատասխան ուներ. «ոչ մի փամփուշտ ախալքալաքցիներին»: Վերջ ի վերջո մի պոգրանիչնի ժանդարմ-գնդապետ գրաբերի[6] ուղարկեցին, որը վախից փախավ, երբ տաճիկները մտան քաղաք: Այժմ էլ բնակչությունը վախենում է, որ այդ կետի վրա ուշադրություն չեն դարձնում, ուստի հնարավոր է նոր աղետ: Տաճկաստանն այդ կետի նշանակությունը լավ է հասկացել իր պոգրոմային[7] նպատակների համար: Նա Ախալքալաքի և Ախալցխայի շրջաններում, այդ գործին լավատեղյակ Զորի Զորյանի[8] ասելով, ունի պահած այժմ էլ 60-70 հազար կանոնավոր և ոչ կանոնավոր զորք, որն ամեն մի հարմար րոպե կարող է մտնել գավառ, ինչպես և մտել է: Ով կամենում է Ախալքալաքի, մասամբ և Բորչալուի և Լոռվա գյուղացիությանը փրկել անակնկալներից, Արդահանի դուռն ընդմիշտ պիտի փակել, այսինքն՝ մի կողմից՝ Ախալքալաքը պետք է զինվորապես ուժեղացնել, մյուս կողմից՝ պետք է Արդահանի, Ջղրի և հարևան շրջաններում կուտակվող ուժերը ցրել, ինչպես և ոտքից գլուխ զինված բնակչությունը (մահմեդական) զինաթափել:

Ախալքալաքցի հայերին մենշևիկյան Վրաստանը վաղուց զինաթափ էր արել՝ զինելով գավառի թուրքերին ու վրացիներին:

3. Բնակչության կազմը

Բնակչության կազմը որոշելու նյութեր պետք է տային 1916 և 1917 թթ. գյուղատնտեսական միօրյա թվագրի (однодневная сельскохозяйственная перепись) *հետևանքները, որ դժբախտաբար, դեռ հրատարակած չեն: Սակայն կովկասյան օրացույցի 1917 թ. վերջի (տվյալները-Ա.Մ.) և մեր անձնական տեղեկությունները դրեթե տալիս են բնակչության ազգագրական կազմի հետևյալ ստույգ պատկերը.*

Ըստ կովկասյան օրացույցի միակ պաշտոնական տեղեկությունների՝ 1916 թվի հունվարի 1-ին (այնուհետև տեղեկություններ չեն եղել) Ախալքալաքի գավառում կար ընդամենը.

1. Հայեր՝ չուրջ թիվ ...	83000	*հոգի*
2. Քրիս. և մահ. վրացիներ...	10000	,,
3. դուխոբորներ...	8000	,,
4. Թուրքեր (տաճիկներ)...	8000	,,
5. Քրդեր և մի քանի տասնյակ հույներ և այլ ազգեր	1000	,,
Ընդամենը՝	110000	,,

1918 թ. հունիսից սկսած այս թվերի մեջ տաճկական արշավանքը և նրա ուղղակի ու անուղղակի հետևանքները (գլխավորապես մենշևիկների սարքած արհեստական սովամահությունը և ցրտահարությունը Բաքուրիանի[9] և Ծալկայի մահավայրերում) առաջացրին հետևյալ մոտավոր թվերը: Հայ բնակչության թիվը կովկասյան օրացույցում զգալիորեն պակաս պետք է բերված լինի. հայերը 1916 թվի հունվարի 1-ին գավառում կլինեին ոչ պակաս 90-95 հազարից: Եթե 1916 թ.-ի հունվարի 1-ից աճումը հաշվենք մինչև տաճկական մեծ արշավանքը, մինչև 1918 թ.-ի հունիսի 5-ը՝ Ախալքալաքի գրավումը և բնակչության վախուստը, այն ժամանակ բնակչության թվական պատկերը կլինի հետևյալը.

– հայեր՝ ընդհանուր թվով	100000	հոգի
– վրացիներ (մահ. և քրիս.)	11000	,,
– դուխոբորներ	9000	,,
– թուրքեր	$8^3/_4$ հազ.	,,
– քրդեր և այլ ազգեր	$1^1/_4$ հազ	,,
Ընդամենը՝	130000	,,

Ներկայումս ժողովուրդի գլխավորապես հայերի և մասամբ վրացիների մի մասի մահացումից հետո (նույնպես թուրքերը քիչ տուժեցին).

– Հայեր՝ ոչ պակաս ...	60000	հոգի
– Վրացիներ (մահ. ու քրիս.) ...	8000	,,
– Դուխոբորներ...	9000	,,
– Թուրքեր...	8000	,,
Ընդամենը՝	85000	,,

Ուրիշ խոսքով, տոկոսական տեսակետից բնակչության ազգագրական կազմը (ամբողջության վերաբերմամբ) արտահայտվում է այսպես.

– Հայեր	70,5	%
– Վրացիներ	9,5	%
– Թուրքեր	9,5	%
– Դուխոբորներ	11	%[10]

Եթե վերցնենք միմիայն հայերին և վրացիներին, նրանք կազմում են.

1. Հայեր	88	%
2. Վրացիներ	12	%

Մենշևիկյան կառավարությունն աշխատում էր դրսից բերած վրացիներով բնակեցնել գավառի հայապատկան հողերը, սակայն նա առանձին հաջողություն չունեցավ՝ տաք եղանակի սովոր քութայիսցի վրացին դաժան բնություն ունեցող (ձմեռը) Ախալքալաքից չէր հափշտակվում: Այնուամենայնիվ, կարծեք, մի քանի հարյուր հոգի բերված են, որոնց ես հաշվի չեմ առնում: Նրանք բերված և բնակված են տեր ունեցող հողի վրա, ուստի գավառի բնակիչներ չեն կարող հաշվվել:

4. Տաճկական առաջին հարձակումները գավառի վրա

Վրաց մենշևիկյան և մանավանդ կալվածատիրական մամուլը վերջին տարիներին աշխատում էր Ախալքալաքի վրա թուրքերի հարձակվելը միմիայն դաշնակցության գործ դուրս բերել: Ես Ախալքալաքում չեմ եղել: Եղա 1918 թվի մայիսի վերջերից մինչև գավառի անկումը, իբրև հայ-մուսուլմանական բլոկի և հայրենակցություններ միության ներկայացուցիչ՝ գավառի ժողովուրդների մեջ համերաշխություն հաստատելու համար: Սակայն ուշ էր համերաշխության համար աշխատելը, գավառում թուրքեր չկային, նրանք

փախել էին: Տաճիկ զորքի հետ կռվում էին միացած հայերը և վրացիք: Ինձ վիճակվեց գավառական ամբողջ ինտելիգենցիայի և հայ զորքերի հրամանատար գնդապետ Առաքելյանի ֆիքսացիայի ենթարկված փախուստից հետո, երկու-երեք օրով կազմակերպել դիմադրություն տաճիկներին, որ ժողովուրդը կարողանա փախչել: Սակայն, ամեն միջոցով ես Թիֆլիսում անաչառորեն հետևել եմ դեպքերի զարգացմանը գավառում և ահա ինչպես են նրանք հաջորդվում (հիշողությամբ եմ ասում՝ գրավոր ոչինչ չկա արամադրությանս տակ, ուստի շատ մանրամասնություններ բաց եմ թողնում):

Կարծեք 1918 թվի փետրվար ամսին տաճկական ագենտների ղեկավարությամբ Ախալցխայի չրջանի մեծամասնություն կազմող թուրքերը (չխառնել թաթարների հետ) հարձակվեցին նույն գավառի վրացական 11 գյուղերի (Սարո, Խիզբավրա և այլն) վրա և թալանեցին: Թիֆլիսի թերթերը և սեյմը ստացան հեռագրեր: Հայերը (Ախալքալաքի գավառի) օգնեցին վրացիներին և ետ մղեցին գրոհը: Այսպիսով՝ կազմվեց երկու կողմ՝ թուրքեր՝ օսմանցիների ղեկավարությամբ և հայեր ու վրացիներ՝ սկզբում՝ իրենց տեղական խմբապետների, իսկ մի երկու ամիս անց՝ մարտ-ապրիլից սկսած, իբր թե կանոնավոր զորահրամանատարների ղեկավարությամբ՝ հայերը գնդապետ Առաքելյանի (որն իրեն ենթակա էր համարում Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդին, իսկ վերջը, երբ պետք է Բաքուբրիանից փախչեր՝ Բորժոմում նստած վրացի դեն. Արջևանիձեին), իսկ վրացոց ղեկավարն էր (միաժամանակ բոլոր ուժերի հրամանատար) այդ դեն. Արջևանիձեն, որը տաճիկների դեմ գործում էր և Ախալցխայի չրջանում: Այդ ժամանակ (մարտին՝ իմ կարծիքով) Ախալքալաքի ավելի ուժեղ հայությունը հարձակվում է Ախալքալաքի և Ախալցխայի սահմանի վրա գտնվող թուրք, որքան հիշում եմ Կոկլիա գյուղի վրա, թալանում են գյուղը (ոչ քանդում), գյուղացիք փախչում են Արդահան: Արդահանի տաճիկներն այդ բանից երեք օր հետո կոտորում են Արդահանի մի քանի հազար հայերին: Երկու հազարի չափ արդահանցի ճողոպրած կանայք ու երեխաներ սոսկալի դրությամբ հասնում էին Արդահանից Ախալքալաք: Ախալքալաքցիները նրանց ընդունում են, պահում, սակայն նրանցից տալավորությունը ցնցող է լինում: Տեղական խուլիգան տարրերը, որոնց տրամադրություն չեն ունենում սանձահարելու իշխանությունները, ձևքում ունեցած հայ էսէռները և դաշնակցականները, մանավանդ ավելի ուժեղ դաշնակցականները, հարձակվում են բանտում նստած մոտ 300-400 հոգի

թուրք, գլխավորապես Հարուստ (կալվածատեր Պալավանդովների ամբողջ տոհմն այստեղ է լինում) գերիների վրա, անպատվում են նրանց, կողոպտում և տան մեջ այրում բոլորին: Մինչ այս ամենը տեղի էր ունենում գավառում, սեյմը և Ազգային խորհուրդը ոչինչ չարին տեսնելու, թե ինչ է կատարվում այդ խորշում: Սարոյի դեպքերի առթիվ սեյմի անդամները քիչ գործածեցին իրենց լեզուները, իբր թե պատգամավորություն ուղարկեցին: Բայց այս ամենը կատարվեց: Որքան դեպքերն ավելի էին ծավալվում, այնքան Հայոց ազգային խորհուրդը և սեյմը խուլ էին ձևանում: Այդ ժամանակ միակ խելացի և գիտակից գործող ուժը Տաճկաստանն էր: Նա Արդահանի ճանապարհով, զինված խուժանով մտնում է Ախալքալաք: Առաջին անգամ մտավ մայիսի երկրորդ կեսին: Ժողովուրդը փախավ: Տաճիկները ետ քաշվեցին՝ երևի կամենալով անտառները փախած ժողովրդին ետ բերել անասունները խլելու և իրենց կոտորելու համար: Հիրավի, ժողովուրդը հետ եկավ: Հունիսի 1-5-ը տեղի ունեցավ երկրորդ արշավանքը: Այս ժամանակ գավառի ամբողջ ժողովուրդը փախավ, նույնպես գնդապետ Առաքելյանը: Ժողովուրդը և զորքը մնացին անտեր: Ես մի երկու օր առաջ գավառ եկա (ասացի հայ-թրքական բլոկի և հայրենակցական միությունների կոմիից համերաշխություն հաստատելու), ստիպված եղա գործի գլուխ կանգնել: Սքանչելի ռուս կապիտան Ռեզնիկովի հետ արագ կազմակերպեցինք երկու-երեք օրով դիմադրություն: Ամսի 4-ին մեր ընդ. հրամ. գեն. Արշևանիձեն, առանց մեզ իմաց տալու (կանգնած էինք առաջին գծում, թշնամուց 5-6 վերստ հեռու) դիշերը Բորժոմ է քաշում վրացական ուժերը և մեր թիկունքը բաց անում: Բարեբախտաբար բնակչությունը (բացառությամբ թուրքերի ձեռքը մնացած մի քանի հազար հոգու, որոնց նրանք կոտորում են, խնայում են միայն մի քանի տասնյակ քաղաքացի պառավների և կանանց, որոնց վռնդում են գավառից) արդեն Բորժոմի և Ծալկայի սահմաններումն էր: Հունիսի 5-ին մեր զորամասը ևս մաքրեց գավառը, որը մնաց ամբողջապես տաճիկների ձեռքը մինչև 1918 թ. դեկտեմբերի սկզբները, ճիշտը մինչև դեկտեմբերի 5-ը, երբ դաշնակիցների հաղթության հետևանքով նրանք հեռացան և մտան վրացիները: Ինձ ամենատույգ աղբյուրներից հայտնի է, որ տաճիկները հեռանալիս առաջարկել են գրավել գավառը Երևանի կառավարությանը, սակայն սա, չկամենալով անկոռեկտ լինել վրաց նկատմամբ, հրաժարվում է, և

այսպիսով, վիճելի գավառը ժամանակավոր գրավելու իրավունքը տալիս է վրացիներին:[11]

5. Տաճիկներն ի՞նչ տարան գավառից

Ախալքալաք գավառը հաճախ ենթակա է լինում բնական պատահարների՝ կարկուտ, երաշտ, ցուրտ և այլն, ուստի և հաճախ աղքատանում է: Սակայն վերջին տարիները բնությունը որոշել էր ապշեցնել գյուղացիությանն իր առատաձեռնությամբ: Մի քանի տարի իրար հետևից լինում էր չտեսնված բերք, մանավանդ 1917 և 1918 թթ.: Բնակչությունը փողի կարիք չուներ և քիչ էր ծախսում իր բերքը՝ գարին և ցորենը: Թուրքերի եկած ժամանակ գավառում կլիներ ամենաքիչը 3-4 միլիոն փութ պատրաստի հացահատիկ, 30 հազարից անց փեթակ, 200 հազարից անց գլխավորապես խոշոր անասուններ, միլիոնավոր փթերով դարման խոտ և հարդ, տասնյակ հազարներով տնային թռչուններ (հայտնի է, որ գլխ. Ախալքալաքն էր Թիֆլիսին ձու տվողը) և այլն և այլն: Մի խոսքով, սա Կովկասի ամենահարուստ գավառն էր այդ շրջանում: Իսկ անասուններով միշտ ամենահարուստն է եղել: Ախալքալաքի թե՛ տնտեսական զարգացումը և թե՛ բնակչության աճումը եզակի տեղ էին բռնում: Բնակչության աճումն արտահայտվում էր 2 1/4 և 2 1/2 կոեֆիցենտով (Ռուսաստանում այդպիսի կոեֆիցենտ չկա): 1829 թվի 10-15 հազար հայությունը 1918 թվին 100 հազարի էր հասել... օր.՝ մեր գյուղը (Գյունբուրդա), որ 1829 թվին 20-25 տնից էր բաղկացած, 1918 թվին 250 տուն ուներ, ըստ որում Ախալքալաքի գյուղական միջին ընտանիքն ուներ 8 անդամից ոչ պակաս, գուցեև՝ մինչև 9: Պաշտոնական տեղեկությունները երևի 6-7 անձից ավելի չեն հաշվում, ուստի և բնակչության ընդհանուր թիվը պակաս է դուրս գալիս: Գավառը տնտեսապես այնպես էր զարգացել, որ չդիտեր ինչ աներ շատ արտադրությունից: Փաստ է՝ 1917 թվին հարսանիքներին հաճախ պարում էին հարյուրանոցների վրա: Բնության առատաձեռնությունից կատաղած այս կրեսոսները տաճկական արշավանքով ոչ միայն կորցրին իրենց ամբողջ գույքը, այլև 1918 թվի բերքը, որ ամենահամեստ սպասելիքներով պետք է տար 7-8 միլիոն փութից ավելի: Ի դեպ, գավառից չփախան մոտ 6 հազար հայ կաթոլիկներ (նրանք մնացին իբրև Հռոմի կամ ինչպես իրենք են թուրքերին ասել, Ավստրիայի հպատակները), դուխոբորները և բնականաբար՝ թուրքերը: Փախան մոտավորապես

90 հազար հոգի հայեր: 2-4 հազ. հայ գավառում մնացին, մասամբ մորթվեցին, ինչպես Խորենիա, Սաթխա և այլ գյուղերի բնակիչների մի մասը, մասամբ էլ հետագայում վռնդվեցին Բորժոմի կողմերը, ինչպես քաղաքի մոտ 1000 պառավներ, երեխաներ և կանայք: Փախան և 11 հազար վրացիներ (բոլոր վրացիները): Այս 100 հազար գյուղացու ձեռքում կլիներ 60 հազար դեսյատինից ոչ պակաս բերք: [12] Եթե դեսյատինը տար 150 փութ, այդ կաներ 9 մլլիոն փութ հաց: Կարճ (ասած - Ա.Մ.), տաճիկներին պատրաստի և բերքով մնաց ոչ պակաս 10 մլլիոն փութ հաց, մլլիոնավոր փթերով դարման, տասնյակ հազար փթերով յուղ, պանիր, տասնյակ հազար փեթակներ, հավեր, տաս հազար փութ բուրդ, անասհման տնային իրեր, երկրագործական գործիքներ, քաղաքի ապրանքը, զինվորական գույք և այլն, և այլն: Նույնպես նրանց մնաց, կամ հետագայում Բորժոմի լեռներում և Ծալկայում անպաշտպան գաղթականության վրա հաճախ հարձակումներով, խլվեց երեք-չորս տասնյակ հազար խոշոր անասուն: Ահա այսպիսի ժառանգություն մնաց տաճիկներին: Հետագայում ականատեսները պատմում են, որ թուրքերը ամբողջ հինգ-վեց ամիս, իրենց տիրապետության շրջանում հունիսի 5-ից մինչև դեկտեմբերի 5-ը (1918 թ.) գավառի հայ կաթոլիկների և դուխոբորների հարյուրավոր սայլերով կրում էին Տաճկաստան այդ բարիքը և ապշած էին մնացել այդ հարստության վրա: Տաճիկների ասելով այդպիսի հարուստ գավառ նրանք չէին տեսել: Այսպես անկազմակերպ, անտեր գյուղացիության վրա հարձակվեց մի զինվորական ուժ, կողոպտեց այդ գյուղացիությանը և անպատիժ կերպով յուրացրեց թալանը: Կրեսոսները դարձան մուրացիկներ, իսկ մուրացիկները՝ կրեսոսներ: Մեկը աշխատեց, մյուսը խլեց այդ աշխատանքի արդյունքը:

6. Բնակչությունն օտարության մեջ

Ախալքալաքի ճարհատ հայությունը և 10 հազար վրացիությունը գավառից կարողացան փախցնել իրենց անասունների զգալի մասը, բավականաչափ անկողին, առհասարակ տնային իրեր և մի երկու ամսվա հաց: Գաղթականությունը մի կողմից ուղղվեց Բաքուբրիան, մյուս կողմից՝ Ծալկա: Վրաց կառավարությունը, որ չկարողացավ մի 1000-2000 տաճկից (այդքանից ավելի չէր լինի տաճիկ զորքը, իսկ եթե կազմակերպեին, միայն Ախալքալաքը, չհաշված

Ախալցխան, կհաներ 10 հազարից ավելի բանակ) պաշտպանել գավառը, ժողովրդի ձեռքից Բաքուրիանի սահմանի վրա խլեց ամբողջ զենքը, նույնիսկ հայ զորամասերից: Վրաց կառավարությունը Ախալքալաքը համարում էր իրենը, ուրեմն և ախալքալաքցիք իր հպատակն էին: Չնայած սրան՝ իր քաղաքացիներին իրավունք չտվեց դուրս գալու Բաքուրիանի և Ծալկայի գծերից և դենը չարժվել: Բնակչությունն իր առողջ, աշխատասեր բնավորությամբ կարող էր Վրաստանում գործ գտնել, իր սայլերով կարող էր Հյուսիսային Կովկասից (ճանապարհը դեռ բաց էր) հաց բերել, փայտ կարող էր բերել Թիֆլիսից, տասնյակ հազարավոր կովերով Թիֆլիսին կարող էր կաթ տալ, մի խոսքով, այդ գյուղացիությունը ոչ միայն չէր ծանրանա Վրաստանի վրա, այլ կթեթևացներ նրա տնտեսական ճգնաժամը, եթե նրան չզրկեին ամեն մի քաղաքացու անբռնաբարելի իրավունքից՝ տեղաշարժության իրավունքից: Չնայած այս ձեռնտու հանգամանքին՝ մենշևիկյան կառավարությունը որոշ դիտումով գյուղացիության առաջ կարդոններ[13] դրեց Վրաստանում չտարածվելու համար: Վրաց 11 հազ. գաղթականության առաջ չուտով այդ արգելքները վերացան: Նրան ազատություն տրվեց գնալու ուրիշ վայրեր, իսկ երբ ցրտերը եկան (հոկտեմբեր, նոյեմբեր ամիսներին), կառավարությունն ինքը վրացի գյուղացիներին չոկեց և տարավ այդ լեռներից Կարայազ: Կառավարությունը, հայ գյուղացիությանը բացօթյա ձերբակալման ենթարկելով, արդարանում էր մի կողմից նրանով, թե Վրաստանում ժողովուրդը կզայրանա, եթե այդքան գաղթական հայեր ցրվեն նրանց մեջ և, երկրորդ, իբր թե գաղթականությունը հիվանդություններ կտարածե: Սուտ է, ոչ վրաց ժողովուրդն էր զայրանում, նա ևս ամեն մի ժողովրդի նման բնական էր գտնում գաղթականներին տեղ տալը (3 միլիոն ժողովուրդ տեղ պետք է տար 100 (հազ -Ա.Մ.) գաղթականի), մյուս կողմից՝ գաղթականության մեջ առաջին ամիսներին ոչ մի հիվանդություն չկար: Կառավարությունն ինքը ստեղծում էր պայմաններ հիվանդությունների երևան գալու համար, և հիվանդությունները հետագայում առաջ եկան:

Այսպիսով՝ Ախալքալաքի 90 հազար հայ գաղթականությունը գտնվում էր երկու սվինի մեջտեղը՝ հետ, Ախալքալաք գնալուն, արգելում էր տաճկական սվինը, առաջ՝ Վրաստան չարժվելուն, արգելում էր վրացական սվինը: 1918 թվի հունիսի 5-ից մինչև 1918 թ. դեկտեմբերի վերջերը, այսինքն՝ մինչև վերադարձը, գաղթականութ-

յունը Բաքուրիանում և Ծալկայում ապրեց այդ գծերի չրջանում: Միայն ճարպիկ քաղաքացիների զգալի մասը կարողացավ Թիֆլիս անցնել: Թե ինչ անտակտ վարվեց կառավարությունը, երևում է հետևյալ հանգամանքներից:

Բաքուրիանում և Ծալկայում շատ քիչ բնակչություն կա. Բաքուրիանում՝ հույն և օս, Ծալկայում՝ հայ և հույն: Ամենից առաջ կառավարությունը ոչինչ չուներ (անհանգստանալու - Ա.Մ.), որ 90 հազար գաղթականությունը, բնականաբար մի անկյուն որոնելով, կնեղեր մի երկու տասնյակ հազար ոչ վրացի տարրերի: Նրանց և հայերի գժտվիլը նույնիսկ վատ չէր լինի մենչևիկների համար: Սակայն, ի պատիվ Բաքուրիանի օսերի, Ծալկայի հույների և հայերի, պետք է ասել, որ նրանք գաղթականության ամբողջ ծանրությունը վերցրին իրենց ուսերին և չդժգոհեցին: Միայն գաղթականության շատ չնչին մասը կարողացավ տներում տեղավորվել: Ուրեմն չատը մնաց բացօթյա: Երկրորդ՝ անասունները կեր չունեին և պետք է կամ ծախեին կամ անասունները պետք է կոտորեին: Ճիշտը՝ անասուններըը և ծախեցին, և կոտորեցին: Այնուհետև՝ կառավարությունն արգելեց, որ գաղթականության համար Վրաստանից հաց բերվի: Այդ իրավունքից զուրկ չէին միայն գաղթ. մարմինները. զուրկ չէին երևի, որովհետև նրանք կամ ոչինչ չէին անում, կամ ոչնչացնում էին իրենց պետքերի համար գաղթականության համար բերված սուղ մթերքները: Այսպիսով՝ Ծալկայում և Բաքուրիանում (ոչ -Ա.Մ.) գաղթականությունը, ոչ էլ նրա անասունները ոչ տուն ունեին, ոչ սնունդ, ուստի պետք է լիկվիդացիա լինեին: Այս տեսնում էր կառավարությունը՝ չնայած մամուլի մեջ հարուցված բողոքի և ճիչի, որ այդ առթիվ հանեց Ախալքալաքի, Թիֆլիսի հայրենակցությունն իր բազմաթիվ դիմումներով: Այնուհետև վրաց կառավարությունը «մահվան չրջանում» (ինչպես ես անվանել եմ 1918 թ. իմ հոդվածներից մնում՝ էսէռական ռուս թերթերում Բաքուրիանն ու Ծալկան) հայտնված գաղթականության մեջ, կարգ պահպանելու համար բաց թողեց իր միլիցիոներներին: Նրանք սկսեցին ժողովրդին ճնշել, թալանել և այլն, մի խոսքով, դարձան կատարյալ ենիչերիներ: Այդ առթիվ կան բազմաթիվ պաշտոնական հեռագրեր: Կառավարությունը ոչ մի ձայն չհանեց: Գյուղացիական զարդարանքների խոշոր մասը կարգապահների (միլիցիոներների -Ա.Մ.) ձեռքն անցավ: Ամենաողբերգականն է հետևյալը. Ախալքալաքի կողմից տաճիկները չարու-

նակ հարձակվում էին գաղթականության թիկունքի վրա, սպանում էին մարդկանց (մոտ հինգ, վեց ամսում 1000 տղամարդ է սպանված) և տանում էին տասնյակ հազարավոր խոշոր անասուններ: Վրաց կառավարությունը ոչ միայն չպաշտպանեց զենքով իր հպատակներին, այլև այդ հարձակումների համար անգամ չբողոքեց տաճկաց ներկայացուցիչ Աբդուլ Քերիմի դեմ: Վրաց կառավարության խնդրանքով Բորչալուի համեմատաբար ապահով փրոնտում՝ տեղական մի քանի թուրք գյուղերի և տաճիկների դեմ պիկետներ էին դրված և մի անգամ գերմանացիք վրացիներին պաշտպանելու համար լավ ջարդեցին իրենց դաշնակից տաճիկ զինվորներին (1918 թ. կարծում ենք, հուլիսին): Եթե վրաց կառավարությունը մաղաչափ հոգ տաներ ախալքալաքցիների մասին, ամենից առաջ նրանց չէր ձերբակալի, երկրորդը՝ ձերբակալելուց հետո Բաքուրիանում և Ծալկայում պիկետներ կդներ (գերմանական), ամենահարկավոր տեղում՝ Ախալքալաքի սահմանում: Այդ չարվեց ու Տաճկաստանին ազատություն տրվեց իր ավազակային, պոգրոմային գործը շարունակելու: Բնորոշ է՝ ոչ միայն կառավարությունն ինքը գերմանացիների կամ իր զինվորների միջոցով չպաշտպանեց ախալքալաքցիներին, այլև վերջիններիս ձեռքից այդ պայմաններում զենքը խլեց, որով անզեն գառը կանգնած մնաց զինված գայլի՝ տաճիկի դիմաց: Եվ Տաճկաստանը սիրով օգտվում էր իրեն տրված իրավունքից՝ ինչպես ասացի, շարունակ հարձակվում էր ժողովուրդի վրա, կոտորում էր հարյուրավոր մարդիկ, տանում էր տասնյակ հազարավոր անասուններ: Տաճիկների պակասները լրացնում էին վրացական ադմինիստրացիայի ներկայացուցիչները, որոնք մի տեսակ կարտբլանշ չունեցող ավազակներ էին: Վրաց կառավարության ճիվաղային վերաբերմունքը բնորոշող փաստեր շատ կան: Բայց մեկն էլ այն է, որ Ռութայիսի և Թիֆլիսի բոլոր մսագործներին, բոլոր սպեկուլյանտներին թույլ էր տրված անարգել մոլեգնել գաղթականության մեջ, մինչդեռ, ինչպես պետք է հիշել, գաղթականությունը բանտարկված էր և իրավունք չուներ չուկա դուրս գալու, չուկա ընտրելու, իր ունեցածն ուզածի պես ծախելու և գնումներ կատարելու: Գյուղացին անասունների համար կեր չուներ, անասունը (գյուղացու վերջին հույսը) սատկում էր աչքի առաջ, և ահա գյուղացին ստիպված էր իր մոտ եկած սպեկուլյանտներին, մի տեսակ սպեկուլյանտների սինդիկատին ամենաէժան և ամենաչնչին գնով ծախել անասունները: Այն կարևոր ու ուշագրավ երևույթ է:

100 հազարից ավելի գաղթականությունը հետը բերել էր 100 հազարից ավելի խոշոր անասուններ: Այդ հարստության թեկուզ մի մասը, եթե նա ծախեր քիչ թե շատ կարգին գներով, գաղթականությունը մինչև վերադարձը (մինչև նույն 1918 թ. դեկտեմբերը), կապրեր, իսկ մյուս մասը հետը կտաներ գավառ: Այնինչ, մինչև 1918 թ. նոյեմբերի սկիզբը գրեթե ամբողջ 100 հազար անասունը չնչին գներով նետվեց Վրաստանի չուկա...: Վրաստանը, հարուստ Վրաստանը ինքն օգտվեց գաղթականությունից և լավացրեց իր դրությունը...: Մինչև Ախալքալաքի դժբախտությունը միսը (մսի գինը- Ա.Մ.) Թիֆլիսում արագ բարձրանում էր և հասել էր մինչև 4-5 ռուբ. գրվանքան: Այդ կարելի է ստուգել: Ախալքալաքի գաղթից հետո Կովկասի տնտեսական իրականության մեջ մի տեսակ հրաշք կատարվեց՝ մսի գինը հունիսից (Ախալքալաքի անկումից) սկսած մինչև նոյեմբեր (մինչև անասունների սպառումը Բաքուրիանում, Ծալկայում) անընդհատ ընկնում էր՝ հասնելով մինչև 2 ռուբլի գրվանքան: Այդ ամիսներին ընդհակառակը, եթե չլիներ Ախալքալաքի միսը, պետք է (գները - Ա.Մ.) կատաղի բարձրանային, որովհետև Թիֆլիսի համար ոչնչացավ Ղարսը: Ջէր գործում Նոր Բայազետը և այլն: Նույն թվի հայկական ու ռուսական թերթերի մեջ զետեղված հատուկ հոդվածներով ես այս երևույթը համարեցի ժամանակավոր, հիվանդագին, (այն - Ա.Մ.) բացատրեցի ախալքալաքցիների անասունների անկեր դրությամբ: Նույն հոդվածում հայտնում էի, թե թող Թիֆլիսեցին չասե, թե ախալքալաքցին ծանրացել է իր վրա, ընդհակառակը, գաղթական չավախքեցին ամեն օր, ամեն մի 3-4 գրվանքա գործադրող ընտանիքի նպաստ է տալիս՝ քիչը 3-10 ռ. (եթե նա չլիներ, միսը կարժեր գրվանքան 5 ռուբլուց ոչ պակաս, մինչդեռ ուտում էին 2 ռուբլով): Ենթադրությունս այդ երևույթի բացատրության (խնդրում - Ա.Մ.) վրաց մամուլին (ռուսատառ Борьба և վրացատառներին) դուր չեկավ: Նրանք դժգոհ էին, որ չնորհակալության փոխարեն գաղթականությունը դուրս է բերվում նույնիսկ իր դժբախտ ժամանակը մայրաքաղաքցիներին ձրիակերությամբ պարապելու հնարավորություն տվող տարր...: Բայց իմ մարդարեությունը մի երկու-երեք ամսից հետո կատարվեց բառացի, որով և իմ հոդվածի ճշտությունն անկասկած դարձավ (նույնիսկ Կովկասի պետնական Ավդեևը իմ բացատրությունը կասկածելի էր գտնում): 1918 թ. նո-

յեմբերին վերջացան ախալքալաքցիների անասունները և մսի գինը Թիֆլիսում միանգամից թռիչք արեց վերև և այնուհետև անընդհատ գնում ու գնում էր վերև:

Այսպիսով, մենշևիկյան կառավարությունը 100 հազար գաղթականությանը (ճիշտը 90 հազար հայությունը, ինչպես ասացի, վրացիներին համեմատաբար դյուրություններ արվեցին Բաքուրիանի և Ծալկայի մահվայրերից դուրս թռցնելու համար) իր միանգամայն գիտակից կարգադրություններով դրեց այնպիսի պայմանների մեջ, որ մի կողմից տաճիկը կոտորեց, կողոպտեց, մյուս կողմից էլ Վրաստանի կեղեքիչները՝ հանձին միլիցիայի և սպեկուլյանտների, թալանեցին: Ջերբակալված ջավախեցին ոչ մի չարժում չէր կարող անել իր փրկության համար:

Նոյեմբերի սկզբներին արդեն սառնամանիքներով ծածկվող Բաքուրիանի և Ծալկայի բարձրունքներում (7-8 հազար ոտնաչափ) գյուղացիությունը կանգնած էր թալանված, մերկ, քաղցած, անտուն: Տարածվում էին հիվանդություններ: Վիրահայ Ազգային խորհուրդը խնդրեց կառավարությանը թույլ տալ գյուղացիներին տեղավորել գոնե Բորչալուի հայ գյուղերում՝ այդ էլ մերժեցին: Միայն այն ժամանակ, երբ դաշնակիցները հաղթել էին և տաճիկները հեռանում էին, կառավարությունը թույլ տվեց Մանգլիսի գաղթականությանը (գաղթականության չնչին մասին) տեղավորվելու զորանոցներում, և իհարկե, այդ սիրալիրությունից օգտվելու ժամանակ չեղավ:

Կառավարության այս դաժան, հիրավի մարդաջինջ և հայաջինջ քաղաքականության հետևանքը եղավ հետևյալ հայտնի տխուր փաստը. 1918 թ. հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին Ծալկայի և Բաքուրիանի լեռներում բացօթյա ոչնչացավ մոտ 30 հազար հայ գաղթականություն: Եթե վերադարձ չլիներ՝ կառավարության կամքից անկախ, որին նա դեմ էր, մինչև հունվար, փետրվար ոչ մի մարդ կենդանի չէր մնա: Պատկերները սոսկալի են. օրինակ առավոտը մայրը վեր է կենում, տեսնում է սառած երեք որդիներին ձյան վրա: Գաղթականությունը կոտորվեց և մի քանի հազար զոհ էլ տվեց վերադարձի օրերին: Այդ ամենը ես իմ աչքով եմ տեսել: Վիրահայ Ազգային խորհրդի կողմից 1918 թ. դեկտեմբերին Ծալկայի վրայով ուղևորվեցի Ախալքալաք՝ իմանալու, թե առաջին վերադարձողներին տաճիկները խոմ չեն կոտորում, և ահա ճանապարհին աչ-

քերիս տակ բացվեց աննկարագրելի տեսարան: Մերկ, սոված, հյուծված, հիվանդ գաղթականությունը, չատերը չատ ծանր հիվանդ, հարյուր վերստից ավելի ճանապարհը վազում էին հասնելու համար ավետյաց երկիրը, ինչպիսին էր Ախալքալաքը նրանց համար: Ցրտերը հասնում էին 25-35 աստիճանի: Միայն մի օր (վերադարձը տևեց մոտ մի ամիս) մի 15-25 վերստ տարածության վրա տեսա ընկած էր դիակ, մերկ, գայլերը կերած, մի դիակ առանձին, մի մայր չորս երեխայով առանձին...:

Հատկապես այս մի քանի հազար հոգու կորուստն ընկնում է Ազգային խորհրդի խղճի վրա: Նա Ծալկայում և Բաքուրիանում ուներ լիազորներ, որոնք գաղթականության վերադարձի ժամանակ նստած էին տաք տեղերում: Ամենագլխավորը նրանք նույնիսկ մի սննդատու կայան չչինեցին այդ օրերին, ոչ մի չոր չտվին, մինչդեռ գաղթականության վերադարձից հետո նրանք, պահեստներից հանելով, ծախեցին մեծ քանակությամբ չաքար և չորեղեն...: Այս ամենի մասին իմ ընդարձակ զեկուցագրի մեջ և առանձին հայտագրերով գրել եմ Վիրահայ Ազգային խորհրդին: 1919 թ. հունիսի 6-ին, սակայն, հակառակ իմ պահանջի, լիազորներից ոչ մեկը դատի չհանձնվեց: Ծալկայի լիազոր Արարատ Տեր-Գրիգորյանը (հայտնի ավազակ, Արամ Տեր-Գրիգորյանի հաջորդը, ազգական չեն) և Բաքուրիանի լիազոր Արշակ Թորոսյանը (բաթումցի) Վիրահայ Ազգային խորհրդում նստած քրիստոնյաների կողմից նույնիսկ հանդիմանության խոսքի չարժանացան ...: Իսկ հազարավոր նրանց զոհերի գերեզմանները, երկրի երեսին ցրված ոսկորները, Բաքուրիանից և Ծալկայից Ախալքալաք տանող ճանապարհների վրա բղավում են անլուր ոճիրի մասին...: Բայց ոճրի մեջ այդ օրերին ետ չմնաց և վրաց կառավարությունը (այս մասին իր ժամանակին բանավոր պատմել եմ Վիր. Ազգային խորհրդին և Ախալքալաքի հայրենակցական միությանը, բայց անհարմար եմ համարել գրի անցկացնել): Նրա վրա խնդրում եմ ձեր առանձին ուշադրությունը: Դեկտեմբեր ամսին Բաքուրիանի սոսկալի բարձունքները ճեղքելով գաղթականությունն ուղիղ ճանապարհով ուզում էր ընկնել Ախալքալաքի դաշտը, բայց վրաց զորքերը ստիպում էին գաղթականությանը վոխանակ ուղիղ ճանապարհով գնալու, ծռվել և անել, 30^0 ցրտին, 7-8 վերստ ավելի: Շնորհիվ այս հավելյալ ճանապարհի, հարյուրավոր մարդիկ ոչնչացան...:

Ես այդ երևույթը կարողացա բացատրել. վրացական արտիլերիան և սայլերը պահանջում էին ձյան մեջ տանելի ճանապարհ և որպեսզի այդ ճանապարհը չարունակ բանուկ մնա, գաղթականությանը տասնյակ օրեր քշում էին այդ երկար ճանապարհով, ուրիշ խոսքով, փոխանակ թիերով[14] ճանապարհը բաց անելու, գաղթականության դիակներով էին բաց անում: Իրենք վրացիք, ճիշտը՝ վրացական զորամասի հրամանատար կապիտան Կանդելակին բացատրեց ինձ այդ նրանով, որ իբր գավառից դեռ ոչ բոլորովին հեռացած տաճիկները թույլ չէին տալիս ուղիղ ճանապարհով իջնել: Այդ սուտ էր՝ իմ դիմումից հետո այդ բանը վերջացավ: Ի դեպ, գաղթականության վերադարձի ժամանակ Ծալկայում և Բաքուրիանում նստած տասնյակ գաղթականական ծառայողներից ոչ մեկը ոչ միայն ոչինչ չտվեց գաղթականությանը, այլև ամբողջ ամսվա ընթացքում չանցավ սաբերից դենը և չտեսավ, թե ինչպես է վերադառնում գաղթականությունը: Ասենք, գաղթականության մարմինները ինձ համար միշտ եղել են հակագաղթականական, հակաժողովրդական մարմիններ, ուր հավաքվում են (չնչին բացառությամբ ազնիվ մարդկանց) զանազան գողեր, կասկածելի մարդիկ, ավազակներ, թալանչիներ, սպեկուլյանտներ և այլն և այլն՝ ժողովրդի պատառի հետ հաշիվ տեսնելու:

7. Գաղթականությունը Հայրենիքում

Դեկտեմբերին (1918 թ.), բացի մի երկու հազար քաղաքացիներից, ամբողջ գաղթականությունը Ախալքալաքումն էր: 90 հազար հայության փոխարեն վերադարձավ մոտ 55 (հազ. - Ա.Մ.) հոգի, որ, ինչպես ասացի, տեղում մնացած կաթոլիկների հետ միասին կազմում է ներկայումս 60 հազարից ոչ պակաս: Գաղթականության վերադարձից հետո էլ քիչ (մարդ- Ա.Մ.) չկոտորվեց տեղում: Շատ չնչին քանակությամբ անասուններ փրկվեցին և բերվեցին Ախալքալաք: Տաճիկները ցրտության պատճառով գավառից չէին կարողացել տանել բավականաչափ խոտ, չէին կարողացել կալսել շատ դեզեր և դուրս տանել մի քանի հազար փութ հացահատիկ: Ախալքալաքի և Ախալցխայի նահանգապետ գեն. Մակաևին (հետագայում Բաքվում սպանվեց) ես՝ որպես Ազգային խորհրդի ներկայացուցիչ, խնդրեցի, որ այդ ամբողջ գույքի մնացորդը տա գաղթականությանը՝ որպես նրա սեփականության մի մասը, որպես նրա գույքի չնչին մնացորդը: Մակաևը չտվեց: Այս հարցը ես կառավարության առաջ կամեցա

դնել Ազգային խորհրդի միջոցով, սակայն նա չդրեց: Այսպիսով, տաճիկներից հետո Ախալքալաքի բնակչության գույքի մնացորդն էլ յուրացրեց և հափշտակեց վրաց կառավարությունը: Այսուհետև մինչև մեծամասնականության (բոլշևիկներ-Ա.Մ.) գալը մենշևիկյան կառավարությունն ամեն կերպ աշխատել է խանգարել բնակչությանը գոնե իր ուժերով ոտքի կանգնելու գործում. հափշտակել է նրանց հողերը, արոտատեղերը, ճնշել է, չի թույլ տվել ունենալու իր ընտրովի միլիցիան և քաղաքական կոմիսարներ և այլն և այլն: Ամեն ինչից պարզ երևում էր մի բան. կառավարության համար անախորժ է եղել, որ թեկուզ այդքան հայություն ազատվել և ապրում է գավառում: Կառավարությունը կկամենար գավառը բոլորովին ազատված տեսնել հայությունից: Համենայն դեպս, կառավարությունն իրեն նպատակ էր հետապնդում այս կամ այն կերպ թուլացնել հայությանը նույնիսկ վերադարձից հետո:

Իր տեղում, ցրվածությունից մոռացա բերել մի մեծ փաստ: Ինչպես հայտնի է, վրաց կառավարությունը Ախալքալաքը միշտ համարել է Վրաստանի անբաժան մասը, հետևաբար պետք է եզրակացնել, որ ախալքալաքցի բոլոր հայերին նա համարում էր վրացահպատակներ: Եվ ահա այդ վրացահպատակների հետ ինչ խաղաղ կոմեդիա խաղաց այդ խարդախ կառավարությունը հիրավի (ինչպես անվանեցին նրան Թիֆլիսի դաշնակցականները) էնվերներից և թալիաթներից բաղկացած կառավարությունը, որի պրեմիներն ավելի կիրթ էին...: 1918 թ. սեպտեմբերին բավականին կողոպտված էր գաղթականությունը: Այդ ամսի 4-ին (գրեթե լավ եմ հիշում, սակայն, եթե սխալ դուրս գա, պետք է վրաց կառավարության արխիվում որոնել, սեպտեմբերի 4-ից մինչև հոկտեմբերի 4-ը) վրաց կառավարության կանցելարիան, հանձին правитель канцелярии, *հայտնի Կոժուխովի (հետագայում Վեչապելու[15] կողմից մեղադրված զեղծումների մեջ) Հայոց գլխավոր գաղթականական խորհրդին (Վիր. Ազգային խորհրդին կից) ուղղում է մոտավորապես այսպիսի բովանդակությամբ թուղթ (բովադակությունը լավ չեմ հիշում). ի նկատի ունենալով, որ Վրաստանում պարենավորման ճգնաժամ է, որ մյուս կողմից, տաճկաց հրամանատարությունը վերջնականապես հրաժարվում է թույլ տալ Ախալքալաքի գաղթականությանը վերադառնալ հայրենիք, այսուհետև առաջարկվում է Ձեզ ամենակարճ ժամանակամիջոցում այդ գաղթականությանը տանել Հյուսիսային Կովկաս (ընդդ-*

ծումը իմն է - Պ. Ա.): Կրկնում եմ, բառացի չեմ հիշում բովանդակությունը, բայց գրեթե բառացի այս էր այդ թղթի իմաստը: Գաղթականական խորհրդի նախագահ Սամ. Հարությունյանն[16] անմիջապես հրավիրեց խորհրդի անդամներին (Հովհ. Սպենդիարյան, հանդուցյալ Լևոն Էվանգուլյան, հանդ. բժ. Տեր-Ստեփանյան և այլոց), վերջապես Վիր. Ազգային խորհրդի պրիզիդիումը: Ես, որպես Ախալքալաքի հայության ներկայացուցիչ, խնդրեցի նույնպես ինձ թույլ տալ ներկա լինել: Կարդացին թուղթը: Ես այդ ժամանակ տեղյակ էի վերադարձի խնդրին (Ջամալյանի օրոք), և ես գիտեի, որ ընդհակառակը, տաճկաց միսիան (Աբդուլ Քերիմը) խոստանում էր վերադարձնել գաղթականությանը և մերժում չի տվել: Ուստի պահանջեցի միսիայից բերել դրծերը (Ջամալյանը Երևանում էր այդ ժամանակ) և համոզվել, որ, հիրավի, ոչ միայն մերժում չկա, այլև չարունակվում են բանակցություններն Աբդուլ Քերիմի հետ: Երկու օր առաջ հենց ես եղել էի (նրա օգնականի հրավերով) մոտը և, պարզ է խոսքով, հավաստիացում էի ստացել, որ գաղթականությունը կվերադառնա: Գլխավորը, ձևական մերժում չկար: Բերին գործերը և պարզվեց, որ Կոժուխովը սուտ է գրում, որ ընդհակառակը՝ թղթերից երևում էր, որ վերադարձի հարցը Հայկական Միսիայի, տաճկական հրամանատարության, Պոլսի կառավարության և Պոլսի Հայկական պատվիրակության բանակցությունների առարկա է նույնիսկ տվյալ րոպեին: Այս պատճառով որոշվեց Կոժուխովից խնդրել տաճկական հրամանատարության մերժման թղթի պատճենը: Այդպես էլ գործը մնաց: Այսպիսով, վրաց կառավարությունը խաբեբայական միջոցներով ուզում էր նոր գաղթի միջոցով միանգամից արագ կերպով կոտորել տալ ջավախքցիներին և Ախալքալաքը ստանալ առանց հայերի:

Մի այլ փաստ ևս, որից ուրիշ հոտ է գալիս: Նոյեմբերին (1918), ինչպես ասացի, գաղթականությունը մերկ, սառցապատ լեռներից փախչում էր իր հայրենիքը, իր տունը: Այդ ժամանակ Բաքուրիանում վերոհիշյալ գեն. Մակաևը հավաքում է գաղթականներին և պահանջում է նրանցից վրացահպատակության ստորագրություն տալ: Հակառակ դեպքում, ասում է, դժվար կլինի Ձեզ թույլ տալ գնալ: Գաղթականությունը ժամերով կանգնում է և ստիպված է լինում այդ պայմաններում այդ վայրենի պահանջին բավարարություն տալ: Գաղթականության ներկայացուցիչը լինում է մի դյուղա-

ցի Ավետիս Ղարսլյան ազգանունով (Ախալքալաքի գավառի Մեծ Խանչալի գյուղից): Այդ պատմությունն իր ժամանակին ես մանրամասն արել եմ Թիֆլիսում (Ղարսլյանն այնտեղ էր): Գրի եմ առել, ստորագրել է Ղարսլյանը, իսկականը տվել եմ Վիր. Ազգային խորհրդին, մի օրինակն էլ, որքան հիշում եմ, Հայկական միսսիային, մյուսն էլ ինձ մոտ է:

Ախալքալաքի 60 հազար հայ բնակչության դրությունը մենշևիկյան կառավարության օրոք մանրամասն չեմ նկարագրելու, միայն այսքանը կասեմ, որ մենշևիկները խորթ, շատ խորթ աչքով էին նայում հայությանը և ամեն կերպ աշխատում էին թուլացնել նրանց՝ հող պատրաստելով իրենց հիմնական նպատակի իրագործման համար՝ Ախալքալաքը Վրաստանին տալ առանց հայերի: Եթե, այնուամենայնիվ, գաղթականությունն ապրեց և որոշ չափով վերականգնեց իր տնտեսությունը, այդ հետևանք է նախ ջավախեցի հայի բառացի անօրինակ աշխատասիրության և երկրորդ, Ամերիկյան օգնության: Չհաշված միլիոնավոր արժեք ունեցող չորեղենը՝ 1919 թ. և 1920 թ. ընթացքում Ախալքալաքի հայությանը և վրացիներին ամերիկացիք տվին 250 հազար փութ սպիտակ ալյուր (ճիշտը 249 հազար փութ 7 գր. հաշիվներն ամերիկյան ներկայացուցիչների ստորագրությամբ կա ինձ մոտ): Այդ ալյուրը Հայաստանի հաշվին ստացված ալյուրից է: Ուրեմն վրաց գաղթականությունն Ախալքալաքում ապրել է Հայաստանի ալյուրով, ավելին, վրաց գաղթականությունը նույնիսկ Ախալքալաք է տեղափոխվել Հայաստանի միջոցներով: Այսպիսով, աղքատ Հայաստանն անուղղակի կերպով օգնում էր վիճելի Ախալքալաքի և՛ հային և՛ վրացուն, իսկ Վրաստանը զբաղված էր հայ տարրը ոչնչացնելով: Մենշևիկների համար բնորոշ երկու փաստ ևս. առաջինը՝ նրանք աչքաբաց օգնում էին գավառում վրացի գաղթականներին, և սրանք այժմ հայերից շատ ուժեղ են տնտեսապես: Երկրորդ. կառավարությունն աշխատեց հայ և վրացի ժողովուրդների մեջ անտագոնիզմ առաջ բերել և հայերի դեմ գրգռել մնացած վրացիներին և թուրքերին, հայ կաթոլիկների մի մասին, նույնիսկ դուխոբորներին: Բարեբախտաբար, այդ անտագոնիզմը գրեթե արմատներ չի գցել, թեև իրեն զգալի է դարձնում: Հատկապես կառավարությունն աշխատել է ախալքալաքցիներին զինաթափ անել: Ընդհակառակը, թուրքերին ձեռք չէր տալիս: Կառավարության խուլիգանության և պոգրոմության մի ապացույց ևս. մեծամասնականների գալուց առաջ հեռանալով Ախալքալաքից՝ նա նախօրոք

մի անգամ ևս զինաթափ է անում հայերին և դիմում է հարևան տաճկական զորքերին, որ մտնեն գավառ: Հրավիրում է տաճիկներին՝ չատ լավ գիտենալով, թե նրանք ինչ պետք է անեն: Եվ հիրավի, սույն 1921 թ. մարտին Ախալքալաք են մտնում 23 հազարի չափ տաճիկ զորքեր և խուժան, թալանում են 15 գյուղ, որոնցից չորսը՝ Կարծախ, Սուլտա, Տատեչ, Գյունբուրդա, տուժում են առանձնապես: Տանում են նրանց անասունները և հացը և ամեն ինչ: Դրանք սահմանակից գյուղեր են: Մեծ է լինում մանավանդ իմ հայրենի Գյունբուրդա գյուղի հարվածը. հինգ հազար հոգի 9 օր նստում են այդ գյուղում: 9 օրում 60 տղամարդ են սպանում, բռնաբարում են բոլոր կանանց և ութ տարեկանից վեր երեխաների, տանում են բացարձակապես ամեն ինչ, նույնիսկ մերկացնում են բնակչությանը՝ տանում զգեստները: Այս ամենը հաստատված է կարմիր բանակի ակտերով: Գյունբուրդան, որ 1918 թ. 2500 մարդուց ավելի բնակիչ ուներ, այժմ հազիվ 1000 հոգի ունի, այն էլ մեծ մասամբ կանայք և երեխաներ. ահա ինչպես է լուծվում հայկական հարցը Ախալքալաքի գավառում:

8. Ջավախքի հայության երկյուղները և ցանկությունները

